Գ. ԱԱՄՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՐ
VI



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Г. АЧАРЯНА

Г. АЧАРЯН

ПОЛНАЯ ГРАММАТИКА АРМЯНСКОГО ЯЗЫКА

В СРАВНЕНИИ
С 562
ЯЗЫКАМИ

ТОМ
VI

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН — 1971

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ.ԱՃԱՌՅԱՆ

ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ
562
ԼԵԶՈՒՆԵՐԻ

A III 36770

ՀԱՏՈՐ
VI

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1971

4 Ар
Ц 39

Տպագրության պատասխան խմբագրել
պրոֆ. Է. Բ. ԱՂԱՅԱՆԸ

Подготовил к печати и редактировал
проф. Э. Б. АГАЯН



7—2—2

ՁԱՅՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄՈՏՔ

Ձայնագիտությունը լեզվաբանության այն ճյուղն է, որ ըբաղվում է ձայնի, բայց հատկապես մարդկային ձայնի ուսումնասիրությամբ։ Ձայնը կարելի է ուսումնասիրել նախ բնագիտական տեսակետով, այսինքն՝ թե ի՛նչ է ձայնը, ի՛նչից է առաջանում այն, ի՛նչպես է ձևավորվում և թե ի՛նչ մասնավոր և ընդհանուր հատկություններ ունի։ Երկրորդ՝ կարելի է ուսումնասիրել ձայնը մարդաբանական և բնախոսական տեսակետով, այսինքն՝ թե ինչպես է առաջանում մարդկային ձայնը, ի՛նչ գործարաններ և ի՛նչպես մասնակցում են նրա արտաբերության, և թե այդ արտաբերված ձայնը ի՛նչպես է հասնում լսողական գործարանին և այդտեղից էլ փոխանցվում է լսողական կենտրոնին։ Երրորդ՝ որո՛նք են այն ձայները, որ հնարել են մարդկային զանազան լեզուներն ընդհանրապես և այս կամ այն լեզուն մասնավորապես, այդ ձայների դիտական համակարգությունը և դասակարգությունը։ Չորրորդ՝ ձայների զանազան խմբակցությանց մեջ ի՛նչ փոխադարձ ազդեցություն ունեն ձայներն իրար վրա, և թե ի՛նչ փոփոխություններ են կրում այդ ձայները լեզվի զարգացման հետագա շրջաններում։

Ահա չորս կետերից առաջին երկուսը զուտ լեզվաբանական չեն և չեն էլ կազմում լեզվաբանության նպատակը, բայց նրանք անհրաժեշտ են մեզ՝ բմբռնելու համար այն սկզբունքները, որոնք հիմքն են կազմում մյուս երկու զուտ լեզվաբանական նպատակներին։ Ամեն մի լեզվի բովանդակած ձայների նույնիսկ շատ հա-

ուրույն պատասխանատվություն անհրաժեշտաբար պահանջում է նաև նաև որոշ պայմաններ այն գործարանների մասին, որոնք մասնակցում են այդ ձայների արտադրության, իսկ այդ ձայների փոխանցության օրենքները կարող են բացատրվել միմիայն բնախոսական պատճառներով։ Առանց այդ պատճառների ընդունության, մենք կարող ենք միայն նկատել լեզվաբանական օրենքներն ու երևույթները, բայց չմտանել նրանց էության և խորամուխ լինել նրանց ծագման՝ անհարազատ կլինենք։

Այս տեսակետներով, ուրեմն, ձայնագիտությունը լեզվաբանական գիտության կարևոր և անհրաժեշտ մասն է կազմում. սակայն ձայնարանության գիտական օրենքների լեզվաբանությունը պահանջում է բազմակողմանություն, ինչպես էր հների մոտ նոր լեզվաբանությունը հիմնված է միայն և միմիայն ձայնարանության հատուկան օրենքների վրա. այդ օրենքներն են, որ որոշում են լեզուների ցեղակցությունը, նրանց հյուսվածքումը և նոր լեզուների ու բարբառների բաժանումը. այդ օրենքներն են, որ տալիս են մեզ ձևաբանական (բերականական) փոփոխությունց իսկական պատճառները, բացատրում շեշտադրության ու ասղաշափության կանոնները, և այդ օրենքներն են վերջապես, որ հնարավորություն են տալիս մեզ ծանոթ լեզուների համեմատությամբ անծանոթ ու անհայտ կարած նախալեզուները վերականգնելու։

Այս բոլորից դուրս ձայնագիտությունը ծառայում է նաև գործնական նպատակների։ Նկարագրելով ձայնական գործարանների կամ նրանց այս ու այն մասի գերն ու դիրքը այս կամ այն ձայնի արտադրության մեջ, նա մեզ միջոց է տալիս սովորելու արհեստ ու անծանոթ լեզվի ձայները և նրանց հնչյունը ըստ կարելվույն ճիշտ արտադրելու։ Նա ծառայում է նաև ուղղելու դանազան թերություններ արտասանության մեջ, ինչպես են անգլախոսություն և կակազում. վերջապես, ձայնագիտությունը կարևոր է խոսք և նամբերի ուսուցման գործը կազմակերպելու համար։

ՄԱՄԱՆ ԱՌԱՋԻՆ

ՉԱՅՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ Ա

ՁԱՅՆ[1]

Ռուսերենում մարդու ձայնը և աստիճանի ձայնը հիշյա պահպանվում են միմյանցից։ Մարդու ձայնը կոչվում է ГОЛОС, *աստիճանի ձայնը կոչվում է* ЗВУК։ *Ֆրանսերենում մարդու ձայնն է* la voix, *իսկ աստիճանինը կլինի* son։ *Բայց ասում ենք* la vitesse du son «*ձայնի արագությունը*», *որ իհարկե թե՛ աստիճանի և թե՛ մարդու ձայնի համար է։ Ուշիլի պարմանների են* voyelle «*ձայնավոր*» *և* consonne «*բաղաձայն*» *բառերը, որոնց մեջ դրված* voix *և* son *բառերը հավասարապես պարձել են հայերեն ձայն։*

Ձայն բառը հայերենում հատկացված է թե՛ մարդու, թե՛ անասունների և թե՛ իրերի հնչած ձայնին, ինչպես՝ «Լուայ զձայն Ռո». «Փոխանակ զի լուար ձայնի կնոջդ». «Հասանէին ձայնի փողոյն». «Ի լսել ձեզ զձայն եղջեր փողոյ». «Լսիցես դու զձայն շարժման». «Լուաւ զձայն ոտից նոցա». «Ձայն մեղմոյ օդոյ». «Ձայն մարտի». «Ձայն պատերազմի». «Ձձայն ալեաց նոցա». «Ի ձայնէ ջուրց». «Որպէս զձայն փչոց ի ներոյ կաթսայի». «Ի տկարութենէ ձայնի ապօրոյն». «Ձայն տատրակի լսելի եղև». «Ձայն ոսոհ դղրդեսցէ զունկն». «Իբրև զձայն ծովու». «Իբրև զձայն բոցոյ հրոյ». «Ձայն արար կամուն»:

---

[1] Stone, Elementary lessons on sound, London, 1891;-Տե՛ս Chassagny, Cours élémentaire de physique, Paris, 1912, p. 433—521.—Drincourt et Dupays, Traité de physique, Paris, 1902, p. 146—204.—Langlebert, Cours de phisique, Paris, 1909, p. 113—447:

Այս բոլոր սրինակները բերված են Ս. Երքի Համարարրատից։ Հին Հայերենում երկու արիշ համանիշներ էլ կան ձայն բառի համար, բարբառ և ինչյուն։ Առաջինը աշխարհաբարում բոլորովին տարբեր իմաստ է ստացել (պատահական լեզու), իսկ ինչյուն, որ այժմ սովորական գործածության է ստացել, շատ դեպքերում պատշաճ չի լինում կիրառել։

Այս պրպում մենք ձայն բառին ավելիներ բնորհանուր գործածության՝ պրարարի նման։

* * *

Ձայնի ատամնաերրաթիւմբ պրպտող գիտությունը կոչվում է φonetika, և այս բառով հասկացվում են նրա բոլոր հրատերը։ Գերմանացիք ատաջ անվին միայն Lautlehre բառը, որով հասկանում էին նախորդ այդ գիտության բոլոր հրատերը։ բայց այժմ վերցրել են նաև Phonetik բառը, որով հասկանում են ձայնի ատամնաերրաթիւմբան ֆիզիկական և կոմմունիկատիվական մասը, իսկ Lautlehre բառով հասկանում են ձայնի փոխհարաթիւմբան օրենքները լեզվի մեջ՝ ժամանակի ընթացքում։

Ֆրանսերեն էլ ատաջ գործածում էին միայն մի բառ, որ է Phonétique, բայց նրա գիտությունը ընդարձակվեց և նրա բնաերանական և գրամատիկական մասերի մեջ կարիք զգացին նոր տերմիններ դնելու, ատաջինը կոչեցին Phonologie, երկրորդը՝ Phonétique.

Մենք համարեցինք այս գիտության բոլոր հրատերի համար ատ միանական Ձայնագիտություն անունը, նրա բնաերանական մասը կոչել Ձայնաերանություն, իսկ գրամատիկան (բերականական) մասը՝ Ձայնափոխություն։

Գրաշարական մասի համար մնում է ձայնագրություն հին բառը։

* * *

Ձայնը այն ապարատիւնն է, որ գործում է օդի թրթռումը ականջի վրա։

Երկաում նշանակում է մի անգամ հատատված մի ատարկայի կատարած պարբերական շարժումները՝ հավասար անդադարությամբ, որոնց հաջորդում է հետո հանգիստ. օրինակ՝ ժամացույցի ճոճանակի կանոնավոր շարժումները, մի ծայրից ամրացած

ամամիպ քիմիայի կատրի ցնցումները, երկու ծայրից պրկված մի թելի ցնցումները թրթռումներ են։

Ձայնական թրթռումներ կամ ուրիշ խոսքով ձայն առաջացնելու համար կան զանազան միջոցներ, որոնց մեջ ամենակարևորներն են բախում, շփում, պայթում, մուրճի հարվածը արույրին կամ լեզվակի բախումը զանգակին տալիս են որոշ ձայն, մատների շփումը բաժակի եզերքներին կամ հնտնտոցի շփումը ջութակի լարերին տալիս են ախորժելի ձայն. հրացանի կամ ռումբի պայթյունը տալիս են մի հանկարծական և ուժեղ ձայն։

Կարելի է թղթի վրա նկարել այս թրթռումները։ Սրա համար կա առանձին մեքենա (պատկեր 1)։ Մեքենան բաղկացած է երկու մասից։ Առաջինն է մի տուփ, որի մեջ կա ժամացուցային կազմուածքով մի զսպանակ, որ լարվելով՝ սկսում է պտտվել միօրինակ և համաչափ շարժումով։ Երկրորդ մասն է մի գլան, որ մի առանցքով միացած է նույն տուփին և զսպանակի շարժման ժամանակ ինքն էլ նրա հետ համաչափորեն պտտվում է։ Եթե ուզենք արձանագրել մի որևէ մարմնի թրթռումները, այդ մարմինը մի սուր ծայրով կհպեցնենք գլանի վրա, որի վրա նախապես կպցրած է լինում մրով սևացած փայլուն թուղթ։ Զսպանակը սկսում է շարժվել, գլանը պտտվում է, թրթռացող մարմնի ցնցումները նշանակվում են մրած թղթի վրա սպիտակ խոպերով։ Գլանի մի պտույտը տալիս է մեզ թրթռումների մի բավական երկար գիծ. իսկ եթե լարիք կա ավելի երկար գծեր ստանալու, կարելի է շարունակել փորձը՝ հետևյալ ձևով։ Գլանի առաջ կա մի շարժական սայլակ, որի վրա հաստատված է լինում այն մարմինը, որի թրթռումները ուզում ենք արձանագրել. քանի գլանը պտտվում է, սայլակն էլ շարժվում է և իր հետ առաջ տանում նաև թրթռացող մարմինը. այսպիսով թրթռումների գծերը իրար վրա չեն նկարվում։ Փորձից հետո գլանի վրայից հանում ենք կպցրած թուղթը, թաթախում որևէ ֆիքսատիվի մեջ, հետո չորացնում։ Այսպիսով ստանում ենք թրթռումների գծերը՝ ժապավենի պես, ըստ կամս հարիղնտական կամ ուղղահայաց դիրքով։ Ստացված գծերը լինում են սովորաբար ալիքի կիզդատներ՝ պանտղան ձևով և մեծությամբ։ Որովհետև մենք գիտենք, թե գլանը մի րոպեում քանի անգամ է պտտվում, հետևաբար կարող ենք հաշվել, թե մի րոպեում քանի թրթռում է լինում, և թե յուրաքանչյուր թրթռում ինչքա՞ն տևողություն ունի։

Թրթռումների արձանագրության պարզագույն ձևը կարելի է փորձել մի հասարակ պողպատի բարակ կտորով, որի մի ծայրը

ամրացված է սեղանի վրա (պատկեր 2)։ Ձևաթի պարզ շարժումով բռնում ենք բաց մետաղյա մասը և թաղնում, պտտելով սկսում է թրթռալ, մեր ձեռքն ամուր պահելով նույն շարժումները, արձանագրում է. ինքը հանելով պահում ենք թրթռումների ալեհի նիտը (պատկեր 3)։



Պատկեր 1



Պատկեր 2

Պատկեր 3

Ձայնագրելու համար, թե ձայնը թրթռումների արդյունքն է, առնենք մի երկար ատամնական ձող և մի ձայլը հատատանք սեղմիչի մեջ, ինչպես պատկեր 2։ Ապա հետաքննենք բաց ձայլը իր հավասարակշիռ վիճակից և թաղնենք։ Պիտի տեսնենք, որ ձողը սկսում է կատարել իր ճաճանչների նիհ ձողը բավական երկար է, ճաճանչները բավական պտղազ են լինում, այնպես որ կարելի է

լինում պարզ աչքով տեսնել ու հաշվել։ Քանի կարճացնենք ձողը և փորձը կրկնենք, կտեսնենք, որ ճոճումներն էլ այնքան արագ են լինում։ Հետևհետե կարճացնելով ձողը, վերջապես կհասնենք այնպիսի աստիճանի, երբ ճոճումները այլևս նշմարելի չեն դառնում և ձողը մեզ թվում է ծայրն ուռած մի առարկա։ Դա նրանից է, որ աչքի կրած տպավորությունը յուրաքանչյուր ճոճման ժամանակ՝ այնքան արագ չի ջնջվում, որքան ճոճումներն են հետևում իրար և հետևաբար մենք տեսնում ենք ձողը իր բոլոր դիրքերի մեջ միաժամանակ։ Եթե սրանից հետո էլի շարունակենք կարճացնել ձողը, վերջապես կսկսենք լսել մի թավ ձայն, որ այնքան ուժեղ կլինի, որքան ձողի ծայրը հաստ երևա, այսինքն թրթռումները լի լինեն։ Իսկ եթե էլ ավելի կարճացնենք ձողը, կլսենք ավելի սուր մի ձայն, բան առաջինը։ Այսպիսով ապացուցվում է, որ ձայնը որոշ արագությամբ թրթռումների արդյունք է։

Թրթռումներից առաջացած ցնցումը փոխանցվում է հեռուն, ճիշտ այնպես, ինչպես հանդարտ ջրի մեջ գցված մի քար տալիս է վեռվեռումներ, որոնք շրջանակի ձև առնելով հասնում են մինչև ևղերքը։ Փոխանցումը կատարվում է բնականաբար որևէ մարմնի միջոցով, ինչպես օդ, ջուր, գազ, հաստատուն մարմիններ, մի խոսքով ամեն կշռելի առաձգական մարմին։ Ձայնն էլ ուրեմն փոխանցվում է այս մարմինների միջոցով։ Առանց օդի, կատարյալ պարապության մեջ, ձայն չկա։ Այս բանը ապացուցելու համար կարելի է կատարել հետևյալ հասարակ փորձը։

Օդահան մեքենայի զանգակի տակ դնենք մի էլեկտրական զանգ. քանի զանգակը լի է օդով, ձայնը լսելի է լինում, բայց երբ սկսում ենք դատարկել օդը, նրա հետ էլ աստիճանաբար նվազում է ձայնը և, վերջապես, երբ օդը ամբողջովին պարպվում է, ձայնն էլ այլևս դադարում է, թեև զանգի լեզվակի ցնցումները չեն դադարում։ Երբ օդը նորից սկսենք լցնել զանգակի մեջ, ձայնն էլ սկսում է հնչել։ Արդյունքը նույնն է լինում, եթե օդի տեղ զանգակի մեջ լցնենք որևէ գազ։

Այսպիսով ապացուցվում է, որ ձայնը պարապության մեջ լսելի չէ. նրա փոխանցման համար անհրաժեշտ է օդը։

Ձայնի փոխանցումը կատարվում է նաև հեղուկների և հաստատուն մարմինների միջոցով։ Լուղորդը ծովի տակ լսում է ամենատարբեր ձայները։ Երբ ականջներս կպցնենք մի գերանի, մյուս ծայրին գնդասեղով արված չնչին շարժումները պարզ լսելի են լինում։

Գլուցպիր շատ անգամ հետո անցարգի ձայնը ավելի լավ լսելու համար՝ գետնին են ականջ դնում։

Որև ձայնը մինչև մեր ականջը հասնելու համար պետք ունի որևէ մարմնի միջոցով անցնելու, ուրեմն պետք է ենթադրել, թե՝ 1) ձայնի արագության և լսողության միջև պետք է անցնի մի որոշ ժամանակ և 2) այդ ժամանակը տարբերվում է իբրև միջնորդ ծառայող մարմնի առաձգականության համեմատ։

Թողնելով մյուս մարմինները, մենք այստեղ խոսենք օդի միջոցով փոխանցման մասին։

Օդի մեջ ձայնի արագությունն է 331 մետր մի վայրկյանում, 0° ասթիճանի բարեխառնության տակ. յուրաքանչյուր ասթիճանին ավելանում է 60 սանտիմետր, այնպես որ միջին բարեխառնության (15° սաթության) մեջ, ձայնի արագությունը դառնում է 340 մետր մի վարկյանում, ինչ որ մի միլիան անգամ պակաս է, քան լույսի ալիքների արագությունը։ Այս բանը չափված է մի քանի անգամ տարբեր ձևերով։

Առաջին փորձը կատարվել է Ֆրանսիայում 1738 թվականին, դիտությունների ակադեմիայի նախաձեռնությամբ։ Մի-մի թնդանոթ հաստատելով Մոնմարթր և Մոնթլերի կոչված վայրերում, դիշեր ժամանակ և խաղաղ օդով, սկսել են արձակել փոխադարձաբար յուրաքանչյուր 10 րոպեին։ Նույն միջոցին քննիչները նշանակում էին այն ժամանակամիջոցը, որ անց էր կենում լույսը հրետուր և ձայնը լսելու միջև։ Այսպես հաստատվեց, որ ձայնի արագությունն է 333 մետր մի վայրկյանում, 0° բարեխառնության մեջ։ Փորձերը կրկնվեցին 1822-ին և ավելի հետո՝ դանդաղ մարդիանց ձևերով։ Ինչևէ Ֆրանսիացին դիմեց ավելի նուրբ փորձերի՝ ժամանակագիր (chronographe) գործիքով և ուրիշ գործիքներով։ Վերջապես փորձեր արին նաև ապուպանների մեջ, ատրճանակի միջոցով, գանելու համար ձայնի արագությունը ընշված օդի մեջ։ Տարբերություններ երևայ որ աննշան է և այժմ հաստատված է, որ ձայնի արագությունը 331 մետր է մի վայրկյանում։ Նման փորձեր կատարվեցին ուրիշ մարմինների վրա և նկատվեց, որ նրանց միջոցով ձայնը ավելի արագ է գնում, քան օդի մեջ։ Այսպես, ջրի մեջ ձայնի արագությունն է մի վայրկյանում 1435 մետր, հաստատուն մարմինների մեջ ավելի արագ է լինում ընթացքը. այսպես, պղնձի մեջ՝ 12 անգամ ավելի քան օդում, երկաթի մեջ՝ 16 անգամ ավելի, եղինափայտի մեջ՝ 18 անգամ ավելի, վերջապես պողպատի մեջ՝ մի վայրկյանում 5 000 մետր։ Հաստատված է նաև, որ հնչող

առարկայի շարժը տատանյալ ալիքները տարածվում են միօրինակ շարժումով, և իրենց տարածման արագությունը բոլորովին անկախ է ձայնի ուժգնությունից և բարձրությունից։ Սրա ապացույցն այն է, որ երաժշտական մի հատված, որ լսում ենք հեռվից, մեր ականջին տալիս է ճիշտ միևնույն տպավորությունը, ինչ-որ նրան լսելենք մոտից. ցած և բարձր ձայները (թավ և սուր հնչյունները) մնում են նույն համեմատությամբ և նույն հաջորդականությամբ, որից երևում է, որ բոլոր տեսակի ձայներն էլ նույն արագությամբ են ընթանում։ Նույնը պետք է ասել նաև ձայնի երանգի համար, որովհետև երբ լսում ենք երաժշտական մի սիմֆոնիա զանազան երաժշտական գործիքներից բաղկացած, ձայները չեն խառնվում իրար, ոչ էլ իրարից առաջ ու հետ ընկնում, այլ նույն կարգով ու շարքով հասնում են մեր ականջին։

Ձայնը ունենում է չորս հատկություն. ուժ կամ ուժգնություն (intensité), *բարձրություն* (hauteur), *երանգ* (timbre) *և տևողություն* (durée, longueur, quantité)։ *Թե իրապես ինչ են այս հատկությունները՝ մենք չգիտենք, ինչպես չգիտենք, թե ինչ է դյուրելի մեջ կարմրի, կանաչի, գեղինի ու սևի տարբերությունը։ Բայց կարելի է բացատրել, թե որանք ի՛նչ ֆիզիկական ազդակի արդյունք են և բնախոսորեն ի՛նչ ներգործություն ունեն մեր վրա։*

Ուժգնությունը ձայնի զորությունն է, այսինքն՝ ավելի հեռու հասնելու կարողությունը։ Միևնույն ձայնը կարելի է արտաբերել մեղմ կամ ուժեղ, տկար, թույլ, աղոտ ձևով և կամ ուժեղ, ուժգին, դորավոր. ոտքի կարելի է խփել գետնին թեթև հարվածով, կարելի է և խփել ուժեղ կերպով. ուրեմն բնախոսաբար ուժգնությունը ականջի կրած տպավորության սաստկությունն է։ Հիվանդը խոսում է թույլ ձայնով, առողջ մարդը՝ ուժգին։

Ձայնի բարձրությունը նշանակում է նրա սուր կամ թավ լինելու աստիճանը. որքան սուր է ձայնը, այնքան ավելի բարձր է. և որքան թավ, այնքան ավելի ցածր. այսպես, օրինակ, սոլն ավելի բարձր է քան դոն, և ավելի ցածր քան հաջորդ դոն։ Գիտական բացատրությամբ, ձայնի սաստկություն նշանակում է այն հարաբերությունը, որ կա երկու ձայնների միջև երաժշտական ձայնաստիճանի մեջ։ Մանկան ձայնը սուր է քան չափահասինը։

Երանգ ասելով հասկացվում է միևնույն բարձրությամբ, և մինչև իսկ միևնույն ուժգնությամբ արտաբերված երկու ձայն՝ տարբեր գործիքների միջոցով։ Միևնույն սոլ ձայնը արտաբերվելով ջութակի կամ սրինդի վրա, ականջին տալիս է տարբեր

պատկերացնել, թե ասոցիանում է ձայնի երանգին։ Ձայնավորների հնչական տարբերությունն էլ ասոցիանում է ձայնի երանգից։

Տեսությունն ասելով հասկացվում է այն ժամանակը, որ պարզում է այդինչ ձայնի արտասանության համար, ասենք՝ փոխելու երանգը և բարձրությունը։

Այս չորս հատկությունները անկախ են իրարից. կարող ենք արտասանել ձայնը ուժգին, բայց միևնույն ժամանակ կարճ, բարձր, բայց միևնույն ժամանակ թույլ, և այլն, և այլն։

Ուժգնությունը կապ ունի հնչող առարկայի հետազորության, ապի խտության ու ցնցման, ինչպես և մի հնչող առարկայի մերձավորության հետ։

Ուժգնությունը խոսքի համեմատական է ձայնական կենտրոնի հետազորության հետ, որքան հետ է հնչող առարկան, այնքան էլ ավելի է մեր ականջի կրած ազդակություններ, այսինքն՝ այնքան նվազ է ձայնի ուժգնությունը։

Ուժգնությունը ուղիղ համեմատական է ապի ճնշման ատիճանի հետ. բարձր մի ապրի պլիին սրճակված ատրճանակի պայթյունը ապայի խազալիքի նման մի բան է պատում։ Փորձով կարելի է տեսնել նույնը ատհան մեքենայի դանդակի ատակ, ուր ապը դատարկելուց հետո, երբ նորից սկսում ենք ապը ներս հասեցնել, դանդակի հնչյունը հետզհետե ատատկանում է և ավելի ուժեղ դառնում, քանի ներմուծված ապի քանակը շատանում է։ Նույնպես, եթե ապի փոխարեն լցնենք մի ուրիշ գազ, դանդակի հնչյունը կտվելանա կամ կպակասի գազի ծանրության կամ թեթևության համեմատ։ Սրանից երևում է, որ ձայնի ուժգնությունը ուղիղ համեմատական է նաև ծանրության կամ խտության հետ։

Ամեն մարդ գիտե նույնպես, որ դանդի ձայնը ավելանում կամ պակասում է համեմատ այն պատակերի, որ տալիս է նրանց բրբրթոումների պատկերը մրած թղթի վրա։ Եթե հաշվենք, կտեսնենք, որ միևնույն երկարությամբ գծի վրա ձևացած բրթոումները նույն թվին ունեն։ Իսկ եթե տարբեր նատանոր վերցնենք, սուր ձայնը ներկայացնում է ավելի շատ բրթոումներ, քան բավր։ Սրանից հետևում է, որ ձայնի բարձրությունը ուղիղ համեմատական է բրբրթոումների արագության հետ։

Որպեսզի ձայնը լսելի լինի մեր ականջին, պետք է ունենա որոշ թվով բրթոումներ։ Այս թիվը թեև ականջի զգայնության համեմատ անձից անձ փոփոխվում է, բայց սովորաբար ընդունված է, որ նա պետք է ունենա առնվազն 16 զույգ (կամ 32 առանձին) և

առավելն 38 000 կրկնակ (կամ 76 000 առանձին) թրթռում մի վայրկյանում, ըստ քննության Դևսպրեց բնագետի։ Սրանից պակաս կամ ավելի թրթռումներ ունեցող մի ձայն մեր ականջը չի չոկում։

Բացի սրանից, մի հատիկ թրթռում կամ թրթռումի մի ալիք բավական չէ լսողության համար. պետք է որ առնվազն 10—15 թրթռում համաչափությամբ հաջորդեն իրար վերև հիշված արագության սահմանում, որպեսզի կարողանան դալ խփել մեր ականջը։



Պատկեր 4

Պատկեր 5

Ձայնի բարձրությունը չափելու կամ որոշելու համար կան զանազան գործիքներ, մեքենական, տեսողական, լուսանկարչական, էլեկտրական և այլն, որոնցից պարզագույնները հետևյալներն են.

1. Ձայնափող (tuyau sonore), որ բաղկացած է մի գլանաձև խողովակից և ծայրին ունի մի շերտ. մյուս ծայրից փչելուց՝ շերտը սկսում է թրթռալ և այսպիսով լսվում է մի որոշ ձայն, որ զանազան է լինում համաձայն փողի մեծության։ Միևնույն ձայնափողը տալիս է միշտ միևնույն ձայնը, որ և ծառայում է նրանից բարձր և նրանից ցածր մյուս ձայները որոշելու։

2. Ձայնորդ (diapazon, կամերտոն). պողպատից երկմատ մի ձող է, որ խփելով որևէ մարմնի, սկսում է թրթռալ և տալիս է մի որոշ ձայն։ Յուրաքանչյուր ձայնորդ ունենում է մի որոշ ձայն. սրանով նույնպես որոշվում են մյուս ձայները։

Կա մի հատուկ ձայնորդ (պատկեր 4), որով կարելի է դուրս բերել զանազան ձայներ։ Սա նույնպիսի սովորական մի ձայնորդ է, որի երկու ճյուղերի վրա ագուցված է հավասար մեծությամբ մի-մի հավելվածական շարժական կտոր։ Կտորները բռնված են մի

2—147

A 3670

պատատակով և պահվում են պատշաճ հեռավորությամբ։ Ձայնորդը նրա թրթռացիններ, այս պարագային կատ ավելի ցածր ձայն, և այդ ձայնը այնքան ավելի ցածր կլինի, որքան հավելվածները ծանր են և ծայրերին ավելի մոտ ամրացված։

3. Զևեկի սիրենա (պատկեր 5). բաղկացած է խոռոչաթաղ կամ մետաղե մի սկավառակից, որի վրա բացված են համաչափ հեռավորությամբ և հավասար մեծությամբ բազմաթիվ ծակեր։ Սկավառակը պտտվում է իր առանցքի վրա միօրինակ շարժումով։ Սկավառակի հետևում հարմարացրած է մի փող, որի խողովակի ծայրից շարունակ փչվում է քամին։ Սկավառակը պտտվելով, ծակերը հաջորդաբար դալիս անցնում են փողի խողովակի առջևով, այնպես որ քամին անցնում է ծակերի միջով։ Արանով առաջանում է մի ձայն, որ այնքան բարձր է լինում, որքան արագանում է պտույտը։ Նրա սկավառակն ունի n ծակ և կատարում է N պտույտ մի վայրկյանում, ուրեմն առաջված ձայնը իր բարձրությամբ համապատասխանում է մի այնպիսի ձայնի, որ ունի մի վայրկյանում n × N թրթռում։ Սկավառակը կանոնավոր կերպով իր պտույտները կատարելու համար ունի մի շուռավիկ։ Բացի սրանից, սկավառակի ներքի դարձող երկու ատամնավոր անիվները պտտվելով միաժամանակ, ցույց են տալիս սկավառակի կատարած պտույտների թիվը։ Անիվներից մեկն ունի 100 ատամ և սկավառակի պտույտի հետ ինքն էլ պտտվելով, միևնույն ժամանակ շարժվում է երկրորդ անիվը։ Առաջին անիվի մի ատամին համապատասխանում է սկավառակի մի պտույտ, իսկ նրա 100 ատամին շարժվում է երկրորդ անիվից մի ատամ. այսպիսով հեշտությամբ կարելի է իմանալ, թե սկավառակը քանի՞ անգամ է պտտվել։ Թրթռումների թիվը իմանալու համար պետք է պտտեցնել սկավառակը և արտադրված ձայնը համեմատել ցանկացած ձայնի հետ։ Քանի արագացնենք սկավառակի պտույտը, ձայնն էլ այնքան կբարձրանա։ Հենց որ սկավառակի ձայնը հավասարվեց քննելի ձայնին, կսկսենք նորից շարժել սկավառակը նույն արագությամբ՝ հաշվելով վայրկյանները։ Այնուհետև անիվների վրայից իմանալով պտույտների թիվը, կբազմապատկենք սկավառակի ծակերի թվի հետ և արտադրյալը բաժանելով վայրկյանների թվով, քանորդը կլինի նույն ձայնի համար արված թրթռումների թիվը մի վայրկյանում։

4. Cagniard-Latour սիրենա.— Հիմնված է նույն սկզբունքով, ինչ որ նախորդը. միայն թե օդի հոսանքը գործ է ածվում սկավա-

ռակը պտտցնելու համար (պատկեր 6—7)։ Սեղանի տակին հաստատված է մի փուքս, որ շարժվում է ոտքի բախումներով։ Սեղանի վրա հաստատված է բուն գործիքը։ Սա բաղկացած է նույնպես մի սկավառակից, որ դրված է մետաղյա տուփի երեսի վրա։ Թե՛ սկավառակը և թե՛ տուփի երեսը ունեն որոշ թվով և համաչափ հեռավորությամբ ծակեր։ Տուփը մի խողովակով ագուցվում է սեղա-



Պատկեր 6.

նի վրա և միանում փուքսին։ Փուքսի շարժման ժամանակ օդը անցնելով խողովակով, դուրս է գալիս տուփի երեսի բոլոր ծակերից. և, որովհետև, սկավառակի ծակերն էլ այնպես են շինված, որ ճիշտ նրանց դեմ առ դեմ են գալիս, ուստի օդի հոսանքը անցնում է նրանց միջով և ստեղծում որոշ ձայն։ Քանի արագանա շարժումը, ձայնն է՛լ ավելի կբարձրանա։ Միևնույն ժամանակ սեղանի վրա հաստատված է լինում մի ձայնափող, իսկ գործիքի վրա երկու անվակ՝ պտույտների թիվը հաշվելու համար։ Սկավառակին տալիս են պետք եղած արագությունը, մինչև որ արտադրված ձայնը հավասարվի ձայնափողի ձայնին. այնուհետև անվակների վրա որոշելով պտույտների թիվը, շարժում են մեքենան 15 վայրկյան և նախորդի պես հաշվում հրթռումների թիվը մի վայրկյանում՝ ցանկացած ձայնի համար։

Այս գործիքներով ահա պիտաններ չափելով ձայնի բարձրությունը, որոշել են նրա պահպան ատոիճանների քրթռումների քիվը։

Եթե ձայնը շարժվում է 16-ից 38 000 քրթռումների միջև, նշանակում է, որ կա այսքան ատոիճանի ձայն։ Բայց սա անսահմանություն միայն ուղիղ է. ականջը անկարող է պահպանել, օրինակ, 400, 401, 402, 403 և այլն քրթռումներ ունեցող ձայները իրարից. հիշա ինչպես որ աչքը անկարող է լինում պահպանել ապիտակից մինչև սև հասնող գույնի բոլոր երանգները։ Ինչպես որ աչքը կարողանում է բոլոր երանգները միայն, այն է կաթնագույն, մոխրագույն, դարչ, կապարագույն և թուխ, այնպես էլ ականջը բոլոր ձայների որոշ հանգրվաններ։ Հնագույն ժամանակներից սկսած մարդիկ որոշել են ձայնի հետևյալ ատոիճանները, իրենց քրթռումներով միասին.

do^{-2}	re^{-2}	mi^{-2}	fa^{-2}	sol^{-2}	la^{-2}	si^{-2}
16	18	20	22	24	27	33
do^{-1}	re^{-1}	mi^{-1}	fa^{-1}	sol^{-1}	la^{-1}	si^{-1}
32	36	40	43	49	54	66
do	re	mi	fa	sol	la	si
65	73	81	87	98	109	122
do^{2}*	re^{2}	mi^{2}	fa^{2}	sol^{2}	la^{2}	si^{2}
130	146	162	174	196	218	244
do^{3}	re^{3}	mi^{3}	fa^{3}	sol^{3}	la^{3}	si^{3}
261	292	324	348	392	435	488
do^{4}	re^{4}	mi^{4}	fa^{4}	sol^{4}	la^{4}	si^{4}
522	584	648	696	783	872	976
do^{5}	re^{5}	mi^{5}	fa^{5}	sol^{5}	la^{5}	si^{5}
1044	1168	1296	1392	1568	1744	1952
do^{6}			fa^{6}			
2088			2784			
do^{7}						
4176						

* *Այս թվերի մեջ կոտորակները դանց են առնված, այսպես, օրինակ, do ունի իսկապես 65, 25 քրթռում. սրա համեմատ էլ մյուսները։ Քրթռումների իրեև տիպար առնում է la^{3} (435 քրթռումով), որով չինում են սովորաբար կամերտոնը։*

Մարդկային ձայնի ամենացածր աստիճանն է do^1 (որ է բաս), իսկ սոպրանոների ամենաբարձր ձայնն է do^5. նրաժշտության մեջ ամենացածր ձայնն է $do^{?}$, որ առաջանում է 16 ոտք երկարությամբ փակ խողովակի մեջ և երգեհոնի ամենամեծ խողովակն է. do^1 (65 թրթռում) թավշությակի թավ ձայնն է։

Ամեն մի մարդ կյանքի ընթացքում մի քանի անգամ փոխում է իր ձայնը. այլ է մանկական ձայնը, այլ է արբունքի հասած մարդու ձայնը, այլ է երիտասարդության կամ ծերության ժամանակ, այլ է և հիվանդ ժամանակ։ Նույնիսկ միևնույն մարդը միևնույն օրվա ընթացքում, նայած իր տրամադրության կամ հանգամանքներին, փոխում է իր ձայնը։ Երկու հայ միևնույն լեզվով են խոսում, բայց նրանց ձայնը տարբեր երանգ ունի. և հաճախ, առանց իրար տեսնելու, մարդիկ ճանաչում են իրար՝ իրենց ձայնի երանգով, որ և երկար տարիներ հիշողության մեջ մնում է անմոռաց։

Մերձավոր ժողովուրդներ իրար մոտիկ երանգներ ունեն իրենց խոսակցության ձևի մեջ, քան հեռավոր ժողովուրդներ. օրինակ, հայի ձայնը շատ ավելի նման է հնչում վրացու ձայնին, քան մի անգլիացու։

Անշուշտ այս բոլորի մեջ կան նախ և առաջ ուժի, շեշտի և ձայնի բարձրության տարբերություններ, մանավանդ հոդավորման հիմքի (արտասանության եղանակի) տարբերություններ, բայց սրանցից դուրս կա նաև մի այլ հատկություն, որ եռաձգ է կոչվում։

Նոտաների ձայնաստիճանների թրթռումների վերաբերյալ թվերը եթե համեմատենք իրար հետ, կտեսնենք, որ նրանց մեջ կա կանոնավոր մի հարաբերություն։ Այսպես, օրինակ.

re հավասար է do ձայնի $\frac{9}{8}$-ին, որովհետև $65{,}25 \times \frac{9}{8} =$

$= \frac{587{,}25}{8} = 73{,}40$

mi հավասար է do ձայնի $\frac{10}{8}$-ին կամ որ նույն է $\frac{5}{4}$-ին,

որովհետև $65{,}25 \times \frac{10}{8} = \frac{625{,}5}{8} = 81{,}5$

fa հավասար է do ձայնի $\frac{11}{8}$-ին կամ որ նույն է՝ $\frac{4}{3}$-ին

որովհետև $65{,}25 \times \frac{4}{5} = \frac{261}{3} = 87$

sol հավասար է do ձայնի $\frac{12}{8}$-ին, կամ որ նույն է $\frac{3}{2}$-ին, որովհետև $65{,}25 \times \frac{3}{2} = \frac{195{,}75}{2} = 97{,}87$

la հավասար է do ձայնի $\frac{13}{8}$-ին կամ ավելի հիշա $\frac{5}{3}$-ին, որովհետև $65{,}25 \times \frac{5}{3} = \frac{326{,}25}{3} = 108{,}75$

si հավասար է do ձայնի $\frac{15}{8}$-ին, որովհետև $65{,}25 \times \frac{15}{8} = 122{,}3$։

Միևնույն հարաբերությունը ճշտիվ պահվում է մյուս շարքերի մեջ էլ, իսկ յուրաքանչյուր շարքի ամեն մի ձայնը նախորդ շարքի համապատասխան ձայնի $\frac{16}{8}$ կամ որ նույնն է՝ կրկինն է. այսպես $do^2 = 65{,}25 \times 2 = 130$ և այլն։

Ուրիշ խոսքով, ամեն մի ձայն նախորդից 1/8 անգամ ավելանում է այսպես՝ $do = \frac{8}{8}$, $re = \frac{9}{8}$, $mi = \frac{10}{8}$, $fa = \frac{11}{8}$, $sol = \frac{12}{8}$, $la = \frac{13}{8}$, $si = \frac{15}{8}$, $do^2 = \frac{16}{8}$,

Այս ամբ հարաբերությունից պատճառով, ահա, երաժշտագիտները որոշել են 8 ձայն, որ նշանակում են հետևյալ ձևով ու անուններով.



Նորդ հայկական ձևով ու անուններով՝



փո է վե րև խո նե պա փո

(այս վերջիններըը համառոտված են փուշ, եկործ, վերճախաղ, բեճկործ, խոսրովային, ներքճախաղ, սյարույկ անուններից)։

Այս 8 ձայներից ցածր եղած ձայնները նշանակում են do^{-1} re^{-1}, do^{-2}, re^{-2}..., իսկ ավելի բարձր գտնված ձայները do^2, re^2 ..., do^3, re^3...։ Բացի սրանից, ձայները կարելի է կոչել նաև ըստ կարգի. այսպես do-ից հետո՝ re կամ երկրորդ (seconde), mi կամ

երրորդ (tierce), fa կամ չորրորդ (quarte), sol կամ հինգերորդ (quinte), la կամ վեցերորդ (sixte), si կամ յոթերորդ (septième)։ Մի որևէ ձայնից 8 աստիճան բարձր ձայնը կոչվում է ութերորդ (octave). այսպես do^2 ութերորդն է do^1-ի, do^3 ութերորդն է do^2-ի, re^3 ութերորդն է re^2-ի և այլն։ Իսկ իրար հաջորդող և աստիճանաբար իրարից բարձր ութ ձայների խումբը կոչվում է ութնյակ (gamma)։ Ութնյակը կարող է սկսվել որևէ ձայնով, do կամ mi կամ fa^3 և այլն, միայն թե հաջորդ 7 ձայնները նրանից աստիճանաբար բարձր պիտի լինեն։ Ամեն մի ութնյակի սկիզբը դրված ձայնը կոչվում է tonique, որովհետև նա է, որի վրա չափվում են ութնյակի հաջորդ ձայները։ Ութնյակի մեջ հինգերորդ ձայնը (որ tonique ձայնից հինգ աստիճան վերև է գտնվում) կոչվում է տիրող ձայն (dominente), որովհետև նա է, որ ամենից ավելի տպավորում է ականջը։ Իսկ երկու ձայնի իրար հետ ունեցած հարաբերությունը (9/8, 10/8, 16/8 և այլն) կոչվում է ձայնամիջոց (intervalle)։

Ձայնի բարձրության վերաբերյալ և մեզ համար կարևոր օրենքները հետևյալներն են.

1. Նույն կազմությամբ, նույն հաստությամբ և նույն չափով պրկված երկու թելերի ձայնի բարձրությունը խոտոր համեմատական է իրենց երկարության հետ։

2. Նույն կազմությամբ, նույն երկարությամբ և նույն չափով պրկված թելերի ձայնի բարձրությունը խոտոր համեմատական է իրենց հաստության հետ։

Ըստ այմ, որքան երկար է թելը, այնքան ցածր է ձայնը և որքան կարճ է թելը՝ այնքան բարձր է ձայնը։ Սրա համեմատ էլ կալմված է ջութակը, ուր մատներով կարճացնելով թելի երկարությունը, սրվում է նրան հետզհետե ավելի բարձր ձայն։ Նմանապես դաշնամուրի թելերը սկսելով ամենացածր ձայնից, հետզհետե կարճանում են, հասնում մինչև ամենաբարձր ձայնին։

Որքան մեծ է թելի հաստությունը, այնքան փոքր է թրթռումների թիվը. սրա համեմատ էլ ջութակի առաջին երեք թելերը մեկը մյուսից հաստ են և հետևաբար տալիս են իրարից թավ ձայն. առաջինն է mi^4, երկրորդը la^3 և երրորդը re^3։

Այժմ մնում է երկու խոսք ասել ներդաշնակության և հնչառնների մասին։

Ներդաշնակություն ասելով հասկացվում է զանազան ձայների միաժամանակ արտաբերությունը, եթե նրանք մարդկային ականջին ախորժելի են թվում։ Հակառակը կոչվում է աններդաշնակ։

Նրբ, օրինակ, դաշնամուրի վրա երկու հաջորդական տոներ միասին խփենք, ականջը դժում է շատ անախորժ ազդեցություն, իսկ եթե սրանք մեկի հետ միասին խփենք նրա հաջորդ կամ նախորդ ութերորդ մասը, ականջն դժում է մի հաճելի ազդեցություն։ Այս պարագային ասում ենք, որ հաջորդական երկու մասների միությունը կազմում է անհնդրպաշնակություն, իսկ տասնյոթի և ութերորդի միությունը կազմում է ներդաշնակություն։

Ձանազան տոների ներդաշնակություններ կան. դրանց ամենապարզ ձևը նույն ձայնն (unisson) է. եթե սրանք երաժշտական գործիքի վրա լսված մի ձայն կրկնելու լինենք մեր ձայնով կամ սրանք նվագարանի վրա, դարձ կլա նույնաձայն ներդաշնակություն։ Ուրեմն նույնաձայն ներդաշնակություն նշանակում է ձայների միևնույն բարձրության, տարբեր երանգով։

Երկրորդ ներդաշնակությունն է լսարանչյար ձայնի ութերորդը (octave), որ նախորդի կրկին թրթռումներն է ներկայացնում, այսպես՝ mi և mi^2, կամ la^3 և la^4 և այլն։

Երրորդ ներդաշնակությունն է լսարանչյար ձայնի հինգերորդը (quinte), որ նախորդի հետ 3/2 հարաբերությունն ունեն. օրինակ՝ do և sol և այլն։

Կարելի է նաև կազմել 3 ձայնով ներդաշնակություններ, որոնք է՛լ ավելի ախորժելի են ականջին, քան նախորդները. այսպես, օրինակ՝ gamme majeure-ի առաջին, երրորդ և հինգերորդ ձայները միասին (do—mi—sol), (որոնց թրթռումների հարաբերությունն է $1, \frac{5}{4}, \frac{3}{2}$ կամ ամբողջ թվերի վերածելով՝ 4, 5, 6) շատ դուրեկան են։ Նույն շարքը gamme mineure-ի մեջ ($la-do^2-mi^2$), որոնց հարաբերությունն է 10, 12, 15, շատ դուրեկան է նույնպես։ Սրանք կոչվում են կատարյալ ներդաշնակություններ։

Այս ներդաշնակություններից տարբեր է այն, որ երաժշտական լեզվով կոչվում է harmonia. սա կազմվում է ձայների մի այնպիսի շարքից, որոնց լսարանչյար թրթռումների թիվը նախորդի մի ամբողջական բազմապատիկը լինի. օրինակի համար do^1, do^2, sol^2, do^3, mi^3, sol^3 և այլն կազմում են մի harmonia, որովհետև do ունենալով 65 թրթռում և do^2 130, վերջինս նրա կրկինն է. sol^2 ունենալով 196 թրթռում, նրա երեք անգամն է. այսպես և do^3 260 = 4 × 65, mi^3 324 = 5 × 65 և այլն*։

* Դյուրթադրասին է վերագրվում երաժշտական ներդաշնակության վերաբերումը մաթեմատիկական հարաբերությունների (Ն. Լեգիս. Բնության դիալեկտիկա, էջ 161)։

Հնչարան ասելով հասկանում ենք որևէ ընդունարան, որի միջով անցնելով հնչված ձայնը, ստանում է ավելի հնչականություն կամ ուժեղանում է։ Եթե մի թել պրկելով սկսենք թրթռացնել, նա կտա մի որոշ ձայն, իսկ եթե նրա մոտ դնենք մի հնչուն տրկղ, կտեսնենք, որ նույն ձայնը շատ ավելի հնչուն կդառնա։ Եթե գրպանի ժամացույցը դնենք սեղանի վրա պատկած դիրքով, անշուշտ կլսենք դարկի ձայնը. իսկ եթե հենենք ծայրի օղակի վրա, ձայնը շատ ավելի հնչուն կդառնա. պատճառը հնչարանն է, այսինքն այն փոքրիկ ընդունարանը, որ ձևացավ ժամացույցի տակ մինչև օղակը։ Այս օրենքի համեմատ է կտրված դանդաղան նվագարանների, ինչպես թառի կամ ջութակի գոգավոր մասը, որ նրա հնչարանն է և որոշ չափով ուժեղացնում է հնչված ձայնը։

Հնչարանի մեծությունը և ձևը որոշ նշանակություն ունի ձայնի ավելի հնչեղ դառնալու մեջ։ Երբ մի թիթեղյա ման դնենք ծորակի առաջ և ջուրը միօրինակ հոսի նրա մեջ, նախ կլսենք բավական բարձր և հնչուն մի ձայն, որ քանի գնա կթուլանա և կթավանա։ Պատճառը հնչարանի բարձրությունն է, որ քանի գնում ջրի ավելանալով կարճանում է։

Հնչարանի (chambre de résonnance) ձևի փոփոխությամբ ձայնը փոփոխելու հեշտ փորձ կարելի է կատարել հետևյալ ձևով.— Փողի ծայրին անց են կացնում իրար ետևից զանազան մեծությամբ և ձևով խողովակներ (կլոր, ձագարաձև, գնդաձև և այլն), և երբ փչում ենք փողի բերանից, տեսնում ենք, որ ամեն անգամ մի տարբեր երանգի ձայն է դուրս գալիս։ Որովհետև փողը նույնն է միշտ, ուստի հասկանալի է, որ երանգների տարբերությունը հնչարանի ձևից է։

Այս սկզբունքի վրա է հիմնված բոլոր փողավոր նվագարանների կազմությունը։

Հնչարանների ձևի և բարձրության և նրանց հնչեցրած ձայնի աստիճանի միջև կան որոշ և հաստատուն օրենքներ. օրինակ՝ մի դնդաձև հնչարան ուժեղացնում է միայն մի ձայն, որ համարվում է նրա հիմնական ձայնը։ Այս օրենքները ուսումնասիրված են ֆիզիկայի մեջ և նրանք հիշել այստեղ երկար կլիներ։

Վերը բացատրեցինք, թե ի՛նչ բան է ձայնի երանգը. դա միևնույն բարձրությամբ և մինչև իսկ միևնույն ուժգնությամբ ձայնն է տարբեր նվագարանների վրա. օրինակ՝ եթե ածենք «Սիծեռնակ»-ը ջութակով, թառով, դաշնամուրով և այլն, բոլորն էլ դուրս կգան «Սիծեռնակ», բայց այնուամենայնիվ նրանց մեջ մի տարբերություն կա։ Այդ տարբերությունը կոչվում է երանգ։

Մինչև այժմ մեր ասեսած օրենքները կարող են բացատրել, թե ինչու՞մն է կայանում երանգը։

Եթե պրկենք մի քիկ և նրա մեջտեղից քրքռացնենք, նա կսկսի քրքռալ և կտա մի որոշ ձայն, որ կոչում ենք նրա հիմնական ձայնը. քրքռումներն էլ կտան քիկին մի առանձին պատկեր, որ նման է մի լցված իլիկի (տե՛ս պատկեր 8ա)։ Հնչմհոլց բնական ուսումնասիրելով այս երևույթը, դանում է երանգի էությունը, որ հետևյալն է։ Եթե ուշադրությամբ լսենք քիկի բաղադրյալ ձայները, վարժ ականջը կզգա ս՛չ միայն քիկի հիմնական ձայնը, այլև նրա բարձր ութնյակը։ Ուրեմն քիկը այս պարագային կրում է երկու տեսակ քրքռում միաժամանակ, ինչ որ ցույց է տալիս նաև պատկերը, որի կենտրոնն է քիկի մեջտեղը. երկրորդը նրա կրկինն է, երկու տիր, որոնց կենտրոնն է քիկի չորրորդ մասը, այսինքն ձայնի ութներորդը։ Ուրեմն այս պարագային ձայնը բաղադրյալ է, այսինքն՝ բաղկացած է երկու նոտաներից, մեկը՝ հիմնական ձայնը, մյուսը՝ իր ութնյակը։

Նման երևույթ պիտի դանենք, եթե քրքռացնենք քիկը իր 1/6 մասում. այն ժամանակ պիտի լսենք, բացի հիմնական ձայնից, նաև իր 3-րդ աստիճանի հարմոնիան։

Այս փորձերից հետևում է, որ երանգը կայանում է ձայների այնպիսի խմբակցության մեջ, ուր կա մի հիմնական ձայն՝ իր դանազան աստիճանի հարմոնիաններով ընկերացած. հիմնական ձայնը ամենից քաշն է և իր հաստությամբ հաղթելով բոլորին, տալիս է ամբողջին իր բարձրությունը. մյուս հարմոնիաների աստիճանը, ուժգնությունը, բանակությունը և դիրքը կազմում են ամբողջ երանգը։ Ականջը առհասարակ այնպես է վարժված, որ հարմոնիաները խառնում է հիմնական ձայնի հետ. բայց երաժիշտները վարժված են դրանք դանազանելու և հենց որ մեկը սխալ ձայն հանեց՝ բռնում են։

Ձայնորդը կազմված է այնպես, որ ունի միայն մի ձայն, առանց հարմոնիաների. այսպիսի ձայնը կոչվում է պարզ երգեհոնի խոշոր փակ խողովակները տալիս են պարզ ձայներ, որոնք խուլ են և առանց պայծառության (éclat)։ Պարզ ձայները ուրեմն երանգ չունեն և դանազանվում են իրարից միայն ուժգնությամբ և բարձրությամբ։

Երաժշտական մյուս գործիքների ձայները. ինչպես և լեզվի բոլոր ձայները. բաղադրյալ են, այսինքն՝ ունեն իրենց դանազան երանգները. դաշնամուրի մի ձայնը տալիս է մինչև 12 աստիճան

հարմոնիա։ Եթե մի որևէ գործիքի ձայնի բաղադրիչ մասերը հիմնական ձայնի հետ կանոնավոր հարմոնիա են կազմում, համագումարը կլինի դուրեկան և ախորժելի, իսկ եթե նրա հետ հարմոնիա չեն կազմում, այսինքն՝ եթե նրանց թրթռումների թիվը հիմնական ձայնի թրթռումների թվի բազմապատիկը չէ, ամբողջությունը դառնում է անդուրեկան։ Այսպիսի ձայները կոչվում են աղմուկ, ինչպես են՝ մուրճի հարվածը, փայտի թրխկոցը, կառքի թավալման ձայնը և այլն. աղմուկն այնքան անախորժ է լինում, որքան անհամապատասխան են նրա բաղադրիչ հարմոնիաներն իրար հետ։ Ըստ որում երաժշտական ձայների մեջ հիմնական ձայնը գերազանցում է երկրորդական հարմոնիաներից, դրա համար էլ որոշվում է ձայնի բարձրությամբ, որ հիմնական ձայնի բարձրությունն է, իսկ աղմուկի մեջ, որովհետև մի հիմնական ձայն չկա, այլ զանազան ձայներ, ուստի սովորաբար աղմուկը բարձրություն չունի։ Ձայնավորը երաժշտական ձայն է, բաղաձայնը՝ աղմուկ։

Եթե ձայները բաղադրյալ են զանազան մասերից, կարելի է ուրեմն նրանք տարրալուծել և գտնել նրանց բաղադրիչ մասերի բարձրությունը։ Ականջը անկարող է կատարել այսպիսի նրբություններ։ Հելմհոլցը մտածել է մի ուրիշ հնարք։ Որովհետև գնդաձև հնչարանները թրթռացնում են միայն մի ձայն, ուստի նա վերցնում է մի շարք արուլրե գնդաձև սնամեջ հնչարաններ զանազան մեծությամբ և հարմարացրած այնպես, որ յուրաքանչյուրը հնչեցնում է այս կամ այն աստիճանի ձայնը։ Հնչարանի տակին հարմարացրած է մի խողովակ, որ դնում են ականջի մեջ. հնչարանի բերանում հնչում են քննելի ձայնը և ինչքան էլ բարդ լինի այն, հնչարանը ցույց է տալիս, եթե կա, այն ձայնը միայն, որ ընդունակ է հնչելու. իսկ եթե այդ ձայնը չկա ամբողջի մեջ, չի հնչում։ Իրար հետևից փոխելով հնչարանները, վերջապես կարելի է գտնել նույն ձայնի բոլոր բաղադրիչ մասերը։

Այս սկզբունքի վրա Քյոնիգը կազմել է մի ավելի կատարյալ գործիք (տե՛ս պատկեր 9ա)։ Սա բաղկացած է մի շարք հնչարաններից, զանազան աստիճանի, որոնց բերանը դարձած է դեպի ձայնը. կաուչուկե խողովակներով յուրաքանչյուրը հաղորդակցում է մի անգայտաչափային փամփուշտ (capsule manométrique), որոնց բոցը ցոլանում է մի շրջուն հայելու մեջ։ Ձայնի հնչման ժամանակ հնչարաններից նրանք, որոնք ունեն հիշյալ ձայնի բաղադրիչ մասերից մեկը կամ մյուսը, սկսում են հնչել և նրանց բոցը միայն սկսում է երերալ հայելու մեջ, մինչդեռ մյուսները մնում են

անչափ, Յուրաքանչյուր Ձայնավոր որոշ բարձրության մեջ տալիս է որոշ Ձևի բոցեր, ինչպես տեսնում ենք պատկեր 9-ի մեջ։

Ահա Ձևով Ձայները վերլուծելուց հետո, Հելմհոլցը մտածեց կազմել նրանց համապատկերները. սրա համար նա կազմեց մի նոր մեքենա, որ բաղկացած է մի շարք Ձայնաղղներից, որոնք ամենայնաձև Ձայնի պարզագույն հարմոնիաներն են ներկայացնում։ Յուրաքանչյուրի մոտ կա մի խողովակ, որ կարելի է ըստ կամս կարճացնել կամ երկարել՝ համապատասխան Ձայնը ուժեղացնելու համար։ Հիմնական Ձայնի հետ խառնելով պարզագույն հարմոնիաներ և Ձայները ուժեղացնելով կամ ակարացնելով խողովակների միջոցով, կարելի է դուրս բերել երգիհոնի, դաշնամուրի և նույնիսկ շեփորի կամ սրնգի Ձայն։ Նույն սրպյուռներին կարելի է հաղորդել նաև Քյանիպի սիրուհույով, միաժամանակ հնչեցնելով պարզագույն Ձայներ և հարմոնիաներ։ Վերջապես երգիհոնի վրա կարելի է նման խառնուրդներով դուրս բերել պարզագույն ձևագարանների երանգներով Ձայներ։

Ձայնի բոլոր չորս հատկություններն՝ ուժգնություն, բարձրություն, երանգ և տևողություն, պարզ կերպով երևում են Ձայնագրի գծագրության մեջ։ Պատկեր 10-ը ներկայացնում է երեք այսպիսի գծագրություն. առաջինը քրքռացող քնքի պարզ հնչյունն է, այսինքն պարզ Ձայն՝ առանց հարմոնիայի. երկրորդը նույնի ուժեղորդն է (այսինքն երկրորդ աստիճանի հարմոնիան). երրորդը նույն քնքի բարդ Ձայնն է։ Ալիքի կորության բարձրությունը (այն է ab) ներկայացնում է Ձայնի ուժգնությունը. ինչքան մեծ է ab տարածությունը, այնքան ուժեղ է Ձայնը։ Ալիքի լայնքը (այն է cd խարիսխը), ցույց է տալիս քրքռումի տևողությունը կամ արագությունը, ուրիշ խոսքով Ձայնի բարձրությունը. որքան խարիսխը փոքր է, Ձայնն էլ այնքան բարձր է. ըստ որում երկրորդ գծի մեջ ալիքները երկու անգամ կարճ են առաջինից, որովհետև մին մյուսի երկրորդ աստիճանի հարմոնիան է։ Վերջապես ալիքի ձևը ներկայացնում է Ձայնի երանգը, ինչ որ հայտնի կերպով երևում է երրորդ գծի մեջ։ Այստեղ կետերով նկարված են առաջին և երկրորդ գծերի ալիքները, որոնց գումարը իրար տալիս է սև գծով նկարված ալիքը։

Կանոնավոր երաժշտական Ձայների գծագրության մեջ ալիքները հետևում են իրար կանոնավոր շարքով, իսկ երբ Ձայնը կազմված չէ հարմոնիաներից, ալիքների մեջ կարգ ու պարբերականություն չկա։ Այսպիսի Ձայնը ըստ Հելմհոլցի կոչվում է աղ-



Պատկեր 8



Պատկեր 10



Պատկեր 9ա



Պատկեր 9բ

մուկ, ազմուկի և ձայնի տարբերությունը կայանում է ուրեմն քրքրքրտումների կանոնավոր տարբերականության մեջ։

Նկատելի է, որ ձայնի ուժգնությունը կապ չունի բնավ նրա բարձրության, ինչպես և՝ երանգի հետ. ուրիշ խոսքով, դծապրությանց մեջ ալի գիծը կարող է շատ ավելի երկար կամ կարճ լինել, բայց նրա ընդ ելիսծած չէ, ուստի ձայնի բարձրությունն էլ ելիսծած չէ. կարելի է շատ բարձր մի ձայնանիշ երգել շատ մեղմ, ապահովն՝ շատ նվազ ուժգնությամբ։

ԳԼՈՒԽ Բ

ՁԱՅՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ ԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ*

Ձայնը ունի երկու կողմ. ձայնի արտադրությունը և ձայնի ստացումը. այս երկուսի միջև գտնվում է փոխանցումը: Ձայնական գործարաններն էլ երկու են. խոսողական և լսողական. առաջիններըեներգործական դեր ունեն, այսինքն՝ արտադրում են ձայն և բառ, երկրորդները՝ կրավորական դեր, այսինքն՝ ստանում են արտադրված ձայնն ու խոսքը:

Այս որակումները (ներգործական և կրավորական) ենթադրել են տալիս մեզ, թե խոսողական գործարանների դերը ավելի մեծ և կարևոր է, իսկ լսողական գործարաններինը՝ երկրորդական և անկարևոր: Այսպես կարող է լինել ֆիզիկայի համար և այսպես էին հասկանում նաև հին լեզվաբանները, որոնք իրենց ամբողջ ուշադրությունը դարձրել էին խոսողական գործարանների և ձայնի արտաբերության վրա: Մինչդեռ իրապես լեզվաբանության համար ավելի կարևոր էր լսողությունը, որովհետև լսողությամբ է, որ երևան է գալիս ձայների անհատականությունը: Եթե կինոյի միջոցով լուսանկարենք, օրինակ, bal բառը, պիտի տեսնենք բերանի, խոչակի, շրթունքների և լեզվի զանազան հաջորդական և իրար հարակից շարժումներ, որոնք կազմում են մի ամբողջական շղթա և կարելի չպիտի լիներ որոշել նրանց կազմիչ մասերը: Ականջն է, որ զգացության տարբերությամբ տալիս է մեզ b, a *և* l *ձայների*

* Vendryès, Le langage, p. 21.

անհատականություն, որի համեմատ էլ կազմված են աշխարհիս բոլոր այբուբենները։ Բայց արանից, լսողությամբ է, որ լեզուն փոխանցվում է սերնդից-սերունդ, լսողությամբ է, որ ամեն անհատ առանում է լեզուն, նրա համեմատ կազմավորում է իր ձայնական դրությունը։ Ամեն լեզու էլ պարունակում է միայն այն ձայները, որոնք ականջով ըմբռնելի են։ Լսողության թերացումներով է, որ, ինչպես քարտում են նորագույն լեզվաբանները, լեզուն առանում է իր առաջնական փոփոխությունները և անցնում հաջորդ սերունդներին։ Ավելին կա։ Այն ձևափոխությունները, որոնք ենթարկվել է, քե սկզբ են ունենում ձայնի փոխանցման միջոցին, անշուշտ ավելի կարևոր են ձայնի առացման համար և հետևարար լեզվի ուսումնասիրության մեջ։ Այս պատճառով ահա նորագույն լեզվաբանները սկսել են ուշադրություն դարձնել այժմ հակառակ ուղղությամբ, և քերևս կարելի լինի մի օր օգտակար արդյունքի հասնել։

Բնություն։ Հատուկ խոսողական գործարան չի տվել մարդուն. նրա այդպես լիներ, մարդը խոսողությունն էլ բնությունից առացած պիտի լիներ։ Շրթունքները նրա համար չեն, որ բ, պ, վ ձայները արտասանեն, այլ որպեսզի մոր տված կաթը ծծեն. տառամները նրա համար չեն, որ տ, դ, թ ձայներն արտաբերեն, այլ որպեսզի ուտելիքը ծամեն. լեզուն նրա համար չէ, որ ձայնավորներն ու ր, լ և այլն ձայները հնչեն, այլ որպեսզի ծամած ուտելիքը շաղախեն և այլն։ Մարդն է, որ ինչպես բնության զանազան բարիքներից, նույնպես և այս կողմից օգտվել է ուղղել և հնարել է խոսողություն, ճիշտ ինչպես հնարել է նշանացի խոսակցություն՝ ձեռքերի և այլ անդամների միջոցով։ Այստեղ գլխավոր դերակատարն է խոշակը (larynx), որ ձայն արտադրելու գործարանն է և շատ հարմարավոր կերպով օգտագործված է խոսողության համար։

Այս տեսակետով նայելով հարցին, խոսողական գործարանները տարբերվում են ուրիշ գործարաններից հենց ի բնե։ Օրինակի համար, ոտքը միայն քայլելու համար է, ձեռքը և մատները՝ բռնելու կամ շոշափելու համար և այլն։ Ասել, թե լեզուն կամ առամները խոսելու համար են տրված, նույն է ասել, թե աչքերը տրված են լրագիր կարդալու համար, կամ թե ձեռքը գիր գրելու համար են և մատները՝ դաշնամուր ածելու։ Այս կողմից միայն ականջն է, որ կրավորական գործարան լինելով հանդերձ, բնությունից տրված է

---

* Saussure. Cours de linguistique générale, p. 63–64.

մեզ լսելու և միայն լսելու համար։ Նա է, սակայն, նաև իսկական պատճառը խոսողության ու լեզվի, որովհետև, ինչպես տեսանք վերևում, ականջն եղավ նախապատճառ ձայնը օգտագործելու, և մարդը ընտրելով ձայնը իբրև միջոց հաղորդակցության, հնարեց ձայնի բոլոր նրբությունները և խոսակցական լեզուն։ Եթե չլիներ ականջը, մարդը իբր միջոց հաղորդակցության՝ պիտի գործածեր երևի աչքերը, այն է տեսողությունը և կատարելության պիտի հասցներ նշանացի խոսակցությունը։

Ընտրելով ձայնը իբրև միջոց հաղորդակցության, մարդը օգտագործեց իր բոլոր այն գործարանները, որոնք կարող էին պիտանի լինել իրեն, սկսած թոքերից և խռչակից մինչև շրթունքները և քիթը, որ տրված է մարդուն լոկ իբրև հոտառության գործարան։

Այսպիսով մարդը, որ ստեղծիչն եղավ խոսակցական լեզվի և հոգևոր ձայնի, ստեղծիչն եղավ նաև ձայնական գործարանների հավաքական այս գործունեության։ —Համրերին մնաց ձեռքով, աչքով ու նշաններով խոսակցելու տկար և անկազմակերպ միջոցը, ինչպես որ հետագայումն էլ կույրերի համար հնարվեց մատներով կարդալու միջոցը։

Աջ ու ձախ թոքերից դուրս են գալիս մի-մի ցնցուղ (bronche), որոնք միանալով կազմում են շնչափողը (trachée), որ սյունի պես բարձրանում է վզի մեջ։ Շնչափողի ամենաբարձր մասում, իբր մի սյունագլուխ կամ խոյակ, հաստատված է խռչակը, վզի բոլորովին ծայրը՝ առաջակողմում, մորթի անմիջապես տակը։ Արտաքուստ երևում է վզի վրա՝ իր դուրս ցայտած ձևով, որ հատկապես նկատելի է նիհար տղամարդկանց վրա և կոչվում է Ադամի խնձոր։ Խռչակից վերև կա լեզուն. ետևում ստուգը և ողնաշարը. լեզվի ետևում՝ խռչակի ճիշտ վերևը, գտնվում է սոսորդը (épiglotte)։

Խռչակի մեծությունը ըստ սեռի և տարիքի զանազանվում է. ահա նրանց միջին թվերը.

	Այր	Կին
	սմ.	սմ.
Բարձրություն (առանց սոսորդի)	4,4	3,6
Տրամագիծ լայնության	4,3	4,1
Տրամագիծ առաջից ետև	3,37	2,64
Շրջագիծը	13,6	11,2

Այս թվերը ներկայացնում են միջինները, բայց տեսնված է մինչև 11 միլիմետր լայնության տրամագիծ արուների մոտ և 9՝ կանանց մոտ։

Խռչակը կազմված է 5 զույգ կճեպներից և 5 զույգ մկաններից, որոնք տալիս են նրան զանազան շարժումներ։ Դրսի խռչակի մեջտեղում, ներսում կա երկու կտրից մի մի ծալք, սպիտակ աստառի պես, որ անհարմար անունով կոչվում է ստորին ձայնական լարեր կամ ձայնալարեր (cordes vocales)։ Սա ունի առաձգական հյուսվածքներ և կարող է ձգվել և թուլանալ, մեջտեղը ձգելով մի բացվածք՝ կոճակամայրի (յամրակի) նման, որ կոչվում է ձայնարան (glotte)։ Ձայնական լարերից մի քիչ վերև կա երկու ուրիշ ծալք կարմրագույն, որ կոչում են կեղծ կամ վերին ձայնալար, որոնք սակայն բնավ գործ չունեն ձայնի արտադրության մեջ։ Վերին և ստորին ձայնալարերի միջև կա մի խորշ, որ կոչվում է Մորգանի խորշ։ Սրբ բոբրերից օդը բարձրանում է դեպի վեր շնչափողի մեջ, նրա ճնշման ատկ, ձայնալարերը իրենց առաձգականության պատճառով բոլորովին հեռանում են իրարից և օդը ազատ դուրս է գալիս նրանց միջով, որով ճնշումն իսկույն իջնում է և հետևապես լարերն էլ ստանում են իրենց նախկին ձևը։ Եվ այսպես շարունակ։ Մարդկային ո՛չ մի գործարան, համեմատած իր մեծության, այնքան դյուրաշարժ ու հարաշարժ չէ, որշափ խռչակը։

Սոսորդը առանձին վերցրած ունի ձվաձև տերևի ձև. նա շատ հկուն մի գործարան է. հաստատվելով խռչակի առաջակողմը և լեզվի հիմքի հետնամասում, կցված է լեզվին երեք թելերով։ Եթե մատով կամ գդալի ծայրով ցած կոխենք լեզուն, տեսնվում է սոսորդի մի մասը, մանավանդ փոքրերի վրա։ Մի բան կուլ տալու ժամանակ, նա իջնում է և կափարիչի նման ծածկում ձայնարանը, խռչակն ու շնչափողը, որպեսզի ուտելիքը մտնի սուրդի մեջ և ոչ թե բոբրերի հանապարհը, որ և այսպիսով բոլորովին ապահովվում է։

Ձայնարան (glotte) կոչվում է ստորին ձայնալարերի միջոցը, որ ունի եռանկյունի ձև, դադաթը առաջակողմը հաստատված և անշարժ, իսկ խարիսխը դեպի ետև ու ըստ իր ձևափոխությանց ավելի կամ պակաս լայնությամբ։ Միջին հաշվով իր երկարությունն է 26—28 միլիմետր տղամարդկանց մոտ. խարիսխը 7,5—10 միլիմետր է տղամարդկանց մոտ և 5—7,5 միլիմետր կանանց մոտ։ Նրա երկարությունը ձայնական լարերի երկարությունն է։ Միջին հաշվով ինչ մեծություն որ ունի փոքրերի ձայնարանը, նրա 1,5 անդամն է կնոջը և կրկնակին՝ չափահաս տղամարդունը։

Կարելի է քննել խռչակը և ձայնալարերի շարժումները կա՛մ խռչակադետ (laryngoscope) կոչված գործիքով և կամ պարզապես աչքով։



Դափկեր 10

Խռչակադետը (laryngoscope) մի պարզ գործիք է, բաղկացած մի թեք հայելուց, որ ագուցված է մի երկար կոթի վրա։ Բռնում են կոկորդի խորքում, լուսավորելով այն մի ցոլացուցիչ լամպով կամ հայելիով. այդ պարագային խռչակի պատկերը երևում է գործիքի մեջ հակառակ դիրքով։

Խռչակադետը հնարեց Կիրշտեյնը, 1895 թվականին։ Սա արվում է հետևյալ ձևով։ Որովհետև խռչակի և բերանի անցքերը իրար ուղղահայաց են, ուստի՝ եթե ուղիղ անկյունը ուղղեինք և բերանը դնեինք խռչակի ուղղության վրա, այն ժամանակ խռչակը տեսանելի կդառնար։ Ըստ այսմ դիտելին նստում է իրանը թեքված ազդրերի վրա և գլուխը շատ հետև. քննիչը բահակը (spatule) դնում է լեզվի հիմքի վրա և այն ժամանակ խռչակը երևում է։ Այս ձևով կարելի է քննել միայն որոշ տառերի հնչումը, քանի որ մյուս-

նրբի համար բերանի մյուս մասերի գործունեությունը անհրաժեշտ է։

Խոչակը ընդունում է 2 շարք ջղեր, որոնք գանգային ջղերի 10-րդ և 11-րդ զույգերն են կազմում. առաջինը շնչառական ջղերի մասերն են խոչակի մեջ, երկրորդները, որոնք վերին և առորին հյուղեր ունեն, առաջ են բերում խոչակի մկանների շարժումները. առանց դրանց մարդ անխոս է։

Պատկեր A

Պատկեր B

Պատկեր A-ի մեջ L լեզուն է. E առաջքը. 1 և 1 առորին ձայնալարերն են, որ երևում են խոչակի խորքում, և որոնք ծածկված են ավելի կամ պակաս չափով ավելի վեր գտնված մասերով. այն է 3—3 վերին ձայնական լարերը, 2—2 Մորգանի խոռոչը. ներքևում S—S և W—W աճառներն են. երկու լարերի միջև գտնվում է ձայնալարեր, բոլորովին բաց. այս այն ձևն է, երբ մարդ շնչում է ազատ, առանց խոսել փորձելու. նրանք փակված դիրքով են, երբ խոսողը արտասանում է a ձայնը (պատկեր B) և այս ժամանակ երկու ձայնալարերը իրար կպած են լինում իրենց գանգի երկու բարակ բերաններ, մոտ-մոտի դրած, մեջտեղը գծի նման մի ճեղքով. ձայնը իրապես արտասանելու ժամանակ երևում է, թե ինչպես ձայնալարերը թրթռում են։

Լսողական գործարանը բաժանվում է երեք մասի. արտաքին ականջ, միջին ականջ և ներքին ականջ։ Առաջինը ծառայում է ընդունելու ձայնը, երկրորդը փոխադրելու, երրորդը լսելու։

Արտաքին ականջը բաղկացած է վրանից (pavillon) և լսողական անցքից (conduit auditif, ականջափող)։ Վրանը ականջի ամենաարտաքին ձվաձև մասն է և կազմված է մորթով պատած աճառից, որի ցածի ծայրում գտնվում է բլթակը՝ ականջի միակ մսեղեն մասը։ Վրանը ունի բազմաթիվ ծոմռումներ, որոնք ծառայում են ավելի լավ հավաքելու ձայնը։ Վրանը ավելի զարգացած է գազանաձև անասունների մոտ, բայց մարդու համար այդ մնծությունը այնքան կարևոր չէ, որովհետև նրա լսողական անցքի մեջ մի խոզո-

վակ խրենք (ծայրը դեպի դուրս) և վրանի դերը չեզոքացնենք, կտեսնենք որ լսողություն որոշ փոփոխություն չի կրել։ Նույնպես անասունների մոտ վրանը շարժական է. այդ շարժման նպատակն է վրանը ուղղել դեպի ձայնը՝ ավելի լավ հավաքելու համար ձայ-



Գծագրեր 11



Գծագրեր 12

նական ալիքները։ Բայց մարդու ականջը այնպես է կազմված, որ ընդունակ է ամեն կողմից նկած ձայներն էլ հավաքելու, ուստի և շարժման կարոտ չէ։ Վրանի խորքում գտնվում է կոճը, ուր հավաքվում է ձայնը. այդտեղից սկսում է ականջափողը և ունի 25 միլիմետր երկարություն. նա ծածկված է աղվամազով և արտադրում է դեղնագույն մի նյութ (սուկ, cerumen), որի նպատակն է պաշտպանել լսողական անցքը փոշուց և զանազան միջատներից։ Ականջափողի խորքը փակված է մի լավ ձգված և նուրբ թաղանթով, որ կոչվում է թմբուկ կամ թմբկաթաղանթ (tympan). նա ունի 1/10 մի-

լիմնար հատուկության, բայց չնայած այդ նրբության, շատ պիտանի է։

Լսողության մեջ նշանավոր դեր է կատարում այս մաղանթը։

Միջին ականջը, որ թմբուկով բաժանվում է լսողական անցքից, ձևացնում է մի խոռոչ, որ կոչվում է թմբկախորշ. սա մի անցքով հաղորդակցում է ատամքին ոսկի հետ՝ քթային խոռոչի (fosse nasale) միջոցով։ Այս անցքը կոչվում է Եվստաքյան փող (trompe d'Eustache) և ունի 35—40 միլիմետր երկարություն։ Թմբկախորշը լցված է օդով։

Ներքին ականջը, որ իր ինճուտա կազմվելյան պատճառով կոչվում է նաև լաբիրինթ (labyrinthe), բաղկացած է մի փուխրից, որ քանքարոսկրի (ostemporal) ամենակարծր մասի մեջ է փորված և արտաքուստ էլ ամեն վանդիից ապատ է մնում։ Այդ անցքը կոչվում է ժայռ (rocher)։ Ներքին ականջը պարունակում է երեք մասն. ա) կիսաշրջանաձև անցքերը (canaux semi-circulaires), որոնք շարված են երեք ապրանկյան մակարդակի վրա. բ) գավիթ (vestibule), որ հաղորդակցում է միջին ականջի հետ երկու փոքրիկ բացվածքներով (կլոր պատուհան և ձվածև պատուհան). գ) խըխունջ (limagon)։ Ամբողջ լաբիրինթը ծածկված է մի առանձին թաղանթային պարկով, որ ամբողջությամբ լցված է ենդոլիմֆային հեղուկով, որի մեջ լողում են լսողական ջղի ծայրի մազմզուկները։ Դրանք չափազանց շատ են, մոտ 60 000, և կպած են մի առանձին միջնորմի վրա, որ խխունջը բաժանում է երկու բաժնի (rampe), այս մազմզուկները կոչվում են Կորտյան թելեր (fibre de Corti)։

Ձվածև պատուհանը կապված է թմբուկի հետ 4 փոքր ոսկորների մի շղթայով. այդ ոսկորները բաժանված են միջին խոռոչի մեջ փոքրիկ մկաններով և են մուրճը (marteau), որ ուղղակի հենված է թմբուկին, սալը (enclume), ոսպնձան ոսկրը (os lenticulaire), որ մարդկային մարմնի ամենափոքր ոսկորն է, և ասպանդակը (étrier), որի հիմքը նստած է ձվածև պատուհանի վրա։

Երբ մի ձայնական ալիք հասնում է ականջին, վրանի և լսողական անցքի միջոցով գնում է մինչև թմբուկը, որ այդ միջոցին ձևափոխվում է իր երկու երեսների վրա տիրող ճնշումների անհավասարության ազդեցության տակ, այսինքն՝ թրթռում է։ Գիտունները երկար ժամանակ կարծում էին, թե մուրճի մկանը պաշտոն ունի ավելի կամ պակաս չափով ձգելով թմբուկը, հարմարեցնելու նրան այս կամ այն ձայնի ուժգնության։ Նոր գիտությունները չեն ընդունում այս կարծիքը։ Ամեն թաղանթ, որ որոշ աստիճանի պրկում

ունի, հարմար է հնչեցնելու միայն այս կամ այն ձայնը։ Ականջի թմբուկը չի կարող այդպես լինել, որովհետև այդ պարագային նա պիտի հնչեցներ միայն իրեն հարմար ձայնաստիճանը, իսկ մյուսները ոչ, հետևաբար և մի երգի մեջ ամեն ձայն էլ հավասարապես լսելի չպիտի լիներ մեզ։ Արդ, եթե այդպես չէ, եթե երգի բոլոր ձայները համաչափությամբ լսում ենք, ուրեմն ականջի թմբուկը որոշ պրկում չունի. նա գտնվում է մի այնպիսի թույլ վիճակի մեջ, որ հնչեցնի բոլոր ձայները։

Այսպես ուրեմն, թմբուկը փոխանցում է իր ստացած բոլոր ձայնական ցնցումները, համաձայն նրանց համեմատական ուժգնության, առանց մեկը կամ մյուսը ղորացնելու։ Ձայնի զորացումը կատարում է միջին ականջը, ծառայելով իբր հնչարան։ Ոսկորների շղթան ներգործելով ձվաձև պատուհանի վրա, թմբուկի թրթռումները փոխանցում է ներքին ականջին։

Ներքին ականջի պաշտոնն է վերլուծել ձայները, ալիքը հասնելով այդտեղ, առաջացնում է բավիղի հեղուկի մեջ համապատասխան մի շարժում, հանելով կոհակաձև ալիքներ կամ թրթռումներ, որոնք լսողական ջղերի միջոցով հաղորդվում են ուղեղին։ Որքան ձայնը ուժեղ է, բնականաբար ձայնական ալիքներն էլ այնքան մեծ են և հետևաբար այնքան էլ մեծ կոհակներ են առաջացնում բավիղի հեղուկի մեջ, որով զգայնությունն էլ լինում է ավելի զորեղ։ Հելմհոլցը ենթադրում է, թե հիշյալ թրթռումները իրենց բարձրության համեմատ գրգռում են տարբեր ջղային ցանցեր. ուրիշ խոսքով, 60 000 Կորտյան թելերից յուրաքանչյուրը, կամ ավելի ճիշտ Կորտյան թելերին հարակից որոշ փոքրիկ խմբակներ ձգում են որոշ բարձրությամբ թրթռումներ, բայց ոչ ուրիշներ։ Այսպես է բացատրվում տպավորության այն զանազանությունը, որ տալիս են մեզ ձայները, իրենց թրթռումների հաճախության կամ իրենց բարդության համաձայն։

Մարդկային ձայնը երեք գործարանների միահաղույն գործունեության արդյունքն է. այն է՝ թոքերը, խռչակը. և բերանը։ Առաջինի դերն է շնչումը, երկրորդի՝ ձայնի արտադրությունը, երրորդի՝ ձայնի հոդավորումը։

Շնչումը ունի երկու երևույթ. ներշնչում և արտաշնչում։ Ստոծանիի և կողոցի մկանների պրկման ու թուլացման հաջորդական գործողությամբ, օդը դրսից խուժում է թոքերի մեջ և այնտեղ թթվածինն արյան հետ հաղորդելուց հետո, մնացած ապականյալ

մասը դուրս է մղվում, քան հարիւր ավելի կամ պակաս քանակությամբ։

Ձայնը ալս արտաշնչման ալի ձևափոխվելն է։ Ձայնը կարող է կապվել թե՛ ներշնչման և թե՛ արտաշնչման միջոցին։ Ձանազան բարբառներ, օրինակ, համարելի ձայնը կապվում է ներշնչմամբ, որոշ լեզուներ, հատկապես Հարավային Ամերիկայի լեզուներից մի քանիսը գործ են ածում խուռնակցության մեջ ալնպիսի հնչյուններ, որոնք կապվում են ներշնչմամբ։ Հանանգանների լեզվի մեջ կա 4 ալապիսի ձայն և բաշմաններաի մոտ՝ 7 ձայն, որոնք գործ են ածվում միալն բառասկզբին։ Ակրոպոլիք առաջարձում են l կամ ļ ձևերով։ Նման ներշնչական ձայներ գտնվում է նաև Հնդկաստանի Մալիանի բարբառում (BSL, № 111, էջ 55)։ Թրանսերեն oui, երբեմն էլ non բառը անխուսափ արտասանության ժամանակ ներշնչմամբ է հնչվում։ Վաթա բարբառի մեջ կա մի առանձ «ալո», որ կապվում է ներշնչել լի հնչյունով։ Ամենքս էլ «ոչ» ասելս համար առնենք ց՛ ց՛ ձևը։ Ամերիկյան մալրդ լեզուն ունի մի առանձ l և մի առանձ d, որոնք ներշնչմամբ են կապվում (Boas, Handbook I, 684)։

Բայց սրանք բացառիկ երևույթներ են։

Ահռելաբարձ լեզուները խոսակցության մեջ գործ են ածում միալն այնպիսի ձայներ, որոնք կապվում են արտաշնչմամբ։

Ալստեղ նկատենք նաև, որ նորմալ շնչառության ժամանակ ներշնչումը կատարվում է միալն բերի միջոցով, արտաշնչումը բերի, մասամբ էլ բերանի միջոցով, իսկ խոսակցության ժամանակ թե՛ ներշնչումը և թե՛ արտաշնչումը կատարվում է թե՛ բերի և թե՛ բերանի միջոցով։

Ռուսլոն (Principes, I, 488—495) նկարագրում է պանալան լեզուների մեջ ներշնչմամբ արտասանված ձայները, նալնիսկ ռուսերենի մեջ։ Կա նաև իմ արտասանությամբ չեխ-ծիու «Բոչունս բառի ձայնական նկարը, որ ես սովորել եմ մի չեխքեղից։

Բայց կան դեպքեր, երբ բոլորս էլ արտասանությունը կատարում ենք ներշնչմամբ կամ ավելի ճիշտ՝ ներշնչման ժամանակ։ Ալսպես, երբ հորանջելու միջոցին միաժամանակ խոսում ենք։ Ալս բանը, բնականաբար, տեսում է միալն մի քանի վալրկյան։ Նմանապես երբ անգիր արած մի բան ենք ասում կամ արագ աղոթք անում և ալդ միջոցին հարկ է լինում շնչել, մի կողմից օդը ներս ենք քաշում (ներշնչում ենք) և մյուս կողմից միաժամանակ բառերն ենք ասում։ Ալս էլ տեսում է միալն մի քանի վալրկյան։ Ալս

ձևով արտասանված բառերը հասակ չեն դուրս գալիս և լսողն էլ լավ չի հասկանում։ Միայն խոսողն է իմանում, թե ի՛նչ է ասում։

Թոքերից դուրս գալով օդը և ցնցուղներից անցնելով, մտնում է շնչափողի մեջ և հասնում ստորին ձայնալարերին, որոնք արտադրելիք ձայնի համեմատ ձևափոխվում են, երկարում կամ կարճանում, ձգվում կամ կծկվում, թրթռում կամ թրթռացնում օդը՝ ձայնարանի բացվածքի մեջ։ Այս ձևափոխություններով ձայնն էլ ստանում է զանազան տոներ, ղանդուն բարձրություններ։ Այս է խոչակի ձայնը, որ սակայն դեռ երանգ չունի։

Խոչակագեսը ցույց է տալիս, որ ձայնալարերի ամբողջ գործոն դերն ընկնում է նրանց առջևի մասի վրա, մինչդեռ հետևի մասը, որ չափազանց զգայուն է, միայն շնչառության համար է։

Ասացինք, որ ձայնալարերը կարող են ստանալ բազմաթիվ ձևափոխություններ իրենց արտադրելիք ձայնի համեմատ. դրանցից կարևորները հետևյալներն են.

1. Ձայնալարերը հետևի մասով հեռանում են իրարից, այնպես որ ձայնարանը լինում է լայն բացված. այս է շնչառության ժամանակ խոչակի նորմալ վիճակը. այդ միջոցին օդը ազատ դուրս գալով, լսվում է մի տկար աղմուկ, որ ուրիշ բան չէ, եթե ոչ օդի հոսանքի շփման ձայնը խոչակի, քթի և բերանի պատերին։ Ձայնալարերը այս դիրքն ստանում են նաև պ, կ, տ, ս, ֆ և այլ այս կարդի ձայնների արտասանության ժամանակ, որոնք կոչվում են խուլ ձայններ (պատկեր A)։

2. Ձայնալարերը հեռանում են իրարից, բայց նրանց կազմած անկյունը շատ ավելի սուր է և աճառների ներքին երեսները դրսնըվում են լարերի երկարության վրա, մինչդեռ առաջին դեպքում նրանք թևքված էին դեպի դուրս։ Այս վիճակում, երբ օդը դուրս է գալիս ձայնարանից, ստացվում է ավելի կամ պակաս ուժեղ հընչյունը (պատկեր B)։

3. Ձայնալարերը մոտենում են իրար, բայց ոչ բոլորովին. նրանց մի մասը արդեն կպած է իրար, սակայն մնացյալը դեռ բավական բաց է և չի թրթռում։ Այս վիճակը ներկայացնում է այն, որ ստանում է խոչակը փսփսոցի ժամանակ։

4. Ձայնալարերը կպում են իրար ամբողջ երկարությամբ. այս միջոցին ձայնարանը փակված է. օդը դուրս գալու ժամանակ բռնի կերպով հեռացնում է նրանց իրարից, որով առաջանում է ձայնալարերի թրթռումը. այս է իսկական ձայնը (պատկեր C)։ Այս ձևով

արտասանության հնչյունները կոչվում են բերանային և են ձայնավորները ու բ, գ, դ, ձ, ջ, ժ և այլ նման բաղաձայնները[1]։

Կարելի է դյուրությամբ դիպչ ձայնալարերի թրթռումը արտասանության ժամանակ։ Երբ ատամի խնձորի վրա բռնենք մատիտի մի ծայրը և արտասաննենք գ, ժ, դ և այլ բաղաձայնները, մատների մեջ զգում ենք այդ թրթռացը։ Նույնպես եթե մի ափը դնենք գլխի վրա, կամ երկու մատները խլենք ականջածակների մեջ և կամ երկու ձեռքով փակենք ականջները և արտասաննենք նույն ձայները, կզգանք մի անսակ բզզոց, որ ձայնալարերի թրթռման արձագանքն է. մինչդեռ ա, ը, ու ձայնների համար այդպիսի բզզոց չկա։

5. Ձայնալարերը կպած են իրար և ձայնարանը փակ է, բայց ճեղքվածքների միջև գտնված մասը դեռ բաց է. այս պարագային մենք լսում ենք միաժամանակ ձայնալարերի թրթռացը և օդի շփման ձայնը, որ անցնում է ճեղքվածների միջով։ Այս այն ձայնն է, որ կոչվում է թրթռուն ն (յ) և գտնվում է Կարինի և Մուշի բարբառների մեջ։

Կարելի է ներկայացնել այս բոլորը շատ հեշտությամբ մի արվեստական խոչակի վրա, հետևյալ ձևով.— Առնենք ապակյա մի խողովակ կամ սնամեջ մի եղեգ. սա շնչափողն է։ Ծայրին անցկացնենք կաուչուկի կարճ ու բարակ մի խողովակ, այնպես որ նրա շարունակությունը կազմի.— սա ձայնարանն է։ Կաուչուկի խողովակը ներկայացնում է կլոր մի բացվածք.— սա ձայնարանի հանդիսա վիճակն է։ Եթե փչենք եղեգի ծայրից, կլսենք մեր շնչի շփման ձայնը։ Եթե կաուչուկը բռնենք մատներով երկու հակառակ կետերից և մի բիչ քաշելով երկարավուն մի ձև տանք, կստանանք ձայնարանի վիճակը փսփսոցի ժամանակ. եթե այս միջոցին փչենք եղեգի մեջ, կստանանք մի ուրիշ տեսակ ազմուկ, որ նախորդից ավելի ուժեղ է։ Իսկ եթե կաուչուկը քաշենք այնքան, որ երկու կողերը իրար վրա գան և մի ուղիղ կիծ ձևացնեն, կստանանք ձայնարանի փակ վիճակը, և եթե այժմ փչենք եղեգի մեջ, կաուչուկը կսկսի ուժեղ կերպով բրթռալ.— սա մարդկային ձայնն է։

Ձայնալարերի այս զանազան դիրքերի համեմատ ստացված թրթռումը կամ խլությունն անցնում է օդի հոսանքին, որ այնուհե-

[1] Ֆրանսերեն կոչվում է sonore, առաջ ասում էին vocalique, որ հիմա չի գործածվում. ես էլ գործածում եմ թրթռուն, որ շատ հիշտ պատկերացնում է երևույթը. ուրիշները ասում են ձայնեղ կամ հագագային, որ համապատասխանում է vocalique հնացած ձևին։

տև մտնում է ըմպանի, բերանի կամ քթի խոռոչը և սրանց բազմազան ձևակերպությանց, բացվածքի մեծության և փոքրության համեմատ, որին գործակցում են ստորին ծնոտը, շրթունքները, լեզուն ու բիմքը, ստանում է իր երանգը, կազմվում են գոնապան



ձայնավորներն ու բաղաձայնները։ Իսկական ձայնը կազմվում է ուրեմն այստեղ։ Թեև մարդիկ չունենային բերան ու քիթ, նրանց ձայնն էլ ո՛չ մի անհատականություն չպիտի ունենար. նրանք կարող պիտի լինեին ըստ կամս ավելի ուժգին կամ տկար, ավելի բարձր կամ ցածր ձայներ դուրս բերել, բայց բոլոր մարդկանց ձայներն էլ իրար նման պիտի լինեին, քանի որ պակասում է երանգը։ Ձայնի անհատականությունը, որ է երանգը, առաջ է գալիս ուրեմն բերանի և քթի խոռոչների մեջ, որոնք մարդուց մարդ զանազանվում են իրենց ձևով։ Այս բանը կարելի է փորձել նույնիսկ միևնույն մարդու վրա. մենք դիտենք, թե ի՛նչքան փոխվում է ձայնը, երբ նշագեղձերը ուռած են կամ քիթը փակ է, լեզուն հիվանդ կամ ատամները պակասում են և կամ նույնիսկ երբ բերանում որևէ բան կա պահած։

Կարելի է նույնը փորձել նաև ուրիշ ձևերով. պահենք բերանը լեզուն և այլն մի որոշ դիրքի մեջ և աշխատենք երգել. ինչ էլ որ անենք, ինչքան էլ կծկենք կամ փոփոխենք մեր խռչակը, ձայնը կփոխի իր աստիճանը, բայց դուրս կգա միևնույն ձայնավորը (այսինքն երանգը չի փոխվի)։

Վերջապես կարելի է նույնը փորձել նաև դիակի խռչակի վրա.— մի թել անց են կացնում խռչակի ձայնալարերով և ուղած չափով լայնացնում կամ նեղացնում են ձայնարանի բացվածքը. միևնույն ժամանակ ներքևից փուքսով շունչ են փչում խռչակի մեջ. ի՛նչքան էլ փոփոխենք փուքսի շունչը և թելի պրկման չափը, այնուամենայնիվ ձայնը դուրս կգա միշտ միևնույն երանգով (թեև տարբեր բարձրությամբ և տարբեր ուժգնությամբ)։ Տեսնվել է մի անձնասպան մարդ, որ հաջողել էր կտրել խռչակը և բաժանել մասամբ վերի մասերից, այնպես որ խռչակից անցած օդը չէր մտնում քթի և բերանի խոռոչը. արդ, նա արտաբերում էր միշտ միևնույն ձայնը և ոչ մի բառ չէր դուրս գալիս, թեև իհարկե նա ուզում էր որոշ բաներ ասել։

Ձայնի ուժգնությունը որոշվում է թոքերից դուրս արտաշնչված օդի բանակությունից և հպումավորիչ դործարանների դործ դրած ավելի մեծ ճիգից. սրա համեմատ էլ ձայնալարերի թրթռումները լինում են ավելի կամ պակաս բնդարձակ. իսկ ձայնի տևողություն առաջանում է ձայնարանի ավելի կամ պակաս բացվելուց. երբ թոքերը իրենց ներշնչած օդը դուրս են տալիս, այդ դործողություն մի անդամից և անմիջապես չեն կատարում. երկու հատուկ մկաններ պաշտոն ունեն կանոնավորելու այս դործը, այն է արտաշնչումը որոշ չափով դանդաղեցնելու. երբ շնչում ենք, ձայնալարերը լայն բացված լինելով, օդը առատությամբ է դուրս դալիս, որով թոքերից արտաշնչված օդի պաշարը շուտ է սպառվում և շունչն և ձայնի տևողությունն էլ շատ կարճ է լինում։ Եթե փոխանակ շնչելու, բերան շնչով վչնար, կտեսնեիր, որ տևողությունը շատ ավելի երկար է լինում. պատճառն այն է, որ ձայնարանի բացվածքը շատ նեղ թողնված լինելով, արտաշնչված օդն էլ բիչ բանակությամբ է դուրս դալիս, որով պաշարը ուշ է սպառվում և ձայնի տևողությունն էլ կարելի է լինում բավական երկարել։ Նույն երեւույթը նկատելի է նաև խոսակցության ժամանակ, երբ ձայնալարերը դրեթե իրար կպած, թողնում են միայն մի շատ նեղ բացվածք, այնչափ, որչափ պետք է օդը դուրս տալու համար։ Այս պատճառով, ահա, արտասանություններ շնչառությունից միշտ ավելի երկարատև է լինում։

Ըստ որում ձայնի բարձրությունը համեմատական է թրթռացող լարի երկարության հետ, այսպես էլ քանի ձայնալարերը կարճ են, ձայնն էլ այնքան սուր է լինում։ Մանուկների ձայնալարերը կարճ են, ուստի նրանց ձայնն էլ շատ սուր է. կանանց ձայնալարերը նրանցից 1,5 անգամ ավելի երկար են, ուստի նրանց ձայնն

էլ այնքան ավելի ցածր է։ Քանի մարդ մեծանա, մյուս անդամների հետ ձայնալարերն էլ են մեծանում, ուստի և ձայնն էլ հետզհետե ցածրանում է. տղամարդկանց ձայնալարերը մանուկների ձայնալարերից երկու անգամ ավելի երկար են լինում, ուստի և նրանց ձայնն էլ ևս ավելի ցածր է լինում։ Այս պատճառով մանուկների և կանանց ձայնը ավելի լսելի է լինում, քան տղամարդկանցը։ Մինչև 6 տարեկան հասակը ձայնաստիճանը լինում է մոտ մեկ ութնյակ. արբունքի հասնելիս ձայնը փոխվում է, մանավանդ տղաներինը, որովհետև տղաների խոչակը ավելի է մեծանում քան աղջկանցը, և առաջանում է նույնիսկ մինչև Ադամի խնձորը, ուր ձևանում է մի անկյուն։ Այս միջոցին տղաների ձայնը մոտ մեկ ութնյակ ցածրանում է, իսկ աղջիկներինը 2 տոն միայն։ Միևնույն անձի ձայնի բարձրությունը կամ ցածրությունը կախված է ձայնալարերի ձգումից. երբ մկանները կծկվեն և ձայնալարերը կարճանան, բնականաբար ձայնն էլ կլինի ավելի սուր. իսկ երբ պարզվեն և երկարեն, ձայնն էլ կլինի ավելի թավ կամ ցածր։ Նկատելի մի կետ էլ այն է, որ ձայնալարերի թրթռումները համաժամ (synchrone) *են, առանց որի ձայնական ալիքների մեջ պիտի առաջանար անկարգություն։*

Ներության ժամանակ ձայնի ուժգնությունն ու բարձրությունը պակասում են, ինչ որ արդյունք է շնչառության և մկանների տկարության։ Նույնը պետք է ասել նաև հիվանդության համար։ Խրուչակի զարգացումը անշուշտ շատ անձուկ կապ ունի նաև սեռական գեղձերի զարգացման հետ. երբ դրանք զարգանում են, ձայնն էլ ցածրանում է. երբ մեկին ներքինացնում են, ձայնը դառնում է մանկական։

Ձայնը երկու տեսակ է. փսփսացող և հնչուն. այս վերջինն էլ ունի երկու ձև. հոդավոր և երգային։ Փսփսոցի մեջ ձայնալարերը մնում են իրարից բավական հեռու և չեն թրթռում. օդը անցնում է նրանց միջով և հասնելով բերանի խոռոչը, համաձայն նրա ձևի, բեկբեկվում է. ուրեմն և փսփսոցի մեջ ձայնը արտաբերվում է միայն բերանի և լեզվի շարժումներով։ Սրա համար է, որ խոչակի հիվանդություն ունեցող մարդոց խորհուրդ են տալիս խոսել միայն փսփսոցով, որպեսզի խոչակը հանգիստ մնա։ Փսփսոցը ուժգնություն չունի, դրա համար էլ հեռուն չի լսվում. իսկ նրա բարձրությունը հազիվ է նկատվում։

Հոդավոր ձայնը, որ մեր սովորական խոսակցական ձայնն է, առաջանում է ձայնալարերի թրթռումով։ Նա թեև ըստ անձի և ըստ

շեշտի առանում է տարբեր բարձրության, բայց տահասարակ շատ փոքր ձայնատարածման ունի. շարժվում է մոտ կես octave-ի մեջ։ Հոգեվոր ձայնի ամբողջ ձայնատարածումը հայտնի կերպով երեում է, երբ արտասանենք իրար հաջորդական ես, պրական ես (այո) և հարցական ես՞ (ի՞նչ ասացի՞ր)։ Ընդհակառակը, երգի ձայնը ավելի շատ ընդարձակ ձայնատարածման ունի, սովորաբար նա խաղում է երկու octave-ի, երբեմն 2,5 octave-ի և բացառապես 3 octave-ի միջեւ։ Հոգեվոր ձայնի, կամ որ նույնն է՝ խոսակցության և երգի տարբերության այն է, որ երգի մեջ ձայների տևողության ու ձայնատարածումը շատ մեծ է լինում, իսկ հոգեվոր ձայնի ժամանակ՝ շատ կարճ։ Կա և այդ երկուսի միջինը, որ է տեղիատեխ երգեցողության, ուր ձայների տևողությունը շատ կարճ է, դրանք խոսակցականի չափ։ Բայց այնուամենայնիվ նա երգ է, որովհետև ձայնատարածումը մեծ է։ Կան ժողովուրդներ, որ սովորության ունեն խոսակցության մեջ որոշ վանկերի տևողությունը չափից ավելի երկարել. սրանով խոսքը երգի տպավորություն է թողնում, բայց այնուամենայնիվ երգ չէ։ Այսպես են մեր Հարևան պարսիկները, Ատրպատականի թուրքերը, ինչպես և Շամախու, Թավրիզի, Ատուփատարի և Պարսից Հայերը։ Քանի խոսակցություններ ոգևորված կամ ավելի բանաստեղծական դույն ստացած լինին, այնքան էլ երգային կդառնա. այս բանը հայտնի կերպով տեսնվում է, երբ համեմատենք մի պարզ պատմություն՝ տնեցի սրհնանքի կամ մաղխանքի հետ. ինչպես.

Ես այսօր հորեղբորս տունն էի։

Ա՜խ, զավակս, քո տեղակ ե՜ս մեռնեի...։

Առաջինը բոլորովին հասարակ է, երկրորդը՝ երգային ձևով։

Հոգեվոր ձայնի և երգի ուրիշ տարբերությունների մասին կտեսնենք ավելի հետո։

Ամենացածր ձայնը, որ երբևիցե եղել է դա է fa^{-1} *(43 թըրթռում), իսկ ամենաբարձրը եղել է, ըստ Մոցարտի, Բաստարդելլա անունով կնոջ ձայնը, որ հասնում էր մինչև* do^{7} *(4176 թըրթռում)։ Բայց սրանք բացառիկ երևույթներ են։ Մարդկային ձայնը սովորաբար բաժանվում է երեք տեսակի. արական ձայնն ունի բաս, բարիտոն և տենոր* (basse, baryton, tenor), *իսկ իգական ձայնը կոնտրալտո, մեցցո-սոպրանո և սոպրանո* (contralto, meggo-soprano, soprano). *ահա նրանց աստիճանները (տե՛ս էջ 47)։*

Այս բոլորը կախված է զանազան անձերի խոշակի մարդա-

կազմական հոգինվածքից, այսինքն՝ նրա մեծությունից, և որևէ բարոյական կամ մտավոր ընդունակության հետ կապ չունի։



Կա նաև գլխի ձայն, որի մեջ ձայնական լարերի եղերքներն են միայն թրթռում և այգտեղ ձայնը կարող է է՛լ ավելի բարձր դուրս գալ։ Խոչակագետ գործիքը ցույց է տալիս, որ այդ միջոցին խոչակը ավելի լայն է բացվում, քան թե կրծքի ձայնի միջոցին, որ մեր սովորական ձայնն է և որտեղ կուրծքն էլ որոշ չափով ծառայում է իբրև հնչարան։

Խոչակից վեր գտնված այն բոլոր գործարանները, որոնք մասնակցում են խոչակի ձայնը երանգավորելու, կոչվում են հոդավորիչ գործարաններ (organes articulatoires)։ Այս բոլորը գործում են հետևյալ եղանակներով.

1. Ձևացնում են առավել կամ նվազ զգալի մի հնչարան, որ օդի թրթռուն հոսանքին տալիս է իր բնորոշ երանգը։ Այսպես են ձևանում ձայնավորները։

2. Ձևացնում են մի խողովակ կամ մի նեղ անցք, որի միջով սահում անցնում է օդի հոսանքը, արտադրելով մի ձայն, որ զանազանվում է խողովակի ձևի ու մեծության համաձայն։ Այսպես են ձևանում սեղմ (constrictives) կամ ձևական (continues) կոչված բաղաձայնները, ինչպես f, v, s, z, l, r և այլն, որոնք կարելի է ըստ կամս երկարել։

3. Ձևացնում են մի խողովակ կամ մի անցք, որ մի րոպե ամբողջապես փակ է մնում և օդի հոսանքի ճնշման տակ հանկարծ բացվում է. այս բացումով առաջանում է մի ձայն, որ զանազանվում է համաձայն փակման կետի և եղանակի։ Այսպես են ձևանում պայթական (occlusives) բաղաձայնները, որոնք են p, b, t, d, k, g և այլն։

Հոդավորիչ գործարանները առհասարակ տեսանելի և շոշափելի են. նրանք պարփակված են երկու խոռոչի մեջ. բերանային խոռոչ և ռնգային խոռոչ։

Բերանային խոռոչը պարունակում է անշարժ մի կամար, որ ձևացած է բիմբից և վերին ատամներից, և մի քանի շարժուն դրծարաններից, որոնք են վերին և ստորին շրթունքները. ստորին ծնոտը (որի վրա հաստատված են ստորին ատամները), լեզուն, կատիկը և լեզվակը։

Շրթունքները կազմում են մի շատ շարժուն դրծարան, որ նրանց մկանների միջոցով կարող են նրանք ավելի կամ պակաս չափով կծկվել և այսպիսով կա՛մ բոլորովին փակել բերանային խոռոչը, կամ թողնել մի կլորակ անցք և կամ հորիզոնական մի բացվածք ձևացնելով, ոչ հաճախը դուրս թողնել։ Կատարյալ փակումը անգի է ունենում պ, փ, բ, մ ձայնների արտաբերության միջոցին, իսկ նեղ բացվածքը՝ ֆ, վ բաղաձայնների արտաբերության միջոցին։

Ստորին ծնոտը, շնորհիվ որոշ մկանների, կարող է իջնել ու բարձրանալ և այսպիսով մեծացնում կամ փոքրացնում է բերանի խոռոչը։ Ձայնավորը կարող է լինել բաց, փակ և միջակ. այսպես ա, ը և օ.— ձայնավորը կոչվում է բաց, երբ բերանի խոռոչը բավական լայն է բացված, փակ՝ երբ նրանից շատ ավելի նեղ է, իսկ այդ երկուսի միջին դիրքը կոչվում է միջակ։ Բաց, փակ և միջակ. սրանք ընդհանուր բառեր են. բայց լեզուների մեջ կան նաև սրանց ավելի նուրբ աստիճանները. օրինակ, լատերեն լեզվի մեջ ձայնավորներն ունեն 4 աստիճան (բաց, շատ բաց, փակ և շատ փակ), որոնք նշանակվում են առանձին տառերով կամ նշաններով՝ լատինական այբուբենի մեջ, որ շատ բարդ կազմություն ունի (Hospitalier, Gramm. laoss., 32, 34)։ Բայց կարևոր է նկատել, որ ծնոտի շարժումները ձայնավորի բացման ու փակման մեջ երկրորդական դեր ունեն, և կարելի է արտասանել բաց, փակ ու միջակ ձայնավորներ՝ շրթունքների միջև մի մատիտ կամ մի սիգարետ սեղմած, այսինքն առանց ստորին ծնոտը շարժելու, ուրիշ խոսքով՝ ծնոտի նույն բացվածքը պահելով։ Սրանից երևում է, որ ձայնավորների բացման աստիճանի մեջ կարևորագույն դերը ընկնում է այն բացվածքի վրա, որ կազմվում է լեզվի և քիմքի մերձեցմամբ։

Քիմքը ոսկրից մի անշարժ կամար է, որ ծածկված է դրսից հուպաթաղանթով, կողքերից և առաջից շրջապատված է վերին ատամների շարքով, հետևից կատիկով, որ կազմում է քիմքի կակուղ շարունակությունը, որ շարժական է և կարող է ըստ կամս բանալ ու փակել բերանային խոռոչի և ռնգային խոռոչի հաղորդակցությունը։ Քիմքի ամբողջության 2/3 մասը կազմում է կարծր մասը, 1/3-ը՝ կատիկը։

Լեզուն 17 մկաններից մի զանգված է. այդ մկանները հնարավորություն են տալիս նրան առնելու բազմաթիվ ու բազմազան ձևեր ու դիրքեր. նա շարժվում է քիմքի տակ. մերթ իր ամբողջ լայնությամբ կպչում է նրան և փակում օդի հոսանքը, մերթ կրպչում է երկու եզերքներից և ձևացնելով միջին մասում մի ազատ անցք, կազմում է մի հնչարան ձայնավորների համար, մերթ կպչում է քիմքի մեջտեղից՝ երկու եզերքները բաց թողնելով և մերթ էլ ծայրովը միայն թրթռում: Լեզվի և քիմքի այս զանազան դիրքերը ճշտելու համար, լեզվաբանները հատկացրել են այլևայլ բառեր, որոնցով որոշում են նրանց այս կամ այն մասերը· այսպես, լեզվի մասերն են (առաջից հետև գնալով)՝ ծայր, պսակ, կռնակ և արմատ. քիմքի մասերն են, ատամներից հետո՝ կապիճները (alvéoles), քիմք, կատիկ և լեզվակ: Այն ձայները, որ հոդավորվում են հիշյալ կետերի վրա, փոխադարձաբար կոչվում են լեզվածայրային (apicale), լեզվապսակային (coronale), լեզվակըռնակային (dorsale), լեզվարմատային (radicale), ատամնային, կապճային, քմային, կատկային (vélaire), լեզվակային (uvulaire): Կարելի է կազմել սրանց զուգերի խառնուրդները, ինչպես՝ ծայրատամնային, պսակա-կապճային և այլն:

Լեզվակը երկրորդական դեր ունի ձայնի հոդավորման մեջ. բայց կարող է նա ևս թրթռալ և ձևացնել ֆրանսական r ձայնը, որ կոչվում է լեզվակային r: Աֆրիկյան լեզուների մեջ ևս կան մի քանի հնչյուններ (b, d, dy) որոնք կազմվում են լեզվակի թրթռումով:

Ռնգային խոռոչը բաղկացած է քթի երկու փոսերից, որոնք վերջանում են առաջից երկու ռունգերով, իսկ հետևից երկու ծակերով, որոնք հաղորդակցում են բերանի խոռոչի հետ: Կատիկը կարող է բարձրանալով փակել այս ծակերը, որով օդի հոսանքը ամբողջապես անցնում է բերանով, և այսպիսով արտադրված ձայնը կոչվում է բերանային (buccal, oral), բայց կատիկը կարող է նաև իջնել ցած և ռնգային անցքերը ազատ թողնել. այն ժամանակ օդի հոսանքը մտնում է նաև քթի խոռոչը, դուրս գալու համար ռունգերից, և այսպիսով արտադրված ձայնը կոչվում է ռնգային (ինչպես են մ և ն): Երբ հարբուխ ենք ստանում, կատիկը բորբոքված լինելով, չի կարողանում հեշտությամբ բարձրանալ քթի անցքը փակելու և բոլոր ձայնավորները ռնգային արտասանություն են ստանում:

Ամբողջ այս նկարագրությունը, որ տվինք այստեղ, կարելի է ամփոփել հետևյալ սխեմատիկ նկարի մեջ[1], ուր A ցույց է տա-

[1] *F. de Saussure*, Cours de ling. gen; p. 67.

լիս ռնգային խոռոչը, B բերանային խոռոչը, C խոչակը, E ձայնատարածը՝ երկու ձայնալարերի միջև։ Բերանային խոռոչում դասվում են շրթունքները α, ə), լեզուն (β ծայրը, γ հետնամասը), վերին ատամները (d), վերին ատամնակապիճները (e), քիմքը (t—h առջևի լայնական մասը, l կաուիկը), և վերջապես լեզվակը (ζ)։ Այս բոլորի մեջ հանդիսանում ստանալը ցույց են տալիս արտաբերության մեջ գործող մասնակցության ունեցող գործարանները, իսկ յաուինները՝ կրավորականները։



Պատկեր 13

Յուրաքանչյուր անձ իր ձայնական սիստեմի մեջ ունի մի առանձին երանգ. ըստ Կիկևրոնի բացատրության, մարդու համեմատ ձայները լինում են հնչուն կամ խուլ, քաղցր կամ բթու, թավ կամ սուր, ճկուն կամ խոպոտ և այլն. մարդկային ականջը կարող է զանազանել այս ձայները և հիշողության մեջ էլ շատ երկար պահում է. բայց այդ երանգը գրելու համար որևէ միջոց չկա։ Այսպես և՝ յուրաքանչյուր լեզու իր ամբողջ ձայների արտասանության եղանակի մեջ ունի մի յուրահատուկ ձև, որ տարբերվում է մյուս լեզուներից՝ իր ընդհանուր բնավորությամբ։ Մարդուց մարդ երանգի տարբերությունը ավելի փոքր է, քան ազգից ազգ։ Այսպես, օրինակ, ականջը դյուրությամբ կարող է զանազանել անգլիացու, հրեայի, պարսիկի, հայի կամ ֆրանսիացու արտասանության տարբերությունը և զգալ նրանց ընդհանուր բնավորությունը։ Տաֆևացին տալիս է իրեն ծանոթ մի խումբ լեզուների արտասանության բնորոշ նկարագիրը հետևյալ ձևով.

«Փափուկ հելլէնն. սաստիկ հռոմայեցին սպառնական հոնին.

աղաչական ասորին. պերճական պարսիկն. գեղազանդ աղուանն. ծաղրական մունդն. խափարաձայն նգիպտացին. ճճուղական հնդիկն. համեղական հայն, որ կարող է զամենայն լեզուս յինքն ամփոփել և բոլոր խօսիլ... որ բոլորապէս կարող է զամենայն լեզու ուղղակի ուսանիլ. և այլք զհայոցն՝ ծեքսական և թիւր ուսանին, դի մասնաւոր է լեզու նոցա»[1]։

Լեզուների ձայնական դրութեան այս ընդհանուր բնավորութիւնը, որ կոչվում է հոդավորութեան հիմքը (base d'articulation) առաջանում է լեզվի, շրթունքների, կատիկի և ձայնական լարերի որոշ դրութիւնից, որ սերնդից-սերունդ անցնում է ժառանգաբար։ Օրինակ, անգլիացու հոդավորման հիմքի հատկանիշն այն է, որ շրթունքները կպած են ատամներին և քիչ են շարժվում, լեզուն ցած ու տափակ է, ծայրը գոգավոր ձևով կպչում է քիմքի բարձրութեան։ Ֆրանսիացին, ընդհակառակը, ունի շատ շարժուն շրթունքներ, որոնք հաճախ կլորանում և առաջ են կարկառվում, լեզուն ստանում է կորնթարդ ձև և դիմում է դեպի առաջ։ Ալպյան գագաթների որոշ ժողովուրդներ բերանը հազիվ են բաց անում, Համբուրգում կատիկը կախված է կամ ծնոտները դեմ-դեմի մոտեցած (Rousselot, Principes, I, p. 467)։ Հայերենի և գերմաներենի արտասանութիւնը բոնում է այս երկուսի միջին ձևը։ Ռուսերենի մեջ շրթունքները թուլլ են, շատ դեպի առաջ ձգված, ձայրերը կախված, լեզուն լարված, տափակ և ցածր նստած, իսկ ծայրը սուր և դեպի ատամները կարկառած (Р. Шор, Язык и общество, стр. 52—53), սակայն հոդավորման հիմքը ինչքան էլ որ դյուրութեամբ զգալի, այնքան էլ դժվար կարելի է բացատրել, իսկ գրել՝ անկարելի է։ Ճշտիվ սովորել մի օտար լեզու, նշանակում է յուրացնել նրա հոդավորման հիմքը, որ շատ ավելի դժվար է քան բուն իսկ լեզուն սովորելը։ Շատերը գիտեն խոսել թուրքերեն, ֆրանսերեն կամ ռուսերեն, բայց նրանց հոդավորման հիմքը հայերեն է. և որքա՜ն սխալվում են նրանք, որ կարծում են, թե թեկուզ տարիների աշխատութիւնից հետո յուրացրել են որևէ օտար լեզու...։

Ամփոփելով մինչև այժմ խոսողութեան վերաբերյալ ասվածները, գտնում ենք, որ՝

ա) Մտածողութիւնը խոսողութիւնից անկախ է։ Ինչպես որ կինոյի նկարները անձայն անշշուկ անցնում են մեր աչքի առաջով, ներկայացնելով մեզ ամբողջ գործողութիւններ, նմանապես մտածողութիւնը (բոլոր գաղափարները) անցնում են մտքի առաջով,

[1] «Գիրք հարցմանցն», էջ 298 և այլն։

առանց պիտք ունենալու որևէ ձևական արտահայտության։ Երբեմն մենք մարդը ընդհանրապես չի խոսում, բայց գործողության բոլոր պատկերները անցնում են մարքի առաջով, նույնիսկ խոսակցում է առանց ձայնի։

բ) Մտածողությունը կարող ենք հաղորդել արտաքին աշխարհին զանազան ձևերով (հպումանք, շարժուձև և այլն), բայց այդ բոլորից լավագույնը հոդավոր ձայնով (բառերով) խոսակցությունն է։

գ) Բառերը այնպիսի հնչող ու հիշող միջոց են առարկաներն ու գաղափարները ներկայացնելու համար, որ մենք նույնիսկ ներքին մտածողությունը հաճախ կատարում ենք բառերով։

դ) Խոսակցությունը այժմ գլխավորապես կատարում ենք միայն բառերով, որ հոդավոր ձայների մի խումբ է, թեև այդ հոդավոր ձայները ազգից ազգ տարբեր հիմք ունեն։

ե) Որպեսզի խոսակիցը կարողանա լսել մեր ձայնը, մենք մեր ձայնին ստիպված ենք տալ որոշ ուժգնություն, որ պայմանավորվում է լսող անձի հեռավորությամբ և մեր թոքերի կարողությամբ։

զ) Երբ այս վերջին երկու պայմանները վերածվում են մինիմումի, (այսինքն՝ երբ լսողը ուղղակի մեր բերի տակն է կամ երբ մեր թոքերը շատ հիվանդ են) և կամ երբ մենք ուզում ենք մեր ասածը թաքուն պահել երրորդ անձի լսողությունից, խոսակցությունը վարում ենք փսփսոցով։

է) Ձայնավոր խոսողության և փսփսոցով խոսակցության միջին աստիճանը պտպտալն է։ Պտպտալու ժամանակ հոդավորման հիմքերը ամբողջապես պահվում են, բայց ձայնի ուժգնությունը բոլորովին չնչվում է։ Ուրիշ խոսքով ձայնական գործարանները ստանում են բոլոր իրենց դիրքերը, բայց առանց ձայնը արտաբերելու՝ հեռանում են այդ դիրքերից։ Խոսում ենք առանց ձայնի։ Այդ միջոցին՝ երևում են խոսողի բոլոր շարժումները (ծնոտի, շրթունքների, լեզվի և այլն), բայց ոչինչ չի լսվում։ Պտպտալու գործողությունը կատարվում է ամենից ավելի աղոթելու ժամանակ, ինչպես նաև անպիր արած որևէ բան կրկնելու կամ մենակ՝ իրեն համար մտածելու ժամանակ։ Ընթերցումն էլ հաճախ կատարվում է այս ձևով։ Պտպտալու ժամանակ երբեմն լինում է, որ որոշ ձայներ ավելի ուժեղ արտասանվելով լսելի են դառնում։ Այսպես, օրինակ, շրթունքների ուժեղ բախումից դուրս է գալիս պ կամ փ, լեզվի ուժեղ հնչումից զ, ժ, շ, ս և այլն, բայց այդ բոլորից այնուամենայնիվ ո՛չ մի բառ չի ջոկվում։

ԳԼՈՒԽ Գ

ԱՁԲՈՒԲԵՆ ԵՎ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Նախորդ դլխի մեջ տեսանք, թե մարդկային ձայնը եթե ո՛չ շատ բազմազան, գոնե չափազանց բազմերանգ է։ Լեզվաբանի համար անհրաժեշտ է ունենալ մի այնպիսի միջոց, որով այդ ձայները իրենց ամբողջ նրբությամբ ճշտորեն ներկայացվեին թղթի վրա։ Ի՞նչ միջոց ունենք այս բազմաթիվ երանգները ներկայացնելու համար։ Մի կողմ դնելով մեհենագիր, գաղափարագիր, նշանագիր և այլ նման անուններով կոչված գրությունները, որոնք ո՛չ թե բառի հնչումը, այլ միայն նրա իմաստն են ներկայացնում, զուտ մարդկային ձայնը ներկայացնելու համար կա միայն երկու տեսակ գրություն՝ վանկագիր և դասական այբուբեն, որոնք իրապես միևնույն բառերն են։

Ձայնը իբրև անկախ միություն՝ գոյություն չունի մարդկային գիտակցության մեջ։ Մարդը վարժված է հնչելու բառը իբրև մի ամբողջություն, առանց արտասանելու նրա կազմիչ տարրերը, այն է առանձին ձայները։ Ձայների անկախ և առանձին գոյության գիտակցությունը մարդու մեջ վերլուծման արդյունք է միայն։ Վերլուծումն սկսվում է մարդու մեջ նախ այն դեպքերից, երբ պատահաբար այս կամ այն լեզվի մեջ այսինչ կամ այնինչ բառը բաղկացած է լինում միայն մի ձայնից. օրինակ՝ գրաբար ի «մէջ» և ռուսերեն и «և». աշխարհաբար ու «և» և ֆրանսերեն ou՝ «ո՞ւր»։ Այսպես նաև բաղաձայններից՝ ս՝ «լուի՛ր», խ՝ «այո՛»։ Երկրորդ՝ երբ համեմատի իրար հետ երկու այնպիսի բառեր, որոնք միայն մի ձայնով են տարբերվում իրարից. օրինակ, բարիք և չարիք, կամ ողորել և բողոքել։

Այն օրից, երբ մարդիկ սառնձին ձայների գոյության պիտակության համար և այլ հնչյուններով նշանակել մտածելին, այսինքն հնարեցին այբուբենը, այդ օրից լեզվաբանության իր առաջին քայլն առավ։

Այբուբենի ծագման և հորինման պատմությունը լեզվաբանության չի վերաբերում, այսուհանդերձ մեզ հետաքրքրում է միայն այն հարցը, թե այդ այբուբենը կամ այբուբենները ի՛նչքան հաշտությամբ և հարատաությամբ կարող են ներկայացնել ձայները, քանի որ լեզվաբանության հիմքը ձայնն է։

Աշխարհիս մեջ ոչ մի ալբուբեն կատարյալ չէ։ Կան լեզուներ, որոնց այբուբենի անկատարությունը դիրտպրակաև տաժանքի է հասած, ինչպես են տաճկերենը, անգլերենը, ֆրանսերենը, պահլավերենը և այլն։ Ֆրանսերենում o ձայնը կարելի է գրել 16 ձևով, an 52 ձևով, e 55 ձևով (Grégoire, Petit traité de linguistique, 1923 p. 124)։ hauts «բարձունք» միայն o հնչյունն ունի։ Տաճկերենում Kürk «մազաշատ», körek «իրուք» kürek «թիի», gevrek «պաքսիմատ», Kevork «Գևորգ», görek «արտաքին տեսք» միևնույն ձևով են գրվում։ Անգլերենում a կարդացվում է e, e կարդացվում է i, i կարդացվում է ay և այլն։

Ամենատանկանոն այբուբեններից մեկն է, օրինակ, դանիերենը ար թե՛ ձայնավորները և թե՛ բաղաձայնները ունեն դանադան հնչյուններ, գրելու ատենդ որոշ կանոնի. օրինակ, միևնույն g տառը կարելի է կարդալ գ, ժ, դ, խ, յ, վ և կամ թողնել անձայն։ Շատ վատ է նայնպես իրլանդերենը, ար օրինակ. saoghal, lanamhaim, oidhche, cathughadh բառերը կարդացվում են sil, lânun, î, cahu։

Չափազանց վատ է պահլավերենը, ուր ո՛չ միայն միևնույն տառը ունի մի քանի արժեք, ո՛չ միայն տառերը գրության ժամանակ կրճատվում և իրար են միանում, ո՛չ միայն ձայնավոր տառերը չեն գրվում, այլև ունի այն դժբախտությունը, որ գրում են արամերեն և կարդում են պահլավերեն. օրինակ «հաց» գաղափարի համար գրում են 𐡋𐡇𐡌 , որի տառերն են rxma և ներկայացնում է արամերեն 𐡋𐡇𐡌 laxmā «հաց» և կարդում են nan. «մանր» գաղափարի համար գրում են 𐡓𐡁𐡀 որի տառերն են rba. որ ներկայացնում է արամերեն 𐡓𐡁𐡀

rabbā «մեծ» և կարդում են vazurg[1], և այս՝ ո՛չ թե միայն մի քանի բառ, այլ բազմաթիվ ձևեր, գոլականներ, ածականներ, դերանուններ, նախդիրներ և բայեր։

Պահլավերեն գրութեան դժվարութիւնը ավելի պարզ ցույց տալու համար բավական է ասել, թե այբուբենը բաղկացած է միայն 14 տառից, ուստի մի տառը կարող է մի քանի ձևով կարդացվել. օրինակ, ձայնավորներից 𐭠 կարդացվում է a, ā, h, x, բաղաձայններից l կարդացվում է u, o, n, v, r, l. ավելի դժվար են տառերի կցումները, օրինակ, 𐭡 կարդացվում է āh, ha, hā, ax, āx, xa, hax, al, ad, lla, lh, aš, āš, hāš, lš, eš, gih. 𐭢 կարդացվում է ahō, ahu, āhū, āha, āān, axv, āxu, hava, hau, han, xāna, xān, xan և այլն (տե՛ս Թիրլաքյան, Հայ-երանական ուսումն., էջ 35—37)։

Դելիչը (Delitzch, Kleine sumerische Sprachlehre, էջ 3—5) ցույց է տալիս, որ սումերական այբուբենն էլ անկատար է, երևի լեզուն ուներ երկար ու կարճ ձայնավորներ, a և ā, e և é, o և ō u և ū, բայց այս բոլորը միատեսակ էին գրվում։ Սումերական այբուբենի անկատարութեան լավագույն ապացույցը այն է, որ երկու տարբեր թվականներ՝ aš «մեկ» և aš «վեց» միևնույն ձևով են գրվում։ Տարակույս չկա, որ նրանցից մեկը պիտի հնչվեր āš կամ āš. այժմ այս վերջինը ընդունված է իբր «վեց»։

Ուրիշ լեզուներ ունեն ըստ կարելվույն կանոնավոր կազմված այբուբեն. այսպես են վրացերենը, իտալերենը, սլովեներենը, իսպաներենը, գերմաներենը և այլն։ Բայց այնուամենայնիվ ո՛չ մի այբուբեն չունի պահանջված կատարելութիւնն ու ճշտութիւնը։

Այբուբենների պակասութիւնը առաջանում է հետևյալ պատճառներից.

1. Այբուբենները փոխ են առնված ազգից ազգ և հետևաբար ներկայացնում են միայն փոխատու լեզուների ձայնական պատկերը և ո՛չ թե փոխառու լեզվի. այնպիսի ձայներ, որ հատուկ են եղել փոխատու լեզվին, բայց չկան փոխառու լեզվի մեջ, մնում են այբուբենում, օրինակ, տաճկերեն և պարսկերեն այբուբենում ը տառը շարունակում է իր գոյութիւնը, թեև այդ ձայնը չկա տաճկերենի և պարսկերենի մեջ։ Ջավալերենը 8 տառ է վերցրել արաբական այբուբենից, բայց նրանց հատուկ ձայները չունի, ուստի ավելորդ բեռ են այբուբենի մեջ։ Ընդհակառակը, փոխառու

[1] Nyberg, Hilfsbuch des Pehlevi, I, Uppsala, 1928, էջ 50—51.

լեզուն ունենում է ձայներ, որ չկան փոխառու լեզվի մեջ. այդ ձայների համար նոր նշաններ ստեղծվում են, ինչպես հինպուս-տանի ъ ь, ъ ї ѣ d պարսկերեն g, անգլերեն w, սուսերեն ч, ш, щ, բայց երբեմն էլ կամ՝ ամենևին ո՛չ մի նշան չի ստեղծ-վում և կամ նոր ձայնը մի քանի տառերի կապակցությամբ է ներկայացվում. Ասորին պարզապես միևնույն տառը ունենում է երկու հնչյուն. ինչպես պարսկերեն ک=K կամ g, սուսերեն е=i կամ ju, իտալերեն g=գ կամ ջ, z=ց կամ ձ. երկրորդ պարագա-յին երկու և ավելի տառ ունենում են մի հնչյուն, ինչպես ֆրան-սերեն ch=շ, անգլերեն ch=չ, գերմաներեն ch=խ, անգլերեն sh=շ, գերմաներեն sch=շ, isch=իշ և այլն:

2. Այբուբենները (փոխառյալ կամ նոր հորինված) կազմված լինելով լատինական լեզվի որոշ վալերյանին, ներկայացնում են միայն այդ վալերյանի ձայնական պատկերը, հետևաբար լեզվի հաջորդական վիճակների համար բիշա չեն, քան որում լեզուն շարունակական փոփոխման մեջ է: Անհաջողությունն առաջանում է երկու կողմից. ա) որոշ ձայներ փոխում են իրենց հնչյունը. բ) լեզվի մեջ ստեղծվում են նորանոր հնչյուններ, որոնց համար նոր տառեր չեն ստեղծվում: Այսպես՝ j ձայնը հինգերորդ դարում հնչվում էր ֆրանսերեն y ձայնի պես, ապա կորցնում էինք h, y և ավելի h ևնք համարում քան y: Հին հայերենի մեջ չկան ô, û ձայնները. արդի բարբառներն ունեն այդ ձայները, բայց նրանք ներկայացնող տառերը չկան մեր այբուբենի մեջ:

3. Ուղղագրությունը կազմող անձնավորությունները ամենք առաջնորդված են եղել առանձնական սկզբունքներով և ուզեցել են բառին տալ այնպիսի մի պատկեր, որ ո՛չ միայն հնչյունը, այլև ծագումը պատկերացնի: Այսպես, ֆրանսերեն vę «քսան» բառը գրվում է vingt· g և t ավելորդ տառերով, որոնց նպատակն է ցույց տալ, թե vę ծագում է լատիներեն viginti բա-ռից կամ նրա շարունակությունն է: Երբեմն սխալ ստուգաբանու-թյուններ էլ են տեղի ունեցել. օրինակ, pųa «կշիռ» բառը կար-ծել են, թե առաջանում է լատիներեն pondus բառից, ուստի գրել են poids, պահելով լատիներենի d և s ձայները, մինչդեռ այս ստուգաբանությունը սխալ է. բառը ծագում է լատիներեն pensum ձևից և d-ի գրությունը ամեն կերպով անտեղի է:

4. Այբուբենները փոխանցվելով ազգից-ազգ և հարմարեցվե-լով այս կամ այն լեզվի տարբեր շրջաններին, առանում են իրա-

րից բոլորովին այլազան արժեքներ. այսպես՝ լատիներեն j տառը արժե ֆրանսերեն ժ, գերմաներեն յ, անգլերեն ջ. իսպաներեն խ և այլն։ Նույնպես են նոր հարմարեցրած կապակցությունները. օրինակ, ch, որ արժե ֆրանսերեն շ, լանգդոկ լեզվով չ, ռետոռոման լեզվով ch հնչվում է dg կամ tg (Conradi, 1), անգլերեն չ գերմաներեն խ, իտալերեն ք և այլն։ Հունգարներենում s արժե շ իսկ si հնչելու համար գրում են sz։ Լատիներեն c, որ լատիներենի մեջ միայն k հնչյունն ուներ, գերմաններին մոտ դարձել է ց, ֆրանսերեն կ, ս, իտալերեն կ, չ և այլն և այլն, մինչև այնքան ենք առաջ գնացել, որ լատիներեն բառերն էլ այս աղճատ հնչումով ենք արտասանում. օրինակ, Cicero(n) կարդում ենք Ցիցերոն, մինչդեռ ըստ լատիների կարդացվում էր Կիկերոն, ըստ որում հույները այդ բառը գրել են իրենց տառերով Κικέρων և հայերը՝ Կիկերոն (Kuhner, 40)։

X տառը ընդհանրապես քս է, պորտուգալերենի մեջ կարդացվում է š, ռուսերենում խ, որ ընդունված է նաև գիտական տառադարձության մեջ։ Կատալան լեզվումն էլ š է, ինչպես xamos (կարդա՛ շըմոս) «սիրուն», xeix (կարդա՛ շեշ) «x տառի անունը» (Huber, 20)։

Պրովանսալ լեզվում g կարդացվում է հայերեն ձ՝ e, i ձայնավորներից առաջ, j կարդացվում է հայերեն ձ՝ a, e, i, o, u ձայնավորներից առաջ, իսկ ch կարդացվում է միշտ հայերեն ց (Savinian, 6)։

Նույնիսկ ձայնավորների մեջ հնչման միօրինակություն չէ պահված լեզվից լեզու. օրինակ, u իտալերեն և գերմաներեն կարդացվում է ու, ֆրանսերեն յու (իւ). լանգդոկ լեզվի մեջ o կարդացվում է ու! իսկ o կարդալու համար գրում են ò և u տառն էլ հնչում են ֆրանսերենի նման ü (Salvatori, Grumm. Occitane, p. 1)։ Նույն լեզվի ալբուբենով nh կարդացվում է քմային ñ, gj, ny (անդ, էջ 9)։ Ալբանիերենում ë հնչվում ö, y հնչվում է ü (Feizi, 9)։ Նորվեգերենում aa կարդացվում է o։

5. Ամեն ալբուբենի մեջ էլ տառը պայմանական մի նշան է և տրամաբանորեն կապված չէ իր ներկայացրած հնչյունի հետ։ Պայմանականությունը երբեմն գնում է մինչև այնտեղ, որ նույնիսկ լեզվի ընդունած հնչյունական նշաններով էլ բառը չի ներկայացնում հնչումը։ Այսպես, ֆրանսերեն oiseau բառի մեջ ո՛չ մի հնչյուն չի նշանակված իր նշանով։ Այս տեսակետով ուրիմն ալբուբենը ամենևին չի կարող ներկայացնել այն, ինչ որ է ձայ-

նր. ալս պատճառով, ահա, միևնույն ատար ազգից ազգ բոլորովին ատրբեր հնչում ունի. միևնույն ա ձևը հնչվում է հայերեն ա, ֆրանսերեն յու (իւ), գերմաներեն և իտալերեն ու, ռուսերեն ի, հունարեն (ձեռագրով) ց և այլն։ Դրա համար է, որ արևել հիշատակարան, որ գրված է մի անծանոթ այբուբենով, մեզ համար բոլորովին անլուծելի մի հանելուկ է։

6. Բայց նեն ատար ձայնի արտաբերական ներկայացուցիչը չէ, ուրեմն կարող չէ բնավ ներկայացնել այն բազմերանգ երևույթները ու հոգեվորումները, որ առանում է միևնույն ձայնը բերանում։ Ֆրանսերենում առնվազն 7 տեսակ ո կա, բայց բոլորի համար էլ միևնույն ո նշանն է գրվում։ Ատամի ծայրից մինչև քիմքի միջին կետը առնվազն 5 հենակետ կարելի է որոշել և հետևարար նույնքան տեսակ լ կամ վ հնչել. բայց այդ բոլորի համար մենք միայն մի-մի տառ ունենք։ Ակնհայտ է խոսել ձայնի ուժի և նատյի մասին, որոնք ս՛չ մի ձևով չեն կարող ներկայանալ տյապիսի այբուբենների մեջ։

Վերհիշյալ պակասությունները տառերի երևքը լինելով արտաքին և պատահական, կարելի էր դյուրությամբ դարմանել. այս հիման վրա է, որ դանազան ազգերի և լեզուների մեջ տեղի են ունենում ուղղագրական բարեփոխություններ, ինչպես՝ իտալերենի, գերմաներենի, վերջերս ռուսերենի և հայերենի մեջ։ Բայց ի՞նչ պետք է անենք ձայնի և գրության մեջ արտաբերական որևէ կապ դնելու և տալու համար այբուբենին իդեալական հարստություն ու ներդրություն։

Այբուբենների արդի սիստեմը, իբրև դումար դանազան պայմանական նշանների, բոլորովին անընդունակ է այդպիսի մի ձև ընդունելու։

Որպեսզի բմբռնենք, թե կարելի էր ձայնի և գրության մեջ էլ արտաբերական որոշ կապ հաստատել, աչքի առաջ բերենք հայ և եվրոպական ձայնագրության նշանները.



Հայկական ձայնանիշները պայմանական նշաններ են, ճիշտ այբուբենի տառերի պես. այնպես որ v նշանը դրվում է ևթե – դրված լիներ, որևէ անպատեհություն չէր առաջանում։ Բայց եվրոպական ձայնանիշները ներկայացնում են մի սանդուղ, որի յուրաքանչյուր մատի վրա դրված նշանը մյուսից այնքան բարձր է կամ ցածր, որքան ձայնը ինքը։ Ահա այս է տրամաբանական կապը ձայնի և գրության միջև։

Որպեսզի այբուբենն էլ ունենար որևէ տրամաբանական կապ ձայնի հետ, պետք էր, որ միաժամանակ առանձին նշաններով ներկայացված լինեին բերանի, քթի, խոչակի, լեզվի, քիմքի, ատամների և այլն դերը յուրաքանչյուր ձայնի արտաբերության ժամանակ։ Այդպիսի մի գրություն հնարել է անգլիացի Բել ձայնաբանը[1], որ կոչվում է visible speech (տեսանելի խոսք). բայց այդ այբուբենը շատ բարդ ձև ունենալով, ընդհանուր կիրառության դրված չէ։

Նույն կարգի, բայց ավելի հեշտ մի այբուբեն հնարել է Օսպերսենը[2], ուր յուրաքանչյուր ձայն ո՛չ թե ներկայացված է մի՛ միակ նշանով, այլ մի ամբողջ ֆորմուլայով, որ բաղկացած է երեք տարրերից. հունարեն գրեր, լատիներեն գրեր և թվանշաններ, համաձայն այն սխեմատիկ նկարի, որ դրինք վերը (էջ 51)։ Լատին տառերը ցույց են տալիս անշարժ հոդավորիչ դործարանները (վերին շրթունք, վերին ատամներ, քիմք և ըմպանի պատերը), հունական տառերը ցույց են տալիս շարժուն հոդավորիչ գործարանները (ստորին շրթունք, լեզվի ղանաղան կետերը, կատիկ, լեզվակ, ձայնարան, շնչառության գործարանը), իսկ թվանշանները ցույց են տալիս գործարանների ձևն ու բացվածքը (0 փակ դիրքն է, 1 մոտեցում, 3 բաց դիրք)։ Օրինակ՝

	p	m	n
α	0	0	3
β	3	3	0
δ	0	3	3
ε	3	1	1

Միևնույն դրությունն ունի նաև Սոսյուրը (Cours de linguistique générale, Paris, 1922, 68—76)։ Ձայնի տարբերության մեջ կա երկու գործոն։

a) արտաշնչության,

[1] Նկարագրությունը տե՛ս Sweet, A primer of phonetics, Oxford, 1902.

[2] Նկարագրությունը տե՛ս Jesperson, Articulations of speech sounds represented by means of analphabetic symbols, Marburg, 1889.

b) բերանային հոդավորություն,

որոնք անհրաժեշտություն ունեն ամեն ձայնի համար և բավական են իրենք իրենց։ Սրանց վրա կարող են ավելանալ կամ ոչ՝

c) խոչակի թրթռումը,

d) ընգալին թրթռումը։

Ալս չորսից a, c, d միշտ միօրինակ կամ միատեսակ են. իսկ b կրում է բազմատեսակ ձևափոխություններ։ Որևէմն լուրաքանչյուր ձայնի պատկերը տալու համար պետք է a. բավական է տալ b, c, d դործոններըր։ Սրանց համար իրրև պայմանական նշան դրվում է՝

~~ խոչակի թրթռում.

. . . . ընգալին թրթռում.

| | սրանցից մեկի կամ մյուսի բացակայություն։

Ըստ որում կունենանք բոլոր կարելի փոփոխությանց հետևյալ պատկերը.

	I	II	III	IV
a b c d	արտաշնչում բերանի հոդ | | | |	արտաշնչում բերանի հոդ ~~ | |	արտաշնչում բերանի հոդ | | . . .	արտաշնչում բերանի հոդ ~~ . . .

Ալս աղյուսակի մեջ I սյունակը ներկայացնում է խուլ ձայնները, II—թրթռումները, III—ընգալիննները և IV—թրթռուն ընգալիննները։

Մնում է որոշել մի անծանոթի, այն է բերանային հոդավորումների ձևափոխությունները։ Սրա համար իրրև հիմք է ընդունում քիմքի զանազան կետերը (ըստ նույն սխեմատիկ պատկերի), իսկ 0—6 թվանշաններով նշանակում է բացվածքի զանազան աստիճանները (0 կատարյալ փակումն է, 6 ամենաբաց աստիճանը)։ Թվանշանի ձախ կողմում դրվում է հունարեն տառը (ներգործող գործարան) և աջ կողմում լատիններեն տառը (կրավորական գործարան)։ Ալսպես, օրինակ, $^{\beta}3^{e}$ նշանակում է, թե լեզվի ծայրը (β) պինդ կպած է (3) ատամնակապիճներին (e)։

Ահա շրթնային և կոկորդային երեք (երկու պարզ և մի ընդգալին) բաղաձայնների պատկերը.—

շրթնային			ատամնային			հետադպային		
p	b	m	t	d	n	k	g	ṅ
ɑoɑ [ ]	ɑoɑ ~ [ ]	ɑoɑ ~ . . .	βoe [ ]	βoe ~ [ ]	βoe ~ . . .	γoh [ ]	γoh ~ [[	γoh ~ . . .

Այս դրությամբ գրում են նաև մյուս բոլոր ձայները, ինչպես բաղաձայն, նույնպես և ձայնավոր։ Վերջիններս ստանում են բացվածքի 4, 5, 6 աստիճանները. օրինակ՝

u	a
oγ4ı ~ [ ]	γbh ~ [ ]

(o նշանը ցույց է տալիս շրթունքների կլորացումը)։

Բայց այս և վերի դրությունն էլ ունենալով իրենց անհարմարությունները և լինելով շատ երկար, ավելացնենք՝ նաև ամեն մի նրբություն նշանակելու անհարմար, գործածության չեն դրվում։

Վերոհիշյալ ձևերից շատ ավելի հասարակ կազմություն ունի այն դրությունը, որով նման ձայները նշանակվում են նման նշաններով, ճիշտ ինչպես են b, p, առաջինը թրթռուն շրթնային, երկրորդը համապատասխան խուլը։ Բայց այս դրությամբ արդեն չի կարելի ներկայացնել ձայնի բնախոսական կազմությունը, հետևաբար և արժեքից զուրկ է և բնավ չի ընդունված լեզվաբանության մեջ։

Լեզվաբանները որոշել են ուրեմն բավականանալ սովորական այբուբեններով։

Ընդհանուր լեզվաբանության մեջ սովորաբար գործ են ածում երկու այբուբեն. հունարեն և լատիներեն, առաջինը միայն հունարենի համար, երկրորդը՝ լատիներենի և բոլոր նույն այբուբենը գործածող լեզուների համար։

Հին ու նոր հայկական այբուբենների տառերը.

Ա	ա	Ն	ն	A	a	N	n
Բ	բ	Շ	շ	B	b	O	o
Գ	գ	Ո	ո	C	c	P	p
Դ	դ	Չ	չ	D	d	Q	q
Ե	ե	Պ	պ	E	e	R	r
Զ	զ	Ջ	ջ	F	f	S	s
Է	է	Ռ	ռ	G	g	T	t
Ը	ը	Ս	ս	H	h	U	u
Թ	թ	Վ	վ	I	i	V	v
Ժ	ժ	Տ	տ	J	j	X	x
Ի	ի	Ր	ր	K	k	Y	y
Լ	լ	Ց	ց	L	l	Z	z
Խ	խ	Ւ	ւ	M	m		
Ծ	ծ	Փ	փ				
Կ	կ	Ք	ք				
Հ	հ	Օ	օ				
Ձ	ձ	Ֆ	ֆ				
Ղ	ղ						
Ճ	ճ						
Մ	մ						
Յ	յ						

Երկու տեսակ այբուբեն է ընդունված լեզվաբանության մեջ. 1. սպասյին կամ ավանդական այբուբենն և 2. գիտական այբուբեն։ Յուրաքանչյուր ազգ, որ գրականության բարձրացրած մի լեզու ունի, ունի նաև իրեն համար մշակած մի այբուբեն, սկսած չինացիներից, աստուրներից կամ եգիպտացիներից, մինչև արդի բրգերները։ Բայց այս բոլորից լեզվաբանությունը ընդունում է միայն հունական այբուբենը, լատինականը և լատինականի վրա ձևված այբուբենները, ինչպես գերմաններեն, ֆրանսերեն, անգլերեն, լեհերեն, հունգարերեն և այլն, որոնց վրա պիտի ավելանան այժմ տաճկերենը, բրգերենը և այլն։ Այստեղ, բնականաբար, առաջանում են այլընդայլ գրություններ. օրինակ, միևնույն ch գրությունը ֆրանսերենի համար շ (երբեմն էլ ֆ) է, անգլերենի համար չ, գերմաներենի համար խ և այլն։

Ավելի դժվարանալին այն է, որ նոր ժողովուրդներ փոխ են առել եվրոպական մի այբուբեն և չեն պահել լատինական տառերի հնչումը։ Օրինակ, անցյալ դարում Ռոբին և Լեգրո անունով երկու ֆրանսիացի Մադագասկար են մտցրել ֆրանսիական այբուբենը, բայց y տառը բառի վերջում հնչվում է i (ուրեմն պետք էր դրել i), o հնչվում է u, -ai հնչվում է ei, ai-ao հնչվում է au, io հնչվում է iu, -eo հնչվում է eu, -ao հնչվում է ô, իսկ ամենից վատն ա՛յն է, որ j հնչվում է հայերեն ձ, իսկ z հնչվում է ž։

Ավելի վատ է աֆրիկյան nzima լեզվի նորակազմ եվրոպա-

կան ալբուբենի մեջ hy, որ կարդացվում է š (2) (Welman, A preliminary study of the nzima, 16)։

Ալբաներեն այբուբենը մի դարի հնություն էլ չունի, բայց տեսնք, թե ի՞նչ թերություններ ունի։ Ձայնավորները այս լեզվում 3 աստիճան ունեն՝ կարճ, երկար և ոնգային. կարճերը ո՛չ մի նշան չունեն, երկարների համար դրել են շեշտ, ոնգայիններին համար պարույր. ինչպես՝

a=ă, á=ā, ą=a:

Մյուս տառերից ունենք՝

ë հնչել ō, u=u, y=u,

c=g, ç=ʒ, dh=s, g=g,

gj=gy, ll ուժեղ l, nj=ny,

r=p, rr=r, sh=ʒ,

th=v, x=ȧ, xh=ʒ, ĭ,

z=z, zh=ž:

(Feizi, 8—10)

Նորվեգերենը վերցրել է լատինական ալբուբենը, որից դուրս է գցել նախ q տառը, c, w և x գործածվում են միայն օտար բառերի մեջ, ավելացրել են æe և Ø տառերը, որոնցից առաջինը կարդում են è, երկրորդը ō„—aa կարդացվում է o, y=ü, u նորվեգերեն հատուկ մի հնչյուն է, որ գտնվում է ֆրանսերեն ou և u ձայնավորների միջև. o կարդում են երբեմն o, երբեմն էլ u. բաղաձայններից g երբեմն g է, երբեմն gʸ և երբեմն էլ ž.—gj հընչվում է իբրև ֆրանսերեն l mouillé.—j=y, kj=գերմաներեն ich հնչման. s միշտ հայերեն u է, իսկ sj և skj հավասարապես կարդացվում են š շ։

Նույնիսկ այն տառերը, որ ամեն տեղ էլ իբր թե նույնն են, իրապես տարբեր են. այսպես, օրինակ, k տառը ֆրանսերենի և ռուսերենի մեջ պարզ խուլ է, գերմաներենում և անգլերենում շնչեղ խուլ, սկանդինավյան լեզուներում ավելի շնչեղ խուլ։

Մինչև իսկ միևնույն այբուբենի տառերը զանազան ժամանակ և զանազան բարբառներում տարբեր հնչյուններ են ունեցած. օրինակ, հունարեն ϑ միևնույն թվականին մի տեղ th էր, մի տեղ ϑ.—ει 600 թվականին էր ei, 400-ին ē, 200-ին ī, հիմա պարզ i, և այլն և այլն։

Ընթերցողին մնում է դուրս գալ այս խառնակ վիճակից, վարժվելով կարդալ յուրաքանչյուր տառ այդ լեզվի այբուբենի օրենքներով։

Դիտական այբուբենը այն է, որ պիտականները հարմնել են լատինական այբուբենի վրայից և հարմարեցրել ո՛չ թե այս կամ այն լեզվի պահանջներին, այլ բնդհանրապես մարդկային ձայնին (հնչական այբուբեն)։ Սրովհետև լատին այբուբենը բավական չէ բոլոր ձայները, ևս ստուգել ձայների նրբությունները նշանակելու, ուստի լեզվաբանները լատին այբուբենի վրա ավելացրել են մի քանի նոր տառեր, որ վերց են առել հույն և գոթական այբուբեններից, ինչպես և մի խումբ պատմանական նշաններ, որով արվում է ձայնների պահանջված նրբությունը կամ երանգը ըստ կարելվույն։

Դիտական այբուբենը հիմնված է երկու սկզբունքի վրա. 1. Ամեն մի ձայն պիտի նշանակվի միայն մի տառով. 2. Ամեն մի տառ պիտի ունենա միայն մի հնչյուն։ Այսպես, չ միայն մի ձայն է, ուստի նշանակել այն ch, tch կամ tsch ձևով հակառակ է դիտական սկզբունքին, որա համար էլ դիտական այբուբենը մերժել է բոլորը և ընտրել է č ձևը։—g մի տառ է. ուստի հնչել այն մերթ գ, մերթ ժ, մերթ ջ, մերթ ղ, հակառակ է գիտական սկզբունքին, որա համար էլ դիտական այբուբենը հնչում է ալդ տառը միայն գ հնչյունով։

Պալատնական նշաններըն հետևյալներն են.

¯ դրվելով ձայնավորի վրա նշան է երկարության, մինչդեռ ˘ տուղ է. այսպես ā, ē, ī, ō, ū և այլն երկար են, իսկ ă, ĕ, ĭ, ŏ, ŭ և այլն տուղ։ Երեք երկու նշաններն էլ դրված լինեն նույն ձայնավորի վրա, նշանակում է թե ձայնավորը կա՛մ երկար է կա՛մ տուղ, ինչպես a͡ի։

o նշանը դրվելով a տառի վրա, ցույց է տալիս, որ ալդ ձայնավորը պետք է արտասանել շատ փակ, գրեթե o ձայնի նըման. այսպիսի հնչում գտնում ենք անգլերենի մեջ (å), վանա բարբառում և այլն։

˂ նշանը դրվելով ձայնավորի տակ, ցույց է տալիս ոնգալին հնչում. այսպես ą, į, ę, ǫ, ą̆, ę̆ և այլն։

¨ դնելով ձայնավորների վրա, տալիս է նրանց նոր երանգ. այսպես ä ունի a և e ձայնավորների միջին աստիճանը (հայերեն նշանակում եմ ու ձևով, այլ տառադարձությամբ ǝա).—ö կազմում է o և e ձայների խառնուրդը (հայերեն ǝo), ü ունի u և i ձայնների խառնուրդը (հայերեն իւ—յու)։

՝ դրվելով ձայնավորի վրա, նշան է բաց արտասանության, մինչդեռ ՛ փակ արտասանության. հատկապես è, é և այլն։ Այս նշանները այն անհարմարությունն ունեն, որ շփոթվում են շեչ-

տի հետ։ Ուստի ամանք (օր. Բրուգմանը) նրանց փոխարեն գործածում են ստորադրյալ ստորակետ (բաց նշան) և միջակետ (փակ նշան). այսպես e և ę։

* նշանը դրվելով խուլ բաղաձայնների կողքին, ցույց է տալիս, որ պետք է արտասանել շնչեղ, ինչպես p'=փ, t'=թ, k'=ք, որոնք կարելի է գրել նաև ph, th, kh. խճողումից խուսափելու համար, c և č տառերի համար նույն նպատակով դրվում է տակին կետ. ç=g, č=ǰ։

' նշանը և կամ մի փոքր ʸ դրվելով ուրիշ բաղաձայնների կողքին, նշան է քմայացման, ինչպես t'a, t'a տյա l'a, l'a լյա և այլն։

⁰ դրվելով ըստ հարմարության թրթռուն բաղաձայնի տակը կամ վրան, ցույց է տալիս, որ նույնը պետք է խուլ արտասանել այսպես b̥, g̊, d̥ և այլն ըստ գերմանական արտասանության և կամ պոլսահայ բարբառում։

· դրվելով ատամնականների տակ, ցույց է տալիս հետ քաշված արտասանությունն, այն է քիմքի մեջտեղում. հատուկ է անգլերենին և սանսկրիտին, այսպես ḍ, ṭ, ṇ, ṣ և այլն։

Դնում ենք այստեղ գիտական այբուբենի ըստ կարելվույն կատարյալ մի ցանկը.

Ձայնավորներ

a ա e, ə (ը), i, o, u (ու).

երկար ā, ē, ə̄, ī, ō, ū

սուղ ă, ĕ, e̯ ĭ, ŏ, ŭ.

ą (ո), ǭ (էօ), ů (իւ-լու)

ǟ, ȫ, ǖ (համապատասխան երկարները)։

Բաղաձայններ

b բ, b̆ երկշրթնալին շփական բ, b̥ խուլ բ (իբր պ).

c ծ, č ճ, ç ց, č̣ չ.

d դ, đ կամ ð անգլիական կամ նոր հունական թվլատ թըրթռուն դ, ḍ հետ քաշված դ.

g գ, ġ կամ γ ղ (ոմանք ՙ).

h հ, խակ ḫ ավելի ուժեղ, մոտ խ-ի։ Նույն h բաղաձայնը դրվելով թրթռուն և խուլ բաղաձայնների կողքին, ցույց է տալիս շնչեղ արտասանությունն. այսպես bh, gh, dh, ḍh, ph, th, kh և այլն։

] ə (պարզապես]—ի դերմանական ձևը դարձել է անգործածական պիտական այբուբենի մեջ),

k կ, kh ք (պետք չէ գործածել իրը w), ķ կոկորդային կ.

l լ, ł կատակային լ. ļ ձայնավոր լ.

m մ, ṃ ձայնավոր մ.

n ն, ŋ կամ ŋ կոկորդային ն, ŋ քմային ն, ŋ ձայնավոր ն.

p պ, ph կամ p փ, p երկշրթնային շփական խուլ p.

w ւ (որ է անգլիական կամ ս, մոտ ու ձայնին).

p կամ θ, ƀ անգլիական կամ նոր հունական թ(մատ խուլ թ.

ɋ կոկորդային ղ, որի ավելի ուժեղն է ɋ կամ ɋ^{0}.

r պարզ ր, ṛ ուժեղ ր(ռ), ŗ ձայնավոր r.

s ս, ś կամ ş շ (երկրորդ ձևը հնադրևան անպի է ասլիս).

x մէջտ խ և ոչ բնավ քս.

z զ, ž ժ, ž ձ.

Ահա այբուբենը դրած է ածխում գրի առնելու համար բոլորովին անպիր լեզուները, կամ գրավոր ոպդերի դանազան բարբառները (նուլնիսկ հայերենի), և կամ վերջապես գրավոր մի ոպդի կամ այն բառի հիշտ հնչումը նշանակելու համար (օրինակ՝ ֆրանսերեն jour=žur).

Բազմաթիվ նշանների խճողումից խուսափելու համար, այժմ լեզվաբանների մեջ ձգտում կա հնարել բոլորովին նոր տառեր (փոխանակ կետերով դանակելու). այսպես էր մտածում նաև 1928 թվականին Կոպենհագենում գումարված ընդհանուր լեզվաբանական կոնգրեսը[1]*։*

Ասացինք, թե բացի հունարենից, լատիներենից և լատինագիր այբուբեններից, մնացյալ բոլոր լեզուների այբուբենները սկզբունքով դուրս են վտարված գործածությունից՝ լեզվաբանական աշխատություններ մեջ, ըստ որում տառի ձևը ամենևին նշանակություն չունի լեզվաբանության համար, այլ՝ միայն ձայնը։ Տարբեր է բանասիրական աշխատությունների մեջ, ուր բառի գրության ձևը մեծ նշանակություն ունի ձեռագրական ընթերցվածների, վրիպակների և այլ տեսակետով։ Շատ անգամ գիտնականները որևէ բառ

---

[1] *Վերջերս մի ամերիկացի հնարել էր միջազգային այբուբենի մի նոր սիստեմ, բաղկացած 120 տառից, որից 60 ձայնավոր և 60 բաղաձայն (I. Kluh, The etymologic cipher alphabeth, Chicago, 1922)։ Բայց այս այբուբենը ոչ մի առավելություն չունի, որովհետև ձայնավորները նույն լատինական տառերն են, իսկ բաղաձայնները թմահաճ կերպով ձևափոխված նորաձև տառեր. օրինակ, փոխանակ գրելու q, դրել է հայերեն կ և այլն։*

բնիկ այբուբենով գրելուց հետո, նույնը տառադարձում են նաև լատինական այբուբենով, որպեսզի հնչման ճշտության մասին որևէ կասկած չմնա։ Բայց այս լատին տառադարձությունը բնագրից ավելի անհրաժեշտ է և իսկույր է ծանրաբեռնել մտքերը ավելորդ դժվարություններով։

Այժմ խոսենք լեզվաբանության մեջ չընդունված ազգային այբուբենների տառադարձության մասին։ Ինքնին հայտնի է, որ կենդանի լեզուների հնչումը կարելի է միշտ տեղի վրա ստուգել և ըստ այնմ ճշտիվ նշանակել, համաձայն վերոհիշյալ գիտական լատինական այբուբենի։ Այսպես, օրինակ, պարսկերենը, թուրքերենը, հայերենը և այլն։ Բայց ի՞նչպես վարվել հին լեզուների հետ, որոնց տառերի արժեքը հայտնի չէ մեզ այն կատարյալ ճշտությամբ, ինչ որ նոր լեզուներինն է։ Բնագրին հավատարիմ մնալու և նոր թյուրիմացությունների տեղիք չտալու համար, լեզվաբանները որոշել են հին ազգային այբուբենների յուրաքանչյուր տառին մի տառ հատկացնել, վերևում նշանակված գիտական այբուբենի ոգու համաձայն և այդ ձևով էլ գործ են ածում։ Դժբախտաբար այս տառադարձությունները կատարելապես միօրինակ չեն, որովհետև կազմվել են տարբեր ժամանակներում և տարբեր դրությամբ, իսկ այժմ փոխել դրանք և վերածել գիտական այբուբենին ունի այն անպատեհությունը, որ նորից պետք է տպագրել այն բազմաթիվ աշխատությունները, որոնք հրատարակվել են մինչև այժմ։ Այսպես, հայերենի և սլավերենի համար c նշանակում է ծ, իսկ ć=ճ ընդհակառակը, սանսկրիտ c նշանակում է ճ և ոչ ծ.—սեմական լեզուների մեջ ṣ նշանակում է ց, իսկ սանսկրիտի մեջ շ.—y տառը ամեն տեղ էլ յ ձայնն ունի (ինչպես այո՛ բառի մեջ), բայց սլավերենի մեջ գրեթե ը ձայնն ունի և լիտվաներենի մեջ երկար i է։ Նույնիսկ միևնույն լեզվի համար գոյություն ունեն տարբեր տառադարձություններ և կան մարդիկ, որ այս կամ այն պատճառով չեն ուզում հետևել ճշտիվ վերև մեջ բերված գիտական այբուբենին, որ ամենից հարմարն ու տարածվածն է։

Ջանազան լեզուների համար ընդունված տառադարձություններից կարևորները հետևյալներն են.

Սանսկրիտ

կարճ ձայնավորներ	—a, i, u, ṛ *կամ* ṛ, ḷ.
երկար ձայնավորներ	—ā, ī, ū, ṝ, *կամ* r̄, ē, o *(իմա* ē ō*)*.
երկբարբառներ	—ai, au *(կարդա՛* āi, āu*)*.
կիսաձայններ	—y, r, l, v *(վերջինը կիսաշրթնային)*

բաղաձայններ

շրթնային —p, ph, b, bh, m.

ատամնական —t, th, d, dh, n.

դանդալին —ţ, ţh, ḍ, ḍh, ṇ.

կոկորդական —k, kh, k, gh, (n) n.

քմական —c, ch, j, jh, ñ (իմա՛ č ç ǰ ǰh).

շչական —s, ş, ç, ś (բացի ատաջինից բոլորն էլ ś).

հագագային —h (որ է թրթռուն շունչ), ḥ (խուլ ինչպես հայերեն հ).

անգալին —m (հնչված նախորդ ձայնավորի հետ).

Զանդկերեն

կարճ ձայնավորներ —a, i, u, e, o, ĕ, ŏ (այս երկուսը պետք չէ հատկանալ երկար), ə, ą.

երկար ձայնավորներ—ā, ī, ū, ə̄.

երկբարբառ —ā (իմա՛ āo).

բաղաձայններ՝

շրթնային —p, b, f, w, m.

ատամնական —t, d. ϑ, ð, n t.

կոկորդական —k, g, x, γ, w.

քմական —č, ǰ

շչական (chuint.) —ś, ž.

սուլոդական (siff.) —s, z.

հագագային —h.

կիսաձայն —y, r, v.

ռնգալին —n (հետքմային), ñ (նախաքմային).

Նույնն է և հին պարսկերենը, բայց այստեղ շատ անգամ ձայնավորների երկարությունը չէ նշանակված, պակասում են w, ð, γ և այլն։ Ավելանում է l, ձայնավորներից կան միայն a, i, u.

Սլավակաց

Սլավական ալբուբենը ծանոթ է մեզ ռուսերենից, որ և գործ ենք ածում մենք մեր աշխատությանց մեջ։ Եվրոպացիք ունեն նաև նրա տառադարձությունը հետևյալ ձևով.

կոշտ ձայնավորներ —a, o, u, y (հետքմային ı), ǫ կամ ą (այն է՝ ռնգական o).

փափուկ ձայնավորներ—ě (շատ քաց e), e, ı, ĭ (ը), e (ռնգական e).

բաղաձայններ՝

շրթնային	—p, b, m.
ատամնական	—t, d, n.
կոկորդական	—k, g.
ծնքական	—c, dz.
քմային	—č.
սուլական	—s, z.
շչական	—š, ž.
հագագային	—x, v.
կիսաձայն	—r, v, l *(որ արտասանվում է նախորդ բաղաձայնի հետ)*.

Լիտվացերեն

Այս լեզվի մեջ գործ է ածվում լատինական այբուբենը, որից տարբեր ձևերը հետևյալներն են (փակագծից դուրս դրվածները լիտվանացիների հին տառադարձությամբ են, իսկ նրանց մոտ փակագծի մեջ դրվածները նոր գրական լեզվի ընդունված ձևերն են, որոնք միևնույն ժամանակ տալիս են նախորդների բացատրությունը գիտական այբուբենով).

ձայնավորներ —ė (ē), o *(իմա՛* ō), y *(իմա՛* ī) —*բոլորն էլ երկար.*

ռնգային —ę, ą.

երկբարբառներ —ů (uo), ë (ie) *(ճիշտ ինչպես մեր բարբառների մեջ* n և b).

բաղաձայններ —ż *(ժ)*, sz (š), cz (č). *կամ* β

Ձայնավորները հաճախ կրում են շեշտեր. բութ շեշտը (՝) նշան է կարճ և շեշտյալ ձայնավորի, սուր շեշտը (՛) նշան է երկար և շեշտյալ ձայնավորի, որի սկիզբը բարձր է և հետո իջնում է. պարույկը (˜) նշան է, թե ձայնավորն սկզբում և վերջում ունի ուժեղ շեշտ։ Նույն նշանները դրվում են նաև երկբարբառների վրա, ինչպես ȧu aū, ān, an, ir ir և այլն։

Գերմաներեն լեզուներ

Գոթականի համար կարևոր տարբերություններն են.

ձայնավորներ —e (ē), o (ō), ei (ī).

երկբարբառներ —ai, au *(երբեմն արժեն կարճ և բաց*, e o).

բաղաձայններ —þ (θ), w (v), j (y), q (qw), z (c)։

Իսլանդերենի մեջ շեշտը նշանակում է ձայնավորների երկա-

թուքյանը և ա՛չ ֆի շեշտ. ալեպիս ʾ=ա. բաղաձայններից b *(շրմնալին* spirant *թրթռանն է),* d (ð) *և*) ʒ (γ).–*հրտ.* š=ş։

Խալաճեղինե

Գոյն է ածում լատինական ալրատիպը. ձայնավորների արժեքը դժվար է որոշել, որովհետև քառի մեջ իրենց տնեցած պիրքի համեմատ տարբեր են հնչյում։ Բաղաձայններից կարևոր են th (=Θ) ch (=x). b, d, g *երկու ձայնավորների միջև հնչյում են* b, ð, γ, *իսկ նաև դիրքում գտնված խուլ բաղաձայնը հնչյում է թրթռան, ինչպես* cretim *իմա՝* Kredim։

Լատինական ճյուղ

Ասկյան և ումբրյան լեզուներով արձանագրությունները գրված են կա՛մ լատին ալրաբենով և կամ տեղական զանազան ալրաբեններով, որոնք առաջանում են հունարենից։ Լեզվաբանները սովրություն ունեն առաջինները տառադարձել շեղատառ լատին ալրաբենով, իսկ երկրորդները բացատրել լատին ալրաբենով, որոնց մեջ i *և* u *նշանակում են* e *և* o։

Սեմական այրաբեններ

Բոլոր սեմական ալրաբենները գրեթե նույն շարքն ունեն, դրանց մեջ ամենահարուստը լինելով արաբերենը, լավագույն ենք համարում գնել ալեսեղ նրա լատինական տառադարձությունը՝ բնիկ ալրաբենի շարքով.

ا	ب	ت	ث	ج	ح	خ	د	ذ	ر	ز
a	b	t		j	ḥ	x	d	ḏ	r	z
س	ش	ص	ض	ط	ظ	ع	غ	ف	ق	
s	š	ṣ		ṭ		ʿ	ġ	f	q	
ك	ل	م	ن	ه	و	ي				
k	l	m	n	h	v	y				

Ձայնավորները, եթե միայն ձայնանիշով են, պահպանվում են a, i, u, *իսկ եթե գրված են տառերով, ալսինքն երկար են, նշանակվում են* ā, ī, ū։ *Ալսպես է նաև պարսկերենի, ինչպես նաև թուրքերենի մեջ, ուր սակայն երկար ձայնավորների նշանակումը ձևական է միայն, քանի որ թուրքերենը դուրկ է երկար ձայնավորներից։*

Ավելացնենք ի վերջո, որ ալժմ նոր լեզվաբանների մեջ

ձգտում կա նաև հունարեն այբուբենը լատիներեն տառագարձելու, հետևյալ ձևով.

Հունարեն	α	β	γ	δ	ε	ζ	θ	ι	κ	λ	μ	ν	ξ	ο	π	ρ	σ
Լատիներեն	a	b	g	d	e	z	th	i	k	l	m	n	ks	o	p	r	s
Հունարեն	τ	υ	φ	χ	ψ	ω											
Լատիներեն	t	u	ph	ch	ps	ō											

Մինչև այժմ դիտմամբ չխոսեցինք հայերենի մասին, որովհետև հայերենի գրությունը պահում ենք անփոփոխ, հակառակ եվրոպացի լեզվաբանների, որոնք հայերենը դնում են եվրոպական տառադարձությամբ։

Տառերի հին հնչյունների մասին կխոսենք տասներորդ գլխում։

Անցնենք հայերեն գիտական այբուբենին։

Որովհետև հայերեն տառերը տեղից տեղ և բարբառից բարբառ տարբեր հնչում ունեն, իսկ մեզ հարկավոր է գիտական աշխատությանց համար միօրինակ և ճշտված գրություն, կարիք ենք զգում գիտական այբուբենի, հատկապես բարբառային գրվածքների համար։ Այս կարիքը բնականաբար պիտի լրացներ գիտական լատինական այբուբենը։ Բայց մեր մեջ դեռ այբուբենը տարածված կամ ընդհանուր ընդունելություն գտած չէ։ Ուստի լավ կլիներ, եթե ընդհանուր գործածության դրվեր միօրինակ հայերեն գիտական մի այբուբեն, որի մեջ տառերը ունենային միշտ իրենց ճիշտ հնչումը, անկախ որևէ բարբառից, անկախ նույնիսկ հին ու նոր հայերեն այբուբենից։

Այսպիսի մի այբուբեն գործածել եմ ես իմ բարբառագիտական աշխատությունների մեջ, սկսած 1898 թվականից, որի մանրամասն բացատրությունն էլ տվել եմ իմ «Բարբառագիտության» մեջ (Նոր-Նախիջևան, 1911), էջ 6—11։

Հայերեն գիտական այբուբենի հիմնական սկզբունքներն են. 1. Ամեն մի տառ պիտի ունենա միշտ և ամեն տեղ միևնույն հնչումը. չհնչված տառ չպիտի գրվի. 2. Մի հնչյունը պիտի նշանակվի միայն մի տառով։

Այս սկզբունքների համեմատ, հայերեն այբուբենի մեջ մտնում են հետևյալ փոփոխությունները.

է տառը հնչվում է e, իսկ ե ունի երկբարբառային ie հնչումը (և ո՛չ երբեք e կամ ye)։

օ տառը հնչվում է o, իսկ ո ունի երկբարբառային uo հընչումը (և ո՛չ երբեք o կամ vo)։

բ, գ, դ, ձ, ջ բաղաձայնները խրթնուն են, ճիշտ ինչպես b,

g, d և այլն. պ, կ, տ, ծ, ճ խուլ են, փ, բ, թ, գ, չ ունեն իրենց սովորական հնչումը. բ', պ', դ', ձ', ջ' ներկայացնում են խրթխրթուն հնչափոխները (իբր bh, gh և այլն)։

Բաղաձայնի մոտ դրված փոքր ՝ տառը քմայնացման համար է. ինչպես գ՝, բ՝, կ՝, ճ՝, լ՝։

յ տառը ներկայացնում է խրխնան հապաղը, որ հաճախ է կարդում, մշտ բարբառներին և այլն։

ղ՝ ներկայացնում է խիստ կոկորդական ղ, իբր դ։

ւ կիսաձայն w հնչումն ունի։

յ միշտ արժի կիսաձայն y և ոչ բնավ i։

Հայ այբուբենին անծանոթ ձայնավորներն են ա (ä), ևօ (ö) իւ (ü)։

Ավելորդ չենք համարում հիշել նաև հայերենի եվրոպական տառադարձութիւնը, որի դանազան ձևերի մեջ ամենից ավելի ընդունվածն է Հյուրմանի տառադարձութիւնը, որ հետևյալն է, համեմատութիւմբ հայ այբուբենի շարահարութիւնն.

ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ժ
a	b	g	d	e	z	ē	ə	t'	ž
ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ	ճ	մ
i	l	x	c	k	h	j	ł	č	m
յ	ն	շ	ո	չ	պ	ջ	ռ	ս	վ
y	n	š	o	ç	p	j	ŕ	s	v
տ	ր	ց	ւ	փ	ք	և	ֆ		
t	r	c	w	p'	k'	ew	f		

Արդի տառադարձութիւնն էլ երկու տեսակ է՝ ըստ դրութեան և ըստ հնչման։ Եվրոպայի բոլոր ազգերը, որոնք գործ են ածում լատինական այբուբենը, հետևում են ըստ դրութեան ձևի, այսինքն պահում են այն լեզվի դրութեան ձևը, որից փոխ են առնում։ Բայց լատին այբուբենը լեզվից լեզու տարբեր հնչում ունի. տառադարձութեան մեջ փոխառու լեզուները ի նկատի չեն ունենում այդ և փոխառյալ բառը հնչում են իրենց լեզվի արտասանութեան օրենքներով։ Այսպիսով միևնույն բառը (հատկապես անունը) դանազան լեզուների մեջ ունենում է տարբեր հնչում. թեև դրութիւնը նույն է։ Օրինակ, Գերմանիայի մայրաքաղաքը գերմաններեն գրվում է Berlin, որ կարդացվում է Բեռլին։ Բոլոր եվրոպական ազգերը պահում են այս ձևը. բայց ահա ֆրանսերենում, ուր in ունի իւ հնչումը, այս նույն Berlin բառը կարդացվում է Բեռլէն. հակառակ գերմաններենի հնչման։ Ավելի ծանր է. օրինակ, Suczava քաղաքի

անունը։ Այս բառը ըստ հունգարերենի կարդացվում է Սուչավա. ինչպես կոչվում է այդ քաղաքը։ Բայց բոլոր եվրոպացիք էլ, պահելով գրության ձևը, կարդում են Սյուֆզավա կամ Սու՛զավա, ոչ մեկը չի հնչում Սուչավա։ Singer կարի մեքենայի անունը շատ լեզուներում պահում է իր ինքնուրույնությունը (ռուսերենում Зингер), իսկ ֆրանսերենում զառնում է Սեճժ!

Այն լեզուները, որոնք չեն գործածում լատինական այբուբենը և ունեն սեփական այբուբեն, զերծ են այս ձախորդ կացությունից։ Բայց այստեղ էլ սկսում է նոր դժվարություն։ Գրել և հնչել ինչպես գրվո՞ւմ է, թե գրել և հնչել ինչպես հնչվում է։ Առաջինը կոչում ենք ըստ գրության տառադարձություն, երկրորդը՝ ըստ հնչման տառադարձություն։ Երկու գրությունն էլ ընդունված է լեզուների մեջ, առանց նախապատվությունը մեկին կամ մյուսին տալու։ Օրինակի համար, Ֆրանսիայի մայրաքաղաքի անունը գրվում է Paris և ըստ ֆրանսերենի հնչվում է Պարի. բայց հայերենում ըստ գրության տառադարձում և հնչում ենք Պարիզ կամ Փարիզ (երկրորդը արևմտահայ տառադարձությամբ, առաջինը արևելահայ կամ հին տառադարձությամբ)։ Իսկ Chateaubriand անունը ըստ հնչման տառադարձում և հնչում ենք Շաթոպրիան (արևմտահայ ձև) կամ Շատոբրիան (արևելահայ ձև)։ Ի՞նչ անճոռնի և անընթեռնելի բան պիտի դուրս գար, եթե պահեինք երկբարբառների գրության ձևը, չհաշվելով վերջին բաղաձայնը d, որ գրվում, բայց չի հնչվում ֆրանսերենում։ Այսպես է նաև ֆրանսիացի մի նշանավոր գրողի անունը՝ Racine, որ ըստ գրության դարձել է մեր մեջ Հռակին. հմմտ. «Գարագաշ, «Հռակինեայ երդք վասն կրօնից», Վիէննա, 1842»։

Երկու գրությանց առավել կամ պակաս կողմերը հաշվելով, գտնում ենք, որ հնչական տառադարձությունը առհասարակ ավելի լավ է քան ըստ գրության ձևը։ Բայց հնչական տառադարձությունն էլ ներկայացնում է հետևյալ երկու անպատեհությունները.

ա) Միևնույն բառը կամ անունը լեզվից լեզու կամ ազգից ազգ տարբեր հնչումներ ունի. օրինակ Albert անունը գերմաներեն հնչվում է Ալբերտ, անգլերեն՝ Ալբըրտ, ֆրանսերեն՝ Ալբեռ։ Սրանցից ո՛րը պետք է վերցնել։ Եթե յուրաքանչյուր անուն յուրաքանչյուր ազգի հնչման համեմատ վերցնենք, անունը իր ինքնությունը կկորցնի մեր աչքում։ Այնուամենայնիվ այնպիսի անուններ, որոնք իրարից շատ տարբեր հնչում են ստացել լեզվից լեզու, տարօրինակ պիտի լիներ, եթե միևնույն ձևով պահեինք։ Օրինակ, կարելի չէ

ֆրանսերեն George (ժորժ), անգլերեն George (Ջորջ), գերմաներեն Georg (Գեորգ), սուսերեն Георгий (Գեորգի) և այլն փոխառնակել իրար հետ և անգլերեն Ջորջը ֆրանսերենի ձևով ժորժ կարդալ, կամ հակառակը և կամ սուսերեն Գեորգի տալու տեղ անդլիական ձևով Ջորջ տալը։ Ավելի վատ է գերմաներեն Johann (Յոհան), ֆրանսերեն Jean (ժան), անգլերեն John (Ջոն), սուսերեն Иван (Իվան) և այլն անուններ, որ անտեսի և ծիծաղելի պիտի լիներ փոխառնակել իրարմէ։ Այս գեպքում սմանք գնում են հայերենի մեջ բնագրված ձևը, բայց այս ձևն էլ նրա երեսին հարմար է գալիս, ինչպես գերմաներեն Georg (Գեորգ), այնուամենայնիվ ծիծաղելի կլիներ, եթե տեղներ «Հովհաննես Հակոբոս Ռուսաս» (փոխառնակ ժան ժակ Ռուսսոյի), կամ «Վիան (Վիանդ) Տալաան» (փոխառնակ Լև Տալստոյի)։

բ) Հաճախ մենք չգիտենք, թե ինչպես է հնչվում օտար բառը, կամ մուտավորապես միայն գիտենք, որովհետև շատ լեզուներ կան, որոնք այլ բան են գրում և այլ բան են հնչում։ Այսպես, օրինակ, Բելգիայի մայրաքաղաքը ֆրանսերեն գրությամբ գրվում է Bruxelles, որ բուն օրենի պիտի հնչվեր Բրյուսել, բայց հնչվում է Բրյուսել։ Դրա համար էլ արևմտահայերը գրում են Գրիւսել, իսկ արևելահայերը գրում են Բրյուսել (խրտվելով սուսերեն Брюссель ձևից)։ Ֆրանսիացի մի ճարտարապետ, Charles Texier, 1836 թվականին այցելել է Կիլիկիա և շատ բան է գրել հայ երկրի աշխարհագրության և ճարտարապետության մասին։ Նրա ազգանունը պետք է կարդալ Տեսիե (Տեսիէ) և այդպես էլ ունի Ալիշան, «Սիսուան», էր, 561ր, 580ր (արևմտահայ տառադարձությամբ գրած Թիսիէ), բայց ուրիշներ գրում են Տէքսիէ կամ Թեքսիէ (վերջին ձևով ունի մեր բազմահմուտ ճարտարապետ Քորամանյանը իր «Հայկական ճարտարապետություն» աշխատության մեջ (Երևան, 1942)։

Այստեղ ուզում ենք բերել սխալ գրության և տառադարձության մի շարք այլ օրինակներ ևս։

Միջին հայերենի շրջանում, տառադարձության փոփոխությամբ, գրաբարի ուղիղ գրությունն էլ փոխվեց և նոր տառադարձությամբ ուսյ եկած ձևերը գրականի բարձրացան։ Նույնիսկ արևելյան գրականում սովորական են դարձել տառադարձությամբ ձևեր. օրինակ՝

Պարոն, որ ֆրանսերեն baron ձևից անցնելով հայերենի պիտի գրվեր բարոն, բայց ըստ արևմտյանի գրվում է միշտ պարոն։

Ընտիր, ընտրել, որի ճիշտ գրությունն է ընդիր, ընդրել, ինչ-

պես գրված է հին ձեռագրերում և ինչպես ցույց է տալիս բառի ստուգաբանությունը, որովհետև կազմված է ըստ նախդիրով՝ դիր, դնել արմատից։ Բարբառներում էլ մինչև այժմ հնչվում է նըստրել կամ նըստոլ։

Թանկ, որից թանկագին, երկուսն էլ գրվում են թե՛ նկ և թե՛ նգ։ Ճիշտ ձևն է թանգ, որովհետև ծագում է պարսկերեն tang հոմանիշից։ Դրչութիւնը ստատանվում է, բայց թանգարան բառը միշտ էլ գրվում է գ-ով, նույնիսկ արևմտյան գրականում, ուր և հնչվում է t'ankaran։

Թաֆցնել բառն էլ երկընտրանքի մեջ է. առաջ այդ բառի ստուգաբանությունը ծանոթ չէր և հետևաբար գրությունն էլ անորոշ էր։ Բայց երբ Մեյեի ստուգաբանությամբ բառը կապվեց լատիներեն taceo «լռել» բառի հետ, հայտնի դարձավ, որ պետք է գրել. թաֆչիլ, թաֆցնել, թաֆուստ, թաֆստոց, թաֆուն, բոլորն էլ f-ով։

Սանդուղք և սանդուխք վիճելի դրչութիւն ունեին, բայց երբ բառը կապվեց հունարեն σκάνδαλον=եվրոպական scandale բառի հետ, հայտնի եղավ, որ պետք է գրել սանդուղք (սանդ արմատից, ուղ մասնիկով)։

Բախտ և բաղտ բառը իր ածանցներով անստույգ դրչութիւն ուներ, մինչև անգամ ավելի ճիշտ էին համարում բաղդ ձևը։ Բայց երբ հաստատվեց, որ սա պարսկերեն baxt բառից է փոխառյալ, այլևս տարակույս չմնաց, որ ճիշտ ձևն է բախտ, ինչպես ընդունված է այժմ ամենուրեք։

Բացօթեայ (բացօթյա), թեև գրաբարից հայտնի էր, որ ծագում է օթ, օթևան արմատից, ոմանք (կեղծ դիտուններ) սխալ ստուգաբանությամբ, կարծելով, թե արմատն է օդ (իբրև թե բացօթեայ (բացօթյա) նշանակում էր բաց օդում), սկսեցին գրել բացօդեայ (բացօդյա)։ Այս սխալ դրչութիւնը դեռ շատերը շարունակում են։

Պատշգամբ, հնում գրված է նաև պատշկամ, պատշկամբ։ Այս երկու գրչութիւններից ուղիղն է միայն պատշկամբ, որովհետև ծագում է իրաներեն palti-škamba «սյունաշարք» բառից։ Երկրորդ՝ տ և շ բաղաձայններից հետո բնականաբար պիտի գրվեր կ՞։ Բայց արևմտյան ստառադարձութիւնով կ-ի փոխարեն գրվելով գ, այս ձևն էլ քաղաքացիութիւն իրավունք ստացավ։ Բառարանում, ըստ ալբբենական կարգի, առաջին տեղը տրվեց պատշգամ ձևին, իսկ երկրորդ տեղը (հաճախ մանրատառ) պատշկամ ձևին։ Այսպիսով առաջնութիւնն ստացավ երկրորդ, սխալ ձևը։ Արևելահայերը, թեև գրում են պատշգամբ, բայց միշտ էլ հնչում են պատշկամբ։

Հնչական սկզբունքին հետևելով հանդերձ, սխալ տառադարձելու պատճառը ուրիշն տառ այբուբեններուն անկատարությունն է և նրանց ոչպատրաստյան ամանդական ձևը։ Հայ դրագը պարտավոր չէ ամեն մի տպ և լեզու ճանաչել և նրանց հնչումը ճիշտ լսելով վերարտադրել։ Ի՞նչ հնարավորություն ունենք մենք չինարեն, կորեերեն, հապոներեն և այլն բառերը անձամբ լսել և գրել։

Անգլո-ամերիկյան արտասանությամբ w տառը մերթ հնչում է վ և հաճախ ու։ Հայերը սովոր չեն վերջին հնչման, և գնում են վ։ Ամերիկացիք հանդուցում են հայերին հենց այս սխալի միջոցով։ Պետք է անդադար հետևել հնչման և գրել Օսկար Ուայլդ, թեև դժվար է մեզ համար ամեն անգամ լսանալ, թե ամերիկացիք կամ անգլիացիք ամեն մի w ի՛նչպես են հնչում։ Նաև եթե ամերիկացիք Wilson անունը հնչում են Վիլսըն, պետք է գրել այդպես և ոչ թե Վիլսոն, երբ բնդունում ենք հնչական տառադարձությունը։

Անգլո-ամերիկյան արտասանությունը թույլ է, մինչ լատինական խոշ. առաջ մեկնուն patrik բառը հնչում է անգլերեն պատրիք, իսկ ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն, նաև ռուսերեն՝ պատրիկ։ Հայերեն արտասանությունն էլ պետք է այդպես պահել և ո՛չ թե բերան էլ միատեսակ հնչումով։

Նաև խոսելի է բուն գրության տառադարձությունը. օրինակ, անգլերեն Marlborough անունը բուն հնչման պիտի գրել Մարլբրո և ոչ թե բուն գրության Մարլբորուգի[1]։

Իտալական այբուբենը միջին տեղն է բռնում հայերենի և լատինական այբուբենի միջև. մի կողմից շատ տառեր բոլորովին նույն են լատինականի հետ. ինչպես, a, e, o, t (T), k և այլն, բայց մյուս կողմից բոլորովին տարբեր, ինչպես ч, ц, ш, щ, ф և այլն։ Տառադարձության մեջ էլ շատ անգամ հնչական է, բայց երբեմն տառական։ Առաջինը տալիս է լավ արդյունք. երկրորդը երբեմն շեղվում է սկզբնաձևից. օրինակ, ֆրանսերեն Paris քաղաքի անունը դառնում է Париж (վերջածայնը ž փոխանակ з-ի), իսկ ֆրանսերեն hautbois երաժշտական գործիքի անունը դարձել է ռուսերեն гобо́й, որ կարդացվում է գաբոյ։

Այսպես ուրեմն, որքան վճռական և որոշ է հին տառադարձությունը, այնքան անորոշ է նոր տառադարձությունը՝ լեզուների բազմազանության, հին և նոր տառադարձությունների բախման, ինչպես և արևելյան և արևմտյան տառադարձությունների տարբերության պատճառով։

---

[1] Տե՛ս այս մասին Մ. Հայկունի. Երին. Վիեննա. 1923.

Ընդհանուր սկզբունքն է հետևել՝ 1. բառերի հնչման և ոչ գրության, 2. յուրաքանչյուր իր հնչման, 3. սակավ դեպքերում միայն ընդունել գրաբարից ավանդված ձևերը։

Ըստ այսմ մինչ գրաբարն ունի մի միակ տառադարձություն, աշխարհաբարն ունի երկու տառադարձություն՝ արևելյան և արևմտյան։ Արևելյանը ընդհանրապես նույն է գրաբարի տառադարձության հետ, արևմտյանը շփոթ վիճակ է ներկայացնում. հնից մնացած բառերն ու անունները պահում է հին տառադարձությամբ, բայց կարդում է սխալ հնչումով, իսկ նոր բառերը գրում է նոր տառադարձությամբ, որ թեև կարդում է նոր հնչումով և համաձայն է դուրս բերում օտար լեզուների հնչման, բայց ունի երեք անպատեհություն. 1. չի համապատասխանում գրաբարից ավանդված գրչության, որով միևնույն անունը երկու կամ երեք տարբեր ձևերով է գրված լինում. ինչպես Գրիգոր և Կրէկուար, Դէորգ և Կէօրկի և այլն։ 2. Սրանով անունը կամ բառը կորցնում է իր պատկերը և ընթերցողը չի կարողանում ճանաչել, որ երկու անուններն էլ միևնույն բաներն են։ 3. Արևելահայը չի ճանաչում արևմտահայ ձևը, որ սխալ է կարդում և սխալ է հասկանում, ինչպես որ արևմտահայն էլ սխալ է կարդում և սխալ է հասկանում արևելահայ գրչությունը։

Արևելահայ տառադարձությունը, որ ընդհանրապես ուղիղ է, մի քանի դեպքերում սխալվում է, այն էլ արևմտահայ տառադարձության հետևելու պատճառով։ Այսպես են, օրինակ, պարոն, ճիզվիթ, Ճապոնիա և այլն (փոխանակ բարոն, ջիզվիտ, Ջապոնիա)։

Ճապոնիա երկրանունը չինական ծագում ունի (ճապոնացիք իրենց երկիրը կոչում են Նիպպոն)։ Չինարենում այդ բառը կազմված է ja «արեգակ, արև»+pən «ելնել, ելք, ծագել», ուստի նշանակում է «Արևելք» (այսպես է կոչված, որովհետև այդ երկիրը գտնվում է Չինաստանի արևելքում)։

Նախ ֆրանսիացիք գրել են իրենց լեզվի տառադարձությամբ Japon, որ շատ համապատասխան է չինարենին և կարդացվում է Ժապոն։ Նույնը անգլիացիք կարդում են Ջապըն, որովհետև անգլերենում ժ չկա և j տառը կարդացվում է անգլերենում ջ։ Սա առաջին քայլն է սխալ տառադարձության։ Գերմանացիք վերցնելով նույն բառը, կարդում են Յափոն, որովհետև իրենց լեզվի մեջ ոչ ժ կա և ոչ էլ ջ, այլ j տառը կարդացվում է y=յ։

Գերմաներենից էլ նույն բառը անցնելով ռուսերենի, գրվում և հնչվում է Япония։ —Հայերենում արևմտահայերը գրում են Ճաբոն, որ համապատասխանում է անգլերենին (գրությամբ և հնչու-

մով)։ Արևելահայերը մերթ հետևելով աստվերնին, գրում են Յապոնիա և մերթ հետևելով արևմտահայերնին գրում են Ճապոնիա, որի մեջ ն առաջ հնչյունը սխալ է, սրամիտհայ ձևով է։

Մրա նման է Ջավա կղզու անունը։ Այս երկրի բնակիչները իրենց երկիրը կոչում են հիշյա Ջավա, ֆրանսախոսիք գրում են Java և կարդում են Ժավա, անգլիախոսիք գրում են և կարդում Java Ջավա, որ շատ հիշյա է, գերմանախոսիք գրում են նույն ձևով և կարդում Յավա, որ սխալ է, և սրանից էլ ռուսերեն գրվում է Ява։ Արևմտահայերը գրելով Ջավա, պահում են հիշյա հնչյունը իրենց աստվածաբանության համաձայն, իսկ արևելահայերը մերթ հետևելով արևմտահայերին գրում են Ջավա, մերթ հետևելով ռուսերենին, գրում են Յավա, երկուսն էլ սխալ են։

Սխալ է նաև Մեքսիկա երկրանունը, որ հիմնվում է ֆրանսերեն Mexique ձևի վրա, որ կարդացվում է Մեքսիք։ Բայց այս երկրանունը անգամ հնչվում է Մեխիկա, որ երբեմն երևում է դրականության մեջ, իսկ մեծ մասամբ տարածված է Մեքսիկա սխալ ձևը։

Չուվաշերեն լեզուն o և f ձայները չունի լեզվի մեջ, ուստի օտար բառերի մեջ միայն պահում են այդ ձայները և տառերը. ինչպես fosfar, tlf. բնիկ և կամ բնիկ դարձած բառերի մեջ o-ի փոխարեն գտնում ենք a կամ ă.-ալա լեզուն ունի նաև այն հատկությունը, որ բառասկզբում և վերջում սիրում է պահել խուլ ձայներ և մինչև անգամ օտար լեզուների թրթռուն ձայները վերածում է խուլի վերջերս ընդունելով առաջական այբուբենը իրենց լեզվի համար, լավ են արել, որ ըստ հնչման գրում են пирамит (pyramide), Кермани *(Գերմանիա)*, крамматĕк *(քերականություն)*, Пурис *(Բորիս)*, пушмак (башмак), шилет *(ժիլետ)*, шурнал *(ժուռնալ)*, cabát *(կարդա՛ savăt և իմա՛* завод), арап *(արաբ)* և այլն։

Մյուս կողմից, չուվաշերեն լեզվի մեջ k, x, p, t, š, s *խուլ բաղաձայնները, գտնվելով երկու ձայնավորի կամ թրթռուն բաղաձայնի և ձայնավորի միջև, հնչվում են* g, γ, b, d, ž, z, *իսկ* ć *հնչվում է* dz (=հայերեն ձ)։ *Զարմանալի է, որ ռուսական այբուբենը ընդունողները, փոխանակ նրանից նաև* г, з, ж, д *և այլն տառերը վերցնելու, հետևելով լեզվաբանական բարդ կանոնին, գրել են*

каранташ *և կարդում են* karandaš,
лаша *(ձի)* " " " laža

вакун " " " wagon,
Лонтăн " " " London և այլն։

Բայց այս գրութեան համաձայն, երկու ձայնավորի և կամ մի թրթռուն բաղաձայնի և մի ձայնավորի միջև դտնվող խուլ բաղաձայններն էլ թրթռուն պիտի դառնային (t>d և այլն), ուստի օտար բառերի միջի խուլ ձայները պահպանելու նպատակով, նոր կանոն էլ են հնարել, որ օտար բառերի մեջ նույն կարգի խուլ բաղաձայնները գրեն երկու անգամ. այսպես՝ лампа „ճրագ" меттăр „մետր", карттин (ռուսերեն картина „պատկեր"), театтăр „թատրոն", пролеттари „պրոլետար" և այլն (Горский, 9—13)։

Տառադարձութեան մի այլ ձևն է, երբ մի լեզու հրաժարվելով իր հին այբուբենից, ընդունում է մի ուրիշ այբուբեն։ Այս երեւույթը տեղի ունեցավ հատկապես այն ժողովուրդների մեջ, որոնք իրենց կրոնը փոխելով մահմեդականութեւնն ընդունեցին։ Այսպես եղան պարսիկները, որոնք զրադաշտական կրոնը թողնելու հետ պահվավերեն այբուբենն էլ թողեցին, և հնդիկ զանազան ժողովուրդներ, որոնք հնդկական կրոնը թողնելով, նաև սանսկրիտ այբուբենն էլ թողեցին։ Բոլորն էլ վերցրին արաբական այբուբենը, որ նոր տառերով հարստացրին։ Այս բոլորի մեջ առաջինը պարսիկներն են, որոնք ամբողջութեամբ վերցրին արաբական այբուբենը, ավելացնելով նրա վրա 4 տառ՝ پ (p), چ (č), ژ (ž), گ (g)։ Արաբական այբուբենը կետերով հարուստ էր արդեն. նման ձևի տառերը կետերով էին տարբերվում, այսպես՝ ب (b), ت (t), ث (s) և այսպես ուրիշներ (մի կետ, երկու կետ կամ երեք կետ. չորս կետով տառ չկա)։ Երեք կետով տառեր երկու հատ էին՝ ژ (ð) և ش (š). այս վերջինը՝ զանազանելու համար س s տառից, թեև երկու կետանի նման տառ չկա։ Պարսիկները իրենց ավելացրած տառերի վրա դրեցին երեք կետ։

Աֆղանները և բելուջիները ավելի հարստացրին նույն այբուբենը՝ ավելացնելով 4 կետանի տառեր։

Այս այբուբենների մեջ ամենից ավելի հարուստն է հնդկական սինդհի այբուբենը։

Հնից նորին անցնելու ժամանակ տառերի արժեքը փոխելու ամենալավ օրինակը տալիս է հունական այբուբենը, որ ծանոթ է մեզ մեր թվարկութեւնից առաջ VII դարից։ Այս ջուրջ 2 600 տարվա մեջ 24 տառերից 9 հատը ավելի կամ պակաս չափով փոխած է իր հնչումը, այնպես որ, երբ եվրոպացի գիտնականները կարդում են հունարեն մի հին դրվածք հին հնչումով, արդի հույնը չի հասկանում և ծաղրով է վերաբերվում ։

Այս 9 տառերից 2-ը ձայնավոր են, այն է՝ ῃ հնչումով e, նոր հնչումով i —ῳ հնչումով o, նոր հնչումով նույնպես i։

Բազաձայնների ունենք՝

β	հին հնչումով	b,	նորով	v.
γ	"	"	g	"	γ (g).
δ	"	"	d	"	δ (d).
ζ	"	"	dz	"	z.
θ	"	"	p, th	"	th
φ	"	"	ph	"	f
χ	"	"	kh	"	x

Հին հոնարենը ունեցել է ῾ նշանը, որ կարդացվում էր h, այժմ նշանակվում է ՝ նշանով և ընդհանուր չի հնչվում։

Հին հոնարենը ուներ նաև երկար և կարճ ձայնավորներ, որոնք այժմ կորցրել են այդ տարբերությունը. այսպես՝

α	հնչում էր հնում,	a,	ā,	այժմ	a.
ε	"	"	"	e	"	e.
η	"	"	"	ē	"	i.
ι	"	"	"	i, ī	"	i.
ο	"	"	"	o	"	o,
υ	"	"	"	ū, û	"	i.
ω	"	"	"	ō	"	o

Կային նաև դանադան երկբարբառներ, որոնք այժմ դարձել են կամ պարզ ձայնավոր, կամ ձայնավոր + բազաձայն, ինչպես αι>e, οι, ει>i, αυ>av և այլն։

Գիր և գրականություն ունեցող լեզուների մեջ սովորական է այն երևույթը, որ ժամանակի ընթացքում լեզվի հնչյունները փոխվում են, և տառն էլ, որ անմոռուն ներկայացուցիչն է բառերի, հետևելով նրանց, ստանում է նոր հնչում։ Նոր ժամանակի ընթերցողը, անտեղյակ անցյալին, կարդում է բառերն իր նոր հնչման համաձայն, և կարծում է, թե այդ նոր հնչումը նաև հին ժամանակի հնչումն է։ Միայն բանասիրական և լեզվաբանական քննություններն են, որ կարող են այդ տառերի և բառերի հին հնչումը երևան հանել նորից և հինը կարդալ հնի ձևով։ Այսպես են եղել ի միջի այլոց հունարենը, լատիներենը, ինչպես և հայերենը։

Այս երևույթի համար մի լավ օրինակ է տալիս եթովպերենը։ Եթովպական այբուբենն ունի 3 տեսակ h, այն է h, ḥ և x.

որոնք համապատասխանում են արաբական ˀ ع և غ ձայներին։ Ավելի ուշ ḫ և x ստացան h հնչումը, բայց տառերը մնացին։ Նմանապես առաջ կար š, որ հետո դարձավ s, բայց տառը մնում է։ Կար նաև ◌ (ع) ձայնը, որ ապա դարձավ a, բայց տառը մնում է, ինչպես և՝ ġ غ, որ հետո եղավ ص ṣ (յադեք), բայց տառը նույնպես մնում է (Dillmann, p XIII)։

Առանձին կարևորություն ունի ավելորդ վերջնաձայնը, որն ընդհանրապես բաղաձայն է լինում, բայց կարող է լինել նաև ձայնավոր (ինչպես ֆրանսերեն e)։ Ֆրանսերենում բառավերջում p, s, t, d, x նույնիսկ ամբողջ մի վանկ (ինչպես ent), ռուսերենում ъ և ь բառավերջում չեն կարդացվում, ալսպես և հայերեն յ տառը ա և ո ձայնավորներից հետո (հին ուղղագրությամբ)։

Գիտությունը հաստատում է, որ այս ավելորդ համարված տառերը սկզբում կարդացվում էին և հետո միայն բառերի հնչումը փոխվելով, վերջնաձայները ավելորդ դարձան։ Ալսպես ֆրանսերեն corps հնչվում էր առաջ ալնպես, ինչպես գրված է (կորպս) ինչպես ցույց է տալիս լատիներեն corpus "մարմին"։ Ալս բառի վերջին ձայնավորը կրճատվելով, բառը դարձավ նախ corps, որ կարդացվում էր կորպս։ Ավելի հետո ընկավ նաև վերջնաձայն s-ը, բառը կարդացվեց կորպ, բայց գրվից դարձյալ corps։ Էլ ավելի հետո վերջնաձայն p ևս ընկավ և բառը կարդացվեց կոր, բայց և գրվեց հին ձևով՝ corps։ Ալսօր ֆրանսերենն ալս երրորդ վիճակումն է։ Եթե պատահի, որ մի օր ալս բառի r վերջնաձայնն էլ կտրվի և բառը հնչվի կո, դարձյալ կարող է գրվել corps!

Ռուսերենի ъ-ը, որ դրվում էր բառերի վերջում բաղաձայնից հետո, նախապես հնչվում էր ŭ, հետո դարձավ ə, ավելի հետո ալս ə ևս ընկավ և նշան դարձավ ալն բանի, թե բաղաձայնը կոշտ է, ալսինքն՝ փափուկ հնչում չունի։ Ալս վիճակը ներկայացնում է ռուսերենը նախքան հեղափոխությունը։ Նոր ուղղագրությունը եկավ ալդ ավելորդ տառը ջնջելու, որովհետև ь տառի գոյությունը բավական էր հիշեցնելու տառի փափկությունը, իսկ չգոյությունը հիշեցնում էր տառի կոշտ լինելը։

Սրանց նման է նաև հայերեն յ ձայնը, որ անշուշտ նախապես հնչվում էր (y)։ Մեսրոպը, հնարելով հայերեն տառերը, ամենևին կարիք չուներ ավելորդ տառեր ստեղծելու, և արդեն հարուստ հայ ալբուբենը ավելորդ տառերով ծանրաբեռնելու։ Ալսպես հսկայ, ազգոյ, գշխոյ հնչվում էին hskay, azdoy, dšxoy

և այլն։ Իսկ հին կաթսայ, տապայ, բանիանայ, սատանայ, շուկայ, ձեռնայ. շրթայ և այլն բառերը, որոնք տատրևներից են փոխառյալ, տատրևներում դարձի են եկել յ ձայնիչից, այդ ցույց է տալիս, որ հայերը անընդհատակ էին բառափոխում տակ ա և ո հնչիւնն և միշտ հնչում էին այ, այ։ Արա տպագրչից է Ի. յծոր-գաթիչան նեղիակի հետևի Ի դեմքի՝ աղայ, որ հնո. alati ձևից տատջացած լինելով, l է ձայնահեռացմամբ դարձել էր նաև alay, որ հետո y-ի անհետանալ դարձավ ala, հետո էլ aγa։ Այս բոլորն տատչենք ցույց տալու համար, թե լեզուները բառափոխում ամենքդ տատ չեն ունենալ նախատիպեր։

ԳԼՈՒԽ Դ

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գիտական այբուբենը հորինելուց հետո, հարց է առաջանում նույնը նաև կյանքում կիրառելու մասին։

Սրա վրա խոսելուց առաջ, տեսնենք նախ, թե ի՛նչ է ուղղագրությունը և թե ի՛նչ հարցեր կան նրա շուրջը։

Ուղղագրությունը լեզվի հնչական վիճակը որոշ կանոններով թղթի վրա ներկայացնելու արվեստն է։ Ըստ որում լեզուն ավելի հին է, քան գրությունը։ Հետևաբար ուղղագրությունը լեզվի մի որևէ շրջանի պատկերը միայն կարող է լինել, այսինքն՝ այն շրջանի, երբ գրի է առնված։ Ամեն լեզվի մեջ էլ, երբ առաջին անգամ է մտնում գիրը, անշուշտ գրվում է բացարձակապես այնպես, ինչպես հնչվում է։ Երբ քրդերը հնարեցին իրենց լեզվի համար նոր տառեր և ստեղծեցին գրականություն, բնականաբար չգործածեցին այնպիսի տառեր, որոնք մի տեղ այս, մի տեղ այն հնչյունն ունենային և մի ուրիշ տեղ էլ անձայն մնային, ղուր տեղը գրվեին։ Ուրեմն առաջին գրվածքները լինում են հնչական ուղղագրությամբ, այսինքն՝ համաձայն այն սկզբունքների, որոնց վրա հիմնված է գիտական այբուբենը։

Ժամանակի ընթացքում լեզուն բարեշրջության օրենքի համաձայն կրում է զանազան փոփոխություններ. ձայները կամաց-կամաց փոխվում են. բայց որովհետև գիրքը նյութական անշունչ մարմին է, մնում է այնպես, ինչպես կա, և ընթերցողները նույն հին գրվածքին դարձյալ տալիս են այն արժեքը, որ ունի նոր լեզուն։ Այստեղ սկսում է տարբերությունը հնչվածի և գրվածի միջև.

մարդիկ հնչում են իրենց ժամանակակից արտասանությամբ, բայց գրում հին հնչման համաձայն։ Ուղղագրություններ պատրաստել է հրնչական լիննկուց և գտնում է պատմական։

Ամեն լեզվի մեջ էլ կարելի է գտնել օրինակներ, որ հնչական ուղղագրություններ անհրաժեշտ է պատմականից. բայց կան լեզուներ, որոնց մեջ այս անհրաժեշտությունը մեծ չափերի չի հասած, ուրիշների մեջ անհրաժեշտությունը շատ ավելի մեծ է։ Առաջիններից իբրև օրինակ կարելի է հիշել վրացերենը և ազրբեջաներենը, որոնց մեջ գրվածքի և հնչվածի միջև անհրաժեշտությունը շատ աննշան է, գիրը ձայնի պատկերն է։ Քիչ ջանքով կարելի է նաև սովորել ռուսերենի ուղղագրությունը։ Երկրորդների համար իբրև օրինակ կարելի է հիշել անգլերենն ու ֆրանսերենը, որոնց մեջ այդ դժվարությունը շատ ավելի մեծ չափերի է հասնում։ Սովորական ընթերցողը, մանավանդ սահարապին, հաճախ ուշադրություն չի անում այս հանգամանքը, բայց լեզվաբանը պարտավոր է գրված լեզվի և խոսված լեզվի տարբերություններ նկատողության առնել։ Օրինակ, սովորական կերպով ասում ենք, թե անգլերենի մեջ բայի սահմանական ներկայի եզակի 3 դեմքը կազմվում է s ձայնով, ինչպես ends, looks, rises (վերջանում է, նայում է, վեր է կենում, բարձրանում կամ ծագում). բայց լեզվաբանը նկատի պիտի առնի, որ հնչական լեզվի մեջ այսպես ասված երեք տարբեր վերջավորություն, ըստ որում այդ երեք բառերը հնչվում են էնդզ, լուքս, բայզիզ (Jespen, The philosophy of grammer, 18)։

Պարսկերենը, արաբական այբուբենի պատճառով, շատ վատ է։

Հայերենը պահում է միջին դիրքի վրա և հնչման տարբերություններ գրությունից ո՛չ այնքան աննշան է, որքան վրացերենում և ո՛չ այնքան խոշոր, ինչքան անգլերենում կամ ֆրանսերենում։ Հայերենը V դարում շատ լավ հնչական ուղղագրություն է ունեցել, բայց այժմ, բարբառների և դրական լեզվի (արևմտահայերենի և արևելահայերենի) տարբերության պատճառով, ուղղագրությունը շատ է դժվարացել[1]։

Ուղղագրության ամենադժվար կողմն այն է, որ բառի վերջում գրվում են ավելորդ տառեր և չեն կարդացվում։ Այս կող-

---

[1] 1890-ական թվականներին մի բննիչ է գալիս Ղարաբաղի հայոց քեմական պորոցը և աշակերտներից մեկին գրել է տալիս ձեռք բառը, աշակերտը գրում է ձէրկ. չորս տառով մի բառում չորս ուղղագրական սխալ։

միայն նշանավորը ֆրանսերենն է, որի ուղղագրությամբ բառավերջում ձայնավորներից e, իսկ բաղաձայններից s, x, z, t, p միշտ էլ անձայն են։ Բառավերջի e ձայնավորը գործ է ածվում նախորդ բաղաձայնը ընթեռնելի դարձնելու համար, առանց որի նա պիտի անձայն մնար. օրինակ՝ haut (o), haute (ot)։ Բառավերջում գրված անձայն s գոյականների ծայրին հոգնակիի նշան է, բայերի ծայրին եղակի երկրորդ դեմքի կամ հոգնակի առաջին դեմքի նշան է. t (անձայն) եղակի երրորդ դեմքի նշան է. անձայն z հոգնակի երկրորդ դեմքի նշան է, իսկ ամբողջ ent անձայն խումբը լայն հոգնակի երրորդ դեմքի նշան է, ils haussaient (il-ose) բառի մեջ, ուր 13 տառ կա, միայն հինգն են կարդացվում։ Բայց եթե ֆրանսերենը մի օր հաներ այս բոլոր ավելորդ տառերը, ընթերցողի համար անհասկանալի կդառնար։ Ուրիշ խոսքով՝ քերականությունն կարդերը այս ավելորդ տառերի մեջ են ամփոփված։

Բացի սրանից, ֆրանսերենն ունի շատ համանուն բառեր, որոնք միայն գրությամբ են զանազանվում և եթե նրանք ուղղագրական բարեկարգության ղոհ գնային, ֆրանսերեն լեզուն անհասկանալի պիտի դառնար։ Օրինակ՝ ver „որդ“, verre „բաժակ“, vert “կանաչ“, vers “դեպի“, vers “ոտանավոր“ բառերը, եթե գրվեին միայն ըստ հնչման ver, անհասկանալի քաոս պիտի առաջացնեին։

Բացի ավելորդ բաղաձայններից, կան նաև զանազան լեզուներում զանազան նշաններ, որոնք դրվում են ձայնավորների վրա, հաճախ բոլորովին ավելորդ տեղը։ Այս կողմից նշանավոր է դարձյալ ֆրանսերենը, որ բացի é, è e ձևերից, ունի նաև ^ նշանը, որ դրվելով այս կամ այն ձայնավորի վրա, ոչ մի հնչական տարբերություն չի ստեղծում, այլ ուղղագրական մի ձև է եթե ալդտեղ կորած մի ուրիշ ձայն կա համապատասխան լատիներեն ձևի մեջ։ Օրինակ՝ août կարդացվում է պարզապես ու, իսկ նրա մեջ u տառի վրա գրված նշանը՝ ^ ցույց է տալիս, թե նրան հետևած s կա (լատիներեն augustus)։ Հունարենի մեջ կա ι, որ կոչվում է լատիներեն iota subscripta (տակը գրված i), որ ցույց է տալիս, թե հնադարյան հունարենում այդ բառի ծայրին կար մի ι, որ հետո ընկավ։

Հայերենի, ինչպես և ռուսերենի մեջ, այդպիսի ավելորդ նշաններ չկան։

Հայերենում բառամիջում ը չի գրվում, բայց երբ ը-ով սկսվող մի բառ բարդվում է, ը գրվում է. ինչպես դասընկեր, նախընթերլ և այլն։ Միևնույնը երբեմն այսպիսի բառերն էլ ստանց ը-ի են գրվում, իսկ ըստ նախդիրով կազմված բառերի համար ը չգրելը լավագույն է համարվում, ինչպես՝

անատեւիւր — անբատեւիւր.

անատպիտա — անբատպիտա.

անատզատանելի — անբատզատանելի։

Երբ գրվածքի և հնչման մեջ եղած տարբերությունը շատ խոշոր չէ, տանելի է. իսկ երբ նրանք շատ մեծ չափերի են հասնում, պատճառ են դառնում մեծամեծ դժվարությունների. մարդիկ պարտավոր են իրենց լեզվի հետ սովորել նաև հին գրություն, հակառակ պարագային հնթակա են բազմաթիվ ուղղագրական սխալների, իմաստի քայքայմայության և այլն։ Պահպանողական ժողովուրդները ստանում են այս բոլոր դժվարությունները, ճիշտ այնպես, ինչպես ֆեոդալական երկրներում հորար ստանում է ազնվականների բռնակալությունը։ Բայց երբ մարդիկ դառնում են ավելի աղատախոհ, սկսում են մտածել, թե հանուն ինչի՞ է այդ դժվարությունը, պահանջում են դրել այնպես, ինչպես հնչում են. ուղղագրական բարեփոխությունը սրվա հարց է դառնում։

Ինչպես որ ամեն մի հասարակական հեղափոխություն բաջալերություն է գտնում ազատականների կողմից և պիմագրություն՝ պահպանողականների կողմից, այսպես է լինում նաև ուղղագրական բարեփոխության հարցը։ Հները դեմ են կանգնում նրան։ Նրանք ունեն իրենց պատճառաբանությունները։

Առաջին՝ աշքի վարժություն.— գրություն վերջ ի վերջո դառնում է պատկեր և մարդ երբ կարդում է, ո՛չ թե տառերը մի առ մի, այլ ամբողջությունը միասին է տեսնում. տառերի փոփոխությամբ փոխվում է նաև բառը, հետևաբար նաև նրա հարուցած մտապատկերը։ Այսպիսով նոր ուղղագրությունը թեև ինքնին ավելի բնական և ավելի հեշտ, բայց մտապատկերի տեսակետից դժվարություններ է հարուցում բոլոր դրագետների համար։

Երկրորդ՝ հին գրականության ջնջումը.— յուրաքանչյուր գրականություն, ինչքան էլ փոքր լինի այն, մի բանի տարիների գործունեության արդյունը չէ, այլ ժողովրդի երկար ջանքերի, նյութական և բարոյական աշխատանքի արդյունքը։ Ուղղագրության փոփոխությամբ ի չիք է դառնում այդ բոլոր աշխատանքը և հարկավոր է լինում նորից սկսել վերարտադրել և վերահրատարակել նոր

ուղղագրությամբ այն բոլորը, ինչ որ դարերի աշխատանքով ձեռք է բերված ու մխերված։ Մարդ էակը չի սիրում խնայված հարստությունը այնպես հնշտությամբ վատնել, ոչնչացնել։

Երրորդ՝ բարբառների հարցը.— յուրաքանչյուր լեզու ունենում է զանազան բարբառներ և արտասանության տանուտեր. ուղղագրության որոշ ձևը, որ ժամանակի ընթացքում կաղմակերպված, հաստատված և սովորության միջոցով նվիրագործված է, դառնում է բոլորի համար մի ընդհանուր կաղապար, որի մեջ այդ այլազան արտասանությունները հալվում ու միանում են։ Զինացիք չեն հրաժարվում իրենց անճոռնի պատկերագրից[1], որովհետև այնքան բարբառներ ունեն և այդ բարբառները այնքան տարբեր են իրարից, որ եթե յուրաքանչյուրը հնչական մեթոդով գրի առնվեր, ոչ ոք ոչ ոքի չէր հասկանալու։ Պատկերագիրն է, որ ծառայում է իբրև միության կապ բոլորի համար և խոսակցության մեջ իրար անհասկանալի բարբառները գոնե գրության մեջ դառնում են հավասարապես հասկանալի։

Չորրորդ՝ հին ուղղագրությունը համարվում է մի սրբազան ավանդ, նվիրագործված մի կտակ, որ անաղարտ պետք է պահվի և հանձնվի հաջորդ սերունդներին։

Այս պատճառաբանություններից վերջինը շատ անարժեք, երկրորդը մեծ գրականության համար անշուշտ բավական ընդունելի, իսկ առաջինը և երկրորդը ամենից ավելի բանավոր կետերն են։ Այս պատճառով ահա ուղղագրության բարեփոխությունը աշխարհիս բոլոր լեզուների մեջ էլ չի ստացել իր վերջնական լուծումը։ Գերմանացիք 80-ական թվականներից սկսած ընդունեցին որոշ բարեփոխություններ իրենց ուղղագրության մեջ, ավելի հետո նորվեգիացիք և բրազիլիացիք։ Հարց բարձրացավ նաև Հոլանդիայում, Անգլիայում, մանավանդ Ամերիկայում. նախագահ Ռուզվելտն առաջարկեց մի քանի հարյուր բառերի գրության ձևը փոխել, բայց արմատական փոփոխություն ո՛չ մի տեղ չեն մտցրել։ Ֆրանսերենի համար էլ եղան փորձեր, բայց ապարդյուն, և ակադեմիան զիջեց միայն մի քանի աննշան փոփոխությունների, որոնք ծովի մեջ մի կաթիլ էլ չեն։

Նույնիսկ այնպիսի մի անձ, ինչպիսին է Սոսյուրը, որ ֆրանսերենի ուղղագրական բարեփոխության կողմնակից էր, ու-

---

[1] Վերջին տարիների ընթացքում որոշ բարեփոխություն մտցվել է չինական գաղափարագրերի մեջ, և չինական կառավարության կողմից կազմված հանձնաժողովը դեռ շարունակում է իր աշխատանքները։ Ծաւոր. խմբ.։

դում էր, որ մեռ tant և temps-et, est, als,-du, dû, -il, devait, ils devalent և այլն բառերի տարբերությունը, այնինչ՝ նրանց դարձերատրային արժեքը (F. de Saussure, Cours de linguistique générale, 57)։ Նույն կարծիքը շարունակում էր իր աշակերտ՝ Մեյեն, որ գտնում էր, թե ֆրանսերենի մեջ համանուններին տառադարձման պատճառով հնչական ուղղագրությունը պիտի դժվարացներ ընթերցումը և շատ լավ էր գտնում poids, pois, poix, ces, ses դրչագիրները (BSL. № 103, 91)։

Բավական մեծ փոփոխություն մտցրին առանձին տիպի մեջ հեղափոխությունից հետո, բայց այսուհետ էլ բարեփոխություններ չեղավ կատարելու, քանի որ շարունակում է գրել самовар և հնչել самавар, գրել легкий և հնչել лехкий "թեթև"։

Ուղղագրական բարեփոխության առաջարկություններ եղել են նաև մեր մեջ. պետևը, որ և գործում գրում էին թեյ, եթե, սիրեամ և այլն, որոնք հետո գարձան թէ, եթէ, սիրեամ և այլն։ Մի գարում հնարվեց ե գիրը, որ ասաջ համապատասխանում էր աև ձայնին։ Նույնիսկ վերջին ժամանակներում սկսեցին փոխել գանազան բառերի դրչագիրները, ինչպես երէկ—երեկ, եկեղեցի—եկեղեցի, կէտ—կետ, հրեայ—հրեյ և այլն։

Այս բոլորը մասնակի երևույթներ էին։

Ուղղագրական հիմնական բարեփոխության առաջարկեց նախ Սահակյանն և Հննց իսկ գործադրության դրեց իր «Հայկական աշխարհ» քերթում, բայց դա որևէ հաջողություն չունեցավ և նույնիսկ իսկ հեղինակը ստիպվեցավ շուտով հրաժարվել իր առաջարկից։

Ավելի մեծ հաջողության ունեցավ այն բարեփոխությունը, որ առաջարկեց Ղազարոս Աղայանը, 1888 թվականից սկսած, վերացնելու համար վ, ւ, ու ձևերի շփոթությունը։ Աղայանը առաջարկեց ջնջել ու գրությունը և պահել բառերի մեջ ւ, բառասկզբին և ո-ից հետո վ։ Թեև այս առաջարկությունը հիմնված էր շատ սխալ գիտական հիմքերի վրա[1] և հիմնապես չէր զարմանում գրության ձևը, այն պատճառով, որ չնչում էր երեք ձևերից միայն մեկը, այնուամենայնիվ Աղայանը մեծ հաջողություն ունեցավ Կովկասում։ Դրա դլխավոր պատճառն այն էր, որ ինքը լինելով սիրված ուսուցիչ, ունենալով շատ աշակերտներ, կազմած լինելով բաղմաթիվ

[1] Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Աճառյան, Հայոց գրերը, Վիեննա, 1928, 137—145։

դասագրքեր մանուկ սերնդի համար, առաջարկն ուրախ ծավալ և գործադրություն ստացավ։

Աղայանի դեմ դուրս եկան հակառակ առաջարկիներ էլ, որոնք պաշտպանում էին վ գրությունը, հատկապես մշակ ինտելիգենտները, և որի մեծագույն պաշտպանը եղավ վերջին անդամ Ստեփան Մալխասյանը և իր ուղղագրական սիստեմը (ւ, ու ձևերի դեմ միշտ և միայն վ) գործադրել սկսեց «Արօր» ամսագրում։

Վերջին անդամ Մանուկ Աբեղյանը, հայոց գրերի 1500-ամյակի առթիվ, առաջարկեց ավելի մեծ բարեփոխություն հայ ուղղագրության մեջ, որի գործադրության համար էլ կազմվելու էր առանձին գիտական հանձնաժողով էջմիածնում։ Սակայն առաջարկը բարձրաթողի արվեց և ո՛չ մի ձեռնարկ էլ չեղավ։

Սովետական կարգերի հաստատումից հետո Մ. Աբեղյանի ուղղագրական բարեփոխությունն ընդունվեց կառավարության կողմից (1922 թվականի մարտի 4) և ընդհանուր գործադրություն ստացավ Սովետական Միության սահմաններում։

Նոր ուղղագրությունը հիմնվում է հնչական դրության վրա[1]։ Ավանդական ուղղագրությունից տարբերվող կետերը հետևյալներն են.

1. Բառասկզբում գրել յե փոխանակ ե-ի։

2. է դիրը ամեն տեղ գարձնել ե։

3. յ տառը բառասկզբում գրել հ, բառավերջից անձայն յ հանել, ձայնավորների հանդիպման դեպքում շարունակ ավելացնել յ։

4. ո բառասկզբում դրել վո։

5. ոյ երկբարբառը գրել ույ, եթե այդպես է հնչվում։

6. ւ (նաև բաղաձայն ու) տառը դարձնել վ. նույնիսկ և գրել յեվ։

7. օ տառը խոպան ջնջել և դնել ո։

8. եա գրել յա։

9. իւ երկբարբառը գրել յու։

Մի անգամից եղած հանկարծական փոփոխությունները խրտնեցնում են շատերին. այսպես էլ եղավ Աբեղյանի ուղղագրությունը, որ բացի նորամուծությունից լինելուց, շատ անհարիր կողմեր էլ ուներ։ Ուստի արտասահմանի հայությունը շարունակ քննադատեց, բողոքեց և ուր որ կարող էր, կուսակցական կազմակերպու-

[1] Տե՛ս հատկապես իր «Ձեկուցում հայոց լեզվի ուղղագրության սեֆորմի մասին», Էջմիածին, 1921, և «Առաջնորդ հայոց լեզվի նոր ուղղագրության», Երևան, 1922։

Քյոնների միջոցով դիմումներ արամ վերաբերելու խնդիրը և դրան բարեհաճելու Արեղյանի ուղղագրության Կոմիտասում պլսական քննության առաջ Մալխասյանը, որ իր հուշերում դեմ կանգնեց Արեղյանի ուղղագրության վերջնական կատարելագործելու որոշմանը վերաբերել Հարցը նշանակելով մի հանձնաժողովի, որ մանրամասն քննության ենթա, հրատարակեց իր «Տեղեկագիրը Հ. Ս. Ա. Հ. դիտության յեվ արվեստի ինստիտուտի ուղղագրության յեվ ատանքի մեվի բարեփոխության հանձնաժողովի» (Երևան, 1927)։

«Տեղեկագիրը»-ը իր վերջին և վճռական կարծիքը չի տալիս, այլ հավաքում է իր յուրաքանչյուր անդամի կարծիքը առանձին-առանձին։ Ընդհանուր նպատակադրությունը և վերջին վճիռը վերապահված էր կառավարության, որ արդեն համաձայնության էր եկել[1]։

---

[1] *Արեղյանի ուղղագրության մասնակի բարեփոխություններ իրականացվեց 1940 թ. սկսած։ Հովհաննես Հովհաննիսյան իր աշխատության մեջ ոչինչ չի գրել այդ մասին, բայց դրա փոխարեն շարադրել է իր դատողություններ, որ բերում ենք այստեղ, քան որ այդ դատողություններ հիմնականում համընկնում են կատարվածին։ Խմբ.։*

Թվում է, թե յոթսդարյան կյանք միջին հանապարհն է։ Արեղյան ուղղագրությամբ վարժված մեկը անընդունակ է կարդալ հայ դրականությունը՝ սկսած և դարից մինչև Արեղյան ուղղագրության սկիզբը հրատարակված գրքերը, ինչպես որ դրաբար ուղղագրությամբ վարժված մեկը մեծ դժվարությամբ է կարդում Արեղյանի ուղղագրությամբ հրատարակությունները։ Պետք է բարեփոխել ուղղագրությունը այն ձևով, որ ընթերցողը կարողանա տեսողական մատպատկերների կապակցության կորուստը դեռևս փոխանակել լսողական մատպատկերների կապակցությամբ։ Ուրիշ խոսքով, բարեփոխյալ ուղղագրության մեջ պետք է ընդունել մի այնպիսի ձև, որ նրա մարդ կարող, լսի հիշած այն, ինչ որ հին ուղղագրությամբ էլ պիտի լսեր, որով այդը նրա դժվարանա հասկանալ, ականջը իսկույն ոգնության կհասնի։ Եթե կոչիկ բառը գրենք կոշիկ, թե՛ հին և թե՛ նոր ձևով ընթերցանությունը նույն կմնա. այսպես նաև ավազակ, պստենել և այլն։ Բայց բոլորովին անտեղի է, օրինակ, իր երկրաբրառի տեղ յոր գրչություն, որ հնարը պիտի կարդան եռ։ Անտեղություններ նրանից է հատկապես, որ բաղաձայնավոր իր արդեն փոխված լինելով իվ. այլևս ո՛չ մի կերպ երկյուղ չկա իր երկրաբրառի հնչման մեջ սխալվելու. մանավանդ որ յոր գրչություններ ի նկատ ունի միայն Երևանի գրագետների արտասանությունը, մինչդեռ մնացյալ հայության մեծամասնություններ նույն իր երկրաբրառը ե է հնչում։

Այս սկզբունքով գրաբար ուղղագրության բարեփոխի կետերը հետևյալներն են.

1. Բառամիջի ն՝ բաղաձայնից առաջ գրել ն։

2. Բառամիջի ո գրել ռ։

3. ւ և բաղաձայն ու գարձնել վ։

4. Բառավերջի անձայն յ չգրել։

5. Բառասկզբի յ գրել հ։

6. ոյ գրել ույ՝ նրա հնչվում է այսպես։

Արեղյանի մյուս բարեփոխություններն ավելորդ եմ կարծում. հատկապես

Հնդիրը այսպես վճռելուց հետո, այլևս հարց չի մնում այն մասին, թե դիտական սլբուրենը կարելի՞ է կիրառել կյանքի մեջ։ Դա մի իդեալ է, որին կարելի է ձգտել, բայց հասնել անհնարին է։ Խոսքս ո՛չ միայն հայերենի, այլև, մանավանդ, բոլոր ևվրոպական լեզուների մասին է։

բառասկզբի և տառի տակ չի գրվում, ինչպես և բառասկզբում ու բառավերջում և գրվում տեղ անպատճառ և գրվում։ Այսպես նաև բառասկզբի ո տառը վո դարձնելը և բառասկզբի օ տառը ո դարձնելը։ Դրանք չափազանց հեշտ սովորելու կանոններ են, այն կանոնները, որոնք միօրինակ և ընդհանուր լինելով, բացառություններից զուրկ են, սովորում են հեշտությամբ։

Այ երկբարբառն էլ հեշտ սովորելու կանոններից է. բայց մենք կարող ենք ընդունել ոչ բարեփոխությունը. որովհետև նրե գրելը հեշտ է, ընդհակառակը կարդալն է երկդիմի. և երբեմն մարդ մնում է շվար, թե ի՛նչպես կարդա։ Ոչ ոք չի կարող դուշակել, թե, օրինակ, ի՞նչպես պետք է կարդալ գոյն, նոյն ձևերը, մինչև որ ամբողջ նախադասությունը չտեսնե. ինչպես՝ «Գոյնք երեսաց, քայլք ոտից յայտ առնեն զմարդ. հոյն է պտուղ տտիպ. բայց գոյն և անգոյն մի են. սակաւ ահն և հոյն երթալ առաջի Յուդայա։

Ուղղագրական այս բարեփոխությունների վրա պետք է ավելացնել նաև բ[illegible] ղաձայնների մասին մի քանի փոփոխություններ, մի բան, որին երբիք ձեռք չէ տված Աբեղյանը։ Օրինակ, կարելի է ընդունել, որ խարել գրվի ըստ հնչման խա[illegible] փել, հաջել (շան) գրվի հաչել և այլն։ Ավելի ընդարձակ տե՛ս մեր հոդվածը նույն Տեղեկագրում, էջ 28—34։ Ճիշտ մեր մտածելակերպն ունի նաև Մ[illegible]ենն, որի նամակը տե՛ս անդ, էջ 163)։

ԳԼՈՒԽ Ե

ՁԱՅՆԱԲԱՆԱԿԱՆ ԴՈՒԾԻՔՆԵՐ

Ձայնական գործարանների մասին խոսելու ժամանակ մենք ուսանք, թե ինչ ու ինչ գործարաններ մասնակցում են ձայնի արտաբերության մեջ։ Ձայնաբանությունը, իբրև ճշմարիտ փորձառական գիտություն, պետք ունի մանրամասն քննելու և իմանալու, թե այս կամ այն ձայնի արտաբերության ժամանակ հատկապես ո՛ր գործարանները դեռ ունեն, ի՛նչ չափով մասնակցում են նրանք և ի՛նչ ուժով ու ի՛նչ տևողությամբ։

Կար ժամանակ, երբ գիտնականները բավականանում էին միայն ականջով. բայց լսողությունը շատ տկար գործիք է և շատ հաճախ կապված է վարժության հետ. իրոք, վարժ ականջը զանազանում է շատ նուրբ տարբերություններ. օրինակ, ֆրանսիացին լսում է իր 7 տեսակ o ձայնը, և սակայն անսովոր ականջը չի կարող զանազանել չիմացած ձայները, և մի օտար լեզվի մեջ մի նոր ձայն լսելիս, կարծում է լսել իր մայրենի լեզվի ծանոթ մեկ ձայնը. նույն ֆրանսիացին, որ 7 տեսակ o զանազանել գիտի, չի կարող զանազանել ʃ և խ ձայների տարբերությունը, որովհետև չկա նրա լեզվի մեջ։ Փորձեցեք մի թուրքի զգալ տալ ղ ն ս կամ ձ և գ ձայնների տարբերությունը և պիտի տեսնեք, որ չպիտի հաջողիք։ Հայի մոտ թող անգլիացին արտասանի իր dh, th թվատ ձայները, և նա պիտի լսե դ, բ, գ, լ, ֆ, ր, և երբեք չպիտի կարողանա իսկական հնչումը որոշել։ Նույնիսկ արևմտյան հայը անընդունակ է լսել և զանազանել կովկասյան բ, պ—գ, կ—դ, տ—ձ, ծ—ջ, ճ ձայների

տարբերությունը։ Վերջապես նկատենք, որ ամենօրյա գործածության պատճառով մարգու ուշադրությունը բթացած է լինում և չի կարողանում նույնիսկ իր լեզվի սովորական հնչյունների տարբերությունը զանազանել։ Արդ, եթե այսքան խոշոր տարբերություններ անկարող է ականջը զանազանել, ի՞նչ պետք է լինեն ձայների ավելի նուրբ տարբերությունները, մանավանդ արտասանության կազմության մանրամասնություններն ու ձայների վերլուծումը։

Ականջից ավելի լավ է երբեմն աչքը, որ կարողանում է զանազանել և որոշել այնպիսի ձայնական նրբություններ, որ ականջը չի կարող։ Այսպես, ամեն մի մարդ կարող է հայելու մեջ նայելով տեսնել ծնոտի և շրթունքների շարժումը բաց և փակ ձայնավորների և շրթնային ու ոչ շրթնային բաղաձայնների արտասանության ժամանակ։ Կարելի է նույնպես տեսնել լեզվի զանազան կետերի հպումը քիմքին և կատիկի շարժումները a, e, i, ə ձայնավորների արտաբերության միջոցին։ Նույնպես՝ տեսնել շունչի չափը պ, փ—կ, ֆ—տ, բ—ծ, ց—ճ, չ բաղաձայնների արտաբերության մեջ՝ ուղղելով շունչը դեպի աշտանակի բոցը, որ պիտի անշուշտ ճոճի և նույնիսկ հանգի փ, ֆ, բ, ց, չ բաղաձայնների արտաբերության միջոցին և սակայն անշարժ պիտի մնա մյուսների ժամանակ։

Վերջապես կարելի է շոշափմամբ իմանալ որոշ ձայների կազմության եղանակը. այսպես մատը դնելով քիմքին, մենք կարող չենք զգալ լեզվի բարձրացման չափը. ա, բ ձայների արտաբերության ժամանակ նա բավական ցածր է. ճնշումը բարձրանում է է ձայնի արտասանության ժամանակ. բայց հենց որ հնչում ենք ի, իւ՝ մատը մնում է կատարելապես սեղմված վիճակի մեջ՝ քիմքի ու լեզվի միջև։ Նույն փորձերը կարելի է կատարել մատը դնելով ատամների վերին և ստորին շարքի միջև, և այն ժամանակ պիտի տեսնենք, որ մատը մինչև իսկ ցավում է ի, իւ ձայների արտասանության ժամանակ։

Բայց այս բոլորը իրողության մասին մի ընդհանուր գաղափար միայն տալիս է մեզ և չի լրացնում գիտության խստագույն պահանջները։

Ինչպես ուրիշ փորձառական գիտություններին, նույնպես և ձայնաբանության համար նոր և նորագույն գիտնականները հնարել են զանազան գործիքներ, որոնք աչքի և ականջի դերը տալով մեքենաներին, պատկերացնում են մեզ խոսողության ժամանակ ձայնի վերաբերյալ եղած բոլոր գործողությունները՝ պահանջված գիտական ճշտությամբ։

Լեզվաբանության այն ճյուղը, որ մանրամասն ուսումնասիրում է ձայնաբանական դործիքների նկարագրությունը, ասխարկնում է նրանց դործածության եղանակը և ստացված արդյունքը, կոչվում է փորձառական ձայնաբանություն (phonétique expérimentale) կամ դործիական ձայնաբանություն (phonétique instrumentale)։ Առանց մանրամասն այդ դիտության մանրամասնությանց մեջ, մենք ուզում ենք բերել միայն դիտելիքները ձայնաբանական դործիքների և փորձառական ձայնաբանության մասին։

Փորձնական ընթերցանության ամենապարզ դիակի վրա կատարված ընթերցանն է՝ խոչակը դնելով փարթի հետ հպարդակցության մեջ, իսկ խոչակի վրա անց կացնելով տարբեր մեծությամբ հնչարաններ, մենք կարող ենք ստանալ զանազան ձայնավորներ։ Վրա Համհամատ Կեմպելենը և Մյուլլերը կազմել են արհեստական խոչակներ, որոնց մեջ կաուչուկե երկու թաղանթ դրված են իրար մոտ ձայնավարերի դիրքով և այնպես, որ կարելի է ըստ կամս ձգել կամ կծկել. այդ թաղանթները դրված են մի խողովակի ծայրը. խողովակի վրա անց են կացնում զանազան մեծությամբ հնչարաններ և փարթի միջոցով արտարերում են զանազան ձայնավորներ։ Այսպիսով արհեստական խոչակը դառնում է խոսող մեքենա և կարելի է նրա վրա ըստ կամս փորձեր անելով՝ ստուգել ձայների կազմության եղանակը։

Մյուս գործիքները զանազան են. նրանցից մի քանիսը մենք արդեն անանք Ա դլխում և պատկանում են ընդհանրապես բնագիտության։ Բուն լեզվաբանության համար հնարված գործիքներից լավագույնն է այն, որ հնարել է ֆրանսիացի արբա Ռուսլոն 1890 թվականին Փարիզում (ավելի ճիշտ կատարելագործել է իր նախորդների հնարած նախնական գործիքները)։ Սկզբում գիտնականները թերահավատությամբ էին վերաբերվում այս գործիքների հետ, պատճառաբանելով, թե օդի հոսանքը նրանց միջով անցնելու ժամանակ, կորցնում է իր ուժի մի մասը և հետևաբար չի տալիս այն, ինչ որ իրապես է։ Այս առարկությունը արդարացի էր։ Բայց ըստ որում գործիքները միշտ նույն են և առաջացած փոփոխությունները նմանօրինակ, ուստի տրված արդյունքներն էլ պիտի լինեին ճշտիվ համեմատական իրար հետ։ Նոր գիտնականները առհասարակ կողմնակից եղան այդ գործիքներին և նրանք ընդունված են հիմա բոլոր եվրոպական համալսարանների լեզվաբանական աշխատանոցներում (լաբորատորիաներում)։ Կա մինչև անգամ

Գուցմանի ձեռքով կատարելագործված ճամփորդական միևնույն գործիքը, որ ծանր չի կշռում և կարող է կատարել բոլոր կարևոր լեզվաբանական փորձերը։

Ռուսլոյի գործիքի հիմնական մասը կազմում է արձանագրիչ գլանը՝ իր ժամացուցային կազմուածքամբ, որի մասին արդեն խոսել ենք և գլխում։ Բացի դրանից, կան մի խումբ մանր գործիքներ, որոնք հաստատվելով խոսողական գործարանների վրա, հաղորդակցության մեջ են գրվում միևնույն ժամանակ մի բարակ և ճկուն խողովակով գլանի հետ և գործարանների կատարած ցնցումները մի նուրբ փետուրի միջոցով արձանագրում են պտտվող գլանի վրա, որը պատված է լինում մրով սևացրած թղթով։ Այդ գործիքներն են փողպատը, փամփուշտը, տանձիկը, ձագարը և գոտին։

Փողպատը բաղկացած է մի փոքրիկ ժամացույցի նման տուփից, որ շինված է մի կողմը նուրբ կաշվից, մյուս կողմը՝ մետաղից. մետաղյա մասերից մեկում կա մի բարակ խողովակ, որ հաղորդակցում է արձանագրող գլանի հետ։ Տուփիկից աջ ու ձախ մեկնում է մի կտոր ժապավեն, որ կապում են ենթակայի վզին, այն ձևով, որ տփիկի փափուկ կողմը հաստատվում է ճիշտ խռչակի վրա, իսկ ժապավենը հանգուցվում է ծոծրակի վրա։ Երբ ենթական արտասանում է պահանջված ձայնը, կոկորդի թրթռումները ցնցում են տփիկի փափուկ կաշին, որով տփիկի օդը ցնցվում է և ստացված թրթռումները անցնելով նեղ խողովակի միջով, շարժման մեջ են դնում փետուրը, որ և արձանագրում է գլանի վրա։ Այս գործիքով կարելի է քննել ուրեմն, թե յուրաքանչյուր ձայն թրթռո՞ւն է թե խուլ, ե՞րբ է սկսում թրթռումը և ինչքա՞ն է տևում, միևնույն ժամանակ ի՞նչ ձև ունեն այդ թրթռումները։

Փամփուշտը մի փոքրիկ արկղիկ է, պատրաստված նուրբ կաուչուկից, ծայրը՝ մի կարճ խողովակով ավելի ամուր նյութից, որի վրա հաստատում են կաուչուկի մի երկար խողովակ՝ հաղորդակցության մեջ դնելու համար արձանագրիչ գլանի հետ։ Այս գործիքով կարելի է քննել և չափել նախ, թե ի՛նչ ուժով լեզուն հպվում է քիմքին, երկրորդ, թե ի՛նչ ուժով շրթունքները սեղմվում են իրար։ Առաջին պարագային փամփուշտը դնում են լեզվի և քիմքի մեջտեղը, հատկապես այն մասի վրա, ուր կատարվում է լեզվի հպումը և որ կարելի է իմանալ արվեստական քիմքի միջոցով։ Երկրորդ պարագային փամփուշտը դնում են շրթունքների միջև։ Կատարված ճնշման համաձայն գրչի փետուրը գծում է մեծ ու փոքր կորություններ գլանի թերթի վրա։

Տաճիկը մի փոքրիկ տանձաձև ոսկոր է, մեջը ծակ, և որի ծայրին հատուածված է կաուչուկի մի խողովակ։ Այս գործիքը ծառայում է չափելու համար քիչ դուրս ևկող օդի հոսանքի տևողությունը, ուժը կամ քանակը և նրա թրթռումները, և անուղղակի կերպով կատվի իշնցման չափը բերանում, որի համար սրեվ ուղղակի միջոց չկա։ Որքան մեծ է քիչ դուրս ևկող օդի հոսանքը, ուրեմն և այնքան շատ է իջած կատիկը, հետևարար և այնքան շատ ռնգային է արտասանված ձայնը (լինի դա անզային ձայնավոր և կամ բազմաձայն ն, մ)։ Գործածության համար տանձիկը խրում են քիի մի ծակի մեջ և ևնթակայի արտասանությունը արձանագրում գլանի վրա։ Արձանագրությունը ապիս է մեզ թրթռուն մի պիծ, եթե ձայնը անզային է. ուժեղ անթրթիռ մի պիծ, եթե անզայնություն չկա։

Անզայնության ստուգիանը կարելի է ևևանել նույնիսկ պարզ աչքով. երբ խողովակը ուղղենը դեպի մոմի բոցը, եթե ձայնավորը անզային է, բոցը սկսում է ճոճվել, իսկ եթե ոչ՝ մնում է հանդարտ։

Ձայլարը չորս տանդիմանար բարձրությամբ և դրեթե նույնչափ տրամագծով մի փոքր բաժակ է, որի տակից մեկնում է գլանին հաղորդվող խողովակը։ ԵՒնթական բերանը դրեթե ամբողջապես կպցնում է բաժակին և բնական ձայնը արտասանում է նրա մեջ. բերանի շունչը, իր ամբողջ ուժգնությամբ և թրթռումներով, լցվում է բաժակի մեջ և ցնցման մեջ դնելով այնտեղի օդը, խողովակի միջոցով շարժում է վիևտուրը, որ և արձանագրում է իր ստացած թրթռումները։ Այսպիսով հնարավոր է լինում չափել բերանից դուրս ևկող օդի հոսանքի բոլոր հանգամանքները. ուժը, տևողությունը, բարձրությունը, շարժման սկիզբը և վախճանը, թրթռումներն ու նրանց ձևը և այլն։

Կոտին փողպատի մեծ տևսակն է, որ կապում են փորի վրա և նրա միջոցով չափում թոքերի ճնշման չափը՝ հատկապես ն ձայնի արտասանության համար, ևերշնչման և արտաշնչման քանակությունը։

ԵՒս հինգ գործիքները անուղղակի կերպով տալիս են մեզ գործարաննևրի գործունեության պատկերը։ Նրանք գլանի վրա նկարում են դանազան կոր գծեր, որոնք ևնթարկելով թվարանական և երկրաչափական պարզ հաշիվների, կարելի է ամենամեծ ճշտությամբ ուսումնասիրել ձայնի վերաբերյալ ամեն խնդիր։ Այդ ձայնական գծագրությանց մեջ թրթռումների թիվը մի վայրկյանում ցույց է տալիս ձայնի բարձրությունը, նրանց լիությունը ցույց է տալիս ուժգնությունը, երկարությունը ցույց է տալիս տևողությու-

նը, իսկ ձևը ցույց է տալիս երանգը։ Որովհետև հայտնի է, թե գլանը որոշ ժամանակում որքան պտույտ է գործում, ուստի կարելի է հաշվել, թե որքան է տևում ամեն մի ձայնի պատրաստությունը, փակումը, բացումը կամ պայթյունը, թրթռումների ընդհանուր տևողությունը, նույնիսկ յուրաքանչյուր թրթռումի տևողության չափը (մի վայրկյանի այսքան հարյուրերորդ մասը)։ Ձայնաբանության համար շատ կարևոր է իմանալ գործարանների գործունեության ժամանակակցության աստիճանը, և այս բանը կատարյալ ճշտությամբ ցույց են տալիս գծերը։ Վերցնելով միաժամանակ երկու կամ ավելի գործարանների գործունեության արդյունքը (օրինակ՝ բերան և կոկորդ, քիթ և կոկորդ և այլն) և քաշելով նրանց միջև ուղղահայաց գծեր, ճշտիվ կարելի է չափել, թե ո՛ր գործարանը կանխում կամ ուշանում է մյուսից և ո՛րքան ժամանակով։ Մանր թրթռումների քննությունը կատարվում, այսինքն՝ չափվում է մանրադետով, որով որակական երևույթները վերածվում են քանակականի, այսինքն մտնում են չափի և թվի տակ, որ է իրական գիտության։ Այնուհետև ավելորդ են դառնում, օրինակի համար, բաց, փակ, խուլ, թրթռուն, սուղ և այլն անորոշ բառերը և հարկավոր դեպքում կարելի է տալ թրթռումների թիվը, ալիքների բարձրությունը, լայնքը և այլն։

Բացի վերոհիշյալ հինգ գործիքներից, որոնք անուղղակի կերպով տալիս են արտասանության պատկերը, կա նաև արվեստական քիմքը, որ ուղղակի տալիս է արտասանության պատկերը, այնպես ինչպես կա։

Արվեստական քիմքը պատրաստում են հետևյալ ձևով.— նախ մեղրամոմի փափուկ մի մեծ գունդ գնում են բերանը և ճնշելով առնում բերանի ներքին կաղապարը. այդ կաղապարի վրայից կարծր կաուչուկի, նուրբ մետաղի կամ թիթեղի նուրբ շերտով և կամ նույնիսկ որոշ տեսակի թղթով ձևում են քիմքի մակարդակը։ Այս մակարդակը նախ ներկում են սև գույնով, իսկ քննության ժամանակ կավիճով կամ կաուչինի փոշով սպիտակացնելով, զգուշությամբ դնում են ենթակայի բերանը, կպցնում են քիմքին։ Այնուհետև ենթական արտասանում է քննելի տառը և իսկույն զգուշությամբ արվեստական քիմքը դուրս բերում։ Արտասանության ժամանակ բնականաբար լեզուն քսվելով քիմքին՝ հանում է սպիտակ փոշին. արվեստական քիմքի սև մնացած մասի սահմաններից իսկույն իմացվում է, ուրեմն, թե քիմքի ո՛ր մասերը կրում են լեզվի հպումը նույն ձայնի արտասանության ժամանակ, և ո՛ր մասերը մնում են ազատ։

Այսպիսով, ուրեմն, գործիքները ծառայում են մեզ առանալու նախ՝ արտասանության ժամանակ օդի վիճակառումները և երկրորդ՝ արտասանող գործարանների շարժումները։

Բայց վերջաձական ձայնարտասանության մեջ գործիքները կարևոր են ո՛չ միայն արձանագրելու հիշյա ձայնը, այլ մանավանդ վերլուծելու նրա կազմության քերականության բառերի և ձևերի ուսումնասիրության և, ձայնարանության բառերի և ձևերի ձայների ուսումնասիրության, իսկ վերջաձական ձայնարտասանության գնում է ավելի հետո. նա վերածելով յուրաքանչյուր հնչյուն իր կազմիչ մասերին, մանրազնիտական քննության ուսումնասիրում է նրա առանձնահատկան մասերը, հիշյա ինչպես կենսաբանը քննում և ուսումնասիրում է բջիջների կազմության բուսական և կենդանական քազմաձևության մեջ։

Եվրոպական մեծ լեզուները, հատկապես ֆրանսերենը, մանրամասնորեն ենթարկված են ալսպիսի ձայնարանական քննության։ Հայերեն ձայների ուսումնասիրության համար ես հրատարակած եմ մի աշխատություն («Les explosives de l'ancien armenien étudiées dans les dialectes modernes,» Paris)[1] աշխատակցությամբ նույն ձայնարանական գործիքների հեղինակ Ռուսլոլի և Մելե հայագետ։ Զորս տախտակի մեջ դրված են հայերեն լեզվի պայթուցիկ բազաձայնների բոլոր տատիճանները (բ, պ, փ, բ՛, պ՛, կ, ք, դ՛, դ, տ, թ, ձ, ձ՛, ծ, ց, ջ, ջ՛, ճ, չ) վեց անձի արտասանությամբ՝ տարբեր գավառներից (Պոլիս, Ալաշկերտ, Նուխի, Մուշ, Սեբաստիա)։ Փորձերը կատարված են Փարիզում, սրբա Ռուսլոլի ձայնարանական աշխատատեղում։ Պատկերները ներկայացնում են խոչակի և ընդհանուր շոշոչի դերը նույն ձայների արտասանության ժամանակ, այսինքն՝ այն ձայների, որոնք հատկապես անգիր են տալիս թքուրիմացության և տարաձայնության։ Ամբողջ հայերեն ձայների (ձայնավոր թե բազաձայն) արձանագրությունը կատարել եմ նույն աշխատատեղում, իմ կոկորդի վրա, բայց այս աշխատությունը անտիպ է։

Ռուսլոլի գործիքների մանրամասն նկարագրությունը, ինչպես և վերջաձական ձայնարանության ամբողջ գիտության բովանդակությունը տե՛ս իր «Principe de phonétique expérimentale», Paris, 1902, երկու հատոր։

---

[1] *Այս աշխատության վրա ընդարձակ մատենախոսական ուշի է. Հակոբոս Տաշյան, «Հանդէս ամսօրեայ»-ում, որի մեջ գրեթե ամբողջ գործը հայերենի է թարգմանված։*

Ռուսլոլի մեքենայից ավելի կատարյալ մի գործիք է էլեկտրալսողական (électro-acoustique) ապարատը, որ բոլորովին նոր գյուտ է։ Ապարատը կազմված է մի մանրաձայնից (microphone), մի էլեկտրական ամպլիֆիկատորից (amplificateur), և մի ճոճագրից (oscillographe)։ Փորձարկութ յան ենթարկվող անձը խոսում է միկրոֆոնի առաջ. միկրոֆոնը ընդունում է թրթռումները, ամպլիֆիկատորը՝ մեծացնելով այդ թրթռումները, փոխանցում է ճոճագրին։ Ճոճագիրը էլեկտրամագնիսական մի ապարատ է, որ չափազանց զգայուն է ամեն մի թրթռումի առաջ. նա ունի մի փոքր հայելի, որ հավաքում է լույսի ճառագայթները և գցում լուսանկարչական թղթի վրա. այսպիսով ստացվում է խոսքի գծագրութ յունը։ Այս մեքենայի առավելութ յունը մյուսի վրա այն է, որ ա) փորձարկվողը բոլորովին ազատ է, չունի ոչ մի կապ կոկորդին, բերնին կամ քթին և միկրոֆոնի առաջ նստած խոսում է բնական ձևով։ բ) Արձանագրութ յունները շատ ավելի մանրամասն և ընթեռնելի են, որովհետև մի վայրկյանում 1—10 մետր կարելի է ստանալ։ Միևնույն ժամանակ կարելի է ստանալ նույն ձայնից գրամաֆոնային մի պլաստինկա կամ հնչուն ֆիլմ, որով կարելի է ականջով էլ ստուգել աչքով կարդացված գծագրութ յունը։

Այս գործիքը սակայն պահանջում է մեծ ծախս, ժամանակ և աշխատանք։ Այս պատճառով ահա մինչև այժմ (1935) կատարված է մի քննութ յուն իտալերենի ձայների վրա, որ հինգ տարվա աշխատանքի արդյունք է (BSL, 36, № 108, p. 12)։

Այն բոլոր գործիքները, որ նկարագրեցինք վերևում, տալիս են այսպես ասած ձայնի երկրաչափական նկարը, որ ամենամեծ արժեքն ունի ուսումնասիրութ յան համար, բայց ոչինչ չի ասում լսողութ յան, ուրիշ խոսքով չի կարող հնչումը վերարտադրել։ Ձայնի, հատկապես մարդկային ձայնի և երգի վերարտադրութ յան, ինչպես նաև պահպանութ յան համար մարդիկ հնարել են ձայնագիր կամ ֆոնոգրաֆ կոչված գործիքը։

Առաջին ֆոնոգրաֆը հնարեց էդիսոն ամերիկացին (պատկեր 15)։ Սա կազմված էր մի արույրե գլանից (A), որ անցնում է մի պտուտակավոր առանցքի վրա (D). գլանի վրա կան խխունջաձև փորվածքներ (H), որոնք ճշտիվ համապատասխանում են պտուտակի պտույտներին, այնպես որ երբ շուռտվիկը (M) դարձնենք, գլանն ու պտուտակը կանոնավոր կերպով իրար կագուցվեն։ Գլանի փորվածքների վրա անցկացված է անագե կամ շատ բարակ պղնձե

մի քերիչ, որ պատում է նրան։ Գլանի ստջև կա մի բարակ թաղանթ (B), որը ձայնական ալիքները ընդունում է և կինեմատոգրաֆում մի քրքջացող քերիչի վրա (r). այս քերիչը հենված է ոսկրակի մի կուռչակի խողովակի վրա (c), իսկ այս խողովակն էլ առաձգական մի քերիչի վրա (i), որ վերջանում է պարզ մի սուր ծայրով։ Այնպես է հարմարեցված, որ պատկերի ժամանակ սուր ծայրը քերում է անպակ քերիչը՝ գլանի վերմակներին համապատասխան։ Որ-



Պատկեր 14



Պատկեր 15

ձիքի վրա վերծանելու համար պետք է բարձրաձայն խոսել կամ երգել բացվածքի մեջ, ըստ կարևորության մոտիկ r թևերին, միևնույն ժամանակ պատասխանելով շատուվիկը հետևից ստջև, որով սկսում է գլանը ստջև շարժվել։ Այն ժամանակ r թևերն ընկրկում է թրթռալ մեր ձայնի հետ նույնաձայն, իր թրթռտումները փոխանցվում են i թևերին, հետո էլ նրա սուր ծայրին, որ սկսում է մետաղե թևերի վրա գծեր քիչ կամ շատ ցայտուն փոսեր՝ ձայնի ուժգնության համեմատ։ Այսպես արձանագրվում է ձայնը։

Կարելի է այժմ կարդալ այս արձանագրությունը։ Դրա համար նախ շուռ-արվիկը դարձնելով՝ գլանը հետ են քերում և նորից նախկին ձևով շարժում. այն ժամանակ տակար ձայնով լսվում է գրված արձանագրությունը՝ երգ կամ խոսք։

Էդիսոնի այս գործիքից հետո հնարվել են շատ ուրիշ տեսակ ֆոնոգրաֆներ, որոնք բոլորն էլ հիմնված են միևնույն սկզբունքի վրա։ Ամենից լավն է նույնիսկ էդիսոնի կատարելագործած ձևը։ Սրա գլխավոր մասն է m կամ m՝ մոմե գլանը, 15 սմ. երկարությամբ և 5 սմ. տրամագծով։ Սա անցնում է մի ուրիշ մետաղյա

գլանի վրա (CC), որ թեթևակի կոնաձև է։ Այս գլանը կանոնավոր կերպով պտտվում է մի էլեկտրական շարժիչով, որ գտնվում է E արկղում և ունի նաև մի կանոնավորիչ ծ . մի րոպեում ստացվում է 80 պտույտ։ Գլանի վերջում կա մի պտուտակ (V), 1/4 միլիմետրանոց ատամներով, որ կարող է մտնել E էգ պտուտակի մեջ։ Պտտվելու ժամանակ այս էգ պտուտակը կանոնավոր շարժումով շարժվում է պտուտակի երկարությամբ և իր հետ տանում M խողովակը, որ սահում է պտուտակին ղուգահեռական մի հաստատուն կոթի վրա (B)։ Այս M խողովակը իր վրա կրում է մի ուրիշ կտոր, որի վրա շարված են արձանագրիչը (L) և արտագրիչը (K)։ Արձանագրիչն ունի քիչ խոր և շրջանակաձև մի փոս, որի խորքը ձևացած է թրթռուն մի սկավառակով (m)։ E ծակին հարմարացրած է P ձայնատարը կամ լայնաբերան մի խողովակ (առաջինը խոսակցության, իսկ երկրորդը երաժշտության համար)։ Սկավառակը կատարում է թմբկաթաղանթի պաշտոն. նա ստանում է ձայնական ալիքները և կաուչուկե մի խցանի միջոցով այս թրթռումները փոխանցում է մի փոքրիկ և շատ սուր սլաքի (c), որ նստած է մի թիթեղաձև զսպանակի վրա և որի ծայրը հենվում է մոմի գլանի վրա, և այդ գլանի վրա կազմում է փոսիկներ, խխունջաձև կերպով։

Արձանագրելու համար L մասը տարվում է գլանի ծայրը, և երբ շարժիչն սկսի շարժվել, ինքն էլ առաջանում է գլանի վրա։

Երբ ուզենանք արձանագրությունը կարդալ, արձանագրիչ L-ի տեղ դնում ենք K արտագրիչը, շուռ տալով A ծխնին, որ կրում է նրանք։ K և L գրեթե նույն կազմությունն ունեն, միայն K արտագրիչի ժամանակ, թրթռուն սկավառակն ստանում է իր շարժումները մի բութ ծայրով, որ անց են կացնում սլաքի գծած փոսիկների մեջ. և երբ գլանը պտտվում է, նա էլ հետևում է փոսիկներին։ Արտագրիչի բերանում դրված է մի երկճյուղ լսողական խողովակ, որ ականջներին անց կացնելով, ավելի լավ է լսվում։

Ֆոնոգրաֆի մի ուրիշ զարգացած ձևն է հեռագրագիրը, որ հնարեց Պուլզեն դանիացի բնագետը՝ 1900-ին։ Մի փոքրիկ էլեկտրոմագնիս միացած է մանրաձայնի (միկրոֆոնի) հետ և հորիզոնական ձևով շարժվում է պողպատյա թելի մի սպիրալի առջև, որը փաթաթված է իր առանցքի վրա պտտվող մի թմբուկի վրա։ Երբ խոսում ենք մանրաձայնի առջև, խոսքից առաջացած զանազան հոսանքները զանազան ձևերով մագնիսացնում են էլեկտրոմագնիսը, իսկ սրա բևեռներն (pôle) էլ ազդում են նույն ձևով պողպատյա թելի համապատասխան մասերին, որոնք րոպեապես դրր-

ված են իր գործունեության տակ։ Պողպատի գիմապրության կարգնելու համար՝ իր մագնիսականության պատճառ է դառնում, որ ինչի վրա մնում է մի սեռակ մագնիսական գրության, կատարելապես անհետանալիս։ Բայց նրա էլեկտրամագնիսի բևեռները միայնակ սովորական մի հետախոսի, այդ գրության գծերը էլեկտրամագնիսի մեջ տարջ են բերում խոսքի հոսանքներին համապատասխանող նոր հոսանքներ. քոռ սրում մագնիսականությունը երկար ժամանակ մնում է պողպատի վրա, նրա համեմատ էլ ձայնը մնում է շարաքներ և ամիսներ երկար խոսակցություններ գրելու համար ինչ անգ գնում են պողպատյա մի ժապավեն, որ երկու հախարակների արանքով անցնում է էլեկտրամագնիսի ոսջով, ճիշտ ինչպես թղթի ժապավենը հեռագրական մեքենայի մեջ։

Ասացինք, որ ձայնագիրը արժեք չունի ձայների ուսումնասիրության և վերլուծման համար, բայց մեծ է նրա արժեքը լեզվաբանության մեջ այն իմաստով, որ տալիս է մեր ականջին կենդանի պատկերը այնպիսի լեզուների և բարբառների, որոնք լսելու համար սահմանված ենք մեծախոտ ու հետաքրքրական համեմատություններ կատարել աշխարհի գանազան կողմերը։

Ամենամանրամասն նկարագրությունն անգամ որևէ լեզվի հնչման կամ արտասանության մասին, այն չէր երբեք, ինչ որ է ձայնագիրը։

Ձայնագիրը հրաշալի կերպով տալիս է մեզ լեզվի արտասանության իր ճիշտ ելևէջներով ու շեշտով, թեև որոշ ձայներ (ինչպես ա, ե, չ, ժ) շեղումներ են։ Եվրոպացիք արդեն սկսել են բարբառների և լեզուների ուսումնասիրության հետ կցել ձայնագրական թիթեղներ ու պլաններ՝ հատուկ այս նպատակով։ Այսպիսին է Դրիերսոնի 16 հատոր հրատարակությունը Հնդկաստանի լեզուների համար՝ բազմաթիվ ֆոնոգրամներով։

Վիեննայում 1899 թվականին հիմնվել է ֆոնոգրամների մի արխիվ, ակադեմիայի շնորհիվ, ուր հավաքված են աշխարհիս զանազան լեզուներով ու բարբառներով ֆոնոգրամներ։ Նման մի հաստատություն էլ հիմնվել է Փարիզում 1911 թվականին, որ, սակայն դեռ բավական տգքատ է։ Լոնդոնում էլ կա „Linguaphone institute“ նույն նպատակով։

Պետք է գանազանել սակայն սովորական ձայնապնակները լեզվաբանականներից. առաջինները ներկայացնում են մի երգ, մի բանաստեղծական արտասանություն կամ թատերական ներկայացում, որոնց մեջ ձայնը միշտ կեղծված է համաձայն արտիստի

քմահաճույքների։ Լեզվաբանական ձայնապնակները պատրաստված են հատկապես ուսուցման նպատակով, հայտնի արտասանողների կողմից, մաքուր և ճիշտ արտասանությամբ։ Ձայնապնակներին ընկերանում է նաև տպված բնագիրը, որով մեքենան կարելի է գործածել բոլորովին գործնական նպատակով։ Կարելի է շատ դանդաղեցնել ձայնապնակի ընթացքը, կրկնել ու կրկնել տալ միևնույն դարձվածը բազմիցս անգամ, կարելի է նույնիսկ մեքենայի թելադրությամբ գրել նույն հատվածը և հետո համեմատել տպագրվածի հետ՝ ուղղագրության վարժվելու համար (Bruneau, Manuel de phonétique, XVI)։

Փորձառական ձայնաբանության մեջ մտնում են նաև կինոն և X ճառագայթները (ռենտգենյան) կամ ռադիոն։ Ռադիոն նկարում է խոսողին ալսինչ կամ այնինչ ձայնի արտասանության ժամանակ, որ հետո ըստ կամս մեծացնելով ու դանդաղեցնելով, քննության է առնում մանրամասնությունները։ Ռենտգենյան ճառագայթներով քննում են ձայնի բարձրության կորագծերը և այլն։ Այսպիսի քննություններ ունեն Parmenter, Trevino, Bevans և Lenk՝ Zeitschrift fur Experimentalphonetik *թերթում (հատ. Ա) և այլն։*

Թե՛ ձայնագիրը և թե՛ բոլոր այն գործիքները, որ վերևում նկարագրեցինք, արժեք ունեն բնականաբար միմիայն արդի կենդանի լեզուների համար։ Ապագային, նույնիսկ եթե այդ կենդանի լեզուները մեռնեն, գիտնականները կկարողանան ձայնապնակների միջոցով ուսումնասիրել արդեն մեռած լեզուները։ Սակայն, մենք որ չունենք մեզանից առաջ մեռած լեզուների հնչական արձանագրությունը, այլ միայն մի այբուբեն, որ շատ անգամ անկատար, իսկ հնչական նրբությանց մեջ շատ անկատար է, ստիպված ենք դիմել կողմնակի միջոցների.— ձեռագրական սխալներ, օտար տառադարձություններ, փոխառյալ բառեր, հին քերականների զանազան նկարագրությունները, ոտանավորների չափը և հանգը, բայց ամենից ավելի ստուգաբանություններ և այդ ստուգաբանություններից բխած ձայնական օրենքները։ Այս բոլորը կարող են չլինել բացարձակապես ճշմարիտ, բայց ահա կենդանի լեզուների ճիշտ քննությունը, նրանցից դուրս բերված ձայնական ստույգ օրենքները և առհասարակ ձայնաբանության գիտական տեսությունները պիտի գան ստուգման ենթարկելու հին լեզուների մասին մեր դուրս բերած օրենքները և նրանց արժեքը ճշտելու։ Նորերի փորձով ուսումնասիրվում և պարզաբանվում են հին երևույթները։

ԳԼՈՒԽ Զ

ՁԱՅՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Ձայնի ամենից ավելի ցայտուն կողմը և միևնույն ժամանակ նրա անհատականության անհրաժեշտ պայմանն է երանգը։ Երկու ձայն կարող են ունենալ միևնույն տևողությունը, միևնույն բարձրությունը և միևնույն ուժը, բայց եթե երանգով տարբեր են, ուրեմն և տարբեր ձայներ են։ Ընդհակառակը՝ երկու ձայն կարող են ունենալ տարբեր տևողություն, տարբեր բարձրություն և տարբեր ուժ, բայց եթե երանգով նույն են, ուրեմն և նույն ձայներն են։

Երանգի այն տարբերությունը, որ դրում է ականջը, ենթակայական է, բայց եթե քննենք նրա հորինվածությունը, կգտնենք, որ այդ տարբերությունը առարկայական է և կայանում է բնախոսական պայմանների մեջ։

Եթե երանգը ձայնի անհատականությունը կազմող հատկություն է, ուրեմն և ձայները կարելի է դասակարգել իրենց երանգի համեմատ, ուրիշ խոսքով իրենց բնախոսական կազմության համաձայն։

Մարդկային ձայների թիվը չափազանց մեծ է, թե՛ բաղաձայնների և թե՛ ձայնավորների կողմից. այբուբենները նրանց մի ընդհանուր կմախքն են ներկայացնում։ Միևնույն ձայնավորը, համաձայն իր ստացած դիրքի (հնչյալ կամ անհնչյուն, բաց կամ փակ և այլն), փոխում է իր երանգը և հետևաբար ստանում է բազմապիսի ձևեր. o-ն մի ձայնավոր է, բայց ֆրանսերենի մեջ կա 7 տեսակ o։ Այսպես՝

1. Փակ և սուղ o—ինչպես beau.
2. Փակ և երկար o—ինչպես chose.
3. Բաց և սուղ o—ինչպես sotte
4. Բաց և երկար o—ինչպես fort.
5. Սուղ և միջակ o—ինչպես mauvais.
6. Սուղ և շատ քիչ բացված o. անշեշտ վանկերի մեջ,—ինչպես sottise.
7. Սուղ և շատ փակ o. անշեշտ վանկերի մեջ,—ինչպես morose.

Լաոսերեն լեզվի մեջ կա նույնպես 7 տեսակ o.

1. Շատ բաց և շատ կարճ o.
2. Փակ և կարճ o.
3. Բաց և երկար o.
4. Փակ և կարճ (տոնով) o.
5. Բաց և երկար (տոնով) o.
6. Շատ փակ և շատ կարճ o.
7. Երկար և շատ փակ o.

(Տե՛ս Hospitalier, Gramm. Laotienne, 46—55):

Կարելի էր դեռ սրանց վրա ուրիշ ավելի նուրբ նրանկներ էլ ավելացնել և այդ բոլորը կլինեին o ձայնի դանազան տեսակները[1]:

e և i կազմում են մի ձայն. բայց բերանը և լեզուն, սկսած առաջինից մինչև երկրորդը, կարող են ստանալ բազմաթիվ դիրքեր և յուրաքանչյուրը կազմում է մի առանձին երանգ. այսպիսով ստացվում է ձայների մի մեծ թիվ, որոնք բոլորը e-ի և i-ի տեսակներն են:

Այսպես են նաև բաղաձայնները. օրինակ t և d ատամնական բաղաձայններ են, առաջինը խուլ, երկրորդը թրթռուն: Ատամնական ձայնի արտաբերության համար անհրաժեշտ է, որ լեզվի ծայրը դիպչի ուղիղ կամ կորացած ձևով ատամներին. բայց այդ սահմանը մի կետի վրա չէ ամփոփված, այլ ատամների ներքևի ծայրից սկսած գնում է մինչև քիմքի հետևի կորությունը. յուրաքանչյուր կետի վրա արտաբերվում է մի ատամնական, որ տարբեր է մյուսներից: Այսպիսով ձևանում են բազմաթիվ տեսակի t և d ձայներ:

Սակայն հակառակ սրան, աշխարհիս բոլոր լեզուների մեջ գտնված բոլոր ձայների տեսակը շատ փոքր թիվ է կազմում: Քըն-

[1] Dauzat, La philosophie du langage, p 206.

նախկինը դյուրց է ավելի, որ ռամանական և կերմանական մի քանի բարբառներ միասին վերցված, բովանդակում են աշխարհի բոլոր լեզուների ձայնական հարստությունը, ձայնավորների բոլոր դասակարգերն ու բոլոր բազաձայնները։ Օրինակի համար, Փարիզի ձայնարտասանական աշխատասենյակի մեջ մանրակրկիտ կերպով քննելով մարդկային բոլոր ձայները, տեսան, որ բոլորն էլ կան ֆրանսերենի և իր բարբառների մեջ, բացառությամբ մի ձայնի, որ և պրուսերվից անցկերևում (ու խորի անցկիական արտասանությունը)։ Աշխարհիս վրա խոսված անթիվ լեզուների ու բարբառների քննությունը չափից ուրեմն ձայների մի այնքան մեծ դանազանություն, որքան կարծվում էր։ Պատճառն այն է, որ մեր խոսողական գործարանները, ինչքան էլ որ մարդուց մարդ և ազգից ազգ տարբեր, այնուամենայնիվ վերջ ի վերջո անսահման միջոցներ չունեն իրենց արտադրության տակ և իրենց գործունեությունը պատված է շարունակ միևնույն փորր շրջանակի մեջ[1]։ Ինչքան ամենափորր տեղից մինչև շրթունքները 9 տ տարածություն է։

Բացի սրանից, հնչյուններ արտադրելու միջոցներն էլ շատ դանազան չեն և բոլոր լեզուների մեջ էլ միևնույն բաներն են. ամեն տեղ էլ ունենք ձայնավորներ և բազաձայններ միասին. ձայնավորները իրարից բիչ դանազանությամբ պատված են ամենաբաց a ձայնի և ամենամութ i, u ձայների միջև. բազաձայններն էլ ունեն միշտ երկու տեսակ պայթական՝ կամ սեղմ և կամ սրանց միջին տատիճաններ. այնպիսի մի հնչյուն, ինչպես l, որ բավական յուրահատուկ կազմություն ունի, գրեթե ամեն լեզվի մեջ կա և ամեն ժամանակ եղել է։ Բայց ավելի կարևոր պատճառն այն է, որ ինչքան էլ մեր գործարանները կարենան տասնյակ զանազան դիրքեր և արտաբերեն դանազան տեսակի ձայներ, սկզբից անընդունակ է այդքան նրբություններ դանազանել և բավականանում է միայն մի քանի գլխավոր կետերը որոշելով։

Հնագույն դարերից սկսած, քերականները մարդկային ձայնը բաժանում են երկու մեծ խմբի՝ ձայնավոր և բազաձայն։ Ըստ ավանդական բացատրության, ձայնավոր կոչվում են նրանք, որ առանձին ընդունակ են կազմելու մի վանկ, իսկ բազաձայն կոչվում են նրանք որ վանկ կազմելու համար կարոտ են ձայնավորների ընկերակցության։ Այս բացատրությունը սխալ է. նախ՝ որովհետև չի որոշում ձայնավորի և բազաձայնի էությունը, այլ նրանց պաշտոններից մեկն է հայտնում. երկրորդ՝ շատ լեզուներ

[1] Dauzat. La philosophie du langage, p. 207.

կան, որոնք բաղաձայն տառերով կազմում են վանկեր, այսպես անգլերեն ridden, temple, mutton, *գերմաներեն* Acker, Löffel, bitten, *դանիերեն* Katten, handel *(կարդա* kadn, hanl) *բառերի երկրորդ վանկի մեջ վանկ կազմող ձայներն են* r, n, l, *սրանց մեջ* e *ձայնավորը լոկ գրչագրական է, որ գոյներենի մեջ նույնիսկ պակասում է. ուրեմն՝ գերմաներեն* Acker, vogel, zeichen *բառերի համապատասխան գոյներեն ձևերն են* akrs, fugls, taikns r, l, n *ձայնավորներով* (Braune 16)։ *Աֆրիկյան սվահիլի լեզվի մեջ* m *և* n *կարող են առանձին վանկ կազմել, ինչպես* m-tu *(մարդ),* n-či *(երկիր) երկվանկ բառեր են* (Seidel, Suah, 1)։ *Զևիերենը ունի շատ բառեր, որոնք իսպառ զուրկ են ձայնավորից և որոնց մեջ վանկ կազմելու պաշտոնը ընկնում է* l, r *բաղաձայնների վրա. այսպես, օրինակ,* vlk *«գայլ»,* vrch *«գագաթ»,* plst' *«թաղիք»,* krk *«վիզ»,* tvrz *«բերդ»,* brk *«փեշտուր»,* prst *«մատ»։ Կարելի է նույնիսկ կազմել ամբողջ նախադասություններ առանց ձայնավորի, ինչպես.*

strč prst krsk krk.

'Ի'ր մատը ընդ վիզ։

Այսպես է նաև սլովերենի մեջ. օրինակ՝ strd *«մեզր»։*

Թամիլ քերականները զեղեցիկ փոխաբերությամբ ձայնավորը կոչում են uyir *(բառի կյանքը), իսկ բաղաձայնը՝* mey *(բառի մարմինը)* (Coldwell, Dravid. 132)։

Ըստ ձայնաբանության, ձայնավորներն ու բաղաձայնները տարբերվում են իրարից լսողական և բնախոսական տեսակետով։ Ձայնավորը իսկական և ամբողջական ձայնն է, որ ունի երաժշտական ձայնի բոլոր հատկությունները՝ երանգ, ուժ, բարձրություն և տևողություն. բաղաձայնը աղմուկ է. բաղաձայնների մի մասը, ինչպես p, t, k *զուտ աղմուկներ են, ուրիշներ, ինչպես* z, ž, v *աղմուկ են՝ խառնված երաժշտական ձայնի հետ. զուտ աղմուկները թեև ունեն երանգ և ուժ, բայց տևողություն և բարձրություն չունեն։ Ձայնավորի արտաբերության ժամանակ գործարանները ձևացնում են մի կամ երբեմն էլ երկու հնչարան, որոնք ուժեղացնում են երաժշտական ձայնի մի որոշ նոտա, որոշ բարձրությամբ։ Ավելի պարզ լեզվով խոսելով, լեզվի զանազան շարժումներով բերանը ստանում է զանազան ձևեր, որոնք փոխում են ձայնի երանգը, ճիշտ ինչպես զանազան ձևի խողովակները շեփորի վրա ազդեցված։ Բնախոսական տեսակետով ձայնավորի և բաղաձայնի տարբերությունը կայանում է հետևյալ հանգամանքի մեջ. երբ գործա-*

բառերը մտածում են իրար այնպես, որ նրանց միջև բավական բաց տարածություն կա, որպեսզի խոչընդոտից բարձրացած օդի հոսանքը ազատորեն դուրս գա, առանց պատերին շփվելու, այդ պատճառով նա ձայնավոր է, իսկ երբ այդ անցքը շատ նեղ է և կամ բոլորովին փակ, այնպես, որ օդի հոսանքը սահպված է ընդարձակորեն շոշափել պատերը կամ նույնիսկ բախումով դուրս գալ, այդ պարագային առաջանում է բաղաձայն։

Այն երևույթը, թե ձայնավորը բերանի բաց անցքի, իսկ բաղաձայնը փակ անցքի արդյունքն է, կարելի է իմանալ և հաստատել հետևյալ հատկապես փորձով։ — Դնենք մատը բերանի մեջ և հնչեցնենք բոմբին. սկսենք արտասանել իրար հաջորդ ա, բ, օ, ռ, է, ի ձայնավորները. կզգանք, որ լեզուն հետզհետե վեր է բարձրանում և ավելի ու ավելի սեղմում մատը. ուրիշ խոսքով՝ բերանի մեջ կազմված անցքը փոքրանում է. երբ հաջորդենք ի ձայնավորին և լեզուն նրանից ավելի հեռու տանք, կլսենք յ ձայնը, որ բաղաձայն է։ Սրանից երևում է, որ մինչև որոշ աստիճանի բաց անցքում հնչված ձայնը ձայնավոր է, այդ բացության վերջին աստիճաններ ի ձայնավորն է, որից ավելի սեղմված անցքը տալիս է բաղաձայն հնչյուն։ Նույն փորձը կարելի է կրկնել մատը դնելով երկու շրթունքների միջև և արտասանելով իրար հաջորդ ա, բ, է, ի, օ, ու ձայնավորները. վերջին ու հնչման ժամանակ շրթունքները բոլորովին մոտենում են իրար, այսինքն՝ բացվածքը բավ կարելիության նեղ է լինում, որից ավելի սեղմելուց՝ լսվում է այլևս վ բաղաձայնը։ — Այս երկու փորձերը կարելի է կրկնել ուրիշ ձևով. մատը դնելով քիմքին, արտասանել իյի, կամ շրթունքների միջև բռնելով՝ արտասանել ուվու. երկու դեպքում էլ պիտի զգանք, որ ի, ու արտասանած ժամանակ մատը նվազ է ճնշվում քան յ, վ արտասանած ժամանակ, և որովհետև պիտանք, որ ի, ու ձայնավոր են, իսկ յ, վ բաղաձայն, դրանից երևում է, որ ձայնավորների արտասանությունը բերանի անցքը որոշ չափով սեղմելու արդյունքն է, իսկ բաղաձայնների արտասանությունը նրանից մի քիչ էլ ավելի սեղմելու արդյունքն է։

Սակայն այս բացատրությունից հետևում է նաև այն, որ ձայնավորը և բաղաձայնը միևնույն երևույթի դանազան աստիճաններն են և նրանց միջև մի կտրական սահման չկա։ Ծայրերը բոլորովին տարբեր են, այսպես ա, որ ներկայացնում է ամենալայն բացվածքը, բոլորովին տարբեր է բ-ից, որ ներկայացնում է բոլորովին փակ մի անցք. բայց միջին կետերում ձայնավոր և բաղաձայն շփոթվում են իրար հետ. այսպես՝ ֆրանսերեն yeux,

huit, oui բառերի նախաձայնի արտաբերութիւնն միջոցին միաժամանակ լսվում է օդի հոսանքի շփումը, որ հատուկ է բաղաձայններին և այն երանգը, որ հատուկ է i, ü, u ձայնավորներին։ Այս կարգի ձայնավորները կոչվում են կիսաձայն և բռնում են ձայնավորի և բաղաձայնի միջին տեղը։ Միջին դիրք են բռնում նաև l, m, n, r ձայները, որոնք մինչև անգամ որոշ լեզուների մեջ համարվում են ձայնավոր. այսպես են հնդկերենում l և r։

Ձայների երեք մեծ բաժանմունքներն են ուրեմն՝

1. Ձայնավորներ
2. Կիսաձայններ
3. Բաղաձայններ

Այս մեծ բաժանմունքներից յուրաքանչյուրն ունի իր բազմաթիվ ստորաբաժանումները, համաձայն բնախոսական պայմանների, այսինքն նայած այն բանի, թե ձայնը որպիսի՛ գործարանների միջոցով է արտադրվում։

ԳԼՈՒԽ Է

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐ

Ձայնավորների կրանդի տարբերություններ առաջանում է հողմավորիչ գործարանների ընդունած դիրքից, ուրիշ խոսքով՝ հնչարանի ձևից ու մեծությունից։

Ձայնավորների արտաբերության մասնակցում են հետևյալ գործարանները.

1. Կատիկ. ձայնավորների արտաբերության ժամանակ սա կարող է ընդունել երկու դիրք. կա՛մ բարձրանում է վերև և հենվելով ըմպանի պատերին, բոլորովին ծածկում է քթային անցքը, և կամ ընդհակառակը մնում է անշարժ բերանի և քթային անցքի միջև, որով քթային անցքի ճանապարհը մնում է բաց։ Առաջին պարագային օդի հոսանքը ստիպված է ամբողջապես անցնել բերանով և այս ձևով արտաբերված ձայնավորները կոչվում են պարզ կամ բերանային, ինչպես a, e, i, o, u.— *երկրորդ պարագային օդի հոսանքը ստիպված է դուրս գալ երկու ճանապարհով, մի մասը՝ քթի խոռոչով, մյուս մասը՝ բերանային խոռոչով. ուրիշ խոսքով ձևանում է երկու հնչարան։ Այս ձևով արտաբերված ձայնավորները կոչվում են ռնգային, ինչպես* ą, ę, į, ǫ, ų։

2. Ստորին ծնոտը, ինչպես արդեն նկատել ենք, կարող է հեռանալ վերին ծնոտից և ձևացնել զանազան մեծությամբ անկյուններ։ Որքան մեծ է անկյունը, այնքան բաց է ձայնավորը և որքան փոքր է անկյունը, այնքան փակ է ձայնավորը։ Ըստ այսմ ձայնավորները կարող են լինել բաց կամ փակ՝ ո՛չ միայն իրար հետ համեմատած, այլև յուրաքանչյուրն ինքն իր մեջ։ Օրինակ i *ձայնը*

փակ է համեմատությամբ e-ի, և e ձայնը փակ է համեմատությամբ a-ի, բայց a ձայնն էլ կարող է արտասանվել ավելի կամ պակաս բաց կամ փակ, համաձայն լեզվի ոգուն. այսպես՝ à, a, â։

3. Շրթունքները կարող են ձևացնել զանազան մեծությամբ բացվածքներ՝ կլորակ կամ հորիզոնական. երբ ձայնավորի արտաբերության ժամանակ շրթունքները ստանում են կլորակ ձև, ձայնավորը կոչվում է կլոր կամ շրթնային. ինչպես o, u, ö, ü, իսկ երբ ստանում են հորիզոնական ճեղքվածքի ձև, ձայնավորը կոչվում է ոչ–շրթնային, ինչպես e, i։

4. Լեզուն ունի ամենակարևոր դերը ձայնավորների արտասանության մեջ. նա է, որ տալիս է այն ձևն ու մեծությունը, որ պետք է առաջ բերելու համար ձայնավորի այս կամ այն երանգը։

Բոլոր ձայնավորների արտաբերության ժամանակ էլ լեզվի հպումը քիմքին՝ կատարվում է հետևյալ ձևով։ Լեզվի եզերքները գալիս հենվում են քիմքի երկու կողերին, այնպես որ քիմքի կամարը լեզվի գոգավորության հետ միասին կազմում է մի կլորակ անցք՝ ավելի կամ պակաս նեղությամբ։ Այդ անցքը չի տարածվում ամբողջ քիմքի վրա, ո՛չ էլ լեզվի ամբողջ երկարությամբ, այլ միայն սրա մի մասն է, որ երկու եզերքով հպում է քիմքի մի մասի կողերին։ Այդ հպման կետը կոչվում է ձայնավորի հոդավորման վայրը (région d'articulation), որից դուրս քիմքը և լեզուն ոչ մեկ կետում չեն շոշափում իրար։

Համաձայն այս հոդավորման վայրի, ձայնավորները բաժանվում են երեք կարգի։

ա) Աջակողմյան կամ fմայինն ձայնավորներ, որոնց արտաբերության ժամանակ լեզվի առաջամասը հպվում է կարծր քիմքին. օրինակ՝ e, i, ö, ü։

բ) Հետսակողմյան կամ կատկային ձայնավորներ, որոնց արտաբերության ժամանակ լեզուն հետ է քաշվում և հետսակողմով հպվում է փափուկ քիմքին, որ է կատիկը. օրինակ՝ o, u։

գ) Խառն ձայնավորներ, որոնց արտաբերության ժամանակ լեզվի միջին մասը հպվում է կարծր քիմքի հետսակողմին և կատիկի աջակողմին։ Այսպես են ը ձայնավորի զանազան ձևերը հայերենում, ռուսերեն ы կամ գերմաներենում gabel, անգլերենում sir և այլն բառերի մեջ լսված ը ձայնը։

Ըստ Ռուսլոլի և դ-ր Նասիեի քննությունների, լեզվի շարժումները բերանում, դեպի առաջ և դեպի հետ, խաղում են ընդամենը 60 միլիմետրի մեջ. ամենաառաջակողմյան ձայնավորն է

փակ i, որի արտասանության ժամանակ լեզուն առաձգաշարժից 20 միլիմետր հեռու է գտնվում, իսկ ամենահետևակարգման ձայնավորն է փակ u, որի արտասանության ժամանակ լեզուն առաձգաշարժից 80 միլիմետր հեռացած է լինում։ Միջին հետևակարգության է ă 45 միլիմետր առաձգաշարժից հեռու, a 50 միլիմետր, ă 55 միլիմետր. իսկ մյուս պլոսիվ ձայնավորներից՝ e 37, ĕ 26, ĭ 25, i 20, ŏ 40, o 37, ŏ 32, ŭ 36, ŭ 23, o 60, o 65, o 70, u 75, ŭ 80։ Ինչ վերաբերում է լեզվի բարձրացման դիպի քիմքը, նաև հնչունականները տալիս են հետևյալ թվերը. a 13 միլիմետր հետավորության քիմքի և հպավորման կետի միջև, o 10, ă 10, e 8, e 4,5, é 2,5, ĭ 3, i պատկ. 1-ից, u 8, ŏ 13, o 10, ŏ և ŭ 3, ă 18, ŏ 12, o 10, ŏ 9, u 8, ŭ 6։[1]

Ձայնարձակող ձայնավորի արտաբերության ժամանակ կա երեք մոմենտ. լարում (tension), կացք (tenue) և ելք (détente)։ Լարումն այն մոմենտն է, երբ շարժուն գործարանները (լեզու, կտուց, ծնոտ և շրթունք) իրենց հանգիստ դիրքից դուրս գալով, պիտի են գնում այն դիրքը, որ պետք է տանեին այսինչ կամ այսինչ ձայնավորը արտաբերելու համար. այս է ձայնավորի պատրաստության բուն կացքը այն մոմենտն է, երբ գործարանները արդեն ընդունած լինելով պատշաճ դիրքը, արտաբերում են ձայնավորը, իսկ ելքը այն պահն է, երբ գործարաններն արդեն արտաբերությունը վերջացրած լինելով, հետ են դառնում և անցնում կա՛մ իրենց նախկին դիրքը, այն է լիակատար հանգիստը, և կա՛մ դիմում հաջորդ ձայնի արտաբերության։ Այս երեք մոմենտներից ամենակարևորը երկրորդն է, որ կազմում է իսկական ձայնավորը, և երբ գործարանները կարող են պահել որոշ տևողություն. մյուս երկուսը անցողական ու խուսափուկ են։ Տեսականորեն մտածելով, անշուշտ այդ մոմենտներին էլ գործարանները վատնում են որոշ ժամանակ, անցնում են դիրքից դիրք, մինչև հասնում են բուն ցանկացված դիրքը և հետևարար արտաբերում են բազմաթիվ երկրորդական ձայներ, բայց այդ բոլորն այնքան կարճ և վաղանցուկ են, որ ականջի համար մնում են աննկատելի։

Ամփոփելով հիշյալ բոլոր պայմանները և հոդավորիչ գործարանների ստացած դիրքը, մարդկային լեզվի ձայնավորները կարելի է դասակարգել ու ներկայացնել հետևյալ պատկերի մեջ, որ մի անհավասարակողմ եռանկյուն է,- հորիզոնական XX′ և ուղղահայաց YY′ առանցքների վրա հաստատված։

---

[1] Rousselot, Principes, II, 647—648.

Ռուսկյան գագաթին հաստատված է a (ա) ձայնը, որ առաջակողմյան և հետսակողմյան ձայնավորների միջև բռնում է միջին դիրք և կարող է ծառայել բոլորի համար իբրև մեկնակետ։ Այստեղից սկսելով մինչև աջ կողմի ծայրը շարված են առաջակողմյան



կամ քմային ձայնավորները, մեկը մյուսից ավելի փակ, a-ից մինչև i. իսկ մինչև ձախ կողի ծայրը շարված են հետսակողմյան կամ կատակային ձայնավորները, նույնպես մեկը մյուսից ավելի փակ, a-ից մինչև u։ Միջին գծի վրա դնվում են ə ձայնավորի զանազան աստիճանները։ Աջ կողից մի քիչ դեպի ձախ, երկրորդական գծի վրա շարված են առաջակողմյան կամ քմային ձայնավորների կլոր կամ շրթնային ձևերը, մեկը մյուսից փակ, ɔ̃ ũ։ Այսպիսով երևան են գալիս բոլոր ձայնավորների փոխադարձ հարաբերությունները, յուրաքանչյուրի մեջ լեզվի շարժումներն ու շրթունքների բացվածքի մեծությունը։ Աջ ու ձախ կողերի վրա շարված ձայնավորներից յուրաքանչյուրը որքան հեռու է ուղղահայաց УУ' առանցքից, նշանակում է լեզուն էլ այնքան առաջացած կամ ետ քաշված միջին a դիրքից, և որքան բարձր է հորիզոնական XX' առանցքից, նշանակում է այնքան էլ բարձրացած է դեպի քիմքը՝ միջին a դիրքից։ Վերջապես որքան բարձր է լեզուն, շրթունքներն էլ այնքան ավելի փակ են։

Ռուսկյունը կազմված է այնպես, որ կարող է հարմարվել բոլոր լեզուներին և հարստանալ նորանոր ձայնավորներով. այսպես անգլերենը և ֆրանսերենը ունեն a և o ձայնավորների զանազան նրբություններ, որոնք պիտի շարվեն a—o և a—e կողերի զանա-

պան կեսերում. Ֆրանսերենն ունի նույնպես ö և ü ձայնավորների պահպան նրբություններ, որոնք պիտի շարվեն a—ö և o—ü պծերի պահպան միջին կեսերում։ Վերջապես պահպան լեզուների մեջ կան նույնպես և անպային ձայնավորներ, հատկապես Ֆրանսերենում և պորտուգալերենում. դրանց համար էլ կարելի է աջ ու ձախ կողերի կոպքին անցկացնել երկրորդական մի-մի պիծ և նրանց վրա համապատասխան ձայնավորի պիմայ պնել իր տնդայինը։

Գալով երկար ձայնավորներին, որոնք իհարկե ատանձին տեսակ չեն կազմում և կարող են նշանակվել յուրաքանչյուր կարճ ձայնավորի կոպքին, ինչպես a—ā, o—ō և այլն։

Անցնենք այժմ յուրաքանչյուր ձայնավորի նկարագրության, սկսելով եռանկյան գագաթից և հետևելով աջից ձախ կողերի շարքին։

Առաջին կոպի վրա գտնում ենք a. մարդկային բոլոր ձայների ամենատարած հնչյունն է, կազմում է բոլոր ձայնավորների հիմքը և ամեն լեզվի մեջ էլ կա։ Արտասանության ժամանակ բերանը բացվում է չափավոր ատիճանով, շրթունքները, այտերն ու լեզուն բոնում են ազատ դիրք, լեզուն փռված է բերանի հատակում, այնպես որ եզերքներով հպվում է ստորին ատամների շարքին, իսկ հետևի մասը թեթևակի բարձրանալով, երկու կողմից հպվում է կարծր բիմքի ու կատիկի միջատահմանին։ Այս է միջակ կամ կանոնավոր a-ի նկարագրությունը, որ և համապատասխանում է մեր լեզվի ա հնչման։

Հետզհետե բարձրանալով, a-ն ապիս է նախ ā. այս ձայնը չունենք հայերենի մեջ, բայց կա ֆրանսերենում. ալապես, օրինակ, patte, natte և այլն բառերի մեջ։ Արտասանության ժամանակ լեզուն մի քիչ ավելի է բարձրանում քան a և մի քիչ էլ ավելի է առաջանում, այնպես որ թեթևակի հպվում է ստորին կտրիչ ատամներին (incisif)։ Հիպերբորյան գելիակ լեզվի մեջ կա մի տեսակ a, որի արտաբերման ժամանակ լեզվի ծայրը հպվում է ստորին ատամներին։ Եռանկյան մեջ այս ձայնը գտնվում է a և ā ձայների միջև։

Ավելի բարձր գտնում ենք à ձայնավորը, որի արտասանության մեջ լեզուն ավելի առաջացած և բարձր է կանգնած քան ā ձայնի ժամանակ և պակաս քան è. բայց՝ որովհետև այս երկու ձայներն էլ առհասարակ չկան հայերենի մեջ, ուստի բավականանանք ասելով, որ կազմում է a և e ձայների միջին ատիճանը։

ä ձայնը նույնպես գոյություն չունի ոչ հին հայերենի մեջ և ոչ էլ արդի գրական լեզվի մեջ, բայց շատ սովորական է մի խումբ հայերեն բառարաններում, ինչպես են Ղարաբաղի, Շամախիի, Ագուլիսի, Վանի, Տիգրանակերտի, Խարբերդի, Շապին-Գարահիսարի, Համշենի, Կիլիկիայի, Սիրիայի, Մուսա-լեռան, Արարկիրի, Սեբաստիայի, Նիկոմիդիայի, Մարաղայի և Խոյի ու Սալմաստի բարբառներում։ Ջափազանց առատ է Տիգրանակերտի բարբառում. Վանա բարբառում, ուր որ վ ձայնին հաջորդում է ա, անպատճառ հետևում է ä։ Անծանոթ չէ նաև Կարինի բարբառին, ուր գրտնվում է սակավաթիվ օրինակներով. բոլորովին բացակայում է Երևանի, Տփղիսի, Պոլսի, Ռոտոսթոյի, Ղրիմի և Նոր Նախիջևանի ու Ավստրո-Հունգարիայի բարբառներում։

Եվրոպական լեզուներից անգլերենն է, որ առատորեն ունի այս ձայնը, ինչպես man, pat և այլն բառերի մեջ։ Դանիական բարբառներն էլ a-ի փոխարեն հնչում են ä։ Ուրիշ լեզուներից ամերիկյան Կիրիրի լեզուն ունի ä (Cobelentz, 5)։ Ֆրանսերենի և գերմաներենի այդ ձայնը լսում են é, որ նրանից մի քիչ ավելի բարձր է։ Մեր շրջակա ազգերից ռուսերենը, վրացերենը և տաճկերենը զուրկ են այդ ձայնից, իսկ քրդերենը, պարսկերենը, Ատրպատականի թուրքերենը, ինչպես և գավառական տաճկերենը լի են այդ ձայնով։ Ըստ այսմ էլ մեր բարբառներից նրանք, որ ապրում են ä չունեցող լեզուների շրջանում, զուրկ են մնացել այդ ձայնից, ինչպես Տփղիսի, Պոլսի և Նոր-Նախիջևանի բարբառները, իսկ նրանք, որ մեծապես ազդված են ä ունեցող լեզուներով, գիտեն այդ ձայնը։ Սրանց մեջ առաջին տեղն է բռնում Տիգրանակերտի բարբառը, ուր հայերենի գրեթե բոլոր ա-երը դարձած են ä։ Նրանից հետո գալիս են Մարաղայի, Շամախիի և Ղարաբաղի բարբառները, ինչպես և Փոքր Ասիայի հայերեն բարբառները։ Կարինի բարբառում գտնվում է միայն այն բառերի մեջ, որոնք փոխառյալ են թուրքերենից, որից հետևում է, թե ä ձայնը բնիկ հայերեն չէ, այլ հետո մտած փոխառության միջամբ։ Երևանի բարբառը, որ ավելի քիչ է ենթարկվել թուրքական ազդեցության, չունի այդ ձայնը, թեև տեղացի հայերը, որ գիտեն թուրքերեն, թուրքերեն խոսելիս կարողանում են հնչել ä։ Այս կողմից հետաքրքրական է Նոր-Ջուղայի բարբառը, ուր տեղի հայերը իրենց բնիկ բարբառի մեջ չունենալով a ձայնը, պարսկերեն խոսելիս ամեն ä դարձնում են a, որով իրենց արտասանության այդ սխալը աչքի է խփում պարսիկների մեջ։ Այժմ նոր սերունդն արդեն վարժվելով այդ ձայնին, իր ձայնական դրության մեջ մըտ-

ըրրել է նաև ä ձայնավորը, բայց միմիայն պարսկերենից փոխառյալ բառերի համար. մինչդեռ հին սերունդը շարունակում է նախկին վիճակը ներկայացնել, օրինակի համար՝ bäxt «բախտ», bälki «թերևս», gär «մանավանդ», bäs «բավական», plšknš «պարզևա» և այլն պարսկերեն բառերը, որոնք փոխառությամբ մտած են նաև նոր-Ջուղայի հայերեն բարբառի մեջ, հին սերունդը հնչում է բախտ, բալքի, գազ, բաստ ա (ինձ բավական է), փիշքաշ, իսկ նոր սերունդը հնչում է բոխտ, բոլքի, գոզ, բոստ ա, փիշքոշ և այլն։ Ո՛ր լեզվի կամ բարբառի մեջ որ այս ձայնը չկա, խոսողները հարկավոր գտնում (հատկապես փոխառությունների մեջ) փոխանակում են անմիջապես մոտավոր ձայներով. այսպես հայերենում ա, ռուսկերենում է, ֆրանսերենում é։

Հին լեզուների մեջ արդյոք կա՞ ä ձայնավորը։ Այս մասին մի լավ նկատողություն ունի Delitzsch, Kleine Sumerische Sprachlehre, Leipzig, 1914, ուր 3-րդ էջում ասում է, թե որովհետև սումերերեն արձանագրությանց մեջ շատ հաճախ a ձայնավորը գրվում է e, ուրեմն և այդ ձայնը հնչվում էր ä, ինչպես երբալերեն, արաբերեն, անգլերեն և այլն։

Հին լեզուներից սանսկրիտը չունի ä, բայց նոր հնդկական լեզուներից, օրինակ, սինհալի լեզուն ունի ä (Geiger, 11)։

ä ձայնից վերև, հոանկլան վրա ունենք e ձայնի երեք երանգները (բաց è, միջակ e և փակ é)։ Ֆուրքանչյուրի մեջ լեզուն հետզհետե ավելի է առաջանում և ավելի բարձրանում։ Ինչ լեզու կա, որ e ձայնավորի այս երեք երանգներն էլ ունենա. ամենից լավ է ֆրանսերենը, որ որոշ կերպով գիտե զանազանել è, e և é. օրինակ, père, mèr, café։ Այսպես է նաև բրետոներենը, որ գիտե զանազանել բաց, միջակ և փակ e-ի երեք աստիճանները. վերջինը սակայն այնպես փակ է, որ Vannes գավառում գրեթե i է լսվում (Guillome, Gramm. fr.-bret, 6)։

Ֆրանսերենին նման է գերմաներենը, որ ունի փակ é (ինչպես Réde, Géhen), միջակ e (ինչպես Bett, nett), իսկ բաց è կարելի է գտնել որոշ վայրերում միայն (ինչպես Bär, Ähre բառերի մեջ)։

Այսպես է նաև պանիերենը։

Իր վերոհիշյալ աշխատության մեջ Delitzsch (էջ 3) գտնում է, որ սումերերենի e ձայնը փակ էր և մոտենում էր i ձայնավորին, ըստ որում արձանագրությունների մեջ e ձայնավորն էլ հաճախ գրվում է i։

e ձայնի աստիճանները (è, é) սովորություն է նշանակել

ֆրանսերենում, բայց մանավանդ կատալան լեզվում, ուր é, è, ó ò ձայների տարբերությամբ բոլորովին տարբեր բառեր են ստացվում, օրինակ, bè «գառնուկ», bé «լավ», tè «թեյ». té «ա՛ռ, վերցրո՛ւ», dòna «տիկին», dóna «տալիս է» (Huber, 4)։

Հունգարերենը ունի è, որ շատ ավելի բաց է, քան ֆրանսերեն è-ն և երկրորդ ë, որ գտնվում է ֆրանսերեն è և é ձայնների միջև (Sauvageot, BSL, 34, № 102, էջ 117)։

Անգլերենը ունի միջակ e (ինչպես bed, net) և մի տեսակ բաց è (ինչպես bear, fair, there), որ սակայն ավելի բաց է քան ֆրանսերեն è, ուստի նուանկլան մեջ կարող է դրվել ä և è ձայների միջև։

Սրա ճիշտ հակառակը, հրեական ժարգոնի մեջ գտնվում է մի տեսակ շատ փակ é, որ դրեթե մոտենում է i ձայնին և նուանկլան մեջ կարող է դրվել e և i ձայների միջև։

Բանտու լեզուների մեջ (օրինակ յաունդե լեզվում) կա մի տեսակ é, որ այնքան փակ է, որ դժվար է ասել e ձա՞յնն է, թե i (Nekes, 6)։

Ամերիկյան չիբչա (Chibcha) լեզվի մեջ կա մի ձայն, որ միջինն է e և i ձայների, այնպես որ Ուբի Կոլչես գիտնականը, որ գրել է այս լեզվի քերականությունը, չի կարողացել որոշել, թե ի՛նչպես արտահայտե այս ձայնը և գրել է y. „es una que ni es de E ni de I, sino un medie entre les dos, la cual escribimos con 'la y griega“ (E. Uricoechea, Gramatica de la linqua Chibcha, Paris, 1871, 2)։

Ֆիլիպյան տագալոգ լեզվի մեջ չկա ոչ մի տեսակ e և այս լեզուն գիտի միայն 4 ձայնավոր՝ a, i, u, o (Blake, 5)։

Ճավայերենը ճանաչում է երկու տեսակ e, այն է բաց è և փակ é, որոնց համար սակայն առանձին տառեր չունի. անծանոթ է իրեն միջակ e (Bohatta. Gramm, jav., 13)։

Աննամերենը ունի բաց և փակ e, բայց միջին աստիճանը չունի (Dirr., Gramm. annam., 2)։

Հալերենի մեջ e ձայնավորի երանգները քիչ են. հին հալերենը ուներ երկու տեսակ e, որոնցից մեկը արաբերենի մեջ նշանակված է ե ձևով, մյուսը է ձևով։ Թեև այս երկուսի հնչական տարբերությունը մեզ անհայտ է, բայց քննությունները ցույց են տալիս, որ ե բաց è էր, է փակ é[1]։ Ուրեմն միջին երանգը պա-

[1] Աճառյան, Հայոց գրերը, 299—303։

կատամ էր Արդի գրական լեզվի, ինչպես նաև բարբառների ամենամեծ մասի մեջ, կա միայն մի ուսական e, որ ներկայացնում է միջակ e, ալոֆոնքն՝ գրաբարի ե և է ձայնների միջին ստիճաններ, ինչ որ չկար հին հայերենում։ Իսկ բարբառների մեջ կարելի է գտնել նաև e ձայնի ուրիշ ստիճաններ, ալսպես Ալաշկերտի բարբառում կա շատ բաց è և միջակ è՝, Մշոյս ուրիշ տեղեր գտնվի e ձայնի փակ ձևը։

I ձայնի համար նոտնկյան մեջ գրված է միայն երկու ստիճան, բայց գտնապան լեզուներ ցույց են տալիս մինչև չորս ստիճան. ալսպես՝ շատ բաց i, բաց i, միջակ i և փակ ĭ։ Ալս բոլորի մեջ լեզուն հետզհետե ավելի առաջացած ու բարձրացած դիրք է ոտանում, քան e ձայնավորի համար, երկու ծնոտները մոտենում են իրար և շրմունքները երկար հորիզոնական ձևով բացվում։ Փակ i ներկայացնում է մարդկային ձայնի ամենաուշ ստիճանը, երբ լեզուն ամենից կատա է քիմքին, ծնոտը և առամնները բոլորովին մոտեցած են իրար, և սրից վերև էլ ձայն չկա։

Չորս ստիճաններից առաջինը գործ ունի միայն անդլերենը և կոչվում է «կարճ i» ինչպես bit, tip, lick և ալլն բառերի մեջ։ Երկրորդը, բաց i, գտնվում է գերմաներենի մեջ, բաղաձայններից առաջ, ինչպես bitte, hippe և ալլն։ Երրորդը, միջակ i գտնվում է ֆրանսերենի մեջ՝ անշեշտ վանկերում, ինչպես filer, miroir և ալլն։ Ալս է նաև մեր հայերեն ի ձայնը։ Վերջապես չորրորդը, ամեն է փակ i, գտնվում է ֆրանսերենի մեջ՝ շեշտալ վանկերում (ինչպես si, mari և ալլն) և գերմաներենի մեջ, ուր կրում է «երկար i» անունը (ինչպես sie, wie, lieben)։

Հայերենը թե՛ հին լեզվի և թե՛ նոր լեզվի մեջ ունի միայն մի տեսակ i, որ միջակ i-ի ստիճանն է. թվում է տակալն, որ Մարաղալի բարբառում ունի երկրաբրաուի մեջ վերջին ի ձայնը փակ i է[2]։

Տոանկյան երկրորդ կողը հատկացված է առաջակողմյան կամ քմային ձայնավորների կլոր կամ շրթնային տեսակներին։ Ալս կարգի ձայնավորների արտասանությունը կատարվում է հետևյալ ձևով. լեզուն ստանում է միշտ նույն դիրքը, ինչ որ քմային ձայնավորների համար, միայն թե միաժամանակ շրթունքներն էլ կլորակ

---

1 Աճառյան, Քննություն Ալեքսանդրկի բարբառի։

2 Աճառյան, Քննություն Մարաղայի բարբառի։

ձև են առնում. ուրեմն երկու խմբերի արտասանության տարբերությունը կայանում է միմիայն շրթունքների ձևի մեջ։ Այս բանը կարելի է իմանալ շատ հասարակ փորձով.— արտասանենք նախ e ձայնը և հետո առանց շունչը ընդհատելու անցնենք ö ձայնին. պիտի տեսնենք, որ լեզուն ո՛չ մի շարժում չի կատարում, ուրիշ խոսքով մնում է միևնույն դիրքի մեջ։ Նույնը պիտի տեսնենք նաև, երբ i ձայնի արտասանությունից անցնենք ü -ի արտասանության կամ նաև հակառակը՝ ü ձայնից i և ö ձայնից՝ e։

Այս սահմանից հետևում է այն, որ ի՛նչքան քմային ձայնավոր կա, ուրեմն այնքան էլ շրթնային ձայնավոր կա։ Եռանկյան վրա մենք նշանակել ենք միայն ö և ü, որոնք նույն շարքի երկու ամենակարևոր ներկայացուցիչներն են։ Բայց զանազան լեզուների մեջ կարելի է գտնել յուրաքանչյուրի համար չորս տեսակ. այսպես՝

Բաց ö, որ գտնում ենք ֆրանսերենի մեջ շեշտյալ վանկում, r բաղաձայնից առաջ. ինչպես fleur, peur, beurre և այլն։ Արտասանության ժամանակ լեզուն ստանում է մոտավորապես այն դիրքը, ինչ որ a ձայնավորի համար։

Միջակ ö, որ գտնում ենք ֆրանսերեն neuf, œil և այլն բառերի մեջ. լեզուն բռնում է è և a ձայների միջին դիրքը։ Փակ ö, որ գտնում ենք գերմաներեն völker, götter, öffne և այլն բառերի և ֆրանսերեն le որոշիչ հոդի արտասանության մեջ։

Շատ փակ ö, որ գտնում ենք ֆրանսերեն deux, noeud, creux և այլն բառերի արտասանության մեջ. լեզվի դիրքը համապատասխանում է è ձայնավորին (և ոչ թե é)[1]։ Նույն ձայնն է նաև գերմաներեն schön, böse և այլն բառերի մեջ։

Բաց և փակ õ գտնում ենք նաև դանիերենում, ուր ունի և առանձին տառանիշ, այսպես õ բաց է, Ø փակ։

Շվեդերենում կան փակ, բաց և շատ բաց õ ձայները (Poestior, Sch. wed. 15)։

Միջակ û, որ գտնում ենք ֆրանսերեն bureau, mulet և այլն բառերի մեջ, այսինքն անշեշտ վանկերում. լեզուն ստանում է փակ é ձայնի դիրքը։

Փակ û գտնում ենք ֆրանսերեն շեշտյալ վանկերի մեջ, ուր լեզուն ստանում է շատ փակ é ձայնի դիրքը։ Նույնը կա նաև գերմաներենում։

---

[1] Roulet, Elémentes de phonétique général, 1910, p. 96.

Շատ փոքր ն, որ գոյություն է ֆրանսերենի և գերմաներենի միջև. լեզուն առանում է նույն դիրքը, ինչ որ l ձայնի համար, ինչպես über, kühn և այլն։

Մի լեզու կա, որ կլսը քսալին ձայնավորներ տեսնում. հին լեզուներից շատերը, ինչպես սանսկրիտը, գոթերենը, հին պարսկերենը և այլն չունեն այդ ձայնները։ Այդի եվրոպական լեզուներից շատերը նույնպես չունեն, ինչպես անգլերենը, իտալերենը, ռուսերենը և այլն։ Առաստրին գոյություն են ֆրանսերենի, գաղիերենի, շվեդերենի և գերմաներենի միջև։ Երբեմն տեսնում նրանցից միայն մի տեսակը. ալպես, հին հունարենը տեսնը միայն ն (ինչպես գոռղ), լատիներենը միայն ö (ինչպես poena)։ Մեր շրջակա ապրելիք վրացերենն ու պարսկերենը ոչ ն տեսնն և ոչ ö. բայց քրդերենը, տաջրիջաներենը և տաճկերենը տեսնն երեք ձայներն էլ։ Անհամերենը գեռ թե՛ ö և թե՛ ն (Dirr, Gram. annam., 2)։ Մոնղոլական բարբառները գեռևս երեսի էլ բաց և փակ գոյնագան ձևերը (Ilone, Алар. говор., 64)։ Օսալակերենն էլ տեսնի ö, ն (Castren, 1)։

Գևլիչը իր վերոհիշյալ աշխատության մեջ (Kleine Sumerische Sprachlehre, Leipzig, 1914), 4-րդ էջում նկատում է, թե որովհետև ը ձայնավորը սումերական արձանագրությանց մեջ հաճախ գրվում է u, ինչպես և u հաճախ գրվում է i, ուստի պետք է ենթադրել, թե սումերներեն տեսնը ö և ն հնչյուններ, և այդ սխալական գրչագրությունները նրանց ներկայացուցիչներն են։

Հին հայերենը վրացերենի ու պարսկերենի պես չուներ ոչ ն և ոչ ö։ Արդի բարբառներից շատերը կա՛մ անկախ դպացմամբ և կա՛մ թուրքերենից փոխառությամբ ձեռք են բերել ն և ö ձայնները՝ միջակ ստիճանով։ Այսպես են Շամախիի, Ղարաբաղի, Ագուլիսի, ինչպես և Պարսկաստանի ու Տաճկաստանի բարբառները. բայց Տիֆլիսի և Երևանի բարբառներում գոյություն չունեն. հարկավոր դեպքում տեղապիք այդ ձայնավորները փոխարինում են yu և yo ձայնախմբերով։

Նոր գրական լեզուն այս կողմից ներկայացնում է երկու տեսակ արտասանություն. այր որ բարբառներն ունեն ն և ö ձայնավորները, նույն տեղերում գրական լեզվի մեջ էլ կա այդ արտասանությունը. առաջինը հայերեն և ուար բառերի մեջ, երկրորդը միայն ուար անուններն մեջ. ընդհակառակը. այր որ բարբառները զուրկ են այդ ձայնավորներից, նույն տեղերումն էլ գրական լեզուն արտասանում է yu, yo։ Այսպես ձիւն, սիւն (ձյուն,

սյուն), Göthe բառերը արտասանվում են Պոլիս, Կալիֆ, Ախալցըխա. Ղարաբաղ, Թավրիզ և այլն ü, ö ձայներով, իսկ Երևան, Ծփղիս և այլն yu, yo վանկերով. որ համապատասխանում է ճիշտ ռուսական արտասանության։

Սոանկյան երրորդ դիծը հատկացված է խառն ձայնավորներին, որոնց արտասանության ժամանակ լեզվի միջին մասը հպվում է կարծր քիմքի և կտուկի սահմանին. այսպիսով կազմվում է երկու հնչարան. մեկը բերանի հետևի կողմում, մյուսը առաջի կողմում։ Մենք նշանակել ենք այդ գծի վրա երեք աստիճան, որոնցից միջինը մեր գրական լեզվի մեջ ծանոթ ը ձայնն է, որ կա նաև գրաբարի և արդի բոլոր բարբառների մեջ։ Ուրիշ բարբառներ ներկայացնում են երկու ուրիշ աստիճաններ էլ. առաջինը ավելի բաց քան ը, երկրորդը ավելի բաց։ Բաց ը, որ կարելի է նշանակել ը ձևով, գտնվում է Զեյթունի և Հաճընի բարբառում և իր արտասանությամբ բոնում է ը և ա ձայնավորների միջին տեղը. օրինակ, Զեյթունի բարբառով մը՝ «միս», գը՝նագ «կնիկ», Հաճընի բարբառով գընիլ «գտնել», բըյբըսիլ «բորբոսնել» և այլն։

Փակ ը, որ կարելի է նշանակել ը՛, դտնվում է Մարաղայի բարբառում և իր արտասանության փակությամբ նման է ռուսական ы ձայնավորին։

Վիտնեյն իր դասական մեծ քերականության սկզբում ասում է, թե սանսկրիտի ա տառը հնդիկները հնչում են ը, իսկ եվրոպացիք դրում են միշտ a։ Մտիվենսոնը ևս իր մարաթի քերականության մեջ (Bombay, 1868, 4) ասում է, թե առաջին տառի հնչումը, եթե կարճ է, անգլերեն but բառի ձայնավորի նման է (ուստի լիրը ը), իսկ երկարը դնում է ա. նաև թե եվրոպացիք չեն տարբերում այս երկու հնչյունները (ə և a), որով և ինքը գրում է Murathec, մինչ ուրիշ եվրոպացիք ընդհանրապես գրում են Marathi։ Ըստ այսմ հնդիկների այն սովորությունը, որով ə տառը առանձին չեն գրում, դուգադիպում է մեր ը ձայնավորը չգրելու սովորության։

Հին լեզուներից երրայերենը առաջորեն ունի ə ձայնը, որ կոչվում է šewā, և այս բառը ընդունված է նաև ձայնաբանության մեջ՝ նշանակելու համար ə ձայնը։

Եվրոպական լեզուների մեջ լատինական խումբը չունի այս կարգի ձայնավորներ, բացի ռումիներենից, որ հարուստ է ə ձայնով. գրվում է ă. երևի բրըտոն լեզվի մեջ էլ կա միջակ ə ձայնը

(ան՛ս Guillome, Gramm. fr. bret., 6)։ Ուսակերենի մեջ կա միայն նաև ձայնավորի սանձաւորակ տատիճանը (ы), որ պահվում է նաև առաջին վանկում (որ պրծում է ă, ĭ ձևով), լինի բնական և չնախնական։

Նույնը պատահում կա չուվաշերենում (Анмарин, Матер. 7)

Ձիլիի ասկա լեզվի մեջ կա մի ձայնավոր, որ Պրատաերին (էջ 11) նշանակում է ы ձևով և նկարագրում է հետևյալ ձևով. շրթունքները բանալ, ներքևի ատամները վերինների տակ պրած անգամ և այս դիրքով հնչել ы։ Հենց հնդիկական վկայությամբ, "երևի թարքերեն ը կամ ուսակերեն ы ձայնին նման է"։

Սադանական շիլլակ լեզուն էլ ունի ը ձայնավորը, որ դրվատելիքամբ է նկարագրում ատամնատիրոգը (Westermann, էջ 2)։

Ուսակական ցիպանների լեզվում կա մի անսակ ձայնավոր, որ ատամնատիրոգը (Сергиевский, 10) նկարագրում է ալսպես. "Սա մի անսակ e է, սովորական e-ից ատրլեր, հնչվում է բերնի խորքում և նման է ատսական ы-ինա։ Անշուշտ պետք է հատկանալ ə ը։

Գևրմանները ունի մի անսակ ə, որ բառավերջի անշեշտ e ատեի հնչումն է (ինչպես Gabe, alle) և մոտենում է մեր ը ձայնավորին։ Անգլերենը ունի երեք ատիճան ը. ալն է 1. բաց ը, որ պահվում է շեշտալի վանկի մեջ, r բառաձայնից առաջ (օրինակ՝ sir, bird). 2. միջակ ը, որ պահվում է անշեշտ վանկում. ինչպես better, murmur և ալլն. 3. փակ ը՛, որ գրեթե նույնն է ռուսական ы ձայնի հետ. ինչպես pretty, pity բառերի վերջնաձայն y։ Հիպերբորեան դիլիակ լեզվի մեջ կա մի անսակ ə, որ նման է ուսակերեն ы-ին, բայց արտասանվում է բերանն ավելի բաց, ծռնատ առաջ և ատորին շրթունքը իջեցնելով։

Կորսակովը (էջ 5) նիվխյան կամ կորլակ լեզվի մեջ գտնում է երկու անսակ ы, մեկը նման ուսական ы-ին. իսկ մլուսը սրանից ավելի բաց, որ "բանում է ə-ի և ы-ի միջին անդը" (ուրեմն նման Չելիմանի բարբառին)։

Թվում է, թե նույն ը ձայնը (գուցե տարբեր երանգով և երկար). գտնվում է նաև չուքչի լեզվում, որ Բոգորազը (տե՛ս Boas, II. 643) գրում է ă ձևով և նկարագրում է ալսպես. "Երկար և խուլ ձայնավոր, երբ բնականին խոռոչի բոլոր մկանները հանգիստ դրության մեջ են, քիթի հետևի ծակերը փակ, ատամներն ու շրթունքները թեթևակի բացված"։ Նույնը կարճ և փակ. ուսական ы ձայնի նման, գրում է ŭ (տե՛ս անդ)։

Ծափալերենը ունի մի անսակ ə, որ հաճախ շփոթվում է

a ձայնավորի հետ և հավանաբար Զելմունի բարբառի ը ձայնին է համապատասխանում (Bohatta, Gramm. Jav, 13)։ Ջինարենում կա երկու տեսակ ə, որ առաջադրծում են ç, ç (նշանը երկարութեան համար չէ)։

Ըստ Վիտնեյի (Ind. Gramm., § 21.) սանսկրիտի կարճ a ձայնըն էլ ունի ը հնչումը Հնդկաստանում, որ սակայն եվրոպացի ուսումնականները չեն ընդունած։ Դրավիդյան տալու լեզուն ունի ը (Brigel, 1)։

Մոնղոլների մեջ էլ կա շատ ə. շատ դիպքեր կան, ուր գրական մոնղոլերենը ունի e, o կամ a, իսկ ժողովրդական լեզուն դարձրել է ə հատկապես անշեշտ լինելու դեպքում կամ արագ արտասանութեան ժամանակ։

Մեր հարևան լեզուներից վրացերենը չունի ը։ Մյուս լեզուները, քրդերեն, թուրքերեն, ինչպես նաև կովկասյան զանազան լեզուները ունեն առաստրեն ը ձայնը. կան բառեր, որոնց բոլոր վանկերը ə ձայնավորից են կազմված, ինչպես Արմավիրի չերքեզերենով mərpiəčəp "թանաքաման" կաբարդիներենով şəḥatlәktxətl "վավերաթուղթ", թուրքերենով qərdərdəγəməzə "մեր կոտրել տվածը", qəzəlyəγən qərməzələγənə qəzdərdə "հոնի կարմըրութիլնը աստկացրեց" և այլն։

Օսերենում այս ձայնը գրվում է i։

Հայերենի ը ձայնի առանձնահատկութիլնն այն է, որ նա բնավ չի՛ կարող շեշտ ստանալ. այսպես էր գոնե հին հայերենի մեջ, որի հետևանքով նաև արդի գրական հայերենում. օրինակ՝ ճացեր, ճացերի՛, բայց ճացե՛րը։ Սակայն բարբառները շատ դեպքում ունեն շեշտյալ ը՛. ինչպես՝ Պոլսի բարբառով բացասականների մեջ՝ չը՛ կբնար, չը՛ տաճիր, չը՛ պիտի ուաճիմ, աստկական-գերադրական ածականների մեջ՝ կը՛ս-կըլօր։ Ուրիշ բարբառներում կան նաև արմատական ձևեր, ինչպես Շամախու բարբառով՝ Ըզգըկը՛թը շըռշըռ-թըռթը՛ռը ըսկըսվեց (11 ը իրար հետևից, երկուսը շեշտյալ)։

Կան լեզուներ, որոնք գիտեն խառն ձայնավորի կլոր ձևերը, որոնց արտասանութեան ժամանակ լեզուն պահում է վերև նկարագրված դիրքը, բայց միևնույն ժամանակ շրթունքներն էլ կլորակ ձև են ստանում։ Այսպես անգլերենի մեջ կան բաց ə ձայնավորի և փակ ə ձայնավորի շրթնային ձևերը. առաջինը պատահում է շեշտյալ վանկի մեջ b, p, m բաղաձայններից հետո (ինչպես bird բառի մեջ, գոնե ոմանց արտասանութեամբ), երկրորդը՝ անշեշտ

վանկի մեջ. ինչպես July, value բառերի u ասար նայնը կա նաև շվեդերենի մեջ. ինչպես՝ hus "տուն" բառի մեջ. Գերմանե-լենի մեջ էլ շրմնալին ձայնավորներից հետո միշտ ə արտա-սանվում է կլոր շրմունքներով, ինչպես schule, kohle.

Սանսկրտի վերջին փոթր ներկայացնում է կատակային ձայնա-վորների շարքը։ Այս ձայնավորները բնականորեն կարող էին արտասանվել ինչ՝ բայ և ինչ՝ կլորակ շրմունքներով, ինչպես բուա-յիններում։ Բայց բոլոր լեզուների մեջ էլ սահմանափակ կատակային ձայնավորները լինում են միայն կլորակ ձևով։

Ակսելով ə դասակից. սանսկրտի ասիճանը ներկայացնում է ā. որ a-ի և բայ o ձայնավորի միջին աստիճանն է. այս ձայնը գտնում ենք հատկապես անգլերենի մեջ, ինչպես call, caught Lord և այլն բառերում։ Շվեդերենում կա և պրոմում է ā։ Նայնը կա նաև դանիերենում. ուր պրոմում է aa կամ å (հին կամ նոր ուղղագրությամբ)։ Հանգստերենի մեջ էլ կարճ a ձայնը հնչվում է իբր ā։ Բանական ասատուրեն գտնում է ջամալերենում և այլն։ Հինդուստանի լեզվի մեջ վանկի վերջի a սահմանափակ արտասան-վում է իբր ā (Bonnerjia, Gramm. hindi, 2)։

Հայերենը ալսպիսի ձայնավոր չունի. բայց Վանի բարբառը գրեթե ամեն շեշտակալ a հիմն չի վերածվում ā-ի, հնչվում է իբր å։ Կարելի է գտնել նաև ալս ձայ-նավորի ավելի բայ և ավելի փակ աստիճանները. ալսպես ավելի բայ աստիճանը գտնում ենք ֆրանսերենի մեջ, իսկ ավելի փակ աստիճանը անգլերեն dog, not, top և այլն բառերի մեջ, որոնց մեջ ձայնավորը ներկայացնում են ɔ ձևով (կիսաբաց o)։

Ավելի վեր գտնում ենք o ձայնը, որ ունի երեք աստիճան. բայ ô, միջակ o և փակ ó. բայ ô գտնում ենք ֆրանսերենում շեշտի տակ՝ r բաղաձայնից առաջ, ինչպես՝ nord, porte և այլն բառերի մեջ. միջակ o գտնում ենք ֆրանսերենի և գերմաներենի մեջ, ինչպես ֆրանսերեն choc, homme, police, գերմաներեն Gott, Sommer, Sonne և այլն. փակ ó գտնում ենք նույնպես ֆրանսերենի և գերմաներենի մեջ, ինչպես՝ ֆրանսերեն Beau, Figaro. գերմաներեն Sohn, Kohle և այլն։

Աֆրիկյան գահոմի կամ ֆոնգբե լեզուն ունի այնքան փակ ó, որ գրեթե u է լսվում (Butavand, 6)։

Դան լեզուները, որոնք չունեն o ձայնավորը. ալսպես է արա-բերենը, որ պիտի միայն երեք ձայնավոր՝ a, i, u. ըստ իս խալ-դինների լեզուն էլ չուներ o, այլ միայն u, ինչպես փորձել եմ ա-

պացուցել իմ մի հոդվածում, տպված "Հանդէս ամսօրեայ", 1907, էջ 93—94 ("Խալդերենը o ունե՞ր"): Այսօր էլ ուսերենը թեև գիտի շեշտի տակ o, բայց շեշտից առաջ գտնված բոլոր o-երը հնչում են a, իսկ շեշտից հետո եղած o-երն էլ թուլ հնչումով, իբր ə. այսպես о́коло, мыло, лаборато́рия և այլն:

Բանաոու լեզուների մեջ կա մի տեսակ o, որ այնքան փակ է, որ լսողը դժվարանում է որոշել o՞ է լսում թե u: Գրեթե նույն բանն է նաև շվեդերենի, դանիերենի և առհասարակ հյուսիսային լեզուների փակ o ձայնը (Poestion, Dän, 12, Schwed, 10):

Հայերենը չունի o ձայնավորի դանազան աստիճաններ. թե՛ գրաբարի, թե՛ աշխարհաբարի և թե՛ բարբառների մեջ կա միայն մի տեսակ o, որ անշուշտ վերոգրյալներից համապատասխանում է միջակին: Եթե միջին դարի հայերենում ունեինք երկու տեսակ o (n և o), տաոի տարբերությունը պետք չէ շփոթեցնե մեզ, դրանցից առաջինը այն ժամանակի արտասանությամբ երկբարբառային uo էր, իսկ երկրորդը միայն o, որ և համապատասխանում էր եվրոպական o-ին: Եթե n տաոը հնչված լիներ o, հայերը պետք չպիտի ունենային եվրոպական այբուբենից o տաոը փոխ առնելու:

Իմ «Հայոց լեզվի պատմության» Բ հատորում (240) խոսված է հին հայոց n և au ձայների մասին, որոնց համար շատերը սխալ կարծիք ունեն: Մեսրոպյան շրջանում n հնչվում էր միշտ և ամեն տեղ o, իսկ au հնչվում էր au (երկբարբառ) և ոչ բնավ o: Ժամանակ անցնելով, գրաբարի n-ն դարձավ uo (երկբարբառ), իսկ au դարձավ o. ուստի հայերն ստիպվեցին պահել n=uo, իսկ o-ի համար փոխ առնել հունական o տաոը՝ նույն հնչումով:

o ձայնը պակասում է սումերերենի, արաբերենի և ասորերենի մեջ:

Աֆրիկյան նիամ-նիամ լեզուն, բացի o, u և ü ձայնավորներից, ունի նաև մի ուրիշ ձայն, որ գտնվում է o-ի և u-ի միջև (Lagae, 70):

o հնչյունից վերև գտնում ենք u, որի համար ունենք նույնպես երեք աստիճան. բաց ü, միջակ u և փակ û. առաջինը գըտնում ենք գերմաներենի և անգլերենի մեջ, ինչպես գերմաներեն Hund, Kuss, անգլերեն put, foot և այլն. ֆրանսերենի մեջ չկա: Միջակ u գտնում ենք ֆրանսերենում, անշեշտ վանկերի մեջ. ինչպես couper, sourire և այլն. փակ û գտնում ենք ֆրանսերենի և գերմաներենի մեջ, շեշտյալ վանկերում, ինչպես ֆրանսերեն loup, poule, գերմաներեն du, gut, Huhn և այլն: Կատկային ձայ-

նախորդների ամենատիպական առանձնանն է, որի ժամանակ լեզուն բռնում է ամենաբարձր դիրքը և քաշված է բոլորովին հետ, շրթունքները նեղացած են դեպի առաջ և ձևացնում են ամենափոքրիկ բացվածքը, իսկ լեզվի և շրթունքների միանալը դանդաղ են ամենաթույլ առանձնանում։

Հայերենի մեջ, ինչպես o, նույնպես և u ունի միայն մի առանձնան, թե՛ դրսերեի, թե՛ աշխարհաբարի և թե՛ բարբառների մեջ, որ համապատասխանում է վերոհիշյալներից միջակ u առանձնանին։

Առայինք, թե կատալին ձայնավորները բնականաբար կարող էին հնչվել թե՛ կլորացած և թե՛ շրթունքներով, բայց թե առհասարակ լեզուների մեջ ընդունված է միայն շրթնային ձևը։ Մակայն անգլերենում պատահում է և հորիզոնական ձևը. այսպես nut, lub, come բառերի մեջ ձայնավորը հնչյում է միջին o ձևով, բայց առանց շրթունքները կլորացնելու, որով թեղնում է a ձայնավորի ապավորությունը։ Ամերիկյան dog, not, top և այլն բառերի o ձայնավորը շատերն արտասանում են նույնպես առանց շրթունքները կլորացնելու, որով ստացվում է դարձյալ a-ի մոտիկ ապավորությունը։ Ավստրալիայի Կամիլարոյ լեզվում a հնչյունը շրթնյում է u հնչյունի հետ (Ridley, 4)։ Ճապոներեն լեզվի մեջ u արտասանվում է առանց շրթունքները կլորացնելու, պահելով միայն մի նեղ ճեղքվածք (Les langues du monde, 249)։

Այս բոլոր նկարագրություններից կարելի է հետևցնել այն, որ մարդկային խոսողության մեջ ձայնավորները ներկայացնում են երանգների մի հարաբերություն դանդաղանության. ինչպես ջութակի մի թելի մի ծայրից սկսած մինչև մյուս ծայրը լուրաքանչյուր կետ ունականորեն մի առանձին ձայն է, նույնպես և՝ ողանկյան գծերի լուրաքանչյուր կետը։ Բնչ ձայնաբանը նկարագրել է 90 ձայնավոր և ասում է, թե այս թվով դեռ ձայնավորների քանակը սպառած չէ[1]։ Բայց ինչպես որ մարդկային ականջը երաժշտության համար այդ թելի ամբողջ երկարության մեջ որոշ կետեր միայն ընդունել է իբրև անջատ նոտա (ընդամենը 2 ութնյակ կամ առավելն 3 ութնյակ=21 ձայն), նույնպես և խոսողության և արտասանության մեջ ընդունել է միայն որոշ կետեր, իբրև անջատ հնչյուն։ Ամենից աղքատը արաբերենն է, որ գիտե միայն երեք ձայնավոր՝ a, i, u. այնինքն՝ լուրաքանչյուր գծից

[1] Panconcelli-Calzia, Experimentelle Phonetik, 98.

մի ձայն (կան և սրանց երկարները)։ Տարբերությունը նրանումն է որ մարդկային ականջը երաժշտության համար ամեն տեղ էլ գրեթե նույն նոտաներն է ընտրել, իսկ արտասանության համար հնչյունները լեզվից լեզու, նույնիսկ բարբառից բարբառ տարբերվում են։ Այս տեսակետով նայելով հարցին, եռանկյան կողերի վրա մեր նշանակած կետերը և նրանց մասին մեր տված նկարագրությունը կատարյալ չեն և չեն կարող լինել. օրինակի համար, ասացինք, որ փակ ŭ գտնվում է թե՛ ֆրանսերենի և թե՛ գերմաներենի մեջ. բայց այդ երկու լեզուները բոլորովին միևնույն ձևով չեն հնչում այդ ձայնը. ֆրանսերենի մեջ ŭ հնչման ժամանակ շրթունքները ավելի առաջ են ընկած, քան գերմաներենի մեջ.- նույնպես բաց ŭ գտնվում է թե՛ գերմաներենի և թե՛ անգլերենի մեջ, բայց անգլերեն ŭ նվազ շրթնալին է քան գերմանականը. -միջակ o գտնվում է թե՛ ֆրանսերենի և թե՛ գերմաներենի մեջ, բայց գերմանականը մի քիչ ավելի փակ է քան ֆրանսականը. և այսպես մյուս ձայնավորներն էլ։ Նույնպես կան ձայնավորներ, որոնք ներկայացնում են միջին դիրք. չուվաշերենի մեջ (Ашмарин. Матер. 10) կա մի տեսակ i, որի միջին մասը ավելի "կարծր" հնչյուն ունի. տառադարձվում է ռուսերեն и (i^{3}), ուրեմն բռնում է i և ə ձայների միջտեղը. կա մի տեսակ e, որ բռնում է e և ō ձայների միջին տեղը (անդ, էջ 2)։

Շատ կարևոր է այն հանգամանքը, թե մարդիկ խոսակցության ժամանակ բերանը բաց և շարժումները ազա՞տ են խոսում, թե ընդհակառակը, բերանը կիսափակ, շարժումները թուլլ ու տկար։ Առաջին դեպքում ձայնավորները պահում են իրենց բնականոն վիճակը և պարզորոշ լսվում են. երկրորդ դեպքում նրանք խուլ են, անորոշ, և անվարժ մարդը դժվար կարող է որոշել, թե հնչված ձայնը o՞ է թե u, կամ e՞ թե i։ Այսպես են, օրինակ, անգլիացիք, բայց նկարագրությունից երևում է, որ Ամերիկայի հնդիկները այս կետում գերազանցում են։ Գոդդարդն հուպա լեզվի ուսումնասիրության մեջ ասում է, թե հուպան խոսում է բերանը կիսովին փակած. և իբր դրա արդյունք՝ ձայները բաց ու որոշ չեն, այլ „muffled (էջ 97)"։ Բոասը ամերիկյան լեզուների ընդհանուր ուսումնասիրության մեջ ավելացնում է (էջ 78), թե հստակ տարբերություն o և u ձայների, ինչպես և e և i ձայների մեջ՝ չկա։ Բառավերջում ձայնավորների արտասանության ժամանակ բերանը միայն արտասանության դիրքն է վերցնում, բայց չի արտասանում. և այսպիսով բառավերջի ձայնավորները կորչում են։ Այս-

պես նաև I, III, II բայաձևերը, որոնք ձևավորվում են՝ առանց ասպեկտ արտահայտվելու։ Վերջնական ընդհանուր ձևերը լրացվում են ս՛չ ֆև, օրինակ՝ II", ապ II"։

Նույն նկատառումները նաև ամերիկյան ալգոնկիներեն լեզվի համար. լեզուն խտանում է անհապաղման ապավորման. շրթհանգները անտարբեր են ու կրավորական. շրթհանգները բացատր, առաջացատր և կրատացատր չտիտանդ ակար են. խոռոչացման միջոցին շնչի արտարերության անուղղ է. բառերն ավարտում են միայն ինչ ջանք ցուցաբերելով, հետո ուժը թուլանում է և վերչաձիս մոտում անկենդան շնչի մեջ. ալգոպիասի բառի վերջին ձայնավորներն անլսելի են մոտում և ձայնի ելևէջը ոչ հատակ և ոչ էլ սուր (Boas, Handbook, I, 741)։

Բլեկսոնը (էջ 22) խիստ լեզվի մասին խոսելով, ասում է ֆև "ինչպես շատ ամերիկյան լեզուների մեջ, նաև խիստ լեզվում ձայնավորները հնչվում են շատ անորոշ ձևով. o շրթհվում է u-ի հետ. e շրթհվում է i-ի հետ. e շրթհվում է ö-ի հետ. հատկապես դժվար է pôung "կրակ" բառի հնչումը"։

Հնդիկյան սինդհի լեզվի մեջ, որ ամեն բառ ձայնավորով է վերջանում, երբ այս ձայնավորը կարճ է, ապա քան տիպ է հրնչվում, որ ներթապյիկ հատիվ են լսում։ Սրանք դրվում են մանրատառ (Grierson, հատ. 8, մաս 1, էջ 8)։

Նարիներեն լեզվում կան չորս անորոշ ձայնավորներ, որոնք ստամֆոսերուղը (Kaiczor, 1) նշանակում է ę, ę, o̧ o̧. առաջին երկուսը գտնվում են e և i ձայների միջև, մյուս երկուսն էլ o և u ձայների միջև. սրանց համար ասում է, ֆև անորոշ ձայներ են և լավ չեն լսվում։

Ձայնավորների տեսակների նկարագրությունը վերջացնելու համար, մնում է մեզ խոսել ռնգային ձայնավորների մասին։ Այն բոլոր ձայնավորները, որ նկարագրեցինք վերևում, արտասանվում են միմիայն բերանի հնչարանով, այսինքն երբ կատիկը բարձրացած է և բթային անցքը փակ։ Սակայն երբ կատիկը իջած և քթային անցքը բաց է, հնչարանը դառնում է երկու, օդի հոսանքը անցնում է միաժամանակ թե՛ բերանի և թե՛ քթի միջով և այն ժամանակ բոլոր ձայնավորները դառնում են ռնգային։

Առանձյան մեջ մենք ռնգային ձայնավորների համար ո՛չ մի դիծ չենք դնել, բայց տեսականորեն ըմբռնելի է, որ ամեն մի ձայնավոր կարող է ունենալ իր համապատասխան ռնգայինը։

Ռնգային ձայնավորները ծագում են հետևյալ ձևով. երբ որևէ

ձայնավորի հաջորդում է ն կամ մ ռնգականը, այդ բաղաձայնի արտասանության ժամանակ կատիկը պետք է որ ցած իջնի. եթե այդ էջքը կատարվի մի քիչ ավելի շուտ, երբ դեռ գործարանները ձայնավոր արտասանելու դիրքի մեջ են, բնականաբար կստացվի այդ ձայնավորի ռնգայնացումը։ Որքան ավելի առաջ լինի այդ կանխումը, այնքան էլ ավելի երկար կլինի ձայնավորի ռնգայնությունը և ընդհակառակը։

Քննությունները ցույց են տալիս երկու փաստ.

ա) Ամեն լեզվի մեջ, ամեն մի ձայնավոր, որին հաջորդում է որևէ ռնգական բաղաձայն, անշուշտ թեկուզ փոքր չափով ռնգայնացած է լինում. այսպես, օրինակ, անվանական, բավականաճաղ բառերի մեջ շեղատառ ա-երը մասամբ ռնգային են։

բ) Ցածր ձայնավորները (a, ò, è) ավելի շուտ են ենթարկվում ռնգայնության, քան բարձր ձայնավորները (i, é, ù, ó, ù). սրա պատճառն այն է, որ կատիկի բարձրացումը ուղիղ հարաբերական է լեզվի բարձրացման, այսինքն որքան ավելի բարձր է լեզուն, այնքան էլ ավելի բարձր է կատիկը, և որքան ավելի ցածրը է լեզուն, այնքան էլ ավելի ցածր է կատիկը. ուրիշ խոսքով, առաջին դեպքում քթի անցքը ավելի է փակ, քան երկրորդ դեպքում, հետևաբար և e ավելի ընդունակ է ռնգայնության, քան i և a ավելի ընդունակ է քան e և այլն։ Այսպես, օրինակ, ֆրանսերենում կա ռնգային ę, բայց չկա i, կա ռնգային õ, բայց չկա ų։ Հին սլավերենում կան և առանձին տառերով նշանակվում են ę, ǫ ռնգայիններըը, բայց չկա ուրիշ ռնգային ձայնավոր։ Լեհերենում կան և առանձին տառերով նշանակվում են ą (որ հնչվում է ǫ) և ę, բայց չկա ուրիշ ռնգային։ Աֆրիկյան մանդինգ լեզվի մեջ բոլոր ō ձայնավորներն ունեն ռնգային ձև (ą, ę, ǫ, i, ų) միայն ū չունի ռնգային (Delafosse, 56)։

Այս իրողություններից հետևում է այն, որ ամեն լեզվի մեջ էլ ռնգային ձայնավորներ կան, բայց դրանք առհասարակ լինելով մասնական, առանձին ուշադրություն չեն գրավում։ Երբ կատիկի էջքը այնքան կանխում է, որ սկսում է ձայնավորի արտասանության հենց սկզբից, այդ պարագային ձայնավորը իր ամբողջ տևողության մեջ լինում է ռնգային և կոչվում է ռնգային ձայնավոր։

Քիչ լեզու կա, որ ունենա ռնգային ձայնավորներ և այն էլ ձայնավորների բոլոր երանգները։ Այս կողմից ամենահարուստներն են պորտուգալերենը, ղպտիերենը և ամերիկյան տուպի լեզուն. հետո գալիս են ֆրանսերենն ու լեհերենը։ Պորտուգալերենը

և պարսիկներն ունեն 5 տեսակ ննդալին ձայնավոր, այն է ą ę ǫ ǫ ų։ Միշտ ասպես է նաև ամերիկյան տեսան լեզուն (Boas, Handbook, I, 880)։ Թրանսներինն ունի չորս ննդալին, այն է ą ę ǫ ų ũ, բոլորն էլ սահասարակ բաց տատիճանով. բարբառներն ունեն նաև ã, ẽ, ĩ, ũ ննդալիններըր։ Ալտայա, օրինակ, ĩ դրամթյան չունի ֆրանսերենում, բայց կա պրեսիանսպատում։ Ինդալին ձայնավոր ունի նաև տանսկրիտը, որի շարունակությունն է հինդուստանին և կոչվում է anuswara կամ anunasika (Bannesjia, Gramm. hindi, 2)։ Ինդալին ձայնավորներով հարուստ է չեչեններենը, որ ունի ą, ę, ĩ և այլն (Dirr, Einführung, 36)։

Թրանսերենի և պորտուգալերենի ննդայիններն ասրբերությունն այն է, որ տատիններըր համասես են, այսինքն արտասանության սկզբից մինչև վերջը ներկայացնում են միևնույն հնչումը, իսկ երկրորդների մեջ այդ հնչյունից հետո սկսում է մի ննդական բաղաձայն n, որի արտասանության ժամանակ բերանն այլևս չի գործում և շունչը գուրս է գալիս միմիայն քթից։

Կա նաև ննդալին ձայնավորների մի սրիշ տեսակ, որ կարելի է կոչել կիսառեզային. սրպիսի ձայնավորներ ունի մոնղոլերենը. արտասանության ժամանակ կատիկը թեթև իջնում է ցած և շունչը միաժամանակ անցնում է թե՛ քթից և թե՛ բերանից (տե՛ս Владимирцов, Срав. грамм., 56)։

Ըստ Լ. Ադամի (էջ 6), ամերիկյան տասպի լեզուն ունի բոլոր ձայնավորների ննդալիններ, նալնիսկ կոկորդական I ձայնի, որի նկարագրությունը կասննենք քիչ հետո։

Մեքսիկալի օջիմի լեզվով ձայնավորներր արտասանվում են 3 ձևով. առաջին ձևր կոչվում է պարզ. սրանք են a, e, i, o, u իրենց սովորական հնչումով.—երկրորդ ձևր ննդալինն է. սրպես են a, e, i, u. բայց չկա ննդալին o. երրորդ ձևր կոչվում է creux "փոս". սա մի զարմանալի հնչյուն է, որ ունեն a և e ձայնավորները։ Փոս a արտասանվում է բերանը լավ բաց արած և ուժեղացնելով ձայնը, ինչպես մակը, որ հարանջում է. իսկ փոս e ձայնը հնչվում է նուլնպես լավ բանալով բերանը և գուրս բերելով ձայնը՝ տալով նրան ոչիսարի մալունի նմանություն. դրա համար էլ սրա ձայնը կոչվում է "մալուն"։

Սրանցից գուրս կա նաև երկու տեսակ կոկորդային հնչյուն՝ e և u. կոկորդային e արտասանվում է առամնների վերի շարքը ցածրի շարքին սեղմած և արտաբերելով ձայնը մի քիչ բռնի (forcée) կերպով կոկորդից։ Սրա նման է նաև կոկորդային u ձայնը, որ հնչվում է նուլնպես առամնները սեղմած և կոկորդի ներ-

սից դուրս բերելով ձայնը, ավելի աղոտ (obscur) քան նախորդ e ձայնն է։

Բաղաձայններից պակասում են l, r, s. վերջինիս փոխարեն դնում են z. բայց կա č և š. չկա նաև f և նրա փոխարեն գրվում է ph (այն է p'=փ) (X. Elements)։

Վերջապես կա ռնգալին ձայնավորների մի երրորդ տեսակ, որ գոյություն ունի ամերիկյան հնդկացիների մոտ և արդյունքն է նրանց բերանախոռակ արտասանության։ Ռնգալին ձայնավորի արտասանության միջոցին շրթունքները փակվում են, և այն ժամանակ փոխանակ արտաբերվելու n ձայնը, լսվում է m. այսպես u^m փոխանակ u^n (Boas, Handbook, I, 78)։

Աֆրիկյան դագոմբա (բանտու) լեզուն ունի a, e, i, o, u ձայնավորների ռնգալին շարքը։ Նաև ունի 3 երկհարբառ, որոնց մի կեսը ռնգալին, մյուս կեսը պարզ է. այսպես են áõ, õõ, ũo (Fisch. 3)։

Աֆրիկյան դահոմե կամ ֆոնգհե լեզուն ունի a, o, è, é, u ձայնավորների ռնգալիննները (Butavand, 6)։

Սուդանական շիլլուկ լեզվում l, m, n, r ձայները կարող են ստանալ տոն և կազմել վանկ. ուստի ուսումնասիրողը (Westermann, 6) համարում է նրանք ձայնավոր։ Նմանապես աֆրիկյան գանգ լեզվով ռնգալին բաղաձայնները և l կարող են տոն ստանալ, ուստի ձայնավոր համարելի են (Westermann, 153)։

Հայերենը իսկական ռնգալին ձայնավորներ չունի. բայց կան բարբառներում. այսպես՝ Պոլսի բարբառում մանր, ծանր, խանգրիլ բառերը արտասանվում են mạrə, jạrə, xạγrll և այլն։ Ավելի հարուստ է Ալանբեգի ենթաբարբառը։

Հայերենը ունի նաև ը ձայնի ռնգային ձևը, որ գտնվում է միմիայն հր դրական ու հարցական ձայնարկության մեջ. այս ձայնարկությունները կարելի է արտասանել երկու ձևով. նախ բերանը բոլորովին փակ, ն շունչը և ռնգային ձայնը միմիայն քթից դուրս տալով. այս պարագային բնականաբար ձայնավոր չկա. երկրորդ՝ բերանը բաց և կատիկը ցած. այս ժամանակ լեզուն ավելի ցած է լինում քան սովորական ը արտասանության մեջ և ռնգային շունչը դուրս է գալիս քթից. ստացվում է hə ձևը։

Այն բոլոր ձայնավորները, որոնք նկարագրեցինք վերևում, կարող են ունենալ նաև իրենց երկարները։ Երկար ձայնավորներ ունեին հատկապես հին լեզուները, ինչպես կամիսերենը, սանսկրիտը, զենդերենը, հունարենը, լատիներենը, հին իռլանդերենը, գոթերենը, եբրայերենը, ասուրերենը և այլն։ Հին զենդերենում (գաթա) բոլոր բառավերջիկ ձայնավորները երկար են (Tackson, 8)։

Սանսկրիտը պիտի դասեցնենք կարճ ու երկար a, ā, i, ī, u, ū, նաև ձայնավոր r, ṛ, խոկ ձայնավոր l ունի միայն կարճ ձևը (երկարը գործածված չէ)։ Դալով e և o ձայներին, որոնք իրեն սանսկրիտ քերականության մեջ համապատասխանում են երկբարբառ, բայց հնչման մեջ սովորական պակ ձայնավորներ են (V. Henry, Elem. Sans., 2) և երկար ձևեր չունեն։ Դրավիդյան լեզուների մեջ կան որոնց երկարները, ինչպես անկատ լեզվում կան տատանձին-ատանձին o և o (Lakshminarasayya, 5—7)։ Հանարեներ վատաց պիտի e (ղ) և o (ա), որոնք ē և ō ձայնավորների երկար ձևերն են։

Դրավիդյան տուլա լեզուն էլ ունի ձայնավոր r, ṛ, l։ Ալս լեզուն ունի միշտ 4 շարք բաղաձայն b, bh, p, ph և միշտ մի ռնգալին, ճիշտ նման սանսկրիտի (Brigel, 1)։

Ըստ Կլեյնի (Klein Sumerische Sprachlehre, 5), սումերեներն էլ ուներ երկար ու կարճ ձայնավորներ, սակայն գրության սիստեմը անբավարար լինելով, չի կարողացել հաստատել այդ։ Երկար ձայնավորների գոյության ապացույց է այն, որ հաճախ արձանագրության մեջ a և e ձայնավորները երկու անգամ են գրվել։

Նոր լեզուներից շատերը դարձ են երկար ձայնավորներից բայց շատերն էլ ունեն. ալսպես՝ ֆրանսերենը, գերմաներենը, բրետոներենը, սերբերենը, արաբերենը, հայկականը, շվեդերենը, դանիերենը ունեն կարճ և երկար ձայնավորներ։ Հնդկական սինհալի լեզուն ունի բոլոր ձայնավորների երկար ձևերը, նաև ē երկար (Gleger, 11)։ Հիպերբորյան լուկադիր լեզուն ունի իր հինգ ձայնավորների կարճ ու երկար ձևերը (Jochelson, 100)։ Սլավակերենն ու չեխերենը ունեն a, e, i, o, u, y ձայնավորների երկար ձևերն էլ։ Դանիերենը ձայնավորների բոլոր տեսակների, մինչև անգամ բաց և փակ ō ձայների, ինչպես նաև å ձայնավորի համար ունի կարճ ու երկար ձևեր։ Զարմանալի է, որ աֆրիկյան նիամ-նիամ լեզուն, որ գիտի ā, e, ə, i, o, u և ū ձայնավորները, սրանց երկարներից միայն երկուսը գիտի (a և o), բայց երբեմն վերջնաձայն ձայնավորները շատ են երկարում (Lagae, 70)։ Յակուտերենն էլ ունի ō և ū ձայնավորների երկարները, ինչպես են գերմաներեն führen, Ohn և այլն։ Օստյակերենը ունի բոլոր ձայնավորների կարճ ու երկար ձևերը, նրանց մեջ նաև երկար ō և ū (Castren, 1)։

Ռնգալին ձայնավորներն էլ կարող են ունենալ երկար ձևեր.

ալսպես, հոտենդոտյան նոսա լեզվի մեջ ընգալին ձայնավորները միշտ երկար են (Seidel, Hspx, 1)։ Կան նաև սրանցից դուրս կարճագուն ձայնավորներ, որոնք նշանակվում են a̯, e̯, i̯, o̯, u̯, այս ձայնավորները դտնվում են r, n, m նայերից առաջ (Seidel, Hspr., 1)։ Աֆրիկյան աշանտեն լեզվում բոլոր ձայնավորները (a, e, i, o, u), ինչպես նաև նրանց համապատասխան երկարները կարող են լինել ընգալին, ինչպես ą, ą̄, ę, ę̄ և այլն (Christaller, 2)։ Աֆրիկյան ազանդե կամ նիամ-նիամ լեզուն (որ տարբեր է նախորդից), ունի ընգալին ą, ę, o̧, u̧. իսկ նրանց երկարներից միայն ē, ī, o̧ (Langae., 70)։ Մոնդոլերենում էլ բոլոր ձայնավորները՝ կարճ ու երկար, ունեն իրենց ընդալին ձևը (ą, ę, i, o̧, u̧ և ą, ę, i, o̧, u̧)։

Մելանեզյան ֆիտ լեզվով շատ սովորական է ձայնավորի կրկնությունը, ինչպես taa "վատ", tee "մեկ", bii "սկսել", foorua "նավ", ruruu "սիրտ" և այլն (Ray, 498)։

Աֆրիկյան էվե լեզվով բոլոր ձայնավորները, թե՛ կարճ և թե՛ երկար, կարող են դառնալ ընգալին. այսպես ã̄, ã́, e, ẽ̄, ū, ṹ և այլն (Westermann, 2)։

Այսպես նաև աֆրիկյան գալա լեզվում բոլոր ձայնավորները, թե՛ կարճ և թե՛ երկար ունեն իրենց ընգական ձևը (Westermann, 5)։

Ընդհանրապես երկար ձայնավոր ասելով հասկանում ենք կարճի կրկին տևողությունը. բայց լեզուները կարող են այս կողմից էլ դանազանվել իրարից. այսպես, հունգարերենի երկար ձայնավորները (ā, ö, ő, ū, ű, ī) ավելի երկար են, քան հնդեվրոպական լեզուներինը։

Հայերենը երկար ձայնավորներ չունի. այսպես նաև վրացերենը և այլ կովկասյան լեզուներ, ինչպես և թուրքերենը, բասկերենը։

Ինչպես կան լեզուների մեջ երկար ձայնավորներ, որոնք մյուսների կրկին տևողությունն ունեն, նույնպես կան կարճագուն ձայնավորներ, որոնք սովորական ձայնավորի կարճ ու խուսափուկ արտասանությունն ունեն. այսպես է Աֆրիկայի հոտենդոտների նամա լեզվի մեջ. ուր կան թե՛ սովորական աստիճանի և թե՛ երկար ձայնավորներ։

Երկար ձայնավորների արտասանության մի այլ ձև է ներկայացնում ամերիկյան ցիմշիան լեզուն, ուր ամեն մի երկար ձայնավորից հետո ձևանում է նաև մակաբույծ թույլ արտասանված

մի կարճ ձայնավոր՝ նաև հրանցի. ալսպիս ôu, ôö, am, aé, eé, ii (բաս Boas, Handbook, 289)։

Երկար ձայնավորների արտասանության մի այլ ձև էլ ներկայացնում է մանդալիևնը, ուր ձայնավորը երկարաձգվում է, իբր երկար միացած երկու նմանատիպ կարճ ձայնավոր և միաժամանակ լսվում է կոկորդային շանչ. ալսպես a դառնում է agxa, e դառնում է egxe և այլն (Клюкин, Ключ мощ., 13—14)։ Սրա համար է, որ ժողովրդական մանդալիևնի մեջ հնչվում է bator, xarul, որոնք պրակտ մանդալիևնում պրվում են bagator, xaragul, և փոխառության ենթարկվելով ռուսերենին, դառնում են богатырь, карауль։

Ձայնավորների անաղարտ մի ձև է այն, որ դանում ենք կովկասյան լեզուների մեջ. a, e, i և այլն ձայնավորները արտասանվում են խոչակի սեղմումով. Երոթ (Einführung, 33) ալս ձայնավորը կոչում է gespannte Vokale և առանձնացնում a, e, u և այլն։ Ուսումնասիրելով ալս ձայները, կրում եմ "a, „e, "i ձայների ապաթորության, բայց ինքը դիտակցում է, որ այդպես չէ. տարբերն են "a և a. առաջինի մեջ " միայն ձայնավորի սկզբին է դանվում, երկրորդը ձայնավորի ամբողջ անդրադարձման մեջ։ Ալս կարդի մի i դանում է Լ. Ադամը ամերիկյան ասպն լեզվում (էջ 4). ալս ձայնավորը, որ ինքը գրում է y, ըստ հեղինակի բացատրության, հնչվում է կոկորդի խորքը սեղմելով (restrigiendo el fundo de la garganta) և նրա հետևից գալիս է մի անսակ ազմակ, որ գրում է g (իբր yg)։ Ալս ձայները անի նաև իր անգլերեն ձևը (էջ 6)։ Կոկորդային ձայնավորներ գտնվում են նաև Մալիա կղզու լեզվում, ուր գրում են ą, ę, į, ǫ, ų ձևով (Roudanovsky, 6)։

Նալնպիսի մի երևալի դանում ենք նաև ամերիկյան կիրիրի լեզվում. ալտեղ ձայնավորները, բացի սովորական հնչումից, ունեն նաև կոկորդային թմանձր հնչում, փակ շրթունքներով։ Դարեյենցը (էջ 6) ալս ձայնավորները նշանակում է ą. i և այլն և նկարագրում է ալսպես "mit einem gutturalen Ton in der Kehle, oder mit dem dicken Ton mit geschlossenen Lippen ausgesprochen Werden":

Ամերիկյան լուրջ լեզվում ընդհակառակը ձայնավորները ունեն անորոշ մի հնչում. i հնչվում է այնպես որ հաճախ լսվում է e-o հնչվում է այնպես, որ լսվում է a, իսկ o գրեթե անգլերեն aw. մյուս ձայնավորներն էլ ըստ ալմ (Kroeber, 415).

Ուսիկ լեզվի մեջ, ըստ Շննլչերի (էջ 84—85), ձայնավորները, բացի կարճ ու երկար ձևերից, ունեն նաև 3 ուրիշ տարբեր ձևեր. այն է ընդմիջված (մի տեսակ) և շնչեղ ընդմիջված (երկու տեսակ) ձայնավորներ։ Ընդմիջված ձայնավորները նրանք են, երբ արտասանության ժամանակ կոկորդը սեղմվում է, ձայնավորը դադարում է, անմիջապես հետո շարունակվելու համար. այսպես a—a o—o, i—i, o—o *և այլն։ Շնչեղ ընդմիջված ձայնավորն այն է, երբ այդ ընդմիջումից հետո, ձայնավորի երկրորդ մասը սկսվելու ժամանակ լսվում է մի տեսակ* h *ձայն. h շունչը կարող է դրվել ընդմիջումից հետո, ձայնավորի երկրորդ մասի սկիզբը իբր* a—ha *(առաջին տեսակ) և կամ ձայնավորի առաջին մասից հետո, ընդմիջումից առաջ՝* ah-a *(երկրորդ տեսակ)։ Այսպես նաև* o-ho, oh-o, u-hu, uh-u *և այլն։ Հեղինակը զգուշացնում է սակայն, թե պետք չէ այս բոլորը երկվանկ համարել։*

Բառի կեսին դադար տալու երևույթը ունի նաև նիմիլյան (կորյակ) լեզուն, ինչպես բազաձայնից, այնպես և ձայնավորից հետո, ըստ Կորսակովի (էջ 9). ինչպես at-an „շուն", yun-av „ճըշմարիտ„ loc-uk „տեսնել"։ *Ժբսխստաբար հեղինակը չի տալիս երևույթի մանրամասն նկարագիրը, ինչպես նախորդն է։*

Մինչև այստեղ մենք խոսեցինք ձայնավորների բնախոսական հորինվածության մասին. այժմ պետք է քննենք, թե ի՛նչ է նրանց էությունը բնագիտական և լսողական տեսակետով։ Նշանավոր ձայնաբան և բնագետ Հելմհոլցը, հնչարանի միջոցով քննելով ձայնավորները, գտնում է, որ.

ա) Միևնույն ձայնավորի հնչական տարբերությունը զանազան մարդկանց մոտ՝ առաջ է գալիս ձայնավորին ընկերացող հարմոնիաների անհավասարությունից, ճիշտ այնպես, ինչպես միևնույն ձայնը տարբեր նվագարանների վրա.

բ) Ձայնավորների իրենց տարբերությունը առաջանում է տարբեր նոտաների բաղադրությունից. այսպես՝

a	ä	é	ı	o	ō	n
si^4ь	sol^5	fa^3	fa^2	si^3ь	do^4#	fa^3
	re^4	si^5ь	re^6		fa^3	sol^5

Ըստ այսմ, երդեցողության մեջ նույն ձայնավորի նոտան երգահանը դրել է այնպես, որ համապատասխանում է հիշյալներին, երգիչը կարող է լինում իր երգի մեջ նույն ձայնավորը շատ

պայծառ գույս բևեռ, տպտ թև ոչ ձայնավորը վատ է լսվում կամ երբեմն սահմված է լինում նրա փոխարեն մի ուրիշ ձայնավոր պետք

Մենք գիտենք, որ յուրաքանչյուր մարմնի հնչման մեջ կա մի հիմնական ձայն, որ սակայն ընկերացած է լինում դանազան հարմոնիաներով։ Այսպես է նաև, քան Հելմհոլցի, խոչակը, որ ուրաքրում է դանազան ձայների մի խառնուրդ, որի մեջ մեկը հիմնականն է ու ամբողջ ձայնի բարձրությունը կախված է այդ հիմնական ձայնից։ Գիտենք նաև, որ հնչարանները, համաձայն իրենց ձևի, ընդունակ են ուժեղացնելու այս կամ այն ձայնը։ Արդ, բերանի խոռոչը, սառնալով այս կամ այն ձևը, ձեռնում է տարբեր հնչարաններ և հետևաբար ընդունակ է խոչակից եկած ձայնական խառնուրդի մեջ այս կամ այն հարմոնիան միայն ուժեղացնելու։ Որոշ ձայնավորների արտաբերության ժամանակ բերանը կազմում է միայն մի հնչարան, ուրիշների համար կազմում է երկու հնչարան, մեկը բերանի առաջակողմում, մյուսը հետևում։ Այսպիսով առաջանում է ձայնավորների տարբերությունը (որ է երանգը)։

Մեծ հնչարանները ուժեղացնում են երկար թրթռումները, իսկ փոքրիկ հնչարանները՝ կարճ թրթռումները։ Այսպես և բերանի մեջ։ Երբ արտասանում ենք ու, շրթունքները առաջ են ձգվում, լեզուն հետ քաշվում, իսկ խոչակը որքան կարելի է ցած է իջնում, որով առաջանում է ամենից լայն հնչարանը, ինչ որ հարմար է ու ձայնին։ Ի արտասանելու համար լեզուն առաջ է գալիս և վեր բարձրանում դեպի բիմբը, խոչակն էլ վեր է բարձրանում, որով հնչարանը շատ փոքրանում է և հարմար է լինում ուժեղացնելու ի ձայնի կարճ թրթռումները։ Այս երկուսի մեջտեղն են գտնվում ը, օ, ա, ե ձայները, որոնց հնչման ժամանակ բերանի հնչարանը աստիճանաբար փոքրանում է։

Հելմհոլցի այս տեսության հակառակ է Հերման գիտնականը, որ ձայնավորների կազմության համար տալիս է նոր բացատրություն։

Ըստ իրեն ամեն մի ձայնավոր արտագրվում է բերանի մեջ և ինչ էլ լինի իր բարձրության աստիճանը, միշտ միևնույնն է և կազմված է հետևյալ ձևով.

ը—do² և re² նոտաների միջև
օ—re² և mi² " "
ա—mi² և soi² " "

e—si^3 և do^4 " "
i—re^4 և sol^4 " "

Երբ ձայնալարերը գործում են, բերանը իբր հնչարան լեցվում է, ուստի և այնտեղ արտադրված ձայնավորը խանգարվում է. մի րոպե նա հնչում է, հետո նվազում, նույնիսկ լռում, հետո նորից սկսում և այլն. այս ընդհատումները վայրկենական, բայց կանոնավոր են և այդ ընդհատումներով էլ բնորոշվում է ձայնավորը։

Հերմանի այս տեսությունը ընդունված չէ։

Կան ուրիշ գիտնականներ, որ առաջարկում են ուրիշ բացատրություններ. բայց ինչպես Հելմհոլցի բացատրությունը, նույնպես և մյուս գիտնականներից և ոչ մեկինը ընդհանուր ընդունված չէ։ Այնուամենայնիվ ստույգ է մնում այն, որ մարդկային ձայնի, հատկապես ձայնավորների երանգը կայանում է զանազան հարմոնիաների բաղդատության մեջ։

Ձայնավորների էությունը որոշելու համար, բացի հնչարաններից, օգտագործվել է նաև խուլերի լսողությունը։ Եթե խուլի ականջի մոտ հնչեցնենք մի շարք կամերտոններ (բնականաբար տարբեր կազմությամբ), նրանցից մի քանիսը խուլի լսողության վրա ո՛չ մի ազդեցություն չեն գործում, մի քանիսը գործում են մի անորոշ տպավորություն, իսկ ուրիշները որոշ կերպով լսելի են դառնում։ Նույնպես ձայնավորները ունեն խուլերի լսողության վրա տարբեր-տարբեր ազդեցություն. օրինակի համար, այսինչ խուլը որոշ չափով լսում է a, i ձայները, հազիվ է լսում o, e, ö ձայները և բնավ չի լսում u և ą ձայները։ Փորձը ցույց է տվել, որ կամերտոնի նոտայի լսողության և ձայնավորների երանգի լսողության մեջ կա որոշ կապ։ Այն խուլը, որ չի կարողանում լսել 1 800 թրթռումով մի կամերտոն, չի կարողանում լսել նաև e ձայնավորը. և նա, որ չի լսում 450 թրթռումով մի կամերտոն, չի լսում նաև o ձայնավորը և այլն։ Սրանից հետևում է, որ o ձայնավորը համապատասխանում է 450 թրթռում ունեցող նոտային կամ որ նույն է, ներկայացնում է 450 թրթռում, e ձայնավորը համապատասխանում է 1 800 թրթռում ունեցող նոտային կամ որ նույն է, ներկայացնում է 1 800 թրթռում և այլն։ Փորձեր կատարելով բազմաթիվ խուլերի վրա, 16-ից մինչև 18,000 թրթռում ունեցող կամերտոններից մի կատարյալ շարքով, Ռուսլո ձայնաբանը ֆրանսերենի ձայնավորների համար տալիս է հետևյալ պատկերը[1]։

[1] Rousselot, Principes, II, 747 շար.։

ú			ü		ó
228			342		456
ó			o	ó	á
456			684	798	912
á	a	a	e	e	é
912	1026	1140	1368	1596	1824
é			i		i
1824			2736		3648

ö	é	1368	ö	e	1596	ő	e	1596	ű	é	1824	ű	i	2736
	á	912		ó	798		o	684		ú	456		u	342
				o			a			o			o	
				690			918			1348			1352	

Այս պատկերը ներկայացնում է նույն ձայնարանի արտասանած ձայնավորների քրմատները. ուրիշ անձեր, մանավանդ ուրիշ ազգի անհատներ, պիտի ունենան բնականաբար մի քանի միավոր ավելի կամ պակաս. այսպես, օրինակ, մի ուրիշ ֆրանսիացի ունենկլ է 228 քրմատ ü ձայնավորի համար. մի սամինացի կանչ է իր վրա հետևյալ պատկերը.

u	o	a	e	i
225	450	900	1800	3600



Անավարի ֆրանսիական ձայնավորների, ասատական ы-ի և բուլղարական ъ-ի հոգավորման կետերը բաս Ռուսլոյի (Principes, II, 858):

ԳԼՈՒԽ Ը

ԿԻՍԱՁԱՅՆՆԵՐ

(Սկզբարբառներ և եռաբարբառներ)

Ձայնավորների կազմությունը ուսումնասիրելու ժամանակ մենք սովորեցինք, որ ձայնավոր անունը կրում են այն ձայները, որոնց արտաբերության ժամանակ գործարանները մոտենում են իրար այնքան, որ նրանց միջև բավական բաց ճանապարհ կա և խուչակից բարձրացած օդի հոսանքը ազատորեն կարող է դուրս գալ, առանց շփվելու գործարանների պատերին։ Սովորեցինք նաև, որ ձայնավորներն էլ ունեն աստիճաններ, մին մյուսից ավելի փակ, որոնց արտաբերության ժամանակ գործարանները հետզհետե ավելի են մոտենում իրար և ավելի նեղացնում միջին անցքը։ Եթե այդ գործարանները բավական փակվելով անցքը շատ նեղ կամ բոլորովին վերջացած լինի, այնպես որ օդի հոսանքը դուրս գալու համար պատրաստ լինի կամ ընդարձակորեն շոշափել պատերը և կամ նույնիսկ բռնի ուժով դուրս պոռթկալ, այն ժամանակ ձևանում է բաղաձայնը։

Կարող է սակայն պատահել, որ գործարանների փակումը շատ ավելի թույլ լինի, այսինքն ո՛չ այնքան ազատ, որչափ պետք է ամենափակ ձայնավորների արտաբերության համար, և ո՛չ էլ այնքան փակ, որչափ պետք է բաղաձայնների արտաբերության համար. ուրիշ խոսքով՝ այդ երկուսի միջին աստիճանը։ Գործարանների այդպիսի դրության մեջ արտաբերված ձայնը դառնում է կիսաձայն։

Երեմն կիսաձայն է կոչվում այն ձայնը, որի արտասանության ժամանակ դրծարանների փակումով ձևացած անցքը ավելի նեղ է, քան պետք է ամենափակ ձայնավորների համար և ավելի լայն, քան պետք է բուպաձայնների համար, այնպես որ արտասանության միջոցին ակամայ լսում է ձայնավորի երանգը և միևնույն ժամանակ անցքի պատերին շփվող օդի տպավորը, որ հատուկ է բուպաձայններին։ Կիսաձայնը ձայնավորի և բուպաձայնի միջին ստիճանն է։

Ալսպիսով, եթե երեմն կիսաձայնը ամենափակ ձայնավորի շարժնակությունն է, հետևարար պետք է անհնանք այնքան կիսաձայն, որքան անել է այդպիսի ձայնավորներու։ Ձայնավորների հատկության մեջ մենք տեսանք, որ դրանց թիվը 4 է, ի, ու, ե, ո. եթե այս ձայնավորները արտասանվեն մի քիչ էլ ավելի բարձրացնելով և մոտեր ավելի անցքով, կստանանք 4 համապատասխան կիսաձայններ։ Բայց արդեհան միայ ձայնավորներից ամենաավելորդականները ի և ու ձայնավորներն են, սակայն և լեզուների մեջ ամենատարածականն կիսաձայնները էլ դրանց համապատասխաններն են, այն է յ և ւ (w).—մյուսները քիչ լեզուների մեջ են գտնվում։ Այսուհետև մենք պետք է խոսենք դրանցից յուրաքանչյուրի մասին։

1. Կիսաձայն յ, պատկանում է բոլոր ձայնավորների աշխրհնային խմբին. ստացվելիս գտնվում է փրանսերենի մեջ, ինչպես pied, vieux, rien, bien, նաև բառասկզբում, ինչպես yeux hier և այլն։ Գրեթե նույնն է նաև անգլերեն opinion, union բառերի վերջնավանկի կիսաձայնը։ Եթե լեզուն բարձրանա մի քիչ էլ ավելի, առաջանում է խոսկական բուպաձայն y, որ ներկայացնում է ի կիսաձայնի թույլ հնչյունը։ Այս ձայնը, որ եբրայական այբբենի անվանակոչվելյան համաձայն կոչվում է yod, առատությամբ գտնվում է ամեն լեզվի մեջ էլ, հատկապես ուսաբերենում և թուրքերենում։

Հին լեզուներից հայտնի են լատիներենը անվին այս կիսաձայնը, ինչպես ւոյոչ "յուիշկ" և լատիներենը ieiunus "յոմ". պատմական շրջանում այդ ձայները ավելի թուլանալով դարձան բուպաձայն։ Արդի հայերենում կիսաձայն ի չկա. բոլոր եղածները գուտ բուպաձայն y են։ Կիսաձայնը գտնում ենք բարբառների մեջ ալսպես մեր, բեր և այլն բառերը Մուշի, Վանի, Կարինի և սրիշ բարբառներում արտասանվում են mier, bier ձևով. որոնց մեջ բուպաձայնի և ձայնավորի միջև նկատվում է կիսաձայն յ։

Սմանն լեզվի մեջ էլ թե՛ կիսաձայն i և թե՛ նրա բաղաձայն y ձևը թրթռուն են, այսինքն արտաբերվում են ձայնալարերի թրթռացումով։ Բայց նույն ձայնը զանազան լեզուների մեջ կարող է ներկայանալ նաև առանց թրթռումների։ Այսպես՝ դանիերենում կա խուլ y և գրվում է hj, գերմաներեն ich, Reich, Bücher բառերի մեջ ch ներկայացնում է առանց թրթռումների y բաղաձայնը. ֆրանսերեն pied, feuilleter բառերի մեջ կիսաձայնը առանց թրթռումների է.-անգլերեն human, pure բառերի մեջ h և p բաղաձայնների և u ձայնավորի միջև լսված կիսաձայնը առանց թրթռումների է։ Աննամերենի մեջ ևս կա այս ձայնը և տառադարձությամբ գրվում է x (Dirr, Gramm. Annam., 4)։ Չինարենում կա նույն ձայնը և գրվում է hs (Seidel, Chin. Gramm., 13) Նույն ձայնն է ուզում նկարագրել Մորիսը (Carr. lang, I, 4) ամերիկյան կարծիքը լեզվի մեջ և գրում է q ձևով, միևնույն ժամանակ ասում է, որ ֆրանսական կանադալում այսպես է հնչվում caur, curé, viciaire բառերի մեջ c ձայնը։ Նույն ձայնը գտնվում է սկովտերեն loch բառի մեջ և կա նաև աֆրիկյան աշանտե լեզվի մեջ, գրված hy ձևով (Christaller, 5)։

Այս հնչյունը չկա մեր գրական լեզվի մեջ, բայց գտնվում է վանա և Ղարաբաղի բարբառներում, ինչպես Վանի բարբառում այիլեօր "աքլոր", Ղարաբաղի բարբառում ըրիյճճակ "արեգակ"։

2. ü (կամ w) կիսաձայնը պատկանում է քմային ձայնավորների շրթնային խմբին. եթե լեզուն մի փոքրիկ չափով ավելի բարձրանա և շրթունքներն ավելի փակվեն քան ü ձայնավորի արտաբերության մեջ, կստանանք ü։

Քիչ լեզու կա, որ ունենա այս կիսաձայնը։ Այն լեզուները, որոնք չունեն շրթնային ü ձայնավորը, բնականաբար չպիտի ունենան նաև համապատասխան ü կիսաձայնը։ Բայց նույնիսկ այնպիսի լեզուներ, որոնք ունեն ü ձայնավորները, զուրկ են համապատասխան կիսաձայնից, այսպես են գերմաներենը և թուրքերենը։

Այս կիսաձայնին ամենից ավելի պատահում ենք ֆրանսերենի մեջ, ուր նա ներկայանում է թե՛ թրթռուն ձևով և թե՛ առանց թրթռումների. այսպես թրթռուն է huit, lui բառերի մեջ, անթրթիռ է tuile բառի մեջ։

Հայերեն լեզվի մեջ այս ձայնը չկա ո՛չ գրականում և ոչ էլ բարբառներում։

3. Ինչպես որ մյուս փակ ձայնավորները ավելի փակ հնչվելով տալիս են կիսաձայն, նույնպես պիտի լիներ նաև ə ձայնավո-

բը։ Իայլ արտհնան ա ձայնավորը արտին հոդվոգլում է լեզուների մեջ, ավելի ևս նրա կիսաձայներ։ Հայերեն և թուրքերեն լեզուներում, որ շատ ատատ է ը ձայնը, չկա նրա համապատասխան կիսաձայնը։ Ալսպես նաև սանսկրիտի մեջ, թեև ալստեղ անունք և ձայնավորը, որ մեր ը ձայնավորի փոխարեն ձեն է։ Ալլ կիսաձայներ գալն գանվի արևել կիսալալրենի լեզվի մեջ, որ մեղ ատալիս անծանոթ է։

ւ. ը (գրվում է նաև w) կիսաձայնը պատկանում է կատակին ձայնավորների շրթնային խմբին։ Արտասանության մեջ լեզուն մի քիչ ավելի բարձր է և շրթունքը ավելի փակ, քան ը ձայնավորի արտասանության ժամանակ։

Առատ է գալս գանվում է ֆրանսերենի, իտալերենի, իսպաներենի, պանիերենի, արևմտաեվրոպական անգլերենի մեջ ինչպես ֆրանսերեն oui, puis, ouest, *անգլերեն* water, well, *իտալերեն* uovo, buono, *իսպաներեն* cuerpo, bueno, *արևմտաերեն* vino *գինի*, lov *սալոց (կարդա* uino, lou*) և այլն։ Աֆղաններեն v հնչում է իբր անգլերեն* w (Darmesteter, Chant pop. էջ XXXII)։ *Մեր շրջակա ազգերի լեզուների մեջ ալս ձայնը բուլղարին պակասում է, այսպես թուրքերենում, վրացերենում, ռուսերենում. բալց շատ տատ է քրդերենում և արտերենում. սվաներենում բնդհակառակը կա միալն* w *և չկա բնավ* v (Lafan BSL հա. 30,№ 90, էջ 153)։

w *կիսաձայնը ը, ւ ձայնավորների մոտ դառնում է* wy *աֆրիկյան աշանտե լեզվի մեջ, ըստ Սբիտալլերի (էջ 5), որ նուլն ձայնը արձանագրում է* w *ձևով։*

Հին լեզուներից հունարենը և լատիներենը ունեին ալս ձայնը, Վիտնելը (Inb. Gramm., § 57) *ասում է, թե սանսկրիտի մեջ ուր որ* v *ձայնին նախորդում է մի բաղաձայն,* v *հնչվում է իբր* w, *որ սակալն եվրոպացի ուսումնականները իբր* v *են հնչում։ Հունարենում դանակվում էր* F *տառով, իսկ լատիներենում՝ պարզապես ը ձայնավորով։ Պատմական շրջանում երկուսն էլ ջնջվեցին. հունարեն* F *բոլորովին ջնջվեց, իսկ լատիներեն ը կիսաձայնը վերածվեց* v-ի։ *Ալսպես՝ լատիներեն* uenit, *որ հնագես հնչվում էր* wenit, *հետո հնչվում էր* venit։

Հին հալերենը առատորեն ուներ ալս կիսաձայնը, որ ներկալանում էր ւ տառով, և որի մեկ ուրիշ զանազանությունն էր բաղաձայն ու-ն, ինչպես Դունալ (=Դվնա), Արտաշատ (=Երվանդ) և այլն։ Ինչպես լատիներենում, ալնպես և հալերենում սուլն կի-

ուաձայնը ավելի հետո վերածվեց բաղաձայն վ-ի և այսօր մեր ղրական լեզուն իսպառ անընդունակ է արտաբերելու նույն ձայնը։

Սակայն եթե դրական հայերենը չունի կիսաձայն ւ, ընդհակառակը բարբառները դիտեն արտասանել այն։ Մուշի, Վանի, Կիլիկիայի, Սիրիայի և այլ բարբառներում բառամիջի ու ձայնավորը իրենից առաջ ստանում է միշտ ւ կիսաձայնը, ինչպես փոր, գոյա (իմա՛ p'ւor, gւort և այլն)։ Մուշավալի հայոց բարբառում հաճախ գտնում ենք ձայնավորից հետո, ինչպես ցաւ, հաւ և այլն։ Տիգրանակերտի բարբառում դոյութիւն ունի նախաձայն ւ, ինչպես ւըրեն "վրա", ւըր "որ", մինչև իսկ օտար փոխառյալ բառերի մեջ ինչպես ւախտ "ժամանակ" (արաբերեն vaqt)։

Կիսաձայն ւ (w, ւ) բոլոր լեզուների մեջ էլ սովորաբար արտասանվում է թրթռուն ձևով, բայց երբեմն հարևան խուլ բաղաձայնի ազդեցութիւնով կարող է արտասանվել առանց թրթռումների։ Այսպես՝ խուլ է անգլերեն բառասկզբի wh կիսաձայնը, ինչպես what, which. Նույնպես և խուլ է ֆրանսերենի poids, point բառերի մեջ լսված ս կիսաձայնը։ Խուլ w ունի լապպերենը (wiklund, 6 գրված lv)։ Խուլ w ունեն նաև մոնղոլերենը, ամերիկյան հուպա լեզուն, ամերիկյան տակելմա լեզուն (Boas, հա. 2, 31, 35) և այլն։

Կիսաձայնները առհասարակ կազմում են երկբարբառներ։

Երկբարբառ կոչվում է մի կիսաձայնից և մի ձայնավորից կամ երկու ձայնավորից կազմված մի ձայնախումբ, որ արտաբերվում է մի անգամից։

Երկբարբառները լինում են երկու տեսակ՝ աճուն և նվազուն։ Աճուն երկբարբառները կազմված են մի կիսաձայնից կամ մի կարճ ու տկար ձայնավորից, որին հաջորդում է մի ամբողջ ձայնավոր, ինչպես ուա, ւա։ Այս պարագային աճուն է կոչվում երկբարբառը, որովհետև առաջին տկար ձայնից բարձրանում ենք երկրորդ ուժեղ ձայնավորին։ Երբ երկբարբառը կազմված է հակառակ դիրքով, այսինքն առաջին տարրը մի ամբողջ ձայնավոր է, որին հաջորդում է մի կիսաձայն կամ մի տկար ձայնավոր, այդ պարագային երկբարբառը կոչվում է նվազուն, ըստ որում ուժեղից իջնում ենք դեպի ավելի թույլը։ Օրինակ, աու, աւ, էա, իա։ Թե՛ աճուն և թե՛ նվազուն երկբարբառները ստորաբաժանվում են նույնպես երկու տեսակի. առաջինները կազմված են լինում կիսաձայն ձայնավոր կամ ձայնավոր կիսաձայն, ինչպես ւա կամ աւ, իսկ երկրորդները՝ երկու ձայնավորից, ինչպես աու, ուա։

Այս սահմանումները մեզ միջոց են տալիս կազմելու նախօրոք ցուցակն այն բոլոր երկբարբառների, որոնք կարող են գոյություն ունենալ մարդկային լեզվի մեջ։ Ամեն մի կիսաձայն (j, ü, u) կարող է միանալ ձայնավորների բոլոր տեսակների հետ և կազմել սկզբի կամ վերջի երկբարբառներ։ Հաշվելով միայն այն 18 ձայնավորները, որոնք նշանակված են ձայնավորների համակյան մեջ, մենք կունենանք 54 սկզբի և 54 վերջի, դումարը՝ 108 երկբարբառ։ Նույնիսկ եթե առնենք այդ ձայնավորներից 8 ամենագլխավորները (a, e, i, o, ü, ə, o, u), կունենանք գործածել 24 սկզբի և 24 վերջի, գումարը՝ 48 երկբարբառ։ Իսկ եթե հաշվենք երկու ձայնավորով կազմված երկբարբառները, առնելով 18 ձայնավոր, կունենանք 306 երկբարբառ, իսկ առնելով միայն 8 գլխավոր ձայնավորները, գործածել կունենանք 56 երկբարբառ։ Երկու խմբերը միասին 414 երկբարբառ, կամ դոնե գլխավորները՝ 104 երկբարբառ։ Բայց կարելի է նաև կազմել երկար ձայնավորով երկբարբառներ. այսպես, օրինակ, հին իսլանդերենը գանազանում է au, eu, iu կարճ և āu, ēu, īu երկար ձայնավորները։

Բայց աշխարհի մեջ չկա մի լեզու, որ այսքան երկբարբառ ունենա։ Հենց միայն այն պատճառով, որ շատ լեզուներ զուրկ են ö, ü, e ձայնավորներից և ü կիսաձայնից, երկբարբառների կարելի թիվը իջնում է 40։ Ուրիշ հանգամանքներ, օրինակ, կիսաձայնի թավ հնչումը, դույզ ձայնավորների ի մի ձուլումը և այլ նման ձայնաբանական երևույթներ պատճառ են դառնում ավելի ևս կրճատելու երկբարբառների թիվը և երբեմն իսպառ չնչելու նրանք լեզվի միջից։ Այսպես, օրինակ, թուրքերենը ո՛չ մի երկբարբառ չունի, որովհետև այդ լեզվի մեջ բոլոր կիսաձայնները թավանալով, դարձել են բաղաձայն, հետևաբար և բոլոր երկբարբառները դարձել են մի ձայնավորից և մի բաղաձայնից կազմված ձայնախմբեր։ Ամերիկյան կվիչե լեզուն երկբարբառ չունի (Lewy, 934)։ Այսպես են նաև ասուրերենը և նոր լեզուներից նոր հունարենը։

Երկբարբառ չունի և շվեդերենը, որ նույնիսկ Europa, August հնչվում են իրարից հեռու՝ E-uropa, A-ugust (Poestion 1, Lehrb. Swed, 4)։

Երկբարբառ չունի հունգարերենը, j ձայնը, ամեն անգամ որ գտնվի ձայնավորից հետո, բաղաձայն է, ինչպես báj, fej և այլն (տե՛ս Ney, Ungarische sprachlehre, Pest. 1862, էջ XVIII)։

Երկբարբառ չունի լհհերենը, ուր ամեն անգամ երբ երկու ձայնավոր պատահեն իրար, հնչվում են առանձին, ինչպես na-u-

ka. Նույնիսկ E-u-ro-pa. և երբ ածանցման մեջ ձայնավորի վրա մի ձայնավոր էլ ավելանա, մեջտեղը կտրոհի j կամ w (Joe, 5)

Երկբարբառ չունի վրացերենը և, օրինակ, չալ բառը հնչվում է այստեղ երկու անջատ ձայնավորով, իբր ča-i (Dirr., Gramm. georg., 1)։

Երկբարբառ չունի բասկերենը։

Զեխերենը ունի միայն մի երկբարբառ, որ է ou։

Խախուտ դրության մեջ է ouերենը, ուր կան ai, āi,, au, āu, ei, eu, ui, ūi, oi, īu, įi երկբարբառները, որոնք մերթ հնչվում են իբր զուտ երկբարբառ, մերթ իբր երկու անջատ ձայնավոր և մերթ միջանկյալ բաղաձայնով (իբր āvu, ayi և այլն) (Miller, Die Sprachlehre d'os., 12)։

Դանիերենը, որ ունի 15 երկբարբառ (aų, eų, āų, ių, oų, ūų, ǒu, ǒu, uų, ai̯, ii̯, oi̯, ǒi, ǒi̯) գրական լեզվի մեջ հնչում է իբր երկբարբառ, ժողովրդական լեզվի մեջ՝ իբրև ձայնավոր բաղաձայն. սրա համար էլ նույները գրվում են av, ev, aj, ej, eg, ek, ig և այլն (Poestion, 37—39)։

Ամերիկյան կիրիրի լեզուն չունի երկբարբառ և ուր որ երկու ձայնավոր պատահեն, պետք է հնչել իբրև առանձին վանկեր (Gabelentz, 5)։ Աֆրիկյան սեսուտո (բանտու) լեզուն չունի երկբարբառ (Beyer, 3)։

Լապպերեն լեզուն ունի շատ երկբարբառներ, ինչպես՝ oa, ei, ai, ei, āi, oi, ui, uə. uo, au, eu, āu, iu, ou, ua, նաև եռաբարբառներ uəi, uei, iuo, uəu (Wiklund, 2—3):

Հին լեզուներից հունարենն ու լատիներենը, հատկապես առաջինը հարուստ էին ամեն տեսակ երկբարբառներով։ Միջին բարձր գերմաներենը ուներ ei, iu, ie, ou, ǒu, uo, üe երկբարբառները Սանսկրիտը ունի միայն երկու երկբարբառ, այն է ai, au։ Հին հայերենը ուներ նույնպես բազմաթիվ երկբարբառներ, որոնց վրա մանրամասն կխոսենք ժ գլխում։

Նոր լեզուներից երկբարբառներով հարուստ են ֆրանսերենը, գերմաներենը և անգլերենը։ Պորտուգալերենն ունի 7 երկբարբառ, ֆիններենը ունի 15 երկբարբառ, դանիերենը նույնպես 15 երկբարբառ։ Արդի լեզուներից երկբարբառներով շատ հարուստ է աննամերենը, ուր կա 22 երկբարբառ, որոնք են, ըստ գիտական տառադարձության՝ ai, āi, au, āu, āo, eo, éu, ie, iu, oa, ōi, o'i, ōi, ōū. ūa, ūă, ŭě, ūé, ūŏ, ūi, ūa, ūō (Dirr, Gramm. annam. 1—3):

Զինարենն ունի հետևյալ երկբարբառները (գիտական տառա-

դարձվելիքներ)։ oo, él, al, au, ao, ou, ül, üe, öe, ia, ie, io, iu, ua, uo, üa, üe, (Seidel, Chin. gramm., 15)։

Յակուտերենն ունի 15 երկբարբառ, որոնք են. ai, äi, oi, öi, öi, ii, ui, üi, ie, oa, iä, uo, üö (Radloff, Die jakut. sprachlehre, 3, Ястремский 6), նաև երկար ձայնավորներով üi, öi. սամոյեդերենն ունի 13 երկբարբառ (Adam, Gram. tong., 12)։

Բուրյաթներենն ունի 10 երկբարբառ, որոնք են ai, öi, ei, oi, ei, eu, oa, ee, ie, eo (Castrén, 1)։

Մինչև անցում ալոնկեի լեզուներ, ինչպես հռանկոմյան նամա լեզուն, հարուստ է դանդաղ երկբարբառներով (Seidel, Hspr. 1)։

Ամերիկյան սակիմա լեզուն ունի բազմաթիվ կարճ երկբարբառներ (ai, au, ei, oi և այլն) և բազմաթիվ երկար երկբարբառներ (ai, au, öi, ou և այլն (Boas, II, 11)։ Ամերիկյան սիուսլավան լեզվի մեջ կան բազմաթիվ երկբարբառներ, որոնց ինչպես առաջին, նույնպես և երկրորդ մասը կարող է լինել երկար ձայնավոր. այսպես ունենք ai, äu, ui, ai, aü (Boas II, 444)։

Ամերիկյան դակոտերեն լեզուն ունի 13 երկբարբառ, որոնք են ai, au, ei, eu, ia, ie, oi, ou, öi, ua, ue, ui, uo և 6 եռաբարբառ, որոնք են iai, iau, iei, ieu, uai, uei (R. Caledon, 2--3)։

Ամերիկյան կոդդարա լեզուն ունի նույնպես 13 երկբարբառ (ai, au, ei, eu, ia, ie, iu, ou, öi, ua, ue, ui, üi) և 4 եռաբարբառ՝ iai, iei, uai, uei (Caledon, 2)։

Օվկիանեալի սահիթի լեզուն ունի 15 երկբարբառ. ae, ai, ao, au. ei, eo, eu. ia, ie, iu, oe, öi, ou, ue, ui (X, 8և Senac, 17)։

Օվկիանյան սամոա լեզուն թեև շատ ունի ձայնավորների խմբեր, բայց ոչ մի երկբարբառ չունի. բոլոր ձայնավորները առանձին են արտասանվում և մինչև իսկ գրության մեջ դրվում է մի մակարդ՝ զույգ ձայնավորները իրարից բաժանելու համար (Funk. 1)։ Մալալերեն լեզուն էլ երկբարբառ չունի և, օրինակ, ai և նման ձայնական խմբերը կարդում է առանձին-առանձին՝ ai և այլն (Seidel, 5)։

Աֆրիկյան նգոնև (զուլու) լեզուն չունի երկբարբառ, «հենց որ երկու ձայնավոր պատահեցին իրար, հնչվում են առանձին-առանձին վանկերով. եթե արագ խոսակցության մեջ լսենք որևէ երկբարբառ, երբ լավ ուշադրության դարձնենք, կտեսնենք, որ երկու ձայնավորի միջև y կամ w ձայնավորը կա» (Elmslіev, 1)։ Այսպես է նաև քաֆիր լեզվում, ուր gaula, laula և նման բառեր պրվում են երբեմն gawula, lawula (Laren. 3)։

Աֆրիկյան ակասելե լեզուն չունի երկբարբառ. ei, ai, eo

հնչվում են առանձին-առանձին և նրանց պետք է համարել զուլգ ձայնավորներ (Westermann, 61)։

Օսալակերեն լեզուն ունի 21 երկբարբառ, որոնք դասավորում ենք հետևյալ ձևով.

ai, ei, oi, ui, ūi	iu, ou, ea
āi, ēi, oi	īu, ōu, ue
au, eu	ie, oe
āu, ēu	
ae	

(Castren, 1):

Աֆրիկյան էվե լեզուն գրեթե բոլոր ձայնավորներով կարող է երկբարբառ կազմել. ինչպես, ae, ao, au, ea, ee, eo, eu, ia, ie, ii, io *և այլն. երկբարբառները կարող են լինել բարձրացող (ինչպես ֆրանսերեն* roi*), բայց կարող են լինել նաև իջնող (ինչպես գերմաներեն* āuge*). բայց այս լեզվի մեջ շեշտը, այլև տոնը կազմում է զանազան երկբարբառներ, ինչպես* áè *(բարձր-ցած),* áè *(միջին-ցած),* áè *(բարձր-միջակ)։ Բայց երկբարբառներում տոնեերը կարող են նաև հավասար լինել. ինչպես* áé *(երկուսն էլ բարձր),* àè *(երկուսն էլ ցածր),* áé *(երկուսն էլ միջակ)* Westermann 2—3)։

Ունի նաև եռաբարբառներ, ինչպես eae, iae, uie *և այլն (անդ)։*

Լաոսերենը, որ սիամերենի նման մի լեզու է, ամենահարուստն է այս կողմից, նա ունի 37 երկբարբառ, որոնց տառադարձությունը հետևյալն է.

ai, ao, āy, āo,
ēo, ēu, êo, êu,
ia, ie, iu, iē,
īa, ie, io, iu, iō, iō
ôi, ôy, ōy,
ua, ue, ui,
ūa, ūe, ūo, ūu, ūi, ūō,
ūā, ūē, ūō,
ūa, ūe, ūo, ūo.

(Hospitalier, 57—82):

Արդի դրական հայերենը չնչած լինելով կիսաձայնները, չունի նաև երկբարբառ. բայց բարբառների մեջ կան։ Երկբարբառներով առանձնապես հարուստ են Մարաղայի, Սիրիայի, Անտիոքի, Սվեդիայի—Մուսա լեռան և Ավստրոհունգարիայի բարբառները։ Այս բոլորի մասին կխոսենք ժ գլխում։

Երկբարբառներն ունեն երեք էական հատկություն.

ա) Երկբարբառը կազմող երկու ձայնավորներից մեկից մյուսին անցումը կատարվում է աստիճանաբար. դործարանները նախ առանում են այն դիրքը, որ կարևոր է երկբարբառների առաջին տարրը արտարերելու համար և հետո իրար հետևից շարունակ և աստիճանաբար անցնելով բոլոր միջին դիրքերից (առանց սակայն նրանցից որևէ մեկի վրա առանձնապես կանդ առնելու), հասնում են վերջապես երկրարբառի երկրորդ տարրին։ Այսպես, օրինակ, ai երկրարբառը արտասանելու ժամանակ լեզուն և շրթունքները նախ ստանում են a ձայնավորի դիրքը, հետո անցնում են ձայնավորների այն ամբողջ շարքով, որ դանվում են մինչև i. այն է ä, e, e, é, i և բոլոր սրանց միջին աստիճանները. բայց նրանցից և ո՛չ մեկի վրա կանգ չեն առնում, այնպես որ ականջը չի լսում այդ ձայները, այլ միայն զանազանում է սկիզբը և վախճանը։





բ) Բոլոր երկբարբառների մեջ կա միշտ մի գլխավոր տարր, որի վրա արտասանության ժամանակ միշտ մյուսներից ավելի ենք կանգնում. առուն երկբարբառների մեջ այդ է երկբարբառի երկրորդ մասը, իսկ նվազուն երկբարբառների մեջ՝ նրա առաջին մասը։ Եթե երկբարբառը ստանա շեշտ, միշտ այդ տարրն է որ կրում է շեշտը. ինչպես ái, բայց uá և այլն։

Երկբարբառների արտասանության ժամանակ կատարված գործողությունը կարելի է ներկայացնել հետևյալ պատկերի մեջ, որ ai երկբարբառի պատկերն է.

Պատկերն ավելի պարզ կլինի, եթե ներկայացնենք նաև ո՛չ երկբարբառային a—i ձայնախմբի պատկերը.

Առաջինի մեջ սկզբնական դադարից հետո թեքումը դանդաղ և աստիճանական է, իսկ երկրորդի մեջ՝ հանկարծական։

գ) Երկբարբառի երկու տարրերը արտաբերվում են մեկ ան-

գամից (իմա՝ մեկ շնչով), մինչդեռ ձայնավորների հաջորդության մեջ արտաբերությունը լինում է երկու անգամից։

Ինչպես ձայնավորները, նույնպես, և ավելի ևս, երկբարբառները արտասանության կողմից լեզվից լեզու և բարբառից բարբառ տարբերվում են. օրինակ, կարիք չկա կարծելու, թե միևնույն au երկբարբառը ամեն լեզվի մեջ միևնույն ձևով է հնչվում. ոչ։— Մի տեղ a ձայնը քմային է, մի ուրիշ տեղ կատկային, մի այլ տեղ u բաց է լինում, մի ուրիշ տեղ փակ u և այլն։

Երկբարբառների դասավորությունը ամեն լեզվի մեջ էլ պարտադիր և սիմետրիկ (համադիր կամ համաչափ) չէ. օրինակ, գրաբարի մեջ յ կիսաձայնով կազմված երկբարբառներից ունենք այ և ոյ, բայց պակասում են իյ, ըյ, էյ, եյ, ույ ձևով երկբարբառներ։ Նույնպես ւ կիսաձայնով ունենք աւ, եւ, իւ, բայց պակասում են էւ, ու (օւ), ըւ երկբարբառները։ Այս բանը ավելի մեծ չափերով գտնվում է մեր բարբառների մեջ, ինչպես մի թեթև համեմատությունից էլ կարելի է տեսնել։

Երկբարբառների համար, ինչպես ասացինք, ընդունված է այն սկզբունքը, որ նրանք ներկայացնում են առաջին եզրից մինչև երկրորդ եզրը եղած բոլոր ձայնական աստիճանները. օրինակ, ai ներկայացնում է a—ä—e—i ամբողջ չարքը։ Բայց այս անցումները այնքան արագ և խուսափուկ են, որ ականջը չի կարողանում որոշել նրանք և լսում է միայն առաջին և վերջին եզրերը՝ a և i։ Ուրեյ լեզվի մեջ, ըստ Շնեյդերի (էջ 84), երկբարբառները երկու կարգի են բաժանվում. մի կարգը այնպես է, որ իրոք միջին կամ անցման մասերը չեն լսվում և միայն երկու ծայրերն են լսվում, իսկ մյուս կարգը այնպես է (այսինքն այնպես դանդաղ է), որ բոլոր անցման աստիճանները իրար հետևից շարունակաբար լսելի են ականջին։

Բացի մաքուր ձայնավորներից, երկբարբառների կազմության մեջ մտնում են նաև ռնգալին ձայնավորներ։ Ռնգալին ձայնավորներ ունի պորտուգալերենը. դրանք թվով երեք են և պորտուգալերենի այբուբենով գրվում են ãe, ão, oe. իսկ իրապես՝ լեզվաբանական այբուբենով պետք է նշանակել ąę̓, ąǫ̓, ǫ̓ę̓, կամ, ավելի ճիշտ, ըստ Անշտետտի (էջ 4) ąi, ąu. ǫi, երեքն էլ նվազուն այսինքն՝ առաջին ռնգալին ձայնավորը ավելի ուժեղ և ավելի երկար քան երկրորդ ռնգալին ձայնավորը։

Աֆրիկյան աշանտե լեզվում կան 5 տեսակ երկբարբառներ. այն է՝

ա) Երկու ձայնավորից կազմված երկբարբառներ, որոնք

Արեւտահայերը (ասա լեզվի քերականության հեղինակը, էջ 3) կոչում է ո՛չ մի երկբարբառ, այլ բազպրեալ ձայնավոր, ինչպես՝ al, au, en, ec, el, oa, oe, oo, ua, ue, ul, uo, ia, ie, io:

բ) Մի ձայնավորից և մի կիսաձայնից կազմված երկբարբառներ, ինչպես՝ aw, ew, ow, uw, iw:

գ) Մի անգալին ձայնավորից և մի պարզ ձայնավորից բաղկացած երկբարբառներ, ինչպես՝ ạe, ẹa, ọe, ọa, ọe. ụa, ụi:

դ) Մի անգալին ձայնավորից և մի կիսաձայնից բաղկացած երկբարբառ, որ է ạw:

Այսոցից զատ, նաև հեղինակը հիշում է ատանձին խմբով,

ե) Երկբարբառներ, որոնց առաջին ձայնավորը շատ կարճ է. -ia, iạ, eă, eẹ, ua, uă, uạ, uọ:

Անգալիներն ունի aẹ, oẹ, ui *երկբարբառները, որոնց երկրորդ մասը անգալին է (*Владимирцев, Срав. грам., 56)*:*

Արեւելահայերի մեջ անգալին երկբարբառներ չկան. նրանց փոխանակ, որ ունի անգալին ձայնավորներ, նրբ երեսան է հանում մի ձայնավոր երկբարբառ, որի երկրորդ մասը անգալին ձայնավոր է, առաջինը պահում է մատչի ձայնավորի վիճակում, ինչպես coin, *այսինքն* kwạ *և ոչ թե* kụạ *և այլն:*

Հայերենը չունենալով անգալին ձայնավորներ, բնականաբար չունի նաև անգալին երկբարբառներ:

Յուրաքանչյուր երկբարբառ կարող է ունենալ մի երկրորդ կիսաձայնավոր, և այն ժամանակ երկբարբառը դառնում է եռաբարբառ: Ամեն երկբարբառներ կիսաձայներ ավելացնում են վերջում, իսկ նախադեմ երկբարբառներ նրանք կիսաձայները ավելացնում են սկիզբը. այսպես՝ ụa *ամեն երկբարբառից կարելի է կազմել* ụai *եռաբարբառ կամ* au *նախադեմ երկբարբառից* iau *եռաբարբառը:*

Եռաբարբառները բավական սովորական են իտալերենի և իսպաներենի մեջ, ինչպես՝ իտալերեն miei "*իմոնք*", tuoi "*քոնանք*", buoi "*եղներ*", guai "*վայ*", bùio "*մութ, խավար*", *և նրանց նման* guáio "*դժբախտություն*": *Այսպես է նաև իսպանական* Uruguai *երկրանունը:*

Իտալերենին և իսպաներենին մերձավոր լեզու է լանգըդոկը, որ ունի 3 եռաբարբառ, որոնք են՝

lau—*օրինակ՝* slau *(սլաու)* "*հանդարտ*".

leu—*օրինակ՝* leu *(լեու)* "*ես*".

lei —*օրինակ՝* sieis *(սլեիս)* "*վեց*".

uei—*օրինակ՝* ueil *(իւէյլ = յուեյլ)* "ութը".
iou—*օրինակ՝* biou *(բիոու)* "եղ"
(Salvatori, Gramm. occitane, 5)։

Արևելյան լեզուներից յակուտներենն ունի 4 եռաբարբառ. այն է əaı, uoı, ıäı, üöı, (Radloff, Die Jakut. spr., 4, Ястремский, 6): *Չինարենն ունի 5 եռաբարբառ՝* ıaı, ıau, ıao, ųaı, ųeı (Seidel, Chin. Gramm., 16): *Աննամերենում կա 7 եռաբարբառ, այն է* iou, oaĭ, ůôı, üöı, öüı, üöü, öüu (Dirr, Gramm. annam. 3): *Լաոսերենում կա 11 եռաբարբառ.* ieo, iau, ieo, ieu, üao, üau, üeo, üeu, üey, uaḥ, ůey, (Hospitalier, 57—82):

Աֆրիկյան աշանտե լեզվի մեջ կա 12 եռաբարբառ, որոնցից մեկը ունգալին ձայնավորով. eae, eew, iae, iaw, ieĭ, oae, oaw, oee. uae, uaw, uąe, ueı (Christaller, 3):

Առհասարակ հեռամնաց ցեղերի լեզուները հարուստ են ձայնավորներով և նրանց հետ նաև երկբարբառներով, եռաբարբառներով, նույնիսկ քառաբարբառներով. օրինակ՝ Hawaĭ *կամ Սանդվիչյան կղզիների խմբում գտնված կղզիների անուններն են՝* Oahu, Hawaĭ, Mauĭ, Kauaĭ, Miihau, Molokai, Lanai, Kahilaui:

Օվկիանյան տահիթի լեզվում ո՛չ միայն ամեն բառ ձայնավորով է վերջանում, այլև բառամիջում երկու բաղաձայն կողք-կողքի չկա երբեք։ Լեզուն լիքն է ձայնավ. րներով. օրինակ՝ մի նախադասություն՝ hoe a maitai to te ia ota e te ia ama "*ձուկը հում նույնքան լավ է, որքան եփածը" (ուր 8 բաղաձայնի դեմ կա 19 ձայնավոր)* (Sénac, 17, 36)։

Ամերիկյան կահիտա լեզվով eriaua "*սիրվել*" (Buelna, 7)։

Հին հայերենում եղած եռաբարբառներն են.

1. յ կիսաձայնով կազմված՝ եայ, էայ, ոյ, ուոյ.

2. ւ կիսաձայնով կազմված՝ եաւ, էիւ, ուաւ.

Սրանց մասին ավելի երկար կխոսենք ժ գլխում։

Գրական լեզուն չունի եռաբարբառ, քանի որ չունի նույնիսկ երկբարբառ. բայց բարբառներում կարելի է գտնել։

Երկբարբառների համար ունենք նկատելի երկու հանգամանք.

1. Երբ կիսաձայնը այնպես թույլ է, որ ալևս դարձել է բաղաձայն, նրա միացումը որևէ ձայնավորի հետ՝ չի կարող կազմել երկբարբառ։ Այսպես գերմաներեն ja, jung, *անգլերեն* yard, yes, *հայերեն* այո, հայ, հայր *և այլն բառերի մեջ* ya, ye, yo, ay *ձայնախմբերը երկբարբառ չեն, այլ մի ձայնավորից և մի բաղաձայնից կազմված վանկեր, ճիշտ ինչպես* վա, վե, ավ *և այլն։*

2. Երկու հաջորդական ձայնավորներ անպատճառ երկբարբառ չեն կազմում։ Երկբարբառ լինելու համար նրանք պետք է, որ արտասանվեն մեկ շնչմամբ, իսկ եթե արտասանվում են ազատորեն (երկու շնչմամբ), ուրեմն կազմում են երկու վանկ, ինչպես նիան, նիով և այլն։

Այս նկատողությունները արժեն նաև եռաբարբառների համար։

Երկբարբառների մի առանձին ձև անել մոնոդիփթոնգը, որ գրաֆորեպես նշանակել շատ դժվար է. երկբարբառը սկսվում է մի որոշ ձայնավորից և աստիճանաբար անցնելով միջին ձայնավորների բոլոր աստիճաններից, հասնում է մինչև մի որոշ ձայնավորի։ Այս կարգի երկբարբառները կոչվել են բազմաբարբառ (polyphtongue). այսպես են ae, oe, ui, իսմ՛ äe, ǫe, ui (Владимирцов, Срав. грамм., 56)։

ԳԼՈՒԽ Բ

ԲԱՂԱՁԱՑՆԵՐ

Ա) ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ասացինք, որ բաղաձայն է կոչվում այն ձայնը, որի արտաբերության ժամանակ գործարանները կամ չափազանց մոտեցած են իրար և կամ բոլորովին փակ են. այնպես որ թոքերը բարձրացած օդի հոսանքը դուրս է գալիս բերանից կա՛մ լայնորեն շոշափելով գործարանների պատերը և կամ նույնիսկ պայթյունով։

Այս սահմանից երևում է, որ բաղաձայնները բնախոսորեն երկու տեսակ են.

1. Նրանք, որոնք ձևանում են գործարանների անձուկ մերձեցումով. այս պարագային, որովհետև գործարանները կազմում են մի նեղ անցք, որ ամբողջ ժամանակ բաց է մնում, ուստի օդի հոսանքը դուրս է գալիս շարունակ, առանց դադարի, տևականորեն. խոսողը կարող է ըստ կամս երկարել այս կարգի բաղաձայնների արտաբերությունը, ինչպես՝ բ, յ, վ, ֆ, ս, ժ, շ և այլն։ Այսպիսի բաղաձայնները կոչվում են սեղմ (constrictive) *կամ* տևական (continue)։

2. Նրանք, որոնք ձևանում են գործարանների ամբողջական փակումով. բնականաբար փակումը լինում է վայրկենական, որից հետո հանկարծ բացվում է և օդի՝ արգելքով պահված հոսանքը դուրս է պոռթկում. խոսողը, հակառակ իր ջանքերի, անկարող է երկարել ըստ կամս այս բաղաձայնների արտաբերությունը, ինչպես բ, պ, փ, թ և այլն։ Այս կարգի բաղաձայնները կոչվում են

պայթական (occlusive, explosive) կամ վայրկենական (momentanée)։

3. Դա և բաղաձայնների մի երրորդ անսակ, որ ըս ամ է նախորդ երկուսի միջին անդր. ալսպես են ճ, չ, ջ, ծ, ձ, որոնք դժվարսալ կարդդ է մարդ երկարնել և երկարելու գնպդսում էլ երկրորդ մասը լսվամ է իբր ս, զ, ժ, շ, որ և իրանն պսսճառ է դառնում նաև ձայների տեղսպիլներ երկարելու։ Ալս կարդի բաղաձայնները կոչսմ են կիսապայթական (semi-occlusive, affriquée կամ mioclusive)։

Ինչպես ձայնաւորների, նոյնպես և բաղաձայնների արտաբերության ժամանակ կս երեք մոմենա. յարում, կայք և էջր։ Ալս երեք մոմենտները առանձնապես կարևոր են պայթական բաղաձայնների համար և ալս պսսճառով էլ սոսցել են սոսնձին անուն. պայթուցում (implosion), խցում (occlusion) և պայթյուն (explosion).—Պայթուցումը այն րոպեն է, երբ գործարանները սկըսում են փակվել. խցումն այն րոպեն է, երբ գործարանները մնում են փակված, իսկ պայթյունն այն րոպեն է, երբ գործարանները բացվում են։ Հայելու սոսց դանդաղությամբ արտասանելով upa կամ մոմսնսվանդ appa ձայնախումբը, դյուրությամբ կարելի է սեսնել այս երեք մոմենտները, որոնք հաջորդում են իրար։ Ավելի ճիշտ քննություն կարելի է կատարել ձայնաբանական մեքենայի վրա. մի փորրիկ սոսձիդ փամփուշտ դնելով շրթունքների միջև, դլանի վրա սոսնում ենք հետևյալ abcd կոր դիծը.



Ալս կորության մեջ ab ներկայացնում է պայթուցումը, bc խցումը և cd պայթյունը։ Որովհետև դլանը պտտվում է միօրինակ արագությամբ, ուստի և դծերի երկարությունը համեմատական է յուրաքանչյուր մոմենտի արտասանության տևողության հետ։ Քննությունները ցույց են տալիս, որ պայթուցումն ու պայթյունը տևում են հավասար ժամանակ, յուրաքանչյուրը միջին հաշվով 3/400 վայրկյան, իսկ խցումը երեք անգամ ավելի, մոտավորապես

10/100 կամ 1/10 վայրկյան։ Խցումը տևում է երկու անգամ ավելի, երբ բաղաձայնը կրկնակ է։ Էապես կրկնակ բաղաձայն չկա. այլ կա միայն խցում ըստ կարելվույն կարճատև (մի բաղաձայն), և խցում ավելի երկար տևողությամբ (երկու բաղաձայն)։

Երեք մոմենտներից ամենակարևորը խցումն է. պայթուցումը կամ պայթյունը կարող են պակասել. այսպես, երբ պայթող բաղաձայնը հաջորդում է մի ուրիշ պայթողի, կամ շրթնային պայթականը բառի սկիզբն է, այսինքն երբ դործուրանները արդեն փակ են և նոր փակելու կարիք չկա, բնականաբար պայթուցումը պակասում է և բաղաձայնը սկսում է խցումից։ Նույնպես երբ պայթականը գտնվում է բառի վերջում (ինչպես ap, ab, am, an և այլն), բնականաբար պայթյունը կարող է պակասել և խցումի հետ գործարաններն էլ կմնան փակ։ Այսպես, օրինակ, atka խմբի արտասանության մեջ t ունի միայն պայթուցում և k միայն պայթյուն. իսկ akta խմբի արտասանության մեջ ընդհակառակը։ Այնուամենայնիվ երկու դեպքումն էլ ականջը լսում է պայթող ձայնը, որից հետևում է, թե նրա անհրաժեշտ մասը խցումն է։ Այսպիսի պարագաներից կարելի է զանազանել միևնույն բաղաձայնի երկու զանազանությունը՝ պայթուցիկ (implosif), որ ունի միայն պայթուցում և պայթական (explosif), որ ունի միայն պայթյուն։

Մունգա և մոն-քմեր լեզուների մեջ կան կիսաբաղաձայն կոչված ձայներ, որոնք չեն ներկայացնում բաղաձայնի ամբողջ հնչումը, այլ նրա մի մասը միայն. մոտավորապես այնպես, ինչպես հայերեն գձձել բառի մեջ առաջին ձ-ի արտասանությունն է։

Այս բոլորից հետևում է, թե միևնույն լեզվի մեջ նույնիսկ միևնույն բաղաձայնը, նայած իր դիրքին, ներկայացնում է իրարից տարբեր ձևեր. տարբեր է, օրինակ, p ձայնը, երբ բառի սկիզբն է, տարբեր է երբ բառի վերջն է, տարբեր է երբ բառամիջին է գրտնվում, երկու ձայնավորի միջև, թե մի ուրիշ բաղաձայնից առաջ և թե այդ բազաձայնը ի՛նչպիսի բաղաձայն է։ Լեզվի բարեշրջության մեջ ձայները, նայած իրենց դիրքին (բառասկզբում թե բառավերջում և այլն), ստանում են տարբեր ձայնափոխություն։ Մեր այբուբենները մեզ շատ խոբուսիկ պատկեր են տալիս ձայնի մասին, բոլորն էլ ներկայացնելով մի տառաձևով։

Բոլոր բաղաձայնները (սեղմ, պայթական կամ կիսապայթական) արտասանության կողմից երկու տեսակ են լինում՝ թրթռուն կամ խուլ։ Բաղաձայնը իրապես կազմվում է խոչակից վեր՝ կոկորդից մինչև շրթունքները եղած որևէ մասում. եթե այս միջոցին

ձայնավորները մնան բոլորովին բաց, ապաս ու հանգիստ, այնպես որ բաղաձայնի արտասանության մեջ ոչնչով մասնակցության չունենան և թոքերից դուրս եկած օդի հոսանքը աղատորեն անցնի խոչակից, այն ժամանակ բաղաձայնը կոչվում է խուլ: Իսկ եթե այդ միջոցին ձայնավորները փակված լինեն և օդի հոսանքը ճնշելով բաց անի նրանք և թրթռացնելով բարձրանա ավելի վեր, մտնելու համար բերանում կազմված անցքի մեջ, այդ պարագային բաղաձայնը կոչվում է բերուն: Երկեն ամեն լեզվի մեջ էլ բաղաձայնները կազմում են դույլ-դույլ խմբակիներ, ինչպես պ—բ, տ—դ, կ—գ, ծ—ձ, ճ—ջ, որոնցից առաջիններն խուլ են և երկրորդները բերուն:

Բայց թրթռուն և խլուկյունը կարող են ունենալ բազմաթիվ աստիճաններ: Նախ, բաց որում ձայնարանը կարող է շատ կամ քիչ փակված լինել, թրթռումներն էլ կարող են ավելի կամ պակաս լիություն ունենալ: Երկրորդ՝ բաղաձայնը ունենալով որոշ տևողություն, թրթռումներն էլ կարող են սկսել և դադարել ավելի շուտ կամ ավելի ուշ: Այս վերջին տեսակետով բաղաձայնները կարող են ներկայացնել բազմաթիվ դասակարգություններ. բայց դրանցից գլխավորները հետևյալներն են.

1. Խոչակի թրթռումները սկսում են բաղաձայնի պայթուցման հետ միաժամանակ, շարունակվում են անընդհատ խցման և պայթյունի ժամանակ և վերջանում են բաղաձայնի հետ: Այսպիսի արտասանություններ իսկական բերուն ձև է, ինչպես են ռոմանական և սլավական լեզուների թրթռուն բաղաձայնները:

2. Խոչակի թրթռումները սկսում են բաղաձայնի խցման պայթյունի ժամանակ և շարունակում են մինչև վերջ. թրթռումների լիությունն էլ լինում է տարբեր, այնպես որ հեշտությամբ կարելի է շփոթել խուլի հետ. այս կարգի արտասանությունը կոչվում է ֆիսաբրբռուն: Գերմանների թրթռուն բաղաձայնների սովորական ձևն է: Այնպես որ ֆրանսիացիք երբ լսում են գերմանացու b ձայնը, հասկանում են p. օրինակ՝ Börne անունը լսում են Pörne (F. Engels, Der Fränkische Dialect. Մոսկվա, 1935, էջ 82): Այսպես են նաև դանիերենի b, d, g բաղաձայնները և հաճախ շվեդերենի: Նույնիսկ վրացերենի համար Գոգտը (էջ 11) ասում է, թե b, d բառասկզբում խուլ են և հեշտությամբ կարելի է շփոթել խուլերի հետ, որոնցից տարբերվում են միայն տկարությամբ: Նույնպես (էջ 12) ասում է, թե ճ և ջ հեշտությամբ շփոթվում են իրար հետ:

3. Խոչակի թրթռումները սկսում են պայթուցման հետ միա-

ժամանակ, բայց դադարում են խցման միջոցին, նախքան պալթելունը. այնպես որ բաղաձայնի պալթական մասը լինում է խուլ։ Ալսպիսի արտասանությունը կոչվում է խլացած բրբռուն (sonore assourdie)։ Երբ մի թրթռուն բաղաձայնի հաջորդում է մի խուլ բաղաձայն, այս վերջինի ազդեցությամբ հաճախ առաջինն էլ դառնում է խլացած թրթռուն։ Անգլերենի մեջ բառավերջի թրրթռուն պալթականները այս կարգին են պատկանում. ինչպես՝ bad, dog. նույնը շատ անգամ նաև ֆրանսերենում, ինչպես robe, longue։

4. Ռուչակի թրթռումներն սկսում են պալթուցման հետ։ Ուցցման միջոցին դադարում են, բայց քիչ հետո նորից են սկսվում։ Ալսպիսի արտասանությունը կոչվում է միջախուլ (médio-sourde)

5. Երբ բաղաձայնի ամբողջ տևողության մեջ թրթռումները։ բացակալում են, բաղաձայնը կոչվում է խուլ կամ պարզ խուլ. ինչպես ֆրանսերեն p, ռուսերեն п և այլն։

6. Երբ միևնույն ժամանակ բաղաձայնին ընկերանում է նաև մի թեթև շունչ (գրեթե h ձայնին նման), բաղաձայնը կոչվում է շնչեղ խուլ։ Ալսպես են հայերենի փ ք, թ, ց, չ բաղաձայնները, ալսպես են սանսկրիտ kh, čh, ṭh, th, ph բաղաձայնները. ալսպես են նաև գերմաներենի, շվեդերենի, անգլերենի, թուրքերենի p, k, t, č ձայները։ Դանիերենի մեջ ո՛չ միայն բաղաձայնն է ուժգնապես շնչեղ, այլև նրա շունչը շարունակվում է դեռ հաջորդ ձայնավորի արտասանության ժամանակ։

Պարզ խուլ բաղաձայնները շատ հեշտ է զանազանել իրենց շնչեղից. երբ մոմի բոցի մոտ արտասանենք երկու խմբերը, պիտի տեսնենք, որ առաջինների ժամանակ բոցը չի շարժվում, իսկ երկրորդների ժամանակ ո՛չ միայն շարժվում, այլև մինչև իսկ հանգչում է։

7. Նույն շունչը կարող է ընկերանալ նաև թրթռուն բաղաձայնների հետ և այն ժամանակ բաղաձայնը կոչվում է շնչեղ բրբռուն։ Քիչ լեզու կա, որ ալսպիսի բաղաձայններ ունենա.-ալսպես՝ սանսկրիտ լեզուն, ինչպես և արդի հինդուստանին և դրավիդյան լեզունները, ունեն շնչեղ թրթռուն բաղաձայններ, որ լեզվաբանները տառադարձում են bh, gh, dh, d̲h, ǰh ձևով։ Արդի տեղուգու լեզուն գիտի զանազանել բոլոր 4 տեսակները, ինչպես՝ b, bh, p, ph ǰ, ǰh, č, čh և այլն (Lakšminarasayya, 5—7)։ Աննասիկները զարմանալի կերպով ունի միայն gh (պակասում են իրեն dh, bh և այլն) (Dirr, Gramm. annam., 3)։ Հայերենի մեջ էլ

շատ սակ պահում ենք շնչեղ խլխլոան բաղաձայնների 6 ձևերը որ նշանակում ենք p', t', k', č', ç', առանցքով։ Ալաքալուֆ են հնչվում ասպիրատային p, t, k, č, ç առանձին բառատիպերում բան ևրևվանեն. Կաբինդա, Մաջի, Քարթերպի, Ակրատասլի, Կիլիկիսլի և այլ բարբառներում։

Խլխլոան առանձնահատկությունը ապրիոր ապրի պահպանվում են, ալաքալուֆ՝ ամանակական և բալքիկ-պալատալային լեզուների խլխլոան բաղաձայնները նախկինպես են ամենից նորմալ ձևերը. դերմանական խլխլոանները կիսակին միայն խլխլոան են։ Կան լեզուներ էլ որ չունեն խլխլոան ձայներ. ալաքալուֆ՝ Հրա երկրի ոնա-շելկնամ լեզվում չկան b, g, d, ǰ խլխլոան բաղաձայնները, այլ միայն p, k t, č, որոնք հնչվում են ժամ (տրեմոն p, k, t, č). կան n, m, ny l, r, y, v, w, ինչպես նաև s, ś, x, ɣ (կրկնաշրթնային խուլ), բայց չկան z, ž, ǯ, ǰ ձայնները (Tenelli, Gramm. e glossario della lingua degli Ona-Selknam della Terra del Fuoco, 18, 20)։

Ամերիկյան պահնիլա լեզուն էլ ունի p, t, k, բայց չունի b, g, d, ինչպես նաև l, v, z, ǰ (կան սակայն gua, gue, guo և այլն) (Caledon Gramm, goajira, 9)։

Ամերիկյան չիկիտա լեզուն չունի d, j, ինչպես և ž, l, v, ǰ. իսկ b հնչվում է շատ սակ (L. Adam—V. Henry, 2—4)։

Պերուի ատունա սիմի կամ կեչուա լեզուն չունի d, g, b, f, v, w, r ձայները, բայց ունի p, p', k, k'. t, t' č, č' ձայները (Middendorf, 39)։

Մելանեզյան նոգուտա լեզվի մեջ (ըստ Ray-ի, 284) k, p, t բաղաձայները հնչվում են g և k, b և p, d և t ձայների միջև. այդ նշանակում է, թե նրանք գտնվում են խլխլոանի և խուլի միջև կամ խլացած խլխլոան են։

Նյուկալեդոնը չունեն խլխլոան պալատականներ (b, d, g), բայց ունեն թույլ բաղաձայններ (փ, թ, ք), որով իրենց ձայնական դրությունը նման էր արդի գերմանական հնչման (Meillet, Ling. hist., II, 109)։

Այսօր էլ նույն դրության մեջ է գտնվում Ավստրալիայի կամիլարոյ լեզուն, ուր b-p, g-k, d-t այնպիսի անորոշ հնչում ունեն, որ չես իմանում, թե ի՛նչ են (Ridley, 4)։ Ամերիկյան մակուչի լեզվում հաճախ չի կարելի զանազանել b-p, g-k ձայները (Williams, 48)։ Այնու լեզվում b, g, d, ǰ խլխլոանները երբեք չեն կարող գտնվել նախադասության սկիզբը, իսկ p, k, t, č կարող են որևէ բառից հետո դառնալ b, g, d, ǰ (Batchelor, 33, 36)։

Ըստ Լ. Ազամի (Gramm. de la langue mandchou, Paris, 1873, 13) *մանջուրերենում պալեթական բաղաձայնների հնչումը խախուտ և անորոշ է. միևնույն տառերը բառասկզբում հնչվում են* k, p, t, *իսկ բառամիջում և բառավերջում՝* g, b, d։

Ալնու լեզուն թեև ունի k, č, t, p *բաղաձայնները, բայց չգիտե* g, ǰ, d, b *ամենաստվորական բաղաձայնները։ Չինարենը (մանդարինյան լեզուն) չգիտե* b, d, g, z, ǰ *թրթռուններրը, բայց ունի խուլ* p, t, k, ծ, ճ, *ինչպես և շնչեղ* p', t', k', ց, չ *ձայնները։ Սումերերեն արձանագրությանց մեջ* g-k, d-t, b-p *բաղաձայնները շատունակ իրար տեղ են գործածվում, որից հետևում է, թե ո՛չ կատարյալ թրթռուն են, ոչ կատարյալ խուլ* (Bertin, 1)։ *Ամերիկյան մայա լեզուն էլ չունի թրթռուն բաղաձայններ, այլ միայն պարզ խուլ և թավ.* k, t, t', ծ, ց, ճ, չ, p, p', *կա նաև* b, *բայց կարելի չէ զանազանել* p-*ից. իրարից չեն զանազանվում նաև* k *և* k' *(կ, ք)* (Tozzer, 18)։ *Ամերիկյան սիուսլավյան լեզվում պալեթականների շարքում չկա թրթռուն բաղաձայն, բացի* d-*ից* (Boas, II, 444)։

Նույնպիսի անորոշ դրությունն է տիրում նաև ամերիկյան տակելմա լեզվի մեջ, որի համար քննիչը (Sapir, The takelma language, Boas, II, 32—33) *ասում է, թե թեև բաղաձայնները ունեն 3 աստիճան* (b, p, p'), *սակայն նրանց հնչումը շատ չի համապատասխանում անգլիական և ֆրանսիական հնչման։ Սեպիրը գրում է այդ բաղաձայնների երեք աստիճանների փոխարեն* b, p', p! *և երկարորեն բացատրում է, թե ինչպես նրանք փոխարինում են հաճախ իրար այդ լեզվի մեջ։ Ալս բոլորը ցույց է տալիս, որ կան առանց թրթռումի* b, g, d *և այլն ձայներ, ինչպես և նվազ շնչեղ* p', k', t' *և այլն։*

Ավստրալիայի բնիկների լեզվով էլ b-p, d-t, g-k *շփոթվում են իրար հետ, ինչ որ ցույց է տալիս խուլ և թրթռուն հնչման անհաստատ վիճակը* (Teichelmann, 3, Threlkeld, 1—2)։

Ավստրալիայի ավաբակալ լեզուն ունի 4 աստիճան բաղաձայն (b, bh, p, ph—g, gh, k, kh—d, dh, t, th,) *բայց ճչականը երկու աստիճան է՝* ǰ *և* č. *չունեն* čh, ǰh (Threlkeld, 8)։

Տիբեթերենն ունի 3 աստիճան բաղաձայն. h, p, p', d, d, th, k, g, k', ǰ, č, ç *և հայերենի նման* ծ, ձ, ց (Foucaux, 1)։

Պարզ և շնչեղ զանազանությունը գլխավորապես շնչի առատության մեջ է։ Պարզ խուլն էլ շունչ ունի, բայց քիչ։ Առնենք, օրինակ, pa *վանկը. երբ ֆրանսիացին մոմի կամ լուցկու առաջ հնչի* pa, *բոցը կտատանվի միայն. իսկ երբ գերմանացին հնչի, կհանգի։*

Նույն փորձը կարելի է կատարել ձեռքի ներսին դրված թղթի մի փոքրիկ գնդակի վրա. երբ ֆրանսիացին հնչի pa, գնդակը հապճով կշարժվի, իսկ երբ գերմանացին հնչի, գնդակը կրնկնի։ Գծագիրների մեջ էլ ֆրանսերեն pa կսկսում է փոքր ոստյուն, իսկ գերմաներեն pa բավական մեծ։ Երբ մի ֆրանսիացի և մի գերմանացի ուժեղ ներշնչելուց հետո միաժամանակ սկսեն անդադար արտասանել pa մինչև շնչի սպառումը, գերմանացին շուտ կդադարի, որովհետև ամեն մի արտասանության շատ օդ կսպառի, իսկ ֆրանսիացին ավելի երկար կշարունակի, որովհետև յուրաքանչյուր արտասանության շատ ավելի քիչ օդ կսպառի։ Քանի այսմ ֆրանսիական խուլ (occlusive) բաղաձայնների պայթյունը համարյա թե թրթռուն է, շատ քիչ ժամանակ միայն նա խուլ է (ամենաշատը 2 կամ 3 հարյուրերորդական վայրկյան). սրա փոխարեն խցումը ուժեղ է։ Իսկ գերմանական լեզուներում պայթյունը խուլ է և շնչով, հետևաբար և՝ խցումը ավելի տևար (Rousselot, Principes, II, 1122)։

Նմանօրինակ մի փորձ կատարեցի իմ վրա. լիաթոք շնչելուց և ամրողջ շունչս պահելուց հետո, սկսեցի արտասանել իրար հաևից ba, ba, ba... ապա երկրորդ փորձը կատարեցի՝ արտասանելով pa, pa, pa... (կովկասյան և ոչ՝ պոլսական արտասանությամբ). վերջապես երրորդ փորձը կատարեցի արտասանելով p'a, p'a, p'a, Նույն փորձերը կրկնեցի նաև g, k, k' և d, t, t' պայթականների վրա։ Արդյունքն այն եղավ, որ b կամ p, d կամ t, g կամ k մինչև շնչի սպառումը կարելի եղավ արտասանել մոտ 70 անգամ, իսկ p', t', k' միայն 40 անգամ։ Արտասանության արագությունը նշանակություն չուներ, որովհետև ամեն մի անգամ նույն չափով օդ պիտի սպառվեր, որով և գումարը կլիներ նույն։ Նշանակություն ունի միայն «բարձր» ձայնով (այսինքն՝ ուժգին) արտասանությունը, որով յուրաքանչյուր վանկի վրա ավելի ուժ=օդ վատնվելով՝ վանկերի քանակը կպակասի համեմատական չափով։ Նա փորձը կատարեցի ձայնի սովորական բարձրությամբ (=ուժգնությամբ) և բոլորը միշտ միատեսակ։ Շնչեղ թրթռուն bha, dha, gha շարքն էլ նույնն էր, ինչ որ p' k' t' (1948 թ. ապրիլի 11—12)։

Ինչ էլ որ լինի բաղաձայնների տեսակը, անհրաժեշտ է, որ երկու շարժուն գործարան, կամ ավելի ճիշտ մեկ շարժուն և մեկ անշարժ գործարան մոտենան կամ կպնեն միմյանց, որպեսզի ձևացնեն սեղմ բաղաձայնների համար մի նեղ անցք, իսկ պայթականների համար ամբողջական փակումը։ Այս գործողությունը կատարվում է հետևյալ ձևով.

1. Շրթունքներից մեկը կպում է մյուս շրթունքին կամ ատամներին և կամ լեզվին. այսպիսով առաջանում են զանազան արտաբերություններ.

ա) Երկու շրթունքները հպվելով՝ p, m *և դրանց կրկնաշրթնային շփականները, որոնք նշանակվում են* p *և* t *տառերով՝ միջից ավելացրած մի գծիկ։*

բ) Ստորին շրթունքը մոտենալով վերի ատամներին՝ f, v. *կամ բոլորովին կպելով՝ մի տեսակ* f, *որ լսվում է գերմաներեն* pferd, kampf, *անգլերեն* comfort, nymph *բառերի մեջ։*

գ) Վերին շրթունքը մոտենալով կամ կպելով ստորին ատամներին, ձևացնում են սեղմ կամ պայթական բաղաձայններ, որոնք սովորական լեզվի մեջ չկան, բայց գործածական են այն մարդկանց մոտ, որոնց ստորին ծնոտը դուրս է երկարած (prognathe). *այսպես են հատկապես սեամորթ ցեղերը։*

դ) Վերին շրթունքը և լեզուն մոտենալով կամ կպելով իրար, առաջ են բերում սեղմ բաղաձայններ, ինչպես մի տեսակ ծ և մի տեսակ պայթական p—t, b—d *ձայների միջև։*

Բոլոր այս չորս տեսակի ձայները արտաբերվում են բերանի խոռոչից դուրս և մի շրթունքի անհրաժեշտ մասնակցությամբ. այս պատճառով էլ կոչվում են շրթնային (labiale) *կամ* արտաբերանային (extrabuccale)։

2. Լեզվի այս կամ այն մասը հպվում է քիմքի այս կամ այն կետին. այսպիսով կարելի է արտաբերել անսահման քանակությամբ հնչյուններ։ Լեզվի ծայրը կամ պսակը կարող է մասամբ կամ ամբողջապես հպվել քիմքի բոլոր կետերին՝ սկսած ատամների ծայրից մինչև քիմքի վերջին սահմանը.— բոլոր նույն հպումները կարելի է անել նաև լեզվի միջին մասով.— վերջապես լեզվի հետևի մասը կամ արմատը կարող է մասամբ կամ ամբողջապես հպվել քիմքի զանազան մասերին և կամ նույնիսկ կոկորդին։

Այս զանազան ձևերով արտաբերված հնչյունները՝ համաձայն քիմքի վրա իրենց հպման կետի, կոչվում են ատամնային (dentale), կապնային (alvéolaire), քմական (palatale), կատկային (vélaire)։

Նորագույն ձայնաբանները իրը հիմնակետ ընդունելով ո՛չ թե քիմքը, այլ լեզուն, սրա համեմատ էլ անվանում են այդ բաղաձայնները։ Այսպես, լեզվի ծայրով կարելի է արտաբերել բազմատեսակ պայթականներ. բայց ո՛րտեղ էլ որ դիպչի լեզվի ծայրը (ատամներին, ատամնակապիճներին (alvéole), *քիմքի այս կամ այն կողմին), միշտ էլ լսվում է* t, d *ձայնը. ուստի բոլոր այս կարգի բաղաձայնները կոչվում են* ծայրալեզվային (antéro-linguale, a-

picale, coronale) —լեզվի միջին մասը կարող է հպվել կարծր բիմբի պանապան կետերին, մինչև անգամ, թեև դժվարությամբ, կատիկին. այս կարգի պայթականն բաղաձայնները կոչվում են վա-վուկ (mouillée) կամ Ճմային (palatale). ինչպես, օրինակ, վա-նա բարբառով իգի «այգի» բառի մեջ գ ձայնը։ Բայց այս կոչում-ները հիշա չեն, որովհետև նեն լեզվի միջին մասը կատիկին կամ կապիճներին էլ հպվի, կստացվի նույն տեսակի մի ձայն, որ պետք է բմային կոչվեր, սակայն բիմբի հետ որեէ դործ ունենա-լու նոր ձայնարաններ այս կարգի պայթականները կոչում են միջնալեզվային (médio-linguale, dorsale)։ —վերջապես լեզվի հետևի մասով կարելի է արտասանել պանապան պայթականներ. բայց սրանք էլ պիտի լեզվի հետևի մասը (կատիկին թե կարծր բիմբի պանապան մասերին), միշտ էլ լսվում է k—g ձայները. ուստի բոլորն էլ կոչվում են հետնալեզվային (postério-linguale, radicale)։

Բոլոր այս երեք տեսակի ձայները (ծայրալեզվային, միջնա-լեզվային և հետնալեզվային) արտասանվում են բերանի խոռոչի ներսում, ուստի կրում են ներբերանային (intra-buccale ընդ-հանուր անունը։

3. Բերանի բոլորովին հետևի մասը, խուչակը և ըմպանը կա-րող են շոշափվել լեզվի արմատի և կատիկի հետ. այն ժամանակ արտասանվում են տեսակ-տեսակ կոկորդային ձայներ, որոնք բոլորը միասին կոչվում են հետբերանային (post-buccale) կամ կոկորդային ընդհանուր անունով։

Այս բոլորից դուրս ունենք նաև ռնդային ձայներ. բայց որով-հետև բթային խոռոչը անշարժ է և չի կարող բերանի պես դանա-դան դիրքեր ու ձևեր ստանալ, այս պատճառով էլ նրա կազմած ձայները շատ քիչ են։

Քանի որ բոլոր բաղաձայնների համար էլ երկու գործարան-ների մասնական կամ ամբողջական հպումն անհրաժեշտ է, ուստի պետք է նկատենք երկու հանգամանք. 1. Հպվող շարժական գոր-ծարանի ճնշումը կարող է լինել ուժգին կամ տկար։ 2. Հպման կե-սը կարող է լինել փոքր կամ ընդարձակ։ Երբ հպվող շարժական գործարանի միանային ձգտումը ուժգին է և գործարանները ավելի պինդ են կպում իրար, բաղաձայնը կոչվում է ուժեղ (forte). և երբ այդ ձգտումը թույլ կամ տկար է, բաղաձայնը կոչվում է մեղմ (douce)։ Կա ընդհանուր մի կապ բաղաձայնների ուժգնության և խուչակի թրթռումների միջև. թույլ բաղաձայնները ուժեղ են լինում, իսկ թրթռունները՝ մեղմ, պարզ խուլերը ավելի ուժեղ են, քան

շնչեղ խուլերը։ Այսպես, պ արտասանելու համար շրթունքները ավելի ճիդ են դործ դնում, քան բ։ Երբ մկանային աշխատանքը գործում է նաև խոչափի մեջ, մյուս գործարանները իրենց ուժից մի բան կորցնում են։ Այսպես, օրինակ, t, d, n բաղաձայնները արտասանվում են միևնույն հոդավորմամբ, բայց t ուժեղ է, d մեղմ, n ավելի մեղմ, որովհետև լեզվի մկանները ավելի քիչ են լարված։ Նույնիսկ եթե ուզենան բառին սաստկություն տալ, բաղաձայնը կուժեղացնեն, ինչպես դմբո՜ բառի մեջ դ ավելի ուժգին է, քան սովորական մի բառի մեջ։ Այսպես են հունարենում և ֆրանսերենում։ Ուրիշ լեզուներ հակառակ սովորություն ունեն. օրինակ, գերմաններեն b, d, g թրթռունները ուժեղ են, իսկ p, t, k խուլերը թույլ, ինչ որ ֆրանսիացու ականջին b ցույց է տալիս p, p ցույց է տալիս b և այլն։ Էտրուսկերեն լեզուն, ըստ Բարենտոնի, չուներ b, g, d բաղաձայնները և հնչում էր դրանք p, k, t. բայց ուներ նրանց թավ աստիճանները՝ p', k', t' (φ, χ, v)։ Հնդկական լահնդա լեզվի մեջ բառասկզբում b, J, d, g բաղաձայնները արտասանվում են ուժգնությամբ, իբր թե չանք դործ դրվեր արտասանելու կրկնակ bb, JJ, dd, gg (Grierson, հատ. 8, մաս 1, էջ 250)։

Երբ լեզվի մկանները լարված են և հպման կետը քիմքի վրա փոքր է, բաղաձայնը կոչվում է կոշտ (dure), իսկ եթե լեզվի մկանները թույլ են և հպման կետը քիմքի վրա ավելի փռված է, բաղաձայնը կոչվում է փափուկ (mouillée)։ Այս պարագային, ինչպես ասացինք, լեզվի միջին մասն է, որ (կռնակը) հպում է քիմքին. և որովհետև լեզվի այս մասը ջղերից զուրկ է, ուստի և հպումը լինում է միշտ թույլ ու տկար։ Լեզվով արտասանված բոլոր բաղաձայնները կարող են ուրեմն ունենալ իրենց փափուկ ձևը և հպման կետը կարող է տարածվել թե՛ դեպի լեզվի երկու կողերը և թե՛ դեպի առաջ կամ հետև։

Պետք չէ շփոթել փափուկ բաղաձայնները այն ձայնախմբերի հետ, որոնք կազմված են բաղաձայնից+y։ Փորձառական ձայնաբանության բազմաթիվ փորձերը ցույց են տալիս, որ այդ երկուսը տարբեր բաներ են. առաջինը արտասանվում է մեկ անգամից և քիմքի վրա բռնում է ավելի լայն տարածություն, մինչդեռ երկրորդը արտասանվում է երկու անգամից և քիմքի վրա բռնում է ավելի փոքր տարածություն։

Ջուվաշերենի մեջ (Ашарин, Матер., 2—5, 18 և 346!) բաղաձայնների փափկությունն էլ երեք աստիճան ունի. բոլորովին փափուկ, կիսափափուկ և աննշան չափով փափկացած բաղաձայն-

ներ. կան բաղաձայններ, որոնք 3 աստիճաններն էլ ունեն. այսպես են r, s, l, d, l, n, z, իսկ h, x, k, ń, g, ğ, (ŋ), ć, ʃ ունեն միայն ա և բ աստիճանները, ž, š, v, m, p, b միայն երկրորդ աստիճանը։

Ցակուտերենում կան մի խումբ քմայնացած (փափուկ) բաղաձայններ. այսպես lʸ, nʸ, ćʸ, dʸ, ʃʸ, որոնցից ամանք բառամիջում գոնված ժամանակ կրկնվում են, ինչպես bolʸlan nʸok (Ястремский, 14)։

Չուքչի լեզվի մեջ, բացի l, d, s, ʃ, n ձայներից, կան նրանց ուժեղ քմայնացած ձևերը, ինչպես նաև ʒ = ć (Bogoras, 645)։

Բ) ՍԵՂՄ ԿԱՄ ՏԵՎԱԿԱՆ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ

Սեղմ բաղաձայնները բաց իրենց ձևի բաժանվում են 4 տեսակի. կիսաձայն, շփական (fricative, spirante), ցնցուն (vibrante և կողմնական (latérale)։ Կիսաձայնների մասին արդեն պետք եղած չափով խոսել ենք նախորդ գլխում։ Շփականները ներկայացնում են նախորդներից ավելի նեղ մի անցք, որ ձևացած է բերանի միայն մի որոշ կետում և որի միջով օդի հոսանքը կարծես շփվելով անցնում է՝ թողնելով մեր վրա փչելու կամ սուլելու տպավորություն, ինչպես ֆ, վ, ս, զ, շ, ժ. ցնցուն բաղաձայնները առաջանում են մի որևէ առաձգական գործարանի հաջորդական մի քանի արագ ցնցումներով կամ թրթռումներով, որոնց միջոցին օդի հոսանքը շարունակ և փոփոխակի բացվում ու փակվում է, ինչպես ռ։ Վերջապես կողմնական բաղաձայնները ներկայացնում են արտասանության այնպիսի մի ձև, երբ լեզուն, կպելով քիմքի միջին մի կետում, արգելում է այստեղ օդի հոսանքը, բայց միևնույն ժամանակ կողքերից թողնելով մի-մի նեղ անցք, միջոց է տալիս օդի հոսանքին՝ նրանց միջով դուրս հոսելու, ինչպես լ։

Շփական բաղաձայնների համար կա երկու անհրաժեշտ պայման. նախ որ ձայնական անցքը ավելի նեղ պիտի լինի քան ձայնավորների համար և երկրորդ, որ դուրս եկած շունչը ավելի ուժեղ պիտի լինի նրանցից։ Եթե ձայնական անցքը բավարար չափով նեղ չլինի, շփականի տեղ կլսվի ձայնավոր, կիսաձայն կամ h. իսկ եթե շունչը բավական տկար լինի, շփականը կչքանա։ Այս բանը կարելի է փորձել շատ հասարակ ձևով. սկսենք նախ արտասանել s ձայնը և առանց բերանի դիրքը փոխելու, տկարացնենք մեր շունչը. պիտի տեսնենք, որ այլևս s ձայնը անհետացած է։ Եթե նույն փոր-

ձը կրկնենք z ձայնի վրա, պիտի լսենք միայն խուչակի թրթռումները։

Շփական բաղաձայնները բաժանվում են 3 կարգի. արտաբերանային կամ շրթնային, ներբերանային և ետերբերանային կամ կոկորդային։

Շրթնային շփական բաղաձայնները հետևյալներն են.

1. v և f. առաջինը՝ թրթռուն, երկրորդը՝ իր համապատասխան խուլ ձևը. այս ձայների արտաբերության ժամանակ ստորին ծնոտը մի քիչ ներս է քաշվում և վերի ատամները մոտենում են ստորին շրթունքին՝ հենվելով նրա ներքին եզերքի վրա, գրեթե կծելու պես և կազմելով մի շատ նեղ հորիզոնական ճեղք։ Արտասանության այս ձևի պատճառով կոչվում են շրթնատամնային։ Շատ լեզուների մեջ կան այս ձայները։ Մելանեզյան մոտա լեզվում v ձայնը հնչվում է b-ի նման (ըստ Codrington-ի, էջ XII)։ v ձայնը զարմանալի կերպով պակասում է հին հունարենի մեջ, ուր դառնում է ու։ Աֆրիկյան գանգ լեզուն էլ չունի v (Kitching, 13)։ Ֆ պակասում է այժմ էլ աֆղաներենում, բասկերենում և ֆիններենում, ուր փոխարինվում է v ձայնով։ Այժմ էլ չինարենում չկա v ձայնը, այլ միայն w։ Մոնղոլերենում ո՛չ v կա և ո՛չ f. միայն հնդկերենից, տիբեթերենից, չինարենից և ռուսերենից փոխառյալ բառերի մեջ կա v (Клюкин, 56)։ Յակուտերենն էլ չունի ոչ f և ոչ v։ Այսպես և սերբերենում տեղ-տեղ պակասում է f, ուր փոխանակում են v-ով (Meillet, Gramm. serbe. 14)։ Սանսկրիտ լեզուն էլ չուներ ֆ։

Ամեն լեզու, որ չունի ֆ, փոխառության ժամանակ վերածում է փ-ի և փոխադարձաբար. օրինակ, արաբերենը չունի փ, և երբ հարկ լինի, գրում է ف, ամերիկյան յուրակարե լեզուն չունի ֆ, ուստի իսպանական f-ն դարձնում է p (La Cuova, 3)։

Արդի աֆղաներենն էլ չունի ֆ և պարսկերեն փոխառության մեջ f-ն դարձնում է p (Darmestater, Chants pop., էջ V)։

V բաղաձայնի փափուկ ձևը v՝ կա սերբերենում, ինչպես և հիպերբորյան գիլիակ լեզվի մեջ։ v ընդհանրապես թրթռուն է, բայց երևի v ձայնի խուլ ձևն էր ներկայացնում h (Braune, 30)։ Ճապոներենում ֆ-ն այնպես թույլ է, որ ֆ-ի և հ-ի մեջտեղն է լսվում։ Աֆրիկյան յաունդե (բանտու) լեզվում f հնչվում է երկու շրթունքներով և լսվում է իբր գերմաներեն pf (Mekes, 7)։

Աֆրիկյան լալա, ինչպես և վիսա լեզվում կա մի նոր տեսակի w, որ քննիչը (Madan, 10) գրում է w ձևով և հնչմամբ մոտ է գտնում bw կամ vw ձայնին։

Աֆրիկյան ցեղերում կան կրկնաշրթնային v, f և սրանցից տարբեր արտասանությամբ՝ ատամնաշրթնային v, f. արդյոք լեզուներում նման երևույթ չկա. կա՛մ մինն է լինում, կամ մյուսը, իսկ այս լեզվի մեջ երկուսը միաժամանակ գոյության ունեն (Reum, 33):

Հին Հայերենի մեջ վ կար միայն բառասկզբում, իսկ բառամիջում և բառավերջում պրծում էր միայն ու ձայնավորից հետո, որպիսի լինելու դեպքում վերածվում էր կիսաձայն ւ-ի կամ ձայնավոր ու-ի, ինչպես աւազան, պատուանդան, հաւ և այլն: Բոլորովին պակասում էր ֆ ձայնը, որ փոխանակվում էր փ-ով: Արդի գրական Հայերենը և բարբառները պիտի արտահայտել երկու բաղաձայններն էլ: Միայն Ղարաբաղի բարբառն է, որ ֆ ձայնը չունի և հին Հայերենի պես շարունակում է կարիք եղած դեպքում ներկայացնել փ ձևով, ինչպես փառ, փարթիկ, փայտոն և այլն:

2. b (ոմանք գրում են β ձևով) և p. առաջինը թրթռուն, երկրորդը խուլ. երկուսն էլ արտասանվում են երկու շրթունքները մոտեցնելով իրար և մեջտեղը մի նեղ ճեղք թողնելով, այս պատճառով էլ կոչվում են կրկնաշրթնային կամ եռշրթնային (bilabiale): Քիչ լեզու կա, որ այսպիսի բաղաձայններ ունենա. Հայերենում, ինչպես և ֆրանսերենում, անգլերենում չկան: Նրանց պատահում ենք սեմական բարբառներում և իսպաներենում, որոնց մեջ սովորական b պայթականը երկու ձայնավորի միջև դառնում է b:

3. S և Z առաջինը խուլ և երկրորդը թրթռուն. արտասանվում են լեզուն հակելով վերի շրթունքին: Այս ձայնները ճիշտ դյուրությամբ կարելի է արտաբերել, սովորական չեն ծանոթ լեզուների մեջ, բայց առաջինը գործածական է Հյուսիսային Ամերիկայի վայրենիների լեզվում, երկրորդն անծանոթ է:

4. Մի ուրիշ v և f, որ արտաբերվում է վերին շրթունքը մոտեցնելով ատերին ատամնաբներին:

5. Արխապերենում կա մի ուրիշ ձայն, որ բռնում է h-ի և l-ի մեջտեղը, որ պիտը (Eini. 33) կոչում է շրթնայնացած h և նկարագրում է այսպես. ատերին շրթունքը մի քիչ առաջանում է և մի ուժեղ h շունչ դուրս է վտարվում վերև՝ դեպի քթի ծայրը. մենք նման մի ձայն արձակում ենք երբ շատ շոգում ենք: Դիրը նշանակել է ʃ:

Ներբերանային շփական բաղաձայնները հետևյալներն են.

1. θ և ð (þ, d) առաջինը խուլ, երկրորդը թրթռուն: Այս ձայնները արտաբերվում են լեզվի ծայրը մոտեցնելով առջևի ատամների վերին շարքին, այնպես որ լեզուն ատամների ատերին եզերը-

քից չանցնի։ Այս միջոցին ձևանում է մի շատ նեղ անցք, որի միջոցով օդը հոսում և անցնում է բայց շրթունքների միջով։ Քննությունները ցույց են տալիս, որ այս ձայների գլխավոր հատկանիշը լեզվի և ատամների միջև ձևացած երկարավուն ճեղքն է. եթե այդ ճեղքը վերածենք գլանաձև մի անցքի, այն ժամանակ կլսվի մի տեսակ s և z։ Կարելի է լեզուն ավելի առաջ մղել և կամ ավելի ետ քաշել. այն ժամանակ կստանանք θ և ð ձայների դանազան նրբերանգություններ։ Օրինակ, բիրմաներենում կա մի հնչյուն, որ շատ նման է այս θ հնչման, բայց ավելի նուրբ է և մոտենում է s-ի (Latter, 13)։

Այս ձայները, իրենց կազմության ձևի պատճառով, կոչվում են լեզվատամնային (lingo-dentale)։

Ձանազան լեզուներ ունեն այս ձայները։ Հաճախ պատահում ենք անգլերենում, ուր երկուսն էլ գրվում են միևնույն th ձևով։ Նույնը սովորական է նաև իսլանդերենում և դանիերենում։ Հին հունարենի θ և ð տառերը նոր հունարենում հնչվում են այս ձևով։ θ և ð գտնվում են նաև հին լեզուներից զենդերենում, հին պարսկերենում և գոթերենում։ Գոթերենում գրվում է þ։ Իսպաներենի մեջ կա խուլ θ, բայց ð թրթռունը պակասում է։ Ռոմանական շատ բարբառներ գիտեն թե՛ θ և թե ձայները, բայց ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն և ռուսերեն լեզուներում չկան։ θ կա նաև աֆրիկյան խոսու լեզվում (Kotz, 21)։ Մեր շրջակա ազգերից ո՛չ մեկի մոտ չկա ո՛չ θ և ոչ ð. այսպես թուրքերեն, պարսկերեն, քրդերեն և վրացերեն. միայն արաբերենն է, որ ունի հիշյալ կրկին ձայները։ Բաշկիր լեզվում կա ð և θ, որ ուրիշ թրքական լեզուներում չկա (Şakir cf., 66)։ Հայերենը իր բոլոր բարբառներով ղուրկ է նույն ձայներից, և մի հայ, որ անծանոթ է նրանց, այդ ձայները լսած ժամանակ ս, զ, վ, լ է կարծում։

2. S և z. առաջինը խուլ, երկրորդը թրթռուն։ Այս ձայները արտաբերվում են լեզվի ծայրը հենելով ատամներին կամ ատամնակապիճներին, և լեզվի մեջքի և վերին ատամների միջև ձևացնելով գլանաձև մի շատ նեղ անցք։ Այս պատճառով էլ կոչվում են **ատամնակապճային** (lingue-alvéolaire)։ Այս ձայների արտաբերության մեջ հատկանշական մասն է անցքի ձևը և ո՛չ թե այն կետը, ուր հենվում է լեզուն։ Լեզուն կարող է հետզհետե ավելի հետ քաշվել, ինչպես գերմաներենի և անգլերենի մեջ։

Գրեթե ամեն լեզվի մեջ այս երկու ձայներն էլ կան. մոնղոլերենը, լաոսերենը, ֆիններենը, դանիերենը, շվեդերենը, նորվեգե-

բնոր չունեն z. պոնիերենում օտար բառերի z ձայնն անգամ, թեև գրվում է, բայց հնչվում է s. չիա նույնպես Հարավային Գերմանիայի բարբառներում, ուր z ձայնի տեղ գործածվում է միշտ s. բասկերենն ունի խուլ z, որ առլրեր է s-ից (Lingua, I, № 1, էջ 64)։ Հին լեզուներից սանսկրիտը չունի z, բայց զենդերենն ունի։ Արաբերենը, բայց սովորական s, z-ից, ունի նաև նրանց մի զարեղ տեսակը՝ ص, ż, որ գրվում են ṣ ẓ. լհհերենն էլ ունի երկու տեսակ s և z, որոնք այրուրենի մեջ պահպանվում են մի շեշտով, s, ṡ z, ż (Joel, 2—3)։ Աֆրիկյան գանգ լեզուն ոչ s ունի և ոչ z. օրինակ, սուլթան բառը գրում և ասում են Sultan (Kitching, 13)։ Ավրտարալիայի կամիլարոյ լեզուն էլ չունի ոչ s և ոչ z։ Ավստրալիայի ավարակալ լեզուն չունի ոչ մի շշուկան (շ, ժ, ղ, ս)։

S և z ձայները հաճախ կոչվում են սուլող (sifflante)։

Գոթերենի z ասան ուներ ֆրանսերեն z (ղ) հնչյունը և ո՛չ թե արդի գերմանական ց հնչյունը (Braune, 1928, էջ 48)։

Ամերիկյան յուրաք լեզվի մեջ բառավերջի m հնչվում է խուլ (Kroeber, 417)։

Չիլիի բնիկները չունեն ոչ s և ոչ z. բայց Արգենտինայի բնիկները Չիլիի d ձայնը արտասանում են z. ցեղերից սմանք էլ նույնը հնչում են ž կամ j (Febres, 2)։

Սանսկրիտն ուներ s, ç, և ṣ. այս երեքի փոխարեն պալի լեզուն ունի միայն մի s։

Ըստ Յունդտի (էջ 31, 34), աֆրիկյան ոսնգա (բանտու) լեզուն ունի մի տեսակ շրթնային s, որ հեղինակը նշանակում է s̓ ձևով. սա մի թիչ նման է ps միախառն հնչումին. կարծես թե շրթունքները պատրաստված են փչելու բանալու ծակի կամ սրնդի մեջ։ Սրա թրթռունն է ż, որ մոտ է bz միախառն հնչումին։ Ձևերի շրթունքները հատ լինելով, ավելի բնդունակ են արտաբերելու այս ձայները։ Երևի նույն են նաև այս երկու հնչյունները (s և z), որ պահվում են նաև բանտու ցվա լեզվի մեջ (Person, 17) և բանտու չոնա լեզվի մեջ (O' Neil, 4), ուր այս երկու ձայները գրված են (s, z)։ Նույն են նաև կարանգա (բանտու) լեզվի յուրահատուկ s, z, ձայները, որ հեղինակը (Marconnès, 7) առաջարկում է sv, zv։

3. Որոշ լեզուներ ունեն մի տեսակ s, որ իր հնչմամբ բռնում է s և š ձայների միջին տեղը. այսպես են եվրոպական լեզուներից շվեդերենն ու նորվեգերենը, որոնք ամեն անգամ երբ s հաջորդում է r բաղաձայնին, արտասանում են այս ձևով։ Նույն ձայնը գտնում ենք նաև կարարդինեների մեջ (s′). վերջինս գիտե նաև նույնի թըր-

թոռուն ձևը, այսինքն՝ մի տեսակ z, որ բռնում է z և ž ձայների միջև։ Օսերենն էլ ունի այս s՝ և ž ձայները, որոնք դրնվում են s և š, z և ž ձայների միջև (Miller, Die Spr. d'Oss, 13)։ Ամերիկյան սակևլմա լեզուն էլ ունի մի տեսակ s, որ բռնում է s և š ձայների միջին տեղը (Boas, II, 31, 35)։

Հայերենը իր բարբառներով զուրկ է այս ձայներից։

4. š և ž առաջինը խուլ, երկրորդը թրթռուն. այս ձայները արտասանվում են լեզուն քաշելով մի քիչ հետև, ծայրը թեքելով դեպի քիմքը, երկու կողերից սեղմելով սեղանատամներին և շրթունքները առաջ ցցված։ Այս պարագային ձևանում է երեք հնչարան, մեկը ատամների անմիջապես հետևում, երկրորդը լեզվի և քիմքի միջև, երրորդը ատամների և շրթունքների միջև։ Այս երեքից կարևորագույնը առաջինն է. այնպես որ անհրաժեշտ է, որ օդի հոսանքը դուրս հոսի երկու ատամնաշարքերի մեջից։ Մյուս պայմանները երկրորդական են և լեզվից լեզու կարող են տարբերվել։ Այսպես, լեզուն կարող է ավելի հետ քաշված և ծայրը ցած հակված լինել. նույնպես, շրթունքները հանդարտ կարող են մնալ և կամ շատ ավելի առաջ ցցվել։ Այս մասին դյուրությամբ կարելի է համոզվել, եթե փորձենք նույն ձայները արտասանել շրթունքները հետ քաշված, սովորական և հետզհետե դեպի դուրս ձգած դիրքով։ Ամեն դեպքում էլ միշտ լսվում է š և ž։

š և ž ձայները հաճախ կոչվում են շշական (chuintante)։

Ամեն լեզվի մեջ չեն դրնվում š և ž ձայները. կան լեզուներ էլ, որ գիտեն ž, բայց զուրկ են ž ձայնից. օրինակ, հին լեզուներից հունարենն ու լատիներենը զուրկ են երկուսից էլ. սանսկրիտը չունի ž, բայց ունի երկու տեսակ š, մեկը մեր սովորական ձևով, մյուսը՝ լեզուն վեր ոլորած և քիմքի վերին մասին կպած (cerebral)։ Դրավիդյան տուլու լեզուն էլ ունի երկու տեսակ š, բայց տելուգու լեզուն թեև ունի երկու տեսակ s, բայց միայն մի š (Lakshmina rasayya, 5—7)։

Արաբերենը ունի š, բայց չգիտե ž։ Նոր լեզուներից ֆրանսերենը և ռուսերենը երկու ձայներն էլ ունեն մեծ բանակությամբ։ Անգլերենը և գերմաներենը ունեն շատ š, բայց ž ձայնը հազվադեպ է։ Իտալերենը ունի ž, բայց չգիտե ž։

Շվեդերենը ունի մի տեսակ առանձնահատուկ š, որ բռնում է š և ç (sch և գերմաներեն ich) ձայների միջտեղը (Poestion, Lehrb. Schwedl., 26)։ Միևնույնը կա նաև աֆղաներենի և պա-

մերի իրանյան շիկնի բարբառի մեջ, որոնք ունեն նաև համապատասխան թրքատն ž ձայնը. այս երկուսը ափղանների այրուրենով գրվում են ژ և տառադարձությամբ ž (Gram. Iran. phil., I, 292)։ Ըստ Խարմսահների (Chants popul. էջ XXXII), ափղաներենն էլ ունի երկու տեսակ š։

Մեր հարևան լեզուներից վրացերենը, պարսկերենը և բրկերենը ունեն առատորեն š և ž. թուրքերենը ունի š, բայց չգիտի ž։ Նոր հունարենը ս'չ մեկն ունի և ոչ էլ մյուսը։ Սանսկրիտը ուներ երկու տեսակ š, բայց արդի հնդկական սինհալի լեզուն կորցրել է երկուսն էլ (Gieger, 11)։ Լատաներեն լեզուն չունի ոչ մեկը և ոչ էլ մյուսը։ Ավատարալիայի կամիլարոյ լեզուն ինչպես չգիտի s, z, նույնպես չգիտի š, ž (Ridley, 3)։

Հայերենը կարող է արտասանել թե՛ մեկը և թե՛ մյուսը, բայց ս ձայնով բառերը բիչ թիվ են կազմում։

5. խ, ղ (x, ǧ). առաջինը խուլ, երկրորդը թրքատն. այս ձայնների արտասանության ժամանակ լեզվի արմատը բարձրանալով վերև, հպվում է բիմբին, այնպես որ օդի հոսանքը անցնում է նրանց մեջտեղով։ Որքան բարձրացած և պինդ կպած է լեզուն բիմբին, արտաբերված ձայնն էլ այնքան ուժեղ է և որքան ցած է ու թույլ, արտաբերված ձայնն էլ այնքան թույլ է։

Ձանազան լեզուներ ունեն այս ձայները, այսպես՝ գեղերենը, պարսկերենը, վրացերենը և այլն։ Կան էլ, որ նախորդի նման, թեև ունեն խուլ տատիճանը, բայց զուրկ են թրքոտիից։ Այսպես՝ հին հունարենը գիտեր x ձայնը, բայց չուներ ղ։ Նույնպես են նաև չեխերենը, սոմիներենը և լեհերենը։ Հին եդիպտերենը ուներ երկու տեսակ ն, մինը մյուսից ուժեղ, բայց չուներ ղ։ Նոր լեզուներից գերմաներենը, դանիերենը, բրետաներենը, սուսերենը, իսպաներենը, թուրքերենը, մանդղերենը, արաբերենը, պարսկերենը, բրդերենը, վրացերենը, օսերենը ունեն թե՛ x և թե՛ ղ։ Ձափաղանց առատ է x ձայնը ասորերենի մեջ։ Ֆրանսերենը, անգլերենը և իտալերենը զուրկ են թե՛ մեկից և թե՛ մյուսից։ Ռուսական ցիգաներեն լեզուն ունի ղ (Сергиевский, 13)։

Հին հայերենը ուներ միայն խ և չգիտեր ղ, ճիշտ ինչպես հին հունարենը. նոր հայերենը և բարբառները գիտեն թե՛ մինը և թե՛ մյուսը՝ ճիշտ ինչպես նոր հունարենը։ Թե՛ մինը և թե՛ մյուսը հայերենի մեջ բավական թավ են, ավելի թավ քան ռուսերենում և գերմաներենում, բայց ավելի մեղմ քան արաբական համապատասխան ձայները։ Արաբերենի ẋ ձայնը ամենաուժեղն է, որ կա նաև

կովկասյան լեզուներում. այսպես կաբարդին լեզվի մեջ՝ իբր իւորդյուն. օրինակ՝ axo «հովիվ», tlexa «ոտնակապ» (Лопатинский, 9)։ Շատ ավելի մեղմ ու փափուկ են նոր հունարենի խ և ղ (χ, γ) ձայները։ Հունարենը դիտի երեք աստիճանի x, մինը մյուսից ավելի ուժեղ (Mirambel, BSL, 37, № 109, p. 43)։ Իսկ սերբերենում այնքան տկար է, որ համարյա չի զանազանվում h-ից և հաճախ էլ չի գրվում (Беленький, 5)։

Հայերենի մեջ էլ, Սուչավայի բարբառը, բայի սովորական խ-ից, գիտի արտասանել ավելի կակուղ մի տեսակ խ, որ նման է հունարեն χ ձայնին, ինչպես վախ, ուրախ բառերի մեջ։

Բոլոր ներբերանային շփական բաղաձայնները կարող են արտասանվել ավելի փափուկ (mouillé) ձևով, այսինքն լեզվի միջին մասով։ Զանազան լեզուներ ունեն այդպիսի ձայներ. այսպես ունենք s և z բաղաձայնների փափուկ ձևերը, ֆրանսիական բարբառների, ռումիներենի, սերբերենի, լեհերենի, ռուսերենի մեջ (լեհերենում գրվում է ś, ź).— միևնույն լեզուները դիտեն նաև š և ž բաղաձայնների փափուկ ձևերը.— կաբարդիներենի մեջ գտնում ենք s և š ձայների միջին ṣ բաղաձայնի փափուկ ձևը (ṣ՝), ինչպես և նրա համապատասխան թրթռանը (ẓ) (տե՛ս Лопатинский, 3)։

ϑ—ʒ՝ ինչպես և խ—ղ ձայների փափուկ ձևերը տնտեսվոր են լեզուների մեջ. միայն դանիերենի ð ձայնը մի քիչ փափուկ է, իբր $ð^{y}$. այս պատճառով էլ երբեմն գտնում է y. իսկ x^{y} ձայնը առատ է բուրյաթներենում (Поппе, Аларский говор, 1930, стр. 8)։ Այս ձայնը կա նաև ալբաներենում (χ՛), ունինք նաև կաբարդին լեզվի մեջ (Aunam, 9)։

Հայերենը իր բարբառներով հանդերձ չգիտի ներբերանային շփականների փափուկները։ Այսպես նաև շրջակա լեզուները։ Երբ մի հայի մոտ արտասանվեն այս կարգի բաղաձայններ, կկարծի լսել բաղաձայն + y։

Հետբերանային կամ կոկորդային շփական բաղաձայնները հետևյալներն են.

1. h. այս բաղաձայնը արտասանվում է խոչակից. ձայնալարերը բացված են և շունչը բավական ուժեղ կերպով հոսում է դուրս՝ առանց թրթռացնելու նրանց։ Բայց ըստ որում ձայնալարերը կարող են շատ կամ քիչ բացված լինել և օդի հոսանքը ավելի կամ նվազ ուժգին լինել, ըստ այնմ էլ զանազան տեսակի h կա, մեկը մյուսից ավելի կամ պակաս ուժգին։ Ամենից ավելի ուժեղ է կաբարդիներե-

նի մեջ, ինչպես [illegible] «շուն» (Лопатинский, 5)։ Նույն ձայնը պահպանվում է պահպան կովկասյան լեզուների մեջ։ Նույնչափ ուժեղ է և սրարևեան ը [illegible], որի արտասանության ժամանակ լեզվի արմատն էլ մասամբ մոտենում է կտուկին, դրեթե նման [illegible] ձայնին։ Արաբերենը ունի նաև ակար h, որ դրությամբ տարբեր է մյուսից. այսպես նաև եթովպական գալլա լեզուն, որ ունի h և ḥ (Hodson, 11)։ Ամերիկյան մայա լեզուն ունի թե՛ սովորական h և թե՛ շատ ուժեղ h (Tozzer, 18)։ Տկար են գերմանական, դանիական, անգլիական, իսպանական, հունգարական, պարսիկ և թուրքական h-երը։ —Անգլերենից ավելի ուժեղ է չեխերեն h. սլավերեն լեզվի մեջ թեև գրվում է h, բայց հնչվում է x (Pečnik, 9)։ Վրացերենի մեջ կա երկու տեսակ h, որոնք այսօր իրարից դանագանություն չունեն, բայց անշուշտ հին ժամանակ մին մյուսից որևէ բանով տարբեր էր։ Հուսերենի և իտալերենի մեջ h ձայնը դոյություն չունի. ֆրանսերենում և պորտուգալերենում գրեթե չնչվել է, պահվելով միայն գրության մեջ կամ դանագան բարբառներում։

Հին լեզուներից սանսկրիտը (visarga), վենդերենը, հին պարսկերենը, հունարենն ու լատիներենը ունեին այս ձայնը, բայց թե՛ հունարենի և թե՛ լատիներենի մեջ ավելի հետո չնչվեց։ Եգիպտերենը ուներ երկու տեսակ h, ինչպես և երկու տեսակ x, որոնց բոլորի համար կան առանձին տառեր (Rueder, Äggptisch, 14)։

Հունարենում հին արձանագրությանց մեջ h գրվում էր ի ձևով, ապա վերայով և հուլները նրա փոխարեն բառասկզբի ձայնավորի կողքին սկսեցին գրել թավ նշանը (՝), որ կոչվում է լատիներեն բառով Spiritus asper (կոշտ շունչ)։ Ամեն մի բառ, որ հունարենում սկսում է ձայնավորով, անպատճառ պիտի ունենա կամ այս նշանը (՝ h), և կամ նրա հակադարձը (՛spiritus lenis) որ նշանակում է թե h չկա։ Միայն u ձայնավորն է, որ ù է հընչվում միշտ։ Այսօր էլ հուլները գրության մեջ ավանդաբար պահում են այդ նշանները, թեև ոչ մի հնչական արժեք չունեն։ Այսպես է, նաև ῥ՝ ձայնը, որ հնչվել է միշտ hr։

Ռուսերենն էլ չունի h, և ուրիշ լեզուների h հնչումը արձանագրում է г (գ, g) տառով։ Իհարկե h և g (հ և գ) բոլորովին նման չեն. բայց ռուսերենը դիմել է այդ միջոցին, որովհետև ուկրաիներենում г հնչվում է ɣ, որ h բաղաձայնի թրթռուն է։

Հնդկական բահնդա լեզվում h բաղաձայնը բառասկզբում և կամ շեշտված վանկի սկզբում ստանում է մի ուժեղ կոկորդային հնչում՝ նման արաբերեն ع-ի։ Նմանապես շնչեղ թրթռուն gh, jh,

dh, ḍh, bh, nh, mh, ṛh, wh և այլն բաղաձայնների մեջ h հնչվում է ջ ձևով. բայց այդպես չէ շնչեղ խուլերի մեջ kh, čh, th, ṭh, ph). օրինակ bhrā «եղբայր»>brʻā, ghumā (հողի չափ է)>gʻumā և այլն (Grierson,VIII, մաս 1, էջ 251)։ [Հեղինակի ասածից չի հասկացվում, թե այստեղ hʻ ձևով մի նոր ձա՞յն ունենք, թե h ձայնափոխվելով դառնում է ղուտ ʻ]։

Աֆրիկյան յաունդե (բանտու) լեզվում h արտասանվում է շրթունքների այնպիսի անորոշ կամ անտարբեր դիրքով, որ կարծես k է լսվում (Nekes, 8)։

Աֆրիկյան կինյամվեզի (բանտու) լեզվով կա ընգալին h (Velton, 2), որ մեր մեջ հա «ալօ» ասելու բացականչությունն է։

Ինչպես սանսկրիտում, նույնպես և պալի լեզվում h բաղաձայնը թրթռուն է (V. Henry, 4)։

Ուկրաիներենում r բաղաձայնը հնչվում է ɦ, բայց այդ ɦ-ն թրթռուն է և ո՛չ խուլ, ինչպես губа=hùba «շրթունք», горa=horá «լեռ» (Smal-Stockyj, 25)։ Г տառի այս հնչումն է, որ պատճառ է դարձել ռուսերենի մեջ г-ով տառադարձելու ուրիշ ազգերի h ձայնը։ Նույն հեղինակը (անդ, 56—57) գրում է, թե քանի որ մի շատ ընդարձակ տարածության վրա (չեխ, սերբ, բելոռուս, ուկրաինացի և այլն) սլավական g դարձել է ɦ, ուրեմն նախավոր սլավական g վերածվել է նախ ŋ (ɣ), ապա անցել h ձայնին։ Եվ եթե այս ŋ ձայնի համար տառ չհնարվեց, այդ այն պատճառով է, որ հունական այբուբենումն էլ նշան չկար այդ հնչման համար։ Ասպես և գերմանացիք tag, wagen բառերի ŋ-ի համար նշան չհնարեցին, որովհետև լատին այբուբենումն էլ չկար։

Գոթերենն ունի h ձայնը, որ հատուկ է միայն իրեն. թվում է, թե մի միակ ամբողջական բաղաձայն է հնչում. կա՛մ շրթնալին h էր և կամ խուլ w (ինչպես անգլերեն wh). ուրիշներ կարծում են, թե h+ խուլ w ձայների կապակցությունն էր (Braune, 1928, 40)։

Աֆրիկյան դագոմբա (բանտու) լեզվում կա մի տեսակ h, որ ուսումնասիրողը (R. Fisch, 1) նման է գտնում g=ŋ ձայնին, բայց ավելի փափուկ և թրթռուն (ըստ իս պետք է հասկանալ թրթռուն h, որ է ɦ)։

Պերուի ռունա սիմի կամ կեչուա լեզվում կա երկու տեսակ h, մեկը տկար և մյուսը ուժեղ (Middendorf, 39)։

Աֆրիկյան էվե լեզվումն էլ կա թրթռուն ɦ, որ է ɟ (Westermann, 15)։

Կան լեզուներ, որ ունեն երկու ուսակ ի (սովորական և ուժեղ), ալպահա ևն, օրինակ, ախրեմներեն ի և ի՛ (Foucaux, 1)։

Հայերենը հնուց ի միշտ ունի մի ուսակ ի, որ անշուշտ շատ պարզ չէր և չէ, քանի որ վրացիը, որտեղ ունեն երկու ուսակ ի, հայերեն բառերի տառադարձության մեջ շատ անգամ ի ձայներ հաղորդում են։ Հին հայերենի ի ձայնի սիստեմային տարբերությունն այն է, որ մի քանի բառեր, որոնք սկսում են ի ձայնով և ունեն նրան հաջորդող ի, հոլովման կամ ածանցման մեջ ունեցել են վերջում. որ կորցնում են ի չինելը. օրինակ հիմն—հիման, հինգ—հնգի, բայց հինգերորդ։

ի ձայնը ունի և իր թրթռան համապատասխան ձևը. ալպահա թրթռան ի կա նաև հինդուստանիի, սանսկրիտի, արաբերենի և մոգրերի բնբրեբական լեզուների մեջ։ Սովորական ի ձայնը, բուն բնիկ կերպարանքների, թրթռան էր, բայց կար նաև խուլ ի։ Ըստ Օ'Նեյլի (էջ 4), ամերիկյան շոնոն լեզուն չգիտի սովորական խուլ ի, այլ միայն թրթռան ի։ Ըստ Մարկոնահի (էջ 9), գալա լեզուն ունի և խուլ և ի թրթռան, մինչդեռ կատմանդու լեզուն գիտի միայն վերջինը։ Օվիմբունդուի տահիթի լեզվում ի այնպես է հնչվում, որ երբեմն շփոթվում է ֆ-ի հետ (Senac, 17)։

Հայերեն բարբառների մեջ բառասկզբում հաճախ գտնում ենք թրթռան ի, որ համապատասխանում է գրաբարի յ ձայնին. այսպես Յակոբ, Յարութ, Յովակիմ և այլն։ Թրթռան յ ձայնը գտնում ենք Կարինի, Մուշի, Շաբին-Կարահիսարի, Արաբկիրի, Սեբաստիայի բարբառներում։

Ջ. Ք, որ արտասանվում է լեզվի արմատը հպելով ըմպանին արաբերենի ج կոկորդային ձայնն է, որ գտնվում է նաև կաբարդինեերենի մեջ (Лопатинск., 4)։ Ավելի ուժեղ է քան սովորական ղ, ինչպես շատ լեզուներ, նույնպես և հայերենի մեջ պահպանում է։

Ցնցումի բաղաձայնները առաջանում են մի որևէ առաձգական դործարանի հաջորդական ցնցումներով, ալսինքն կարճատև ու արագ պալթումներով ու իակումներով։ Այդպիսի ցնցումներ կարող են առաջ բերել շրթունքները, լեզուն և կատիկը։ Ըստ ալսմ ցնցուն բաղաձայնները հետևյալներն են.

1. Շրթնային ցնցուն.—Այս բաղաձայնի արտասանության ժամանակ երկու շրթունքները թրթռում են, օդի հոսանքը ընդհատումներով հոսում է նրանց միջով. խոչակը կարող է միևնույն ժամանակ թրթռալ կամ ոչ։ Այս ձայնը իրրև սովորական ձայնական երևույթ գործածական չէ լեզուների մեջ. բայց ձայնարկու-

թլանց մեջ կա. այսպես ցրտից դողալու և մանավանդ ձին կանգնեցնելու համար արտաբերված ձայնարկութիւնը։ Իբրև առանձին հնչյուն գոյութիւն ունի արևմտահայերենում. ինչպես որ «դաշտ»։

2. Լեզվային ցնցուն (r)—Լեզվի ծայրը բարձրանում է դեպի առամնակապիճները և կամ է՛լ ավելի բարձր և այս դիրքի մեջ սկսում է թրթռալ։ Լսվում է n ձայնը, որ սովորական է շատ լեզուների մեջ, ինչպես հունարենի, լատիներենի, ռոմանական լեզուների, ռուսերենի մեջ և այլն։ Ըստ Դրամոնի (Traité pratique de prononciation française, 67), ֆրանսերենում բառասկզբի r-ի համար թրթռումների թիվը 3-ից պետք չէ անցնի (տե՛ս Bruneau, Manuel de phonetique, 40)։ Շվեդերենում և նորվեգերենում կա մի տեսակ նուրբ r, որ արտասանվում է լեզվի ծայրը մոտեցնելով լինդին, իսկ եթե նրանից հետո հաջորդեն t, d, n, s բաղաձայնները, երկուսը միանալով տալիս են յուրահատուկ հնչումներ, որոնք շվեդացիք նշանակում են rt, rd, rn, rs (Poestion, Schwed, 2, 25)։ Հինդուստանի լեզվում կա բացի սովորականից նաև ուրիշ երկու տեսակ r, որոնց արտասանութեան ժամանակ լեզուն հպվում է քիմքի ավելի բարձր կետին և այս պատճառով էլ կոչվում են գանգալին (գրվում են ṛ, ṛh). հնչումը ուժեղ ռ-ի նման է (Bonnerjea, Gramm. hindi, 2)։ Դրավիդյան կուրուխ լեզուն ունի 3 տեսակ r. առաջինը սովորական, մյուսները գանգալին r և շնչեղ գանգալին ṛh (Haho, 4)։ Աֆրիկյան ռոնգա (բանտու) լեզուն էլ ունի գանգալին r, որ շատ ցնցուն է (Junod, 31)։

Աֆղաններեն էլ ունի գանգալին r, որ գրում են r։ Արևմտյան սլավական լեզուները ունեն մի տեսակ r (լեհերեն rz, չեխերեն ř), որ առաջանում է լեզվի ուժեղ թրթռացումով և ռժ ձայնախմբի արտասանութեան տպավորութիւնն է թողնում (Hantich, Gramm. tchèque, 8)։ Օրինակ, Գրիգոր անունը լեհերենում լինում է Grzegorz։

Դրավիդյան լեզուների մեջ կա երեք տեսակ r. բացի սովորականից, կա մի տեսակ r, որ շատ թույլ է հնչվում, այնպես որ շատ տեղեր դարձել է l կամ y և կամ ջնջվել է։ Անգլիացիք այս ձայնը տառադարձում են zh կամ rzh ձևով.—մի ուրիշ տեսակ ուժեղ r, որի կրկնակը, rr, արտասանվում է իբր ttr (Caldwell, Dravid, 144—145)։ Աֆրիկյան նձիմա լեզվի մեջ r հնչվում է l-ի մոտիկ մի հնչյունով (Welman, A preliminary study of the nzima, 17)։ Ամերիկյան արավակ լեզվում կա մի ձայն, որ բռնում է l-ի և r-ի միջին տեղը. ոմանք գրում են այս ձայնը $\frac{l}{r}$ ձևով, ու-

բերներ պարզապես l, իսկ արիշներ էլ r. շատ դժվար արտասանելի մի հնչյուն է (Crevaux-Sadot-Adam, 167)։ Պորտուգալերենը նույն երկու տեսակ r, մին ուժեղ և մյուսը սակաւ, նման հայերենի (Anstett, 5)։ Շատ մեղմ է նաև սիկիանյան տահիթի լեզվի r ձայնը (Senac, 17)։

3. Կատակային ցնցուն (r).—Լեզուն բարձրանում է և կատեդի տակ ձևացնում է մի անցք, որի միջով հոսում է օդը՝ թրթռացնելով լեզվակը կամ նաև կտուկը։ Այս ձայնը սովորական է արդի ֆրանսերենի և գերմաներենի մեջ, ու լեզվային ցնցան r ձայնը գրեթե բացակայում է։ Այս ձայնը, որ հաճախ կոչվում է r parisien (փարիզյան r) չկա սակաւ լեզուների մեջ, բայց պատահում է եվրոպական գրականության մեջ, իբր դավաճանական արտասանությամբ կամ անձնական թերություններ (այսպես Հոլանդիոս, Շվեդիա, Նորվեգիա, Պորտուգալիա և Անգլիա)։ Ֆրանսերենում և գերմաներենում սկսել է թուլանալ տասնութերորդ դարում և սկզբում համարվում էր թերություն, հետո ընդհանրանալով՝ սովորական դարձավ։ Հայերենի մեջ էլ չկա այս ձայնը, բայց ինձ պատահել են անձինք, որ արտասանում էին այսպես։ Եվ հայտ, երբ լսում է այս ձայնը, կարծում է լսել ղ։ Շատեր մերոնցից ցանկանալով նմանվել գաղ ֆրանսիական արտասանությանը, բոլոր լեզվային ցնցան r-երը հնչում են ղ. բայց դա հայտնապես սխալ է, որովհետև նախ ղ շփական է, մինչդեռ ֆրանսիական հիշյալ բազմաձայնը ցնցուն է. երկրորդ՝ ֆրանսիացիների մոտ էլ կա լեզվային r արտասանությանը և մանավանդ որ հետաքրքրները, դերասաններն ու երգիչները դրան են ձգտում բեմի վրա հասարակության առաջ միայն այս ձևի r՝ կոկորդին նվազ հոգնություն տալու և ավելի ներդաշնակություն համար (Bruneau, Manuel de phonétique, 41)։

4. Դանգային ցնցուն (r).—Գտնվում է դրավիդյան բրահուի լեզվի մեջ՝ ըստ Բրևլին (էջ 28)։ Լեզվի ծայրը դիպցնում են քիմքի շատ հետևը, համարյա փափուկ քիմքին հասած. սրա տեսակը մի ձևն է հինդուստանի r, որի հնչման ժամանակ լեզվի ծայրը դիպչում է քիմքի շատ ավելի առաջակողմը։

5. Ըմպանային ցնցուն (r).—Լեզվի արմատը մոտենում է ըմպանին, կատիկի հետևի մասը թրթռում է և արտաբերում է մի տեսակ r, որ սովորական է դանիերենի մեջ։

Այս բոլոր ցնցուններըը կարող են արտասանվել նաև ուրիշ ձևով. գործարաններըը ստանում են վերոհիշյալ դիրքերը, բայց

րալց մնում են անփոփոխ, ալսինքն առանց ցնցվելու։ այն ժամանակ օդի հոսանքը դուրս է գալիս առանց ընդհատվելու և առաջանում է մի տեսակ ձայն, որ բոնում է ցնցուն բաղաձայնի և շփականի միջին տեղը։ կարելի է կոչել դրանք կիսացնցուն։ Ալսպես՝ անգլերենում սովորական է լեղվալին ցնցուն բաղաձայնի ալս տեսակը, որ կարելի է նշանակել ɹ (շրջված r) ձևով և որ անսովոր ականջին տալիս է z կամ ž ձայնի տպավորութլունը։ Աննամերենում թեև կա ուժեղ r, բալց t-ից հետո ալնչափ նուրբ է հնչվում, որ անվարժ ականջը չի նկատում նրա գոլութլունը (Dirr, Gramm. annam., 4)։ *Հալերենում ալս ձայնին համապատասխանում է p, որ մի քիչ ավելի ցնցուն է քան անգլիական r և շատ ավելի պակաս ցնցուն քան n, որ համապատասխանում է վերի լեղվալին ցնցունին։ Նույն p ձայնը գտնում ենք նաև վրացերենի, թուրքերենի, պարսկերենի, ուտիերենի և բասկերենի մեջ։ Ջուքչի լեզուն էլ ունի բարակ r* (Bogoras, 645)։ *Ուշադրին, օրինակ, անընդունակ է հնչելու n և n-ով սկսվող բառերը, ինչպես* nnus, *դարձնում է* nurnuq։ *Ճապոներենում r ձայնը զանազան բարբառներում ալնպես նման է l-ին, որ բոնում է ալս երկուսի միջին տեղը (ըստ* Plaut-*ի, էջ 3), ալնպես որ ոմանք մինչև անդամ օտարազգի l-ով բառերը գրում են r տառով։ Մի ուրիշ գավառում էլ համարյա թե դարձել է d. ալնպես որ* London *բառի փոխարեն հնչում են* Dondon (Plaut, 3)։

Բասկերենում կա թե n (ուժեղ rr*) և թե p, որ անվարժ ականջը լսում է իբր l. նուրբ r գտնվում է երկու ձայնավորի միջև, իսկ ուժեղ n՝ գտնվում է վանկի վերջում՝ հաջորդ բաղաձայնի մոտ. ինչպես՝* erdi «կես», erbal «տկար». *երկու rr միասին հնչվում են ուժեղ n. ինչպես* lurra «երկիր»։ *Հալերենի նման ալս երկուսը բոլորովին տարբեր ձայներ են. ինչպես* ura «ջուր», urra «կաղին»։ *r-ի ալս փափուկ հնչումը ալնքան նման է d-ի, որ երբեմն միևնույն բառը երկու ձևով էլ գտնում ենք. ինչպես՝* erastea *կամ* edastea «խոսել» (Van Rys, 6,8)։

Լաոսերենում չկա r. չինարենում էլ չկա r. բալց բառավերջում պատահում է մի հնչյուն, որ բաղկացած է r և երկար l ձայներից. տառադարձութլան մեջ գրվում է rh (Seidel, Chin. gramm., 13)։

Կատկալին ցնցուն r ևս կարող է արտասանվել առանց ցընցումների և ալն ժամանակ շատ է մոտենում ղ ձայնին։ Ալս ձայնը, որ նախորդի ոճով կարելի է ներկալացնել շրջված ɹ ձևով,

պանվում է ալյուի ֆրանսերենի և գերմաներենի միջև։ Գերմանացիք շատ անգամ շփոթում են wagen, waren ձևով բառերը, որտեղ թե g և թե r համարյա զուգահեռ են դուրս գալիս։

Այս բոլոր անուանի ցնցումները սովորաբար թրթռուն են, բայց կարող են դառնալ խուլ, հատկապես բառավերջում։ Չինհունական լեզուներ ունի կարճ ու երկար խուլ r (Boas, I, 979), մոնղոլերենը ունի երկու անուանի r՝ թրթռուն և խուլ. դանիերեն կա խուլ r խոլանդերենում էլ կա խուլ r, որ գրվում է hr ձևով։ Ամերիկյան յուրոկ լեզվում բառավերջի r խուլ է (Kroeber, 417)։ Մեղ մոտ, Կարսի և Լենինականի բարբառում, բառավերջի ր հնչվում է խուլ, ուստի շ ձայնի ապավորությունն է գործում. ինչպես բեր, տար, աուր (բայց հենց որ այս ր բառի մեջ է մտնում, հնչվում է սովորական ձևով թրթռուն ր. ինչպես բերի, տարի)։ r կարող է նաև հնչվել փոփոխված ձևով, այնինչ լեզվի մյուս մասում. այս կարգի ձայներից հայտնի է հատկապես առաջինի փոփոխված r՝ ձայնը։ Լեթթներեն էլ ունի փոփոխուկ r, որ գրում է r. (տակին աուրակիա)։ Մոնղոլերենը, որ ունի երկու անուանի r, ունի նաև նրանց համալին ձևերը r՝ թրթռուն և r՝ խուլ (Владимирцев, 359)։ Պոլինեզյան լեզուների մեջ կա մի անուանի r, առաձգների միջև արտասանված, այնպես որ հաճախ լսողը թեթև d է կարծում։ Այսպես նաև Նոր-Զելանդիայի մաորք լեզվում, ուր չկա ո՛չ d և ոչ l, այլ այնպիսի մի r, որ բռնում է այս երկու ձայների տեղը. երբ հարկ է լինում տառադարձել անդլերեն d, դնում են r. այսպես David>Ravirl. Նմանությունը այնքան է, որ տրիշ համփորդներ նույնը գրել են d ձայնով (Passy, 140)։ Ասիրիերենը տադալոգ լեզվում կա մի անուանի r, որ գտնվում է r-ի և d-ի միջև, բայց ավելի մոտ է r-ին. հաճախ նա առաջանում է հրկու ձայնավորի միջև գտնված d-ից (Blake, 6)։

Նույնպիսի մի շատ սկար r կա նաև ամերիկյան պաուն լեզվի մեջ, որ անվարժ մարդը մերթ լսում է l, մերթ r, մերթ n և մերթ d. այս ձայնը արտաբերվում է լեզվի ծայրով՝ r, որ դիպչում է կարող առամնեերից մի քիչ հետև գտնված մի կետում. երբ լեզվի ծայրը թրթռում է՝ լսվում է l և երբ լեզուն թողնում է հանկարծ քիմքը՝ լսվում է d, իսկ n ձայնի ապավորությունը նրանից է, որ արտասանության ժամանակ շունչը դուրս է գալիս քթից (F. Boas, Handbook of american indian language. I, 17)։

Մելանեզյան մոտա լեզվի մեջ, ըստ Գոդրինգտոնի (էջ XIII),

կա երկու տեսակ r, որոնցից մեկը n-ից հետո անպատճառ դառնում է ndr, իսկ l-ից հետո՝ ldr։

Աֆրիկյան բասա լեզվում r նման չէ մեր լեզուների ռ ձայնին, այլ գտնվում է l-ի և d-ի միջև (Schürle, 1)։

Ամերիկյան մալա լեզվի մեջ կա շատ տկար մի r, որ հազիվ լսելի է և շատեր չեն գրում, ինչպես tin bortik կամ tin bootik, lerti կամ leeti (Tozzer, 18)։

Չիլիի բնիկների լեզուն ունի մի տեսակ տկար r, որ կարելի է համեմատել անգլերեն բառամիջի վ-ափուկ r ձայնին (la r suenamas suave que en castellano; podria compararse su sonido al de la r en medio de diccion del ingles (Febres, 1)։

Այս նկարագրությամբ այդ ձայնը կմոտենա կամ թերևս կնուլնանա մեր p ձայնի հետ։ Նույնպես պիտի լինի նաև սուդանական շիլլուկ լեզվի r ձայնը, որ նկարագրում է Վեստերմանը (էջ 5)

Միկրոնեզիայի մարշալ լեզվում կա մի տեսակ r, որ ուսումնասիրողը տառադարձում է r և նկարագրում է այսպես,—լեզվի ծայրը մոտենում է լինդին և նրա կազմած նեղ անցքի միջոցով վտարվելով օդը տալիս է այդ հնչյունը (Erdland, 197)

Ամերիկյան յուրոկ լեզվում կա մի տեսակ r, որ նման է անգլերեն r-ին և կարծես ձայնավոր է. ուստի ուսումնասիրողը գրում է er (Kroeber, 416)։

Կողմնական բաղաձայնները, ինչպես գիտենք, առաջանում են օդի այն հոսանքով, որ անցնում է լեզվի երկու կողքերին թողած բացվածքով։ Ուրեմն, համաձայն լեզվի հենման կետի և այդ բացվածքների մեծության, կարող են լինել զանազան տեսակի կողմնականններ, որոնք բոլորը լսվում են իբր l։ Մենք այստեղ կը հիշենք նրանցից գլխավորները.

1. Լեզվային l.— Այս բաղաձայնի արտասանության ժամանակ լեզուն ստանում է հարթ ձև, ծայրը դիպչում է առաջի ատամներին, իսկ արմատը երկու կողմից դիպչում է վերջին սեղանատամներին. շրթունքները բաց են. խոչակը առհասարակ թրթռում է, որովհետև լեզվային l-ը սովորաբար թրթռուն է։ Ամերիկյան մալա լեզուն թեև չունի թրթռուն բաղաձայններ, բայց նրա մեջ l շատ ուժեղ թրթռուն է (Tozzer, 18)։

2. Կապցային l.—Այսպիսի արտասանության մեջ լեզվի ծայրը հենվում է ատամնակապիճներին, կամ մի քիչ էլ ավելի վերև՝ քիմքին, այնպես որ լեզուն ստանում է դղալի ձև, իսկ արմատը բարձրանալով՝ դիպչում է կատիկի երկու եզերքներին։ Այս է անգ-

լեական արտասանության մեջ l։ Արա մի ուրիշ տեսակն է այն l ձայնը, որը նկատվում է Մարիոտ (Carr. lang., I, 4) ամերիկյան կատվիներ լեզվի մեջ, և որ կոչում է lingualo-sibilant l, որ մի ուսյալ ձայն է և առաջանում է լեզուն վեր պարզած հնչելով քիմքի ոչ կտորը։

3. Պատկային l.—Լեզվի հետևի մասը բարձրանալով կպում է քիմքի վերջնամասին կամ կատիկին, թողնելով երկու կողմից մի բացվածք, որով հոսում է օդը։ Այսպիսի l ավանդական է այժմ արևմտյան լեզուներին, ի միջի այլոց սահերենի մեջ։ Լինելիսում պրծում է հնչել l ձևով։ Նույնը կա և բասկերենում, սահերենում։ Նույն հնչումն ուներ նաև հին լատիներեն l տառը և հին ֆրանսերեն l, որ հետո ձայնափոխվեց։ Հին հայերենի ղ տառը, որ համապատասխանում է հելլադական l-ին, անշուշտ կատկալին l էր, որ հետո ձայնափոխվելով դարձավ կոկորդական հնչյուն։

4. Փափուկ l.—Երբ լեզվի մկաններդ ավելի թուլ են և հնման կեսը ավելի վոլոր, լսվում է մի տեսակ l', (լ'), որ ազգից ազգ տարբերվում է։ Այսպիսի արտասանության կանգ ենք ֆրանսերենի, իտալերենի, իսպաներենի, պորտուգալերենի (դրվում է li). լեհերենի մեջ (դրվում է l), հունգարերենի մեջ և այլն։ Հայերենի մեջ չկա այս ձայնը, բայց նրան հանդիպում ենք Նոր-Նուպալի բարբառում (ինչպես յոլ'որ), Ղրնալի գավառականում (ինչպես լ' ուել) և Սվեդիայի (Մատա լևան) բարբառում (ինչպես լ' իդինել < նեպանալ «ձանձրանալ»)։

5. Խուլ l.—Առհասարակ l ձայնը թրթռուն է. բայց բառավերջում խուլ բաղաձայնի ազդեցությամբ կարող է դառնալ խուլ այս պարագային անփարժ ականջը կարծում է լսել hl. ինչպես ֆրանսերեն le tas, plat, elle, peuple, pluie բառերի մեջ։ Խուլ l կա նաև մոնղոլերենում, դանիերենում և իսլանդերենի մեջ։ Վերջինում գրվում է hl ձևով։ Լապպերեն լեզուն էլ ունի խուլ l (Wiklund, 7)։ Վալլերեն լեզվում կա նույնիսկ փափուկ l-ի խուլ աստիճանը, որ գրվում է ll ձևով, ինչպես Llewellyn. նույնպես է նաև մոնղոլերենը, ուր ունենք 4 տեսակ l.—թրթռուն, խուլ և սրանց քմայնացածները (Владимирцов, 60)։ Ըստ Պոզտի (էջ 14) վրացերենում էլ, երբ l գտնվի երկու խուլ բաղաձայնների միջև, հնչվում է խուլ, ինչպես՝ սախլշի «տանը»։

6. Այս բոլորից դուրս կա մի տեսակ l, որ հատուկ է միայն շվեդերենին և նորվեգերենին ժողովրդական լեզվին և շվեդերենում կոչվում է թավ l. ուրիշ տեղ դեպքերում չունի. կազմվում է լեզվի ծայրը մոտեցնելով միջին քիմքին և հանկարծ տանելով քիմքի

առաջամասը. լսվում է ինչ-որ l-ի և r-ի խառնուրդ (Poestion Schmid., 23)։ Անշուշտ նույն է նաև այն l ձայնը, որ նկարագրում է Կոլդվելը (Drav, 145) կոչում է ծանր կամ գանգալին l և համարում է l և r ձայների մի խառնուրդ։ Գանգալին l ունի դրավիդյան տելուգու լեզուն, գրվում է l ձևով (Lakshminarasayya, 5—7)։ Գանգալին l ուներ նաև վեդալական հնդկերենը, որ տառադարձում են l և որի համար Վ. Հենրին ասում է, թե գտնվում է d և l ձայների միջև և հատուկ է r բաղաձայնը թվլատ արտասանող անձանց. կա նաև այս բաղաձայնի շնչեղ աստիճանը, որ գրվում է lh և հատուկ է վեդալական հնդկերենին (Manuel de sans. véd., 6)։

Ավելորդ է ասել, թե այս լոլոր տեսակի l-երը չեն գտնվում մի անգամից մի լեզվի մեջ։

l ձայնի կողմից առանձնապես հարուստ է ամերիկյան կոոս լեզուն, որ ըստ Ֆրախտենբերգի (տե՛ս Boas, II, 307) ունի 6 տեսակ l, որոնք հնդինակը նշանակում է հետևյալ ձևով. L, L, L!, l, l, բայց սրանց արժեքը չի նշանակում. մեզ հայտնի են l սովորական, l (կրկնակ l) և l (լեհական հետնալեզվային)։ L (խուլ) և L (թրթռուն) գտնվում են նաև չուքչի լեզվի մեջ, որ քննիչը՝ (Bogoras, տես Boas, II, 645) նկարագրում է հետևյալ ձևով. L (խուլ) արտասանվում է լեզվի ծայրը դիպցնելով վերին ատամնաշարին, լեզվի հետևը սեղմելով կարծր քիմքը և հանկարծ թողնելով կողքից՝ թեթև սեղմումից հետո։ Այս L ձայնը խուլ է, իսկ նրա թրթռունն է L։ Անհայտ է մնում Ֆրախտենբերգի նշանակած Ll ձայնը։ Նույն հեղինակը ամերիկյան սիուսլավան լեզվի մեջ գտնում է ō տեսակ l, որոնց մեջ նոր տեսակ է բոլորովինն l; որ կոչում է palatal latéral և որի համար ասում է, թե ոչ մի լեզվի մեջ գոլություն չունի. այս l՝ ձայնի հնչումը նմանեցնում է անգլերեն lure բառի նախաձայնի հնչման (Boas, II, 444)։

Բոլորովինն նոր տեսակ է աֆրիկյան նձիմա լեզվի մի ձայնը, որ l և n ձայների խառնուրդն է. գրվում է nl և է ունգալին l կամ կողմնական (latéralisé) n (տե՛ս Welman, Apreliminary study of the nzima, 16)։

Ըստ Գրասերիի (էջ 12), Զիլիի առկա լեզուն ունի երկու տեսակ l. առաջինը սովորականն է, ուր լեզուն հենվում է քիմքի վերևում, իսկ երկրորդի հնչման ժամանակ լեզուն հենվում է ատամներին։

Աֆրիկյան ազանդե կամ նիամ-նիամ լեզուն, բացի սովորա-

կան l-ից, ունի նաև մի տեսակ l, որ գոնեսում է l և r ձայնների միջև (Lagae, 69)։ Աֆրիկյան կատու լեզվում էլ l արտասանվում է ինչ-որ r-ի նման (Pilhofer, 15)։

Այսպես և նիկոպարական սահմ լեզուն ունի մի տեսակ l, որ գոնեսում է l և r ձայնների միջև (Reinisch, 415)։

Ալյասկալի (նախկին Ռուսական Ամերիկա) բնիկները (Koloch) ունեն մի տեսակ l, որ միացած է g-ի և k-ի հետ (մին թքրթռան և մյուս լուլ)։ Որինակել կամ նկարագրել այս հնչյունը շատ դժվար է. ըստ Բուշմանի (էջ 381), այս ձայնը հնչվում է „avec un roulement qui ne peut être rendu par aucun signe de l'ecriture française".

Հիպերբորյան լոկոպոլը լեզվում, ըստ Յոխելսոնի (էջ 100), կա երեք տեսակ l. մին բարակ, մին հաստ և երրորդը, որ գրվում է l', ըստ իր նկարագրության շնչեղ lh։

Դրավիդյան բրաուհի լեզուն ունի մի տեսակ դանդալին շնչեղ l, որ ստոմնատիրողը (Bray, 27) ստացարձում է lh և համարում է չափազանց դժվար արտասանելի մի ձայն. ձևանում է լեզվի ծայրը հետ ոլորելով և դիպցնելով քիմքի առաստաղի ծայրին և լեզվի հետևի մասը թողնելով աստամների արմատի պատի դեմ. այս դիրքի մեջ արտաբերվում է ձայնը որոշ ուժով բերանի երկու անկյուններում։

Աֆրիկալի կպելլե լեզուն էլ ունի դանգալին l, որ արտասանվում է լեզվի ծայրը հետ ոլորելով, բայց միևնույն ժամանակ ունի մի ուրիշ տեսակ l, որ միաժամանակ գանգալին է և ռնգալին (Westermann, 2)։

Հնդկական լահնդա լեզվում սովորական է գանգալին l (ըստ Grierson-ի, հտ. VIII, մաս 1, էջ 251)։ Դանգալին l ունի նաև Բամլան աֆար լեզուն (Colizza, 1)։ Ըստ Շաուլենբեի (էջ XVI) ամերիկյան Բակաիրի լեզուն ունի մի տեսակ l, որ հեղինակը «շատ գժվար ձայն» (sehr schwieriger Laut) է կոչում. նման է գանգալին l-ին և հաճախ վանկ է կազմում, ինչպես r ձայնը։ Աֆրիկյան կպելլե լեզուն էլ ունի գանգալին l և մի ուրիշ l, որ միաժամանակ գանգալին և ռնգական է (Westermann, 2)։

Հնդկական պալե լեզուն չունի ձայնավոր r, l. ունի սակայն բաղաձայն l (լեզվային), բացի սովորական l-ից (Henry, 3)։

Աֆրիկյան կինդա լեզվում (բանաու) կա մի տեսակ l, որ մենք d կամ r պիտի լսեինք (Wolff, 3)։

Ամերիկյան յուրոկ լեզուն ունի 3 տեսակ l. առաջինը մեր

սովորականն է. երկրորդը ոչ սովորական խուլ, երրորդը „sund affricative" (Kroeber, 417)։

Ալլասկալի (նախկին Ռուսական Ամերիկա) բնիկները (Kolosch-ներ) *ունեն մի քանի կոկորդալին խժալուր ձայներ, որոնք ուսումնասիրողը* (Buschman, 383) *գրում է* Xhch, Xhhch. *օրինակ՝* Xhchau „*կրակ*", Xhhchath „*կզակ*", chhachuchh „*կանչել*", Xhchachtuch „*կոկորդը մաքրել, թքել,* spucken", Xhheš·hch „*կաչաղակ*"։

Աֆրիկյան կպելլե լեզուն ունի մի տեսակ ɣ (ղ), որ ռնդալին է (Westermann, 2)։

Այս 6 տեսակ l-*ից հայերենի մեջ գոյություն ունի միայն լեզվալինը, գավառականում մասամբ նաև փափուկ* l. *Թվում է թե Ալաշկերտի գավառականում կա նաև խուլ* l, *որ գործ է ածվում միայն քրլերենից փոխառյալ բառերի մեջ. իսկ մյուս տեսակ* l-*երը իսպառ պակասում են հայերենում։ Կան լեզուներ, որոնք ո՛չ մի տեսակ* l *չունեն, այսպես են զենդերենը, հոտենտոտյան նամա լեզուն, ճապոներենը, հին պարսկերենը, ամերիկյան տականա լեզուն* (Brinton, 11), *որոնք օտարների* l *ձայնը դարձնում են* r. *ամերիկյան սանտե լեզուն էլ չունի ո՛չ մի* l *և նրա տեղ դնում է* d *կամ* n (Boas, Handbook, I, 881)։ *Ընդհակառակը, օսերենն ունի 3 տեսակ* l, *այն է՝ լեզվալին, կատկալին և փափուկ* l, *և ամերիկյան հաիդա լեզուն գիտի 4 տեսակ* l (Boas, I, 210)։

գ) Պայթական բաղաձայններ

Պալթական բաղաձայնները ըստ իրենց ձևի բաժանվում են 5 տեսակի. շրթնային, ծայրալեզվային, միջալեզվային, հետնալեզվային և հետբերանային կամ կոկորդային։

Շրթնային պայթականները հետևյալներն են.

1. b, p, bh, ph (*բ, պ, բ՞, փ*).—*Այս ձայները արտաբերվում են երկու շրթունքների փակումով, այս պատճառով էլ կոչվում են կրկնաշրթային։ Շրթունքները կարող են առնել մի քանի դիրքեր, որոնք շատ նուրբ տարբերություն միայն ունեն և առաջանում են հաջորդ ձայնի ազդեցությամբ։ Այս մասին կարելի է գաղափար կազմել հալելու. առաջ արտասանելով հաջորդաբար* upu, apa, ipi *ձայնախմբերը։*

Այս ձայներից առաջինը՝ b *գրեթե ամեն լեզվի մեջ էլ կա,*

պարմանական բացատրելուն է կապված ֆիննականին, որ դուրս է b ձայնից և անհրաժեշտելուն դեպքում փոխանակում է p ձայնով, ինչպես Biblia = Pipliai: *p դանվում է սլեմական հնդեվրոպական լեզուների մեջ, ինչպես ֆրանսերենի, իտալերենի, իսպաներենի, հունարենի, լատիներենի, հնդկերենի, նաև հայերենի մեջ: Մեքսիկական մոտ լեզվում, ըստ Կոպրինգտոնի (էջ XII), p ունի v-ի մոտ մի հնչյուն: Գերմաներենը, անգլերենը, ֆրանսերենը ցույց են տալիս p ձայնից, որ պարձնում են ph.—bh դանվում է սանսկրիտի և արդի հայ բարբառների մեջ.—ph գտնվում է հայերենի, հնդկերենի, իռլանդերենի, հին հունարենի, արդի գերմաներենի, անգլերենի, դանիերենի մեջ. պակասում է սանսկրենի, ֆրանսերենի, իտալերենի, իսպաներենի, արդի հունարենի մեջ. արտերենում ամեն ph դառնում է ֆ (ف). ինչպես եդած է հին հունարենում, հայատակ հին հայերենի, այ ֆ դառնում է փ:*

Զիլիի բնիկների լեզվում b և f դոյություն չունեն, և երբ հարկ լինի գործածել այդ երկու ձայները, արտաբերում են v, որ հնչում են ավելի ամուր ռուսերենից, մոտ գերմանականին, „se prononcia mas fuerte que en castellano, casi como en e aleman" (Febres, 1):

Աֆրիկյան առնպա լեզվի մեջ b հնչվում է այնպես, որ մոտենում է v-ին, բայց տարբեր է w-ից, այս հնչյունը ներկայացնում են v տառով (Junod, 35):

2. Շրթնատամնային պայթական, որ արտաբերվում է վերին առամների և առերին շրթունքի հպումով. առաջանում է այն դեպքերում, երբ շրթնային բաղաձայնին հաջորդում է շրթնատամնային շփական, ինչպես՝ գերմաներեն Apfel *բառի մեջ p ձայնը:*

3. Շրթնալեզվային պայթական, որ առաջանում է լեզվի ծայրը խրելով վերին շրթունքին. լսվում է p—t, b—d ձայների միջև մի հնչյուն: Այս պայթականները դժուրությամբ կարելի է արտաբերել, բայց սովորական գործածություն չունեն լեզուների մեջ: Կարծվում է, որ դոյություն ունեցել է հնագույն հունարենի մեջ և այդ ձայնն է, որ ներկայացված է π գրչությամբ, ինչպես հոմերական πόλις, πόδας բառերի մեջ: Այսօր այդ ձայնը կա կովկասյան ուբիխ լեզվի մեջ, ինչպես tuk «վիզ»:

4. Շրթնալեզվակային պայթական (b). արտասանվում է սովորական շրթնայինի պես, բայց ընկերակցությամբ լեզվակի թրթռումների. անսովոր հնչյուն է. գտնվում է աֆրիկյան փոլլ լեզվի մեջ:

Վերջապես ամերիկյան հինուկ լեզվի մեջ կա մի տեսակ b, որ լսվում է իբր b, m կամ w. արտասանութեյան ժամանակ շրթունքները շատ թեթև մոտենում են իրար, ռունգերը բաց են մնում և շունչը թեթևակի անցնում է թե՛ քթի և թե բերանի խոռոչով, միևնույն ժամանակ թրթռում է խոչակը։ Լսվում է b, ո-րովհետև շրթունքները հպվում են իրար, w՝ որովհետև հպումը շատ թեթև է և m՝ որովհետև քթից է անցնում շունչը (F. Boas, Handbook of american indian language, 17)։

Աթաբասկյան հուպա լեզվի մեջ ո՛չ մի շրթնային բաղաձայն չկա, ո՛չ p և ոչ b. այն դեպքում, ուր իր ցեղակից լեզուներն ունեն b, այս լեզվի մեջ գտնում ենք m (Boas, Handbook, I, 93)։

Նմանապես ամերիկյան տլինգիտ լեզվում ո՛չ մի շրթնային չկա (ոչ b, ո՛չ p և ո՛չ ph և ոչ իսկ m). իսկ ամերիկյան չիկիտա լեզվում b ձայնը այնպես տկար է հնչվում, որ նեթե չհնչեն էլ, սխալ չի համարվի (L. Adam—V. Henry, 2, 4)։

Մելանեզյան (Նոր-Հիբրիդյան) էրոմանգա լեզվի մեջ շատ քիչ է պատահում b ձայնը. երբեմն հնչվում է p, երբեմն v (Ray 177)։

Հիպերբորյան յուկագիր լեզվի մեջ չկան v և f. բայց կա մի շնչեղ b, որ գտնվում է b-ի և v-ի միջև. նմանապես կա մի շնչեղ p, որ գտնվում է p-ի և f-ի միջև (Iochelson, 100)։

Աֆրիկյան սեսուտո (բանտու) լեզվում b հնչվում է երկու շրթունքներով և լսվում է իբրև փափուկ v (Beyer, 1)։ Նույն լեզուն ունի նաև by հնչումը, որ նույն ձայնն է միացած քմակա-նով, որով նմանվում է անգլերեն view բառին (անդ)։

Աֆրիկյան բոնգու լեզուն ունի մի տեսակ b, որի հետևից լսվում է նաև w հնչումը, իբր b^w (Hamke, 12)։

Ջուլա լեզվում կա մի տեսակ կրկնաշրթնային պայթական b, որ ստամենասխրոպը (Doke, 11) b-ից բոլորովին տարբեր է համարում և նրա համար հորինում է մի նոր տառ՝ 6 (շուռ տված 9)։

Միայրալեզվային պայթականները հետևյալներն են.

1. d, t, dh, th (դ, տ, դ՛, թ). արտասանվում են լեզվի ծայրը կպցնելով վերի ատամների հետևի երեսին. այսպես է հայերենի և ֆրանսերենի մեջ. գերմաներենում շոշափման կետը ավելի վերևն է, իսկ անգլերենում է՛լ ավելի վերև, այն է քիմքի առաջա-մասում։ Առհասարակ ամեն լեզվի մեջ էլ d ձայնը կա, բացառութ-յամբ Նոր-Զելանդիայի մաորի լեզվի, որտեղ նա պակասում է

(Passi, 146). dh պահվում է միայն սանսկրիտում և հայերենի բարբառներում. t սոնոն նիւրտալի արևմտյան լեզուներր (ֆրանսերեն, իտալերեն և այլն), սանսերներ, հանոթերներ, ինչպես նաև արտերներ, ստորերներ, արևելյան թուրքերներ և ձայնն սոնոն հայերներ, սանսկրիտ, թուրքերներ, ստորերներ, արտերներ, անոնամերներ, քրդերներ, վրացերներ, գերմաներներ, անգլերներ և դանիերներ. մյուս հնդեվրոպական լեզուների մեջ, ինչպես սանսերներ, ֆրանսերեն, իտալերեն, ինչպես և նոր հանոթերներ, պահպանում է։ Արաբերենը պիտի ո՛չ միայն d, t, այլև արանց մի սասոկական տեսակը ض, ط, որ պրում են d, t։

2. d, t, dh, th — արտասոնում են լեզվի ծայրը կպցնելով քիմքի բարձրացած կետին. այս միջոցին լսում է մի թվլաս ձայն. հատակ են սանսկրիտի, հիպատասնի, պրակրիտյան լեզվախմբերին և ափղանելենին. հավալերենին, կան նաև քամյան ավար լեզում, սոնգա (բանտու) լեզուն էլ ունի դանդալին t, d (Junod, 30), ինչպես և հնդոպարսկան գալլա լեզուն (d)՝ սովորական d-ից բոյի (Hadson, 11). հնդոպարսկան սահա լեզուն ունի դանդալին d (Reinisch, 415)։ Հնդիկ քերականախմբան մեջ կոչված են մղեղալին (cerébrale)։ Թևև սրիշ լեզուների մեջ այս ձայները չկան, բայց անգլերենի d, th ձայները նրանց շատ մոտիկ են հնչում, այնքան որ հնդիկները, որ սոնեն թե d, t և d, t ձայները, անգլերենի d, t ձայները ստուգաբերելու համար գործ են ածում իրենց ալրաբենի d, t ստաները և ոչ թե d, t։ Որոշ բառերի մեջ շվեդերենն ու արևելյան նորվեկերենն էլ սոնեն դագաթային d, t ինչպես և n, s (Jesperson, Lang., 197)։

3. Կա նաև d ձայնի մի սրիշ տեսակը, որ բնկերանում են նաև լեզվակի թրթռոմաններր. այս ձայնր շատ հազվագյուտ է. գըտնըվում է աֆրիկյան փոքր լեզվի մեջ։

4. Ամերիկյան տականա լեզվում կա մի տեսակ ձայն, որ բըռնում է t, d և r ձայնների միջին տեղը. օրինակ, dudu «եղբայր» tata «հայր» (Britton, 11)։

Ամերիկյան կիրերի լեզվի մեջ d այնքան թուլլ է, որ հազիվ է լսում. ինչպես ide «մայր» (Gabelentr, 5)։

Հիպերբորյան լուկաղիր լեզվում կա մի տեսակ d, որ հնչվում է իբրև dr (Iochelson, 101)։

Աֆրիկյան սետսուա (բանտու) լեզվում կա մի առանձին հընչյուն, որ ձևանում է լեզվի ծայրը պինդ սեղմելով ցածրի ատամ-

ներին. մոտ է ty հնչման, ինչպես անգլերեն tube բառի մեջ (Boyer, 1, որ գրում է c ձևով)։

Աֆրիկյան ջոնդ (բանտու) լեզվում բառամիջի d հնչվում է այնպես, որ լսվում է իբր r (ր)։ (Nekes, 6)։

Աֆրիկյան սեչուանա (բանտու) լեզվում d հնչվում է իրրև «մի փափուկ ձայն l-ի և r-ի միջև» (Wooking, 12)։

Մելանեզյան տանգոա լեզվում չկա d. գտնվում է միայն օտար բառերի մեջ (Ray, 357)։ Այս լեզվում սակայն կա մի ձայն, որ ուսումնասիրողը (Ray, 357) դնում է t-ի և p-ի միջև, որի արտասանության ժամանակ լեզվի ծայրը ատամների միջով դիպչում է վերի շրթունքին (ըստ իս այս p' ձայնն է)։

Բացի d, t, dh, th շարքից, սրիշ դանդալին բաղաձայններ էլ կան։ Այսպես, հնդկական շինա լեզուն ունի դանդալին č, ch, j, r, š, ž ձայնները (Bailey, 9—11)։

Աֆրիկյան աորտա լեզվում կան դանդալին r, l ձայնները (Westermann, 38)։

Աֆրիկյան չադպա լեզվով կան դանդալին ṛ և ḍ (Raum, 33)։

Հետևալվայիս պայթականները հետևյալներն են.

1. g, k, gh, kh (գ, կ, գ', ք). արտասանվում են լեզվի արմատը կպցնելով քիմքի հետևի մեկ կետին. այս կետը զանազանվում է համաձայն հաջորդ ձայնավորի։ Այսպես, կատկալին ձայնավորի մոտ հպման կետը կատիկն է, gu. ku և այլն. երբ ձայնավորն ավելի առաջ է, ինչպես a, բաղաձայնն էլ մոտավորապես հասնում է կատիկի և կարմիր քիմքի սահմանին. իսկ երբ ձայնավորը քմային է, ինչպես i, բաղաձայնի հպման կետը գալիս է ավելի առաջ՝ կարծր քիմքի հետևի մասը։

Այս բաղաձայնների հիշյալ նրբութիւններն նշանակելու համար այբուբենները առհասարակ ուշադրութիւն չեն դարձնում և բոլորն էլ մեկ անունով կոչում են կոկորդական (gutturale), բայց լեզվաբանութեան մեջ շատ կարևոր է դրանք տարբերել. նրանց միջոցով են բացատրվում զանազան ձայնական փոփոխութիւններ։ Միայն լատիններն են, որ այս բաղաձայնի գոնե խուլ ձևի նրբութիւնները նշանակելու համար հնարել են երեք տառ, այն է q, k, c. առաջինը u, երկրորդը a և երրորդը e, i ձայնավորների մոտ։ Լեթթերենն էլ զանազանում է g, ġ և k, ķ տառաձևերը։

Գրեթե ամեն լեզվի մեջ էլ այս կարգի բաղաձայններ կան. թամիլ և մալալալամ լեզուների, ինչպես և իռլանդերենի մեջ, այնպես փափուկ է, որ մոտենում է h ձայնին. և դրա համար էլ օտար

լեզուների h ձայնը առաստպարձակ է g. ինչպես սանսկրիտ maha «մեծ» պրակրիտում է թամիլերեն maga (Caldwell, 140)։ Այսպես է նաև ակրոխենգենտում, որի համար առանցնում էլ h առաստպարձակում է իրը g։

g ձայնը պարմանական կերպով պակասում է արաբերենի մեջ, որ վոխանակվում է] ձայնով, սակայն ասպաներենում հնչվում է իրը g. բացի սրանից, արաբերեն ج պարձակ է ասում g (Worsley, 4)։ Լատերենում էլ չկա g ձայնը։ k պահվում է արևմտյան եվրոպական լեզուների, սանսերենի, հունարենի, հայերենի, քրդերենի և արևելյան թուրքերենի մեջ, մինչդեռ տառհերենը չունի. gh պահվում է միայն սանսկրիտի, հինպարսկերենի, աննամերենի և հայերենի մեջ. kh կա հայերենի, հնդկերենի, աննամերենի, անդլերենի, դերմաներենի, թուրքերենի, արաբերենի, պարսկերենի և քրդերենի մեջ. պակասում է սանսերենի և արևմտյան եվրոպական լեզուների մեջ, ինչպես ֆրանսերենի, իտալերենի, նաև հունարենի մեջ և այլն։

Ամերիկյան կոտս լեզուն, ըստ Ֆրանսիսերդի (տես Boas, II, 307), ունի 4 տեսակ կոկորդական, որոնք հնդիանակը նշանակում է g', k', k'!, x' ձևերով, բայց նրանց արժեքը չի տալիս (միայն էջ 444-ում կոչում է anterior palatal series)։

Մելանեզյան մոտա լեզվում, ըստ կոդրինգտոնի g հնչվում է այնպես, որ երբեմն k-ին է մոտենում (երեմն իսկ է) և երբեմն էլ r-ին!

Հնդերանային կամ կոկորդային պայթական անունը կրում է այն ձայնը, որ համապատասխանում է հնդերանային շփականին (h). կազմվում է խոչակի մեջ և դրա համար էլ կարելի է նաև կոչել խոչակային պայթական։ Ձայնավորները ամուր կպչում են իրար այնպես որ պի հոտանքը բոլորովին արդելվում է. հետո հանկարծակի ձայնավորները բացվում են և այն ժամանակ լսվում է վերոհիշյալ պալթականը։ Այս ձայնը հաճախ պատահում է սեմական լեզուների մեջ, սկսած առաջներենից. Երրայերենի բացառ ձայն ʾ տառն է և արաբերենում նշանակվում է առանձին տառով (ء)։ Դանվում է նույնպես անդլերենի և հյուսիսային գերմաներենի մեջ՝ ձայնավորով սկսվող բառերի սկիզբը (attaque dure, fester Einsatz, glottal catch, կամ glottal stop) կամ երկու ձայնավորի միջև, ինչպես beachten, Er-innerung կամ դանիերենի և լեթթներենի մեջ՝ ձայնավորից հետո կամ բառամիջում։ Նույն ձայնը կա նաև ճավալերենի մեջ, ուր ունի առանձին տառ և դրվում

է դրսից առանց բացառության յոլոր ձայնավորով սկսվող բառերի սկիզբը.—ճավայերենում ո՛չ մի բառ ձայնավորով չի սկսվում (Bohatta, Gramm. Jav. Spr., 8)։ Ըստ գիտի (vulg. arab., 4), արաբական համդան էլ ժողովրդական լեզվի մեջ երկու տեսակ է, սուր և թեթև, որոնց տարբերությունը ուժի տատկության մեջ է։

Հայերենի, ռոմանական լեզուների, ինչպես և ուրիշ շատ լեզուների մեջ ալսպիսի հնչյուն չկա. բայց կարելի է լսել փափուկ ժամանակ կամ տքալու միջոցին և կամ չոր ձևով «հա», «ալո» բառերը արտասանելու պարագային։ Կարծում եմ սրա (կամ ավելի լավ՝ հաջորդի) հետ պետք է նույն համարել նաև այն հնչյունը, որ հաճախ պատահում ենք Ալանբեգի բարբառում բառավերջի բաղաձայնների անկման միջոցին և որ նշանակում ենք * նշանով. օրինակ՝ շա* մարթ փա* գա՞ ջշատ մարդ, փալտ կա՞» արտասանվում է ձայնավորը, հանկարծ դադարում է, սեղմվում է կոկորդը և արգելվում թոքերից դուրս մեկնող օդի հոսանքը[1], որից հետո իսկույն անցնում են հաջորդ բաղաձայնին։

Այս հնչման ավելի ուժեղ տեսակն է թվում այն հնչյունը, որ տատանում է ճավայերենի k ձայնը՝ բառավերջում դանված ժամանակ (տես Bohatta, Gramm. Savan., 9)։

Արալերեն ‘-իկ տարբեր է ջ ձայնը, որ է կոկորդային ուժեղ խուլ պալթական և գտնվում է նաև կաբարդին լեզվի մեջ (Лепатинский, 5) և եթովպական գալլա լեզվում (Hodson, 11)։

Պալթականների շարքին են պատկանում նաև այն տարօրինակ բաղաձայնները, որոնք հատուկ են հարավ-աֆրիկյան վալրենի լեզուներին և կազմվում են լեզվի շառաչումով (կառափել)։ Բուշմեննների լեզուն գիտի ալդպիսի 7 ձայն (Rieckers, 142)։ Հոտենդոտյան նամա լեզուն ունի 4 ձայն, որոնք տառադարձության մեջ զանակվում են I, II, ! և # նշաններով. առաջինը կազմվում է լեզուն շաչեցնելով առջևի ատամների վրա (ատամնային), երկրորդը՝ աջ կողմնական ատամներին (կողմնական), երրորդը քիմքի միջին մասին (գանգալին) և չորրորդը քիմքի առաջամասին (քմային)։ Շաչելուց անմիջապես հետո, լեզուն արագությամբ հետ են քաշում նախկին դիրքին և այդ միջոցին օդը ներս է խուժում։ Այս բաղաձայնները գտնվում են միայն ձայնավորից կամ g, h, k, k‘, n բաղաձայններից առաջ։ Մեզ համար դժվար չէ արտաբերել ալդպիսի շառաչումներ, բայց կապել դրանք հաջորդ ձայնավորի

[1] Աճառյան, Բննություն Ալանբեգի բարբառի, էջ 10։

կամ մանավանդ բաղաձայնի հետ. ահա ինչ որ մեզ համար անկասկածելի է (Seidel, Haupts. Spr., 2—3)։ Զուլուսերենն էլ ունի նման ձայներ։ Սայմերը, տերձաուական միջոցներով քննության առնելով մի զուլու հովվի (Blessing Dahle) արտասանությունը, որ մանկությանից խոսում էր զուլու լեզվով, հրատարակեց Օսլոյի ակադեմիայի տեղեկագրի շարքում (1933 թ)։

Թվում է, թե նման ձայներ ունի նաև ամերիկյան կարմիր լեզուն, ինչպես երևում է Մորխի (Carr. lang., I, 5) թույլ նկարագրությունից. այս ձայները 4 են և նշանակված են այնտեղ t, k, ɬ, l։

Ըստ Կլիֆի (A short survey of Bushman language, 59), բուշմեններն ունեն 5 անսուկ ալոպիսի շառաչ (click), որոնք տառադարձվում են հիմրոպացիների մոտ հետևյալ ձևով. / ǀ ‖ ǁ ⊙։

Սրանցից առաջինը / կոչվում է alveolar click և կազմվում է լեզվի առաջամասը սեղմելով ալվեոլներին և արագորեն հետ քաշելով։

/ կոչվում է «քմային շառաչ» կազմվում է լեզվի ծայրը հրնշելով քիմքին կամ քիմքի և ալվեոլի միացման տեղը։

‖ կոչվում է «կողմնական շառաչ». կազմվում է լեզվի ծայրը սպրածելով ալվեոլին կամ քիմքին և մեղմիկ հետ քաշելով, թողնելով օդը կողքից՝ ծծելու ձայնով (with a sucking sound).

ǁ կոչվում է „retroflex կողմնական շառաչ". Նման է նախորդին (‖), բայց արտասանվում է լեզուն հետ դարձած (ալևինքն ծայրը հետ ոլորած)։

⊙ կոչվում է «շրթնային շառաչ». կազմվում է շրթունքները իրար դեմ սեղմելով և ապա բաց թողնելով համբույրի ձայնի նման։

Այս բոլոր շառաչները գործածվում են վանկի սկզբում և բնդհանրապես բառերի սկզբում, շատ անգամ իրենց ետևից ունենալով n (ŋ) ձայնը, իսկ ⊙ իր հետևից ունենում է p, b, m ձայները։

Նյմսլևը (էջ 2), խոսելով ագոնի (զուլու) լեզվի շառաչների մասին, գտնում է միայն երեքը, որոնք արձանագրում է հետևյալ ձևով.

1. առամնական շառաչ—C
2. քմական շառաչ—q
3. կողմնական շառաչ—x

Ավելացնում է նաև, թե այս շառաչները հները միայն գիտեն

գործածել. նորերը իրար են խառնել, պահել են միայն առաջինը C, որ ամենից հեշտ է, մյուսները ջնջել են։

Վ. Բեննին (A grammar of xhosa, 19) խոսում է նույնպես այս շառաչների մասին և կաֆրերի լեզվում գտնում է նմանապես երեք կարգ շառաչներ՝ առոմնական, քմական և կողմնական։ Առոմնականը կազմվում է լեզուն շառաչեցնելով առջևի ատամների վերի մասի դեմ, քմականը՝ լեզվի ծայրը շառաչեցնելով քիմքի առջևի մասի դեմ, իսկ կողմնականը՝ լեզուն շառաչեցնելով քիմքի մի կողմից։ Շառաչները լինում են պարզ, շնչեղ կամ թրթռուն, այն է.

1. c, q, x
2. ch, qh, xh
3. gc, gq, gx

Սրանք կարող են գտնվել n-ից հետո, բայց իրենք էլ կարող են լինել ռնգալին, այն է.

4. nc, nq, nx
5. nch, nqh, nxh

Այս նույն ձայների մասին (քաֆիր լեզվում) խոսում է նաև Լարենը (էջ 7), բայց շատ ավելի հասարակ ձևով. այդ ձայները համարում է նա բաղաձայնի ավելի սեղմած մի ձևը, իսկ x ձայնի համար ասում է, թե լեզուն պետք է սեղմել կողքի ատամներին։

Շառաչի նման ձայներ մենք գործածում ենք՝ 1. անհոդավոր ձևով, լեզվի հարվածով «տ՛չ» ասելու ժամանակ. 2. ափսոսանքի կամ զարմանքի ժամանակ, երբ իրար հետևից կրկնում ենք gք, gք, gք. 3. լեզվի ծայրը կուացնելով և քիմքին կպցնելով՝ էշ կամ ձի քշելու ձայներ հանելիս. 4. նույն է, երբ ձին սալահատակի վրա սմբակներով կոխելով ջրից անցնում է. 5. սրա պատկերացումը լեզվով՝ լայն փռած բերնի մեջ՝ էլո՛մպ, էլո՛մպ...։

Չուլու լեզվի «շառաչ»-ների (click consonants) մասին է խոսում նաև Դոքը (էջ 18—20). նա գտնում է այս լեզվում 12 այսպիսի ձայն, որոնք բաժանում է 3 խմբի.

	1. ատամնական	2. palatalo-alveolar	3. կողմնական
արմատական	c	q	x
շնչեղ	ch	qh	xh
թրթռուն	gc	gq	gh
ռնգային	nc	nq	nx

1. Առոմանալիններին արտասանության ժամանակ լեզվի կրնակը բարձրանում է կոպուղ քիմքին պիտչելու համար և լեզվի ծայրը կամաց պիտչում է վերին հակասի առոմանալիներին և լինգվալին, լեզվի կենտրոնը սեղմվում է և ապա լեզվի ծայրը պիպի հետ է քաշվում, նման է անգլիական annoyance click-ին, որ գրվում է tut-tut ձևով։

2. Palatal alveolar-ը նման է շիշի բերանից մի խցան հանելուն։

3. Կոչնականը նման է այն ձայնին, որ անում է մի կառավար, երբ խթանում է իր ձիերին (a cabby when urging his horses)։

Ակոմատական է կոչվում այն ձևը, որ ոչ շունչ ունի և ոչ ընդհատվում է։

Այն բոլոր պալիմպսեստները, որ նկարագրեցինք մինչև այստեղ, կամ նույնիսկ բոլոր բաղաձայները, կարող են ունենալ իրենց համապատասխան ընդլայնը, եթե դրծարանները պահեն նույն դիրքը, ինչ որ սովորական արտասանության ժամանակ, միայն թե մեկնության ժամանակ կատիկը իջած լինի հենց բաղաձայնի պալիմպսեստման սկզբից, այնպես որ պրը դուրս հոսի քիմքի խոռոչներով։

Հանդիպող լեզուների մեջ կա ընդալին v, ընդալին l, ընգալին r, որ մենք էլ կարող ենք պլուրալիմպսեստ արտասանել։ Էսկիմոսներեն կա ընդալին r, ɻ, w (Boas, I, 979)։ Հարավ-աֆրիկյան սիմպիհևերեր լեզվի մեջ չկան b, d, g պալիմպսեները, այլ սրանց ընդականները, որ տառադարձությամբ գրում են mb, nd, ng (Seidel, Hspr., 63)։ Հյուսիսային ճապոներենում g ձայնը արտաբերվում է իբր ᵑg (Plaut, 3)։ Հին իռլանդերենն ունի ընգալին b, որ գրվում է m։ Բայց սրանք անսովոր ձայներ են։

Ահա լեզուների մեջ սովորական ռնգականները.

1. Շրթնային ռնգական m (մ), որ իր համապատասխան b ձայնի նման կրկնաշրթնային է. գտնվում է ամեն լեզվի մեջ. ընդհանրապես իրիմոան է, բայց կարող է նաև դառնալ խուլ, ինչպես ֆրանսերեն prisme, m'sieu կամ շվեդերեն rytm բառերի մեջ։ Դանիերենն ունի խուլ m։ Ըստ Ջոզտի (էջ 13), վրացերենն էլ ունի խուլ m, մանավանդ բառասկզբում խուլ բաղաձայնից առաջ. այսինքն m հաճախ կրճատվում է, ինչպես մճուդի կամ ճուդի «լազուրդ»։ Մելանեզյան մոտա լեզվում, ըստ Կոդրինգտոնի (էջ XII), կա երկու ասեակ m, որոնցից մեկը սովորական, մյուսն ավելի ընդալին է։

2. Շրթնատամնային ունգական m կարելի է լսել, երբ իրեն հաջորդում է f ձայնը, ինչպես անգլերեն nymph, pamphlet, շաբվնդերեն triumf և այլն բառերի մեջ։

3. Ծայրալեզվային ունգական n, որ համապատասխանում է d պալթականին և նրա նման լեզվից լնդու փոխում է հենման կետը։ Ամեն լեզվի մեջ էլ սովորական է այս ձայնը և առհասարակ թրթռուն է. բայց խուլ բաղաձայնի մոտ, ինչպես և բառավերջում, կարող է դառնալ խուլ, ինչպես՝ բանասիկու, ֆրանսերեն il donne և այլն։ Ամերիկյան լուրոկ լեզվում բառավերջի n խուլ է (Kroeber 417)։ Դանիերենն ունի խուլ n։ Հայտնի է իոլանդերենի մեջ խուլ n, որ գրվում է hn ձևով։ Հիպերբորյան գելիակ լեզվում կա նուլնիսկ շնչեղ n (nʿ), նուլնը նաև բասկերենում, ուր գրվում է nh (Lingua, I, № 9, 63)։

4. Գագաթային կամ գանգային ունգական n, որ համապատասխանում է ḍ պալթականին. գտնվում է սանսկրիտի, դրավիդյան լեզուների, ճավայերենի, աֆղաներենի, նաև Քամյան աֆար լեզվի մեջ (Colizza, 1), մոտավորապես նաև անգլերենի մեջ։

5. Հետևալեզվային ունգական ŋ, որ համապատասխանում է g պալթականին և սրա նման փոխում է իր հենման կետը քիմքի վրա՝ համաձայն իրեն հաջորդող ձայնավորին։ Շատ սովորական է թուրքերենի մեջ, ուր նշանակվում է առանձին տառով (ڭ)։

Մյուս լեզուներից հունարենը, անգլերենը, գերմաներենը, շվեդերենը, դանիերենը, իտալերենը, ճավայերենը, աննամերենը, չինարենը և այլն ունեն նուլնպես այս ձայնը և ներկայացնում են գրութ յան մեջ կամ կրկին g-ով (այսպես՝ հունարեն γγ) և կամ պարզապես ng, nk, ինչպես գերմաներեն lang, dunkel, անգլերեն finger, link, իտալերեն longo, banco և այլն։ Չինարենի մեջ n հաջորդ k-ի մոտ դառնում է ŋ։ Սովորաբար սրանց վանկի վերջում է գտնվում այս ձայնը, բայց աննամերենում և չինարենում կարող է լինել նաև բառասկզբում՝ ձայնավորից առաջ և այն ժամանակ չինարենում հետնալեզվային տարրը ավելի թուլ է լինում (Seidelchin. gramm., 14)։ Օ'Նելլը (էջ 3) գտնելով նուլն ձայնը շոնա լեզվի մեջ, նկատում է, որ անգլերեն singing բառի մեջ նուլն ձայնից երկու հատ կա, բայց բառի միջումն են ու վերջում և չեն կարող բնավ գտնվել բառասկզբում, իսկ բանտու լեզուներում նա սովորական է նաև բառասկզբում։

Հալևրենի մեջ նուլն ձայնը գտնվում է անկյալ, անգամ և այլ նման բառերի մեջ, ուր ն ձայնին հաջորդում է գ, կ, ք։ Այս

ձայնը սովորաբար թրթռուն է, բայց կարող է պահպանել նաև խուլ, ինչպես անգլերեն length բառի մեջ։

Նույնիսկ ինարկտավյալ պայթականը կարող է ունենալ իր համապատասխան ձայնական, բայց մ՛չ մի լեզվի մեջ էլ չի պարզվում իրը առանձին հնչմնույթ իր անբաղդ արտասանի բաց բնականով. լսված ձայնը հնարկտանալին պալթականն է, իսկ երբ նույն անբաղդ արտասանի փակ բնականով, հավաքված ապր պարբ պալաթ բերից՝ պահպանում է հնարկտանալին ձնդական։ Այս պահպանվելը նկատելով է թվում, որ հայերենի մեջ ունենք ապալ և ասիրալ ձևերը։

Այս բոլորի մեջ միակ հիմնական ու անկախ հնչյուններն են n և m, որոնք սովորական են ամեն լեզվի մեջ էլ. ձնդականների կողմից առանձնապես հատուկտ է ասնակրիտը, որ պիտի ձնդականի 5 առաքման՝ n, ŋ, ñ, ɳ, m, այն է կոկորդային, քմային, ատամնական, դնդային և շրթնային ձնդական։ Միևնույնն են նաև պրավիդական լեզուները (Coldwell, 132)։

Վերևում ասացինք, որ ձնդականի պահպան տեսակները կարող են արտասանվել խուլ ձևով։ Ալպերի խուլը ներկայացնում է հնդկական նեվարի լեզուն, որի արտերևի մեջ Յուրդենսանը (էջ 10) դնում է hn, hn՛, hn, hm, ինչպես և hy, hl ձայները։ Հնդիկը որանց համար որևէ բացատրություն չի տալիս. ինձ թվում է թե պետք է արանք հասկանալ խուլ n (կոկորդական) խուլ n (քմական), խուլ n (ատամնական), խուլ m և խուլ y, խուլ l։

Հնդկական բոլոր լեզվում են կան բայլ պարբ l, m, n, r ձայներից, նաև lh, mh, nh, rh և rh, որոնք ուսումնասիրողը (Dh. Verma, 49) չի նկարագրում. բայց թե պետք է լինեին համապատասխան խուլերը։ Հնդկական սինհալի լեզվում, բացի սովորական n, m ձայներից կան նաև կարճ n, m, ըստ Գալդարի (էջ 11)։

Չիլիի ասիա լեզվում, ըստ Բրասսերիի (էջ 12), կա երեք տեսակ n. առաջինը մեր սովորականն է, ուր լեզուն հենվում է քիմքին, երկրորդն է n (նյ), իսկ երրորդը արտասանվում է լեզուն հենելով ատամներին։

Պալմանն բոլոր ձայնները ներկայանում են մեզ նաև իրենց փափուկ ձևի տակ, այսպես կան շրթնային b, p ձայների փափուկները, ինչպես ռուսերեն скорбь «վիշտ», степь «տափաստան»։ Ավելի ուշ են d—t, g—k իմրների փափուկ ձևերը իրը d՛, t՛, g՛, k՛. առաջիններդ հաղվագեպ են հայերենի մեջ, բայց այնուամենայնիվ կարելի է նկատել, ինչպես Ծղնալի գավառականով՝ ասնել

«գնել». շատ սովորական է ռուսերենի մեջ, ինչպես лошадь «ձի», ломать «կոտրել», мать «մայր» և այլն։ Ռուսերենի մեջ այն բոլոր դեպքերում, երբ d, t գտնվում են e, i ձայնավորներից առաջ, արտասանվում են փափուկ ձևով, այնպես որ անվարժ ականջը ոտանում է dь, gь ձայների տպավորությունը, ինչպես где և այլն։ Ռուսական կրթությամբ հայերը ձայնական այս երեսույթը մոցրել են նույնիսկ հայերենի մեջ և արտասանում են իմասաութուն, մեծութուն, ինչ որ անվարժ ականջին գարշելի տալիս է y ձայնի տպավորությունը։ Ռուսերենի նման է չեխերենը, որ գիտի փափուկ d, t, որոնք նշանակում է d′, t′ ձևերով. բայց ě, i ձայնավորներից առաջ այնպես սովորական է այդ հնչումը, որ ավելորդ է համարվում նշանակել։ Լեհերենի մեջ փափուկ t արդեն դարձել է c և այս ձևով էլ գրվում է. օրինակ, ռուսերեն тётя = լեհերեն ciocia։ Կա նաև ատամնալեզվակային d-ի փափուկ ձևը (dʸ), որ հատուկ է աֆրիկյան փոյլ լեզվին. արտասանվում է սովորական d-ի պես, ընկերակցությամբ լեզվակի թրթռումների և քամլնացման։ Լեհերենը գիտի փափուկ b, f, g, k, m, n, p, w, որոնց համար այբուբենում էլ կա առանձին թավ (b′, f′ և այլն)։ Նույնպես ոտնգուսերենում կան k, g, x, b, v, m, n, d, s, l, č ձայների փափուկ ձևերը (Adam, Gram. tong., 13). բուրյաթերեն լեզվում k, t, d, ինչպես և x, l, r, n ունեն իրենց քմային ձևը (Castren, 1)։

Հայերենի բարբառներում (Ղարաբաղ, Վան, Մարաղա, Աբբերդ և այլն) շատ սովորական է հետևալեզվային պայթականների փափկացումը, ինչպես Վան՝ քʻաղաքʻ «քաղաք», Ղարաբաղ՝ կʻօռծ «գործ», Ագուլիս՝ կʻևակʻ և այլն։

Փափուկ պայթականների մեջ սմանից հետաքրքրական ձևեր են նրանք, որ արտաբերվում են լեզվի միջին մասը կպցնելով քիմքին, մինչդեռ ծայրն ու արմատը ազատ են ու չեն դիպչում քիմքին։ Այս կարգի բազաձայնները կոչվում են միջնալեզվային։ Դրանք անվարժ ականջը մերթ լսում է tʲ, dʲ և մերթ kʲ, gʲ. ալսինքն մերթ հենման կետը բերելով ավելի առաջ և մերթ տանելով ավելի հետ. թեև իրապես ո՛չ մին է և ոչ մյուսը, այլ նրանց միջին կետը։ Այս ձայներից կարելի է գտնել զանազան լեզուներում. այսպես հունգարերեն ty, gy միջնալեզվային են. նույնպես ֆրանսական ժողովրդական արտասանությամբ pitié, cinquième, gai բառերի մեջ t և d, g միջնալեզվային են։ Շվեդերենում գրվում

է tj կամ k ձևով, ինչպես tjäna, käna (Poestion, Lehrb. de Schwed, 2,28)։

Հալևրենի մեջ ալս ձայները դանում ենք միայն վանի բարբառում, ինչպես իկի «ալգի» բառի մեջ։

Կարելի է ալս ձայնները նշանակել j^v, c^v ձևերով, առաջինը թրխաան, երկրորդը խալ ձևի համար։

Ինդոկան բաղաձայններին էլ կարող են անհնալ իրենց համապատասխան փափուկ ձևերը. ալսպես ունենք շրթնային ռնգական փափուկ m^v (ինչպես առաևրևն cemь), ծայրալեզվային ռնգական փափուկ n^v, որ դանում ենք առաևրևնի, չեխերենի, լհաներենի, ֆրանսերենի, իտալերենի, իսպաներենի, պորտուգալերենի (գրվում է nh), խոլանդերենի, շվեդերենի, անհամերենի, սանսկրիտի, հայալերենի և ուրիշ լեզուների մեջ (համմա. առաևրևն тень «ստվեր», ֆրանսերևն vigne «այգի», իտալերեն bisogno «պետք», իսպաներեն señor, España) և վերջապես հետևալեզվային ու միջնալեզվային ռնգական փափուկ n, որ դանում ենք ֆրանսիական ժողովրդական արտասանութլան մեջ։ Հարալ-աֆրիկյան ութլիհերեր լեզվի մեջ կա ընգալին d ձայնի փափուկ ձևը, որ գրում են ndy (Seidel, Hspr., 63)։

Նոր լեզուներից լատիշերենն ունի քմալին բաղաձայններից ģ (որ հնչվում է d^j), ķ (որ հնչվում է t^j), l^v, n^v, r^v (Пазгле, 11)։ Մորդվիներենն ունի քմալին ձայների մեծ խումբ. ալն է՝ b, p, m, v, f, d, t, s, j (հալերեն ձ), c (հալերեն g), n, r, ž, š, Ǐ, č, l, g, k, x, ŋ և մինչև անգամ y (Ebcebəeb, 17)։ Վեպսերեն կամ չուդ լեզուն, որ պատկանում է ֆիննական ընտանիքին, ունի b, d, g, k, l, m, n, p, r, s, t բաղաձայնների քմալին (կակղած) ձևը, որ գրվում է b' d' և ալլն (Ujfalvy, 16)։ Օնեղլը (էջ 4) աֆրիկյան շոնա (բանտու) լեզվի մեջ գտնում է ty և dy առանձին ձայնները, որոնց նկարագիրը դժվարանում է տալ. մոտավորապես դնում է čka, ǰga։

Հալևրենի մեջ ռնգականների փափուկ ձևերը չեն պատահում։

դ) ԿԻՍԱՊԱՅԹԱԿԱՆ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ

Կիսապալթական բաղաձայնների սահմանը տալու ժամանակ մենք առացինք, որ նրանք բռնում են սեղմերի և պալթականների միջին տեղը։ Այժմ, քանի որ բաղաձայնների ներքին կազմութլան

ավելի ևս ծանոթացել ենք, կարող ենք ավելի պարզել և ավելի ևս ճշտել այս անորոշ սահմանը։

Կիսապայթական բաղաձայնները, որոնք ձայնաբանության մեջ ծանոթ են նաև շչական (affricatae, ֆր. fricative) անունով, ներկայացնում են մի այնպիսի արտասանություն, որի մեջ բաղաձայնի լարումը պայթական է, իսկ էջքը՝ շփական. խցումը, որ լարումից մինչև էջքը եղած շրջանն է, ոչ թե կատարվում է հանկարծակի, այլ աստիճանաբար և առանց ընդհատման։ Լարման և էջքի այս տարբերությունն է պատճառ, որ կիսապայթականը բաղաձայնները անվարժ ականջների վրա ts, dr, dž, tš և խմբակների ազդեցությունն են գործում։ Բայց իրոք այդպես չեն, որովհետև ամեն մի կիսապայթականի երկու մասերը առաջանում են միևնույն դործարանների դործունեությամբ և միևնույն կետում, մինչդեռ ts, dr և այլն առաջանում են երկու տարբեր տեղերում։ Դարձյալ լարման և էջքի տարբերությունն է պատճառ, որ կիսապայթականը երկարելու ժամանակ լսվում է միայն մի որևէ շփական, ինչպես u, շ, z, ž։

Կան լեզվաբաններ, որ կիսապայթականները համարում են կրկնակ բաղաձայն. սրանց հակառակ են, բացի խոսողների գիտակցությունից, զանազան լեզվաբանական հանգամանքներ. օրինակ, հայերենի մեջ վանկի սկզբում երկու բաղաձայն ընդունելի չէ և նրանց միջև անշուշտ մտնում է մի ը. արդ, եթե g, ǯ, ձ, ճ և այլն կրկնակ են, ու՞ր է նրանց միջին ը-ն։ Արաբերեն բառասկզբում կրկնակ բաղաձայններն ստանում են a հենարանը (ինչպես Platon—Aflaton), բայց l, s տառերով սկսվող բառերն այսպիսի հենարան չունեն։

Կիսապայթական բաղաձայնները հետևյալներն են.

ա) Շրթնայինն ^{p}f, ^{b}v. առաջինը, որ խուլ հնչյունն է, սովորական է գերմաներենի մեջ (ինչպես Pferd, Pfennig և այլն). երկրորդը, որ նրա թրթռուն ձևն է և կարող է հեշտությամբ արտաբերվել, ծանոթ լեզուների մեջ գոյություն չունի. գտնում եմ միայն բանտու կարանդա լեզվի մեջ, ուր կա pf և bv (Marconnès, 12)։ ^{p}f կարելի է արտասանել երկու տեսակ. կրկնաշրթնալին կամ շրթնատամնալին. նախնական ձևը առաջինն է, որ հետո ձևափոխվելով անցել է երկրորդին։ Նրանք, որ անվարժ են այս արտասանության, նույն բաղաձայնը լսում և հնչում են իբրև երկու անջատ բաղաձայն pf, ճիշտ ինչպես ուրիշներ չ ձայնը լսում են ու գրում թշ (tch)։

բ) Մորֆոլոգիական. ալս կարգի կիսաձայնները նորակազմություն են բարմաթխի անասկներ, քան արտ լեզվի ձայերը կարող է բարմաթխի կիսաձայն հնչիել բիմբի վրա։ Դիմահարների հնչյուններն են.

1. Միջնատամնային [թ, ժ]. ատաջինը խուլ. հնչյունը թրթռատուն. արտասանվում են ալն ոճով, ինչպես [թ, ժ] շփականները։ Կարելի է դատարկ արտասանել ալս ձայները, բայց ծանոթ լեզուների մեջ ատաջորական չենք. թխում է, ինչ գալաթյան անունն արտաբերենք մեջ։

2. Հետնատամնային ն, ն՝ ն, ց։ (Ալս խումբը հաչկերեն կոչելի էր կոչել ձևրական, որի ատաջին տարր հնչյ ն է)։ Ատաջինը թրթռատուն, երկրորդը թրթռատուն շնչավոր. երրորդը պարզ խուլ և չորրորդը խուլ շնչավոր։ Արտասանվում են լեզվի ծայրը կպչելով ատամների վերևը։ Շատ լեզուների մեջ կան ալս ձայները։ Ամենատարածականն է ց, որ գտնում ենք ատաբերենում, գերմաներենում, իտալերենում, անգլերենում, մի քանի ֆրանսիական բարբառներում և սեմական լեզուներում (հերբերեն, ատրերեն, արաբերեն և ալլն)։ Ավելի հազվագյուտ է թրթռատուն ն, որ գտնում է իտալերենում և սամանական բարբառներում։ Դար նաև հին արավերենում, ուր անոր նաև հատուկ նշան ṣ ձևով. որդի ալսվական լեզուներից շատերի մեջ ջնջվել է. օրինակ, ատաբերենը չունի ն, բայց լեհերենն ու բուլղարերենը գիտեն (Шеринъ, 21)։ Հին լեզուներից ատնակրիտոս, լատիներենը և հունարենը գոլի են ալս ձայներից, իսկ նոր հունարենը, ինչպես և գանազան նորալատին լեզուներ ու բարբառներ ունեն ց ձայնը։ Նոր հունարենը գիտե ն և ց (օրինակ ջուշա՝ փլիձանի Κορτσα՝ կորիցի)։ Մեր շրջակա ապգերից ու լեզուներից միալն վրացերենն ու մլոս կովկասյան լեզուներն են, որ ճանաչում են ալս ձայների երեք ատոհճանները (ն, ն, ց). մլուսներ՝ թուրքերենը, քրդերենն ու պարսկերենը իրար պարի են ամեն մի ատոհճանից։ Ադրպաներենն ունի ն, ց ձայները, ինչպես նաև յ, շ, բայց պարսկերեն տրոխատուխյանց մեջ յ, շ գարձվում են ն, ց (թեև կարող են պահվել նաև անփոփոխ). օրինակ. պարսկերեն جوجه «ջրնոտ»>ադրպաներեն ցան. جوجه «ճոզիկ»>ադրպաներեն ձան (Darmesteter, Chants populaires, 6)։ Ամենքին հայտնի է, թե ինչպես թուրքերը հայերեն բառերը արտասանելու ժամանակ ն գարձնում են վ, ց գարձնում են ս և ալլն. ալս ձևով են ատաջացել մեր երկրի գանազան անունների ձևափոխուխյունները, ինչպես Զադաձոր>Զանգեզուր. Օձուն>Ուզունլար, Ցոլա-

կերա > Սոլակ, Սրագած > Ալագյազ և այլն։ Թուրքերենի հետ Փոքր-Ասիայի թրքախոս հայերն էլ ստացել են այս հատկությունը, այնպես որ նույնիսկ մեր այբուբենը սովորելու ժամանակ զ, ձ, ծ տառերը որոշելու համար անվանում են եչզա, հոզա, խեզա։ Բոլոր լեզուներից ավելի հայերենն է, որ հարուստ է այս ձայնորով. նա ոչ միայն հնուց ի վեր ունի նույն բաղաձայնների երեք աստիճանները (ծ, ձ, ց), այլև բարբառային արտասանության մեջ շատ տեղ ավելացրել է և չորրորդը, այն է շնչեղ թրթռուն ձ՝ Ասիական լեզուներից չինարենն ու ճապոներենը ունեն այս ձայները, իսկ տիբեթերենը, ինչպես մյուս բաղաձայնների մեջ, նույնպես և այստեղ ունի ծ, ձ, ց երեք աստիճանները։

3. Նախաքմային ջ, ջ', ճ, չ, կոչվում են chuintante (ճչական), (այս խումբը հայերին մի բառով կարելի էր կոչել ճչական, որի առաջին երկու տառերը հնից ճչ ևն)։ Առաջինը թրթռուն, երկրորդը շնչեղ թրթռուն, երրորդը խուլ և չորրորդը շնչեղ խուլ։ Արտասանվում են լեզվի ծայրը կպցնելով նախորդներից ավելի վեր՝ քիմքի առաջամասին։ Թե հետնատամնային և թե նախաքմային կիսապալթականների հենման կետը կարող է լեզվից լեզու տարբեր լինել, այսինքն՝ մի քիչ ավելի վերև կամ մի քիչ ավելի ցած։ Նախաքմային կիսապալթականներն էլ բավական սովորական են ծանոթ լեզուների մեջ. այսպես չ ձայնը կա ռուսերենի, գերմաներենի, իտալերենի, անգլերենի, իսպաներենի և գրեթե ռոմանական բարբառների մեջ։ ջ ձայնը գտնվում է իտալերենի, անգլերենի, բուլղարերենի, սերբերենի և ռոմանական բարբառների մեջ. մյուսները չունեն. ռուսերենը թեև գիտի չ, բայց չգիտի ջ։ Հին լեզուներից սանսկրիտը և զենդերենը ունեն այս ձայները, իսկ հունարենն ու լատիներենը զուրկ են։ Սանսկրիտը գիտի նույն բազաձայնների ամբողջ չորս աստիճանները։ Մեր շրջակա լեզուներից վրացերենն ու մյուս կովկասյան լեզուները ճանաչում են միայն երեք աստիճան (ջ, ճ, չ)։ Թուրքերենը, քրդերենն ու պարսկերենը, որ զուրկ են հետնատամնային խմբից, ունեն սակայն նախաքմային ջ, չ։ Ընդհակառակը, սեմական լեզուները, որ ունեն հետնատամնային կիսապալթական ց, չունեն նախաքմայինները. միայն արաբերենն է, որ ունի ջ ձայնը (բայց չկա չ)։ Օսերենն ունի մի տեսակ ճ, ǰ, որոնք բռնում են չ և ց, ջ և ծ ձայների միջին տեղը (Miller, Die Spr. d'Oss., 13)։

Հայերենը, հին ժամանակից սկսած, գիտի նույն բազաձայների երեք աստիճանները (ջ, ճ, չ), որոնց վրա նոր բարբառները

ավելացրել են շնչեկ թրթռան ջ՝, որով հավելվեցին հասել է հիշյա առնակրկիտի հարստությանը։

Բոլոր ծալլյուվալվալին պալմականները կարող են հնչվել միասին ձևով, բայց պրոնք լեզուներին մեջ սովորական չեն։ Սերբևերենը, բացի չ-ից, պիտի ջ և երկա անուսկ արիշ ձայն, որոնցից առաջինը համապատասխան է շատ միասին ջ, մյուսը իրը ն (tč) (Белић, 4)։ Լեհերենն ունի միասին c, որ գրվում է c՛ և միասին ձ, որ գրվում է dz՛։ Հիպերբորեյան պլիյակ լեզուում կան ց և չ ձայներ։ Զուլուերենում կա մի անուսկ չ և ջ, որոնք մյուսներից ավելի կոշտ են. արտասանվում են լեզուն ավելի հետ քաշելով. ունեն նաև իրենց միասին ձևը (Ашарин., Матер., 345)։ Աֆրիկյան նախկին լեզուն, բայց սովորական č-ից և ǰ-ից, ունի նաև č* և ǰ* ձայներ, որոնք նույն č և ǰ ձայներն են, միայն թե նրանց վերջում ավելացել է շրթունքների կլորացում՝ իրը թե սուլելու պես։ Հնդկական մարաթի լեզուն էլ ունի ձ, ձ՛, ծ, ց ձայները, բայց պրոնք ներկայացնելու համար առանձին տառեր չէ հնարած և հրնդկական č, čh, ǰ, ǰh տառերի վրա մի կետ դնելով բավարարվում է (Stevenson, 10)։ Լատիշներենն ունի dz (ձ), c (ց), ինչպես և dž (ջ), č ձայները։ Պրոլոնսոալ քաղաքականչան լեզուն ունի ց (որ միշտ գրում է ch) և ձ, որ գրում է g և ǰ տառերով. g առանում է ձ հնչյունը e, i ձայնավորներից առաջ, իսկ ǰ կարդացվում է ծ՝ a, e, i, o, u ձայնավորներից առաջ (Savinlan, 6)։

գ) Միջնալեվվային կիսապայթական ᵗç և ᵗʲy. առաջինը խուլ, երկրորդը թրթռուն. արտասանվում են լեզվի միջին մասով, ուսատ և միշտ փափուկ են, և այս պատճառով դժվար կարող են զանազանվել ʲy, cʲ պալմականներից։

դ) Հետևալեվվային կիսապայթական ᵏx, ᵍǧ առաջինը խուլ, երկրորդը թրթռուն. արտասանվում են արմատի և կատիկի միջև. այս ձայները լսվում են հարավային գերմանական բարբառների մեջ, սրիշ լեզուներում անսովոր են։ ᵏx հնչյունը ունի նաև մոնղոլերենը, բայց նրա թրթռունը չկիտի (Владимирцов, 62)։ Ըստ Շատյանենկի (էջ XV), ամերիկյան բասկերի լեզուն ունի ուժեղ x-ի հետ նաև kx հնչյունը։

ե) Կոկորդային կիսապայթական ղ՝, որ արտասանվում է կոկորդի խորքում, ճիշտ ինչպես արաբական ج և ڠ ձայները. գոյությունն ունի վրացերենում, որի դասական օրինակն է՝ Բաղ՝աղ՝ի ձղ՝ալչի դ՝իղ՝իններս՝ «Դուրտր ջրում կոկռում էջ։

Նուլն ձայնը կա նաև հայերենի մի քանի բարբառներում, ինչպես Տփղիսի բարբառում, Ղ՝աղար, ղ՝ավա «աուրճ». Ղզլարի բարբառում. անվարժ ականջը լսում է և հնչում իբր կղ, ղ՝ ներկայացնում է թրթռուն ձևը, նրա խուլը անսովոր է. գտնվում է ուտիներենի մեջ, ինչպես u^{ях} «վեց»։ Սվեդիայի (Մուսա-լեռան) բարբառի թե հայ և թե արարերենից փոխառյալ բառերի մեջ կա նույն ձայնը. ինչպես՝ ղ՝ապրուլ «արծիվ», բուջուղ՝ «անկլունա», բայրուղ՝ «դրոշակ», ձամձողղ՝ «օրորոց», ուցղ՝այզ «ընկույզ», առըստուղ՝ «առաստաղ» և այլն։ Երևի կիսապալթիական խմբի մեջ պետք է դնել աննամերենի tch և dch ձայները, որոնց ճիշտ արտասանությունն է ատամնականին հաջորդող խուլ կիսաձայն յ, իբր tç և dç (Dirr, Grammm. annam, 3)։

ե) ԿՈՂՄՆԱՊԱՅԹԱԿԱՆ ԵՎ ՈՉԿԱՊԱՅԹԱԿԱՆ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ

Բացի կիսապալթականներից, զանազան լեզուների մեջ դըտնվում են նաև կողմնապայթական և. ոչգապայթական (explosive latérale, explosive narale) կոչված բաղաձայններ, որոնք նախորդների պես բռնում են սեղմերի և պալթականների միջին տեղը նրանով, որ իրենց առաջին մասը պալթական է, իսկ երկրորդ մասը սեղմ կամ ոչգալին տևական բաղաձայն։ Կողմնապալթական բաղաձայնները նրանք են, որոնց լարումը պալթական է, իսկ էջքը կողմնական, բայց երկուսն էլ առաջացած միևնույն գործարանների գործողությամբ և միևնույն կետի վրա։ Լեզվի ալս կամ այն մասը կպում է քիմքի ալս կամ այն կետին և արգելում մի վայրկյան օդի հոսանքը, ճիշտ ինչպես t, c^{y}, g բաղաձայնների համար։ Հանկարծ, առանց լեզուն իր դիրքը փոխելու, երկու եզերքները քիմքից բաժանվում են և երկու կողմից ձևացնելով մի-մի անցք, թույլ են տալիս, որ բանտարկված օդը նրանց միջով դուրս հոսի։ Անվարժ ականջը ալս ձայները լսում է իբր tl, dl, kl և այլն (պալթական + կողմնական l), բայց ըստ որում նրանք միաժամանակ կատարված գործողություններ են, պետք է համարվեն իբրև պարզ ձայն, ճիշտ ինչպես ձ, ջ, ց և այլն ձայները։

Կողմնապայթական բաղաձայնները հետևյալներն են.

1. Միայթալեզվային ^{t}l, ^{d}l, որոնք սովորական են ամերիկյան լեզուների մեջ. կարելի է գտնել նաև անգլերենի և վերմաներենի մեջ, ինչպես՝ Kettle, bridle, Kittel, Tabel, որոնք արտասանվում են Ke^{t}l, ki^{t}l, ta^{d}l և այլն։ Ըստ Յոխելսոնի (էջ 101), հիպերբոր-

լան լեհագիր լեզուում կա մի ձայն, որ դասվում է t-ի և l-ի (ինչպես ինքն է ասում)։

2. Միջնալեզվական l, l, որոնք միևնույն ժամանակ վանական են. առաջինը, որ խոլ ձևն է, դանվում է գերմաներեն glauben բառի սկզբնական laun արտասանության մեջ։

3. Հետնալեզվական l g, որոնք իրենց կարելի է պլոսիվներով արտասանել, բայց ծանոթ լեզուների մեջ դրսևորման չունեն։

l-երի պահպան անասկներով հարուստ են հյուսիսային կովկասյան լեզուները։ Տրուբեցկոյը (BSL, 23, 187—188) հիշում է մի քանի այս կարգի ձայներ. այն է (իր առաջարկությամբ)

l spirante sonore latérale
ɬ spirante sourde latérale (Dirr t')
l affriquée sonore latérale (Dirr K')
ɬ affriquée sourde latérale
ɬ' spirante sourde latérale aspirée (Dirr l')
ll spirante sourde latérale longue (géminée).

Դիրը (Einführung, 29—30) այս կարգի ձայները նշանակում է l', t', k' և նկարագրում է հետևյալ ձևով. երբ մեկը լեզվին տա l արտասանելու դիրքը և ինքվին դնի ich ձայնը, կստացվի l'— նմանապես երբ t, k արտասանելու ձևն առնի և ինքվին դնի l, կստացվի t', k', որ անվարժ ականջը պիտի լսի l, l։ Լոպատինսկին (էջ 5) այսպես է նկարագրում l ձայնը. լեզվի ծայրը կպչում է վերին առամներին, շրթները դուրս է դալիս հանի առամների և լեզվի կողերի միջև կազմված անցքից, ինչպես p'fə ջղորաս. ապա պիտով առացնում է t փոխանակ l-ի խառնաբարբառ։

Ջանազան l-ի անասկներ տենն նաև Մադագասկարի հյուսիսային հնդբնների ամերիկյան լեզուները, որոնք նմանվում են մեր tl, cl, gl ձայներին (F. Boas, Handbook of american indian languages, I, 18)։

Կաասրենը (էջ 6,) օսմլյակներեն լեզվում դանում է շնչեղ dhl և համապատասխան խուլ thl ձայները. ինչպես ādhla «տասավոտ» Kathl «օրդ». Նման ձայներ չկան ֆինն և լապոն լեզուներում, ինչպես նկատում է նա. կան նույնիսկ այս երկու ձայների քմայինները՝ dhly և thly (անդ, էջ 7)։

Աֆրիկյան ոռնդա (բանտու) լեզվի մեջ կան dl, tl, hl, tlh ձայները, որոնք քննիչը (Junod, 36) կոչում է latéral (կողմնական), որովհետև արտասանվում են բերանի երկու կողմերով։ Աֆրիկյան լեզվի մեջ էլ կան hl, tl, dl ձայները (Laren,6)։

Ինգապայթական բաղաձայնները նրանք են, երբ պալթական բաղաձայնի խցման ժամանակ կաուիկը ցած է իջնում և բանտարկված օդը սկսում է դուրս հոսել քթի միջով. ալսպիսով բաղաձայնի խցումը լինում է բերանալին, իսկ պալթումը ռնդալին: Այս բաղաձայնները կարելի է նշանակել p^m, b^m, t^n, d^n, k^n, g^n ձևերով: Հաճախ կարելի է լսել անգլերենի և գերմաներենի մեջ, ինչպես mutton, ridden, bleiben, leden, knacken, որոնք հնչվում են mot^n, rid^n, $blaib^m$, lad^n, $knak^n$ և այլն: Կա և այս բաղաձայների մի ուրիշ տեսակը, որ ռնդալինը ավելի առաջ է քան բերանալինը. այսպես են $ŋk$, $ŋg$, mp, mb, nt, nd, $nč$, $nǰ$ ձայները Մադագասկարի և Մելանեզիալի լեզուների մեջ: Ըստ Յոհնսոնի (էջ 101) հիպերբորյան յուկագիր լեզուն ունի մի ձայն, որ t-ի և r-ի զուգորդն է (այսինքն t^n): Աֆրիկյան շաքրալա լեզվի մեջ էլ կան մի խումբ ռնդալին բաղաձայններ, որոնք ուսումնասիրողը (Rösler. 1) գրում է mb, nd, ŋg, ŋk, mp, nt ձևով, բայց զգուշացնում է, որ պետք չէ սրանք հնչել բաժան-բաժան, այլ ռնդալինն ու պալթական բաղաձայնը միասին:

Շրթնաղատակային (labiovélaire) պալթականները այն բաղաձայններն են, որ արտասանվում են լեզվի ալմասը կպցնելով կաուիկին և միևնույն ժամանակ շրթունքներին տալով կլորակ մի բացվածք: Այս կարգի բաղաձայնների կազմությունը ճիշտ կարելի է համեմատել փափուկ բաղաձայնների հետ: Ինչպես որ մի որևէ պալթական բաղաձայն j կիսաձայնի հետ միասնաբար կազմում է փափուկ պալթական ձևեր ($k^ʲ$, $d^ʲ$, $n^ʲ$ և այլն), այսպես էլ նմանապես կաուկալին բաղաձայնը u կիսաձայնի հետ կազմում է մի անբաժան միություն: Եվ ինչպես որ անվարժ ականջը փափուկների փոխարեն լսում է պալթական+y ձայնակարգեր, նույնպես և շրթնաղատակային բաղաձայնի փոխարեն անջատաբար պիտի լսի կաուկալին+w խմբեր:

Շրթնաղատակային բաղաձայնները հայտնագործված չեն արդի լեզուների մեջ, բայց լեզվաբանների ենթադրությամբ գոյություն են ունեցել հնդեվրոպական նախալեզվի մեջ և թվով չորսն են՝ q^w, g^w, q^wh, g^wh: Միայն աֆրիկյան մի քանի լեզուների մեջ (սուդանները, Կամերուն, Togo-land) գտնվել են մի թրթռուն և մի խուլ բաղաձայն, որոնց արտասանության ժամանակ լեզուն բռնում է k, g ձայների դիրքը և միևնույն ժամանակ շրթունքները առնում են p, b ձայների դիրքը (Pederson, Mélanges, 59):

Կովկասյան լեզուներն ունեն շրթնայնացած (labialisé) բաղա-

ձայնների մի շարք, որ Իթոր տատապարձում է $z^{\text{ъ}}$, $s^{\text{ъ}}$, $ʃ^{\text{ъ}}$, $ĉ^{\text{ъ}}$, որոնց հետ կա նաև $ð^{\text{ъ}}$ (իմա՛ $ʌ^{\text{ъ}}$), $ɛ^{\text{ъ}}$ (իմա՛ $ð^{\text{ъ}}$), $ç^{\text{ъ}}$ (իմա՛ $ɣ^{\text{ъ}}$). սրանց նկարագրությունը տալիս է նա (Einführung, 32), բայց դժվար է հասկանալ. մոտավոր իմաստն այն է, որ հիշյալ բաղաձայններից հետո պետք է գնել մի կարճ վ ձայն։

Բայց այս կարգի բաղաձայնների մի ավելի մեծ խումբ դրտնում եմ ամերիկյան պրեսթա լեզվում, որ նկարագրել է Սեպիր առանձ տատմնասիանը։ Այս լեզվի մեջ գտնում ենք 9 այս կարգի ձայն, որոնք են p^{w}, v^{w}, f^{w}, m^{w}, k^{w}, q^{w}, $ɣ^{w}$, x^{w}, n^{w} (Sapir, 45)։

Աֆրիկյան կենյան (բանտու) լեզվի մեջ կան այսպիսի անատվոր ձայներ. kp, ŋk, nt, mp, ŋkp, gb, ng, nd, mb, ns, mf, ngw, nč (Ittmann, 6)։ Այս gb, kp ձայները կան նաև աֆրիկյան իբո լեզվի մեջ. հենց լեզվի անունը բաղաձայնով է, որով սմանք գրում են Igbo ուրիշներ Ibo. վերջինը ավելի է տարածված (Ward, 6)։

Մակոնդեյան լարիմ լեզվի մեջ կան հետևյալ խառն ձայները. gw, kw, mb, nd, ns, ng, ngw (Dempwolff, 5)։

Մալդաշերեն լեզվում կան dr, dz, mb, mp, nd, ng, nt, nk, tr, ts, ndr, ntr, nts միախառն տատանին հնչյունները (Montagne, 9)։

Աֆրիկյան կաբանդա լեզվում կան անդալին mb, nd, ng, mv, nz, nr ձայները (Marconnès, 13)։

Հոտենտոտյան կաբանա բարբառում կան kx', նաև /kx', ≠kx' և //kx' ձայները, որոնք ասկալն չկան նամա լեզվի մեջ (Meinhof, 21)։

Աֆրիկյան սեսուտս (բանտու) լեզվում կան kg, thl, tl, h խառնուրդ ձայները (Beyer, 2.3)։

Աֆրիկյան ջոնգ (բանտու) լեզվի մեջ կան kp, gb միախառն ձայները (Nekes. 8), որոնք գտնվում են նաև պապուասյան ճլուղի կատե լեզվում (Pilhofer, 15) և աֆրիկյան (ոչ-բանտու) լեզվի մեջ (Spencer, 7), ինչպես և աֆրիկյան կպելլե լեզվի մեջ (Westermann, 2)։ Սրանք բոլորը p, b ձայներն են, միայն սկզբից k հարվածով։

Արևմտյան և կենտրոնական Աֆրիկայի շատ լեզուներում կան այս երկու ձայները, որոնց նկարագիրը տալիս է Վեստերմանը՝ էվե լեզվի քննության մեջ (էջ 15)։ Նախ կատիկում կազմվում է մի նեղ անցք. երբ այդ անցքը բացվում է, նույն միջոցին շրթունքների միջոցով կազմվում է մի նոր փակվածք, այնպես որ կատիկի նեղացմամբ պահված օդը մինչև շրթունքներն է փախչում, ու նորից պահվելով, այդտեղից էլ շրթունքների միջով դուրս է հոսում։ Ուրիշ խոսքով սա մի տեսակ p կամ b է, որի սկզբին

կա կատկալին մի հարված, օրինակ, Paris քաղաքի անունը հնչում են Krali։

Աֆրիկյան շոնա (բանտու) լեզվի մեջ կա երկու պալթական բաղաձայն, որ արձանագրում եմ bɬ, dɬ ձևերով և որոնց նկարագիրը տալիս է O.Նեյլը (էջ 2) հետևյալ ձևով. „In implosives, air, on the releas of the momentary stop, enters the mouth. This effect is produced by lovering the larynx or voice-box after the closure has been made, and thus slightly rarefying the air in the voice chamber so that on its opening air rishes in instead of out“։ Սրանք չեն կարող միանալ ուրիշ բաղաձայնի հետ, ուստի գտնվում են միայն ձայնավորների կողքին։

Աֆրիկյան սեսուտո (բանտու) լեզվում կան միախառն bǰ, pǰ, fš, tl, tlh, hl. այս վերջինը գերմաններեն ich+l (Jacottet, 9)։

Սիամերենն ունի 9 ձայնավոր՝ a, ă, å, e, ə, i, o, ŏ, u, յուրաքանչյուրն ունենալով 3 աստիճան (կարճ, շատ կարճ, երկար). ընդամենը լինում է 27 ձայնավոր։ Բաղաձայններն են՝ b, d, f, h, k, k', l, m, n, ñ, p, p', r, s, t, t' w, y, dx, tx, ուրիմն չունեն g, ž, z և շչականները (Wershoven, 1)։

Նոր-Հիբրիդյան տանգոա լեզվում կա մի տեսակ p, որ գըրվում է նաև pw, mpw և որ ըստ նկարագրութեան նման է մոմ փչելու ձայնին (Macdonald, 1)։

Նույն լեզվում կա մի տեսակ t, որ t-ի և p-ի միջին տեղն է բռնում. հնչվում է լեզուն դնելով առաջների միջև, որոնք դիպչում են վերին շրթունքներին. նման է թքելու pt ձայնին (Macdonald, 1)։

Աֆրիկյան բո կամ բանկոն լեզվում կա մի ձայն, որ գրում են gb և որ ուսումնասիրողը այսպես է նկարագրում. „echte Velarlabialen, bei dener am Velum und an den Lippen gleichzeitig ein Verschluss gebilded und geõfnet wird“։

Կա նաև սրա ռնգականը (m), որ ուսումնասիրողը նկարագրում է այսպես. “eine Art Saugbewegung an den Lippen, eine Art labialen Schnalzes“ (Spellenberg, 16)։

Աֆրիկյան ահլոն լեզվում կան kp, gb ձայնները (տես Westermann, 6)։

Սուդանի բարգու լեզվում կան pf, kp, gb ձայնները (Westermann, 128)։

Բազաձայնների այս բոլոր տեսակները, որ ըստ կարելիության մանրամասն նկարագրեցինք վերևում, հավաքում ենք ալտաեզ մի ապլուսակի մեջ (տես էջ 208)։

Արտասխի պատ կան և կրտսերին անշուշտ պետք ալֆաբեի ձայներ, որոնք այս բոլորից արդ չափով տարբերվում են արտասանության հատկանիշով, բայց էապես նաև են։ Այդ բոլորն առանձնապես նկարագրել ավելորդ համարեցինք։ Այսպես՝ հնչերկրորդյան պիլիակ լեզվի մեջ կան, բայց սովորական ձևերից, նաև մի տեսակ g, ž, z, k, r, s, ts, (g), č(ǯ), š, որոնց արտասանության ժամանակ լեզվի ծայրը շատ դալով, տակի մակերևույթը հպվում է վերին ատամներին, և մի երրորդ տեսակ k, x, որոնց արտասանության ժամանակ լեզվի ծայրն երեսի կողմը հպվում է տարբեր ատամներին։

Մեզանիզան մասամ լեզվում, ըստ Կոլբինգատանի (էջ XII), կա մի հնչյուն, որ հնդիկները արձանագրել է ɳ ձևով, բայց այստեղ լսում են k, p, w հնչյունները։

Ամերիկյան բանակների լեզվով kx հնչման հետ կա նաև tx հնչումը (միահատ) (Steinen, XV)։

Այս և նման ձևեր չենք պրել ապլուսակում։

Ապուսակի մեջ առնենք 128 ձայն, որոնցից 60 հատը թրթռուն է, 55 հատը խուլ և 13 հատը անդալին։

Այս բոլորը ցույց է տալիս մարդկային ձայնի բոլոր ձևափոխությունները. բայց ավելացնենք իսկույն, որ չկա մի լեզու, որ կարենա այդքան ձայն միանգամից ներկայացնել. աշխարհիս ամենահարուստ լեզուներն էլ պատում են միայն 30 ձայնի շուրջը։ Այսպես՝ սանսկրիտը, որ ունի շատ հոխ ալֆաբեն, գիտի միայն 35 բազաձայն. սեմական լեզուներից երբայերենը ունի 23 բազաձայն, արաբերենը՝ 27 բազաձայն, թուրքերենը՝ 22 բազաձայն, լատիներենը՝ 17 բազաձայն, հունարենը՝ միայն 15 բազաձայն, իսկ Մալրապտի Արևելքի ալյուտ լեզուն ունի միայն 11 բազաձայն (այն է k, č, t, p, r, n, m, h, š, s, w)։ Հայերենը հին ժամանակ ուներ միայն 29 բազաձայն, իսկ նիմի նկատի առնենք արդի բոլոր բարբառները, բազաձայնների թիվը կհասնի 48-ի։

Բազաձայնների կողմից չափազանց հարուստ են կովկասյան լեզուները. ըստ Ռիսի նկարագրության (Einführung, 29—37), որանք ունեն բազաձայնների երեք տասնեակներ (15 հատ).

р п ф
г ӏ х
п т ҭ
ӡ ҵ ҕ
ҷ ҽ ҿ

կան և պ, կ, տ, ծ, ճ խուչապի սեղմումով (գոնը-վում են նաև հայերենի մեջ) ըստ Միլլերի (Die Spr. d'Oss, 13—14)։

—3 տեսակ l, որոնց մասին արդեն խոսել ենք.

—6 կոկորդային ձայն, որոնք են ղ, հ, ɦ, (ուժեղ ɦ), խ (գերմաներեն ch ձայնը, ինչպես ich բառի մեջ), խ (ուժեղ արաբական ẖ).

—կ-ի տեսակներից 6 հատ. ԓ (կոկորդի սեղմումով), ք, ᵏx, q=ꝟ սրա մի ուրիշ տեսակը (ķ).

—6 սուլող ձայներ՝ s, š, z, ž և սրանց միջտեղում ś, ź.

—5 v, f, w (կրկնաշրթնային), ᵽ (կրկնաշրթնային) , ʃ (շրթնային հ-ի նման մի ձայն).

—5 y, c (=ʒ), r, m, n.

—3 β, π, π', կրկնաշրթնային ցնցուն ձայներ, ձի քշելու պես, իբր tpr.

—7 zˢ, sˢ, ǰˢ, čˢ, ծˢ ճˢ gˢ (հնարագրությունը տե՛ս վերը).

Դումարը՝ 64 բաղաձայն, չհաշվելով քմայիններըˇ dʸ, tʸ և այլն։

Կովկասյան տարատարան լեզուն, ըստ Ժիրկովի (էջ 35), ունի 3 տեսակ խ, 3 գ, 4 կ, 3 ծ, 4 չ 2 շ. բայց հեղինակը այս ձայնների որակը կամ տարբերությունը չի բացատրում։

Կովկասյան ճամալալ լեզուն, ըստ Բոկարյովի (էջ 12), ունի 58 ձայն, որից 41 բաղաձայն, 17 ձայնավոր. ձայնավորների մեջ կան 4 ա, 4 ի, 4 ու, 3 e (ձայնավորներն ունեն կարճ ու երկար ձևեր). բաղաձայնների մեջ կան 4 խ, 5 կ, 4 լ և այլն։

Ջեչեներենն ունի 40 ձայն, որոնցից ձայնավորներն են a, ä, e, c', o, ō, ū, (8 հատ), բաղաձայններն են՝ b, c (ʒ), d, x, g, h, k, l, m, n, ŋ, p, r, s, t, q, v, x, χ (ուժեղ x), y, z, ç' (y), č, č̣, γ, k' p', t', q, s̄, ž, c (ɜ), (32 ձայն) (Мациев 12)։

Կովկասյան լեզգի լեզուն ունի 41 բաղաձայն, որոնց մեջ կան 4k, 3g, 3x և այլն (Жирков, 11—12)։ Ձայնավորների մեջ չկա o, այլ միայն u, բայց օտար բառերի մեջ, ինչպես ռուսերենից և թուրքերենից փոխառյալ բառերում գտնում ենք o, ինչպես՝ oldas «ընկեր» (անդ. 24)։

Շատ հարուստ այբուբեն է ունեցել այժմ չնչված ագվաններեն լեզուն։ Ագվանները կովկասյան ժողովուրդ էին. նրանց երկի-



րը նախապես տարածվում էր Բաքվից մինչև Դերբենդ։ Նրանք ունեին առանձին լեզու։ Մեսրոպ Մաշտոցը հնարեց նրանց համար առանձին այբուբեն, որով թարգմանեցին Աստվածաշունչը։ Այդ այբուբենը գործածուվեյան մեջ էր դեռ 1305 թվականին, այնուհետև ջնջվեց։ Այսօր ո՛չ աղվան ազգն է մնում, ոչ լեզուն և ոչ էլ որևէ հետք իր դրականութեյունից։ Այբուբենն էլ կորած էր։ Վրացի երիտասարդ մի գիտնական, Ի. Աբուլաձե, էջմիածնի (այժմ Երևանի Մաշտոցի անվան) ձեռագրատան մեջ գտավ մի ձեռագիր տասնհինգերորդ դարից, ուր 7 լեզվի այբուբենների շարքում կա նաև աղվանից այբուբենը։ Այս գյուտով վրացի գիտնականը իրեն

համար անմոռանալի փառք ու պատիվ ստեղծեց։ Իր ուսուցիչը՝ Շանիձե, մանրամասն ուսումնասիրեց այդ այբուբենը, որի մասին ես էլ գրեցի մի հոդված Արմֆանի տեղեկագրում (1941 թ., № 3—4, էջ 3—11)։ Համաձայն այդ ուսումնասիրության, աղվաններեն այբուբենն ունի 52 տառ, որոնք ներկայացնում են հետեվյալ ձայնական դրությունը.

Ձայնավորներ՝ 9 հատ.

ա, Ա, ի, ի՛, է, է, ու, իւ.

Բաղաձայններ՝ 43 հատ.

Շրթնային — բ, պ, փ, ֆ.

Ատամնական — դ, տ, թ.

Կտակային — գ, կ, ք.

Քմական — ձ ղ, ձ ճ, ձ չ.

Ծնքական — ձ, ծ, ց.

Շչական — ձ զ, ձ ժ, ձ շ, ձ ս.

Կիսաձայն — ձ լ, վ, յ.

Նալ — ձ լ, ր, ռ.

Ռնգական — մ, ն.

Կոկորդական — ձ հ, ձ հ, ղ, ղ՛.

Մանրամասնությունները մեզ հայտնի չեն. օրինակ թե ինչ էր քմականների զույգ շարքի տարբերությունը, որոնք էին երկու տեսակի կիսաձայն յ-երը, ինչ տարբերություն ունեին ե և է և այլն։

Վերաքննության կարոտ եմ համարում կովկասյան ագուլերեն լեզվի այբուբենը, որ կազմել է Ռ. Շահումյանը (Грам. очерк агул., 15), ուր բաղաձայնների թիվն է հիշտ 80. միայն t, v ձայների համար կա 4 տեսակ t, 2 տեսակ p, 8 տեսակ q, 11 տեսակ k և այլն։ Սա չափազանց է։

Ընդհակառակը, կան լեզուներ, որ շատ աղքատ են բաղաձայնների կողմից. օրինակ, օվկիանյան տահիթեե լեզուն թեև ունի a, e, i, o, u ձայնավորները, բայց սրանց դեմ հանում է միայն 8 բաղաձայն, այնպես որ իր ամբողջ ձայնական դրությունը կազմված է 13 ձայնից, այն է a, e, f, h, i, m, n, o, p, r, t, u, v (Senac, 17)։ Ըստ այսմ չկան այս լեզվի մեջ b, g, d սովորական բաղաձայնները, թեև p, t կան, իսկ k նույնպես չկա։

Միկրոնեզյան տրուկ լեզուն, բացի a, e, i, o, u ձայնավորներից, ունի 13 բաղաձայն. b, d, f, g, k, l, m, n, p, r, s, t, w (ընդամենը 18 ձայն) (Bollig, 259)։

Սալոմոն կղզիների օրհնա լեզուն ունի միայն տասը բաղաձայն, որոնք են w, r, k, t, m, n, p, h, f, s *(չկան* b, g, d *խլըբաւոնները)* (Iwens, 589)։

Կորեական ալֆաբետը հետևյալն է a, ă, e, i, o, ŏ, ŭ, u, y, h, k, k', m, n, n', p, p', r, s, t, t', ts *(ծ),* ʦs *(ց). տասը բաներ դրելա ժամանակ դուրծ են ածում նաև* b, d, g, z *(որից երևում է, որ իրենք խրխռան պալֆաբան ձայներ չունեն). Ունեն նաև* l, *որ միայն չինարենից փոխառյալ բառերի մեջ է դտնվում* (Rosny, 5)։

Նեննեցիներն (սամոյեդ) չունի ž, č, š բաղաձայնները, բայց դիտի ամեն մի բաղաձայնի պարզ և քմային տատիճանները (Terешенко, 22)։

Ամերիկյան ալեուտ լեզվի ալֆաբետը շատ փոքր է. ձայնավորներն են a, e, ə, i, ŏ, u, ŭ *(7 հատ). բաղաձայններն են* ĉ, d, g, k, ɬ (hl), l', m, n, ñ, q, s, š, t, ŧ, x, y *(16 հատ). չունեն* b, v, f, r, *որոնցից առաջին երկուքը լսելիս՝ կարծում են* m, *իսկ վերջինը՝* (r), *լսում են* l (Венямипов, 2)։

Ռուսերենը, որ նույնպես խոսում է ալև լեզվի մասին, ասում է, թե ալեուտ լեզուն ունի 3 հատակ ձայնավոր՝ a, i, u *և 2 ուրիշ ձայնավորներ, որոնցից մեկը մոտ է* e *հնչման, մյուսը՝* o *հընչման. մաքուր* o *չկա։*

Բանտու լեզուները, ըստ Մայներհոֆի (Introduction to the phon., Berlin, 1932), *ունեն բազմաթիվ անսովոր ձայներ. ա) 4 կարգի* t, t' *կամ* d, *որոնք կոչում է կողմնական, գանգալին ատամնատիսողային* (alveolar), *ատամնական. բ)* k *+* x*-ի մի իատնուրդ (դրում է* kx). *գ)* p*-ի դանազան խառնուրդներ՝* pf, px, ps, pš, pv, pɣ, pz, pž, *դ) մի մեծ թիվ խառնուրդ ռնգական ձայների, ինչպես.* nk', nt', nd, nd, mp, mp', ng, mb, nh, mh, nkx, ntx, ntš, nts, mpf, mpx, mps, mpš, ntž, mpž, mpɣ, ndž, mbv, mbɣ, nx, ns, vž, nl, mv, nz *և այսպիսի բազմաթիվ ձայներ։*

Մելանեզյան լեզուների մեջ կան մի խումբ անսովոր ձայներ. օրինակ իալի լեզվում և ուրիշ ցեղակից լեզուներում կան շփական hw, bw, hl, hm, hn, hny *ձայները* (Ray, 84).—*Նգունա լեզվի մեջ կա* m̄, *որ ռնգալին ձայների մի տեսակ խառնուրդ է, իբր* ngm (Ray, 204). *կա և մի ուրիշ ձայն, որ խառնուրդ է* gbw *ձայների և արձանագրվում է* p̄ *ձևով* (Ray, 204).—*Նույնպիսի մի ձայն էլ կա մակուրա լեզվում, ներկայացնում է իբր* ngbw *ձայնախումբը և նշանակվում դարձյալ* p̄ *ձևով* (Ray, 222).—*տասի-*

կո լեզվում կան նույն p̄ (=gbw) և m̄ (= ngm) ձայները (Ray, 236).—բակի լեզան ունի bw և mw ձայները (Ray, 246).—առուլուա լեզվում կան nt, nd, mp, mb, nr, mv ռնգալին ձայները (Ray, 274).—մոն լեզվի մեջ կան nk, nd, nr, mh, mv, mbw ռնգալին ձայները (Ray, 293).—սինեսիպ լեզվում կան nr, nk, tr, nd, mp, mb, mw, rs ձայները (որոնց նկարագիրը չի տալիս Ray, 302).—տանգոա լեզվում կան kw, pw, mpw խառնուրդ ձայները (Ray, 356), նաև ռնգալին t (անդ, 357).—նոգուգու լեզվում կան mw, pw ձայները (Ray, 384.—մալու լեզվում կա մի ձայն, որ արձանագրել են nggbv, հինգ տառ մի հնչյուն նշանակելու համար (Ray, 498).—ռովիանա լեզվում կա mb, որ է ռնգալին b (Ray, 543)։

Աֆրիկյան դահոմե կամ ֆոնդհե լեզվում կան gb, kp, kw hl, hw, մինչև անգամ gbl, kpl եռյակ հնչյունները (Butavand, 6.—աֆրիկյան յոլա լեզվում կան kp, gb (Westermann, 13)։

Աֆրիկյան բամբարա և մանդե լեզուների մեջ կան mb, ng, nk, nd, tl, dl ձայները (Butavand, 43)։

Աֆրիկյան կինգա (բանաու) լեզվում կան nd, mb, ng, nz ձայները (Wolff, 3)։

Զուլու լեզվում կան mf և mv ձայները, որոնք m, f և v ձայների խառնուրդ են (Doke, 13)։

Զուքչի լեզուն չունի b, f, x, š ձայները, ուստի երբ ռուսերենից բառեր է փոխ առնում, դարձնում է b>v, ф>p, g, x>k, q, m>č (Bogoras, 646)։

Նենեցերենը (սամոյեդ) չունի ž, č, š բաղաձայնները։

Տունգուսական էվեն (լամուտ) լեզուն չունի f, z, ž, x, c բաղաձայնները (Цинциус, 20)։

Սիբիրի թուրքական խակաս լեզվում չկան v, f, ž, š, ç (g) բաղաձայնները, բայց փոխ առնելով ռուսերենից այդ բաղաձայններն ունեցող զանազան բառեր, ստիպված են այդ ձայներին, միմիայն ռուսերեն բառերում (Дыренкова, 10)։

Բաշկիր լեզուն չունի č և ǰ ձայները. որանք ուրիշ թուրքական լեզուների, ինչպես և պարսկերենի մեջ կան, արաբերենն ունի ǰ և ռուսերենը r (չ). ուստի և բաշկիր լեզուն, երբ փոխ առնի այս բաղաձայններով մի բառ, կհնչի նույն ձևով. այս պատճառով էլ նրանց համար էլ այբուբենի մեջ մտցրել են ç (ǰ) և c (č) (Şakirəf, 67).

Մելանեզյան լատու լեզուն ունի 5 ձայնավոր (a, e, i, o, u), 6 երկհնչյուն (ae, ai, ao, au, ei, ou) և 15 բաղաձայն, որոնք են՝ b, d, f, g, gw, k, l, m, mw, n, ng, q, r, s, t. բուռ ազատ ունեն s, բայց չունեն š, ž, ǯ ունեն b, բայց չունեն p, pʻc. ունեն f, բայց չունեն v, w. իմաստ պարզաբանող բնույթ չունեն. սմեն բուռ փոխարինում է ձայնավորով։ Ահա մի հատված այս իսկական լեզվից. Girigiri lifoa, lilikeli, lilu kali, liu luao luagamu, ro si lio, lio looa, alu te si lio, ua ogule boso logi, lofo laongi, alo alamai, fatolo, fatolomai (Ivens, 7)։

Կոլյակ (նիմիլյան) լեզուն շատ սղյուսա այբուբեն ունի. բացի սովորական ձայնավորներից, ունի միայն հետևյալ 12 բաղաձայնները. č, h (թերևս h,) k, l', m, n, ñ, p, t, v (երկա տեսակի), y. չունի b, d, z, ž, r, s, š, f, x և ç (g)։ Նոր այբուբենում ավելացրել են այս տառերը՝ ռուսերենից փոխառյալ բառերի համար (Корсаков, 6)։

Պոլինեզյան լեզուների ձայնական դրությանն մասին ահա թե ինչ ընդհանուր տեղեկություն է տալիս Դորդիլոնը (էջ 1—4)։—Պոլինեզյան լեզուն ունի ընդամենը 15 ձայն, որից 5 ձայնավոր (a, e, i, o, u, բոլորն էլ կարճ կամ երկար) և 10 բաղաձայն. f, g, h, k, m, n, p, r, t, v։ Նոր-Զելանդիան այս բոլոր բաղաձայնները լավ պահել է, իսկ մյուսները փոփոխել են. Մանգերևայի արշիպելագում ջնջել են f և h և նրանց փոխարեն դրվել է կոկորդի մի հարված. որինակ fafa «բևեռաձև» և ahiahi «վերևկող» դարձել են àà, aiai.—Տահիթիում և Ընկերության կղզիներում ջնջել են k և g, և նրանց տեղ դրել նույն հարվածը, որինակ՝ tangata «մարդ»>taàta, kura «կարմիր»>ùra. Նաև երբեմն f դառնում է h.—Մանդվիչ կղզում g (որ հնչվում է ng), դարձել է n կամ k, t. բաղաձայնները շարունակում են կրճատվել. r ջնջվում է. karoha «բարև» դարձել էր kaóha, այժմ էլ ևս է áóha. ջնջված ձայնի տեղ դրվում է կոկորդի հարվածը։

Օվկիանյան սամոա լեզուն ունի բացի a, e, i, o, u ձայնավորներից, 9 բաղաձայն, ընդամենը 14 ձայն. այդ բաղաձայններն են f, g, l, m, n, p, s, t, v (որոնցից g հնչվում է միշտ ng). սրանցից դուրս կան նաև r, k բաղաձայնները, բայց միայն օտար բառերի մեջ (Funk, 1)։

Ավստրալիական նոր-պոմերանյան լեզուն (Բիսմարկ-արշիպելագ) ունի բացի 5 ձայնավորներից (a, e, i, o. u) 11 բաղա-

ձայն, որոնք են. b, d, g, p, t, k, l, m, n, r, w. սրանցից դուրս կա նաև ɾ, իսկ օտար բառերի մեջ էլ s (Costantini, 1)։

Սանսկրիտից ավելի հարուստ այբուբեն ունի բենգալերենը, որ գիտի ոչ միայն սանսկրիտին յուրահատուկ հնչյունները, այլև նորամուտ ձայներ։ Ամբողջ այբուբենը պարունակում է 50 ձայն (ըստ Gilbertson-ի). a, ā, au, ai, b, bh, č, čh, d, dh, ḍ, ḍh, ð, e, f, g, gh, ɣ, h, i, ī, ǰ, ǰh, k, kh, x, l, m, n, ṅ, o, p, ph, r, ṛ, s, š, t, th, ṭ, th, θ, u, ū, v, w, wh (շնչեղ w), y, z, ž։

Սանսկրիտի պալեուցիկ բաղաձայնների ամբողջ խումբը՝ իր չորս աստիճաններով և ռնգալիններով, նաև գանգալին բաղաձայններով, մնում են պալի լեզվում (V. Henry, 4)։

Եթովպական ամհարա լեզվի համար Սերրանոն (էջ 2—10) ասում է, թե ամենահարուստ այբուբենն ունի, որ բաղկացած է եթովպական այբուբենից, ավելացնելով սրա վրա 7 տառ։ Եթովպական այբուբենն ունի 33 տառ, բայց սրանց մեջ իրար հավասար են 3 h, 2 s, 2 p և 2 θ, որոնք ո՛չ միայն հնչմամբ տարբեր չեն իրարից, այլև դրութեան մեջ կարող են իրար փոխանակել։ Ասպիսով չնչվում են 5 տառ և մնում է առանձին հնչմամբ 28 տառ։ Սրանցից մեկը արաբերեն ʾ (ձայնավորի սկզբին գրվ՝) ձայնն է, իսկ մի ուրիշը զանազան ձայնանիշներով ներկայացնում է 7 ձայնավորները։ Ասպիսով, ավելացնելով 28-ի վրա 6 հնչյուն ևս կունենանք ընդամենը 34 հնչյուն, որոնց մեջ մի ʾ, 7 ձայնավոր և 26 առանձին բաղաձայն։ Ձայնավորներն են a, ä, e, i, o, u, ə. բաղաձայններն են b, č, d, f, g, h, ǰ, k, l, m, n, ɲ, p, q, r, s, š, t, t', θ, tci, w, x, y, z, ž։ Սրանց մեջ անորոշ է մնում այն, որ հեղինակը տառադարձում է tciə և նկարագրում հետևյալ ձևով. „ha il suono enfatico precedente (t'), ma raddolcito della c“ (նախորդ ուժեղ t' ձայնն է, բայց անուշցած c-ից) (ինչ է այս c-ն)։

Այս բոլորից երևում է, որ հեղինակի ժամենահարուստ կոչած այբուբենը հայերենից առնվազն 5 տառ պակաս ունի։

Բաղաձայններն էլ կարող են ունենալ ռնգալին ձևեր. օրինակ, y կիսաձայնը աֆրիկյան էվե լեզվում ունի իր ռնգալին ձևը, որ սիտի գրվի y, որ և տարբեր է ñ = nʸ ձայնից (Westermann, 15)։

Աֆրիկյան վոլոֆ լեզվում k, g, x, t, d, tʸ, dʸ, p, b բաղաձայնները կարող են ռնգալին հնչվել իբր ᵑk, ᵑg, ᵑx, և այլն, որոնք նոր հնչյուններ են (Rambaud, 8)։

Աֆրիկյան գալա լեզվում կա ռնգալին y և x. կան նաև nh, այն է ռնգալին h (որի ժամանակ օդը դուրս է մղվում թե բերա-

նոց և լեհ գրից), և nhw (այն է անգլիական w), մեսամոնական բերանից ու գրից շանչը պատ վշելով (Westermann, 12—14)։

Ընդհանրապես կոնսոնանտ ասելը, որ սխալ կարծիք կազմած պիտի լինենք ձայների մասին, նրանց մասնինք, թե մենաբոլոր ձայնը բոլոր լեզուների մեջ էլ հիշյա նույնն են։ Մենաբոլոր ձայնը, օրինակ ն, լեզվից լիովին տարբերվում է մերթ թթվասան առաջանալով, մերթ մկանային ամրանալով, մերթ շուշափման կամով, մերթ պայթյունի ձևով ու տևողությամբ։ Այնպես որ անսահմանում չկա ձայն, որ մի լեզվից մյուսը բոլորապես նույնը լինի։

Մի ուրիշ նկատելի կետ էլ այն է, որ ինչպես ձայնավորներից, նույնպես և բաղաձայններից ամենը բնականաբար են բոլոր լեզուներին, ուրիշներ դանվում են միայն մի քանի լեզուների մեջ. ուշադիր չկա լեզու, որ ձայնավորը կամ s բաղաձայնը չունենա. բայց քիչ լեզու կա, որ ունենա x կամ γ ձայներ։ Սա անշուշտ կախված է նրանից, թե որջան ձայնը լավ հարմար է մեր դործարաններին։

Պետք չէ կարծել նույնպես, թե որևէ լեզվի մեջ ձայնական պրոցեսները մշտապես մնում է նույն. կան ձայներ, որ նոր-նոր ավելացած են, ինչպես և կան ձայներ, որ հետզհետե կորչում են, բայց մեծամասնությունը առաջինի կողմն է։ Ալապես, հին հայերենի մեջ կար ղ ձայնը, որ այժմ կորել է. չկային ղ, ֆ, ևօ, իւ, որոնք հիմա, մանավանդ բարբառներում, սովորական են, առաջացած մասամբ փոխառությամբ, մասամբ էլ բնական ճանապարհով։

Կամիկերենը չ ձայնը չունի, և երբ որևէ լեզվից փոխ առնի մի որևէ բառ, որ ունի չ, դարձնում է Ĵ, ճիշտ ինչպես թուրքերեն Jurnal < ֆրանսերեն žurnal, Jandarma < gendarme և այլն. այժմ սակայն կամիկերենի ալբուբենի մեջ մտցրել են չ տառը ռուսերեն բառերի համար, որ ժողովուրդը չգիտի (Санжеев, 17)։

Կամիկերեն լեզուն չունի փափուկ բաղաձայն. ուստի երբ ռուսերենից փոխ է առնում այնպիսի մի բառ, որ ունի փափուկ բաղաձայն, անշուշտ վերածում է կոշտ բաղաձայնի (Санжеев, 21)։

Անձանոթ բաղաձայնների անգիտակից գոյության լավ օրինակներ են ռուսերենում՝ птица «թռչուն» (п=ի), кто «ով» (к=ք), ткань «գործվածք» (т=թ), отец болен «հայրը հիվանդ է» (ц=ձ), дочь больна «աղջիկը հիվանդ է» (ч=ջ), дух божий «աստուծո հոգին» (х=ղ)։

Օտար հնչյուններ փոխ առնելու և այդ տառերը տառադարձելու շատ լավ օրինակ է պոլինեզյան հավայերեն լեզուն, որ շատ աղքատ այբուբեն ունենալով, ստիպված է եղել շատ տառեր փոխ առնել օտար լեզուներից։ Այսպես՝ չունի b, d, g. օտար բառերի տառադարձության մեջ թեև գրում են b, d, g, բայց իրենց բնիկ հնչմամբ հնչում են խուլ p, t, k։

f ձայնը չունեն. հնչում են p, բայց տառադարձությամբ դրում են f։

J չունեն. նոր են վերցրել միայն օտար բառերի համար։

s չունեն. այժմ սկսել են գործածել օտար բառերի մեջ. իրենք s-ի փոխարեն հնչում են k!

v չունեն և նրա տեղ գնում են միշտ w։

z չունեն, բայց օտար բառերի տառադարձության մեջ գործածում են z (Andrews, 13)։

Հնդկական մարաթի լեզուն սանսկրիտի č, čh, J, Jh ձայները դարձրել է ծ, ց, ձ, ձʿ. բայց սանսկրիտ և արաբ փոխառության մեջ պահում է չ և ջ ձայները անփոփոխ (Seddon, 1—2)։

Ռուսերենը ընդհանրապես չգիտի թավ բաղաձայններ, ուստի չգիտի նաև kʻ և tʻ բաղաձայնները. բայց ահա кто «ով» բառի արտասանության մեջ երկուսն էլ կան. հնչվում է քթո և ոչ թե կտո:

Անգլերենը չունի ժ բաղաձայնը. բայց ահա pleasure (plézər) «հաճույք» կամ Persia (Pʻəʼržie) «Պարսկաստան» և այլն բառերի մեջ նրանում է։

Մարդիկ չեն գիտակցում իրենց լեզվի այս խուսափուկ ձայները, այսինքն նրանց անկախ գոյության մասին գաղափար չունեն։ Նույնիսկ հնդեվրոպացիք նախալեզվում չունեին z ձայնը, թեև sed արմատի կրճատ ձևի մեջ (nɪ—zd) լսում էին։ Երբ լեզվի մեջ այս խուսափուկ ձայները շատանան, և մանավանդ երբ անկախ դիրքի մեջ գտնվեն. խոսողները նոր միայն գիտակցության կհասնեն նրանց մասին և կմտցնեն իրենց լեզվի ձայնական դրության մեջ։

* * *

Նախնական մարդկության չէր կարող բոլոր հնչյունները միասին և միաժամանակ ստեղծած լինել։ Լեզվի պատմական կյանքում նորանոր ձայնների առաջացումը արդյունք է գլխավորապես բաղաձայնների հանդիպման։ Այսպես՝ հայերենի մեջ ֆ առաջացել

է ւ-ի խլացմամբ. օրինակ, livre բառի մեջ ւ դանդաղով p-ի մոտ, ընականորեն խլացել է, որով տառաջացել է f։

Անգլերեն լեզուն չունի ց և ձ ձայնները, բայց t—s և d—s ձայնների հանդիպումից ալժմ առացել է այդ ձայնները, ինչպես boot + հոգնակի boots (ts—ց), suds (արձ) «հնահատաջաթ»։

Ֆրանսերեն clou de girofle հնչյում է մոտավորապես ձևով cloudjirof—cloudgirof։

Վերջապես կան լեզուների մեջ պատահական և խառնական ձայներ, որոնք որոշ արտասանության մեջ հատկապես երևան են գալիս և լեզվի բնական վիճակի մեջ չկան. այսպես է վերջին օրինակում l. նաև ֆրանսերեն n (կոկորդալին ն), որ կարող է երևալ և. օրինակ. langue maternelle ձևի որոշ արտասանության մեջ (BSL, № 103, էջ 127). կամ նաև Պոլսի բարբառում ա. ինչպես ձաները, մանրը բառերի մեջ։ Ուրիշ անդ չկա։

* * *

Նոր և նորագույն լեզվաբանները (մանավանդ դերմանական դպրոցի) դանագանության են ենթարկել ընդհանուր բնույթ կրող ձայնի և նրա դանագան տարբերակների միջև։ Առաջինը կոչում են phonème, իսկ երկրորդը՝ son։ Մենք մեր այս աշխատության մեջ, ինչպես վերևում անանք, խոսում ենք յուրաքանչյուր ձայնի մասին, հիշելով նաև նրա բոլոր անանկները, դանագան լեզուների հնչման համաձայն։ Բայց այդ տարբերակները առանձին անուններով չենք որոշում։ Մեր լեզվաբաններից պրոֆ. Է. Ադալանն է, որ իր «Ընդհանուր լեզվաբանության դասընթացը»-ի մեջ (Երևան, 1947 թ.), էջ 74—78, խոսում է այս երևույթի մասին, կոչելով առաջինը հնչույթ (phonème), որ է ձայնի ընդհանուր հնչյունը, իսկ նրա տարբերակները՝ հնչյուն։ Օրինակ է բերում ռուսերենից* революция և апрель *բառերը, որոնց մեջ ռուսը չի դանագանում երկու р-երի տարբերությունը, որով р դառնում է հնչույթ, մինչդեռ հայը առաջինը նշանակելով ռ և երկրորդը р, դանագանում է երկու հնչյուններ։ Ընդհակառակը, ռուսերեն* шесть *«վեց» և* шест *«ձող» բառերի մեջ ռուսը դանագանում է քմային կամ փափուկ* ть *և* т *հնչյունները, իսկ հայը անկարող լինելով դանագանել այդ երկուսը ընդունում է* t *հնչույթը։*

---

* *Հնչույթի և հնչյունի տարբերակման մասին հայ լեզվաբանության մեջ գրել են Գ. Ղափանցյանը. տես Գ. Ղափանցյան.—Է. Ա.։*

Երկուսի տարբերացումը ըմբռնելի դարձնելու համար, նա տալիս է նաև մի հարմարավոր օրինակ, այն է ա տառի գրչութիւնը զանազան անձերի մոտ. «Մեկը՝ ավելի երկար կարող է անել ա-ի երկք գծերը, մյուսը՝ կարճ, մեկը գծերի միջի տարածութիւնը շատ լայն կարող է թողնել, մյուսը՝ նեղ, մեկը կարող է ալդ գծերը թեքել դեպի ձախ, մյուսը դեպի աջ և այդպիսով կըստացվեն ա-ի տարբեր տեսակներ, բայց ոչ՝ տարբեր տառեր»։

ԳԼՈՒԽ Ժ

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԱԽԱԼԵԶՎԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ՁԱՅՆԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ձայնական դրութիւն ասելով հասկանում ենք մի որևէ լեզվի բոլոր ձայները միասին։ Ենք ասում այրուբեն, որովհետև, նախ՝ այրուբենը ներկայացնում է գրված տառ (մինչդեռ լեզուներից շատերը, ինչպես և հնդեվրոպական նախալեզուն, գիր կամ տառ չունեն), երկրորդ՝ այրուբենը գրեթե միշտ չի ներկայացնում որևէ լեզվի ճիշտ ձայնական դրութիւնը, քանի որում կան ձայներ, որոնք դուրս թողնուած են այս կամ այն լեզվի մեջ, բայց պահպանում են այրուբենում, կամ ընդհակառակը։ Այսպես, գերմաներէն լեզվի մեջ կան շ, չ, ղ (sch, tsch, g) ձայները, բայց առանձին տառ չունեն. արդի հայերենի մեջ կան ե և է տառերը, բայց չեն ներկայացնում երկու զանազան ձայներ. նրանցից մեկը ավելորդ է։

Ձայների հորինվածաբանութիւնը ընդհանրապես նկարագրելուց հետո, այս գլխով կարևոր ենք համարում առանձնապես խոսել հընդեվրոպական նախալեզվի, նրա ժառանգների և հատկապես հայերենի ձայնական դրութեան մասին։

Հնդեվրոպական նախալեզուն պարունակում էր երեք տեսակ ձայն. 1. իսկական բաղաձայներ, 2. ձայնավորներ և 3. ձայնորդիներ (sonante)։ Իսկական բաղաձայնները բաժանվում են 2 խմբի. պայթական և շփական։ Պայթականները հնդեվրոպական նախալեզվի մեջ ներկայացնում են ճոխ ու կատարեալ մի ցուցակ, մինչդեռ շփական ձայնների թիվը չափազանց աղքատ է։

Ահա պալթականների ամբողջական ցուցակը.

	Խուլ	Թրթռուն	Խուլ շնչեղ	Թրթռուն շնչեղ
Շրթնային	p	b	bh	ph
Առաջնային	t	d	dh	th
Ձմական	k'	g'	gh	k'h
Կատկային	k^w	g^w	g^wh	(k^wh)

Շփական բաղաձայններից կա միայն սուլող s ձայնը, որ շատ հաճախ դործ է ածվում նախալեզվում։ Այս բաղաձայնը գտնվելով հաջորդական թրթռուն պալթական (բայց միայն պալթական) բաղաձայնի մոտ, դառնում էր z. օրինակ, հնդեվրոպական նախալեզվում *sed «նստել» արմատը ձայնավորի կորուստով դառնալով *sd, ձայնաբանական օրենքների համաձայն խմբերն վերածվում էր *zd-ի, որից էլ nl-նախամասնիկով ունենք հնդեվրոպական նախալեզվում *nisdus «նստատեղը, նստոց»)>հնդ. nīdás, լիթ. lizdas, լտ. nīdus «բույն»։ Սակայն z ձայնը անկախ և ինքնուրույն դոյութիւն չուներ, այսինքն չկար ո՛չ բառասկզբում ձայնավորի մոտ և ո՛չ բառամիջում՝ երկու ձայնավորի միջև։ Ենթարկվում է նաև sh (իմա՛ š) և zh (իմա՛ ž) ձայների գոյութիւնը՝ նման հանդամանքներում. բայց լավ հաստատված չէ (Brugmann, Abrégé de gramm. comp., *1905, էջ 202*)։ Ավելի խախուտ են p, ph, ḍ, ḍh բաղաձայնները (տե՛ս անդ, էջ *216*)։ Ըստ այսմ հնդեվրոպական բաղաձայնների դրութիւնը ընդհանրապես բաղկացած էր պալթականներից, չուներ շփական (f և այլն), չուներ ճչական (ճ, չ, ջ), ո՛չ էլ h։

Ձայնավորներն են. կարճ՝ e, o, a, ə, °, և սրանց համապատասխան երկարները՝ ē, ō, ā։

Այս բոլորից հնդեվրոպական նախալեզվում ամենաշատ գործածականն էին e և o, որոնց փոխանակութիւն օրենքները կտեսնենք հետո (Ձայնդարձ)։ Շատ ավելի սակավ գործածական էր a, որից քիչ տարբերվող հնչյուններ էին ə և ° (այս երկու ձայնավորների հնչման մասին կատարյալ գաղափար չունենք. վերջինը ոմանք դրում են °, ոմանք ₒ (շատ փոքրիկ e) ձևով)։

Հնդեվրոպական նախալեզվի ձայնական դրութիւն ամենից բնորոշ կողմը կազմում են ձայնորդները։ Այսպես են կոչվում այն ձայները, որոնք միևնույն բառի դանազան ձևակերպութիւնց մեջ գործ են ածվում մերթ իբր բաղաձայն, մերթ իբր կիսաձայն (երկ-

բարբառի երկրորդ մասը) և մերթ իբր ձայնավոր, և այս վերջին ձևի տակ կարող են լինել ոտը կամ երկար, առանձակ շեշտ կամ մնալ անշեշտ։

Արդի լեզուների միջոցով դժվար է հիշյա դարձվածք կազմել ձայնորդների մեքենականացման մասին, բայց հայերենի մեջ, օրինակ, ու ձայնը կարող է բավական հավատարիմ դարձվածք տալ։ Այսպես, օրինակ, լու բառի մեջ ու գուտ ձայնավոր է. երբ առանձնք այս ոճական ձևը՝ լուի (լույս), կարող ենք կարդալ լուի, լույի, լույի և կամ Դասարարդի բարբառի ոճով՝ լուլլու։ Արդ, այս բոլորի մեջ ու մերթ ձայնավոր է, մերթ իսկական բաղաձայն և մերթ էլ կազմում է երկբարբառ։

Այսպես են նաև հնդեվրոպական նախալեզվի ձայնորդները։

Դրանք թվով 6 հատ են. y, w, r, l, m, n, որոնցից 2-ը կիսաձայն (y, w), 2-ը նազ (r, l), 2-ը անդալին (m, n)։

Ձայնորդ համարվում է նաև ə ձայնը, զոր վերջին քննության։

Ահա՝ ձայնորդների դարձվածաբանյան անդն ու գործնական.

1. Երբ բաղաձայն դրած են ածվում բառասկզբում ձայնավորի կամ մի բարձր ձայնորդի մոտ, բառամիջում՝ երկու ձայնավորի միջև և կամ մի իսկական բաղաձայնի ու ձայնավորի միջև։ Այս պարագային դրվում են y, w, r, l, m, n։

2. Երբ ձայնավոր դրած են ածվում բառասկզբում՝ բաղաձայնից առաջ և կամ բառամիջում՝ երկու բաղաձայնի միջև։ Այս պարագային դրվում են i, u, r l, m, n։ Սրանք կարող են միանալ նաև հաչորդական ə ձայնավորի հետ որոշ դեպքերում և տալ i, u, r, l, m, n երկար ձայնավորները։ Բայց այսօր հնդեվրոպական նախալեզվի մեջ i և u անկախ ձայնավորներ չեն, ինչպես e, o և a, այլ y. w բաղաձայնների ձևափոխությունները։ Նմանապես r, l, m, n բաղաձայն չեն, այլ գուտ ձայնավոր, ինչպես i և u, և կազմում են բառի մեջ առանձին վանկ։

Ծանոթ.—Մի խումբ լեզվաբաններ փորձել են պարզել վերոհիշյալ r, l, m, n ձայնավորների հնչումը։ Նրանք ենթադրում են, որ այս ձայնավորները չունեն նույն արժեքը՝ ինչ որ i և u, որոնք պարզ ու հատակ ձայնավորներ են, այլ պետք է հնչված լինեն իբր գուտ բաղաձայն՝ մի շատ կարճ ձայնավորի հետ ընկերակցությամբ, իբր հավերեն ըր, ըլ, ըմ, ըն։ Այս խնդիրը լեզվաբանների կողմից դեռ վճռված չէ։ Բայց ձայնավոր r, l, m, n

հնչման իրը օրինակ կարող է ծառայել ռևրմաներեն և անգլերեն butter, mutton բառերի վերջին վանկերի արտասանութիւնը։

3. Իբրև կիսաձայն՝ ձայնորդները գործ են ածվում կազմելու երկբարբառների երկրորդ մասը։

Օրինակ առնելով հնդեվրոպական նախալեզվի pleu—«ծածանվել, ծփալ, նավել» արմատը, միևնույն w ձայնավորը ներկայացնում է մեզ.

1. իբր բաղաձայն՝ սանսկրիտ plávate.

2. իբր ձայնավոր՝ սանսկրիտ plutas.

3. իբր կիսաձայն՝ արիական *plaušyati, հունարեն πλεσομαι.

Ձայնորդները կարող են գործածվել նաև հաջորդական ձայնավորի հետ և համարվել ձայնավոր. բայց այս պարագային շուտով նրանք վերածվում են բաղաձայնի և իրենցից առաջ իրեև հնհարան ստեղծում են մի կարճ ձայնավոր, ինչպես՝ ye > iye, we > uve և այլն։

Երկու ձայնորդ կարող են պատահել կողք-կողքի և այն ժամանակ կատանան հետևյալ ե դիրքերն ու գործածութիւնը.

1. Երկու բաղաձայնի միջև եթե գտնվեն երկու ձայնորդ, առաջին ձայնորդը կհամարվի բաղաձայն, երկրորդը՝ ձայնավոր. ինչպես սանսկրիտ srutás «հոսած», çvābhis «շամբք» (շներով)<հնխ. k'wn̥bhis, բայց ń̥ç çumbhis։

2. Բաղաձայնի ու ձայնավորի միջև՝ առաջին ձայնորդը կդառնա ձայնավոր, երկրորդը՝ բաղաձայն, ինչպես՝ սանսկրիտ çùnas=հունարեն κυνός «շունն»։

3. Ձայնավորի ու բաղաձայնի միջև (կամ բառավերջում)՝ առաջին ձայնորդը դառնում է բաղաձայն, երկրորդը՝ ձայնավոր. ինչպես՝ հնխ. néwn̥ newn̥tis >սանս. nāva, navatis, հունարեն ἐννέα „ինն“ և այլն։

4. Երկու ձայնավորի միջև առաջին ձայնորդը դառնում է կիսաձայն (նախորդ ձայնավորի հետ կազմելու համար երկբարբառ) և երկրորդը՝ բաղաձայն. ինչպես՝ հպրս. aiva «մեկ», կիպր. oifos «մեհենակ», լտ. oinos (ūnus) «մեկ», գոթ. ains «մեկ»։

5. Բառասկզբում ընդհանուր կանոն չկա. y միշտ ձայնավոր է բոլոր ձայնորդներից առաջ. w ձայնավոր է միայն n և m ձայնորդներից առաջ և կարող է լինել բաղաձայն y, r, l ձայնավորներից առաջ. նույնպես r, l, m, n կարող են լինել բաղաձայն՝ y ձայնորդից առաջ և այլն։

Երկբարբառները հնդեվրոպական նախալեզվի մեջ կազմվում են e, o, a ձայնավորներից՝ ավելացնելով սրանց վրա որևէ ձայ-

նպատ։ Հնդեվրոպական սովորական երկբարբառ են համարում միայն այն, որ կազմված են y, w ձայնորդներով, իսկ մյուս է ձայնորդներով (r, l, m, n) կազմվածները երկբարբառ չեն համարում։ Այս մասամբ այն, որ հիմնված է միայն այդպի լեզուների կազմության վրա, բայց այլ լեզվաբանների[1], որպարսից չէ հնդեվրոպական նախալեզվի համար, ուր y, w ձայնորդները նշանակ տարբեր չեն մյուս ձայնորդներից։ Այս բանը հաստատ է լիակատարն լեզվից, ուր ar, al, an, am ձևերն էլ ընդունակ են առանձնալ երկու տեսակ շեշտ (կոշտ ու փափուկ), ճիշտ ինչպես ai և au երկբարբառները. այսպես՝

ár, án, ár, ál, ám, ám.

ar, an, ar, al, an, am.

Կա և մի ուրիշ անհանգստական կողմ.— այդ այն է, որ մինչդեռ y, w ձայնորդները երկբարբառ կազմած ժամանակ պրծում են իրենց ձայնավոր ձևով (i, u), ընդհակառակը r, l, m, n ձայնավորները երկբարբառի մեջ էլ մնում են բաղաձայն ձևով։ Հետևողական լինելու համար պետք էր գրել կա՛մ ey, ew, er, el, em, en և կամ՝ ei, eu, eṛ, eḷ, eṃ, eṇ և այլն։

Հնդեվրոպական նախալեզվի երկբարբառներն են ուրեմն՝ լուսաքանչյուր ձայնավորի համար 6 ձայնորդով, ընդամենը 18 հատ.

ei, eu, er, el, en, em.

oi, ou, or, ol, on, om.

ai, au, ar, al, an, am.

Կային նաև սրանց համապատասխան երկար ձևերը, այն է՝

ēi, ēu, ēr, ēl, ēn, ēm.

ōi, ōu, ōr, ōl, ōn, ōm.

āi, āu, ār, āl, ān, ām.

Բայց այս ձևերը շատ գործածական չէին և նույնիսկ հնդեվրոպական շրջանին, կարճացնելով իրենց ձայնավորը, վերածվեցին նախորդներին։ Այս մասին ավելի ընդարձակ կտեսնենք երկրաբառների ձայնափոխության մեջ։

Այն բոլոր ձայները, որ ներկայացրինք այստեղ իբրև հնդեվրոպական նախալեզվի հնչական հարստություն, կարելի է ընդունել միայն ընդհանուր գծերով, իսկ ճշտել լուրաքանչյուր հնչյան ճիշտ բնույթը՝ անհնար է։ Օրինակ, w սովորական շրթնային շփական է, բայց դանազան լեզուների մեջ նա ունի դանազան

[1] Տե՛ս A. Meillet, Introduction, 5e éd., p. 82.

հնչական ձևեր. մի տեղ կրկնաշրթնալին է, մի ուրիշ տեղ ատամնաշրթնալին. մի տեղ զուտ թրթռուն է, մի ուրիշ տեղ խուլ։ Արդ, ի՞նչպես էր հնդեվրոպական նախալեզվի այն ձայնը, որ մենք նշանակեցինք w տառով։ Ընդհանրապես լեզվաբանները ընդունում են նշանակված ձայների գոյությունը՝ առանց այդ մանրամասնությունները ճշտել ուզելու։ Կան նույնիսկ այնպիսի խիստ լեզվաբաններ, որ այդ տառերը համարում են միայն հանրահաշվական ֆորմուլաներ, այսինքն թե, օրինակ, հնդեվրոպական նախալեզվի o նևրկայացուցիչն է մի այնպիսի ձայնի, որ տվել է արիական a, հայերեն o, հունարեն o, լատիներեն o և այլն, և իրավունք չունենք նույնիսկ այդ տառը o կարդալու կամ գոնե մեր իմացած սովորական ձևով o հասկանալու։ Անշուշտ այս խստությունը որոշ չափով իրավացի է ə, ° տառերի համար, բայց ուրիշ ավելի հասարակ տառերի համար չափազանց է։

Համիսբերենի գլուխից հետո նորանոր ձայնաբանական քննություններ և համեմատություններ այլ արդյունք տվեցին հնդեվրոպական նախալեզվի ձայնական դրության մասին։ Դուրս եկավ, որ հնդեվրոպական նախալեզուն ուներ նաև h ձայնը. երբ մի արմատ, որ վերջանում էր այս ձայնով, միանար բաղաձայնով սկսվող մի մասնիկի հետ, խճողումից խուսափելու համար կամ երկուսի միջև ավելանում էր ə ձայնավորը, կա՛մ կրճատվում էր h ձայնը և կա՛մ նրանից առաջ գտնված ձայնավորը երկարում էր։ Ըստ այսմ, կային հնդեվրոպականի մեջ երկու տեսակ երկար ձայնավորներ և երկբարբառներ. նրանք, որ ի բնե երկար էին և նրանք, որ այսպիսի h ձայնի կրճատմամբ էին առաջացել (BSL, № 110, էջ 114)։

Ոչ մի ժառանգ լեզու չի պահել հնդեվրոպական նախալեզվի դրությունը. ոմանք զեղչել, ոմանք ավելացրել են նոր-նոր ձայներ. յուրաքանչյուրի ձայնական դրության մասին կարելի է գոնե մոտավոր գաղափար կազմել այն ալբուբեններից, որ դրինք վերը։

Այժմ վերցնենք հայերենի ձայնական դրությունը։

Հին հայերենն ուներ 3 կարգի ձայներ. ձայնավոր, երկբարբառ և բաղաձայն։

Ձայնավորները հետևյալներն են (8 հատ).

ա, ե, է, ը, ի, ո, ու։

Երկար ու ռնգալին, ինչպես և կլոր քմային ձայնավորներ չգիտեր հին հայերենը։

Երկբարբառները կարող ենք վերածել 3 խմբի.

1. այ, ոյ.

2. աւ, եւ, իւ.

3. եա, եի, էա, էի, էո, էու, իա, իե, իո, իու, ուա, ուե, ուէ, ուի, ուո, ուու, ընդամենը 22 հատ։

Ինչպես անհնարին ենք, հին հայերենը չուներ էյ ձեով երկբարբառ, ոչ էլ իրը ձայնավորից ու բաղաձայնից ձևացած ձայնախումբ։ Վերջինս մենք դանում ենք սրդի բարբառներում՝

ա) թուրքերենից փոխառյալ բառերի մեջ, ինչպես՝ էլրէմի «խախուտ», էլլէնմէ «պրոստիտուտ», րէլ «իշխան» և այլն։

բ) Ձայնարկությանց մեջ, ինչպես՝ է՜յ, հէ՜յ, դէ՜յ։

Արդի պրականը նույնպես պիտի այս ձայնարկությունները և մի միակ բառ ևս, որ է թէյ (թեյ) «չայ», իր բոլոր բարդություններով (ինչպես հին ուղղագրությամբ՝ թէյամաճի, թէյարան, թէյանոցպան, նույնիսկ թէյնի)։

Թէյ (թեյ) բոլորովին նոր ժամանակի բառ է. պրծածությանն հնազույն թվականը չգիտեմ. վերջում դրված յ բաղաձայնը, որ անտարակույս երևույթ է հայերենում, դրված է անշուշտ տարբերելու համար թէ (թե) շաղկապից։ Այդ յ-ն ավելացված է կամ ադդեցությամբ չայ համանիշի և կամ հունարեն τεῖον, համանիշի։

Եռաբարբառներն են.

1. յ կիսաձայնով կազմված՝ եայ, էայ, ույ, ուոյ.

2. ւ կիսաձայնով կազմված՝ եաւ, էիւ, ուաւ.

(ընդամենը 7 հատ), որոնցից վեցը բաղկացած է երկու ձայնավորից և մեկ կիսաձայնից, իսկ մեկը միայն (ւոլ) երկու կիսաձայնից և մի ձայնավորից։

Բաղաձայնները հետևյալներն են.

	Թրթռուն	խուլ	շնչեղ խուլ
Շրթնային	բ, վ	պ	փ
Ատամնային	դ	տ	թ
Կատկային	գ	կ	ք
Մեքական	ձ	ծ	ց
Ճչական	ջ	ճ	չ
Սուլող	զ	ս	
Շչական	ժ	շ	
Կոկորդական		խ	հ
Կողմնական	լ, ղ		
Ինդալին	մ, ն		
Կիսաձայն	ւ, յ		
Ցնցուն	ռ, ր		

Լինդսմանը 30 բաղաձայն, որ համեմատած եվրոպական լեզուների հետ, շատ հարուստ է և գրեթե հավասար է կանգնած կովկասյան լեզուների ճոխ ալբուբենի հետ։ Նկատելի է, որ բաղաձայնների առաջին հինգ կարգերը, իրար հետ լիակատար համապատասխանությամբ, ունեն երեք աստիճանները (պարզ խուլ, շնչեղ խուլ և թրթռուն). սուլող, շչական և կոկորդական ձայները միայն երկու աստիճան ունեն, իսկ մյուսները, թեև միայն թրթռուն աստիճանն ունեն, բայց յուրաքանչյուրը կրկին ձևի տակ։

Պակասում էին ֆ և ղ (γ) ձայները, որ հիմա ունենք մեր ալբուբենի մեջ։

Անցնենք քննել այս ձայների հնչյունը հին հայերենում։

Արդեն ասել ենք, որ լեզվի ձայները մշտական փոփոխության մեջ են դարերի ընթացքում. լեզվի ամենից շրջանի ձայնները բացարձակորեն նույն չեն նրա ավելի հին շրջանի ձայների հետ. ամեն լեզվի մեջ էլ ալբուբենները ներկայացնում են միայն իրենց հնարված ժամանակի ձայնական դրության պատկերը, և սխալվում են հաջորդ սերունդները, որ կարծում են միշտ, թե հներն էլ հնչել են այնպես, ինչպես իրենք են հնչում։ Եվ լեզվաբանների գործն է եղել զանազան միջոցներով երևան հանել հնագույն հընչումների պատկերը, տառերի հին արժեքը։

Ասպիսի աշխատանքները կատարված են հունարենի և լատիներենի վրա։ Ինչպես հայտնի է, արդի հույները, որ իրենց հին լեզվի ժառանգն են, ալբուբենի β տառը հնչում են v,—η, υ, ει, ι, οι հնչում են հավասարապես i, γ, ς, Θ, X տառերին տալիս են սեղմ բաղաձայնի հնչում և այլն։ Նմանապես լատիներենի մի քանի տառերը, հատկապես c և g, զանազան ազգերի մոտ հնչվում են զանազան ձևով. միևնույն լատին Gicero բառը ֆրանսիացիք կարդում են Sisero, իտալացիք Čičero, գերմանացիք Ցիցերո և սրանց հետևողությամբ նաև ռուսները և կովկասի հայերը՝ Ցիցերո։ Բայց անշուշտ լատիններն մի հնչում միայն ունեին. և ո՞րն էր այդ հնչումը։

Քննությունները ցույց տվին, որ հունարեն η նախապես հընչվում էր ē,—υ հնչվում էր նախապես u, օգոստոսի դարուն արդեն դարձել էր ū, որ այժմ էլ դարձել է i[1]. β, γ, δ, φ, χ, Θ սեղմ չէին, այլ առաջիններն հնչվում էին b, g, d, երկրորդները ուղղակի p, k, t, որ շատ հետո դարձան ֆ, խ, թ (դեռ Ա դարում հին

[1] V. Henry, Précis de Grammaire comparée du grec et du latin, 1894, p. 28.

հնչումը պահված էր[1]։ Լատիներեն ai և au երկբարբառներ էին և հնչվում էին դրեթե այնպես, ինչպես գրված են և ավելի հետո դարձավ ժողովրդական լեզվի մեջ պարզ e[2], o միջև ամեն ձայնավորից առաջ հնչվում էր k, իսկ նրա առկող հնչումը (a, g, չ) e և i ձայնավորների մոտ՝ առաջացել է շատ ուշ՝ մեզանից շրջանում[3], ալպես շատ ուշ է նաև t ձայնի առկող հնչումը—tio.—tius ձևերի մեջ։

Հայերեն ալբուբենի հին հնչումների մասին կա մի բնագրական աշխատություն[4], որի ամփոփումը հետևյալն է.

Հայերեն առաջին հինգերորդ դարում ունեցած հնչումը արևմտահայ համար չորս միջոց կա. 1. Հայերեն ալբուբենի դասակարգությունը, որ ընդհանում է հշտով համապատասխան հունարենի հետ 2. Դիոնիսիոս Թրակացու քերականությունը, որ թեև հունարենի համար կազմված, բայց միաժամանակ տալիս է հայ տառերի հնչման նկարագիրը և դասակարգությունը։ 3. Օտար լեզուներից տառադարձված բառերը հայերենի մեջ և 4. Հայերենից տառադարձված բառերը օտար լեզուների մեջ, որոնցով իմացվում է, թե որ տառը որ հնչման է համապատասխանում։

Կշռելով ալս բոլորը իրար հետ, գտնում ենք, որ հին հայերենի հնչումը մեծապես դարում հետևյալ ձևով էր.

Ձայնավորներից a, i, e, u ունեին ճիշտ ալժմյան հնչումը (ալն է լատիներեն a, i, ə, u). e առանձին չի գործածվում, չի կարող դնվել շեշտի տակ, հետևաբար չկա բառավերջում, այլ միայն բառասկզբում և բաղաձայնների խճողման միջոցին. ալս դեպքում e ձայնավորը հնչվում էր արդի հայերենի պես (դրբեաց, խըցի, լըգեր)[5]. ե և է տառերը դանազանվում էին իրարից ոչ թե տևողությամբ, իրր առաջինը կարճ և երկրորդը երկար (որովհետև կարելի չէ ենթադրել, որ ամբողջ ձայնավորների շարքի մեջ միայն մի ձայնավոր ունենար իր երկար ձևը, իսկ մլուսները ոչ), այլ բերանի բացվածքով. ե արտասանվում էր իրր բաց è կամ միջակ e, իսկ է իրր փակ é. բառասկզբում երբեք ե չուներ ye հնչումը.—

---

[1] Անդ, էջ 31։

[2] Անդ, էջ 64։

[3] Անդ, էջ 65։

[4] Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց գիրը. Վիեննա, 1928, հատկապես էջ 286—340։

[5] Ուշ ժամանակի հնչում է ըսի. այսպես գտնում եմ գրված Այրիվանեցու (ԺԴ դար) տագերի մեջ. համմ. Լոյս տուր աչաց աչացըւին. Երկրպագեալ խիաւըին (տե՛ս Դ. արքեպիսկոպոս Հովսեփյան, Մխիթար Այրիվանեցի, էջ 7բ և 8ա)։

նմանապես ս ամեն տեղ հնչվում էր մեր այժմվա ս ձայնավորի նման և երբեք չուներ vo հնչումը, ինչպես դոնում ենք այժմ բառակրում։

Երկբարբառներից այ հնչվում էր aĭ, բառավերջում ay, ոյ ձայնավորից առաջ oy, բաղաձայնից առաջ oĭ, բառավերջում oy (չունեը բնավ ույ հնչումը, որ սովորական դարձավ ավելի ուշ), աւ, եւ, իւ հնչվում էին ամեն պարագայում իբր երկբարբառ աու, էու, իու, նույնիսկ բաղաձայնից առաջ և բառավերջում. բառակըրբում արդի եւ=yev, իւ=yū հնչումը դոլութլուն չուներ։ Մնացյալ երկբարբառներից եա=èa, էա=éa, իա=ia, եի=èi, էի=éi, էո=éo, էու=éu, իե=iè, իէ=ié, իո=io, իու=iu, ուա=ua, ուի=ui, ույ=uoy, ւա=wa և այլն, որոնցից ոչ մեկի մեջ y կիսաձայնի ներմուծում տեղի չէր ունենում։

Մաճոբ.— ու բաղաձայնի հնչման մասին խոսում է Հյուբշմանը իր «Հին Հայոց տեղում անուններըը» աշխատութլան մեջ (Թրգմ. Վիեննա, 1907, էջ ժԵ—ԺԶ), նա գտնում է, որ հարցը լուծված չէ և հայտնի չէ, թե ձուոյ, տուաք, լեզուի, լուացամ արտասանում էին ձուո՞յ թե ձրվո, աուա՞ք թե արվաք, լեզուի՞ թե լեզվի, լուացա՞մ թե լրվացամ։ Միայն ուլ լծորդութլան մեջ ու կարդացվում էր ու. ինչպես՝ զեուի, եռավանկ՝ ze—ու—l և այլն։ Թեև Հյուբշման ու=v հնչման համար հիշում է դժուար < պրս. dušvar, պատուաստ < պհլ.patvastan, Ապրուիլ < պրս. Parvēz, Աղուաւիք=հուն. Ἀλβανοί և այլն բառերը, որոնք ցույց են տալիս, թե ու հնչվում էր v, սակայն պետք չկա համեմատութլունը բացարձակ համարել։ Ինձ թվում է, թե հայերը անընդունակ էին բառամիջում և բառավերջում արտասանել v (վ), որ դոնվում էր միայն բառակըրում. այդ դեպքերում v դառնում էր ու կամ կիսաձայն w. այսպես՝ կարելի չէր ասել դվար, այլ դժուար և այլն, ինչպես հույնը անընդունակ էր արտասանելու v, և ուր որ պատահեր՝ դարձնում էր ու. օրինակ՝ Վաղարշապատ > Ουαλαρσαπατ, ինչպես և Արտաւազդ > Ἀρταουάσδης։

Եռաբարբառների հնչումը պիտի լիներ եայ èaĭ, էայ éaĭ, ույ uoĭ, եաւ èaŭ, էիւ éĭu, ուաւ uaŭ։

Բաղաձայններից փ, ք, ր, ց, չ թավ էին, այսինքն համապատասխան արդի ընդհանուր հնչման. պ, կ, տ, ծ, ճ պարզ խուլ էին, այսինքն արդի կովկասյան հնչման համեմատ, միայն ինձ թվում է մի քիչ ավելի ուժով արտասանված, իբր ֆրանսերեն կամ ռուսերեն p, k, t... Իսկ բ, գ, դ, ձ, ջ թրթռուն էին, իբր b, g, d,

մեկն հայտնի չէ. թե ալս թրթիռման հետ նաև մի ուրիշ շունչ ընկերանա՞մ էր թե չէ, տրիշ խոսքով ճշտիվ ի՞նչ էր, թե՞ hi...։

ւ և ղ ձայնակրից (որոնց երկուսն էլ անվանին ւ հնչումը), առաջինը պարզ լեզվական էր, ինչպես արդի եվրոպական l, երկրորդը հետքմային (կաակալին), իբր l. և ոչ բնավ γ. ալսպիսի հնչում անվանե նաև հին ֆրանսերեն l-ը. դրա համար էլ Կիլիկիայում միջին հայերեն ատտպարձած հին ֆրանսերեն Renault անունը Ռևնապա (ի դարից ատաչ).—հին լատինահայ բառացանկում (հրտ. Carrière, Paris, 1886) ղ ատտպարձած է l կամ hl. ալսպիսի ադ—ahl. ապագրում ւ մնաց անխախտ, իսկ ղ դարձավ կոկորդական։

ւ — w (կիսաձայն ու-ի նման և ո՛չ բնավ v = վ)։

յ — y (և ոչ բնավ i կամ անձայն)։

Մյուս ատաձերը պահում են հին հնչումը։

Ըստ ալմ հայերենի ձայնական դրութլունը բոլորովին նման է կովկասյանների հետ. երկուսն էլ անձն հինգ տևական բազաձայն երևք կարգի. հին հայերենում պակասում է ղ ձայնը, որ գտնվում ատրճանների կամ կովկասյան լեզուներում. հին հայերենը անի բնդհակառակը երկու ատրճան i և երկու ատրճան r, որոնք պակասում են կովկասյաններում. ալս կետում հայերենը նման է բասկերենին, որ նալնպես անի երկու i և երկու r (Karst., Gesch. d'Arm. Phil., 11)։

Առանձին նկատողութլան են արժանի ւ և յ ատաձերը, որոնց և անցնում ենք։

ւ կիսաձայնի հնչումը

Ալս կիսաձայնի հնագույն հնչումն էր w, որ ու ձայնավորի նման մի բան էր ևչ վ (v) էր և ոչ ու (u), որովհետև եթե սրբագրից մենք ու մենք լիներ, Մեսրոպը նրա համար առանձին տառ չէր հնարիլ։

Ամենք ընդունում են, թե ալդ w կիսաձայնը երկու ձայնավորի միջև հնչվում էր v. ճիշտ չէ նաև ալն, որովհետև Մեսրոպը աւազ, հաւատք բառերը ալսպես չէր գրի ալն դեպքում, այլ ավազ, հավատք։ Ատտի ալս բառերն էլ հնչվում էին հնապես իբր հաուատք, աուազ։ Ալս հնչումը ես լսել եմ 1902—1904 թվականներին Շուշում, երբ ուսուցիչ էի թեմական դպրանոցում։ Մեր հալտնի հալկաբաններից մեկը՝ Գաբրիել վարժապետ Ղուլիքեխյանը, որ Գանձակի գյուղերից էր, հնչում էր կանոնավորապես հաուատ (հավատ), հիուանդ (հիվանդ) և այլն։ Երբ ես նրան հարցրի, թե դա

անհատական սովորություն է նրա մոտ, նա պատասխանեց, թե «Ոչ, դա մեր գյուղի հնչման սովորական ձևն է»։

ւ կիսաձայնի w հնչման իբր ապացույց կարող է ծառայել այն երևույթը, որ թեև գյուղ բառի հին ձևը (գիւղ) այժմ հնչում ենք գեվղ, բայց ոչ ոք չի հնչում գիւղ=գիվղ, այլ միշտ գիուղ կամ gŭγ. եթե այս բառի այս ձևի մեջ ի ձայնավորի նման մի բան է, ինչու՞ հնագույն գևղ ձևն էլ նույնը չպիտի լիներ։

Այսպես նաև ալիւր=ալևր, աղբիւր=աղբևր, հարիւր=հարևր և այլն։

Նաև այս կարգի բառերի հոլովման պատկերը նույն բանն է ապացուցում։

Սեռականի մեջ այդ բառերից ստանում ենք ալիւր—ալեր, աղբիւր—աղբևր, գիւղ—գեղջ *և այլն. այս անկանոնությունը կարելի է բացատրել միայն հետևյալ ձևով.—* ալիւր—*հինը* ալևր, *որ համաձայն ր հոլովման (ոսկր—ոսկեր) պիտի լիներ* ալեւեր. *այս մեջ եւ դառնալով ե, ստացվեց* ալեր։

Նույն ձևով նաև մյուսները, և հատկապես գիւղ=գևղ, *սեռական *գևեղ, որից *գեղ, որ բավարար չհամարելով, ստացավ նաև սեռականանկերտ ջ մասնիկը (համմ. կին—կնոջ) և դարձավ* գեղջ։

Եթե ւ երկու ձայնավորի միջև հնչվեր վ, կամ որ նույն է՝ ալևր *կարդացվեր* ալեվր, *դժվար թե սեռականը դառնար* ալեր։

ւ կիսաձայնի հնչումը ճշտելու միջոց կարող է ծառայել նաև հնագույն հայերենի եւ գրչությունը, որ հետո դարձավ իւ. այսպիսի բևր>բիւր, հարևր>հարիւր, ալևր>ալիւր, գևղ>գիւղ *և այլն։ Ոչ ոք չի մտածում այս երկրորդ ձևերի մեջ իւ կարդալ* iv, *այլ միայն* iw *կամ* ŭ. *կարելի չէ ասել, թե* ev *ապա դարձավ ձայնավոր* ŭ. *միայն երկբարբառն էր, որ կարող էր դառնալ հետո ձայնավոր, ինչպես որ աւ երկբարբառը դարձավ հետո օ։*

Հայերը բառամիջում v *բաղաձայնը չունեին, ինչպես չունեին նաև հույները, որոնք միջև իսկ բառասկզբում գրում էին Վալարշապատ=*Οὐαλαρσακατ։

ճ-ի ճնշումը

Հին հայոց մեջ ճ *թույլ հնչում ուներ. սրա ապացույցներն են՝*

ա) Վրացերենի մեջ մտած այն բառերը, որոնք ունեն նախաձայն ճ, ջնջում են այդ ճ ձայնը. ինչպես՝ ճամբոյր>ամբորի, ճասակ>ասակի *և այլն։*

բ) Հայերենի մեջ բարդության և ածանցման մեջ հաճախ ճ ջնջվում է. ինչպես՝ փողաճար>փողար, ծխաճաճ>ծխաճ, ակաճ-

ջանաա>ամանգաա, նայր-նայրել>նայրայրել, նիծ-նիծել>նիծնիծել, նիզ-նիզ>նիզնիզ և այլն։

դ) Նոյնիսկ հոլովման ժամանակ ն նախաձայնը որպէսզի չհանդիսանայ ի ձայնաւորի սկզբան. ինչպէս՝ նիմն — *սեռ.* հիման, *և ոչ թէ* նման, *ինչպէս պիտի լիներ նոյնիսկ հինգ բառի մէջ թէև անանձ սեռ.* նինգ, *բայց պատահական լինում է* նինգեորդ *և ոչ թէ* նինգերորդ, *ինչպէս սպասելի էր։*

դ) Նոյնիսկ հնդեվրոպականից հաւելուածն անցման շրջանում կան բառեր, որ տառից ն-ի անկման օրինքին, կարելի չէ բացատրել. ինչպէս՝ swesor «քոյր», *որ պարզել է թնիւր, ն-ի չնջումով* թուր, *և արմէնեան* eu *տալիս է հաւելուածն ոչ (համմա.* speut>փոյր), *ստամ և թուր>քոյր։ Նմանատիպ հնխ.* wesr>գնոար, գաւար, գար-ուն։ *հնխ.* esr>նոար, նար, ար-իւն։

*Չ-ի չնջման շատ լաւ օրինակ է երկերկու «200», որ ծագում է երկի-հարիւր>երկի-արիւր>երկերկիւր *միջին ձևերով։*

Ժամանակի ընթացքում հաւելուածն առաջը հետզհետէ վախճանին իրենց հնչումը. պիտանի որ արդի դրականի մէջ՝

1. Բազաձայններից ն ե լ. հաճախ են, երկուսն էլ անհնարին մէջին բացախլուն. բառակրում և վերածվել է ye *վանկին։ Ձիշտ ասպես է նաև սամխեներէն* e, *որ բառակրում կորչեցնում է ամենուրեք* ye. *օրինակ՝* el este *(կարդա՝* yel yeste) *գնա էդ։*

ո առաջել է իրեն համապատ մի տառ ևս (o), իսկ բառակրդրում ո դարձել է vo։

2. Երկրաբրանների ու նասարբրանները չնչվել են, բոլորն էլ վերածվելով բազաձայնական վանկերի. այ=ay *և ոչ* aյ, եայ *և ոչ* eaյ *և այլն։*

3. Բազաձայններից (խոսելով միայն գրական լեզվի մասին) շնչել իսկ են (փ, թ, ք, ց, չ) պահել են իրենց հին հնչումը, բայց խուլ պ, կ, տ, ծ, ճ և թրթռուն բ, գ, դ, ձ, ջ խանգարվել են արևմտեան գրականում, աւաջիններն գարձել են b, g, d..., *երկրորդները* փ, ք, թ, ց, չ. *արևելեան գրականում պ, կ, տ, ծ, ճ մնում են խուլ (թեևս կորցրած շնչի մի մասը), իսկ բ, գ, դ, ձ, ջ հընչեվում են* b, g, d... *(կամ նաև ըստ բարբառի* bh, gh, dh...)։ *Մյուս բազաձայններից սուլող (ս, զ), շչական (շ, ժ), կոկորդական (խ, հ), ռնգային (մ, ն), ցնցուն (ռ, ր) երկու բարբառներում էլ մնում են անփոփոխ հին հնչումով. ասպես նաև վ։ Ւ հաւասարվել է վ ձայնի հետ և յ գարձել է բառակրդրում ճ, բառավերջում անձայն*

(բացի մի քանի միավանկ բառերից), և միայն բառամիջում պահել է յ=y ձայնը, այն էլ զուտ բաղաձայն և ոչ թե կիսաձայն։ Վերջապես ղ, որ հնապես լ էր, բոլորովին փոխվել և ստացել է կոկորդային ղ ձայնը։

Հայերենի բաղաձայնները, ըստ իրենց թրթռման աստիճանների, ներկայացնում են հետևյալ կարգերը.

Երեք աստիճանով	բ	պ	փ
	գ	կ	ք
	դ	տ	թ
	ձ	ծ	ց
	ջ	ճ	չ
Երկու աստիճանով	զ		ս
	ժ		շ
	ղ		խ
Մի աստիճանով	վ		
	մ		
	յ		
	լ		
	ն		
	ռ		
	ր		
Մի աստիճանով			հ
			ֆ

Այս բոլոր փոփոխությունների մասին գաղափար տալու համար բերենք մի փոքրիկ հատված գրաբար և աշխարհաբար։

1

ՍԱՂՄՈՍ ԴԱՒԹԻ ՂԵ

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. օրհնեցէք զՏէր ամենայն երկիր. աւետարանեցէք օր ըստ օրէ զփրկութիւն նորա։ Պատմեցէք ի հեթանոսս զփառս նորա, յամենայն ժողովուրդս զսքանչե-

լիս նորա։ Մեծ է Տէր և օրհնեալ է յոյժ. ահարկու է նա ի վերայ ամենայն կուռս։ Ամենայն կուռք հեթանոսաց դեւք են... մատուցէք Տեառն փառս և պատիւ... փառս անուան նորա... ի պատիւս սրբութեան նորա. և խոովեսցի յերեսաց նորա ամենայն երկիր... Տէր թագաւորեաց... և պատի զժպտալոցս իւր ապրթիամբ։ Ուրախ եղիցին երկինք և ցնծասցէ երկիր, դաշտացասցի ծով լիս իւրով... Ցերեսաց Տեառն զի գայ, և գայ նա ի դատել զերկիր...

Լուաւ և ուրախ եղեւ Սիոն, և ցնծացին դստերք Յուդայ... զի դու բարձրեալ ես ի վերայ ամենայն երկրի, յոյժ բարձրացաք ի վերայ ամենայն կուռս։ Ոչք սիրէք զՏէր՝ ատեցէք զչարութիւն. պահէ Տէր զանձինս սրբոց իւրոց, ի ձեռաց մեղաւորի փրկեսցէ զնոսա։ Լոյս ծագեաց արդարոց, ուղղոց սրտիւք եղեւ ուրախութիւն։ Ուրախ եղերուք, արդարք, ի Տէր, և խոստովան եղերուք հիշատակի սրբութեան նորա։

2

ՍԱԼՄՈՍ ԴԱՒԻԹ Ոկ

Աւրհնեցէ՛ք զՏէ՛ր հաւրհնութիւն նոր. աւրհնեցէ՛ք զՏէր ամենայն երկիր. աւետաւրանեցէք աւր ըստ աւրէ զփրկութիւն նորա։ Պատմեցէք ի հեթանոսս զդիտաւորս նորա, համենայն ժողովուրդս զքանչելիս նորա։ Մեծ է Տէր եւ աւրհնեալ է յոյժ. ահարկու է նա ի վերայ ամենայն կուռս։ Ամենայն կուռք հեթանոսաց դեւք են... մատուցէք տէառն զիտաւորս եւ զպատիւս... զփառս անուան նորա... ի պատիւս սրբութեան նորա. եւ խոովեսցի յերեսաց նորա ամենայն երկիր... Տէր թագաւորեաց... եւ դատի զժողովուրդսն իւր ուղղութեամբ։ Ուրախ եղիցին երկինք եւ ցնծասցէ երկիր, դաշտացասցի ծով լիով իւրով... Երեսաց Տէառն զի գայ, եւ գայ նա ի դատել զերկիր...

Լուաւ եւ ուրախ եղեւ Սիոն, եւ ցնծացեն դստերք Յուդայ... զի դու բարձրեալ ես ի վերայ ամենայն երկրի, եւյոյժ բարձրացաք ի վերայ ամենայն կուռս։ Ոչք սիրէք զՏէր՝ ատեցէք զչարութիւն. պահէ Տէր զանձինս սրբոց իւրոց, ի ձեռաց մեղաւորի փրկեսցէ զնոսա։ Լոյս ծագեաց արդարոց, ուղղոց սրտիւք էղեւ ուրախութիւն։ Ուրախ էղերուք, արդարք, ի Տէր, եւ խոստովան էղերուք հիշատակի սրբութեան նորա։

3

ՍԱՂՄՈՍ ԴԱՎԹԻ ՂԵ

Օրհնեցէք ըզՏէր հօրհնութեան նօր. օրհնեցէք ըզՏէր ամէնայն երկիր. ավետարանեցէք օր ըստ օրէ ըզփրկութեան նօրա։ Պատմեցէք ի հեթանոսս ըզփառս նօրա, համէնայն ժողովուրդս ըզսքանչելիս նօրա։ Մեծ է Տէր եւ օրհնեալ է հուժ. ահարկու է նա ի վերա ամէնայն կոց։ Ամէնայն կուռք հեթանոսաց դեւք են... մատուցէք Տիառըն ըզփառս եւ ըզպատիւ... ըզփառս անվան նօրա... ի գավիթս սրբութեան նօրա. եւ խուովեսցի հրէսայ նօրա ամէնայն երկիր։... Տէր թագաւորեաց... Եւ գատի ըզժողովուրդս ուղղութեամբ։ Ուրախ եղիցին երկինք եւ ցնծասցէ երկիր, ղըվարճասցի ծով լրիվ եւ ուրօվ։... Հերէսաց Տիառըն գի գա, եւ գա նա ի գատել զերկիր։...

Լըվավ եւ ուրախ եղէվ Սիօն, եւ ցնծասցէն դստէրք Հ։ ւդա... գի դու բարգրեալ ես ի վերա ամէնայն երկրի, հուժ բարգրացաք ի վերա ամէնայն կոց։ Վուլք սիրէք ըզՏէր՝ ատեցէք ըզչարութեան. պահէ Տէր զանձինս սրփոց. եւ ուրօց, ի ձեռաց մեղավորի փրկեսցէ ըզնօսա։ Լուս ծագեաց արթարոց, ուղղօց սրտեւք եղէվ ուրախութեան։ Ուրախ եղերուք, արթարք, ի Տէր, և խոստովան եղերուք հիշատակի սըրփութեան նօրա։

4

ՍԱՂՄՈՍ ԹԱՎԹԻ ՂԵ

Օրհնեցէք ըզԴէր հօրհնութեան նօր. օրհնեցէք ըզԴեր ամէնայն երգիր. ավէդարանեցէք օր ըստ օրէ ըզփրգութեան նօրա։ Բամեցէք ի հեթանօսս զփառս նօրա, համէնայն ժողովուրդս ըզսքանչելիս նօրա։ Մեծ է Դէր եվ օրհնեալ է հուժ. ահարգու է նա ի վերա ամէնայն դըոց։ Ամէնայն գուռք հեթանօսաց թէվք են... մատուցէք Դիլաւըն ըզփառս եւ ըզգատիվ... ըզփառս անվան նօրա... ի քավիթս սրութեան նօրա. եվ խուովեսցի հէրէսաց նօրա ամէնայն երգիր։... Դէր թագավօրեաց... և գատի ըզժողովուրդս ուղղութեամբ։ Ուրախ եղիցին երգինք և ցնծասցէ երգիր, ղըվարջասցի ծով լրիվ եւ ուրօվ։... Հէրէսաց Դիլաւըն գի քա, և քա նա ի գատէլ զերգիր։...

Լեռամ եւ տրամ հղել Միքան, եւ գրնձատցէն թրատերք Հաթա... պի թա փարցնալ ևս ի վէրս ամմէնայն երկրի, հալ վարդյատցաք ի վէրս ամմէնայն գազ, վալք սիրէք զդԻնր՝ պղնձէք ըզչարատիճան. բահէ Դէր գանգիներս արմատ հաւտոյ, ի ձկատց մէդավարի վերնայոյ բնտատ Լատս ձաքնատց արմատոյ, ուղղոց արդիւք հղէմ ուրախատիճան Ուրախ հղէրատք, արմարք, ի Դէր, և խոստման հղէրատք հիշատակի արմատիճան նորա:

Վերահիշյալ 4 հատվածներից առաջինը պրոբարի դրչությունն է, որ ավանդված է մեզ Թ դարից (ավելի հին ձեռագիր չկա). երկրորդը՝ ալդ հատվածի արտասանությունը և դարի հնչմամբ, բայց դրված ալբուբեն մեր կովկասյան ալֆաբետի հնչման հատկանշն. այնպես որ մեկը նշեն ալդ դրվածքը կտրտա առաջի կովկասյան ալֆաբետ հնչմամբ՝ կստացվի և դարի արտասանությունը, երրորդը՝ թե ինչպես ենք կարդում մենք ալսօր պրոբարը, մեր սիրած արտասանությամբ: Չորրորդը՝ ինչպես է կարդում պոլսեցի պրոֆեսորը՝ ավելի սիրած արտասանությամբ:

Տարբերությունը չափազանց մեծ է, մանավանդ պոլսական արտասանությամբ, այնպես որ եթե մեր հայրենից մեկը (և դարից) լսեր մեզ, ոչինչ չկարող հասկանար: Այժմ ոչ ոք չի կարդում պրոբարը՝ հին հայոց հարազատ հնչմամբ: Միայն Եվրոպացի հայագետներն են, որ ատաղձում ու կարդում են ալդ հարազատ հնչմամբ, որ և մեզ անհասկանալի է ընդհանրապես:

Ասել չպետք է կարծել, թե ալս երեսուներք հատուկ է միայն հայերենին: Այլ Ալն բոլոր ազգերը, որ ունեն իրենց հին լեզուն, որի հետ նաև իրենց նոր լեզուն, գտնվում են նույն դրության մեջ:

Ալս կապիկ ամենից ավելի նման են մեզ հույները, որոնք ունեն իրենց հին հարուստ գրականությունը հին հունարենով, և մի նոր հունարեն՝ գռնադան բարբառներով և տարբեր-տարբեր արտասանությամբ: Նրանք էլ իրենց հին հունարենը կարդում են նորի արտասանության համեմատ: Տալիս ենք ալստեղ մի վարքիկ սրինակ հին հունարենից.

Ἐν ἀρχῇ ἐποίησεν ὁ Θεὸς τὸν οὐρανὸν καὶ τὴν γῆν. ἡ δὲ γῆ ἦν ἀόρατος καὶ ἀκατασκεύαστος, καὶ σκότος ἐπάνω τῆς ἀβύσσου καὶ πνεῦμα Θεοῦ ἐπεφέρετο ἐπάνω τοῦ ὕδατος. καὶ εἶπεν ὁ Θεὸς Γενηθήτω φῶς. καὶ ἐγένετο φῶς (Գիրք Ծննդոց, Ա. 1—3):

Հին հնչմամբ	Նոր հնչմամբ
Էն արխէ՛ էպո՛լէսէն հո Թէոս տոն ուռանոն կալ տէն գէն. հէ դէ գէ էն ածրատոս կալ սկատատահ՛ ատոս, կալ սկոտոս էպանո՛ տէ՞ս սրի՛ւսատու կալ պնո՛մա Թէու էպէֆէ՛րէատ էպանո՛ տու հի՛ւպատոս կալ էլպէն հո Թէոս. «Գննէ՛թէ՞տո՞ ֆո՞ս». կալ էդէ՛նէատ ֆո՞ս:	Էն արխի՛ էպի՛հաէն օ Թէոս տոն ուռանոն կի տին յին. ի դէ յի իւ ածրատոս կի սկատատահ վատոս, կի սկոտոս էպանո տիա ավի՛ատու. կի պնավմա Թէու էպէֆէ՛րէատ էպանօ ատ լդատոս կի ի՛պէն օ Թէոս. «Նիլթիատ ֆօս». կէ էյենէատ ֆօս:

Հին հունարենի հնատուն հնչումը պետք ավելի տարբեր է եղել. այսպես ֆ, որ բառդաձևերը հնչվել են փ, ք. հրկու ձայնավորի միջև ս հնչվել է զ, իսկ է զ հնչվել է ձ և այլն:

Նոր հունարենի հնչական տարբերությունը համեմատաբար հալերենի՝ շատ փոքր չէ, երբեմն նույնիսկ ավելի է: Այսպես՝ նոր հունարենում երկար ձայնավորներ այլևս գոյություն չունեն, η=ի և υ=իւ ձայնավորները հավասարապես դարձել են պարզ ի. նըմանապես αι, οι երկբարբառները. այնպես որ նոր հունարենը ι, η, υ, αι, οι հավասարապես հնչում է ի (i): Բառասկզբի ձայնավորներից առաջ ’(h) հնչյունը իսպառ վերացված է: Բաղաձայններից β=բ այժմ ամեն տեղ դարձել է վ.— γ=գ բաղաձայնը և և ի ձայնավորներից առաջ դառնում է միշտ կիսաձայն յ (y). այլուր γ=ղ (փափուկ). δ=դ և θ=թ հնչվում են տնգլիական թվատ dh և th հնչմամբ:

Այս փոքրիկ հատվածի մեջ, որ վերևում մեջ բերնցինք, նոր հունարենը հնի համեմատաբար ներկայացնում է 41 տարբերություն:

Սրանից շատ տարբեր չէ նաև լատիներենը: Բայց այժմ լատիներեն խոսող ժողովուրդ չկա (իսկական իմաստով): Կան միայն լատինածին ռոմանական զանազան լեզուներ, որոնց հնչումը բնականաբար տարբեր է լատինականից: Բայց ուր որ լատինականը ուսման առարկա է, կարդացվում է յուրաքանչյուր ազգի մոտ իրեն հատուկ հնչումով: Օրինակ, լատիներեն Cicero հատուկ անունը իտալացիք կարդում են Չիչերո, ֆրանսիացիք՝ Սիսերո, գերմանացիք (սրանց հետևողությամբ նաև ռուսները)՝ Ցիցերո,

քան իսպանական թվում հնչյունով՝ Thither. մինչդեռ, ինչպես լեզվաբանները նշում են հանել, բառի հարացույց յասին հնչյունն է Կիկիլու, ինչպես անանուն և մանր (Կիկիրան)։ Հայերենը անանունով ճոխ լեզուներն, կարող էր ներկայացնել կ, ա, ց ձայնները իրենց բոլոր նրբերանգներով, եթե ոչպիսի բան պահպանի յասինների մասն։

Ինչպես տեսնում, լեզվաբանները նշում են հանել թե՛ յասինները, թե՛ հայերենի հնացուցն հարացույց հնչյունը։ Յասինների հարացույց հնչյունն պրեթե ոչ ոք չի հետևում. հետևողները բնականաբար է ամբողջ պետական աշխատանքից, միայն հայերեն են, որ չեն ընդունում թևավ։ Իսկ հայերենի հին հնչյունը միայն հերոսական հայրենասերներն են գործածում։

ՀԱՅԵՐԵՆԻ ԸՆԹԵՐՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ
(արևելահայ ևին ուղղագրություն)

ա ձայնավորը ամեն դիրքով կարդացվում է ա և ամենևին հնչական տարբերություն չունի։

ե ձայնավորը բառասկզբում բաղաձայնից առաջ թե՛ միավանկ և թե՛ բազմավանկ բառերի սկզբին հնչվում է ye=դերմանականի je։

ե ձայնավորը բառասկզբում ձայնավորից առաջ հնչվում է y=դերմանականի j. և այսպիսով պահում է բաղաձայն։ Ավելորդ երևալ չի պատահում հայերեն բառերի մեջ, թեև շատ սովորական է տատ բառերի համար. օրինակ՝ նաղմուր «անձրև» (թուրքերեն.) նարինջ (Հնդիանի մատ մի դավառ), նախունջի թրք. «վերարկու», նորոհատ, նոյուն-օղուբ (Մատա-լեռան գյուղերից)։ նոյուղ թրք. «մատուռ», նշղրի թրք. «դևք», նքպրքի թրք.« շըռնիճ», նումրուխ թրք. «բառնյա», նուլաֆ թրք. «վարսակ», նեչիլըրմաք (գետի անուն), նիր անգլ. year «տարի», նիյաստ անգլ. yeast «թթխմոր»։

Ավելորդ է ասել, թե այս դեպքում նե=ye գոլութիւն չունի, որովհետև այդպիսի հնչյուն պատահելու դեպքում գրվում է նե, նույնիսկ այս վերջին ye հնչյունը կարելի է գրել պարզապես ե. օրինակ՝ եշիլ և այլն։

Բառամիջում ե կարդացվում է միշտ և մաքուր e ձայնավոր։ Բոլոր տրիշ անանուն նրբերանգներն գավառական են. գրական լեզուն այդպիսի բան չի ճանաչում։ Բառավերջում ե չկա, այլ միայն է։

է, ի, օ բառերը ամեն դեպքում կարտայցվում են e, i, o։

ո բառասկզբում թե՛ միավանկ և թե՛ բազմավանկ բառերի մեջ կարդացվում է vo. միայն վ բաղաձայնից առաջ կարդացվում է միշտ o. օրինակ՝ ով=ov, ովսիս=ovsis, Ովր=Ovr (մարդու անուն), Ովրեստես = Ovrestes (մարդու անուն), ալապես և Ովսաննա, ովկիանոս, ովան «ծովային պաղան»։

ու կարդացվում է երկու բաղաձայնի միջև, կամ մի բաղաձայնից հետո (բառավերջում) միշտ u. օրինակ բուրդ, քթու.—մի բաղաձայնի և մի ձայնավորի միջև ու կարդացվում է v. ինչպես՝ աղուես = aγves, աղուոր = aγvor. երկու ձայնավորի միջև գոյութիւն չունի։

ը տառը գրվում է միայն բառասկզբում և բառավերջում և կարդացվում է միշտ ը (ə)։ Բառամիջում ը չի գրվում, և սակայն հնչվում է բոլոր բաղաձայնների խճողման դեպքում։ Գրվում է միայն այն դեպքում, երբ բառը բարդ է և երկրորդ եզրը սկսում է ը-ով. ինչպես՝ դասընկեր, ճատընտիր և այլն։ Օտար բառերի մեջ հաճախ ը չեն գրում, բայց լավ էր գրել, ինչպես՝ Գըզգըլճըք որ առանց ը-երի պիտի դառնար քառասկզբին մի բան՝ Կզլճք։

Ծանոթ.—Մի գերմանացի հյուպատոս ? ծաղրելով հայերենը գտնում էր, թե նա չափազանց բաղաձայնաշատ է և իբր օրինակ մեջ էր բերում՝ tschmschtndschenavor, մեր «չմշտնջենաւոր» բառն է Եղնիկից։ Գերմանացին մեր 3 ը ձայնավորները ջնջել է, պարզ բաղաձայնները գերմանական ձևով 3 կամ 4 բաղաձայններով է արտահայտել և ալպիսով մի վանկի վրա աւտացվել է 14 բաղաձայն։ Մինչդեռ պիտք է գրել գիտական ուսուդարձութիւմբ՝ čəməšẗənǰenavor, ուր գտնում ենք մի բաղաձայնից հետո մի ձայնավոր։

Բաղաձայններից կարևոր է հիշել՝

1. յ բաղաձայնը, որ բառասկզբում հնչվում է իբր լիակատար ճ. օրինակ՝ յղի=ճըղի։ Որևէ փոփոխացում այս ճ-ի հնչման մեջ (իբր յ) գրական լեզվում ընդունելի չէ։—Բառամիջում, գտնվելով երկու ձայնավորի միջև, կարդացվում է y. օրինակ՝ այո, հոյակապ, բայական, գոյութիւն, կոյուղի, խոյընթաց, բայիմաստ, նայել, հայելի և այլն։—Երբ բառը բարդ է և երկրորդ եզրը սկսվում է յ բաղաձայնով, հնչվում է ճ. անյոյս, անյիշատակ. բարեյիշատակ։ Այս դեպքում նույնիսկ եթե յ պատահի երկու ձայնավորի միջև, դարձյալ հնչվում է ճ. ինչպես՝ մրայօճ «սև ունքերով», որ

չաւոր անմատչելիության պատճառով են առաջացել, այսպես նաև սեռական բառը—Բառի մեջ, երբ բաղաձայնի միջև չի պահպանվում և երեք հնչյունից նվազելիս անկայունական ձևով մի բառ, պարզվել հնչյունը ի:—Մի ձայնավորի և մի բաղաձայնի միջև հնչվում է միշտ y, ինչպես՝ բայց, սակայն, յոյս, դոյն (այս պարագայում պրոնոմինալ է միայն այ և ոյ երկբաղադրյանների մեջ, որոնցից այ միշտ կարդացվում է ay, իսկ ոյ այնի երբ պարզ երեք ոյ երկբաղադրյանից հետո ևսկզբ բաղաձայնը պահպանում է արմատական, այս պարագայում ոյ կարդացվում է ույ. իսկ երեք ոյ երկբաղադրյանին հաջորդող բաղաձայնը արմատական չէ, այլ որևէ հոլովական մասնիկ, ոյ հնչվում է օյ: Նաև այս դոյն երեք նշանակում է «հրանդ», կարդացվում է դայն, իսկ երեք նշանակում է «գեղացիություն», կարդացվում է գոյն: Նաև նույն երեք պոպի անասնի է (հուն), կարդացվում է նույն, իսկ երբ նշանակում է տարատեսակ, կարդացվում է նոյրն. ինչպես՝ Ակաւ աւեն և նոյն երթալ առաջի Յուդայ և եղբարցն (Ա Մակաբ. Ի, 13):

Ավարտ նաև խոյս կարելի է կարդալ խուս «խուռն տալ, խառնափնդ» և նաև խոյրս «խուխրս» (խոյս դահիճ): Ավարտ է նաև նույն բառը, որ գործածված է Փարպեցու թղթում (էջ 302) և ոմանք կարդում են նույն (իբրև դերանուն առն, նոյն) և ոմանք էլ կարդում են նոյ-յն (նոյ անուն անձը): (Այս մասին տե՛ս Հայոց անձնանունների բառարան, Ի, 84): Գոյն բառը երեք ապանիչ դերն է նշանակում. կարդացվում է գույն, իսկ երեք բ առաջ անունն է, կարդացվում է բոյն:

Բառավերջում յ պահվում է միայն ա և ո ձայնավորներից հետո: Երեք անհնար թվեց բառը, դա բոլորովին նոր ձև է և առացել է յ բաղաձայնը, չշփոթելու համար թե շաղկապի հետ: Իսկ հայհոյ և վայ նորաձև բացականչությունները են:

ա-ից հետո պահված ժամանակ, երեք բառը միավանկ է և պոլիսեան կամ ածականն է, յ հնչվում է y. այսպես՝ ա՛յ, բայ (verbe), կայ (կացարան), հայ, ձայ (լիճչունը), յայ (բացականչություն), նայ (թաց), չայ (թեյ), պայ (ոտի), ոայ (դրոշակ), վա՛յ: Իսկ երեք բայ է, վերջածայն յ-ն չի հնչվում. այսպես՝ բամ, բաս, բայ (ասում է), դամ, դաս, գայ (գալիս է) կամ, կաս, կայ (գտնվում է), տամ, տաս, տայ (տալիս է):

Երեք բառը բազմավանկ է, բառավերջի յ-ն անձայն է մնում. ինչպես՝ շղթայ, Վասիլայ, հսկայ և այլն: Այս դեպքում, երեք բառը

բայդ է և նրա երկրորդ ձայնը միշտ ա է, յ-ն հնչվում է ըստ օրինի. ինչպես՝ մակրայ (յ հնչվում է), եզրակայ (յ չի հնչվում)։

ո ձայնավորից հետո յ ունեցող միավանկ բառերն են գոյ, լոյ, կոյ, ճոյ, ցոյ որոնց վերջաձայն յ-ն հնչվում է. իսկ եթե գոյ բայ է (գոյություն ունի, կայ), հնչվում է գօ։ Բազմավանկ բառերի վերջում յ անձայն է մնում, ինչպես՝ ազդոյ, ռճգոյ և սեռականի վերջում մարդոյ, լուսոյ, յուսոյ և այլն։

Ո (ով) բառի հոլովական ձևերն են՝ հզ. սեռ. ոյր, հոգ. ուղ. ոյք, սեռ. ոյց, որոնք հնչվում են ույր կամ վույր (վանի բարբառով վիր), ույք կամ վույք, ույց կամ վույց։

Թեև վերևում ասացինք, թե ոյ երկբարբառին հաջորդող բաղաձայնը արմատական չլինելու դեպքում ոյ կարդացվում է օյ, իսկ արմատական լինելու դեպքում ույ, սակայն ընդհակառակը բառավերջում բոլոր սեռական ոյ ձևերը հնչվում են հոդ ստանալու դեպքում ույ. ինչպես՝ մարդոյն, ճոգույս, լուսոյդ (մարդույն, ճոգվույս, լուսույդ)։

Ւ-ն բառը գրվում է թե՛ քո և թե՛ քոյ. երկուսն էլ հնչվում են քօ, սակայն երբ հոդ դրվի՝ ոյ հնչվում է ույ. այսպես՝ քոյս, քոյդ, քոյն (քույս, քույդ, քույն)։ Նոր հայերենում այս բոլոր սեռականները ստացել են ու ձևը. մարդոյ=մարդու, քո դերանունը արևելյան հայերենում մնում է քօ, իսկ արևմտյան հայերենում՝ քու։

Ձ. գ, ս, շ բաղաձայնները բառասկզբում գոնվելու ժամանակ հնչվում են ըզ, ըս, ըշ կամ զը, սը, շը. սրանց համար բացարձակ կանոն չկա։ Այտընեան, Քննական քերականութիւն, էջ 367, ընդհանուր կանոնով ասում է, որ եթե այդ բաղաձայններից հետո գոնվի բ, պ, փ, գ, կ, ք, դ, տ, թ ձայներից մեկը (այսինքն պալթականների 3 աստիճաններից որևէ մեկը), այդ դեպքում գ, ս, շ բաղաձայններից առաջ դրվում է սուղ ը. ուրիշ դեպքում ը ձայնավորը մոռնում է նույն բաղաձայններից հետո։

Այս ընդհանուր կանոնից հետո քննենք յուրաքանչյուրը մանրամասն։

ա) Այն դեպքում, երբ զ նախդիր է, անպատճառ հնչվում է ըզ. օրինակ՝ զհետ, զկնի (արմատը կին), զգալ, զգլխել, զբզեռնել, զկծել, զմածիլ, և նմաններ։ — Այս խմբին են պատկանում, ինչպես հայտնի է, հայցական, պատմական և պարառական հոլովները։ Երբեք չի կարելի հնչել զբսեղաճ, զբկամս, զբրաճս և այլն, թեև ձեռագրերում այդպիսի սխալ գրչութիւններ կան։

բ) Ամեն դեպքում երբ պ-ից հետո գոնվում է մի սղյալ ձայնավոր (ի կամ ու), անշուշտ հնչվում է պր. օրինակ՝ պրկիլ (պուրկ, պիրկ), պրանչ (պուռ), պրատափոկ (պիտա), պրրախոտ (պուր), պրաչել (պուռալ), պրդչալ (պիդչ) և այլն։ Այս կարգի բառերը մեծ մասամբ իմաստյամբ են, երբ նկատում ենք, որ պ-ից հետո կա երկար բաղաձայն։

գ) Ալբրենյանի կանոնի համաձայն պ գոնվելով բ, պ, մ, գ, կ, թ, դ, տ, ք բաղաձայններից առաջ, հնչվում է բզ. այսպես են պրաղիկ, պրտանուլ, պզալ, պզոն, պզածիկ, պզայո, պգենուլ, պգեստ, պգայշ։

դ) Ուրիշ բաղաձայնների առաջ պ հնչվում է պր. այսպես են պրևնել, պնջիկ, պմբաղ, պմբրիկ, պմբուլ, պրայց, պզուիկ, պլանալ, պողալ, պրմելիկ(ն), պմռանալ, պմբիկ, պմբուխտ, պնդալ, պնդան, պղնար, պմռաս, պմռնիլանան, պռնիկ, պղջալ, պնիկ (պննել), պրաւ, պրևանդ, պրան, պրանանք։

Ի ի ա ղ ո ւ թ. 1.— Անառարկելի է պյուրեղի բառը, որ գործ է ածել մի անգամ Հովհաննես Դառն և որի դեմ մի այլ ձեռագիր ունի պյուրելիս. թե՛ իմաստը և թե՛ ընթերցման ձևը անհայտ է։

Ի ի ա ղ ո ւ թ. 2.— Վերի դ) կանոնին հակառակ է գնում, որ կարդացվում է պլկոտ, բուռ Վարաքավոր բառերուն պըկըռ, և որի համանիշն է պլլայ ամուշմուլաս։

Ի ի ա ղ ո ւ թ. 3.— Վերի դ) կանոնին հակառակ է զմայլիլ, որ հնչվում է ըզմայլիլ, իբր թե արմատը լիներ մայլիլ և սաստկականը՝ ըզմայլիլ։

ե նախաձայնի ընթերցման կանոններն են.

ա) զ նախդիրը խուլ բաղաձայնի մոտ դառնում է ս և այս դեպքում կարդացվում է ըս. օրինակ՝ սթափիլ, սթափառումն, սակաւջինմ (ականջով լսել), սուածել, սփածանել, սառեղել, սփաթիլ և այլն։—Սփռել բառը թեև կազմված է զ>ս սաստկականով, բայց հնչում է սըփռել (վնաս է հարուցված այն մասին, թե այս բառը պետք է կարդալ ըսփռել, տե՛ս Արմատական բառարան, սփիռ բառի տակ).—զ մասնիկով կազմված ունենք նաև զմեղկիլ, որի երկրորդ ձևն է սմեղկիլ (թեև մ խուլ չէ)։

բ) Երբ ս-ից հետո գոնվում է մի սղյալ ձայնավոր, հնչվում է սը, ինչպես՝ սգալ (սուգ), սկախառն (սիկ), սղել, սղոց (սուղ), սըրել (սուրբ), սնամէջ (սին), սնանիլ (սուն), ստախօս (սուտ) և այլն։

գ) Ըստ Աճառյանի վերհիշյալ կանոնի, երկ պալթականների աստիճաններըը (ինը բաղաձայն), եթե հաջորդն նախաձայն ս-ին, այս վերջինը կարդացվում է ըս. *ինչպես՝* սկալիճեաճ, սկահ, սկահակ, սկայ, սկաւ, սկաւառակ, սկել (հսկել), սկեսուր, սկետայ, սկիզբն, սկիհ, սկիթառոճ, սկիպտոս, սկիւղ, սկիւռ, սկնդիկ, սկուճդ, սկուռ, սկուտդ, սպաթար, սպայ, սպանանել, սպառել, սպիտակ, սպունգ, ստահակ, ստամբակ, ստամոքս, ստանալ, ստեղծել, ստեղջ, ստիպել, ստույգ, ստուեր, սփոփել, սքանչանալ, սքեմ (*ոմանք սխալ են կարդում՝* սըքեմ), սքօղել (*կարդացվում է* ըսքօղել՝ *նախ. որովհետև ս նախդիր է, երկրորդ, որովհետև* ք-*ից առաջ է. ուստի շատ սխալ է ոմանց սրքօղել ընթերցումը*), ստնանել, ստնգանք, ստրուկ, ստինք, ստնտու, սաբջանալ և այլն (*այս բառերի մի մասը հունարէնից փոխառութիւն է և պահում է հունարէնի հընչեմանն ձևը. այսօր էլ այդ կարգի բառերը հնչում ենք նոյն ձևով. ինչպես՝* ստատուտ, սպիրտ, սկարլատին, սաներիլիզացիա, նուլնիսկ Ստամբուլ); *կան նաև պարսկերենից փոխառյալ բառեր, որոնք թեև պարսկերենում* si *հնչումն ունեն, բայց հայերենում դառնում են* ըս, *ինչպես՝* սպայ < sipāh, սիաւառակ < sikūre:

դ) Ըստ Աճառյանի կանոնի, սուլն ինը բաղաձայններից դուրս ուրիշ որևէ բաղաձայնի մոտ նախաձայն ս հնչվում է սը. *ինչպես՝* սլանալ, սլաք, սլեհ, սխար=սղար, սխուր, սճակ (*աշտարակ*), սղանգճ, սղոխ (*բարակ քամի*), 2. *բարակ ոտռւոյց*, սմա, սմին (*սոյն բառից*), սմնակ ամպատակ, սմկիլ, սճար. սճգիլ, սճգոյր, սըճգրճգուր, սճդիկ, սճդոճ, սճգուս, սճգուկ, սճուճդ սրաճ, սրինգ, սրուակ, սրքալ, սրսկապաճ, սկռել, սխտոր, սխրանք, սմբակ, սմբուլ:

ե) Այս կանոններին հակասում են հետևյալ բառերը. սթար «ձիու սփռոց», սթեր «վայրի նարդոս», սկել, սփռել (*սեռ վերը*), սպտուր, սպրդիլ, սպրկիկ,—*Առաջին երկուսը* (սթար, սթեր) *իսկապես հայտնի չէ, թե ինչպես պետք է կարդալ. սփռել բառի մասին խոսեցինք վերը (արմատն է ըսփիւռ), վերջին երեքը թեև ս-ից հետո երկու բաղաձայն ունենալու պատճառով.*—ստացուցացնել *երկու տարբեր իմաստ ունի. եթե նշանակում է «ստանալ տալ», կարդացվում է* ըստացուցացնել, *իսկ երբ նշանակում է «սուտ հանել», կարդացվում է* սը-տացուցացնել, սկել *երբ նշանակում է «հրսկել», կարդացվում է* ըսկել, *իսկ եթե նշանակում է «ջրի տակ գնալ», կարդացվում է* սըկել:

շ նախաձայնի ընթերցման կանոններն են.

ա) Երբ շ-ից հետո ձայնավորն ապամ կա, բնականաբար կարդացվում է շը և ոչ երբեք շշ, նայելով այն դեպքում, երբ շ-ից հետո պալթականն բաղաձայն կա. ինչպես՝ շքեղ, (շուք), շլանալ (շիլ), շնաչ (շուն), շնչել (շունչ), շրջել (շուրջ) և այլն.

բ) շ նախաձայնից հետո չենք կարող դնել բ, գ, դ պալթականները, որովհետև շ խուլ է, իսկ պալթականները թմբկաձայն.

գ) Ձայնեղաձայն բաղաձայն, ալ, լ, ա, վ, ր, յ, բաղաձայներից առաջ գրելով շ-ն պետք է արտասանվելը շշ, բայց այս բաղաձայններով սկսվող մի կարգից շկարան, շկօրակ, շահամբանայնություն, շահապել, շահմահան, շառագանիմ, որոնք կանոնավոր են, իսկ մյուս կարգից՝ շթթել, շկիթել, շպար, շպետ, շպտիլ, շփանալ, շփոր, շրթանք, շրթել, շրտղել, որոնք անկանոն են. Ձայնավորի չնչման պատճառով կանոնավոր են համարվում շպարար (շիլ), շպլել (շիպ), շփել (շուփ) և այլն. Ընթերցման կողմից անորոշ են շրունք, շրայլել.—Նայած բառը մենք արտասանում ենք շշպար, բայց ավելի ուղղագրական է շբպար. Խորհրդային մի ազգ՝ ևր կը շպարի գեմքը լուսնուլն (տե՛ս ազգ. երևան, 1947, էջ 47), թեև անդի շշպարել ձևը, բայց դա չափի համար է.

դ) Մնացյալ բաղաձայնները (լ, ղ, ն, մ, ն, շ, չ, ռ, ր) ալս կամ այն պատճառով հնչվում են շը. ինչպես՝ շլան *մոսիբա*, շլմորիմ, շղարշ, շղթայ, շղլի, շղուարարոյ, շղուակաանք *ակոշիկ*, շնել *գբամելը*, շմալ *սպիտակ խառնելը*, շմրլոց *առապրակ*, շմորիլ *գշխոմիվելը*, շնորհել *գշողոքորթելը*, շնորհ, շնչել, շշի *ստյուքարը ծառը*, շշունչ, շշուկ, շչել, շռայլ, շռաայ *տեղը բռնվածը*, շռինդ, շռնչել, շռնին, *գջրամանը*, շռնչաանե, շրեշ, շրշիւե, շրռոշակ *գրևթանակապը*, շրջիլ, շրտնուլ:

3. Ի բաղաձայնը բառի սկզբում և միջում իր հնչումը գրալի կերպով պահում է, բայց բառավերջում ր բաղաձայնից հետո շատ տկար է հնչվում, այնպես որ տղան գրիչները հաճախ չեն գրում, ինչպես աշխարհ, հանապարհ և այլն:

4. ղ բաղաձայնը ամեն տեղ իր ճիշտ հնչումը պահում է, բայց թեև բաղաձայններից առաջ հնչվում է խ: Ինչպես՝ թուղթ, աղքատ, քաղցած, միևնույն անդամ եղբայր, աղբյուր, որոնց մեջ բ թեև հնչվելով, նախորդ ղ ձայնը դառնում է խ:

5. Ընդհանրապես խոսելով, երբ բ-ից հետո գալիս են բ, գ, դ, ձ, ջ խրխռուն բաղաձայնները, այս վերջինները հնչվում են թավ, ինչպես՝ նրգ, նրբ, բորբոքել, արդեն, նրդիկ, որձ, որջ, ժողովուրդ և այլն: Կան մարդիկ, որ այս դեպքում պալթականի ճիշտ հնչումը

պահում են, օրինակ, հնչում են ժողովուրդ (ժ) և այլն։ Այս անսովոր հնչման սկիզբը դրել է «Մշակ»-ի խմբագիր Դրիգոր Արծրունին, որ հայերեն չիմանալով և հայերենի խմբագիր դառնալուց հետո սկսելով սովորել, ուղղագրությունը ճիշտ պահելու համար, առաջին դասից սկսել էր հնչել վերի ձևով։

6. ւ բաղաձայնը անկախ չէ, բառասկզբում չի գտնվում և նրա միջնադարյան բանաստեղծները սարքել են իւր, ւովիւ և նման բառեր, այդ նրա համար է, որ ոտանավորի մեջ ւ նախաձայնով տողեր ունենան։ Բառամիջում ւ գտնվում է միշտ երկու ձայնավորի միջև և կարդացվում է վ. կարող է երբեմն գտնվել բաղաձայնի և ձայնավորի միջև, բայց դարձյալ կարդացվում է վ. ինչպես՝ աղւոր (արևմտահայ բարբառով), իսկ արևելահայ բարբառով կրավորական բայերի մեջ հաճախ դրում էին հաւաքւել, երգւել և այլն, փոխանակ գրելու ու. այսպես նաև երւացիդ, Աստւած և այլն։ Բառավերջում ունենք միշտ ձայնավորից հետո, ուր հնչվում է նուշնպես վ. ինչպես՝ հաւ, ցաւ, եղաւ, թիւ, ասիւ, հովիւ։ Այս դեպքում ւ ձայնախումբը երկչիմի է. եթե նա գրտնվում է մի բաղաձայնից առաջ, որ արմատին է պատկանում, հնչվում է ինչպես ֆրանսերեն u և գերմաներեն ü. ինչպես՝ ձիւն, սիւն, արիւն, արդարութիւն, հիւր, բիւր, գիւղ, ճիւղ և այլն։ Իսկ եթե վերջին բաղաձայնը արմատական չէ, այն ժամանակ ւ կարդացվում է իվ. այսպես՝ թիվն (= թիվը), արծիւս (=արծիվը), տնիւդ (=տնիվըդ)։ Նկատելի է, որ այս վերջին պայմանում գործ կարող ենք ունենալ ս, դ, ն հոդերի կամ հոգնակի հայցական ս վերջավորության հետ։ Այս հանգամանքը շփոթության է առաջացնում ընթերցման մեջ և ընթերցողին է մնում իմաստի համաձայն որոշել ընթերցումը։ Այսպես, թիւն եթե նշանակի «թիւնն», պետք է կարդանք թին, իսկ եթե թիւ (թիվ) բառի որոշյալն է, կարդում ենք թիվը։ տիւն եթե տ տառի անունն է, կարդացվում է տին, իսկ եթե տիւ (տիվ) «օր, ցերեկ» իմաստով է, կարդում են տիվը։ Այս շփոթության պատճառով է, որ Ալիշանը իր Հայբուսակում մի բառ մեկնել է «սէգ, կնիւն», մինչդեռ, ինչպես Նորայրը իր Հայբուսակի քննադատության մեջ ցույց է տալիս, այս վերջին բառը պետք է կարդալ կնիւ-ն, որով հասկացվում է «ճանճը» և բուլսը դառնում է ճանճ։ Դրիգոր Մագխասրոսի «Մրգուզ փանաք» (Հանդէս ամսօրեայ, 1923, էջ 241—256) ոտանավորի մեջ 14-րդ տողում կարդում ենք. Իւղագործ կիւդ կածճակաճ, որի կիւդ բառը երկար ժամանակ կարդում էի կնդ, և ամենևին իմաստ չէի ստա-

նամ, բայց հիմա կարդալով կիւ-ը «խնձոյս, ուսայս խնկական խմասար. խղազդած կիւ ասելով հնդինակը հասկացել է «թանաքս»:

7. Բառի վերջում գտնված բ, գ, դ, ձ, ջ թրթռան բաղաձայնները ոչխարի լեզվի մեջ հնչվում են թույլ: Սրա հետքը ժողովրդական բարբառներն են. արևմտյան դրականը արդեն նոր ատոդարձության համաձայն այդպես էլ պիտի հնչեր, բայց արևելյան դրականն էլ մեծամասամբ նույն ձևով է կարդում. այսպես բ.— կարագ, մարագ, պատարագ, սարյաւագ, դոգ, հոգ (հոգս), շոգ...

դ.—օդ,

բ.— Ցակար, Յար, Սեյար, Ինբար:

ձ.—ամձ,

ջ.—աջ, առաջ, մեջ:

Թրթռան հնչյունը պահված է շատ հազվադեպ դեպքերում, և այն էլ հատկապես այն բառերի մեջ, որոնք ժողովրդի մեջ չեն մտած. մոզ, բազ, յոդ, քաջ, աննման, անազ... Այս բառերի ընթերցումն էլ հաճախ տատանվում է: Այս բանը այնպես է դարդացել արևմտահայերի մեջ, որ մինչև անգամ հին, փափագ բառերը միշտ դրում են հնչ, փափաչ, ինչպես դնում ենք նաև միշնադարյան ձեռագրերում, որ կա նաև արուզ=արուչ:

8. Ձայնափոխությունը բառավերջից սկսելուց հետո անցել է նաև բառամիջին. չկա մեկը, որ խազավոր բառը խաչավոր չհնչի. շատերը դրում են հաչել և հաջել դրելթյան մասին դաղափար էլ չունեն. այսպես նաև խարել և խարերայ. որոնք հնչվում են խափել, խափեփա:

Դարձյալ ավելորդ է խոսել արևմտահայ դրականի մասին, որ բոլոր բառերի դրելթյան միջին բաղաձայնը մուռավորապես կարդացվում է թույլ, ըստ արևմտյան տատադարձության:

* * *

Այժմ առնենք բարբառների ձայնական դրելթյունը: Այստեղ չենք կարող բնականաբար վերցնել յուրաքանչյուր բարբառ առանձին-առանձին և նկարագրել նրա ձայնական դրելթյունը: Դա ընդհանուր բարբառագիտության և մասնավոր ուսումնասիրության գործն է: Մենք այստեղ կհավաքենք և կդասավորենք այն բոլոր ձայները, որ այս կամ այն բարբառի մեջ գոյություն ունեն. ուրիշ

խոսքով կտանք բոլոր բարբառների ձայնական դրությանն համապատկերը։

Ձայնավորներ *(17 հատ)*.

ա, ա̈, ա̄, ա̆, է՝, ը, ը̄՝, ը̈, ըէ, ի, ի՝, օ, ու, իւ, էօ, էօ՝.

Երկբարբառներ *(21 հատ)*.

յ կիսաձայնով կազմված.

աճուն—ıè (իէ′=ե).

նվազուն—a͡ı, ě͡ı, ə′͡ı, ıı̆, ú͡ı, ó͡ı (աե, էե, ըի, իե, ուի, օի).

ւ կիսաձայնով կազմված.

աճուն—uă, uè, ùo, uŏ (ուա, ուէ, ո, ուէօ).

նվազուն a͡u, ıu, ú͡o, ŏ (աւ, իւ, օւ, էօու).

Երկու ձայնավորով կազմված.

աճուն əé (ըէ′).

նվազուն—ă͡ə, ía͡, ŏə, ŭo, ŏə (?ա, իը, էօը, ?իօ, օը).

Նուաբարբառներ *(3 հատ)*.

ieu (և), uoı (ույ), ŏuo (էօույօ).

Բաղաձայններ *(49 հատ)*.

բ, բ՝, պ, փ.

գ, գ՝, կ, ք.

գ՝, գ՝՝, կ՝, ք՝.

դ, դ՝, տ, թ, տ՝.

ձ, ձ՝, ծ, ց.

ջ, ջ՝, ճ, չ.

ղ, ս, ժ, շ.

խ, ղ, ղ՝, հ, յ, հ՝, հ՝, ՛

լ, ր, ռ, լ, լ՝, լ՝, լ, ւ.

վ, ֆ, մ, ն.

Մի քանի բացատրություններ այս ձայնների մասին.

Ձայնավորներից ա̈ (ă) *միջաձայն է* a *և* e *ձայնավորների.*— ա̄(ā) *միջաձայն է* a *և* o *ձայնավորների, որ գտնվում է վանա բարբառում.*— ա̆ (ă) *ընգալին* a *ձայնավորն է, որ գտնվում է հաճախ Ասլանբեգի ենթաբարբառում և Պոլսի բարբառում (մա̆նր, ծա̆նր, սա̆նր).*— է՝=*բաց* é *ձայնավորն է, գտնվում է Ասլանբեգում, Սեբաստիայում (օրինակ՝ չէ՝>չե̄).*— ը՝=*բաց աստիճանն է* ə *ձայնավորի, որ գտնվում է Զեյթունի գավառաբարբառում.* ը̈ *և* ա *ձայնավորների միջին աստիճանն է կազմում (բարբառագիտությանս մեջ, էջ 200, դրած եմ* ը *ձևով).*— ը *ներկայացնում է փակ* ə, *գրե-*

[illegible] տանելին և գոյական է. Մատրալի բարբառում. [illegible] Հարավային բարբառների մեջ հնչյան է. օրինակ՝ մրկս «մխա», վրկվ «վիզ». կասկածում եմ, որ լինի [illegible] ավելի հին ձայնավոր է (տասն և տարբեր է [illegible] հիմքից). [illegible] (լատ. i) ձայնավորն է, որ հատուկ է Մատրալի բարբառին և [illegible] ձայների մեջին տատիանն է, որ անվարժ ականջը երեմն [illegible] է լսում և երեմն ի—է՝—ե (լատ. e). Հատուկ է Վանա բարբառին, արտասանվում է մոտավորապես ëœ (ö) [illegible] նման և կարող է երկարաբառ էլ համարվել. նրա ձայնն ավելի լայն առնելով ունի Ատրպատկանի գավառականներ, որ ավելի öø (öœ) հնչման ունեն:

Երկրաբառաններդ գոյական են գլխավորապես Ախալցխայի, Մատրալի, Սիրխալի և Անախտի բարբառներում: Սրանց հնչման նկատմամբ ստանձին կարիք չկա, որովհետև գրեթե ամեն տեղ հանդիպում է նաև բարբառներդ գոյական ենք [illegible] Անախտի գավառականում. համ. քուշ՝յնն ի «քունն է», յնուտքը (yնuտ՝ə) «լսիր», [illegible] տառերի մեջ յ բաղաձայն չէ և երկրորդը երկրանդ չէ: Հատուած է ոտքն ու (jeu) Մատրալի բարբառի ան (sieu) բառի մեջ:

Բաղաձայններից բ, գ, դ, ձ, ջ, պարզ [illegible] են, բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛ շնչեղ [illegible]. մյուսները պարզ խուլ և շնչեղ խուլ (հուլ). շնչեղ [illegible] ձայները գոյական են հայ բարբառների ամենամեծ մասի մեջ. ալսպես Երևանի, Նոր-Ջուղայի, Կարինի, Մուշի, Ագուլիսի, Ասլանբեկ-Լոռնկալի, Շուշիո-Կարաճիսարի, Համշենի, Ասալջարի, Կիլիկիայի, Սվեդիայի (Մատա-լևան), Արարկիրի, Ակնա, Սերաստիայի, Նիկոմիդիայի, Մատրալի բարբառներում: Կոկորդային բաղաձայնների քամնոտած ձևերն են ներկայացնում դ՛, գ՛, կ՛, ք՛, որոնք (ամբողջ շարքով կամ մասամբ) գոյական են Վարարդի, Շամախիի, Ագուլիսի, Վանա, Տիգրանակերտի, Ասախտի, Մարաղայի, Խոյի և Մատրատի բարբառների մեջ՝ ա, (ɛ) ձայնը պատահում է Ծղնայի գավառականում (ինչպես՝ ա,նել «գնել»):

ղ՛ կոկորդականը գոյական է Թիֆլիսի, Ատրպատկանի, Ղզլարի, Տիգրանակերտի, Սվեդիայի բարբառներում, նաև Ագուլիսի բարբառում, բնդհանրապես սուր բառերի մեջ, բայց նաև բնիկ հայ բառերում. ինչպես՝ Տիգրանակերտի բարբառով՝ աղ՛բար < արաբերեն aqrab «կարիճ», ղ՛ալը < արաբերեն qalb «կիդա», ղ՛ուղ՛ղ՛ու «կիսա», Տրիզոնի բարբառով՝ ղ՛ավա < արաբերեն qahva «սուրճ», վուրդ՛ացց

«որտեղից», հաղ'ագ «այստեղից», Աստրախանի բարբառով՝ ղ'ուվար < թուրքերեն, արաբերեն quvvat «ուժ», Ղզլարի բարբառով՝ Ղ'զլար (հենց քաղաքի անունը), Ոգմիի բարբառով՝ լօղ'անալ «լողանալ», բիւղ' «բողկ», Սվինդիալի բարբառով՝ ղ'ըրզիլա «գործելի, ածուխ», մեղ' «մեկ»։

յ թրթռուն ի ձայնն է, որ փոխանակում է հին հայերենի բառասկզբի յ ձայնը և գտնվում է ղանազան բարբառների մեջ. այսպես՝ Նոր-Ջուղայի, Կարինի, Մուշի, Շապին-Գարահիսարի, Արաբկիրի, Սեբաստիայի բարբառներում։ Նույնիսկ գրական լեզվով խոսելու ժամանակ, այս բարբառի մարդիկ սկզբնատառ յ-ն արտասանում են յ, որ բոլորովին տարբեր է ի ձայնից և դրա համար էլ, մէջ միայն չեն շփոթում ի և յ իրար հետ, այլև այս պատճառով հակառակ են ուղղագրական բարեփոխության մեջ նախաձայն յ վերածելու ի-ի։

ի՝ ձայնը, որ երբեմն գրում եմ յի կամ ի՝ ձևով, գերմաներեն ich ձայնի հնչյունն ունի, միայն նրանից ավելի նուրբ. գըտնըվում է Ղարաբաղի և Վանի բարբառներում (ինչպես Ղարաբաղի բարբառով՝ ըրիյիճակ «արեգակ», Վանա բարբառով՝ այիլեօր «աքլոր»)։

ի՛ և ՝ արաբերեն շ և ջ ձայներն են, որ գիտի Տիգրանակերտի բարբառը արաբերենից փոխառյալ բառերի մեջ. ինչպես՝ ՝ադ՛րաբ < արաբերեն ՝aqrab «կարիճ», ՝եօմր < արաբերեն ՝ömr «կյանք», զա՛թար < արաբերեն sa՛tar «ծոմբրին», հ՛ալվա < արաբերեն halva «հրուշակ», ՝ուննաբ < արաբերեն ՝unnab «հունաբ»։

ļ ներկայացնում է խուլ l, որ գտնվում է Ալաշկերտի ենթաբարբառում՝ քրլերենից փոխառյալ բառերի մեջ միայն։

լ՝ ներկայացնում է փափուկ կամ քմային l՝, որ գտնվում է Նոր-Ջուղայի և Տիգրանակերտի բարբառներում. օրինակ՝ Նոր-Ջուղայի բարբառով գ՛լ՛ուխ «գլուխ», թել՝ «թել», Տիգրանակերտի բարբառով՝ ուլ՝ «ուլ», քլ՛ուխ «գլուխ», փուլ՛ք «բոլլք», լ՛վոճոլ «լվանալ» և այլն։

ֆ միջին հայերենի և նոր բարբառների մեջ առաջացած մի ձայն է. հին հայերը չունեին այս ձայնը, և երբ կարիք էր լինում առառաբձել օտար ազգերի ֆ ձայնը, հնագույն ժամանակ դնում էին ի, իս. այսպես՝

պարսկերեն frasax > հրաստախ (հետո՝ փոխառյալ).
» framāna > հրաման.

» lazaraft > *Հոպարատախտ.*

» ? + ufta > *Համանչատախտ.*

Ավելի հետո սկսեցին դնել փ. ալտիւս պարսկերենից, ասորերենից և հունարենից փոխառած են հավելուած փ. օրինակ՝ պրսկ. farman > վրաց. «հրամանս», farzand > վրացական «պատկեր» և այլն։

*Հավելուածի հետ նման պատկերն են ներկայացնում ալտայական լեզուները. հին ալտայերենը չուներ փ ձայնը և ասոր տղերքի նման հնչյունը ներկայացնում էր p տառով. օրինակ՝ գերմաներեն folk > հին ալտայերեն *prukъ։ Հին ձեռագիր Ավետարաններում մեջ պահած ենք հին ալտայերեն Pilipъ, parisěi և այլն փոխառյալ ներկայ. փարիսեցի։ Ավելի ուշ սկսում է երևալ փ ձայնը թե՛ սուր տղերքից փոխառությամբ և թե՛ ներքին ձայնափոխությամբ. ալտայան թյուրքերենից փոխառությամբ կազմում են սերբերեն fener (փեներ), fermen (մի տեսակ բահիկ) և այլն. բոլոր սերբ բառերի մեջ xv, pv պահում են ֆ. ինչպես՝ xvala > fala, xvatati > fatati, upuvati > upvati > ufati և այլն։ Բայի սրանից, իսկ ձայնների մոտ էլ v դարձավ f. ինչպես՝ սերբական բուլղարներից ôfčē mesо «ոչխարի միս» (փոխառյալ ovčē-ի (Кульбакинъ, Серб. Яз., 33)։*

Բաղաձայնները նոր բառերում։

Երբ Ռուսլոյի հնարած ձայնախտական գործիքներով քրոնաֆլուններ եմ կատարել Փարիզում, նրա աշխատանոցում, 1897—1898 թվականներին։ Նախ քննել եմ իմ ձայնը, բոլոր տեսակի հնչյուններով։ Այս աշխատությունս մնում է անտիպ։ Երկրորդ՝ քրոնաֆլուն եմ տվել հավելուածի 15 նոտատիճան պալթյականները (բ, պ, դ, տ, ջ—ճ, կ, ա, ձ, ն—ծ. բ, բ, գ, ջ), ճշտիվ այն ձայները, որոնք վնճի ասորիա են պատճառ մեր մեջ։ Քննաֆլունս կատարել եմ այն ժամանակ Փարիզում գտնված մեկ ուսանողների վրա.

1. Ինքս, Հրաչյա Աճառյան, ծնված Պոլիս, 1876 թ.

2. Ալեքսանդր Նալբանդյան, ծնված Ալանբեգ, 1873 թ.

3. Վահան Տեր-Պողոսյան, ծնված Նոխի, 1872 թ.

4. Նիկողայոս Ավշարյան, ծնված Շուշի, 1872 թ.

5. Տիգրան Դիմաքսյան, ծնված Մուշից քիչ հեռու Կարնեն գյուղում, 1878 թ.

6. Գևորգ Մկրտչյան, ծնված Ալեքսանդրիա, 1872 թ.։

Աշխատությունս, երբ Ռուսլոյի և Մելիի նկատողություններով միասին, կազմում է ընդամենը 20 էջ և տպված է նախ

„La parole" *թերթում (1909 թ., էջ 119 և շար), ուպա առանձին տետրակով։ Կարևոր են ալստեղ 4 լուսատիպ նկարները, որոնք ներկայացնում են հիշյալ 15 բաղաձայնների արտասանության ժամանակ կոկորդի և բերանի դերը։*

Այս նկարների քննության մեջ դրաղվել է Մ. Գրամոնը (MSL, № 20, էջ 254—257), *որ տալիս է հետևյալ եղրակացությունները.*

1. Սերաստիայում և Ալանբեղում շնչեղ խուլերը թույլ չափով են շնչեղ, նրանց մեջ խուչակի թրթռումները սկսում են պայթյունից 2—4/100 վայրկյան հետո, իսկ հին թրթռունները դարձել են խուլ, կան և թեթևակի շնչեղ, որոնց մեջ խուչակի թրթռումները սկսում են 1—2/100 վայրկյան ուշ պայթյունից։ Այս տարբերությունը չափազանց փոքր է, այնպես որ այդ երկու կարգի ձայները միշտ էլ պիտի շփոթվեն իրար հետ։ Կա նաև մի ուրիշ տարբերություն. այդ այն է, որ շնչեղ խուլերի պայթյունը թվում է թե երբեմն մի քիչ ավելի ուժեղ է, քան նախկին թրթռունների պայթյունը։ Այս էլ աննշան տարբերություն է։ 2. Հին հայերենի խուլերը դարձել են ֆրանսիական տիպի թրթռուն, որոնց մեջ խուչակի թրթռումները սկսում են պայթյունից 2—8/100 վայրկյան առաջ։

Իմ գծած ձայնանկարներից երևքը արտատպել է նաև իմ ուսուցիչը՝ ձայնագետ Ռուսլոն, իր նշանավոր աշխատության մեջ („Principes de phonètique expèrimentale, Paris, 1902)։ *Դնում եմ այդ առթիվ գրած իր բացատրությունը։*

«*Այս գծագրերը* (tracé) *ունեն երկու դիծ. վերևինը ներկայացնում է շունչը, ներքևինը՝ խուչակը։ Մեղ հետաքրքրում է այն րոպեն, երբ խուչակն սկսում է գործել և բաղաձայնը պայթում է. այս երկուսը որոշվում են մեր կազմած ուղղահայաց գծերով. կետադրյալ գիծը ներկայացնում է առաջին վայրկյանը. ամբողջական գիծը՝ երկրորդ վայրկյանը։ Երբ երկուսը միաժամանակ են, գծել ենք միայն կետադրյալ գիծը։ Տեսնում ենք, որ փ, ք, թ, ց, չ տառերը (երկու վայրկյաններ, այն է պայթյուն* (explosion) *և խրոչակի գործունեության սկզբնավորության հաջորդական մոտեցումով) վերածվել են պարզ խուլի (պ, կ, ա, ծ, ճ)։ Վաղնջական (հնագույն) տիպը ներկայացնում է Նուխին, հետզհետե մեղմանում է Շուշի, Սերաստիա, Ալանբեղ, Պոլիս, Մուշ։ Իսկ բ, գ, դ, ձ, ջ թրթռուններր լիովին թրթռուն են Նուխիում, այնքան որ խուչակը բաղաձայնի խցումի ժամանակ էլ է թրթռում։ Սակայն աստիճանաբար թրթռումը պակասում է Մուշ և Շուշի, և դառնում է բոլորովին*

խոլ՝ իրարմէ ժամանակի, մէջտեղ տարբերութեամբ։ Այդպէսով առաջանում է մինչև անգամ Մաքի մի տիպարում գ, ծ, ջ ձայների պալթման վրա (explosion), ինչպիսի և Անգաստիալի և Ալանդերի բոլոր խրխոտաձայնների վրա։ Այսպիսով, խրխոտաձայները ամբողջապէս վերածվում են խոլերի։

Փոխադարձաբար գ, կ, տ, ծ, ճ խոլերը լիովին խոլ են նախնում, բայց Մաքայում ունեն խրխոտ պալթյուն (բայն ժ, ճ-ից), Շուշում՝ բայն ճ-իրը Ագուլիս էլ խրխոտ է, դրանք մոտաւոր, Ալանդերում, իսկ Անգաստիալում կատարելապէս (բայն ծ, ճ-իրը)։ Այսպիսով նկատում ենք, որ բարձաձայնների դրութեան կարգերի մէջ ձայնախախտիչներ առաջին է։

Պարտաւ, որ պարսիկ մշտապէս նախդիրում է, խրխոտաձայները հետևեալ դրութեան մէջ են դնում։

Հայերէնի խրխոտ բարձաձայնների նկարագիրը վերջին անգամ տալիս է Ռուսլան (Principes, II, 887—890)։ Նա բնորոշելիս խոսակցական՝ շնչեղ խրխոտ բարձաձայնների օրինակներ գտնում է նաև բանաստեղծների մեջ, որ ունի թե՛ շնչեղ և թե՛ պարզ խրխոտ բարձաձայներ, բայց ավելի լավ է իմանալ, որ խրխոտ բարձաձայները իսկապես շնչեղ են։ Նրանք միևնույն ժամանակ իսկապես խրխոտ են և նրանց խրխոտությունը շարունակվում է նաև իրանց ժամանակ, նրանց պալթյունն էլ ուժեղ է և համեմատելի խրխոտների, երբեմն անգամ ավելի և հաջորդ ձայնավորից էլ տարբեր։ Ուշադրութեան է արժանի նաև կատարյալ շնչեղ խոլ բարձաձայները։

ԳԼՈՒԽ ԺԱ

ՁԱՅՆԱԿԱՄԲԵՐ ԵՎ ՎԱՆԿ

Չափազանց քիչ են այն դեպքերը, երբ մի ձայն մի լեզվի մեջ առանձին ու անկախ գործածվի. ինչպես ա՞, օ՞, ու (և իմաստով), ի՞՞՞ (նոր Նախիջևանի հայոց բարբառով նշանակում է «մլիկ, զարմանալի բան, ամենևին չէի սպասում»), ա՞ա՞, շ՞շ՞ «լռեցեք», խ՞խ՞ (վանա բարբառով «այո, հա»), է՞՞ (Պոլսի հայոց բարբառով «բավական է, կօգտնե»): Ընդհանրապես առնվազն երկու ձայն (ինչպես ձի, իմ, քո, դու, լու, ձու, թի) և կամ էլ ավելի շատ ձայներ միանալով կազմում են բազմատեսակ ձայնախմբեր, որոնք ձևացնում են բառերը և նրանց միջոցով էլ պատկերացնում մեր մտածողությունը:

Սակայն մի ձայն արտադրիչ դործարանների բավական քայլ գործողություններն ալդ ունեն. նույնիսկ ամենատարրալ ձայնը կազմվում է դործարանների լարումով, կացքով ու էջքով: Երբ ձայնը առանձին ու անկախ է, այս երեք գործողությունները բնականաբար անխափան կատարվում են. իսկ երբ երկու ձայն հաջորդում են միմյանց, գործարանները ժամանակ չեն ունենում առաջին ձայնի էջքը և երկրորդի լարումը ամբողջովին կատարելու, այսինքն լիակատար հանգիստ առնելու կամ որ նույն է՝ իրենց անշարժ վիճակը վերստանալու, այլ բռնելով ամենակարճ ճանապարհը՝ առաջին էջքը խառնում են երկրորդի լարման: Դործողությունների այս անընդմիջումն է պատճառ, որ խոսակցության մեջ ձայնները անջատ-անջատ չենք ըմբռնում, այլ բոլոր ձայնախմբերը ընդունում ենք իբրև որոշ ամբողջություն:

Ակտիվով հայերենական ձայները իրար վրա անցնում են փոխազդում ազդեցությունն և պատճառ են դառնում փոխադրված ձայնափոխությանը։

Այս կարգի ձայնափոխություններն, որոնք ազդում են ձայնների տարման ու կյանքի վրա միայն և դրած չունեն նրանց կացքի հետ, պատահում են ամեն մի ձայնախմբի մեջ։

. . .

Բայց կան դեպքեր, երբ հայերենական ձայների ազդեցությունը ներգործում է նաև կացքի վրա։ Առաջին դեպքում ձայնները իրենց հրանգը չեն փոխում, բայց այս երկրորդ դեպքում փոխվում է նաև ձայնի հրանգը, այսինքն ձայնը ինքը տարբերվում։

Սրանք կոչվում են համանմանություն (assimilation) և տարանմանություն (dissimilation)։

Ամեն ձայն անի իր սրաշ բարձրությունը, ուժգնությունը և տևողությունը, որոնք տարբեր են մի կողմից խոսակցության ասնի և մյուս կողմից լարատանչյուր լեզվի ոսկերական օրենքների։ Նրանց հետ կապված է նախադասության ընդհանուր ոճը։

Ձայնարանության դերն է ստամոնասիրել այս բոլոր հարցերը։

Երկու ձայնների կապակցությունը կարող է ներկայանալ մեզ 4 ձևի տակ.—ձայնավոր ձայնավորի հետ, բաղաձայն ձայնավորի հետ, ձայնավոր բաղաձայնի հետ, և բաղաձայն բաղաձայնի հետ։

Երբ երկու ձայնավոր դանվում են իրար մոտ և առանց իրար խառնվելու՝ պահում են իրենց անկախությունը, առաջանում է հրանջ (hiatus) կոչված երևույթը, ինչպես՝ կաուչուկ, կաոլին, կաիաո, բաոս և այլն։ Ամենը կարծում են, թե հրանջը աննպատակահարմար բան է և այն լեզուները, որ անեն հրանջ, աննպատակահարմար են։ Այս կարծիքը սխալ է։ Կան նպատակահարմար ճանաչված դանազան լեզուներ, որոնց մեջ հրանջը դոյություն ունի. օրինակ, իտալերենում uomo «մարդ», figliuola «աղջնակ»։ Պրովանսալը, որ ֆրանսերենից ավելի նպատակահարմար լեզու է, ունի հրանջ. ինչպես, paiolo (կարդա՝ pa-i-o-lo) «ոսկու փոշի», parpaioun (կարդա՝ par-pa-i-oun) «թիթեռնիկ»։ Հրանջը ձանձրալի և անախորժ է այն ժամանակ, երբ հաճախ է կրկնվում։

Շատ լեզուներ հակառակ չեն հրանջի. այսպես, օրինակ, ֆիններենը, ուր դանում ենք tuuli, pii, pyytää և այլն ձևով բառեր. հունգարերենում՝ tiéltek «ձերոնք». պորտուգալերեն elle não o e «նա չէ». շվեդերեն treennig, oodlad, sjuuddiy և այլն։ Ուրիշներ

աշխատում են խուսափել այս երևույթից զանազան միջոցներով։ Այդ միջոցները հետևյալներն են.

1. Ամփոփում (contraction).—Երկու անկախ ձայնավորները վերածվում են մեկի, որ սովորաբար լինում է երկար, բայց այն լեզուների մեջ, ուր երկար ձայնավորներ չկան, բնականաբար ձայնավորը կարճ է լինում։ Ամփոփման երևույթը և այն էլ երկար ձայնավորով՝ շատ սովորական է հունարենի մեջ. օրինակ՝ αο > ω ᾳα > ᾱ, εο > ου և այլն։ Այս մասին շատ խիստ է ատտիկյան հունարենը, որ ոչ մի հորանջ չի թողլ տալիս (V. Henry, Précis de gramm. comp. grec et latin, 85)։

Հին հայերենի մեջ ամփոփման երևույթը սովորական է ի հանգող բազմավանկ բառերի բարդութեան մեջ, երբ իա դառնում է ե. ինչպես՝ բարի-արար > բարերար, գինիա-գործ > գինեգործ, այգիա-պան > այգեպան, ուղերկութիւն < ուղարկութիւն «հուղարկավորութիւն» (Նորագյուտ Երկրորդումն մնացորդաց, ԺԲ 13)։ Այս օրենքը, ինչպես հայտնի է, գործում է միայն բազմավանկ բառերի մեջ և միավանկները պահում են հորանջը, ինչպես՝ ձիապան, ձիաւոր, միայն, լիամագիլ և այլն։ Սակայն հնագույն հայերենի մեջ օրենքը ընդհանուր էր և միավանկներն էլ ենթարկվում էին նրան. ինչպես՝ մեռաւսաց փոխանակ *միաւսաւսաց, նույնպես *միակին > մեկին, *միակնել > մեկնել և այլն։

Երբ ամփոփումը կատարվում է ձայնավորով հանգող մի բառի և ձայնավորով սկսվող հաջորդ բառի միջև, կոչվում է խառն (crase)։ Այս երևույթը սովորական է սանսկրիտի մեջ։ Այս լեզվի մեջ ամեն բառ, որ վերջանում է, օրինակ, a ձայնավորով, եթե պատահի մի ուրիշ բառի հետ, որ սկսվում է i ձայնավորով, կազմում է խառնուրդ և a—i դառնում են ē։ Եթե հաջորդ բառի նախաձայնը u է, խառնուրդը տալիս է ō. այսպես նաև a և e տալիս են āo. օրինակ՝ rāja—indra > rājendra, hita-upadeçah > hitopadeçah և այլն։ Իսկ նույն երանգի երկու տարբեր ձայնավոր գումարվելով տալիս են համապատասխան երկար ձայնավոր. այսպես ati iva > ativa, rājā āsīt > rājāsīt, su uktam > sūktam և այլն։ Վերջապես i և u գտնվելով հաջորդ տարբեր երանգի ձայնավորի մոտ, դառնում են y, v. օրինակ iti āha > ityāha,

Հունարենի մեջ ունենք καν փոխանակ κἀἰᾶν և այլն, նոր հունարեն υἀ ἔκω «ունենամ», θἀκω «կունենամ» և այլն։

Հայերենի մեջ խառնուրդը ընդունված երևույթ չէ և երկու անկախ բառ իրենց ինքնուրույնը պահում են այս պարագային

*ինչպիսի՝ Բարիթարաներ. Չի մրուճիմ, Ասանդ մարդոց և այլն. Միայն ի նախդիրն է, որ ձայնավորի մոտ դառնում է յ ինչպես՝ *ի անուն > յանուն։*

2. Կրճատում (elision). — Երբ ձայնավորով վերջացող մի բառ դառնում է ձայնավորով սկսվող մի բառի մոտ, առաջին ձայնավորը ջնջվում է։ Այս երևույթը սովորական է հատնարևին, բառիններին և հաճախական արդի ֆրանսերենի մեջ. օրինակ, հատնարևն ծուռ ջնար > ծուռ՝ ջնար, ֆրանսերեն la armée > l'armée, Jeanne de Arc > Jeanne d'Arc և այլն, ջնջվող ձայնավորի տեղ դնելով միշտ ապոստրոֆ կամ մակերևույթ (apostrophe)։

Հայերենում կրճատումը տեղի է ունենում միայն երկրորդական բառերի մեջ և ավելի հաճախ բարբառներում. համմա. կու ասե > կասե, կը ուտեմ > կ'ուտեմ, մի՛ բանր > Պոլսի բարբառով մ'բ'անր, մի՛ բներ > մ'բ'ներ, մի՛ երթար > մ'ե'րթար, մի՛ ուտեր > մ'ու'տեր. չի՛ անում > Դեմ. չա'նում, չի աում > Դեմ. չա'ում. մեկ մը ալ > Պոլսի բարբառով մեկ մ'ալ, նոր նախիջևանի բարբառով՝ մհմալ, (պի)տի ասեմ > Մակաց բարբառով ասամ, բո՛ղ ասե > Հաճընի բարբառով բասե՛, բո՛ղ երթայ > բո երբա > Հաճընի բարբառով բերգաս։

Հին հայերենի և շատ անգամ արդի գրականի մեջ այս երևույթը չի նկատվում. ինչպես գրաբար մի՛ երկնչիր, մի՛ ուսուցիք, աշխարհասարս մի՛ ասիք, մի՛ ուտիք, պիտի ասեմ, պիտի անեմ, չի անում, չի ուտում, բայց կը մտանիկի համար կրճատումը ընդունված է ամեն տեղ։

Գրաբարի մեջ դանվող մյուս օրինակները պետք է ջնջել. ինչպես՝

Բուզանդ, 143. Քանդ՝ ի մի որ եղեն ճակատին (Պատկանյան, 118, Բանդի ի մի որ).

Բուզանդ, 252. Սամոլը մ՝ և զգլխով պատիւ գարգմանակ.

Բուզանդ, 249. Անպուհ մ՝ ի Մամիկոնեան տոհմէն։

Շատ հաճախ դործածական ստուգյանց մեջ անկախ բառի վերջին ձայնավորն էլ կարող է կրճատվել. ինչպես՝ բար՝ իրիկուն, բար՝ աչողում։

Պատահում է, որ երբեմն փոխանակ առաջինի, երկրորդ բառի նախաձայն ձայնավորն է կրճատվում. ինչպես՝ սանսկրիտ te abruvan > te 'bruvan, հունարեն ὁ χαθὲ փոխանակ ὁ ἀχαθὲ ասվ սիրելիս։ Նույնպես ἐλα 'ὧ տարի այստեղ փոխանակ ἐλα ἐδῶ։ Այս պարագային կրճատումը կոչվում է aphérèse (հապավում)։

3. Ներմուծում (épenthèse).—*Երկու ձայնավորների միջև իբրև հավելված մտնում է մի նոր բաղաձայն։ Ճավալերենի մեջ ներմուծվող բաղաձայններն են* h, y, w *(առաջինը* a*-ից հետո, երկրորդը* e*-ից հետո, երրորդը* u*-ից հետո) (տե՛ս* Bohatta, Gramm. Javan., 16)։ *Բայց կա նաև* k *և* n *ձայնների ներմուծումը ձայնավորով վերջացող մի բառի և ձայնավորով սկսվող մասնիկի միջև (անդ, էջ 18)։ Դրավիդյան լեզուների մեջ հորանջը կանխելու համար դրվում են* y, v, n *բազաձայնները. հատկապես* v *դրվում է* a, o, u *ձայնավորներից հետո,* y *դրվում է* i, e *ձայնավորներից հետո, նույնիսկ երկու անկախ բառեր, որոնք հաջորդում են իրար, հետևում են ներմուծման այս կանոնին, եթե առաջինը վերջանում է ձայնավորով և երկրորդը սկսվում է ձայնավորով* (Caldwell, Drav., 174—180)։

Ներմուծման երևույթը շատ սովորական է մեր մեջ, գոնե արդի լեզվով. այսպես, բոլոր զույգ ձայնավորների միջև մենք մուծում ենք մի կիսաձայն յ. *ինչպես՝* եի>եյի, եակ>եյակ, միայն> միյան. միոյ, միոջ, միում>միյո, միյոջ, միյում, միւս>միյուս. Ֆրանսիա *հնչվում է* Ֆրանսիյա, *սեռական* Ֆրանսիյայի, *ներգոյական* Ֆրանսիյայում *և այլն։ Այս* յ *ձայնը դրության մեջ չի մտնում, ըստ որում հաճախ հնչումն էլ պարտադիր չէ, կամայական է. այսպես հնչում ենք ուտելու յե, երթալու յե, բայց ավելի՝ ուտելու է, երթալու է և այլն։ Եղել են հեղինակներ, որոնք այս* յ *ձայնը դրությամբ էլ նշանակել են. օրինակ՝ Լամարթինի «Ռաֆայել» վեպի մեջ (տպ. Զմյուռնիա, 1867)՝ դրված ենք գտնում՝ օտարուհիին (58, 81, 87), սիրուհիի (62), սիրուհիս (93), սևուհիի (64), սևուհիէն (65), տեսչուհիին (65), երիտասարդուհիի (66), հոգիին (66. 70, 102, 103)), հոգիս (71), հոգիի (72, 96, 97), հոգիէն (77), հիւանդուհիին (83, 85, 89), տիրուհիին (87), սպասուհիին (87), Շամպէրիի (88)։ Բայց երևույթը ընդհանուր չէ, այնպես որ նույն գրքում տեսնում ենք նաև հիւանդուհիին (46, երկիցս)։*

Նույն երևույթը կա նաև ֆրանսերենի մեջ, ինչպես՝ crié, prier, *որ արտասանում ենք* criyé, priyé *և այլն։*

Երբեմն ներմուծվում է վ *բաղաձայնը և այդ պատահում է ու, իւ ձայնավորներից հետո. օրինակ, Ղարաբաղի բարբառով առավ ըս «ղու եաս», լիավ ա «լու է», կա՛տավ ա «կատու է»։ Այսպես նաև ֆրանսերենի մեջ, ինչպես՝* clouer > kluwé։

Բիչ անգամ նեղմուծվում է ի ինչպես ֆրանսերեն lɛ̃a, chaos, *որտեղ հնչվում են* liʃo, kaos (Passy, 214)։

Թե հին հայերեն մեջ էլ կար յ բաղաձայնի նեղմուծման օրենքը, որ ամենևս ապացուցված է սրտի արտասանության մեջ, անհայտ է. բայց պետք է կարծել, որ ոչ։ Այն մարդիկ, որ պիտեին հունարեն ձայն բառը առանց արձակելու այեր, կարող էին նաև միայ և այլն բառերը դրել միայ, եթե իրար սրտեին հնչեին։

Ըստ սրտի, հին հայոց մեջ նաասան, Պաղատատ, Բոռս և նրմանները հնչվում էին առանց նեղմուծման, այս, ոտ հարանջոյն նմանապես իա, իւ հնչվում էին առանց յ-ի նեղմուծման. օրինակ՝ Կաբրիել, Ռաբիել, Ազարիա, Անանիա և այլն։ Իսկ այե, աւ, այ՝ առանում էին անպատճառ յ նեղմուծումը, ինչպես Իսրայել, Իսրայելի, Միքայել, Միքայելի, ցրայելի, Իրկիայելի, Ագնիայի և այլն։ Առանց նեղմուծման էին պարձակ ևա, ևու, իա, իու, եև, էի ձևերը, ինչպես ևակ, ևսքելի, միաբան, միութիւն, բևատրոն, Յեռս, մարդպարեի, մարդպարեև և այլն (Թորգոմ, Ուսումնասիրութիւնք, երևանում, 1935, էջ 315)։

Նեղմուծման օրենքին տրտաքտատ նման, բայց իրապես տարբեր է այն երևույթը, որով դանդաղ լեզուների մեջ բառերը բաղաձայնի մոտ առանում են ուրիշ ձև, որ նախորդից տարբերվում է մի բաղաձայնի հավելմամբ։ Այսպես, յատկանիշներն a և ab, e և ex, *հունարեն* ὁ և ὁπ, ἐ և ἐξ։ *Նոյնը նաև հունարեն ν, որ շատ դիպվածում ավելանում է ձայնավորի մոտ, ինչպես՝* πάτερ ἐστὶ τῶν σπουδαίων *առում եմ բոլորին, բայց* πάτερ ἐστὶν σπουδαίων *առում եմ բոլորինս։ Նոյնն է նաև ֆրանսերենի կապակցության* (liaison) *ընդհանուր օրենքը, որի համեմատ բաղաձայնանդամ բառերի վերջին բաղաձայնը կարդացվում է այն ժամանակ, երբ հաջորդ բառը ձայնավորով է սկսվում, և մնում է անձայն, երբ հաջորդ բառը բաղաձայնով է սկսվում, ինչպես՝* les portes, lesamis, trop grand, tropétrolt *և այլն։*

Այս բոլորը չեն վերաբերում նեղմուծման օրենքին, որովհետև այստեղ բաղաձայնի հավելում չկա, այլ, ընդհակառակը, անկում։ Բառի իսկական ձևը բաղաձայնանդ ձևն է, որ անաղարտ է մնում ձայնավորի մոտ, իսկ բաղաձայնից առաջ, խճողումից խուսափելու համար, կրճատվում է։

4. Սիկրարրառացում (synérèse).— *Երկու ձայնավորներից մեկը կորչում է իր ուժը և միանալով մյուսի հետ, կազմում է*

երկբարբառ. ինչպես՝ գինի, հոգի, սեռական՝ գինւոյ, հոգւոյ, փոխանակ գինիոյ, հոգիոյ և այլն։

6. Ավելի ուշ կարող է առաջանալ բաղաձայնացումը, որ է երկբարբառի մի մասը ավելի թույլ հնչելով վերածել դառ բաղաձայնի, ինչպես՝ հոգւոյ>հոգվո, Աստուած>Աստված և այլն։ Նույնը լատիներեն voluo, saluos>volvo, salvos և այլն, կամ գոթերեն uarðiiam>tra-wardjam և այլն։ Նկատելի է, որ այս պարագալին կրկին ձայնավորներից փակ ձայնավորն է, որ վերածվում է կիսաձայնի և հետո բաղաձայնի. այսպես՝ au, aų, av, ua, ųa, va—ai, aį, ay—ia, iа, ya։

Վերևում ասացինք, որ շատ լեզուներ հակառակ չեն հորանջի, ուրիշներ աշխատում են խուսափել այս երևույթից։ Սեմական լեզուների մեջ երկու ձայնավորի հանդիպումը անհնարին է (Brockelmann, Précis de ling. sém, 60)։ Հնդեվրոպական լեզվի մեջ բառամիջում հորանջի երևույթը չկար. նույնիսկ բարդ բառերի մեջ, երբ ձայնավորով վերջացող մի բառ միանում էր ձայնավորով սկսվող մի բառի հետ, երևի հնդեվրոպացիք ջնջում էին հորանջը։ Եվ եթե այս կարգի հորանջներ պատահում ենք վեդալական հնդկերենում բարդ բառերի մեջ (ինչպես yuktá—açva), դրանք երկրորդական երևույթներ են։ Բայց երկու անկախ բառերի հանդիպման դեպքում հորանջը անխուսափելի էր։ Բարդ բառերի մեջ էլ, եթե երկու բառերի անկախությունը զգալի էր, հորանջը մնում էր, եթե ոչ՝ ջնջվում։ Այս կարգի հորանջներ շատ կան հին հնդեվրոպական լեզուների մեջ, հատկապես բայերի առաջ դրված նախամասնիկների դեպքում։ Հորանջը արգելված էր հատկապես գեղեցկագիտական տեսակետով՝ նախ տաղաչափության, և նրա նմանությամբ էլ խնամված արձակի մեջ (Meillet, BSL, № 19, (1916), № 62, էջ 38)։ Հորանջի այն բազմաթիվ օրինակները, որոնք գոյություն ունեին վեդալական հնդկերենում, հետագալում սրբագրված են դասական հնդկերենի (սանսկրիտի) մեջ (V. Henry, Manuel de sans. véd., 10—11)։

Այս կողմից նշանավոր է հին հունարենը, որ խստիվ խուսափում էր հորանջից։ Նույն սկզբունքին հետևում է նաև արդի լեզուներից ֆրանսերենը՝ տաղաչափության մեջ, ուր նույնիսկ պատահաբար՝ ձայնավորով հանգող մի բառ չի կարող գտնվել ձայնավորով սկսվող մի բառի մոտ։ Ճաշակը պահանջում է, թեկուզ բառերի շարքը փոխելով, վերացնել հորանջը։ Հին հայերենը թեև ունի հորանջից խուսափելու միջոցներ (ամփոփում, ներմուծում,

*երկրաբրտոտայում), բայց այդ միջոցները դորժ է դնում միայն բա-
ոի մեջ և այն էլ որոշ ձայնավորների միջև, իսկ որիշ ձայնավոր-
ների և հատկապես երկու տարբեր բառերի միջև հորանջը ընդուն-
ված է։ Վերջին կետում ավելի ազատ է արդի հայերենը, որ չի
խորշում ընդհ «գոյնենը առի՞ր, պիտի առնե՞ս, քանի՞ առիր, ասա
ու արիա և այլն դարձվածներից։*

*Նոր դրույներից ոմանք (հիշենք հատկապես նրա Ամիրճի-
պաշյանը), հետևելով ֆրանսիական ճաշակին, վերացրին իրենց
դրվածքներից հորանջը, մանավանդ տողաչափության մեջ։ Այս
նպատակին հասնելու համար, նրանք դորժ էին դնում բոլոր հնա-
րավոր միջոցները. այսպես, պիտի ապառնիի մասնիկը ձայնավո-
րի մոտ դարձնում էին պիտ' (պիտ' առնե՞ս).—որոշյալ ը հոդը
ձայնավորի մոտ անպատճառ դարձնում էին ն (ցորեկն առի՞ր).—
ու շաղկապի տեղ ձայնավորի մոտ դորժ էին ածում անպատճառ և
(այս և այն և ոչ թե այս ու այն).— Իսկ երբ որիշ միջոցներ
անհրաժեշտ էին, շուտ էին տալիս բառերի շարքը, ինչպես մայիսի
ութին տանկա վոխարեն՝ ութ մայիսին, կամ գինի ունե՞ս տանկա
վոխարեն՝ ունե՞ս գինի, և այլն։*

*Լեզվական այս դրույթները, բնականաբար, հաջողություն չպիտի
ունենար և նույնիսկ նրա հեղինակները ստիպված էին ուշ թե շուտ
հրաժարվել նրանից։ Եվ այսօր գրական լեզվի մեջ էլ ազատորեն
կարելի է ասել՝*

Այս ու այն կողմ.

Ու անոնք, հակառակ ռահվիրաները մարմարեղեն հուլսին...

Գինիի, նկեղեցիի, Բաֆֆիի, Շամախիի.

Պիտի ըսեմ, պիտի ուղեմ, պիտի աղաչեմ.

Չի ուզում, չի ուզարկում.

Եթե ուզենանք, եթե ուշադրություն դարձնենք.

Դու էիր իմ հույսը.

Բաֆֆիի ու այլ հեղինակների (4 ձայնավոր).

Շամախիի ահա այս անվանի գինին.

Տեղի է ունեցել հետևյալ դեպքը.

Գանիի՞ է այս ցորենը (4 ձայնավոր) և այլն։

*Երբ մի խումբ բաղաձայն միացած է հաջորդ ձայնավորի հետ,
ներկայանում է երեք զլխավոր պարագա.*

*1· Եթե բաղաձայնը թրթռուն է, բնականաբար կոկորդի թըր-
թյունները սկսում են շատ վաղ և անընդհատ շարունակվում են
մինչև ձայնավորի վերջը, որովհետև ամեն ձայնավոր թրթռուն է։*

2. Երբ բաղաձայնը խուլ է, իր էջքը խառնվում է ձայնավորի լարման հետ, թրթռումներն սկսվում են ավելի շուտ, որով խուլ բաղաձայնի պայթյունը լինում է թրթռուն։ Խուլ բաղաձայնների այս հանգամանքն է պատճառը, որ զանազան լեզուների և բարբառների մեջ խուլերը դառնում են թրթռուն (այսպես, օրինակ, արևմտահայերի արտասանության մեջ)։ Այսպես են հնչում խուլ բաղաձայնները նորայատին և սլավական լեզուների, մինչև անգամ մի քանի գերմանական լեզուների մեջ, ինչպես իսլանդերենը։ Օրինակ, pa ձայնախմբի մեջ խոչակի թրթռումներն սկսվում են հենց այն միջոցին, երբ շրթունքներն սկսում են հեռանալ իրարից։

3. Երբ բաղաձայնը շնչեղ խուլ է, ձայնավորի թրթռումն սկսվում է պայթյունից հետո, որով և բաղաձայնը ամբողջապես մնում է խուլ։ Այս է պատճառը, որ զանազան բարբառներում (ինչպես արևմտահայերի արտասանության մեջ) փ, ք, թ և այլն պահում են իրենց հնչյունը, հակառակ պ, կ, տ ձայների, որոնք դառնում են բ, գ, դ։

Երբ մի բաղաձայն գտնվում է ձայնավորից հետո, նրա լարումը խառնվում է ձայնավորի էջքի հետ, որով բաղաձայնի լարումը ուժեղանում է, իսկ պայթյունը տկարանում. կարող է մինչև անգամ բոլորովին պակասել, երբ շունչը կամ ձայնը դադարի գործարանների դադարից առաջ։ Օրինակ, ap, am, ab արտասանելու ժամանակ մարդիկ սովորաբար շրթունքները փակելուց հետո նորից բաց են անում։ Իսկ եթե շրթունքները չբանան, բաղաձայնը կդառնա պայթուցիկ, այսինքն պայթյունը կլինի տկար և կամ բոլորովին կվերջանա։ Այս է պատճառը, որ շատ լեզուների մեջ վերջին բաղաձայնը խլանում կամ ընկնում է։

Երբ մի բաղաձայն գտնվում է մի ուրիշ բաղաձայնի մոտ, նկատելի են հետևյալ պարագաները.

1. Երկու բաղաձայնները նույն կամ կրկնակ են, ինչպես պպ, փփ, ննն և այլն. այս պարագային երկու բաղաձայնները ջոկ-ջոկ չեն արտասանվում, այլ կատարվում է նախ առաջինի պայթուցումը, հետո սովորականից երկար մի կացք և ապա երկրորդ բաղաձայնի էջքը. այսպիսով առաջինի էջքը և երկրորդի լարումը չնչվում են։ Ականջը լսում է պայթուցումը և պայթյունը որոշ կերպով, բայց կացքի ժամանակ, եթե բաղաձայնը պայթական է, ոչինչ չի լսում, այլ միայն բավական երկար լռություն. իսկ եթե սեղմէ, ձայնը շարունակվում է այդքան երկար տևողությամբ։ Ուրիշ խոսքով, կրկնակ բաղա-

ձայնները չէ թե իրապես երկու տարրական բաղաձայններ են, այլ մեկ բաղաձայնի երկարությունը, ճիշտ ինչպես երկար ա՛, օ՛ և այլն։

2. Երկու բաղաձայնները տարբեր են, բայց արտասանվում են միևնույն կետում և իրենց տարբերությունը միայն ձայնալարերի կամ կաակին դրծոդությունն մեջ է կայանում (ինչպես՝ p, b, m—l, d, n—k, g, ŋ). այս պարագային նախորդի նման կատարվում է մի պալթուցում, դրծոդարանները կացքի ժամանակ անփոփոխ մնում են իրենց դիրքում, այլ միջոցին խուչակը ու կաոիկը կատարում են պահանջված դրծոդությունները, որից հետո սկսի է տեղի ունենում պալթյունը։ Այսպիսով, երկրորդ փոխարեն լինում է միայն մի պալթուցում, մի պալթյուն և մի երկար կացք. առաջին բաղաձայնը լինում է միայն պալթուցիկ, երկրորդը պալթական։ Հաջորդական բաղաձայնների այս ձևը սովորական է հայերենի, դևրմաներենի և անգլերենի մեջ, իսկ ֆրանսերենում երկու բաղաձայններն էլ ունենում են իրենց պալթյունը, մինչև անգամ ամանք երկուսի միջև նևրմուծում են մի փոքրիկ ը, ինչպես՝ lorsque > lorsəqə։

3. Երկու բաղաձայնները տարբեր են, բայց նրանցից երկրորդը պատկանում է կիսապալթականների խմբին, իսկ առաջինը նրա լրացուցիչ բաղաձայնի շարքից է. այսպես apʱfa, akˣxa, abᵛva, ադձա, ադնա, ատծա, ատնա, աթցա, աթչա և այլն։ Այս պարագային էլ տեղի է ունենում ճիշտ այն ձայնական երևույթը, ինչ որ նախորդի մեջ. կատարվում է առաջին բաղաձայնի պալթուցումը, հետո լռական երկար խցում, որին հաջորդում է անցումը։ Այս պատճառով aᵖfʱa և apʱfa, աձձա և ադձա, ածծա և ատծա, աթցա և ացցա, ատնա և աննա, կամ նույնիսկ ատծա, աթծա և այլն խմբակները զույգ-զույգ միևնույն տպավորությունն են թողնում ականջի վրա։

4. Երկու բաղաձայնները կազմվում են երկու տարբեր կետերում, ինչպես kt, tk, pt, tp, pk, kp և այլն ձայնախմբի մեջ։ Այս պարագային ֆրանսիական արտասանության մեջ երկու բաղաձայնները պահում են իրենց առանձին հնչումը. առաջինի պալթյունը կատարվում է երկրորդի պալթուցման միջոցին, այնպես որ երկու պալթյունները լսվում են իրար ետևից։ Իսկ հայկական, դևրմանական և անգլիական արտասանության մեջ երկու բաղաձայնների խցումը խառնվում է իրար հետ, որովհետև երկրորդի պալթուցումը սկսվում է այն միջոցին, երբ դեռ առաջինի խցումը վերջացած չէ։ Այս պատճառով երկին բաղաձայններից առաջինը հազիվ է լսե-

վում, իսկ երբ բաղաձայնների թիվը լինի երկուսից ավելի, երկրորդը բնավ չի լսվում, ինչպես գերմաներեն Haupt-Kunststück։

Ջանազան լեզուների արտասանության համեմատությունը ցույց է տալիս, որ բաղաձայնների խմբակցության համար կան տարբեր սովորություններ. որոշ ազգեր ընդունակություն ունեն բաղաձայնների խմբերը միաշունչ արտասանելու. այսպես վրացերենը (օրինակ, վրացերեն մմծղՙսվելի «հովիվ», վբրդղվլնավ «կարմրում եմ», վփրցքվնի «կճպում եմ», կվրծրթվնիս «մեղ կրծում է», որոնք ունեն 6 կամ 7 միաշունչ բաղաձայն (Vogt, 15)։ Նույնպես մյուս կովկասյան լեզուները, եվրոպական լեզուներից գերմաներենը, սրանց հետ նաև ռուսերենը. համմտ. встреча (4 բաղաձայն), взгляд «հայացք», стклянка «սրվակ» (երկուսն էլ 5-ական բաղաձայն միասին), здравствовать «առողջ լինել» և այլն։ Ուրիշներ բոնում են միջին դիրք. այսպես, ֆրանսերենը, իտալերենը և նրանցից էլ ավելի պակաս չափով հայերենը, թուրքերենը և պարսկերենը։

Հայերենի մասին քիչ հետո կխոսենք առանձին։

Որոշ լեզուներ անընդունակ են բառասկզբում կրկնակ բաղաձայնների խմբեր արտասանելու, և ավելացնում են մի նոր ձայնավոր. այսպես են առհասարակ բոլոր սեմական լեզուները (Brockelmann, Precis de ling. sém., 62). օրինակ՝ արաբերենը ամեն անգամ, որ բառասկզբին պատահի մի զույգ բաղաձայն, սկիզբը դնում է a ձայնը (արդի հնչմամբ e), ինչպես հունարեն Platon դառնում է أفلاطون Aflaṭun, սպունգ լինում է արաբերեն isfunǰ, Frank բառը դառնում է افرنج Afranǰ (efrenǰ) «եվրոպացի, ֆրանգ»։ Այսպես է նաև ասորերենը, ուր ամեն մի վանկ սկսվում է միայն մի բաղաձայնով. եթե պատահի երկու բաղաձայն, նրանց միջև մտնում է մի ə կամ (բառասկզբում) ավելանում է u կամ կրկնակ uu ձայնավորը (Nestle. Syr. gramm., 1888, էջ 18)։ Պարսկերենի մեջ երկու բաղաձայնով բառ չի կարող սկսվել. կամ սկզբից և կամ վերջից ստանում է մի ձայնավոր. օրինակ՝ šutur կամ uštur «ուղտ»։ Այսպես է նաև տաճկերենը կամ թուրքերենը. օրինակ՝ ստական > իսթիքան։ Նույն սկզբունքի համաձայն է, որ հնդեվրոպական նախալեզվի *stēr բառը հայերենի և հունարենի մեջ, ստանալով a հենարանը, դարձել է աստղ = ἀστήρ. նման հավելումներ գտնում ենք նաև ուրիշ հին լեզուների մեջ. օրինակ՝ լատիներեն *stablis, pōclom > stabilis, poculum, հունարեն *ἐβδμ- > ἑβδομος «յոթերորդ», սանսկրիտ harṣa, «ուրախություն» > պարսկերեն harisa, հին բարձր գերմաներեն besmo > besamo «ավել»։

Ուրալա-ալթայական լեզվախմբի մեջ բառասկզբում երկու բաղաձայն չի կարող պատահել, ինչպես վերջում համանուագ երկու բաղաձայն հաղվագյուտ է և կարելի է միայն այն ժամանակ, երբ առաջինը r կամ l է։ Ընդհանրապես ուրալ-ֆիննական լեզուներում չեն ընդունվում բաղաձայնների խմբեր՝ ֆիններենի մեջ բառասկզբին կամ վանկի վերջում (բացի ա վանկիչից) չի կարող դրնվել երկու բաղաձայն. երբ ռուսերեն բաղաձայններ հասնում են, ֆիններենը մեկը կամ երկուսը ադդակի ջնջում է և պահում միայն մեկը. օրինակ՝ շվեդերեն spel «խաղ» և strand «ափերք» դառնում է ֆիններեն peli, ranta։

Բառերենում a ստամբ սկսվող բառ չկա. եղածները բոլոր տասը են. ինչպես՝ арбуз «ձմերուկ», абрикос «ծիրան», айва «սերկեվիլ», архитектор «ճարտարապետ» և այլն։

Վերջեր լեզվում բառերը ամենամեծ մասամբ սկսվում են a ձայնավորով, որ նշան է եղակի արական սեռի—այն բառերը, որ սկսվում են i-ով, ընդհանրապես հազվագիւտ են. բաղաձայնով սկսվող բառ չկա այս լեզվում. եղածները բոլորը արտասահմանից են փոխառյալ (Laoust, 1)։

Մալանեզյան լարևմ լեզվում կա մի բառ, որ բաղկացած է մի բաղաձայնից, որ է m «բանանա» պտուղը (Dempwolff, 5)։

Ամերիկյան մեկոկ լեզվում ոչ մի բառ չի կարող սկսվել երկու բաղաձայնով, և ոչ էլ վերջանալ երկու բաղաձայնով. բառամիջումն էլ երկու բաղաձայնների հանդիպում կլինի միայն երկու բառի բարդվելու և կամ մի մասնիկի հավելման դեպքում (Kroeber, 279)։

Տունգուսական էվեն (լամուտ) լեզվում բաղաձայնների կուտակում չկա. միայն բառամիջում կարելի է գտնել երկու բաղաձայն կողք-կողքի. ուստի ռուսերենից փոխառյալ сто, хлеб և նման բառեր դառնում են osto, kileb և այլն։ Բառասկզբում չկան j, r, l, s և այլն բաղաձայնները (Цинциус, 40)։

Եթովպերենում ոչ մի բնիկ բառ կամ վանկ չի կարող սկսվել ձայնավորով, այլ միշտ բաղաձայնով, թեկուզ մի պարզ շնչով։ Ասա ասամ, նույնիսկ այն օտար բառերը, որոնք մտնում են լեզվի մեջ, ստանում են իրենց օրինական շունչը։ Օրինակ՝ Ἀναστάς > եթովպերեն Hanānīyā, Ἑβραῖος > եթովպերեն əbrāwī։ Այսպես նաև բառամիջում, երբ երկու ձայնավոր իրար մոտ գան. օրինակ՝ Theodora եթովպերեն Tā'ōdēra կամ Tēwōdōrā։ Այս երևույթը այնքան

ընդհանուր է, որ նուլնիսկ այբուբենը սկսվում է ոչ թե a տառով, այլ h (Dilmann, 55)։

Բաղաձայնների խճողումն էլ ընդունված չէ. օրինակ՝ լատիներեն scrinium «արկղիկ» բառը դառնում է եթովպերեն eskərên (անդ, 56)։

Կան լեզուներ, որ բոլորովին անընդունակ են բաղաձայնների խմբեր արտասանելու մեջ. ալսպես, Աֆրիկալում բանտու լեզվախումբը, Ասիալում չինարենը և ճապոներենը և այլն։ Բանտու լեզուները ընդունակ են միայն բաղաձայն + ձայնավոր արտաբերելու (միայն բացառությամբ m և n տառերի, որոնք կարող են առանձին վանկ կազմել)։ Ճապոներենն ու չինարենը դիտեն միայն բաղաձայն + ձայնավոր ձայնախմբեր կազմել և աև առավելն կարող են վերջինը ընդլայնացել. ալսպես՝ ճապոներեն abuyayiyo «ճանապարհ ուուր, խարտլդար», Թա-թնե-քուն «Մեծն երկնային կալարութլուն, Չինաստան», կամ երկրի հատուկ անունները՝ Yokohama, Nagasaki, Mikado, Թիեն, ցին, Վել-հալ-վել, Շան-հալ, Սուն-Ջան-ցեն և այլն և այլն։ Այս լեզուները այնքան անընդունակ են արտասանելու բաղաձայնավոր խմբակները, որ եթե հարկ լինի առաղարձել նման օտար բառեր, միջոցները լցնում են i ձայնավորով։ Ալսպես՝ չինարեն Kilisitosi և բանտու Kirisiti «Քրիստոս». չինարեն po-la-sseu «Պարսկաստան» և այլն։ Նոր արաբերեն, եբրայերեն, արամեերեն և ասուրերեն լեզուներում բառավերջիկ ձայնախմբերն էլ անընդունելի են և ներմուծում են մի ձայնավոր. ինչպես՝ արաբերեն ملح milḥ «աղ» > նոր արաբերեն melaḥ, uzn «ականջ» > եբրայերեն ʾozen, ասուրերեն uzun։ Աֆրիկյան քաֆիր լեզվով գերմաններեն gold դառնում է igòlide։

Ձայնավորների ալսպիսի ներմուծումը կոչվում է anaptyxe (լոլմում)։

Պոլինեզիալի լեզուները ոչ կարող են բաղաձայնների խմբեր ունենալ, ոչ էլ բառը բաղաձայնով վերջացնել։ Դրավիդյան լեզուների մեջ ոչ բառասկզբում, ոչ բառամիջում և ոչ էլ բառավերջում չի կարելի ունենալ երկու բաղաձայն միասին. նելելի են միայն կրկնակ բաղաձայններ և n + բաղաձայն բառամիջում։ Նուլնիսկ սանսկրիտ dya, dva, gya և այլն դառնում են թամիլերեն diya, diva, giya և այլն. սանսկրիտ Krišna դառնում է Kiruttina (Coldwell, 183)։

Օվկիանիալի, ավստրալիական, ամերիկյան լեզուներից շատերը, հակառակ մեր սխալ կարծիքի, չեն սիրում բաղաձայնների

հաճախությունը. ընդհակառակը սերտում են ձայնավորների խմբակցությունները և հոլանդերեն չեն խորշում. Օրինակ, սկիհանդան սամոա լեզուն ոչ կրկնակ բաղաձայն գիտի, ոչ էլ պարզ բաղաձայն, այլ միշտ մի բաղաձայն երկու և ավելի ձայնավորների միջև. չկա բառ, որ բաղաձայնով վերջանա, այլ միշտ ձայնավորով (Funk, 1—2)։

Ահա մի փոքրիկ հատված այս լեզվից.

Ou le fia mālmoa i le laueleele o Samoa ma o latou tagata *(«Ես ուզում եմ Սամոայի երկիրը և ժողովուրդը հանդիսչելը)։*

Sau ia i le fale nei. sei e malolo ai *(«Արի տուն և հանդրտատրիր»)* (Funk, 66)։

Այս հատվածի հինգ տիպերը մի բաղաձայնից հետո հաջորդում են իրար նույնից ինչ ձայնավոր։ Ձայնավորների այսչափ առատությունը մանկունակ ազդեցություն է թողնում բոլոր այսպիսի լեզուների վրա։

Մարկիզյան կղզիների լեզուն էլ (Dordillon, 3—4) *նույնպես է. երկու անսակ վանկ կա այս լեզվում, կամ մի ձայնավորից բաղկացած, կամ մի բաղաձայնից մի ձայնավորից. վանկի վերջում բաղաձայն չի լինում. և որովհետև այս լեզուն ունի միայն 5 ձայնավոր և 10 բաղաձայն, ուստի վանկերի բոլոր անսակների դեպքերը լինում է ընդամենը 55, որոնց կեսակեր ստիպ է հղիհնակեր (անդ, էջ 4)։ Ուստ այսմ, ստար բառերն էլ կրճատվում և վերածվում են իրենց վանկային դրության. ինչպես՝* apôtre *«առաքյալ»>* apotoro *«Հիսուս Քրիստոս»>* Iletu Kirito, Paul *«Պողոս»* Pauro, *«Նապոլեոն»* Naporeone, Adam>Atamo, Andre>Aterea, Siméon>Timeone (Dordillon, 14, 20)։

Ամերիկյան այնուս լեզվով դպրոցները վերջանում են ընդհանրապես l, g, x, n *բաղաձայններով* (Вениаминов, 9)։

Աֆրիկյան սկսած լեզվում կրկնակ բաղաձայն չկա. միմիայն ռնգական բաղաձայններն են, որ կարող են կրկնվել. ինչպես՝ mm. m nn, n ṅn (Westermann, 64)։

Դրավիդյան թամիլ լեզվի մեջ զանազան բաղաձայնական կապակցություններ անկարելի են. օրինակ, չկան kl, kr, ks, tr, tl, ts, pr, pl, ps, st, sp, sk, pn, kn, dn *և այլն. բուս այսմ, շատ բառեր ձայնապես նման են իրար և զանազանելու համար մարդ մեծ դժվարություն է կրում. օրինակ՝* kaṭu *«թմուկն»,* katu *«գորտուկ, սպի»,* kāṭu *«անտառ»,* kātu *«սկանջ»,* kattu *«բղավել»,* kāṭṭu *«ցուլդ տալ»,* kaṭṭu *«կապել»,* kaṭi *«հոտ»,* kaṭṭi *«կատր»,* kāṭi *«խածվածք»,* katti *«դանակ»,* kaṭai *«վերջ»,* kaṭṭai *«փրփուր»,* kāṭai *«մռչուն*

ինչ», katai «պատմվածք», kaţā «այծ», kaţal «ծով», kaţan «պարտք» և այլն (Мерварт, Грам., 20)

Ձայնախմբերի քննութեան անբաժան մաս է կազմում վանկաստութեյունը։ Բայց նախ տեսնենք, թե՝

Ի՞նչ է վանկը.—Վանկը ձայների մի այնպիսի բնական խմբակցութեյուն է, որ ամենահասարակ մարդն անգամ կարող է ըմբռնել։ Վանկի հասկացողութեյունը այնքան բնական է, որ դրութեյան առաջին հնարիչները, նախքան տասերի դուռը, վանկագիրն են հնարել։ Հակառակ դրան, այնուամենայնիվ, բավական դժվար է որոշել, թե ի՞նչ է վանկը։ Հին հունները վանկ էին կոչում ձայնական մի միութեյուն, որ բաղկացած էր մի ձայնավորից կամ մի երկրարբաւից՝ իրեն հարակից մի կամ մի քանի բաղաձայններով միասին։ Այսպես էին ընդունում նաև յոլոր հին քերականները։ Ըստ այսմ, վանկի հիմնական մասը ձայնավորն է և չկա վանկ առանց ձայնավորի։ Սակայն այս սահմանը չի կարող ճիշտ լինել, որովհետև, օրինակ, անգլերեն mutton, people, գերմաներեն denken, handel և այլ նման բառերի երկրորդ մասը, չնայած որ միայն բաղաձայններից է բաղկացած, այնուամենայնիվ առանձին վանկ է։ Հնդիկները, որ ավելի լավ քերականագետներ էին, ընդունելով մի ձայնավոր = մի վանկ սկզբունքը, և սակայն տեսնելով, որ l և r ձայներն էլ հաճախ վանկեր են կազմում, փրկել էին դրութեյունը՝ հնարելով l և r ձայնավորներ։

Արդի ձայնաբանները փորձել են դանազան ձևերով բացատրել վանկի էութեյունը։ Լավագույն բացատրութեյունը հետևյալն է.

Գիտենք, որ մեր արտասանութեյունը կազմվում է օդի հոսանքի արտաշնչումով, որ առաջանում է ստոծանիի և կողային մկանների պրկման ու թուլացման հաջորդական գործողութեյամբ։ Երբ արտաբերում ենք միմիայն մի ձայնավոր, ըստ կարելվուչն երկարելով նրա տևողութեյունը, նկատելի է, որ լանջքը սկսում է հետզհետե իջնել՝ նախ տակավ աճեցնելով իջման արագութեյունը և հետո հետզհետե տկարացնելով, մինչև շնչի լիակատար սպառումը, բայց ամբողջ այդ ընթացքը կատարվում է միօրինակ և աստիճանաբար, առանց հանկարծական փոփոխութեյունների։ Ինչքան էլ որ երկարացնենք այդ ձայնավորի տևողութեյունը, մինչև շնչի լիակատար սպառումը, նա մեզ թվում է մի վանկ։ Բայց հենց որ լանջքի իջման արագութեյան կամ նրա հետևանքով օդի հոսանքի մեջ որևէ հանկարծական փոփոխութեյուն կատարվի, վանկը զգում ենք

վերջապես և ամեն մի ձայն, որ հոդակապում է նրանց, համարում ենք նոր վանկ։

Արդ, պիտենք, թե ի՞նչ են կատարվում այդ հանկարծական փոփոխությունները (կամ, մեկ բառով կոչելով՝ ռասյուններ) լանջքի իջման արտաքին կամ ծոլի հատանքի մեջ։

Ռասյուններ կատարվում է հետևյալ պարագաներում.

1. Երբ արտասանենք մի ձայնավոր որոշ ուժգնությամբ և հանկարծ անցնենք մի ուրիշ ավելի կամ նվազ ուժգին առոիհանելու։ Մենք պիտենք, որ ձայնի ուժգնությունը առաջանում է օդի հատանքի քանակությունից. որչափ մեծ է օդի հատանքը, այնքան էլ ուժգին է ձայնը։ Իսկ օդի հատանքը էլ առաջանում է ճնշման քանակությունից. որչափ մեծ է ճնշումը, այնքան էլ մեծ է օդի հատանքը։ Ուրեմն ձայնի ուժգնության մեջ ռասյունը առաջանում է շնչափողի մեջ օդի ճնշման հանկարծական փոփոխությամբ, որի հետևանքով էլ փոխվում է օդի հոսանքը։ Եթե ձայնավորի ուժգնությունը փոփոխությունը առոիհանաբար կամ առանց ռասյունի լինի, ուրիշ խոսքով՝ օդի հոսանքը միատարապ լինի, մենք կլսենք միայն մի վանկ։

2. Եթե արտասանենք մի ձայնավոր որոշ նոտով և հանկարծ անցնենք մի ուրիշ նոտի (ավելի բարձր կամ ավելի ցածր)։ Ձայնի բարձրությունը առաջանում է օդի հաստության տարբերությունից, որ կախված է ձայնարանի բացվածքի մեծությունից։ Ուրեմն և այս պարագային ռասյունը առաջանում է ձայնարանի (glotte) բացվածքի մեծության մեջ։ Եթե նոտերը կանոնավոր կերպով հաջորդեն իրար, ինչպես, օրինակ, ջութակի լարի վրա մատը քսելով ծայրից ծայր և ոչ թե պաշտամունքի առեղնաշարի վրայից անցնելով, այդ պարագային մենք լսում ենք մի վանկ։

3. Եթե արտասանությունը կատարենք ընդհատումներով, ինչպես, օրինակ, Բաֆֆիի իղձը, դպրոցի նյած, գարու ու ուցաբի խառնուրդ, որոնց մեջ ի, է և ու ձայնավորները հաջորդում են իրար երեք անգամ ընդհատումներով։ Փոփոխությունը առաջանում է այս պարագային շնչափողի օդի ճնշման մեջ։

4. Եթե արտասանենք մի ձայնավոր և հանկարծ անցնենք մի ուրիշ ձայնավորի։ Այս պարագային ռասյունը առաջանում է բերանի բացվածքի մեծության մեջ։ Եթե ձայնավորից ձայնավոր անցքը կատարվի աստիճանաբար, այն ժամանակ առաջանում է երկրարբառ և մենք դարձ ենք միայն մի վանկ։

5. Եթե արտասանենք մի ձայնավոր, որից հետո անցնենք բաղաձայնի, ապա պարագային ոսպյունը առաջանում է դործարանների դիրքի փոփոխությամբ և հետևաբար շնչառության մեջ։ Օրինակ, եթե a ձայնավորից հետո արտասանենք b, բերանը հանկարծ իր դիրքը պիտի փոխի և շրթունքները, որ առաջ բաց էին, հանկարծ պիտի փակվեն և ընդհատեն մի անխթարթ արտաշնչվող օդի հոսանքը։ Այս ձևով բաղաձայնը դառնում է վանկի սահմանագիծը։

Վանկի էությունը որոշելու համար, կարևոր է նաև ըմբռնել ձայնի հնչականությունը կամ լսելիությունը (perceptabilité, անգլերեն sonority, audibility, գերմաներեն sonrität, schallfülle, schallstärke)։ Երբ երկու հոգի խոսում են իրարից որոշ հեռավորության վրա, թեև խոսողը պահում է ձայնի միօրինակ ուժգնությունն և լսողն էլ ունի նորմալ սկանջ, սակայն որոշ ձայներ ավելի պարզ լսելի են լինում իրեն, ուրիշներ նվազ չափով։ Ձայնի այս հատկությունը, որ կախված է ձայնի բնությունից և ոչ թե պարագաներից, կոչվում է հնչականություն կամ լսելիություն։ Դիտությունը չէ դեռ ունէ միջոց ձայնի հնչականությունը չափելու, բայց դանազան միջոցներով կարելի է դասակարգել ձայները ըստ իրենց հնչականության։ Ասպես, միևնույն ձայնով և հետզհետե ավելի մեծ հեռավորությունից խոսելով, կարող ենք հաստատել, որ

1. Ձայնավորները ավելի լսելի են, քան բաղաձայնները։

2. Բաց ձայնավորները ավելի լսելի են, քան փակ ձայնավորները։

3. Խոսակցության մեջ ցնցուն, կողմնական և ռնգային բաղաձայնները ավելի լսելի են, քան սեղմերը և սեղմերը ավելի լսելի են, քան պալթականները։

4. Թրթռուն բաղաձայնները ավելի լսելի են քան, խուլերը։

5. Ամեն պարագայի մեջ ձայնը, որքան ավելի ուժեղ է, այնքան ավելի լսելի է և որքան ավելի բարձր է, այնքան ավելի լսելի է։

Ահա ձայների լսելիության համեմատական կարգը։ — բաց ձայնավորներ — փակ ձայնավորներ — ցնցուն, կողմնական և ռնգային բաղաձայններ — թրթռուն սեղմ բաղաձայններ — խուլ սեղմեր — թրթռուն պալթականներ — խուլ պալթականներ։ Ամենալսելի ձայնը բաց ձայնավորն է, ամենաքիչ լսելին՝ խուլ պալթականը։

Այս համեմատությունից հենց երևում է հնչականության էությունը և պատճառը. որքան մեծ է բերանի բացվածքը՝ ձայնն էլ

ալնքան լսելի է, և որովհետև արտասանության միաժամանակ է բերանի բացվածքը՝ որի հատկանիշն էլ ալնքան ակար է, և արտասանական ակար է օդի հոսանքը՝ շնչափողի հնչման էլ ալնքան թույլ է, և արտասանական թույլ է շնչափողի հնչումը՝ արտասանության հիմն էլ ալնքան թույլ է, որ ականջն և ձայնը ալնքան ավելի լսելի է, որքան արտասանության հիմը ավելի թույլ է։ Եվ որովհետև ձայնավորը առանձնապես լսելի, իսկ բաղաձայնը նվազապես լսելի ձայն է, ուստի և ձայնավորը համապատասխանում է շնչափողի հնչման և արտասանության հիմի միմիամին, իսկ բաղաձայնը՝ նրանց մաքսիմումին։ Այսպիսով բաղաձայնը, որ վանկի սահմանապահն է, լսելիության օրենքի միջոցով հասկանում է մեզ միմնալն արտյունքին, ինչ որ նախապես անհնար էինք, այն է՝ ստանալ շնչափողի հնչման և արտասանության հիմի մաքսիմումի և մինիմումի միջև։

Այս բոլորը միացնելով, մենք այժմ կարող ենք որոշել, թե ինչ է վանկը։ Վանկը ձայնի ուժգնության, բարձրության և լսելիության հաջորդական փոփոխությունը կամ ընդհատումն է։ Ստանալով բնախոսական ու դիտական լույսով՝ վանկը ձայնարանի ու բերանի բացվածքի և գործարանների դիրքի կամ որ նույնն է՝ օդի ճնշման, հոսանքի և արտասանության հիմի հանկարծական փոփոխություններն է։

Վանկի իրոք թանձրացնել պատկերը տրվում է հետևյալ օրինակը (Rondet, Elements de phonétique génerale, 184)։

Ենթադրենք մի ովալան, որի ջուրը որոշ բարձրությունից հոսում է մի ջրանցքի մեջ. այնպես է հարմարեցված սակայն, որ ջուրը նախապես մի անցքից անցնելով, լցվում է մի խոռոչի մեջ և ապա նրանից էլ մի ուրիշ անցքից անցնելով, հասնում է ջրանցքը։ Եթե ջրի հոսանքի ուժը հավասար պահելով հանդերձ, փոխենք ավազանի բարձրությունը և առաջին կամ երկրորդ անցքի մեծությունը, կստանանք տարբեր-տարբեր ալիքներ։ Վանկերը կարելի է համեմատել այս ալիքներին։ Ավազանի բարձրությունը ձայնի ուժգնությունն է. առաջին անցքը ձայնի բարձրությունն է, երկրորդը՝ նրա երանգը (ձայնավոր, սեղմ կամ պալեթական)։ Փոփոխելով ավազանի բարձրությունը և անցքերի մեծությունը, փոխում ենք ձայնի ուժգնությունը, բարձրությունն ու երանգը։ Փակելով երկրորդ անցքը ընդհատում ենք և ձայնը։

Կարելի է ավելի մատչելի դարձնել այս փորձը կաուչուկե մի գնդակավոր սիֆոնի միջոցով։ Ամեն անգամ, որ սեղմենք խո-

դովակը գնդակից վերև կամ ներքև և բարձրացնենք հոսման անցքը, կտեսնենք, որ կազմված է մի տարրեր ալիք։

Վանկի տեսակները.—Որպեսզի մի ձայն կարողանա վանկ կազմել, պետք է ունենա հետևյալ պայմանները. 1. Ձայնը կարելի պետք է լինի երկարել։ 2. Մոտը գտնված մյուս ձայնելի համեմատությամբ պիտի ներկայացնի հուզավորման և արտաշնչման նվազագույն ճիգը։ 3. Նույն ձայնի համեմատությամբ պիտի լինի ամենից ավելի լսելին։

Այս երեք պայմանները ամբողջապես լրացնում են ձայնավորները ու երկբարբառները, ուստի և նրանք էլ ծառայում են կազմելու զանազան վանկեր։

Գալով բաղաձայններին, նրանց մեջ շատ քչերը կան, որ լրացնում են հիշյալ պայմանները, ուստի և քիչ անգամ կարող են գործածվել վանկեր կազմելու համար։ Մուլ պայթականները բոլորովին չեն կարող. բերանային թրթռուն պայթականները մասամբ հարմար են. կարելի է, օրինակ, հնչել tb, kd, pg, *բայց ծանոթ լեզուների մեջ այսպիսի վանկեր ընդունված չեն։ Ավելի հարմար են շփական բաղաձայնները, բայց սրանք էլ սովորաբար մի քանի բացականչություններից այն կողմ չեն անցնում. ինչպես* pst, št, pf, pš *և այլն։ Ամենահարմար բաղաձայնները են ռնգալինները* (m, n, ŋ), *կողմնական և ցնցուն բաղաձայնները* (l, r), *որոնք լրացնում են բոլոր պահանջված պայմանները։ Հուլն քերականները այս բաղաձայններից հատկապես չորսը* (l, m, n, r) *բաժանելով մյուսներից, կոչում էին* նայ (liquide). *և իրոք էլ զանազան լեզուների մեջ նրանք գործ են ածվում հաճախ վանկ կազմելու համար, ճիշտ իբրև ձայնավորներ. հմմտ. անգլերեն* able (éible), mutton (mɯotn), *գերմաներեն* Tempel (templ), Atem (atm), geritten (geritn), Vater (fatr), *խորվաթերեն* trg «հրապարակ», vrt «պարտեզ», prst «մատ» *և այլն։ Այս կարգի բաղաձայնները լեզվաբանության մեջ տարբերվելով մյուսներից, կոչվում են ձայնորդ* (sonante). *հնդիկները իրենց այբուբենի մեջ մտցրած էին* l, r *ձայնավոր, որ ձևով էլ տարբերում էին* l, r *բաղաձայններից. հնդեվրոպական լեզվաբանության մեջ, ինչպես տեսանք, ձայնորդ են կոչվում* l, m, n, r *նայերը և* y, w *կիսաձայնները, որոնք ծառայում են մերթ իբրև ձայնավոր, և մերթ իբրև բաղաձայն։*

Երբ մի բաղաձայն կազմում է առանձին վանկ, այսինքն դառնում է ձայնորդ, նա չի կարող այլևս միանալ ձայնավորի հետ և ոչ էլ ձայնավորը նրա հետ, որովհետև ինչ էլ լինի բաղաձայնի

անատակը. Ձայնավորը նրանից ավելի լսելի է և ներկայացնում է նախադասելի հիմը. Վանկի կազմելու պաշտոնը ևս պատասխանում է ձայնավորին. Երբ բազաձայնը կազմում է վանկ, նրան կարող են ընկերանալ իրենից հետո լսելի բազաձայններ միայն։

Հայերենի մեջ մենք ունենալով ը ձայնավորը, հաճախ կարող ենք կարծել, որ բազաձայնավոր վանկերի մեջ իրական վանկ կազմողը ձայնորդը չէ, այլ նախամածվող ը ձայնավորը. ինչպես փըստ, ֆրշտ և այլն։ Այս կարծիքը սխալ է, որում շատում կարող ենք համոզվել, եթե վերցնենք նույն վանկերի երկար ձևերը։ Արդարև, հիշյալ վանկերի երկար ձևերն են փո՜ս՜տ, փչ՜շ՜տ և ոչ թե փը՜ս՜տ, ֆլ՜շ՜տ. ալսինքն երկարող ձայներն են ո և շ և ոչ թե ը. ատաի և վանկ կազմող ատորը այդ բազաձայններն են (ձայնորդ) և ոչ թե ը ձայնավորը։

Շատ լեզուներ կան, որոնք հանդուրժում են միայն պարզ վանկեր. ալսպես են չինարենը, հապոներենը և այլն։

Աֆրիկյան սկսական լեզվում վանկերը լինում են միշտ մի բազաձայն + մի ձայնավոր. բացառություններ քիչ կան և եզածներն էլ համարվում են սուտ փոխառություն (Westerman, 64)։

Աֆրիկյան ոլոֆ լեզվում իրար հաջորդող բազաձայնների խմբեր չկան, այլ միայն մի ձայնավոր + մի բազաձայն. բառավերջում կարող է բազաձայն գտնվել. սուտ բառերն էլ ձևավորում են ալս ճանփ. օրինակ՝ français > faranse, citrouille > suturui և այլն (Rambaud, 9)։

Վանկի ձայնական կազմությունը հայերենում[1]։

1. Արդի արտասանության համեմատ հայերենը բոլորովին անբնական է վանկի սկզբում ձայնավորից առաջ երկու բազաձայն միասին հնչելու, լինի դա բառասկզբում, թե բառամիջի առանձին վանկերում. ալսպես՝ գլուխ, կլրակ, մտրակ հնչվում են գլուխ, կըրակ, մըտրակ։ Սրա ապացույցն էլ այն է, որ ալս կարգի բառերը հոգնակիում ստանում են -ներ մասնիկը, որ հատուկ է բազմավանկներին։ Նմանապես բառի մեջ՝ Մկրտիչ—Մըկըրտիչ, պռոստել—պըռոըստել, կլթկլթալ—կըլթկըլթալ և այլն։ Եթե բառը սկսում է գր, գվ, գմ, սկ, սպ, սթ, ստ, սք, շփ, շտ ձայնահմբերով, ը ձայնավորը դրվում է կա՛մ շշականից առաջ և կա՛մ վերջը. ինչպես՝ ըշտապ, սըխալ, սըրըսկել և այլն։ Ոմանք կարծում են, որ եթե ոչ վերևի, գոնե ալս վերջին կարգի բառերը միավանկ են (մտա-

[1] Մ. Աբեղյան, *Տաղաչափություն*, էջ 35—36։

ձելով եվրոպական լեզուների ոգով). բայց դա էլ սխալ է, որովհետև նույնպիսի բառերի հոգնակին լինում է ստակներ, ստվերներ, ստորներ, սկիզբներ և այլն։—Սկսել բառը եռավանկ է։ Ահա է պատճառը, որ հալ մարդը ռուսերեն վերի բառերը արտասանած ժամանակ՝ հնչում է ըսաըկըլյա՛նկա, ըզդըրավըստվովատ և այլն։

2. Բառամիջին վանկի վերջում, ձայնավորից հետո կարող է դալ միայն մի կամ երկու բաղաձայն, վերջինը միայն այն դեպքում, երբ առաջին բաղաձայնն է նալ p, r, ռնգային n, m, տևական ղ, խ, ւ (վ), զ, ս, ժ, շ, ֆ տառերը։ Օրինակ՝ զարթ-նել, ամճ-ճակաճ, ամպ-րոպ, գաղտ-նի, սասս-կանալ, պաշտ-պան և այլն։

Ահա հաշվով են նաև այ, ոյ, որոնք հնչվում են իբր ձայնավոր + բաղաձայն։

3. Բառի վերջում, ինչպես և միավանկ բառերի մեջ, սովորաբար վանկը վերջանում է վերի ձևով. բայց կարող է նաև լինել որևէ բաղաձայն կամ p հոգնակերտ նշանը (օրինակ՝ մեջք, աչք, կապք, միտք), կամ նաև քս հանգը (մետաքս, զուգս, մաքս).—Վերջապես կարող է լինել վերի ձևով երկու բաղաձայն + ք հոգնակերտ նշանը (ինչպես պարտք, կուրծք, վարձք, առանցք, քղանցք, հարրք, մարրք, եղբարրք)։

Ըստ այմ հայերենի մեջ վանկը ամենաշատ կարող է ունենալ 5 հնչյուն, որոնցից մի բաղաձայն սկզբում, հետո մի ձայնավոր և հետո երեք բաղաձայն (կուրծք, հարրք), որոնցից վերջինը միայն ք հոգնակերտն է։ Այսպիսի վանկեր կարող ենք գտնել բառավերջում կամ սակավաթիվ միավանկ բառերի մեջ։ Բառի մեջ երեք բաղաձայն միասին վանկի վերջում անհնարին է, բացառությամբ առանցք-ներ, քղանցք-ներ, կուրծք-ներդ, պարտք-ներդ և այլն ձևերի։ Ուր որ երեք բաղաձայն պատահի, մեկը պիտի անցնի հաջորդ վանկին. ինչպես վարձ-կաճ, պաշտ-պան։ Բացի դրանից, վանկի վերջում, ինչպես նաև բառի վերջում, ոչ մի բաղաձայնից հետո չի կարող պատահել ճ, բ, վ (ւ), շ։ Դերմաներեն ernst կամ ռուսերեն чувств վանկերի նման վանկեր անհնարին են հայերենում. դրանք հալը արտասանում է հռնըսա, չուվըստվ։ Նույնիսկ Մարքս անունը՝ եվրոպական հնչման անվարժ հալը արտասանում է Մարքըս։

Ամենից ավելի դժվար է որոշել, թե բառասկզբում կամ բառամիջում 2-ից ավելի բաղաձայնների իւճողման դեպքում ու՞ր պետք է դնել ը ձայնավորը (համմտ. Աբեղյան, Տաղաչափություն, էջ 51—53)։ Այդ կարգի բառերի արտասանությունը մենք սովո-

բաղկամբ պիտանի, թեև մեկին արտասանութիւնը երբեմն չի համապատասխանում մյուսի արտասանութիւնը. օրինակ, առում են լըրտա՜նել և լըրտըրնել, ձեռքնիա՜ս և ձեռնքնիա՜ս, փշրըվել և փըշ՜ըվել և այլն։ Բայց մեկը, որ ծանոթ չէ արտասանութիւնն, ինչպես պիտի է հնչէ, քանի որ ոչ մեկը չ-երը չեն ղրկում մեր հին, ինչպես և արդի ուղղագրութիւնը[1]։

Բառասկզբում, երբ առնենք 3 բաղաձայն միասին, երբորդը անցնում է հաջորդ ձայնավորին, իսկ առաջին երկուսը առանում են ը. ինչպես՝ սրատում, ննջել, թշուառ (ու համարձակ բաղաձայն), պահել և այլն։ Կան մի քանի բառեր, որոնք արտասանութիւն մեջ առասնվում են. ալսպես են մըրկել=մըրրկել, մըրրկել, փրթել=փրրըթել, փրրթել, գննել=գըննել, գըննել, քննել=քըննել, քըննել, կտրել=կրտրել, կրտըրել։ Սրանցից ավելի սովորական են առաջիններր, երկրորդներր՝ անսովոր։

Բառասկզբում, երբ առնենք 4 բաղաձայն, վերջինն անպատճառ անցնում է հաջորդ ձայնավորին, իսկ առաջին երկուքը կազմում են մի կամ երկու վանկ. ալսպես սրսկել=սըրսկել, սըրրսկել, նաև սրրսկել, մրնջել=մըրնջել, մըրնջել, խրտուիլակ=խըրտվիլակ, խրխիլ=խըրըխիլ, կռկռոց=կըռկըռոց և նմաններ. քրտնել=քըրտարնել, քրտնել, խնդրել=խընդրել (բայց ոչ խընդրըել), քրտնաթոր=քըրտնաթոր (բայց ոչ քըրտընտվոր), հրճուանք=հըրճվանք (բայց ոչ հըրճըվանք)։—Կրճատականա—ուել (վել) վերջավորութիւնը իրանից առաջ պահանջում է ը. ինչպես՝ զապըուել, զննուել, զրկուել, ըրջուել, լկտուել, խըմբուել, խոնուել, բռնուել, խցկուել, գտնուել, ճնշուել, պնդուել, բռնուել և այլն։ Այս կարգին չեն պատկանում հրնուել, ցրուել, դրդուել և այլն բայերը որոնց մեջ ու արմատական է։

Երբ բառասկզբում ունենք 5 բաղաձայն, նմանապես վերջին բաղաձայնը անցնում է հաջորդ ձայնավորին, իսկ նախորդ չորս բաղաձայիններր կազմում են 2 վանկ. ինչպես՝ մշտնջենաւոր, կընտրուող, շշկլուել, սրբսրբալ, խղրտխուն, տրտնջալ։

Այսպես նաև, երբ բառասկզբում ունենք 6 բաղաձայն միասին հավաքված. ինչպես սրթսրթալ, պլթպլթալ, վրթվրթալ, վճկվճկալ ըրթրմնջյուն և այլն։

Բառասկզբում, եթե հավաքված են երեք բաղաձայն, մեկը անցնում է հաջորդ ձայնավորին, մյուս երկուսը առանալով ը, կազմում են առանձին վանկ. ինչպես՝ վերըստին, կոտրըտել, կարմը-

[1] Մեր գրողներից Ս. Փամալյանն առաջարկում է գրել անդիր ը-երը և իր առօրյա գրութեանց մեջ էլ այսպես է գործածում։

րել, կամ միանում են նախորդ ձայնավորին, ինչպես՝ Աստված, վարձկան, արծվի։

Այս դեպքում կրավորականի -ուել (-վել) վերջավորությունը պահանջում է իրանից առաջ ը. ինչպես՝ դրոշմըվել, սարքըվել, սեղմըվել, սանջըվել, մոռցըվել, ջարդըվել, ճարթըվել, կազմըվել, տեսնըվել, բաքնըվել, մատնըվել, ճեղքըվել, ծածկըվել, ճաղթըվել, օգտըվել, զարնըվել, հաշտըվել և այլն։ Այս պարագային, երբ միջին բաղաձայնն է լ, ռ, ղ, յ, ձայնավորը արևելահայ գրականում գրվում է այս բաղաձայններից առաջ, մինչդեռ արևմտյան գրականում՝ սովորական ձևով. օրինակ՝ կոարուել, մաճրուել, պատռուել, կերակրուել, գայթակղուել և այլն ըստ արևելահայերի լինում են կոարըվել, մաճրըվել և այլն, մինչդեռ ըստ արևմտահայերի սովորական կանոնով՝ կոտրըվիլ, մաճրըվիլ և այլն։

Բառամիջում եթե հավաքված են 4 բաղաձայն միասին, վերջինը գնում է հաջորդ ձայնավորին, մյուս երեքը կազմում են երկու վանկ. ինչպես՝ յայտնվել, ընկճվել, պարտկվել և այլն։

Հարց է, թե հին հայերն էլ, արդի հայերի նման, բազաձայնների խմբերն արտասանելիս ներմուծու՞մ էին ը ձայնավորը, թե ռուսաց կամ ուրիշ եվրոպական լեզուների նման միաշունչ հընչյուն էին տալիս նրանց։ Այս բանն իմանալու համար որևէ ուղղակի վկայություն չկա։ Հալագետ Մեյեն մտածել է հետևյալ հնարագետ միջոցը։

Գիտենք, որ բայերի խոնարհման ժամանակ կատարյալի և ապառնիի ձևերը, եթե միավանկ են, ստանում են ե հավելվածը. իսկ եթե բազմավանկ են՝ այդ հավելվածից զուրկ են մնում. օրինակ, եհար, եւու, եաւր, եկաց, եղից, բայց սիրեաց, բերի, ածի և այլն։ Նմանապես ապառնիում միաչանկները ունեն ցց, իսկ բազմավանկները՝ ս. հմմտ. կացցես, սիրեսցես և այլն։ Արդ, այն բայերը, որոնց սկիզբը գտնում ենք կրկին բաղաձայն, նույն ժամանակներում ե չեն ստանում. այսպես՝ գրեաց, խցի, լցեր, նմանապես գրեսցես, գնասցես և այլն։ Նշանակում է, թե սրանք միավանկ բառեր չեն. գրեաց, խցի, լցեր գրչութիւնները չեն ներկայացնում ճիշտ արտասանութիւնը, որովհետև հին հայերն էլ կարդում էին գըրեաց, խըցի, լըցեր և այլն, ճիշտ ինչպես հիմա։ Այսպես նաև Մկրտչյան, «մշանջենաւոր[1]» և այլն բառերը, որոնք ըստ երևութին բաղաձայնների անարտասանելի խճողումներ են։

---

[1] Մի հայագետ եկնիկի «չմշանջենաւոր» բառը վերմանական առաւդարձութեամբ գրում էր հետևյալ ձևով. „tschmschtntschenavor". 14 բաղաձայն

Անարդ են մնում ատ, ապ, ակ ձայնախմբերը բառի սկզբում, որովհետև մի կողմից անհնար եղավ, եղանդ, որոնք ցույց են տալիս, որ այս բառերը միավանկ են (առանց հնչելի ապա-ևանիկ, ասեղ-ձեղ), իսկ մյուս կողմից անհնար առագաստ (և ոչ թե *առագ-գաստ), որ ցույց է տալիս, թե առաս-տագմաձանկ է (ալևինքն՝ հրնչում է բառա-ռաս և ոչ թե առաձաս)։

Մևլեն կարծում է, որ այս կարգի բառերը բուն անզուգական տարրեր են հնչյուն. այսպես, ձայնավորից հետո առա-, ապա- և այլն, իսկ բաղաձայնից հետո բառա-, բապա- և այլն (նամակ 1920 թ. անգամ)։

Վանկաբաժանություն.—Որևէ բազմավանկ բառի մեջ անջատ վանկերի որոշումը կոչվում է վանկաբաժանություն (épellation)։ Վանկաբաժանության մասին առաջին հարց է ծագում. նախ թե ո՞րն է բաժանչելու վանկի հնչյունների կամ հնչնական տարրը և երկրորդ, թե ու՞ր է հասնում նրա սահմանը, այսինքն՝ թե որ ձայնները կապված են նրա հետ նախորդ բաղաձայններից դիտենք արդյոք, որ վանկ է կազմում այն ձայնը, որ միաժամանակ մտքի մեջ լսելին է և միևնույն ժամանակ հնչյուն է ներկայացնում, և թե այս կետում առաջին անգամ են բանում ձայնավորներն ու երկրաբարառները, երկրորդ տեղում՝ l, m, n, r նեղերը, երրորդ տեղում՝ շփականները և հետո՝ պալթականները։ Այսպիսով հետևում են հետևյալ երկու օրենքները. 1. Որևէ ձայն, որ կապված է մի վանկի հնչյունների հետ, կարող է նրանից բաժանվել միմիայն այնպիսի ձայնի միջոցով, որ նրան հավասար կամ նրանից ավելի լսելի է և նրան հավասար կամ նրանից պակաս հնչյուն է ներկայացնում։ 2. Երբ երկու ձայն բաժանված են իրարից նվազ լսելի և ավելի մեծ հնչյուն ներկայացնող մի ձայնով, սրանք կազմում են երկու տարբեր վանկեր։ Այսպես, aio, ukm, idl ձայնախմբերի մեջ՝ a և o, u և m, i և l պատկանում են տարբեր վանկերի. ընդհակառակը, wai, upk, dli ձայնախմբերի մեջ՝ w և i, t և k, d և i պատկանում են միևնույն վանկին՝ կենտրոն ունենալով a, u, i ձայնները։

Այս երկու օրենքները բացատրում են մեզ, թե 1. ինչու՞ նալ + պալթական ձայնախմբերը (rt, lp, nk և այլն) կարող են դնվել վանկի վերջում (համմ. արտ, ալք, աչք, ուճք և այլն),

---

մի ձայնավորի սկզբից։ այժմ էլ մեր Մկրտչյան ազգանունը ռուսները գրում են Мкртчян և գտնում են, որ հայերենը անհնչելի բաղաձայնների մի խնդրում է։ մինչդեռ այս բառը հնչվում է իրոք Մըկըրտչյան։

բայց չին կարող դռնիվել վանկի սկզբում։ 2. Թե ինչու՞, ընդհակառակը, պալթականը + նայ ձայնախմբերը (tr, pl, kn և այլն) կարող են գտնվել վանկի սկիզբը և չեն կարող գտնվել վանկի վերջը՝ այն լեզուների մեջ, ուր ը ձայնավոր չկա, իսկ այն լեզուների մեջ, ուր այդ ձայնավորը կա՝ չեն կարող գտնվել վանկի ոչ սկիզբը և ոչ վերջը (համմտ. հայերեն թրել, դրած, աար և այլն)։ 3. Թե ինչու՞ միևնույն բառի մեջ բաղաձայնի տեղափոխությունը պատճառ է դառնում վանկերի թիվը փոխելու. ինչպես՝ կաթ (մի վանկ), կաթն (երկու վանկ)։

Վանկի կենտրոնը որոշելուց հետո մնում է որոշել, թե ուր է լուրաքանչյուրի սահմանը, պրտեղ է վերջանում ալսինչ վանկը և սկսում հաջորդը։ Այս հարցը վճռել շատ ավելի դժվար է։ Ըստ Ռուսլոյի, միայն միավանկ բառերն են, որ ունեն բնախոսորեն ճիշտ դոլութլուն, իսկ բազմավանկների արտասանութլան մեջ գործարանների շարժումները շարունակվում են առանց ընդհատման։ Ըստ Եսպերսընի բացատրութլան, «փնտրել երկու վանկերի սահմանը նման է փնտրելու, թե ուր է ձորի միջի այն գիծը, որ բաժանում է իրարից երկու հարևան լեռները»։ Ըստ Մեյեի (Introduction, V, 97), իսկապես բաղաձայնը պատկանում է միանդամայն երկու կողմի ձայնավորներին. պալթուցումը, որ ձայնավորի արտաբերութլունից հետո բաղաձայնի փակման կամ սեղմումի պատրաստութլունն է, պատկանում է առաջին ձայնավորին։ Իսկ պալթլունը, որ փակումին կամ սեղմումին հաջորդող բացումն է, պատկանում է երկրորդ ձայնավորին։ Մենք գիտենք, որ ձայնավորները ամենաբաց ձայներն են, իսկ բաղաձայնները՝ եթե սեղմ են, մի քիչ ավելի փակ են, իսկ եթե պալթական են, բոլորովին փակված են։ Ուրեմն և վանկերի հաջորդութլունը ներկայացնում է բացումների ու փակումների անընդհատ մի շարունակութլուն, որոնցից բացումները ներկայացնում են ձայնավորները, իսկ փակումները՝ բաղաձայնները։

Վանկատութլունը լեզվի մեջ ունի գործնական նշանակութլուն, որովհետև ստղադարձը հիմնվում է նրա վրա։ Այս պատճառով անհրաժեշտ է որոշել վանկատութլան կանոնները։

Վանկատութլունը շատ անդամ կախված է լուրաքանչյուր աղգի հնչական սովորութլունից, բայց ընդհանրապես կարելի է տալ հետևյալ օրենքները, որոնք նաև ստղադարձի օրենքներն են.

1. Երբ մի բաղաձայն գտնվում է երկու ձայնավորի միջև, անցնում է հաջորդ վանկին. ինչպես՝ Ա-պա-րա-ճի, ծա-ռու-ղի,

դի-բա-ատ-ում-ին-քի, և այլն։ Նույնիսկ եթե մի բառ վերջանում է բաղաձայնով և հաջորդ բառը սկսվում է ձայնավորով, բառավերջի բաղաձայնը միանում է մյուս ձայնավորին և վանկ կազմում. օրինակ՝ այ-սա-ա=այ/սա. դեմոնեներեն hat er es = ha-te-res։

Ֆրանսիերենում հաճախ դրվում է երկու բաղաձայն, բայց հնչվում է միայն մեկը. սա դեպքում մի բաղաձայնը մնում է մի վանկին, երկրորդը՝ մյուս վանկին։ Բայց առաջինը լոկ ձևական է, և վանկատման մեջ երկրորդն է միայն հնչվում. ինչպես՝ arracher— բաժանվում է ar-ra-cher, հնչվում է a-ra-cher։ Թե ինչու՞ արդյոք այդպես է, ինչու՞ արդյոք երկու ձայնավորի միջև դրված մի բաղաձայնը անցնում է երկրորդ վանկին և չի մնում առաջին վանկի վրա, բաց Գրոսի (BSL, XXVII, 1927 թ., № 81, էջ 24—25) այն պատճառով է, որ բաղաձայնները բառասկզբում ավելի ուժեղ են հնչվում, քան բառավերջում, որով և ավելի լսելի է a-ra-se, քան ar-a-se. կամ տոնելով հայերենից մի օրինակ՝ Ա-բա-բա-տը քան Ար-ար-ատ-ը։

Որոշ լեզուների մեջ կան դեպքեր, երբ նույն բաղաձայնը մնում է առաջին վանկի վրա, այսպես, անգլերեն capacity։ Սրա պատճառը համարվում է այն, որ անգլերենում բաղաձայնի լարումը ուժեղ է, անցումը տկար. դրա համար էլ կցվում է նախորդ ձայնավորին։

2. Երկու բաղաձայն եթե գտնվում են երկու ձայնավորի միջև, դրանցից առաջինը անցնում է նախորդ վանկին, երկրորդը հաջորդին. ինչպես՝ ար-բա, ապ-ատակ, Աճ-ճա և այլն։

3. Ասա պարագային, երբ երկրորդ բաղաձայնը l կամ r է, առաջին բաղաձայնն էլ միանում է նրան և անցնում հաջորդ վանկին, պայմանով, որ առաջին բաղաձայնը նայ կամ սևդ բաղաձայն չլինի։ Այս օրենքը ընդհանուր է բոլոր եվրոպական լեզուների, ինչպես և ռուսերենի մեջ. ինչպես ֆրանսերեն a-troce, é-craser, բայց al-ler, ar-rêter և այլն։

4. Երբ բաղաձայնների թիվը երկուսից ավելի է, մի բաղաձայն դնում է երկրորդ վանկին, մյուսները մնում են առաջին վանկին, բայց համեմատ նախորդ 3-րդ օրենքի. ինչպես՝ Աատ-ված, կանգ-նել, հարց-մունք և այլն, ֆրանսերեն ar-bre, am-ple և այլն։

Առաջինը. թե վանկատուքյունը շատ անգամ սովորության արդյունք է, հետևաբար շատ բան էլ համալական. այսպես՝ լատիներենում բաղաձայնների ամբողջ խումբը անցնում էր հաջորդ վանկին. հունարենի մեջ ն, շ, ռ իրենց հաջորդ բաղաձայնի հետ միանում

են միշտ հաջորդ վանկին, ինչպես՝ է-xնրծ; «թշնամի» և այլն։ Անգլերենում բառի արմատն ու մասնիկը մնում են առանձին, ինչպես՝ symbol-ise, preced-ing. գերմաներենում նախամասնիկները և բարդութիյանց մասերը բաժանվում են իրարից, բայց վերջնամասնիկները կանոնավոր են. ինչպես՝ ver-sprechen, bestimmen, Nach-ahmung, lei-dend, Wōr-tern։ Հունգարերենում ածանց բառերը հայերենի նման կանոնավոր վանկատութիյուն ունեն, իսկ բարդ բառերը՝ համաձայն առաջաբանութիյան, օրինակ՝ i-rok և új fák ir-ok, բայց megette և új fák megette (Ney, Ungarische Sprachlehre, Pest 1862, էջ XV)։ Աբաբերեն, թուրքերեն, պարսկերեն և վերջապես այն բոլոր լեզուների մեջ, ուր գրութիյունը արաբական տառերով է, վանկաբաժանում առհասարակ ընդունված չէ, որովհետև տողադարձի ժամանակ բառերի գրութիյան յուրահատուկ ձևը պիտի խանգարվեր։ Երբ բառը տողի ծայրին կիսատ է մնում, ավելի լավ են համարում կամ վերջին տառերը իրար վրա խառացնել և կամ ամբողջը անցկացնել հաջորդ տողը՝ բաց մնացած տեղում պարուրաձև նշան դնելով։ Նույն լեզուները հիմա սկսել են գործածել տողադարձը, բայց բառը կիսում են ոչ թե ըստ հնչման, այլ համաձայն գրութիյան յուրահատուկ պահանջներին։ Ռուսերենի մեջ մի տառը, հակառակ հնչական պահանջներին, չի կարող տողադարձվել։ Հայերենի մեջ հին ժամանակ տողադարձ չկար. ուր որ վերջանում էր տողը, այնտեղ էլ կիսում էին բառը և թեկուզ մի բաղաձայն անցկացնում հաջորդ տողը. ինչպես՝ իմաստութեամբ, աեառ-ն, արար-ի և այլն։ Արդի սովորութիյամբ ընդունված է տողադարձի հնչական դրութիյունը, որ իր պարզութիյամբ և ճշտութիյամբ գերազանցում է բոլորին.— բաղաձայնների բոլոր խմբերից միշտ մի բաղաձայն անցնում է հաջորդ վանկին. օրինակ՝ ա-բի, պատ-կեր, հարս-ներ, հանձ-նել, պարտք-ներս և այլն։ Ճիշտ այսպես է նաև չեխերենի մեջ, ուր միայն ck, čt, sk, st, št ձայնախմբերը ամենևին չեն բաժանվում իրարից. ինչպես՝ če-cky՛ «հուլունք», tu-re-čti «թուրքեր» և այլն (Hantich, Gramm. tchèque, 11)։ Հայերենի այս պարզ ու բնական կանոնը ոմանք սիրում են խճողել ավելորդ շեղումներով։ Այսպես, ոմանք սիրում են, համաձայն Եվրոպական լեզուների սկզբունքի, նաև տառերին կցել նախորդ բաղաձայնը. ինչպես՝ ա-պրես, աճ-ապուկ, ա-քլոր և այլն։ Այսպես են անում Մխիթարյանները, գլաբարյաններն մնացորդները և Կովկասի հայերից ոմանք՝ հետևելով ռուսերենի։ Ուրիշներ, երկաբրաոնների մեջ բաղաձայն

դարձած մասը իրեն ձայնավոր ընդունելով, բառ ավելի փոխում են կանոնը. այսպես՝ Ա-առած, դար-ձնել, փոխանակ Առ-ած, դարձ-նել, որոնք հնչվում են Առ-ած, դարձ-յալ. Ակռ հնման վրա պրծում է մնձու-թիւն, ան-նման և այլն, մինչդեռ դուռ հրնչական ձևով պիտի լիներ մնձութ-իւն, անն-նման. Վերջապես կան ավելորդներն էլ, որ պահանջում են բոլոր բառերը ստուգաբանել բառ իրենց արմատի՝ համաձայն վերոհանյալ տեսության. ինչպես՝ ան-զգամ, ձնռն-ադաց, ձնռն-երկն և այլն, փոխանակ ձեռնադաց, ձնռներկն։ Այսպիսի ստուգաբանը շատ անմիտ է հենց նրա համար, որ պահանջում է նախապես առուգաբանական պիտոիքներ և մի բան, որի առուգաբանությունը հայտնի չէ, կարելի չպիտի լինի ստուգաբանել և կամ սխալ պիտի ստուգաբանվի։ Օրինակ՝ ադամ-զադ բառը նախապես առուգաբանում էին այգ և սղադակ բառերից կազմված, ուստի պիտի ստուգաբանվին ադ-ամատ, իսկ հիմա, որ այդ առուգաբանությունը մերժված է և հայտնի չէ բառի ծագումը, ինչպե՞ս պետք է ստուգաբանվի։

Հայերեն ստուգաբանի վերջին մի կարևոր կետ էլ կայմում են այն բառերը, որոնք իրենց մեջ ունեն ը հնչյունը։ Նախ պետք է հնչյունը հարցնի է ասնվում և երբ առաջին ստոր վերջին վանկի կամ երկրորդ ստոր առաջին վանկի մեջ է գտնվում, առաջ էլ պրծում է. ինչպես՝ պր-ծել, երթ-ըլն, ա-ընդդամ, ա-պըռ-պըրծել և այլն։ Ասոնք կարծում են, թե հնչված ը-երը դրելու այս առաջարկությունը կամ առհասարակ ստուգաբանը ավելորդ է և իրենք էլ չեն պահում այդ կանոնը։ Ճիշտ չէ այդ։ Ստուգաբանի ժամանակ հնչված ը-երը դրելու առաջարկությունը գնահատման սխալներից խուսափելու համար է։ Օրինակ, եթե դրենք Մկր-սիչ, չէինք կարող իմանալ, թե պետք է կարդալ Մկըր-սիչ, թե Մկրը-սիչ. ը-ի գործածությունը փրկում է մեզ այս շփոթմունքից։ Իսկապես Մկրը-սիչ, բառ չկա և ամեն մարդ էլ կկարդա Մկըր-սիչ, բայց անշուշտ նախապես երկրորդ տոդի -սիչ վանկը նկատելուց հետո միայն։

Վանկերի ճիշտ բաժանումն էլ անհրաժեշտ է մեր մեջ, հակառակ պարագային հնարավոր են դարձյալ սխալ ընթերցումներ։ Օրինակ, Պատկանյանի անվանի հրատարակություններից մեկում («Խրիմյան Հայրիկանցւոյ Պատմութիւնք», Պետերբուրգ, 1867 թ.), էջ 6—7 անցման ժամանակ, կարդում ենք բա-զմաշխատ։ Ընթերցողը նախ պիտի կարդա բա-զմաշխատ և հետո նկատելով, որ այդպիսի բառ չկա, պիտի ուղղի բազ-մաշխատ։ Կամ, եթե հայե-

բեն քիչ գիտի, պիտի մտածի, թե ինչ կարող է լինել բա-զբաղ-խատ։

Ընթերցման այս հնարավոր շփոթությունը ավելի հայտնի դարձնելու համար կարելի է հիշել բազմակնություն, բազմախոսություն, բազմամսություն և այլն բառերը, որոնք կարելի է և՛ կարդալ բազմա-կնություն (շատ կին ունենալը), բազմա-խոսություն (շատ խիտ լինելը), բազմա-մսություն (շատ միս ունենալը), և բազմակ-նություն (շատ աչք ունենալը), բազմախ-ոսություն (շատ ախտեր ունենալը), բազմամս-ություն (շատ ամիսներ անցնելը)։ Տողադարձի ճիշտ գործածությունը՝ վանկերի ճիշտ բաժանումով և կամ ը-ի գործածությունն է, որ ազատում է մեզ շփոթությունից՝ այս և նման բառերի ընթերցման ժամանակ։

Երբ բառը բարդ է և երեան է գալիս այսպիսի անդիր ը, տողադարձի մեջ տիրում է շփոթություն։ Այսպես, օրինակ, ճամալապատ, արամադրել, արձանագրել, գերբնական բառերը կարելի է դրել՝

1. Համալ-սարան, տրամադ-րել, արձանագ-րել, գերբ-նական.
2. Համա-լսարան, արամա-դրել, արձանա-գրել, գեր-բնական.
3. Համա-լըսարան, տրամա-դըրել, արձանա-գըրել, գեր-բընական։

Առաջինը ղուտ հնչական ձևն է և համաձայն հայերենի տողադարձության պարզ սկզբունքին։ Երկրորդը ստուգաբանական, որի անտեղությունը պարզել ենք քիչ առաջ։ Երրորդը ստուգաբանական և անգիր ը-երը դրելու օրենքին համեմատ, բայց հայերենի արդի հնչման անհամապատասխան, որովհետև այսօր մենք չենք հնչում ճամալըսարան և այլն։ Ըստ մեզ, լավագույնը այս երեքից առաջինն է։

Տողադարձի համար մեր մեջ ընդունված ընդհանուր կանոններից մեկն էլ այն է, որ երբ մի բարդ բառի երկրորդ մասը ընկղմում է երկրորդ տողի սկիզբը, այլևս ը ձայնավորը չի գրվում։ Օրինակ՝ ան-մտություն, արև-մտյան, ան-տրամագիր և այլն, և ոչ թե ան-մըտություն, արև-մըտյան, ան-տըրամագիր և այլն։

Ծանոթ.— Իմ անհատական կարծիքով երկրորդ տողի առաջին վանկում ը դնելը ընդհանրապես ավելորդ է. եթե առաջին տողի ծայրին դրված ը-ն անհրաժեշտ է ընթերցման շփոթությունից խուսափելու համար, երկրորդ տողի սկիզբը ավելորդ է, որովհետև չի կարող ոչ մի շփոթություն ծագել։ Օրինակ, եթե տողադարձեինք Մկր-տիչ, չէինք կարող իմանալ, թե պետք է կարդալ Մկը՞ր թե

մկրտ. ասած՝ մկրտ պրեց անդրաժեշտ է. բայց երբ տողադարձում ենք մը-կրտուիչ, երկրորդ ր ավելորդ է, որովհետև մր-կրտուիչ պրելու ժամանակ էլ, միևնոյն մը-կրտուիչ կարելի է կարդալ և ոչ բնաւ մի տարբ ձևով։

Իսկ ր ձայնաւորը պրիչ տողադարձից երկու վանկ առաջ՝ բառասկզբի ավելորդ է. օրինակ. Տերտերյի «Անոնա Կարենինա», Բ, Երևան, 1936, էջ 49, տող 6 ամակից՝ երկար-չին, էջ 52, տող 3 ամակից՝ երկար-չին, էջ 60, տող 8 ամակից՝ երկա-րելու։

Երբ բառը բաղկացած է երեք և ավելի վանկերից և տողի վերջում ընկնում է ր, ամենը ոչ-ոնց չէն նշանակում. օրինակ, ո... ասաց կարմ-րելով Առաքելեան (Պատկանեան, «Ընտիր երկասիրութիւնք», 1893, Բ, էջ 134). տողիկ կարմր-րելով։

Երբ բառը բարդ է և երկրորդ մասը սկսում է ր նախաձայնով, տողադարձի ժամանակ բնականաբար պահում է իր ր ձայնաւորը. բայց այս դեպքում կարելի չկա դեմոնական տողադարձման օրենքով արմատները բաժանել. օրինակ, դա-սրն-կեր և ոչ թե դաս-րնկեր, ևո-րրնծա և ոչ թե ևոր-րնծա, կամ նաև դասրն-կեր, ևորրն-ծա և այլն։

Լսել եմ, որ անգլիացիք (ամենք) հատկապես տողադարձի ժամանակ դրաշարական դժվարութիւնները նկատի ունենալով, սկսել են տպագրութեան մեջ խստիւ վերացնել տողադարձը։ Լսել եմ, բայց դեռ չեմ տեսել նման մի հրատարակութիւն։ Տեսել եմ սակայն հայերէն նմանօրինակ մի դիրք, որ է Հ. Շնքերչեան, «Քրդերէն քերականական կուրս» (հրահանգիչ և այլն տարրերը ծանոթացնելու համար, երկրորդ հրատարակութիւն, Թիֆլիս, 1913)։ Այս դրքում ոչ մի տողադարձ չկա. բառերը ամբողջապես մնում են տողի վերջում կամ ամբողջովին անցնում են հաջորդ տողի սկիզբը։ Այս դրութիւնը անհարմար չէ տնգլերէնին, ուր ընդհանրապես բառերը շատ կարճ են. բայց հայերէնի համար, ուր երկար բառեր շատ կան, կարծում եմ, որ ոչ մի օգուտ չկա։

Հետաքրքրութեան համար դնում եմ ալստեղ մի քանի գրքերից հատկապես զանազան տողադարձական սխալներ, որոնք անշուշտ դրաշարների և սրբագրիչների անուշադրութեամբ սպրդած վրիպակներ են.

Ճենեվյոնի «Տնեմաքս»-ի արեմտահայերեն թարգմանութենից, տպված Փարիզ, 1860 թ.— կորսն-ցրնել (էջ 62), փնտ-ռելու (էջ 53), խորհր-դատու (էջ 73), բաժնու-իլդ (էջ 80), պատ-ոըսելով (էջ 83), հարցմուն-քներ (էջ 126)։

Ծաբենցի «Թորոս Լևոնի» վեպի Տիղիսի 1881 թվականի հրատարակությունից.—վըսաս-նութիւնը (էջ 46), ըզգու-շութիւնները (էջ 173), անմըտու-թեան (էջ 176), դըժբաղ-դաբար (էջ 183), խըսաս-ցաւ (էջ 195), անըզգա-մութիւնը (էջ 233)։

Հ. Դ. Ալիշանի «Ծուշիկք հայրենեաց Հայոց»-ի Ա հատորից, Վենետիկ, 1869 թ.—Պա-րըսկաստան (էջ 334)։

Դալիմքեարեանի «Նորադրոյն տղերք նղնկալ» աշխատությունից, Վիեննա, 1919 թ.—թար-գմանությունները, թար-գմանիչն (Հավելված, էջ 38 և 39)։

Ը ձայնավորի առդադարձության համար մի ուրիշ շփոթություն էլ կա. գանվել, բռնվել, ուղղվել և այլ նման ձևի բառեր, ուր մի քանի բաղաձայն իրար են հաջորդում. ոմանք առդադարձում են գանը-վել, բռնը-վել, ուղղը-վել, իսկ ուրիշներ՝ գտըն-վել, բռըն-վել, ուղըղ-վել։ Այս տարբերությունը առաջանում է բնականաբար արտասանության ձևից ու թեև կանոնի խախտում չկա, բայց նախընտրելի է առաջին ձևը։

Բաց և փակ վանկեր.—Հնչվաբանական քննության մեջ հաճախ պետք է նկատի առնել այն հանգամանքը, թե վանկը ինչպիսի ձայնով է վերջանում, ձայնավո՞ր, թե բաղաձայն, կամ որ նույնն է՝ որոշել, թե վանկի ձայնավորը վերջնաձա՞յն է, թե միջնաձայն։

Այս բոլորը կարևոր են նրանով, որ ձայնական փոփոխությունց մեջ ենթարկվում են տարբեր օրենքների։

Երբ մի վանկ վերջանում է ձայնավորով, կոչվում է բաց. երբ վերջանում է բաղաձայնով, կոչվում է փակ. այսպես՝ բա-բի, գի-նի, հո-ղո-վե-ցի բառերի մեջ բոլոր վանկերն էլ բաց են. տարբեր, դեր-ձակ-ներ, պատ-շաճ, բաղ-նիք բառերի մեջ բոլոր վանկերն էլ փակ են. իսկ Ար-տա-շատ, վար-դա-պետ, մըղ-ձա-վանջ բառերի մեջ առաջին և վերջին վանկերը փակ, միջին վանկերը բաց են։ Սրա համեմատ էլ բաց վանկի ձայնավորը կոչվում է ազատ, իսկ փակ վանկի ձայնավորը՝ կապյալ (entravée). այսպես բա-բի բառի ձայնավորները ազատ են, իսկ բաղ-նիք բառի ձայնավորները՝ կապյալ։

Այս բոլորի մեջ բնականաբար պետք է նկատի ունենալ յուրաքանչյուր լեզվի իրական և ժամանակակից հնչումը և ոչ թե գրության ձևը կամ ուղղագրական պայմանները։ Այսպես, հայերեն ավրիլ բառի մեջ ա վանկը փակ է և ա ձայնավորը կապյալ, մինչդեռ համահնչյուն ֆրանսերեն avril բառի մեջ a վանկը բաց է և կազմում է ազատ ձայնավոր։ Նույնպես աղուես (աղվես) բառի

առաջին վանկը պրոտեզի մեջ բաց է, և ձայնավորը ստում է, մինչ-
դեռ աշխարհաբարի մեջ փակ է և ձայնավորը կապակցել է, ըստ որում
պրոտեզի մեջ բառ հնչման վանկատում ենք a-lyes, աշխարհաբա-
րի մեջ at-ves։

Վանկերը դասակարգվում են երկարից դեպի սեղմ. կան
կարճ վանկեր և երկար վանկեր, ինչպես և շատ կարճ և շատ եր-
կար վանկեր։ Եվ վանկերի սեղմության աստիճանը կախում
է ստորչակետվելուն մեջ, որը մեր նպատակ աշխատվելուն առնչու-
նեցիչ գործ է, բայց նա հաճախ անհրաժեշտ է նաև գործ լեզվա-
բանական հարցերի մեջ։ Հետևյալ մենք ինքիրենք դնում ենք աստիճան
պատ, այն է՝ «Ձայնի սեղմություն» (գլուխ ԺԲ)։

ԳԼՈՒԽ ԺԲ

ՁԱՅՆԻ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ

*Մի բառի կամ մանավանդ մի նախադասութ-
յան բոլոր ձայնները միևնույն երաժշտական բարձրութ-
յամբ չեն արտաբերվում. Երբեմն ձայնը բարձրանում է, երբեմն իջնում. ձայնի բարձրութ-
յան այս զանազանութ-
յունը կոչվում է ինտոնացիա կամ ելևէջ* (Intonation)։

Ձայնի ելևէջի պատճառներն ու տեսակները երեք են.

*1. Խոսողի ներքին անհատական զգացմունքը տալիս է նախադասութ-
յան որոշ ելևէջ. այսպես, օրինակ, միևնույն տուէք բառը կարելի է արտասանել խնդրական, հորդորական, բարկացած, արհամարհական, համոզիչ, հարցական և այլ ձևերով։ Այսպես նաև մի որևէ կոչական. Այ՜ աղա, Կա՜րապետ, Կարապե՜տ... կամ խիստ՝ Կա՛րապետ...։ Այս ելևէջը կոչվում է զգայական* (emotionnelle)։

*2. Մինչև իսկ այնպիսի նախադասութ-
յուններ, որոնք զուրկ են որևէ զգայական դծից, օրինակ՝ մաթեմատիկական մի տեսութ-
յան բացատրութ-
յունը, ունեն այնուամենայնիվ յուրահատուկ որոշ ելևէջներ, որոնք ցույց են տալիս մտածմունքների ընդհանուր ընթացքը։ Այսպիսի ելևէջը կոչվում է տրամաբանական։*

*3. Լեզուների մեջ բառերն ունեն ձայնի այնպիսի ելևէջներ, որոնք ոչ զգացմունքների հետ են կապված և ոչ էլ նախադասութ-
յան տրամաբանական ընթացքի, այլ հենց բառի անբաժան մասն են կազմում։ Օրինակ, հն. νέφος բառի մեջ νέ վանկի արտասանութ-
յան ժամանակ ձայնը բարձրանում է, իսկ φος վանկի մեջ իջնում։ Միավանկալին լեզուների մեջ (օրինակ, չինարենում կամ սննամերենում, ինչպես նաև սուդանական լեզուներում) բառերը ունեն*

դնողական նշանակությունները և յուրաքանչյուր արտասանվում է տարբեր ելևէջով։ Ելևէջը, որ կարելի է կոչել լեզվական, սովորաբար կոչվում է նաև կամ բարձրության շեշտ (ton, accent de hauteur)։

Ամենից լաւմ և դնողականում է ձայնի ելևէջն ու դնողական բարձրությունները։ Մենք համառաչում ենք բարկացած տոնը, վախեցողի ձայնը, ապաշխարող ձայնը և այլն, նույնիսկ այն ժամանակ, երբ խոսողը ցանկանում է թաքցնել իր զգացմունքները։ Այդ բոլորը մենք սովորել ենք թե՛ արձիների վրա և թե՛ անձնական փորձառությամբ։ Այս ելևէջները այնքան բնորոշ են մարդկությանը, որ նույնիսկ եթե լինեք այնպիսի մարդկանց մի խոսակցություն, որոնց լեզուն չգիտենք, դարձյալ հասկանում ենք անմիջապես նրանց խոսակցության բնույթը. արքո՞ն ասբրիություն, արհնակ, ապատակամ մարդու շոգոմիչ լեզվի և դալլոցած մարդու հավելության լեզվի միջև... այս ասբրիությունը այնքան խոշոր է, որ նույնիսկ անասուններին հասկանում են. շանը մոտենում է մեզ պոչը շարժելով՝ երբ փոտոբշտար իրեն ենք կանչում և փախչում, հետանում է, երբ սպառնալի ձայնով լռեցում ենք վրան։

Բայց այդ նորությունները կատարելյալ մանրամասնությամբ իմանալու և հաշիվ տալու համար պետք է դիմենք սրձանագրիչ լրանին։ Երբ մի ամրողջ նախադասություն ձայնարի միջոցով արձանագրենք լրանի վրա, կստանանք թրթռումների մի երկար շարք։ Մենք գիտենք, որ յուրաքանչյուր ալիքի խարխափ երկարությունը (կամ լայնքը) կախված է տալիս թրթռման տևողությունը կամ որ նույնն է՝ արագությունը։ Եթե ուզենանք ճշտությամբ չափել այս արագությունը, պետք է առնենք մի հաստատուն ձայնորդի թրթռումները։ Կան, օրինակի համար, այնպիսի ճշտ ձայնորդներ (diapason), որոնք մի վայրկյանում ունենում են 200 կամ 500, կամ 1000 թրթռում։ Ձայնորդի թրթռումների գիծը մենք կարող ենք գործածել իբրև չափ կամ մասշտաբ։ Եթե ձայնորդը մի վայրկյանում թրթռում է 200 անգամ, ուրեմն նրա մի ալիքը տևում է $^1/_{200}$ վայրկյան։ Այժմ նախադասության թրթռումների յուրաքանչյուր ալիքի խարխափը համեմատելով կամ չափելով ձայնորդի ալիքների հետ, որոնց յուրաքանչյուրը գիտենք, թե $^1/_{200}$ վայրկյան տևողություն ունի, կարող ենք իմանալ նախադասության ալիքների տևողությունը։ Ենթադրենք, թե նախադասության մի ալիքը $^1/_{297}$ վայրկյան տևողություն ունենալով, ուրեմն մի վայրկյանում պիտի լիներ 297 թրթռում. և որովհետև գիտենք, թե

re^3 ունի 292 թրթռում, ուրեմն նախադասության այդ ալիքը ունի re^3 աստիճանի բարձրություն։ Այսպես չափելով նախադասության թրթռումների լուրաքանչյուր ալիքը, մենք պիտի նկատենք, որ՝

1. Ո՛չ մի ալիքի խարիսխը հավասար չէ հարևան ալիքի հետ, ուրիշ խոսքով՝ նախադասության մեջ նույնիսկ մի ձայնի բարձրությունը շաբունակ փոխվում է։

2. Ձայնի ստացված բարձրությունը հաճախ չի համապատասխանում երաժշտական ձայների բարձրության. օրինակ, 292 թրթռումը re^3 ձայնն է և 324 թրթռումը mi^3. բայց ինչ ձայներ են ներկայացնում 297, 299, 300 և այլն թրթռումները. հայտնի է, որ դրանք երաժշտության մեջ ընդունված բարձրություններ չեն։

3. Ձայնի տևողությունը այնքան կարճ է, որ չի համապատասխանում երաժշտական չափերին, ուր, ինչպես հայտնի է, ամենափոքր չափն է 64 () մի բանման մեջ։

Այս արդյունքները մեզ միջոց են տալիս ավելի լավ ճշտելու հոդավոր ձայնի և երգալինի տարբերությունը, որի մասին արդեն խոսել ենք (գլուխ Բ)։

1. Երգը ներկայացնում է մի կանոնավոր ռիթմ, որ կախված է որոշ օրենքներից. մինչդեռ խոսքի ռիթմը անկանոն է և հարափոփոխ։

2. Երգը գիտի միայն և միայն որոշ բարձրությամբ ձայներ, do, re, mi և այլն, և չի ճանաչում նրանց միջին աստիճանները. ձայնը, ընդհակառակը, ունի նրա միջին հարյուրավոր աստիճանները։

3. Երգը լուրաքանչյուր նոտայի համար ընդունում է մի նվազագույն չափ, որից ավելի կարճ տևողությունը ականջի համար անընդունելի է։

4. Երգը նոտայից նոտա անցնում է ոստյուններով, և ինչքան էլ երաժշտական միացումներ լինեն (portamento) նրանց միջև, դարձյալ ոստյունը զգալի է։ Իսկ հոդավոր ձայնը ոստյուններ չունի և սահուն-անցնում է նոտայից նոտա եղած բոլոր միջին աստիճանները՝ ականջի համար զգալի տևողություններով։ Օրինակի համար «տեսար» բառը երաժշտության մեջ պիտի գրեինք



սակայն իոսակցության մեջ՝



որ դարձյալ պիտի լիներ շատ մոտավոր պատկեր։

ն. Երդի մեկ ձայնատեսիճանի սահմանը մեծ է և լուրաքանչյուր նոտայի տեսադիրքը բաս կամս կարելի է երկարել, նուրնեկի մեջնչ շունչի վերջը։ Նոտակարգության մեջ, ընդհակառակը, ձայնատեսիճանի սահմանը առնվազն 4 անգամ փոքր է երդից, իսկ տեսադիրքն անհամեմատ փոքր։ Հայտնի է, որ երկարացրած ձայնով խոսակցությունը ծիծաղելի է համարվում։

Այս տարբերությունները են ահա պատճառ, որ կարելի չէ հոգեվար ձայնը ձայնագրել մեզ ծանոթ երաժշտական ձայնագրությամբ։ Եվ նրա համար էլ պետք է փորձել, որպեսզի երդերը եղել է միշտ մատչելի և առանց դիտական հաշվելու (մանավանդ հասարակ խոսակցությունը)։

Յուրաքանչյուր անհատի ձայն ունի մի որոշ տեսիճան, որ կախված է նրա խոշակի կազմությունից և ձայնալարերի երկարությունից։ բաս Լիտմոլի ձայնատոնն, այդ տեսիճանը հետևյալն է (արական ձայնի համար)։

basse-երի համար՝ mi².

baryton-ի համար՝ mi² — sol².

tenor-ի համար՝ sol² — la².

Այս տեսիճանները բնականաբար ներկայացնում են խոսակցության սովորական վիճակը, երբ մարդ խոսում է recto tono, իսկ երբ պոետական պատճառներ պետք են փոխելու խոսակցության բնորոշ բնավորությունը, ձայնատեսիճանն էլ փոխվում է։

Ինչպես այս դիտի սկզբում ասացինք, ձայնի հիմքը երեք է. դիտական, արտաբուսնական և լիզվական։

Պետք է քննենք յուրաքանչյուրը առանձին։

Զգայական հիմքը հոգմունքի արդյունքն է։ Հոգմունքը (ուրախություն, բարկություն, վախ, տխրություն, հուսալքում և այլն) առաջ է բերում մարդկային մարմնի գործունեության մեջ ժամանակավոր փոփոխություններ, ինչպես, ի միջի այլոց, շնչառության և արյան շրջանառության արագացում կամ թուլացում, սրտի բախումների ուժգնություն կամ տկարություն, մկանային շարժումների դադար կամ արագացում։ Այս փոփոխությունների արդյունքն է լինում ձայնի և դեմքի փոփոխությունը, այսինքն՝ հատաչանք, հնձնձանք, հիչ, պապակ, բացականչություններ, ջղաձգություններ, հոսպիտ և ծամածռություններ։ Փոխվելով շնչառության ոլիմպ, բնականաբար փոխվում է նաև ձայնի տևողությունը և ուժգնությունը։ Պլենաների մի նկատողության համաձայն, հոգ-

մուկքի ներգործությունը ամենից ավելի կրում են այն մկանները, որոնք ամենից ավելի փոքր են և զետեղված ուղեղային կենտրոններին շատ մոտիկ։ Ուշադրությունը ունենալով այս երկու պայմանները բնականաբար ամենից շուտ պիտի աղդվեր հուզմունքից. և նույնիսկ ամենաուժգին հուզմունքը, որ հազիվ պիտի շարժեր կամ փոփոխեր դեմքի մկանները, պիտի կարողանար ներգործել խոշակի մկանների վրա, որով պիտի առաջանար ձայնի բարձրության մեջ փոփոխություն։ Այսպես, ուրեմն, առաջանում է զգայական ելեվէջը։ Անշուշտ կա մի որոշ հարաբերություն հուզմունքների տեսակի և զգայական ելևէջի ձևի մեջ. բայց կարելի չէ եղած դուրս բերել նրա օրենքները, մի քանի պատճառներով։ Նախ՝ որ հուզմունքը փոխում է ոչ միայն ձայնի բարձրությունը կամ ելևէջը, այլև նրա ուժգնությունը, տևողությունը և նույնիսկ երանգը, և մենք լսում ենք այս բոլորի խառնուրդը միասին։ Երկրորդ՝ զգայական ելևէջը խառնված է լինում տրամաբանական ելևէջի և լեզվական ելևէջի հետ, այնպես որ ճշտել յուրաքանչյուրի բաժինը շատ դժվար է։ Այնուամենայնիվ կարելի է նկատել հետևյալ հանգամանքները.

1. Հուզմունքները երկու տեսակ են. ոմանք առաջ են բերում ուրախություն, եռանդ, ոգևորություն, այսինքն՝ արագացնում են գործունեությունը, մյուսները առաջ են բերում տխրություն, թուլություն, հուսալքում, այսինքն՝ տկարացնում են և դանդաղեցնում գործունեությունը։ Առաջինները ձայնին տալիս են ավելի բարձրություն, ելևէջի ավելի մեծ զանազանություն, այսինքն՝ ավելի մեծ երաժշտական միջոցներ, իսկ մյուսները ցածրացնում են ձայնը և ելևէջի մեջ դնում են ավելի փոքր զանազանություն։

2. Երբ հուզմունքները որոշ սահմանից անցնում են, ինչ տեսակի էլ պատկանեն նրանք, տալիս են նման հակազդեցություններ. ծայրահեղ ցավը տալիս է նույնպիսի մեծ ելևէջներ, ինչպիսին տալիս է ծայրահեղ ուրախությունը։

3. Հուզմունքի ներգործությունը ազգից ազգ և մարդուց մարդ տարբերվում է. ֆրանսիացին ավելի շատ է աղդվում քան անգլիացին ու գերմանացին. չղալին և արլունային մարդիկ ավելի շուտ են աղդվում, քան մելամաղձոտ և մաղասային մարդիկ. մանուկը ավելի շուտ է աղդվում, քան չափահասը և կինը ավելի շուտ, քան տղամարդը։ Առաջիններն ունենում են ավելի աշխուժ և ավելի զանազանյալ ելևէջ, քան երկրորդները։

Նկատված երևույթ է, որ կիսաքարայրային և կիսավարելավայրային մոլորակներում իրենց լույսի մեջ պետք են ավելի դանդաղորեն պտտվեն, քան քարայրային մոլորակները. ասենք, մի լավ է մեր հարևան պատահականների լույսն կամ շամախեցի հայոց բարբառը՝ դիտի, մեն ինչքան երկիրպատական են դրանք։ Ագռավները, վայրենիները, վանդալները և նապոլեոնները կարծում են, որ նախնական մարդկությունն էլ մի տեսակ երջ էր. բոլոր վայրենիներն, ամեն հնագույն պատիրում, երբ բանականանալուն ու ընդդեմ խառնվում էին իրար հետ, լսողն ու երգն էլ միացած էին իրար նախնական երաժշտության մեջ։ Ապացուցում, բարելշրջության (évolution) օրենքով, ինչպես որ բանականանալուն հետևման բաժանվեց ընդդեմ, նույնպես և լսողն հետևման պարծով նույն երաժշտական և միևնույն ժամանակ հետևման ավելի վերացական։ Ավելի հետո կտեսնենք իրար, մեն ինչպես հին լեզուները անհին երաժշտական շնչառը, որ հետևման տակի տալով, ասնոր պրիմեն խոպան վերացել է։

Տրամաբանական հիմքը նախադասության բնավորի արդյունքն է. նախադասությունը կարող է լինել պարզ նկարագրական, հարցական, բացականչական կամ հրամայական. չորս դեպքում էլ հայտնվածը անի իր դերը։ Պարզ նկարագրական մի հասկացի մեջ պատմողը տալիս է բնականաբար նյութի պատկերը, որ կարող է լինել շատ սովորական մի բան, բայց հանկարծ նա նրա մեջ դնում է իր պատկերը, բան որում դեպքին համաձայնում է կամ ոչ, հաստատում է կամ մերժում, հավանում է կամ դատապարտում։ Հարցական նախադասության մեջ կա հարցնողի հնարավորությունը և նրա սպասողական դիրքը։ Ավելորդ է խոսել հրամայական և բացականչական նախադասությունների մասին, որոնց մեջ խոսողը իր ամբողջ հոգեվիճակն է ի հայտ բերում։ Կամ ասեմ, ամեն տեսակի արտահայտական դեպքում իրապես դգալական է և հետևաբար նույնքան դժվար է որոշել նրա օրենքները, որքան և զգայական դեպքերի օրենքները։ Այնպես անհնարին կարելի է նկատել հետևյալ օրենքները.

1. Նկարագրական նախադասության վերջում ձայնը իջնում է, մինչդեռ նրանից առաջ գտնված բառի կամ բառերի մեջ ավելի բարձր է. օրինակ՝ Արագած սարը գտնվում է Շիրակի դաշտի մեջտեղում։

Երբ նախադասությունը բարդ է, նրա կազմիչ մասերից յուրաքանչյուրը վերջին վանկում ստանում է ձայնի բարձրացում կամ էջք. բայց այդ էջքը ավելի փոքր է, քան նախադասության վերջում։

Օրինակ՝ Արագած սարը, որ կոչվում է նաև Ալագյազ,—և դա թուրքական ձևն է,—գտնվում է Շիրակի դաշտի մեջտեղում։

Թվումների մեջ վերջընթեր բառը (լինի դա կապված շաղկապով կամ ոչ) ստանում է ձայնի առանձին բարձրացում. օրինակ՝ Հայկ, Արամ, Տիգրան, Վարդա՛ն ու Աշո՛տ։

Համակարգ նախադասությանց յուրաքանչյուրը վերջին վանկում ստանում է ձայնի էջք, իսկ պարբերության ամենավերջին վանկը ամենացած վանկն է. օրինակ. Հոս ջուրը ծիծա՛ղ մ՚ունի՝, օդը ծիծա՛ղ մ՚ունի՝, երկինք ծիծա՛ղ մ՚ունի։

2. Հարցական նախադասությունները *երկու տեսակ են լինում. առաջին՝ երբ հարցնողը իրազեկությանը ծանոթ չէ և ուզում է իմանալ երկրորդից, որ և պիտի պատասխանի այո՛ կամ ո՛չ. ինչպես.* Այսօր համալսարան գնացի՞ր։ Այս գիրքը կարդացե՞լ ես։ Հա՞յրդ է։ *Երկրորդ՝ երբ հարցնողը գիտի, որ դեպքը կատարված է, բայց անծանոթ է այս կամ այն հանգամանքին, որ և ուզում է իմանալ. ինչպես.* Համալսարան ե՞րբ գնացիր։ Քանի՞ գիրք ես կարդացել։ Ու՞ր է հայրդ։ *Երկու պարագային էլ հարցականը դրվում է այն բառի վրա, որի պատասխանը պահանջվում է. այսպես, վերի վեց հարցումների պատասխաններն են, օրինակ՝* Գնացի *(կամ* Չգնացի*),* Կարդացել եմ *(կամ* Չեմ կարդացել*),* Հայրս է *(կամ* Հայրս չէ*),* Երեկ, Վեց, Երևանում, *և հարցականներն էլ դրված են սրանց համապատասխան բառերի վրա։*

Պատահում է շատ անգամ, որ միևնույն նախադասության մեջ պահանջված պատասխանները տարբեր-տարբեր լինեն, այդ պարագային հարցականն էլ իր տեղը փոխում է։ Այսպես, վերևի առաջին հարցումը կարող է ունենալ հետևյալ ձևերը.

Այսօր համալսարան գնացի՞ր (թե չէ).

Համալսարան այսօ՞ր գնացիր (թե երեկ).

Այսօր համալսարա՞ն գնացիր (թե ինստիտուտ)։

Հարցման ձևերը կփոխվեն, եթե ուրիշ նորանոր բառեր էլ ավելացնենք նույն նախադասության վրա. ինչպես.

Այսօր համալսարան մենա՞կ գնացիր (թե եղբորդ հետ).

Այսօր համալսարան մենակ ոտքո՞վ գնացիր (թե կառքով)։

Հարցականի այսպիսի փոփոխություններ կարող են պատահել միայն առաջին տեսակի մեջ. իսկ երկրորդ տեսակի նախադասությունների մեջ հարցականի տեղը անփոփոխ է և միշտ դրվում է հարցական ածականի կամ մակբայի վրա (երբ, ով, քանի՞, ո՞ւր և այլն)։

Ահա պետքում էլ հարցականը արտահայտում է խոսակցության մեջ ձայնի այնպիսի բարձրացում, որ ավելի մեծ է, քան նկարագրական նախադասությունների սահմանադրված տատիանոր, որ հարցական նախադասությունը իր հարցականի հետ. ինչպես.

Ես գնացի դպրոց — Ես գնացի՞ դպրոց։

Արա համեմատ, հարցական նախադասության վերջին վանկի ձայնն էլ ավելի բարձր է, քան նկարագրական նախադասության մեջ. այնպես որ ինչ ձայնատատիճան որ կա նկարագրական նախադասության բարձր վանկի և վերջավանկի ձայնի մեջ, նույնքան էլ կա հարցական նախադասության պարույրի և վերջավանկի ձայնի մեջ։ Նույնպես, ևթե հարցական բառերը մեկից ավելի են, միայն առաջինն է, որ կրում է ձայնի բարձրացում. ինչպես. Համալսարա՞ն էի տուն ես գնում, Հա՞յրդ է, մայրդ, թե եղբայրդ և կամ բույրդ։ Հետ Պ. Պատանի, հարցականը վեց տատիճան բարձր է լինում. օրինակ. ֆրանսերեն Viens-tu? «Գալի՞ս ես» ներկայացնում է la fa նոտաները (V. Henry, Gramm. comp. angl., 127)։

3. Բացականչական նախադասությունը, լինի դա դրական թե բացասական, ինչպես հիացմունք կամ զարշանք, զարմացում կամ ղողանջ, ուրախություն կամ տխրություն, մաղթանք կամ անեծք, արտահայտվում է միշտ միևնույն ձևով. այն է՝ ձայնի բարձրացումը, որի հետ քննկերանում է նաև երկարացումը։ Բարձրացումը ավելի է, քան նկարագրական նախադասության մեջ և տակը է, քան հարցական նախադասության մեջ, ինչպես կտեսնենք դյուրությամբ, երբ իրար հետ համեմատենք միևնույն գնաց բառը երեք ձևի տակ.

գնաց *(նկարագրական)* — գնա՞ց *(բացականչական)* — գնա՞ց *(հարցական)*։

Երբ ասում ենք «ինչ արժե», առանց ղողալական նշանի ոչինչ չի նշանակում. բայց երբ դնում ենք ինչ բառի վրա հարցական նշանը (ի՞նչ արժե), այն ժամանակ նշանակում է, թե այս առարկայի դինը ինչքան է. իսկ երբ ինչ բառի վրա դնենք երկար բացականչական նշանը, այն ժամանակ «ինչ արժե» խոսքը նշանակում է «որքան լավ է, որքան հաճելի է»։

4. Հրամայական նախադասությունը սառնում է նույն աստիճանի բարձր շեշտ՝ որքան բացականչական նախադասության մեջ. տարբերությունը միայն այն է, որ այստեղ պակասում է ձայ-

նի երկարացումը. հրամանը լինում է միշտ կարճ ու կտրուկ.— Գնա՛ ասա՛ թող երթա՛։

Բայց պետք է ավելացնել, թե հրամայականը այնպիսի մի ձև է, որ կարող է արտաբերվել բազմատեսակ զգայական շեշտերով. օրինակ, կարելի է տալ կտրուկ մի հրաման, բայց կարելի է նաև նուլնը խնդրելով, աղաչելով կամ հորդորելով ասել. համմտ. ասա՛ր հրամայականը հետևյալ նախադասություններուն մեջ.

Տու՛ր թե չէ կսպանեմ *(խիստ հրաման)*.

Տու՛ր էլի, ինչու՞ չես տալիս *(խնդրական)*.

Լսնդրում եմ, քեզ մատաղ, տու՛ր, էլի՛ *(աղաչական)*.

Տուր երթա, շատ է գլուխ ցավացնում *(հորդորական)*։

Ձայնի ելևէջը կարող է ազգից ազգ կամ լեզվից լեզու և բարբառից բարբառ տարբեր լինել։ Ինչ որ նկարագրեցինք մինչև այստեղ՝ դա գրական հայերենի մեջ սովորական դարձած ձևն է։ Ելևէջի տարբերության մասին դաղափար կարելի է կազմել հենց մեր զանազան բարբառի մարդկանց լսելով. տարբեր ելևէջ ունեն կարնեցին, տարբեր շամախեցին, տարբեր թիֆլիսեցին, տարբեր պոլսեցին և այլն։

Լեզվական շեշտը այն է, որ ունի բառը ինքնին, անկախ նախադասության մեջ իր ստացած դիրքից և անկախ այն հոգեբանական վիճակից, որով մարդ արտասանում է այդ բառը։ Սովորական բացատրության մեջ մենք շեշտ բառը գործ ենք ածում անխտիր ձայնի թե՝ բարձրության և թե ուժգնության համար, առանց ուշադրություն դարձնելու նաև այն հանգամանքի վրա, թե նա պատկանում է բառին, թե արտյունք է հուզմունքի։ Գիտական լեզվի մեջ սակայն պետք է զանազանել այս բոլորը իրարից.— տոն (accent tonique, chromatique, musical) ասելով հասկանում ենք ձայնի բարձրացումը, բայց ոչ թե ուժգնությունը. իսկ շեշտ (accent d'intensité, accent expiratoire կամ accent) ասելով հասկանում ենք ձայնի ուժգնությունը և ոչ բարձրացումը։

Եթե մեկը նվագի երգեհոնի վրա և մի անգամ խփի do, նրա հետևից էլ fa, այդ երկուսը իրար հետ կունենան երաժշտական շեշտի (տոնի) հարաբերությունը, այսինքն՝ երկրորդը առաջինից կլինի 4 աստիճան բարձր, առանց սակայն նրանից ավելի ուժգին լինելու։ Հայտնի է, որ երգեհոնի ստեղները ինչքան էլ ուժգին խփվեն, դարձյալ միևնույն ուժգնությամբ կարտաբերվի ձայնը։ Իսկ եթե նույն փորձը կատարենք դաշնամուրի վրա և fa-ին տանք

մասի ավելի ուժեղ հարված, կոտրտանք ոչ միայն բարձր, այլև ուժգին ձայն։ Արդ, ալպիական են նաև այն ունեցող լեզուները, ուր ձայնը կոնկրետ բարձրությունն և ուժգնությունը, բայց ոչ ուժգնությունը. իսկ շեշտ ունեցող լեզուները ունեն նաև ուժգնություն։ Այլ բայաարտությամբ, շեշտ ունեցող լեզուն հչում, բղավում է (crier), իսկ առն ունեցող լեզուն երգում է ավելի բարձր տոնով, որ է tierce կամ աս տոնավելն quinte (V. Henry, Gramm. comp. du gr. et du lat., 98)։

Ահատարակ մեկ, ինչպես և պանտոան Եվրոպական ժողովուրդների և հատկապես անդլիացիների ու գերմանացիների համար տոնի ըմբռնումը շատ դժվար է, որովհետև այս բոլոր լեզուների մեջ հիմն առն դոյություն չունի, այլ կա միայն շեշտ։ Այս պատճառով գերմանական դպրոցը չի կարողանում ընդունել առն առանց ուժգնության (Meillet)։ Այս կարծի լեզուների, ինչպես և հայերենի մեջ նիթն կա առն, դա դպրոցական է կամ արհամարհանքոն։

Քիչ առաջ ասացինք, որ նիթն արձանագրիչ դրանի վրա արձանագրենք իրար թրթռումները, կտեսնենք, որ նրա ամեն մի վանկը ունենում է մի տարբեր տոն, որ նուրնիակ չի համապատասխանում երաժշտության մեջ ընդունված նոտաներին։ Սրանից հետևում է, որ տոների տեսակները շատ բազմաթիվ են։ Բայց մարդկային ականջը անկարող է դոնազանել այս բազմատեսակ տոները. ընդունված են միայն հետևյալ 4 ձևերը.

1. Հավասար կամ միալար տոն (ton uniforme). երբ վանկը իր ամբողջ տևողության մեջ պահում է նույն բարձրությունը. հավասար տոնը կոչվում է սուբ (aigu). նիթն ձայնի սովորական վիճակից բարձր է, և ծանր, նիթն նուրնից ցածր է։ Հավասար տոնը ներկայացնում են — նշանով։

2. Բարձրացող տոն (ton ascendant), երբ վանկի սկզբից մինչև վերջը ձայնը հետզհետե բարձրանում է. այս տոնը ներկայացնում են / նշանով։

3. Իջնող տոն (ton descendant), երբ ընդհակառակը, վանկի սկզբից մինչև վերջը ձայնը հետզհետե իջնում է. այս տոնը ներկայացնում են \ նշանով։

4. Բարդ տոն (ton complexe), երբ մի վանկի մեջ միասին դանվում են վերոգրյալ տոներից երկուսը կամ ավելին. օրինակ, վանկի առաջին կեսը հնչվում է սուբ տոնով, երկրորդ կեսը՝ բարձրացող տոնով։ Երկու տոնով կազմված խառնուրդները կարող են ներկայացնել հետևյալ ձևերը.



Նարեկի է նաև գտնել երեք տոնի խառնուրդ, ինչպես՝

Այսպիսի բարդ տոները գտնվում են բնականաբար միայն երկար և շատ երկար վանկերի մեջ։

Ոմանք չինարենի և այլ լեզուների տոնը նմանեցնում են անաստուններին ձայնի տոնին և նրանից ծագած են դնում։ Սխալ է. անաստուները հոդավոր ձայներ չունեն, այլ միայն մի ձայն՝ զանազան երանգներով։ Իսկ չինարենը և մյուս լեզուներն ունեն բազմաթիվ հոդավոր ձայներով հարուստ արմատներ՝ մի քանի տոներով։ Եթե այս լեզուների տոնը պիտի դնենք անաստուների տոնից, մեր խ, ղ, ճ, չ, ա, շ և այլն ձայներն էլ ավելի իրավամբ պետք է դնենք խոզերի, շան, օձի, գորտի և այլն ձայներից, ինչ որ չենք անում։

Տոնի էության մասին մի լավ օրինակ է տալիս Վեստերմանը (էջ 36), աֆրիկյան էվե լեզվի ուսումնասիրության մեջ։

Մեր մեջ էլ տոն կա, և մենք մեր խոսակցության մեջ կարող ենք միևնույն բառը զանազան տոներով արտաբերել. բայց այդ բոլոր տոներով էլ բառը մնում է նույնը և միայն խոսքի երանգն է փոխվում, իսկ տոն ունեցող լեզուների մեջ այդպես չէ. տոնի փոփոխության հետ բառի իմաստն էլ է փոխվում նրանց մոտ։ Մենք կարող ենք ուրախ կամ տխուր, հանգիստ կամ բարկացած տրամադրության տակ ասել «հա» (այո), և այդ բոլորի մեջ «այո»-ն «այո» է։ Բայց տոն ունեցող լեզուների մեջ ինչ տրամադրության տակ էլ լինի մարդ, պարտավոր է միշտ բառի տոնը պահել իր բնական վիճակում ամեն տեսակ նախադասության մեջ, ապա թե ոչ տոնի փոփոխությամբ բառի իմաստն էլ կփոխվի կամ անհասկանալի կմնա. օրինակ՝

Ենթադրենք, թե մեկը հարցրեց էվեին. «Երեքին էլ տեսար». Էվեն պատասխանում է. «Ո՛չ, միայն երկուսին տեսա».

ò, vé kò mèkpó.

Այստեղ Kpò «տեսա» բառն է, որ ունի բարձր տոն և ուժեղ շեշտ. և այդպես էլ պիտի մնա. մինչդեռ մենք պիտի շեշտեինք «երկուսին, vɛ» բառը և պիտի ասեինք.

ó, vé kó mèkpò, *որ բոլորովին անհամատ է*» (Westermann[1] 36, 38)։

Այժմ քննենք տանի գոնատան տեսակները նաև հին մի քանի լեզուների մեջ։

Տան տեսակով նաև լեզուների մեջ առաջին տեղն են բռնում անջատական կամ մեկուսական լեզուները։ Վանկերի թիվը սակաւ է, սակայն գոյ ունեցող բառերի համար[2] մեծագոյն մասն են ստանում տանի միջոց և տանի փոփոխութեամբ բաւին տալիս են բոլորովին նոր իմաստ։ Օրինակ. չինարէնն li վանկը եթէ առաջանում է երկրորդ տոնով, նշանակում է «ուժ», երրորդ տոնով՝ «ուժեղ», չորրորդ տոնով՝ «զորավար» (Seidel, Chin. gramm., 22)։

Տանի միջոցով բաւը կարող է բոլորովին հակառակ իմաստ ստանալ, ասենք չինարէն fu[1] նշանակում է «տղա, mann», fu[3] «կին, weib»։

Առաջին անդադրում շատ դժուարանալի պիտի թվա ընթերցողին չինարէնի այս հատկութիւնը, որ միևնոյն վանկը (բառը) այնքան տարբեր նշանակութիւններ ունենայ։ Բայց նոյնը չէ նաև եվրոպական ամենատարածուած լեզուներից մեկը՝ ֆրանսերէնը, որ տանի նոյն II վանկի համար՝ lit «մահճակալ», lis! «կարդա», lie «ներկ մրուր», lie «ընդծոյլ»։

Պիտի ասուրկվի, թէև սրանք դիչութեամբ տարբեր են. բայց տարբեր են նաև չինարէն բառերը, որովհետև չինարէնը այբուբենը պատկերագիր լինելով, ամեն բառ, ինչ էլ լինի նրա հնչումը, ծագումը կամ տոնը, գրվում է ըստ իմաստի տարբեր գրութեամբ կամ պատկերով։ Ուրեմն, չինարէնի առանձնութիւնը ֆրանսերէնից այն է, որ հնչմամբ նոյնն, բայց իմաստով տարբեր բառերը ոչ միայն տարբեր են դիչութեամբ, այլև տոնով։

---

1 *Չինարէն լեզուն ընդամենը 431 միավանկ բառ-արմատ ունի. բայց պետք է ավելացնել, որ բոլոր կարելի միավանկները չեն գտնվում լեզվի մեջ. եթե հաշվենք նույնիսկ չինարէն լեզվի ձայնական դրութեամբ, բոլոր կարելի միավանկների թիվը պիտի լիներ ընդամենը 910 հատ (Seidel, Chin. gram.. 20)։*

2 *Գնկինի բարբառում կա մի բառ. որ 70 տարբեր նշանակութիւն ունի, այս որ նույնն է՝ 70 տարբեր բառեր միևնույն հնչյունն ունեն (Seidel. Chin. gramm, 11)։*

Հատկանշական, որ նույնպես միավանկալին լեզու է և նման սիամերենի, կան բազմաթիվ համանուն բառեր, որոնք միայն տոնով են տարբերվում. ինչպես՝ nā «արտ», nā «կրտսեր մորաքույր», nā «հետ-ագեղ», nā «երես», nā «կրտսեր մորեղբայր» (Hospitalier, 25):

Շեշտի (տոնի) տարբերությամբ ստացված համանուն բառերի մի ուրիշ օրինակ տալիս ենք աֆրիկյան (ոչ բանտու) իբո լեզվից. ókù «կրակ», ókù «ծխամորճ», ókù «հարստություն, ինչք» (Spenser, 8—9): Ռաումը (էջ 38—40) տալիս է մի ցանկ աֆրիկյան ջադգա լեզվի այն կարգի բառերի, որոնք միայն տոնով են տարբերվում. օրինակ, Ruwa «Աստված արեգակ» (հալեբեն արև!), և zuwa «ճահիճ», soka «կացին և աղբյուր»:

Սուպանի բոլոր լեզուները ունեն տոնի գործածությունը. օրինակ, սուպանական շիլլուկ լեզուն ունի 3 տեսակ տոն. բարձր, ցածր և միջակ. կան նաև սրանց խառնուրդները՝ բարձր ու ցածր, ցածր ու բարձր. մի վանկի ձայնավորը կարող է ունենալ 3 տոն միասին: Կան շատ բառեր, որոնք տոնը փոխելով՝ իմաստն էլ են փոխում. բառեր էլ կան, որոնք տոնի փոփոխությամբ քերականական արժեքն էլ են փոխում. օրինակ՝ wàn (ցած) «տարի», wàn (բարձր) «աչք», dóc (բարձր) «բերան», dòc (ցածր) հոգնակի է (Westermann, 18):

Աֆրիկյան ահլոն լեզվով տոնի տարբերությամբ ձևացած բառեր. ìka «անասուն», íkà «ձեռք», lìlì «շարժվել», lílí «սովորել», ùńú «արյուն», ùńu «օդ» (Westermann, 7):

Աֆրիկյան տոքոտո լեզվով տոնի տարբերությամբ ձևացած բառեր են kà «ննստել», ká «տեսնել», nè «միասին», né «վիզ» (Westermann, 40):

Ամերեն լեզուն էլ ունի տոն, որ 5 ձև ունի՝ հավասար, ցածր, բարձրացող, ընկնող և երկարաձիգ,—տոնի տարբերությամբ կազմված բառերից հիշենք ma «գալ», «շուն, ձի» (Wershoven, 9):

Աֆրիկյան էվե լեզուն ունի 5 տոն. / բարձր, / ցածր, | միջակ, ∧ բարձր-ցածր, ∨ ցածր-բարձր:

Բացի այս հինգից, կա ևս 3 տոն, որոնք են՝ ավելի ցածր, ավելի միջակ, ավելի բարձր:

Տոնի աստիճանի, ինչպես նաև ձայնավորի տևողության փոփոխությամբ այստեղ էլ ստացվում են զանազան համանուն բառեր, ինչպես. to „dickflüssig sein„, tó «ասել» tò «ականջ», tŏ «խոռոչ», tǫ «սեփականություն», tò_ (միջակ տոն) «ջրեր», tó_ «սե-

վերանայելը։ Կամ մի ուրիշ օրինակ՝ mi «կլոնել», mi «մենք», mi «կեղտոտ» (Westermann, 2, 36, 39)։

Այս երեւույթը մեզ պարզաբանելի է թվում, երբ նայենք կամ նայե բոլոր լեզուների մեջ։ Արդեն, մեզ ծանոթ բոլոր լեզուների մեջ էլ հայտնաբեր պրեֆիքսով պայմանավոր է ասված։ Բացականչությունները մեծապես մասամբ ինքնին ենթագիտակ ձայներ են և պիտի միևնույն ձևն ունեն իրարից շատ տարբեր իմաստների համար և պայմանավոր են միայն տոնով (հիշա չինարենի պես)։ Օրինակ.

ա՜ն—պարզապես հայտնող, ա՜ն—ցավ հայտնող, ա՜ն—ապշանքի հայտնող և այլն։

Կամ նայենք բառասեռ ձայնարկությունները, ինչպես.

բա՜—իհարկե, բա՜—հարց բնչ, բա՜—պարզապես է։

լա՜—պարզապես բան (երեւան)։

լա՜—հարց բնչ կարծեցիր։

լա—էլ. լա հիմա։

լա—չէ՞ որ. լսելի լա, լսիր լա։

հա—ձայնի հաստատական սովորական ձև։

հա՜—իհարկե, այնպես.—պրամբ տվիր ես.—հա՜։

հա—պրամբ տվիր։ հա։

հա՜—պրամբ ասաս, հա։

հա՜—մի թե, այդպես է, չի՞ անի։ N

հա՝—հիմնապես ես.—հա, և այլն։

Մեր և միասնականային լեզուների տարբերությունը այն է միայն, որ մեր մեջ արանք բացատրի երեւույթներ են և հատուկ միայն բացականչություններին, իսկ միասնականային լեզուների մեջ դա ընդհանրանքն է, որ հատուկ է բոլոր բառերին։

Նախադասության մեջ տոնի տարբերությունը շատ ավելի լավ է արշավում. օրինակ.

—Այժմ ձկան ի՞նչ ժամանակն է (հարցական ձևով նախադասություն, որ դուրս է տալիս, թե այժմ բնավ ձուկ չկա։

—Այժմ ձկան ի՞նչ ժամանակն է (բացականչական նախադասություն, որ դուրս է տալիս, թե այժմ ընդհակառակը շատ ու շատ ձուկ կա)

Արանց նման՝

—Իրեն չըսե՛ս (հրամայական ձևով. նշանակում է նրան մի՛ ասի)։

—Իրեն չըսի՞ս (հիսոնարդական ձևով. ինչու՞ ինձ ես ասում, նրա՞ն ասա)։

Չինարենում կա 5 տոն. բայց բարձր չինարենը ունի միայն 4 տոն։ Եվրոպական ձայնը ≡ աստիճանի է, $\bar{a}$ տոնը նրանից 3 ձայն վերև է լինում և միահար այդ տոնի վրա կանգնում է. $\bar{b}$ տոնը բարձրանում է նույն աստիճանին, բայց շուտով 2 ձայն ևս է բարձրանում. $\bar{g}$ տոնը սովորականից մի ձայն իջնում է և իսկույն $\bar{a}$ տոնի աստիճանին է բարձրանում. $\bar{d}$ տոնը սովորականից 2 ձայն բարձրանում է և իսկույն իջնում է սովորականից մի նուրբ ցածր։

Ահա բոլորի պատկերը.



(Seidel, Chin. Gram., 22)։

Լաոսիրեն լեզուն էլ ունի 5 տոն, որոնք են՝ բարձրացող կամ հարցական (/), իջնող կամ ծանր (/), շնշտալ, Inflichè (եվնող-իջնող-եվնող N). իջնող և բարձրացող (⋁). բառեր էլ կան, որ ոչ մի տոն չունեն (տես Hospitalier, էջ 12, և ավելի երկար՝ էջ 86—90)

Աննամերինը ունի 6 տոն, որոնք են.

1. հավասար (egal կամ moyen, gleiche ton)	a
2. բարձր կամ սուր (supérieur կամ aigu, hohe ton)	á
3. ցածր կամ ծանր (inférieur կամ grave, trefe ton)	à
4. իջնող (descendant, fallende ton)	â
5. հարցական (interrogatif, Frage ton)	ǎ
6. բարձրացող (remontant, steigende ton)	ā

Հավասարն այն է, որով մարդ առհասարակ խոսում է։
Բարձր տոնը պիտի տոնել մի անգամից բարձր նոտայով։
Ցածր տոնը պիտի տոնել մի անգամից ցածր նոտայով։
Իջնող տոնն սկսվում է հավասարով և իջնում ցածրին։
Հարցականը նման է մեր հարցականին։
Բարձրացող տոնն սկսում է միջինից, հետո ցածր, հետո բարձր։
Տառադարձության նշանները վերի ձևով են։

Ձևքի շարժումներով կարելի է, ըստ Արենդտի, նկարել հետևյալ պատկերը.



Օրինակ՝ ma¹ նշանակում է «առատանա», 2. «կանգնիր» (բայեր).
ma² » «խոզապուխտ, ապուխտ».
ma³ » «բրնձի արտ».
ma⁴ » «բոլոր, համար, որպեսզի».
ma⁵ » «դևերկրմանը».
ma⁶ » «ձիու». (Dirr, Gramm. annam, 4—6).

Աննամերենում կան տոնի ավելի շատ տեսակներ. ասպես co վանկը արտասանվում է 15 տարբեր տոնով՝ ամեն մեկը տարբեր նշանակությամբ (Vendryes, Le langage, 35). եվ այնքան կարևոր են տոնի այս նրբերանգները, որ նրանց սխալ գործի, անհասկանալի չի հասկանա.

Տոնը նույն նպատակով գործածվում է նաև Աֆրիկայում, սուդանական լեզուների մեջ, ասպես՝ հաուսանդարան նամա լեզուն պիտի երեք տեսակ տոն (բարձր, միջակ և ցածր).—Միջակ տոնը այն է, որով մարդ սովորաբար խոսում է. բարձր տոնը այն է, երբ մարդ այսինչ վանկը միջակ տոնով արտասանելու միջոցին հանկարծ 3 կամ 5 տոնա բարձրացնում է. իսկ ցածր տոնն այն է, երբ միջակից ընդհակառակը հանկարծ 3 կամ 5 տոնա ցածր է իջնում (Seidel, Hspr., 2).

Ասիմալան Աֆրիկայի էֆիկ լեզուն ունի 5 տոն (բարձր, միջակ, ցածր, բարձրացող, իջնող).

Աֆրիկյան իրա լեզուն (ոչ բանտու) ունի 5 գլխավոր տոն. բարձր, ցածր, միջին, ընկնող, բարձրացող, որ ներկայացնում ենք հետևյալ ձևով.



Բացի այս գլխավոր տոներից, կան նաև շատ ուրիշ տոներ էլ, որոնք գործածվում են լեզվում, հատկապես բառի մի տոնից մյուսը անցնելու ժամանակ.

Ի. Ուորդը An introduction to the Ibo language, (Cambride, 1935), գտնում է, որ տոնը խախուտ երևույթ չէ. նա քննության առնելով իրա լեզվի 10 բառ, գտել է, որ քերականական և բառարանային ձևերը ավելի անհավատար կամ փոփոխական են, իսկ տոնը անփոփոխ է.

Բառի տոնը նախադասության մեջ մի ուրիշ բառի հետ կապվելու ժամանակ կարող է ազդվել նրա տոնից և փոխվել (tone assimilation կոչվում է այս երևույթը)։ Այս փոփոխությունների համար ահագին թվով կան կանոններ, որոնց ուսումնասիրությանն է նվիրված ամբողջ գիրքը (Ward, 12—15)։

Եվրոպական լեզուները, ինչպես ասացինք, սովորաբար զուրկ են տոնից. այնուամենայնիվ ոմանք ներկայացնում են տեսակ-տեսակ տոներ. այսպես՝ սերբերենը, լիտվաներենը, բայց ամենից ավելի շվեդերենն ու նորվեգերենը։

Սերբերենն ունի 4 տեսակ տոն, որոնք զանակվում են հետևյալ ձևով.

1. իջնող երկար (◌̏).
2. բարձրացող երկար (◌́).
3. իջնող կարճ (◌̀).
4. բարձրացող կարճ (◌̑).

(Кульбакинъ, Серб Лз., 23, 29)։

Շեշտված վանկը արտասանվում է միաժամանակ ավելի բարձր նոտայով և ավելի ուժգնությամբ, քան անշեշտ վանկը. բայց ուժգնությունը սովորաբար սերբերենում տկար է. և միայն տալիս է շեշտյալ վանկին մի քիչ ավելի ցայտուն կերպ, քան մյուսները. նոտայի բարձրությունը ավելի գերակշիռ է քան ուժգնությունը, որով սերբերեն բառն ստանում է երաժշտական երևույթ։ Երբ տոնը բարձրացող տեսակն է, ձայնն սկսում է հետզհետե բարձրանալ մինչև հաջորդ վանկի սկիզբը, իսկ այդ հաջորդ վանկի ձայնավորն էլ պահում է նույն այդ վանկի բարձրությունը. օրինակ, planina «լեռ» բառի մեջ, pla ցածր է, ձայնը հետզհետե բարձրանում է i-ի վրա և այդ աստիճանը մնում է na-ի վրա. այսպես՝ pla-ni^{1-na}. իսկ եթե իջնող տոնն է (այդ միայն առաջին վանկում կարող է պատահել), ձայնը չի բարձրանում, պահվում է նույն աստիճանին, հետո հանկարծ ցածրանում է և այդ ցածր աստիճանը մնում է նաև հաջորդ վանկի վրա. օրինակ, sèla «գյուղ» բառը արտասանվում է՝ ^{se}\e—la (Meillet, Gramm. serbe, 23)։

Շվեդերենի մեջ շեշտը երկու է. պարզ (որ գրեթե նույնն է մեր շեշտի հետ), բարդ (որ հատուկ է շվեդերենին և նորվեգերենին)։

Պարզ շեշտը հավասար ուղ տոնն է, որ մյուս վանկերից մոտ երկու աստիճան բարձր է. ինչպես.



Նա կոչվում է Հալ մար

Ձևական Hjal-*վանկը առած է պարզ շեշտ։*

Բարդ շեշտը սովորական առաջնային մեկ առիճանն բարձրանում է, հետո մեկ առիճան իջնում և հաջորդ վանկի մեջ էլ երկու առիճան բարձրանում է, ինչպես.



Նէ կոչվում է Ան — նա

Ձևական An *վանկը առած է բարդ շեշտ։*

Շվեդերենի և նորվեգերենի մեջ էլ շեշտի տարբերությամբ փոխվում է բառի իմաստը. օրինակ.

շվեդերեն haven *(պարզ) «ծովեզր», haven (բարդ) «առնէք».*

նորվեգերեն boenner *(պարզ) «ղլուխգիր», boenner (բարդ) «լուրեներ».*

(Poestion, Lehrb. schwed., 33)։

Կամ նուէնիսկ ամբողջ նախադասությամբ և հակառակ իմաստի,

նորվեգերեն vil du bli *(բարզ)* med Kammeråten din.

«պիտի դնա՞ս ընկերներիդ հետ».

նորվեգերեն vil du bli' *(պարզ)* med Kammeråten din.

«պիտի մնա՞ս ընկերներիդ հետ ալսաստղ»։

(Mélanges, Pedersen, 315)։

Տոնը գործածվում է նաև քերականական կարգերը որոշելու համար. այսպես՝ չինարենում՝ ներգործականը դառնում է անցողական, օրինակ՝ yin^3 *«խմել». yin^4 «խմցնել». գոլականը դառնում է բալ, օրինակ՝* yi^1 *«շուրթ», y^4 «հադնվել». ածականից կազմվում է բալ, օրինակ՝* čr$_{\text{ɛ}}$ŋ^2 *«երկար». čag^4 «աճել»* (Seidel, Chin. gramm. 26)։

Աֆրիկյան փոլլ լեզվի մեջ տոնը որոշում է բալի դրականը, բացասականն ու կրավորականը. ինչպես՝ mi piya *«խփում եմ»,*

mi piyà *չեմ խփում*, mi piyà *«խփում եմ»* (Homburger, MSL, 23, 154)։

Աֆրիկյան էֆիկ լեզվի մեջ տոնը, որ 5 տեսակ է, ծառայում է ոչ միայն հոմանունների տարբերությունը որոշելու, այլև քերականական ձևերը։ Նկատելի է, որ այս լեզուն մի վանկային չէ. բառերը կարող են ունենալ 1, 2, 3 վանկ և այդ վանկերը, համաձայն որոշ կանոնների, ստանում են այս ու այն տոները։ Իդա Ուորդը ուսումնասիրել է այս տոները և ձայնապնակների վրա առնելով հրատարակել է (Kambridge, 1933)։

Տոնը օգտագործվում է նաև ճապոներենում՝ իբրև միջոց քերականական ձևերը որոշելու։

Չափազանց դժվար է քննել և երևան հանել հին լեզուների տոնը, ինչպես և շեշտն ու տևողությունը, մանավանդ երևան հանել նրանց կրած փոփոխությունները ժամանակի ընթացքում։ Եթե տառը, որ այնուամենայնիվ տալիս է բառի հնչական պատկերը, այնքան թերակատար է, ինչ պետք է լինեին տոնը, շեշտը և տևողությունը, որոնք շատ ու շատ լեզուների մեջ ամենևին չեն էլ նշանակվում, կամ եթե ոմանց մեջ էլ նշանակվում են՝ շատ թերի ձևով։ Այս կետերի քննությունը մենք պիտի վարենք տրված գանազան գիտական միջոցներով, հետևյալ եղանակով.

1. Մի քանի լեզուներ, ասպես՝ վեդայական սանսկրիտը, հին հունարենը (սկսած ալեքսանդրյան շրջանից), հին բարձր գերմաներենը թողել են շեշտադրյալ բնագրեր. եթե սրանց մեջ էլ ոչ եթե շեշտի տեսակը, այլ նրա տևողն է միայն նշանակված։

Այսպես, վեդաների մեջ ամեն մի բառի յուրաքանչյուր վանկի վրա կա մի նշան (ε), որ ցույց է տալիս, թե մյուսներից ավելի բարձր պետք է արտասանել այդ վանկի ձայնավորը։ Վանկից մեկը միայն կարող է լինել մյուսներից ավելի բարձր և կոչվում է սանսկրիտ քերականության մեջ udātta *«բարձր»։ Այսպես, օրինակ,* bhārati *«բերում է» բառի մեջ բարձր է առաջին վանկը, մյուսները ցածր են։*

2. Այն լեզուների մեջ, ուր տարաչափությունը քանակական է, ինչպես հունարենն ու լատիներենը, տարաչափյալ գրվածները գալիս են տալու մեզ զանազան լուսաբանություններ։

3. Այն լեզուների մեջ, ուր տարաչափությունը շեշտական է, ինչպես գերմանական լեզուներում, նույնպես տարաչափությունը նպաստում է մեզ զանազան կետերում։

4. Հին քերականները տվել են մեզ զանազան նկարագրություններ՝ շեշտի կամ տոնի մասին։ Նույնիսկ կան երաժշտական

ավելանան, որոշ երաժիշտներ բառի սկսման վանկը առնուվար վանկից ավելի բարձր չէին երգում (Meillet, traité, 120)։

5. Ամենից ավելի նպաստում են մեզ վերծնական քննություններ. եթե մի կոպմից մի լեզվի մեջ՝ որի ասներ, շեշտը և առոգանությունը մեկ ծանոթի են, դասնանք ձայնական գանազան երևույթներ և հատատանենք, որ պրոնք արդյունք են ասների, շեշտի և առոգանության, մյուս կոպմից, եթե մի ուրիշ լեզվի մեջ դասնանք նման ձայնական երևույթներ, կարող ենք ճանաչել նրա ասներ, շեշտը և առոգանությունը, որ անծանոթ էին։ Նույն արդյունքները նույն պատճառներն են ենթադրում։

Այս բոլոր դիտքերի վերլուծման մեջ բնականաբար քնախոսությունը պիտի մեզ հետ քննություն ձեռք-ձեռքի։

Ահա ալբպիսի քննություններով իմանում ենք, որ հունարենը ունեցել է 3 տեսակ շեշտ accent—,այն է սուր (algu) շեշտ (´), ծանր (grave) շեշտ (`), և պարույկ circonflexe (~)։ Սուր շեշտը, ըստ Դիոնիսիոս Հալիկառնասցու բազատրության, մյուս վանկերից 3½ ասն բարձր էր, այն է՝ մի կվինտա. ուրիշն և հավասար պիտի լիներ ևս ավասար սուր ասն։ Ծանր շեշտը թվում է, թե անշեշտ վանկն էր. այն է, նորմալ ասներ, առանց բարձրացման և առանց իջեցման։ Պարագրը դրվում էր միայն երկար վանկերի վրա. ուրիշն բարդ ասն էր, որի առաջին կեսը սուր էր, երկրորդ կեսը ծանր, այն է սուր-իջնող \, կային նաև երկար վանկեր, որոնց ծանր-բարձրացող ասնով /։ Ուրիշ խոսքով, հունարենում սուր շեշտը (´) դնվում է բառի վերջին երեք վանկերի վրա, պարույկը (~)՝ վերջին երկու վանկի վրա, իսկ բառի շեշտը (`), միայն վերջին վանկի վրա։ Ավելի հետո, այն է մեր թվականի սկզբում, հունարենի ասներ վերածվեց շեշտի, ինչպես է արդի հունարենում։

Սանսկրիտն էլ ունի երեք տեսակ շեշտ. սուր, ծանր, պարույկ (վերջինս սուր և ծանր երկու շեշտ միասին է մի վանկի վրա) (whitney, ind. gramm., § 81)։

Լատիներենը, իր հնադույն շրջանում, ուներ ուժգնության շեշտ, որ դնվում էր բառի առաջին վանկի վրա. գրական շրջանից առաջ այս շեշտը արդեն վերջացել էր և նրան հաջորդել էր ասներ (բարձրության շեշտ), որ դնվում էր բառի վերջընթեր կամ նախավերջընթեր վանկի վրա։ Ավելի հետո, դեպի մեր թվարկության մեջ առաջ չորրորդ դարը, այս ասներ վերածվեց նորից շեշտի, բայց միևնույն ժամանակ բառի նախավանկի վրա ձևացավ մի երկրորդական շեշտ։

Այժմ քննենք այն հարցը, թե տոնը որ վանկի վրա պետք է գտնվի։ Այս հարցը միավանկալին լեզուների համար ավելորդ է, որովհետև նրանց մեջ բառերը միավանկ լինելով, հենց նույն վանկն էլ ստանում է տոնը։ Բայց նույնը չէ բազմավանկ բառեր ունեցող լեզուների համար։ Սրանց մեջ սովորաբար մի վանկն է. որ գերազանցում է բոլորից և ունենում է ավելի բարձր տոն։ Տոն կրող վանկը կոչվում է տոնավոր (tonique), իսկ մյուսները անտոն (atone)։ Անտոն վանկերը բոլորն էլ չեն ներկայացնում միևնույն ելևէջը, բայց տոնավոր վանկը իր բարձրությամբ ամենից գերացանցն է։

Շատ կարևոր է ճշտել, թե որն է բառի տոնավոր վանկը։ Այս կողմից լեզուները բաժանվում են երկու խմբի. ոմանց մեջ տոնը շարժական է, այսինքն՝ կարող է գտնվել բառի բոլոր վանկերի վրա անխտիր, ուրիշների մեջ սակայն հաստատուն է, այսինքն՝ անպատճառ գտնվում է այս կամ այնինչ վանկի վրա, համաձայն որոշ պայմանների։ Այսպես, օրինակ, սանսկրիտի մեջ, ինչքան էլ երկար լինի բառը, տոնը կարող է գտնվել սկսած առաջինից մինչև վերջին վանկը, որևէ տեղ, արմատի, մասնիկի թե վերջավորության վրա անխտիր, առանց որևէ պատճառաբանության. նրա տեղը որոշված է համաձայն ավանդական սովորության, որ կարելի է իմանալ բառարանների միջոցով։ Օրինակ, agnīnām բառը շեշտվում է վերջին վանկի վրա, իսկ hiraṇyavāçīmattama բառի մեջ շեշտը առաջին վանկի վրա է (Whitney, Ind. gramm., § 95), որ է վերջից հաշված ութերորդը։ Ընդհակառակը, հին հունարենում տոնը կախված է վանկերի թվից և նրանց տևողությունից։ Ծանր տոնը կարող է դրվել միայն վերջին վանկի վրա (լինի այդ վանկը կարճ թե երկար)։ Եթե բառի վերջնավանկը սուղ է, սուր տոնը նախավերջընթեր (antípinultième) վանկից այն կողմ չի կարող անցնել (այսինքն՝ կարող է դրվել վերջից հաշված 1, 2, 3-րդ վանկերի վրա, բայց ոչ չորրորդ և այլն). իսկ եթե վերջնավանկը երկար է, տոնը չի կարող անցնել վերջընթեր (pinultième) վանկից. ինչ որ նշանակում է, թե տոնը ամեն դեպքում էլ գտնվում է 3-րդ վանկի վրա (քանի որ մի երկար վանկը հավասար է երկու սուղ վանկի)։ Պարուկը կամ ոլորակը (circonflexe,) որ գտնվում է միայն երկար վանկի վրա, չի կարող անցնել վերջընթեր վանկից, եթե վերջնավանկը սուղ է և վերջին վանկից, եթե նա երկար է։ Բոլոր դեպքերում էլ ուրեմն տոնը խաղում է բառի վերջին երկք վանկերի մեջ և նրա դրությունը կախված է վերջին վանկից. վերջընթեր վանկի երկարությունը կամ կարճությունը արժեք չունեն։ Բայց

նրա հիշյա տեսլը նախնական արտ չէ և իմաստյամամ է միայն համաձայն տեղանունների մեջ—Լատինականում, ընդհակառակը, տեսի տեսլը բոլորովին արտշված է. նա կախված է վերջնահիմ վանկից. եթե բառն վերջնահիմ վանկը երկար է, առնում է նրա վրա (amare), իսկ եթե կարճ է, նախավերջնահիմ վանկի վրա (rigidus). ինչպես՝ legèmus, բայց légimus, potéstas, բայց nóvitas։

Հունարենում եթե առ տանը դանվում է վերջին վանկի վրա, բառը կոչվում է oxyton (շեշտատար), եթե վերջնահիմ վանկի վրա է, կոչվում է paroxyton (հարաշեշտ), իսկ եթե նախավերջնահիմ վանկի վրա է, կոչվում է proparoxyton (հարաշեշտատար)։ Եթե պարտիկ վերջին վանկի վրա է, բառը կոչվում է périspomène (պարատիկ), իսկ եթե վերջնահիմ վանկի վրա է՝ propérispomène (հարապարատիկ)։ Եթե ծանր շեշտ ունի բառը, կոչվում է baryton (շեշտատար)։ Սրանց մեջ, ինչպես տեսանում է, շեշտը շեղված է տանի հետ, համաձայն հին քերականների տեսության[1]։

Նախադասության մեջ տեսին մի բառ նայն կարևորություն չունի. կան բառեր, որոնք հերքողական արժեք ունին և ծառայում են մյուսների ուժեղ կամ ուժեղ պերը արտշելու, այսպես են հոգը, նախդիրները, անորոշ դերանունները, աժանդակ բայերը և այլն։ Այս կարգի բառերը արտասանվում են շատ թույլ տոնով կամ տանն իսպառ կորցնում են։ Սա հնդեվրոպական մի շատ հատկանշական երևույթ է։ Տանի կորուստով նրանք հարաբերվում և միանում են այն բառին, որի իմաստի լրացման են ծառայում։ Այս կարգի բառերը կոչվում են վերջադար (enclétique), եթե կցվում են դլխավոր բառին՝ վերջից, և կամ նախատար (proclétique), եթե կցվում են նրան սկզբից։ Արևմտյան հայերենով ձայ մը, մարդ մը ձևերի մեջ մը վերջադար է. իսկ դրաբար ի տան, ի տանե, կամ ֆրանսերեն le pain, la maison ձևերի մեջ p, le, la նախատար են։ Վերջադար և նախատար բառիկները դլխավոր բառի հետ միասին մի գաղափար են կազմում, արտասանության մեջ նրանք երևում են իբրև մի բառ և լեզուների մեջ ընդունված ուղղագրության համաձայն է միայն, որ սովորում է գրել այդ բառերը մերթ միասին և մերթ անջատ։ Ասպես, հին պարսկական բևեռագրության մեջ, ուր բառերը բաժանվում են իրարից թեք սեպով (՝), վերջա-

---

1 փակագծերում տրված հայերեն տերմինները տրված են լատ. Թրակացու Թարգմանության (Н. Адонц. էջ 38—39)—է. Ա.

հարևները չեն առանում այդ նշանը և համարվում են նախորդ բառի շարունակությունը։ Հունարենն ու «և» վերջահարը դրվում է առանձին, մինչդեռ լատիներեն que և սանսկրիտ ča վերջահարները, որոնք ծագմամբ, նշանակությամբ և գործածությամբ նույն են նրա հետ, գրվում են կցված. այսպես՝ լատիներեն senatus populusque, սանսկրիտ Mitrâṃ Vâruṇaṃča «Միտրան և Վարունանը», հունարեն πατὴρ ἀνδρῶν τε θεῶν τε «հայր մարդկան և աստուծոյ»։ Հայերեն մը անորոշ հոդը, իբրև վերջահար, ԺԹ դարի սկզբում միասին էր գրվում (այսպես՝ տղամը, ցաւմը, քիչմը,) Դիտակ Բիւզանդեան, Վենետիկ, 1814, № 16, էջ 146), իսկ այժմ դրվում է տղայ մը, ցավ մը, քիչ մը։ Նման բայը, որ շատ լեզուների մեջ վերջահար է, ոմանց մեջ գրվում է նախորդ բառի հետ միացած, երբեմն առանձին. այսպես, թուրքերեն թե՝ արաբական տառերով և թե՝ լատինական գրվում է միացյալ. ինչպես՝ dolydyr «լիքն է». maşьndyr «մեքենա է». 3 manatdyr «3 ռուբլի է». այսպես է նաև վրացերեն. ինչպես՝ կարգիա «լավ է», դեղաս է, «մայրս է»։

Բայց հայերենի մեջ գրում ենք առանձին. ինչպես՝ հայ է, բարի է, ոմանք ձեռագրի մեջ գրում են ասումէ, բերումէ, բայց տպագրի մեջ միշտ ասում է, բերում է։ (Կար ժամանակ, երբ տպագրումն էլ գրում էին ասումէ, բերումէ. այժմ այս սովորությունը խափանված է)։

Լեզվի բարեշրջության ընթացքում տոնը կրում է երեք տեսակ փոփոխություն. 1. տեղի փոփոխություն, 2. աստիճանի փոփոխություն, 3. քնութի փոփոխություն, որով տոնը ջնջվելով վերածվում է ուժգնության շեշտի։

1. Տեղի փոփոխություն.— Լեզվաբանական քննությունները ցույց են տալիս, որ տոնի տեղը լեզուների մեջ կարող է մնալ շատ երկար դարեր անփոփոխ. այսպես է եղել հունարենի ամբողջ պատմական շրջանում։ Սանսկրիտը պահել է միշտ հնդեվրոպական նախալեզվի տոնը անփոփոխ նույն տեղում։ Նույնիսկ այն լեզուները, որոնք տոնը ջնջելով վերածել են շեշտի, դարձյալ այդ շեշտը պահել են նախկին տեղում։ Այսպես՝ հունարենում և լատիներենում, բացի մասնավոր դեպքերից, շեշտը դնվում է միշտ նախկին տոնի տեղը։

Բայց տոնի տեղը անփոփոխելի չէ. կան լեզուներ, որոնք, նախորդներին հակառակ, փոխել են տոնը մի վանկից մի ուրիշը։ Այսպես, եթե հին հունարենը տոնը հաստատել էր բառի վերջին երեք վանկերի վրա, ուրեմն և հավատարիմ չէր հնդեվրոպական

նախալեզվական շրջանին, որ շեշտը բայերին անհատական էր և կարող էր վերջից հաշված չորրորդ վանկի վրա էլ դնվել։ Կամ ասած սանսկրիտ bhāramāyah ձևի դեմ ունենք հունարեն φερόμενος, բայց այս մասնավոր հանդամանքից կարծ, այն է՝ մինչև 3 վանկ ունեցող բառերի մեջ, հունարենի տոնը համապատասխանում է սանսկրիտին, որով և միջոց է տալիս վերականգնելու հնդեվրոպական տոնը (Meillet, Traité, 121)։

Տոնի փոփոխությունը առաջանում է և մի քանի պատճառներով։ Նախ՝ ձայնարանական պատճառով. օրինակ, լատիներենում, երբ բառ ունի պոնոզոն երանգի ձայնավորներ, ժողովրդական լեզվի մեջ տոնը վախենալով իր տակը, անցնում է ամենից ավելի բաց ձայնավորի վրա. այսպես, parietem > parietem, filiolum > filiólum, magistrum > magistrum, traditor > traditor։ Երկրորդ՝ հոգեբանական պատճառով. այսպես, պլաուտական կամ տրամադրանական տոնի հետևանքով։ Երրորդ՝ մի տրված բառի համանմանությամբ։

2. Առանձնաձի փոփոխություն.— Այն երաժշտական աստիճանը (կամ նոտան), որ կոչ տոնավոր վանկի և անտոն վանկերի միջև, կարող է ավելի բարձրանալ կամ ցածրանալ. և հետևաբար բառի երաժշտական պատկերը փոխվել։ Այս մասին ասկյուն ոչ մի պատմական հաստատուն տվյալ չունենք. կարող ենք միայն նըշմարել, որ այդպիսի մի փոփոխությունն առաջացրած պիտի լինի կամ տոնի անդափոխությունն և կամ տոնի բնույթի փոփոխությունն։

3. Տոնի բնույթի փոփոխություն.— Լեզուների պատմությունը ցույց է տալիս, որ տոնը հաճախ իր բնույթը փոխելով վերածվել է շեշտի։ Այսպես, հին հունարենը առաջ ուներ երաժշտական շեշտ, որ քրիստոնեական թվականի սկզբից արդեն ժողովրդական լեզվի մեջ վերածվել էր ուժգնության շեշտի և այդպես էլ մնում է նոր հունարենում։ Նույնպես լատիներենը դասական շրջանում ուներ երաժշտական շեշտ, որ նախքան մեր թվարկությունը դարից առաջ վերածվել ուժի շեշտի և դա մնաց ռոմանական լեզուներում։ Այսպես նաև ուրիշ լեզուներում, այնպես որ այժմ բոլոր հնդեվրոպական լեզուներում ուժի շեշտն է, որ տիրապետում է։

Այժմ պետք է քննել, թե ինչպե՞ս կատարվեց այս փոփոխությունը, որով վերջապես տոնը ջնջվեց և նրան հաջորդեց շեշտը։

Այս բանում մեզ լավ ուղեցույց է սերբերենը, որ թեև ունի երաժշտական շեշտ, բայց այդ շեշտը հետզհետե մեր աչքի առաջ վերածվում է ուժգնության շեշտի։ Այսպես, մալրաքաղաք Բելգրա-

դում լավ արտասանության մեջ (թատրոնի լեզու) տոնը իր բոլոր չորս տեսակներով մնում է, իսկ խոսակցության սովորական լեզվի մեջ փոփոխությունն սկսվել է արդեն։ Շեշտը ավելի ուժգին է դարձել, որով գոնե կարճ վանկերում վերացվում են երաժշտական նրբությունները, բարձրացող և իջնող կարճ շեշտերը լավ չեն որոշվում. երկար վանկերը կարճանում են, անշեշտ երկարները բոլորն էլ կարճացել են, վերջնավանկի երկար ձայնավորը բոլորովին վերացել է. շեշտյալ երկար վանկերը դարձել են կես երկար. խոսողները գիտեն, որ շեշտը երկար է կամ կարճ, երգային կամ ոչ, բայց ուշադրություն չեն դարձնում դրա վրա (Meillet, Gramm. serbe, 28)։

Այսպես է եղել նաև տոնի ձևափոխությունը հին լեզուների մեջ։

Նախ ձայնավորների տեղողության տարբերությունը սկսեց ջնջվել, այսինքն՝ e, ē — a, ā — o, ō և այլն ձայնավորների տարբերությունը վերացավ, և դրա փոխարեն տոն ունեցող ձայնավորները սկսեցին երկարել, իսկ տոն չունեցողները կարճանալ. սրա հետևանքով տոն ունեցողները սկսեցին ուժգին արտասանվել, որով ձևացավ շեշտը, որի էությունն է ավելի ուժգին հնչում, համեմատաբար ավելի երկարությամբ, քան մյուս վանկերում (Meillet, traité, 124)։

Կարևի է նաև երևույթը բացատրել բնախոսական օրենքներով։ Ինչպես, որ արտասանության ժամանակ վատնված օդի քանակը ուղիղ համեմատական է ուժգնության հետ և խոտոր համեմատական բարձրության հետ։ Ուրեմն միևնույն քանակությամբ օդի համար մի ձայն այնքան ուժգին պետք է լինի, որքան որ բարձր է. և եթե տարբեր բարձրությամբ ձայնների համար մենք ուզենանք պահել միևնույն ուժգնությունը, մեր գործարանները պետք է մատակարարեն այնքան պակաս քանակի օդ, որքան որ բարձր է ձայնը։ Այս երևույթը միևնույն է երգեհոնի պատմության հետ։ Երգեհոնի ամբողջ ստեղնաշարը միևնույն ուժգնությունն ունի և դրա համար նրա փուքսը այնպես է շինված, որ միևնույն ժամանակի տեղության մեջ, տարբեր խողովակներին տալիս է տարբեր քանակությամբ օդ, որ համեմատական է նրա երկարությանը, այսինքն՝ խոտոր համեմատական է ձայնի բարձրությանը։ Այսպես է նաև մարդկային կոկորդը։ Մեր բնական կազմությունը այնպես է, որ շնչառական գործարանները ուղում են պահել ըստ կարևվուն միօրինակ արագություն և օդի քանակի միօրինակ սպառում։ Սա

սիմֆի ընդհանուր օրենքն է, որ բոլորին պահում է կանոնավորության մեջ։ Երաժշտական ամեն ունեցած լեզուների մեջ, որ ձայնը երգեհոն բարձր է, երբեմն ցածր, բնականաբար չէր կարելի պահել ուղիղ միօրինակության մեջ և ամեն ապառաժը շարունակ վոխվելով էր ենթակա ժամանակ, երբ սիմֆի միօրինակության պահանջով, ամեն ապառաժն իսկական վերածվեց միօրինակության, հնարավոր և բարձր ձայնը առաջով ուժգնության, ամեն վերածվեց շեշտի։

Այս բոլորի վրա ավելացնենք և այն, որ ամեն ջնջումը կամ շեշտի վերածումը հնարավոր է ամեն տեղի հատուկամեն։ Այսպես, օրինակ, հնդեվրոպական նախալեզվի մեջ ամեն տեղ կապված էր իմաստի հետ, թե ինչ վանկի վրա պտղակը նշան էր ուղիղ հոլովի կամ ածական բայաձևի, իսկ մի ուրիշ վանկի վրա պտղակը նշան էր մի ուրիշ հոլովի կամ բայաձևի։ Տանը շարժական էր բուն հոլովի և բայաձևի։ Բայց այն ժամանակ, երբ տանը առաջով մի հատուկտուն տեղ, նա չէր կարող ուղիղ ծառայել իրեն իմաստի կամ ձևի արտահայտիչ, հնարավոր պրիմամ էր դուրս իրարանցից և ուշ կամ կանոն կամ պիտի ջնջվեր և կամ բնավ պիտի փոխեր (Meillet)։

Այժմ մանրամասնենք մեր խոսքը հնդեվրոպական լեզվախմբի և նրա հնարավոր մասին։

Լեզվաբանները, համեմատելով վեդայական և հունական բառերը, գտել են, որ երկուսի մեջ համապատասխան է միմյանց, և այն, ոչ թե պատահարար, այլ կանոնավորական։ Օրինակ, es/os հանգույց ձևերի բառերի մեջ ամեն արմատական ձայնավորի վրա է ինչպես՝ սանսկրիտ nábhas = հունարեն. νέφος «ամպ», սանսկրիտ sádas = հունարեն ἕδος «նստարան».— Ընդհակառակը, իգականի մեջ ամեն դնում է մասնիկի վրա. ինչպես՝ սանսկրիտ uṣás = հունարեն ἠώς «արշալույս» Նմանապես o հանգույց բառերի մեջ վերացական բառերի ամեն ընկնում է արմատի վրա, իսկ ածականների և գործիչ ցույց տվող բառերինը o վերջավորության վրա. ինչպես.

հունարեն τόμος «կտրվածք», τομός «կարող».

սանսկրիտ vāras «ընտրություն», varās «ընտրելիս».

հունարեն πλόος «նավարկություն».

սանսկրիտ plavās «նավ»։

Այսպիսի համեմատություններից լեզվաբանները հետևցնում են, թե հնդեվրոպական նախալեզուն էլ ուներ երաժշտական ուժ և որոշում են ամեն ընդհանուր վանկը բառի մեջ։

Հնդեվրոպական նախալեզվի ստոնը պահել են միայն հնդկերենն ու հունարենը, բայց անշտշտ կար նաև բալթիկ, սլավ և գերմանական լեզուների հնագույն շրջանում։ Ինչպես տեսանք և ավելի հետո էլ պիտի տեսնենք, երաժշտական տոնը ապագայում դառնում է ուժի շեշտ, որ խափում է ճիշտ այն կետում, ուր էր երաժշտական տոնը. այսպես, հին հունարենի տոնի տեղ այսօր նոր հունարենում գտնում ենք ուժի շեշտ։ Այսպես էլ արդի լիտվաներենի, ռուսերենի, սերբերենի և այլնի ուժի շեշտը առաջացել է բալթիկ-սլավական հնագույն լեզվի տոնից, և համապատասխանում է հունարենի և սանսկրիտի տոնին. օրինակ՝ ռուսերեն небо, սերբերեն nēbo «երկինք» շեշտվում են ճիշտ ինչպես հունարեն νέφος և սանսկրիտ nȁbhas։

Հնդեվրոպական նախալեզվի տոնը պահված է եղել նաև հին գերմանական նախալեզվում, որի հետքերը երևում են միայն ձայնաբանական մի հետաքրքրական երևույթի մեջ.—հնդեվրոպական նախալեզվի շչող և խուլ ձայնները գերմանականում դառնում են թրթռուն՝ եթե տոնից առաջ են, բայց մնում են խուլ՝ եթե տոնից հետո են[1]. ինչպես.

հնխ. k

հգ. swehur «կնոջ հայր» — սանս. çvàçuras, ռուս. svékor.
բայց՝ swigar «կնության» — սանս. çvaçrùs ռուս. svekróv

հնխ. t

հ. անգլ. weorθe «լինում եմ» — սանս. vàrtate «պատահում է»
wearθ «եղավ» սանս. vavàrta «դարձավ».
գերմ. bruder «եղբայր» (θ) սանս. bhrâtā
բայց՝ wurdon «եղանք» սանս. vavṛtmà «դարձանք»
vunden «եղած» սանս. vṛttàs «դարձած»
vater «հայր» (ð) սանս. pitàr

հնխ. s

գոթ. amsa— «ուս» սանս. àmsa—
գոթ. mimza—«միս» սանս. māṃsà—

Այսպիսով, սրանք բալթիկ-սլավական ու գերմանական լեզուներն էլ օդնում են հաստում հնդկերենին և հունարենին, որոնց համեմատությամբ վերականգնվում է հնդեվրոպական նախալեզվի տոնը։

Այնուամենայնիվ պետք չէ կարծել, որ այս լեզուների համեմատությամբ ստացված արդյունքը բացարձակապես ճիշտ է,

[1] Այս երևույթն առաջին նկատողի անունով կոչվում է Վեռների օրենք։

կամ թե կարելի է հնդեվրոպական նախալեզվի ունի պալատալներ ասել կերպով և իրենց բոլոր մանրամասնություններ հետևանքներ։ Հնդեվրոպական նախալեզվի մեջ ունի կանոներ ընդհանուր բոլոր էր, որ մեր կարողությունից վեր է ալժմ հետևանքներ այն վերապատկերներ, հնչյունները, լեզվականները ու ալակերները, բարբառները իրեն համար, ընդհանուր են բարեհաջող ունի օրենքները, որ նախնիք այն պարապալին, որը ալդ բոլորի մեջ կա կատարյալ համաձայնություն, մինչև իրավունք անհնար կասկածելու, որ պա հետին ձևախեղությունն և պատահական պրպտություն արդյունք է։ Ալս պես համաձայնության դեպքում։ Իսկ երբ, ինչպես շատ անգամ է պատահում, ալդ լեզուների համաձայնություններ վերլուծվում է ու տարբերություններ մեծ, իհարկե անհնարին է հիշյա հարցը լուծության հասնել (համմ. ալս տեղի՝ Meillet, Sur l'accentuation des noms en indo-européen, MSL, № 19, 1916, էջ 65—84, հատկապես էջ 78—79։

Վերոհիշյալները հնդեվրոպական նախալեզվի ունի մասին ասելիս են հետևյալ ընդհանուր նկատողությունները.

1. Հնդեվրոպական նախալեզվում ամեն մի բառ ուներ մի ստն. թեև երկար բառերը անհնարին երկու ստն, բայց օրինակներով ալդ բանը պես հաստատված չէ։

2. Ստնը շարժական է, այսինքն կարող է պատկել ամեն մի վանկի վրա, լինի արմատի, մասնիկի և կամ բալական ու հոլովական վերջավորությունների վրա. եթե հնարավոր նա սահմանափակված է վերջին երեք վանկերի մեջ, պա հնարական նորմ ածություն է. համմ. վեդալական հնդկերենի bhāramānas ձևերը, բերող, մինչդեռ հունարենն է φερόμενος.

3. Հնդեվրոպական ընդհանուր նկատելի էր ձայնի պարզ բարձրացում, առանց նկատելի ուժգնության և առանց երկարելու ձայնավորը. նա չէր կարող ցույց տալ ալս կամ ալն բառի կատեգորիան նախալեզվի մեջ, ինչպես, օրինակ, հալերեն Ն՛ս եմ ասում, նա ասում եմ և ալլն, ալսպիսով հնչյալ վանկ և անշեշտ վանկ հնդեվրոպական նախալեզվում հավասար արժեք ունեին. ահա ալս պատճառով էլ ստնը երբեք ոչ մի փոփոխություն տակ չի բերել ձայնավորների վրա՝ բոլոր հին հնդեվրոպական լեզուներում, հատկապես վեդալական հնդկերենի մեջ, հունարենի և բալթիկ-սլավական ու գերմանական նախամալր լեզվի մեջ։ Սրա հակառակը տեսնում ենք նորալատին, կելտական, գերմանական, ռուսերեն և ալլ լեզուների մեջ, ուր հնչյալ ուժգին և երկար լինե-

լով՝ նրա ազդեցության տակ ձայնավորները փոխվել են, և նույնիսկ ոմանք ընկվել (եթե շեշտից հեռու են)։

Տոնը կիս անշուշտ նաև հայերենի մեջ, իբրև ժառանգորդ հնդեվրոպական նախալեզվի, բայց նրա հետքը իսպառ կորել է և որևէ կերպ վերականգնել անկարելի է։ Միայն հետևցնելով այն բանից, որ նա շատ ուժեղ չէ և չի ազդում իրենից առաջ գտնված բոլոր ձայնավորների վրա, կարելի է ասել, թե պարզապես ուժգնության շեշտ չէր, այլ ուներ նաև տոնի բնույթ, նման լատիներենի, ուր շեշտը տոնի վրա ավելացած է առանց նրան բոլորովին ընկելու (ըստ Meillet-ի BSL, 30, № 91, էջ 44)։

ԳԼՈՒԽ ԺԳ

ՁԱՅՆԻ ՈՒԺԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Ձայնի ուժգնությունը ասելով հասկանում ենք ձայնի ալիքի հետ հասցնելու կարողությունը, որ արտյունք է թոքերից վատնված օդի քանակության և նրա հետ ուղիղ համեմատական։

Մենք կարող ենք խոսել պանդոկի ասպիճանի ուժգնությամբ. պլատոյիք սարից սար բարձրանալն գոչելով իրար խոսք են հասցնում։ Մենք էլ մեր սեղանի կրանքում սահմանված ենք ավելի ուժգին կանչել, որքան հետ է մեր խոսակիցը կամ թե ուզում ենք ամբողջ մի վայրում մեր ձայնը լսելի դարձնել սրիշ-ներին։ Կարող ենք նաև մեր կողքի բնակիչը ականջին փսփսալ՝ մի շատ սկար շշուկով։ Առաջինից մինչև երկրորդը կան բազմաթիվ ասպիճաններ։

Բայց լսվարանության գործը չէ պրպտվել ձայնի կամ խոսքի ալս բացարձակ ուժգնությամբ, այլ նրա կազմիչ մասերի ու վանկերի հարաբերական ուժգնությամբ։

Ինչպես որ մի նախադասության կամ մի բառի բոլոր վանկերը հավասար բարձրության չունեն, նույնպես և չունեն հավասար ուժգնություն, սրսինչ վանկը սկար է հնչվում, մյուսը՝ ավելի ուժեղ։

Ձայնի ուժգնության տեսակներն ու պատճառները նույնն են, ինչ որ ձայնի բարձրության համար. այսանդ էլ կարող ենք դանդաղանալ զգայական, սրամաբանական և լեզվական։

Դժվար չէ պահպանել ձայնի ուժգնությունը. երբ երկու ձայն ունեն հավասար բարձրություն և նույն երանգը, բայց տարբեր են ուժգնությամբ, ականջն իսկույն կարող է որոշել նրանց տարբերությունը: Նույնպես, եթե երկու ձայն ունեն միևնույն երանգը, բայց տարբեր բարձրություն, ականջը հեշտությամբ կարող է դրան էլ ուժգնության տարբերությունը. ասպես, օրինակ, երբ չափիչի վրա ածում են, հեշտությամբ կարողանում ենք պահպանել ուժգնության այն առաիճանները, որ երաժիշտները կոչում են pianissimo, piano, mezzoforte, forte, fortissimo, crescendo և decrescendo: Նույնիսկ այն դեպքում, երբ երկու ձայն ունեն տարբեր երանգ և տարբեր բարձրություն, ականջը կարող է, թեև այս անգամ ավելի դժվարությամբ, որոշել նրանց ուժգնության տարբերությունը. օրինակ, շեփորի ալտին նուագն ավելի ուժեղ է, քան օրինդի այնինչ նուագը: Դժվարությունն էլ ավելի է մեծանում, երբ հարկ է լինում որոշել ազմանիների ուժգնությունը: Բայց այս դեպքում էլ շատ անգամ ականջը կարող է պահպանել, օրինակ, թեև հրացանի պայթյունը ավելի ուժգին է, քան դրան ճառագը: Առաակությունի մեջ պահպան հնչյունները, տարբեր երանգով և տարբեր բարձրությամբ, իրանցում են ազմանիների հետ. դրանով առաջանում են պահպան իրանդրները. բայց ականջը մեծ մասամբ կարող է պահպանել մի բառի կամ մի նախադասության պահպան վանկերի ուժգնությունները:

Ձայնաբաններըը պահպան փորձեր ու քննություններ են կատարել՝ որոշելու համար ձայնի ուժգնության պայմանները ու օրենքները: Այս օրենքներից կարող ենք հիշել հետևյալները.

1. Ձայնը համարում ենք այնքան ավելի ուժգին, որքան ավելի կարող է հարձակել հետ և լսելի դառնալ ականջին. լսողությունը բարձրության համար ուժգնության կամ լսելիության սահմանը տարբերվում է: Եթե վերցնենք դաշնագան ձայնարկներ (diapason) և միևնույն ուժով հնչեցնելով սահմանք do^{-2} (16 զույգ թրթիռ) մինչև do^{9} (16, 384 զույգ թրթիռ) ձայները, կնկատենք, որ լսելիության սահմանը կամաց-կամաց աճում է մինչև do^{2}, հետո արագությամբ մինչև do^{5}, հետո մի քիչ դանդաղում է մինչև do^{7}, այս կետում հասնում է լսելիության բարձրագույն սահմանին, իսկ do^{7}-ից արագությամբ իջնելով հասնում է մինչև լսելիության վերջին սահմանը, որ do^{9}-ին մոտիկ է: (Դնում ենք այսուհետ հետևյալ տախտակը).



Երբ դնոտպան մարդիկ տարբեր բարձրաթթյամբ նոտաներ են արտասերում, նկատելի է, որ ամենից ավելի լսելի են լատ. քան- չյար անձի medium նոտաները։

3. Ամեն մի ձայնավորի լսելիութթյան աստիճանը տարբեր է. ալսպես՝ բոլ ձայնավորներբ ավելի լսելի են, քան միակ ձայնավորները և ոչ միայ ձայնավորները ավելի լսելի են, քան միայ ձայնավորները։ Ահա ձայնավորների լսելիութթյան շարքը. a, o, e, ö, i, u, ü. ամենից ավելի լսելի է a, ամենաքիչը՝ ü։

4. Բաղաձայնների հարցը ավելի բարդ է, որովհետև նրանց լսելիութթյունը կախված է ոչ միայն իրենց բնութթյունից, այլև նրանց բնկերակցող ձայնավոր ու բաղաձայն ձայների բնութթյունից։ Հաճախ մի բաղաձայն, որ համեմատութթյամբ մի ուրիշի ավելի հեռվից է լսելի և հետևաբար պետք է համարել ուժգին, ականջի մոտ արտասանվելու ժամանակ նրանից թոլլ է երևում. ալսպես, երբ արտասաննենք հավասար ճիգով sa և za, առաջինը երկրորդից ավելի լսելի է լինում հեռվից, բայց երբ արտասաննենք ականջի մոտիկ, երկրորդը առաջինից ավելի ուժեղ է երևում։

Ձայնի ուժգնութթյունը կախված է արտասանութթյան ժամանակ վտարված օդի քանակութթյունից. եթե a ձայնը արտասաննենք ալսինչ բարձրութթյամբ և x քանակութթյամբ օդով և հետո նույնը 2x քանակութթյամբ օդով, երկրորդը բնականաբար ավելի ուժեղ կլինի։ Բայց ալս չի նշանակում, թե որևէ ձայն, որ արտասանվում է 2x քանակութթյամբ օդով, անպատճառ կրկնակի ուժգին է մի որևէ ուրիշ ձայնից, որ արտասանվում է x քանակութթյամբ օդով։ Դրա պատճառն ալն է, որ ամեն մի ձայնի արտասանութթյան համար

անհրաժեշտ օդի քանակը տարբեր է և կախված է նրա բարձրությունից, և բնական ու խոչակի բացվածքից. այնքան մեծ է վատնված օդի քանակը, որքան մեծ է խոչակի բացվածքը և փոքր է ընթանի բացվածքը։ Վատնված օդի քանակը ուղիղ համեմատական է ձայնի ուժգնությանը և խոտոր համեմատական է նրա բարձրությանը։ Եթե օդի պաշարը նույնը պահելով հանդերձ, ձայնը ավելի բարձրացնենք, բնականաբար նա կլինի ավելի ուժեղ։ Այս պատճառով է, որ ձայնի բարձրությունն և ուժգնությունն փոփոխությունները հաճախ շիտակում են իրար հետ. բարձր խոսել նշանակում է ուժեղ ձայնով խոսել։ Սրանից է նաև, որ լեզուների բարեշրջության մեջ բարձրության շեշտը (տոնը) պատնում է հետո ուժի շեշտ։

Երբ միևնույն ուժգնությամբ և միևնույն բարձրությամբ արտասանենք տարբեր ձայնավորներ, օդի պաշարը կլինի այնքան ավելի մեծ, որքան ավելի փակ է ձայնավորը։ Նշանակում է, օդի միևնույն քանակով արտաբերված փակ ձայնավորը պակաս ուժեղ է, քան բաց ձայնավորը։ Ահա թե ինչու՞ պանաղան լեզուների մեջ ձայնավորները շեշտի տակ կրում են որիշ ձայնափոխության և առանց շեշտի՝ որիշ։

Ինչ վերաբերում է բաղաձայններին, նկատելի է, որ միևնույն ուժգնությամբ արտասանված պանաղան բաղաձայնների մեջ ձայնական գործարանների սեղմումը և օդի պաշարը ածում են հետևյալ շարքով. թրթռուն սեղմ, խուլ սեղմ, թրթռուն պալթական, խուլ պալթական։ Հնչեղ պալթականները է՛լ ավելի թույլ են, քան ոչ-հնչեղ պալթականները։ Ըստ այսմ տրվում է հետևյալ շարքը.— նախ ձայնավորներ, ապա l, r, n, m, z, ž, v, ɣ, s, š, f, x, b, d, g, p, t, k։

Օդի ամենափոքր պաշարը գործածում ենք սեղմ թրթռուն բաղաձայնների համար և ամենամեծ պաշարը՝ խուլ պալթական բաղաձայնների համար։

Ինչպես այս գլխի սկզբում ասացինք, ձայնի ուժգնությունը կարող է առաջանալ զգայական, տրամաբանական և լեզվական պատճառներից։ Զգայական շեշտը մարդու հուզմունքի արդյունքն է, լեզվի դա առաջացած նախապատմության բովանդակությունից, թե մարդու բնավորությունից, կամքից և սովորությունից։ Զգացմունքների թափը աճեցնում է շեշտությունը, լարում է ձայնալարերը, որով և ձայնին տալիս բարձրություն և ուժգնություն։ Այստեղ էլ օրենքները և պայմանները նույնն են, ինչ որ տեսանք նախորդ գլխում. առանձապին հուզմունքները ավելացնում են ձայնի ուժգնությունը,

խոսքի լրիվ հատվածներ պահանջում են։ Բայց Ֆոլլիետը պահանջում էր և՛ նախադասական հատվածները և՛ լրիվ հատվածները ունեին նույն տրամաբանությունը. Ֆոլլիետ է ասվել ուժգին, բայց անկանոն, ընդհատ և բացականչական։

Լեզուն (Principes, II, 1014—1018) *նկատառում է այն բազմաձևակ փոփոխությունները, որ կատարվել է արտաքին համար ձայների բնավորության մասին հանգամանքներ։ Այդ փոփոխությունները տևել են մի քանի տարի, փոխվել է պահպանման ժամանակները՝ անտառում, հրապարակում, մեծ ժողովում և այլն. փոփոխությունները կատարվել է պահպանող տրամաբանական ուժերի ազդեցության վրա, ձայնի պահպանման տևողության, ձայնի պահպանման ուժգնության և հնչյուն զգացմունքների, բայց միևնույն ժամանակ չի հանվել վերջնական արդյունքին, ինչպես նաև պահպանվում է ինքնությունը մեջ ի միջոց, բազմաձևակ ազդանշանները, ցեղակիները, համապատասխան ասելիքները տարբեր հետ, վերջնական հարաբերությունները թողնում է ընթերցողին։*

Տրամաբանական շեշտը չի բաժանվում պարզական շեշտից։ Առաջը իր պատասխանների ընթացքում ավելի կարևորություն է տալիս այնինչ կամ այնինչ բառին, որի վրա և պետք է հարվածել ուժի աշխատությունը. այս պատճառով էլ արտասանության ժամանակ նրա մեջ ավելի ուժգնություն քան նախադասության մյուս բառերի վրա։ Այս շեշտը հաճախ կոչվում է հարաբերական կամ հանդիսարանական շեշտ (accent oratoire ou emphatique)։ *Իբր օրինակ կարող ենք առնել էջ 333-ում տրված նախադասությունը. տղաներ՝ Այսօր հաճախ մատաղ՝ Այսօր հաճախ մատաղ՝ ես գնացի (ոչ թե ուրիշ տեղ). Հաճախ այսօր՝ ես գնացի (ոչ երեկ). այսօր հաճախ մենա՛կ գնացի (ոչ թե Պետրոսի հետ) և այլն։*

Լեզվական շեշտը անկախ է զգայական և տրամաբանական պահանջներից և լեզվի պատմական կյանքի արդյունք է։ Բառի ամենից վանկը արտասանվում է ավելի ուժգին, քան մյուս վանկերը։ Այս շեշտը կոչվում է ուժգնության շեշտ (accent d'intensité, accent de force, accent dynamique, accent expiratoire) *կամ պարզական շեշտ, դանագանելու համար բարձրության շեշտից* (accent de hauteur), *որ և պարզական կոչվում է տոն։*

Ինչպես նախորդ գլխում տեսանք, տոնը ունի բազմաթիվ տեսակներ և դանագանությունները. բայց այսպես չէ շեշտը։ Այստեղ դանագանում են իրարից միայն 1) ուժեղ շեշտ (fort), *2) միջակ շեշտ* (mi fort) *և 3) անշեշտ* (faible)։ *Բառը բացի իր գլխավոր շեշտից* (accent principal), *որ մյուսներից ավելի ուժեղ է*

համարվում, կարող է ունենալ նաև ավելի տկար մի շեշտ, որ կոչվում է երկրորդական շեշտ (accent secondaire, Nebenakzent). այսպես, օրինակ, անգլերեն congrégation բառը ունի երկու շեշտ, մի գլխավոր շեշտ վերջընթեր վանկի վրա և մի երկրորդական շեշտ առաջին վանկի վրա։ Այսպես նաև ֆրանսերեն pèlerine բառի մեջ i ձայնավորի վրա կա մի գլխավոր շեշտ, իսկ առաջին pè վանկի վրա մի երկրորդական շեշտ (Clédat, Nouvelle gramm. hist. de franc., 4 ième éd., 28)։ Բայց կարող է բառը ունենալ նաև երկու երկրորդական, շեշտ. այսպես, ֆրանսերենում ամեն բառ, որ կազմված է մի որևէ նախամասնիկով, ունենում է մի երկրորդական շեշտ նախամասնիկի վրա, մի երկրորդական շեշտ նրան հաջորդող վանկի վրա և մի գլխավոր շեշտ. օրինակ՝ pàrdonneral (անդ, էջ 29)։

Լինդսեյը կարծում է, թե որքան վանկ ունի բառը, այնքան էլ շեշտ ունի՝ մին մյուսից ավելի տկար։ Այսպես, գերմաներեն Untergebener և անգլերեն unimprovable բառերի մեջ, որոնք ունեն հավասարապես 5 վանկ, կա հինգ տարբեր շեշտ, որոնցից ամենաուժեղը նշանակում ենք 5 թվանշանով, երկրորդական շեշտը 4 թվանշանով, մյուս հնազհատ տկարացող շեշտերը 3, 2 և 1, որ ամենից թույլ վանկն է.

ùntergébener ùnimpróvable
4 2 5 1 3 4 2 5 1 3

Վոնդրա (Volkerps. I, 2-րդ մաս, էջ 396) չի ընդունում այս կարծիքը, ասելով, որ ուժգնության դարձիքը միայն կարող է վճռել այս դիտողությունը, իսկ ականջը զգում է միայն 4 և 5 շեշտերը, մյուս երեքը անընդունակ են զգալու։

Բացի սրանից, շեշտի ուժգնության տարբերությունը զգալի է նաև լեզվից լեզու, օրինակ, անգլերենի, գերմաներենի, ռուսերենի շեշտը ավելի ուժեղ է, քան հայերենի և ֆրանսերենի։ Տարբերությունը հայտնի կերպով զգացվում է, երբ ամենքին հասարակաց դարձած մի բառ արտասանվի վերոհիշյալ լեզուով. օրինակ՝ machine՝ «մեքենա»։ Շեշտը հանդում է իր մաքսիմումին այն լեզուներին մեջ, ուր շեշտից հետո մի քանի վանկեր կան. նա հասնում է իր մինիմումին այն լեզուների մեջ, ուր շեշտը վերջնավանկումն է։ Այսպես՝ վրացերեն և հունգարերեն լեզուների մեջ, ուր շեշտը առաջին վանկումն է, շատ ուժգին է հնչվում, իսկ ֆրանսերենի ու հայերենի մեջ, ուր շեշտը վերջնավանկումն է, շատ մեղմ

է լսում՝ ձայնավորները շեշտ չունի և բառի բոլոր վանկերը հավասար են. մյուս հարցականը շեշտ է առնում (Plaut, 4)։

Պատահում են երբեմն վանկեր, որ ունենան երկու շեշտ, մին մյուսից ավելի ուժեղ. ինչպես պիեմոնտերեն so (zó—ó) կամ հալերեն ha (hа'—а')։ սրանք կոչվում են երկու գագաթանի վանկեր (syllabes à deux sommets, zweigipfige silben)։ բայց սրանք էապես երկու տարբեր վանկեր են։

Ինչպես ասվեր, նախնական և շեշտի անկում բառի մեջ լինում է շարժական կամ ներառական. օրինակ, առոտերենում շեշտը շարժական է և կարող է առաջին վանկից անցած մինչև վերջինը խաղալ շարունակ, առանց որևէ կանոնի, ինչպես՝ прогуливающийся ասած ներկայ Դանիերենին, ինչպես և նորլատին լեզուներից իտալերենի, իսպաներենի և պորտուգալերենի մեջ շեշտը խաղում է բառի վերջին երեք վանկերի վրա. օրինակ, իտալերեն ancora «դեռևս», ancóra «դարձ», բայց դանիերենում կարող է էլ ավելի առաջ գնալ, ինչպես՝ by'gningerne «շենքերը»։ Սերբերենում կարող է մինչև 6 վանկ առաջանալ. օրինակ՝ umilostivíti։

Շեշտը շարժական է նաև առուսերենի հարազատ ընկեր ուկրաիներենի մեջ և նրա տեղը որոշելու համար ոչ մի կանոն չկա։ Նորնախկ բառերի իմաստը կամ քերականական ձևը շեշտի տարբերությամբ է իմացվում. օրինակ. дорóга «ճամփա», дорога «ճանկ» му'ка «չարչարանք», мукá «ալյուր», мала «ունենք», малá «փոքրիկ», плáчу «լալիս եմ», плачу' «վճարում եմ», вóды «ջրերս», воды «ջրի» (Smal-Stocyj, 36)։

Լատիներենում, երբ բառը վերջանում է ձայնավորով կամ m, s բաղաձայններով, շեշտը վերջընթեր վանկի վրա է, ուրիշ բաղաձայնով կամ երկրորդական վերջացած ժամանակ շեշտը դրվում է վերջին վանկի վրա. ինչպես՝ cadena «շղթա», estoy «եմ». բայց կան ուրիշներ, որ շեշտը անցնում է նախավերջընթեր վանկին, ինչպես՝ elhómbre «աղամարդ», la mujér «կին»։ Ուրիշ լեզուների մեջ շեշտի տեղը որոշ է և կախված է վանկերի թվից կամ այլ ձայնական պայմաններից։ Այսպես, բոլոր ուգրո-ֆիննական լեզուներում (ֆիններեն, հունգարերեն, լապոներեն, վոգուլերեն և այլն) ինչպես նաև մոնղոլերենում (Владимирцов, Срав. 97). դրավիդյան լեզուներում (Caldwell, 189) շեշտը դրվում է նախավանկի վրա։ Այսպես է նաև չեխերենում, սլովակերենում և հին իռլանդերենում։ Չեխերենում և սլովակերենում մինչև անգամ երբ միավանկ մի նախադրությունն գանվի մի բառի մոտ, նրա հետ իրր մի բառ

համաբվելով, շեշտը իր վրա կքաշի. ինչպես՝ přad pracĭ «նախքան աշխատանքը», no prāci «աշխատանքից հետո»։ Լեհերենում և մալայերենում շեշտը վերջընթեր վանկի վրա է միշտ։ Ասպես նաև աստուրերենում, բայց երբ վերջընթեր վանկը կարճ է, շեշտը անցնում է նախավերջընթեր վանկին (Bertin, 29)։ Հալերենում, թուրքերենում, պարսկերենում, ֆրանսերենում, լասկերենում և այլն շեշտը դրվում է վերջնավանկի վրա։ Ներալերենում և արամերենում ևս, բառավերջի ձայնավորը ընկնելով, շեշտը մնաց վերջնավանկի վրա։ Արաբերենում, ընդհակառակը, շեշտը չի կարող գըտնըվել վերջնավանկի վրա, այլ վերջնավանկից առաջ՝ առաջին պատահող երկար ձայնավորի կամ փակ վանկի վրա. իսկ եթե չկա, առաջին վանկի վրա. ինչպես՝ Kitâbun, yàktubu, Katàbna, yaqūlu, xayyātūna, ĭJtamàᶜnā, axbarnākum, kàtaba, māšvaratun, taJànnabatā և այլն։ Զուլաշերենում, եթե բառի բոլոր ձայնավորները կարճ են, շեշտը գտնվում է վերջին վանկի վրա, իսկ եթե բառի մեջ կա մի որևէ երկար վանկ, շեշտը ընկնում է նրա վրա, մինչև իսկ եթե նա լինի վերջից հաշված 5-րդ, 6-րդ կամ 7-րդ վանկի վրա. ինչպես՝ pàratamartʸtʸe., sàvanatamartʸtʸe և այլն (Ашмаринъ, Матер, 19)։ Ծակուտերենում բառը ունի երկու շեշտ. առաջին վանկը ունի կիսաշեշտ կամ թույլ շեշտ, վերջին վանկը՝ միշտ ուժեղ շեշտ. միջին վանկերը անշեշտ են. ասպես, օրինակ, at-tarbət-ən-an բառը շեշտվում է ˈ ˌ ˈ (Астремский, 13)։ Ղպաերենում շեշտը վերջին կամ նախավերջին վանկի վրա է լինում։

Գերմանական լեզուներում ընդհանուր ձգտում կա շեշտը դցելու առաջին վանկի վրա. բայց այս կանոնը խանգարում են օտար փոխառյալ բառերը և մի խումբ նախամասնիկներ, որոնք չեն կարող իրենց վրա շեշտ վերցնել. ինչպես՝ գերմաներեն verzeihen, gegéssen, übersètzen և übersetzen և այլն։ Վրացերենում շեշտը գտնվում է միշտ վերջից հաշված երրորդ (նախավերջընթեր) վանկի վրա. բայց այս երկվանկ և եռավանկ բառերի շեշտը առաջին վանկի վրա է լինում, իսկ բազմավանկ բառերի շեշտը հոլովման ժամանակ տեղափոխվում է. ասպես՝ կա՛ցի, սո՛փելի, օճա՛ւարի, մու՛րաբա, սեռական մուրա՛բիսա, ի՛քմներա, բայց իքմնե՛բոդա (Dirr, Gramm. georg., 3—4)։

Ինչպես քիչ առաջ ասացինք, բառը կարող է ունենալ երկու շեշտ. ասպես են գերմաներենի և դանիերենի մեջ բարդ և ածանց բառերը. օրինակ, գերմաներեն Nóchachtungsvòll, Sónnenblùme «արևածաղիկ» դանիերեն, Kéjserdömme «կայսրուհիություն» բառերի

մեկ կամ մի պլուսավոր շեշտ (ˊ) և մի երկրորդական շեշտ (ˏ)։ Հունգարերենում, ուր շեշտը միշտ առաջին վանկի վրա է, նույնիսկ երբ բառը արևել նախամատնիկով է կազմված, բայց բառերի երկու եղելը կոչում են առանձին-առանձին շեշտվել (Ney, Ungarische Sprachlehre, Pest, 1862, էջ XVI). այսպես լսումենում բայց բառն ունի երկու շեշտ. ինչպես՝ pénnipoténtes «ճեռքունները, ուր պլուսավոր շեշտը պրված է երկրորդ բառի վրա, իսկ երկրորդական շեշտը՝ առաջին բառի վրա, հետը հակառակ պերմանականին (V. Henry, Gramm. comp. gr., 98)։ Բայց պատմեց, լսումենում կար երկնական կոչված ժողովրդական շեշտը, ուր պլուսավոր շեշտվել դնալ վեր կամ դնալ վար ամեն մի երկրորդ վանկի վրա պրված մի երկրորդական շեշտ էր. օրինակ, sanguinis, occídimus, impeˊrátor, impeˊratórem, interfídimus և այլն (անդ, էջ 103)։

Մորդվինում, ինչպես և մյուս միջին իրանական լեզուներում, բառը անկե երկու շեշտ. առաջինը՝ մի ուժգնության պլուսավոր շեշտ, ուր պահում էր բառի վերջընթեր վանկի վրա, եթե այդ վերջընթեր վանկը երկար էր. կամ նախավերջընթեր վանկի վրա, եթե վերջընթեր վանկը կարճ էր։ Երկրորդ՝ մի երկրորդական շեշտ, որ ընկնում էր զույգ վանկերի վրա՝ հաշվելով ուժեղ շեշտվող վանկից և բարձրանալով դեպի բառի սկիզբը (Gauthiot, Essai de gramm. sogd., 1914—1923, էջ 38)։

Ինչպես հին լեզուների մեջ գանազան երկրորդական բառեր նախադասության մեջ կորցնում են իրենց առնը և միանալով դրելիսավոր բառին՝ դառնում են նախաձայն կամ վերջաձայն, այսպես նաև նոր լեզուների մեջ այդ կարգի բառերը արժանանալով նվազ ուշադրության, կամ թուլացնում են իրենց շեշտը և կամ իսպառ կորցնում, իրը նախնական կամ վերջնական։ Այսպես՝ անգլերեն a man «մի մարդ», I have not (I haven't) «չունեմ», գերմաներեն der Mann «մարդը», ֆրանսերեն dis-je! «ասում եմ», la maison, une maison, cette maison, ma maison «տունը, մի տուն, այս տունը, իմ տունը» ձևերի մեջ ասորագծյալ բառիկները անշեշտ և վերջնական կամ նախնական են։

Հոմանի բառերը, նայած իրենց կարևորության, ունենում են շեշտ կամ կորցնում են այն. հմմտ. լա՛վ մարդ է. լավ մարդ շա՛տ կա. առաջին նախադասության մեջ լավ առաջել է ուժեղ շեշտ, մինչդեռ երկրորդ նախադասության մեջ զուրկ է շեշտից։ Հայերենի մեջ շեշտի այս փոփոխությունը շատ մեծ դեր ունի. հմմտ.

Ի՛ս եմ շատ աշխատում.

Ես շա՛տ եմ աշխատում.

Ես շատ աշխատու՛մ եմ, բայց...

Նույնը նաև գերմաներեն հետևյալ նախադասության մեջ. Er hat das Buch, *որի մեջ ամեն մի բառի վրա շեշտ դնելով ստացվում է տարբեր իմաստ։ Սեմական լեզուների մեջ շեշտը ըստ բառի տեսակի զանազանվում է. եբրայերենում դոյականները ավելի ուժեղ շեշտ ունեն, քան բայերը. թե՛ եբրայերենում և թե՛ արաբերենում նախադասության վերջը, այն է դադարի ժամանակ* (pause) *դրվում է ավելի ուժեղ շեշտ* (Brockelm, Précis, 69)։

Շեշտի տեղափոխությունը կարող է տեղի ունենալ նույնիսկ մի բառի մեջ, երբ կարիք կա հատկապես այսինչ կամ այնինչ վանկը ավելի զգալի դարձնելու. ինչպես՝

Նե՛գատիվություն և ոչ թե արտացոլություն.

Նե՛գացնում և ոչ թե արտացնում.

Ո՛չ թե թերարտադրություն է տեղի ունեցել, այլ գե՛րարտադրություն։

Սրանց մեջ հակադրությունը և ուշադրության կենտրոնը ներ և արտ (ներս և դուրս), թեր և գեր (պակաս և ավելի) բառերի վրա է, իբր թե ասելինք «ներս է շնչում և ոչ թե դուրս»։

Նույն երևույթը գտնում ենք նաև ուրիշ լեզուներում. համմտ. ֆրանսերեն il faut se soumettr ou se dèmettre. *«պետք է ենթարկվել կամ ձրաժարվել», գերմաներեն* gegangen nicht vergangen, *անգլերեն* not subjective but objective, not öppose but sùppose, If on the one hand speech gives expression to ideas, on the other hand it receives impression from them.

Հայերենի մեջ այս երևույթը հասնում է մինչև տառերի կամ ձայների վրա ուշադրություն դարձնելու աստիճանին. օրինակ՝

Ա՛պարան թե՞ կա՛պարան.

Արա՛բան չէ Ապա՛բան.

Առաջինի մեջ խնդիրը ա թե կա արտասանելու մասին է, ուստի այդ վանկերն են շեշտված, երկրորդի մեջ բա թե պա արտասանելու մասին, ուստի և այդ վանկերն են շեշտված։

Այսպիսի ուշադրության առարկա կարող են լինել նաև առանձին մասնիկներ ու բառիկներ և առաջ բերել շեշտի զանազան փոփոխություններ։ Այսպես՝ լեզվի մեջ կարող է շեշտը հաստատված լինել վերջնավանկի վրա, բայց ինչ-ինչ երկրորդական պատճառներ

կարող են իմանալ այն և մինչև բառի առաջին վանկի վրա փոխադրել. օրինակ, պարակներինի շեշտը վերջնավանկի վրա է միշտ, բայց որոշհետև նախդրավոր mi նախադասություններ և ապառնիի bi նախադասություններ իրար չափազանց նման բաներ են, ուստի ժամանակի տարբերությունը պետք դարձնելու համար լեզուն ստիպվել է դիմել մի ուրիշ միջոցի, այն է՝ շեշտը դնել նրանց վրա. ասվում է mi xorem «ուտում եմ», bi xorem «պիտի ուտեմ, կուտեմ». ալսպիսով շեշտը փոխադրվից առաջին վանկի վրա։

Նմանապես հարազատիր մասնիկները չունենալով շեշտ, շեշտը փոխադրում են նախորդ վանկի վրա, որով ունենում ենք ալսպիսի բառեր. dihānet «քո բերանը», bustānem «իմ պարտեզը» և այլն։ Նույնպես որոշելու հայցականում՝ dihān-ra «զբերանն», bustān-ra «պարտեզն», և երկու մասնիկ միասին՝ dihān-eš-ra «ձերա բերանը», bustān-et-ra «քո այդ պարտեզը»։ Իսկ երբ բառը պատահաբար միավանկ լինի, ալս երկու հարազատիր մասնիկները պատճառ պիտի դառնան, որ շեշտը փոխադրվի բառի առաջին վանկի վրա. ալսպես՝ čéšm-eš-ra «ձերա աչքը», dérd-eš-ra «ձերա վիշտը» և այլն։

Հալերենի մեջ էլ կան նման դեպքեր. օրինակ, դրատրում՝ n'ç kamim, n'ç nuseucanem, n'ç ekh, n'ç ayl ok. աշխարհաբարում՝ չունեմ-ըս, իմ շորերը, չպիտի տայի, n'ç մնկն էլ, ձա'ց մըն ալ. նույնիսկ պալատալներեն չը՛ բերեր կոր, որ շեշտը դրված է ը ձայնավորի վրա, որ սահմասարակ շեշտ չի՛ ընդունում։

Երբ մի քանի ալս կարգի բառեր պատահաբար իրար մոտ պատահին, տեսնք թե ինչ պատկեր կստացվի։

Պարակներեն mégu ki čéšm-es-ra mí-binem yā né-mí-binem «ամի ասի, թե նրա աչքը տեսնում եմ կամ չեմ տեսնում»։ Պոլսի բարբառով՝ M'ըսեր օր մարդ մըն ալ չի պիտի գա։

Ընդհանուր կանոն է, որ նախադասության մեջ ստորադաս կամ երկրորդական արժեք ունեցող բառերը ավելի թույլ են շեշտվում, քան իրենց դերադաս, ալսինքն՝ ավելի կարևոր բառերը։ Ալսպես, ածականը իր գոլականից ստորադաս է, սեռականը իր հատկացյալից ստորադաս է, մակրայ, շաղկապ, նախադրությունն ավելի ստորադաս են, քան մյուս բառերը և այլն։ Օրինակ՝ կարմի'ր մատի՛տ, անտառի՝ պտո՛ւղ, երբո՛ր գա՛, մինչև՝ տու՛ն, քան թե ձա՛, ի՛նչ Նա չգիտեի՛, առվի մե՛չ ձու՛կ կա։ Ալսպես նաև մասնիկի լարժեք ունեցող բառերը, ինչպես՝ պիտի գա՛, թող գա՛։ Հրամայականը ուժեղ շեշտ է ստանում. արի՛, գնա՛, տե՛ս, տե՛ս թե քանի՞ հոգի է եկել. իսկ երբ հրամայականի վրա ավելանա պարագայական

մի բառ, շեշտը նրա վրա է փոխադրվում. ինչպես՝ դու՛րս եկ, գե՛ն գնա, վրա՛ տուր, վրա՛ն հեծիր, շու՛տ ասա, կամա՛ց շարժվիր և այլն։

Երբ նախադասությունը բարդ է, նա կազմում է ստորադաս և գերադաս բառերի զանազան խմբակներ, որոնք իրար հետ միանալով, վերջապես հանգում են մի կարևոր և ընդհանուր իմաստի։ Ցուրաքանչյուր խմբակ ունենում է իր մեջ մի թույլ և մի ավելի ուժեղ շեշտ, իսկ այդ ուժեղ շեշտերն էլ ունենում են իրենց մեջ ուժի փոքրիկ տարբերություններ, որ հաճախ չենք կարողանում տարբերել, բայց լոսակցության կամ ընթերցանության մեջ զգում ենք։ Ցուրաքանչյուր խոսող այդ շեշտերին աեր է և գործածում է ուղիղ ձևով. ավելի դժվար է ընթերցանությունը, և հենց որ ընթերցողը անվարժ է, այսինքն՝ չի կարողանում մտնել ճիշտ խոսողի կամ պատմողի դերում, իսկույն ունկնդիրը նկատում է թույլ և ուժեղ շեշտերի աստիճանավորման սխալը։

Շեշտադրության այս պայմանները անշուշտ լեզվից լեզու տարբերվում են. այն, ինչ որ նկարագրեցինք վերևում, հատկապես հայերենի համար է, որի հետ կարող են նույնանալ նաև այլ լեզուներ, ինչպես ֆրանսերեն կամ թուրքերեն։

Լեզվից լեզու շեշտի տարբերության լավագույն ապացույցը տեսնում ենք հաճախ մեր մեջ, երբ ռուսական կրթություն ստացած մի հայ, խոսելիս հայերեն գնում է իր լեզվի մեջ ռուսական առոգանության շեշտեր Օրինակ մինչ գուտ հայ առոգանությամբ պիտի ասեինք՝



ռուսական կրթություն ստացած օտարաճաչն մի հայ աղջիկ ալեծածան շեշտերով պիտի ասեր.



ուր ոչ միայն ձա՛ և րա՛ն վանկերը ավելի բարձր շեշտ են ստացած, այլ որ կարևորն է, վերջավորությունը՝ տեսավ, փոխանակ

սկսել ցած(տես), բարձրանում է վերև, հետո իջնում է հա-մարյա ալն աստիճանին (սակ), որ էր հավելական արտասանու-թյան մեջ տես: Եվ մինչդեռ հավելական արտասանության մեջ վերջ-նավանդը վերջանում է կարճ ա հարյա, սակական արտասանության մեջ բոլորական երկար անորոշ թյան ձևին:

Պետք չէ կարծել, թե լեզվի բոլորական կյանքում շեշտը մնում է նույն վիճակում և նույն պիրքում անփոփոխ. ասվի նման նա էլ ենթարկվում է փոփոխությունների. այդ փոփոխությունները վերա-բերում են շեշտի տեղին, աստիճանին և բնույթին: Շատ լեզու-ների պատմության մեջ նկատված երևույթ է, որ շեշտը նախապես եղել է անհաստատ, հետո դարձել է հաստատուն, կամ թե ուրիշ վանկից փոխադրվել է մի որևէ վանկի: Կան նույնպես լեզուներ, որոնց պանապան բարբառներում շեշտադրությունը տարբեր ձև ունի: Այսպես՝ թեև այժմ տպրոֆիննական բոլոր լեզուներում էլ շեշտը նախավանկի վրա է, բայց հնագույն ժամանակ, այն է ուգ-րո-ֆիննական նախալեզվյան շրջանում, ըստ քննության Սետալա լեզվաբանի, շեշտը պահվում էր բառի մեթթ առաջին և մեթթ երկ-րորդ վանկի վրա. ավելի հետո է, որ հավաքվեց ու հաստատվեց առաջին վանկի վրա (Szinnyei, Finn. ugr. spr., 52), իսկ վոլգա-կերևներում հաստատվեց վերջնավանկի վրա (Емельянов, Грам. вот. яз, 10, 24): Գերմանական ընտանիքի նախամոր մեջ շեշտը ան-հաստատ էր՝ իբրև համապատասխան հնդեվրոպական տոնին, հետո նույն ընտանիքի ժառանգ լեզուների մեջ հաստատվեց առաջին վանկում, որ սակայն այժմ էլ սկսել է փոփոխվել դանազան պատ-ճառներով: Շեքսպիրի ժամանակ անգլերեն acceptable, refutable, respectable և այլն բառերի մեջ շեշտը առաջին վանկի վրա էր, այժմ երկրորդ վանկի վրա է (Jespersen, Phil., 28): Հին իտալե-րենի մեջ շեշտը նախավանկի վրա է, բայց կան բարբառներ որոնք նախավանկից անդադրելով են բառի երկար վանկի վրա: Հին սլավերենում շեշտը անհաստատ էր, ինչ որ շարունակվում է այժմ էլ ռուսերենի մեջ, բայց լեհերենը հաստատել է այն վերջընթեր վանկի վրա. համմ. ռուսերեն ру́копись «ձեռագիր», որ լեհացին արտասանում է рукопись: Սերբերենը մեծ մասամբ շեշտում է առաջին վանկի վրա (Миленький, 3), իսկ բուլղարերենը որոշ բարբառներում (Մակեդոնիա) հաստատել է նախավերջընթեր վան-կի վրա, ուրիշ բարբառներում՝ վերջընթեր վանկի վրա և նույնիսկ որոշ բարբառներում՝ վերջին վանկի վրա (Щепкинь, 6):—Սրանց

հակառակ նկատելի է, որ լատիներենի շեշտը անփոփոխ մնում է ռոմանական լեզուների մեջ. այսպես՝

լատիներեն páuperem > իտալերեն póvero, ֆրանսերեն paúvre, իսպաներեն pobre.

լատիներեն férrum > իտալերեն ferro,

լատիներեն felicíssimum > իտալերեն felicíssimo, իսպաներեն felicísimo և այլն։

Բայց ֆրանսերենում, ուր շեշտը դռնվում է վերջնավանկի վրա դանադան պատճառներ դալիս են խանգարելու այն և շարժում են դեպի առաջին վանկերը, ինչ որ նշան է թերևս ապագա նոր բարբառության։

Սեմական նախալեզվի մեջ շեշտը ազատ էր և բառի նշանակության համեմատ կարող էր անցնել այս կամ այն վանկի վրա. ավելի հետո հյուսիսային սեմականում հաստատվեց բառի վերջին երկու վանկի վրա։ Սրա հետևանքով ասորերենում վերջին անշեշտ վանկի ձայնավորը ընկավ և շեշտը հաստատվեց վերջնավանկի վրա. այսպես է ասորերենի դասական դրականության շրջանում։ Դեպի 700 թվականը շեշտը անցավ վերջընթեր վանկի վրա, ինչպես պահում են մինչև այժմ մարոնիները և մանավանդ նեստորականները (Broc., Syr. gramm., 18, 20, 21)։

Սանսկրիտ լեզվում շեշտը անկանոն էր. արդի հնդկական սինհալի լեզվում շեշտը հաստատվել է բառի առաջին վանկի վրա (Geiger. 13)։

Շեշտի խախտման կամ տեղափոխության պատճառները նույնն են, ինչ որ տոնի համար. այն է՝ ձայնական պատճառներ, այսինքն՝ ձայնավորի երանգի կամ տևողության ազդեցությունը, ռիթմի ազդեցությունը, հոգեբանական պատճառներ, այն է՝ զգայական և տրամաբանական ուժգնության ազդեցությունը և վերջապես համանմանության (anologie)։ Շեշտի տեղի փոփոխությունն էլ հանկարծական շարժման արդյունք չէ, այլ պետք ունի երկարժամանակյա տատանումների և պատրաստության, մինչև վերջնական վիճակի հասնելը։

Շեշտի աստիճանն էլ կարող է փոխվել, այսինքն՝ անշեշտ վանկերի նկատմամբ նրա ունեցած ուժգնության թափը մեծանալ կամ փոքրանալ։ Այս բանը սակայն դժվար է հաստատել։ Օրինակ, երբ համեմատենք լատիներենից ծագած դանադան ռոմանական լեզուները, կնկատենք, որ այսօր էլ նրանց մեջ ֆրանսերենը ամենաթույլ շեշտն ունի, մյուս բոլորը նրանից ուժեղ են։ Սրանից

հնչեցնում են, որ ուրեմն ֆրանսերենն էլ միջին դարում ուներ մյուսներին հավասար շեշտ, որ սրսկի ֆրանսերեն շեշտից ավելի ուժեղ էր։ Մակայն այս տարբերությունը ավելի լավ է վերապրել վերջնավանկին, քանի որ վերջնավանկում գտնված շեշտը ավելի խուսլ է լինում, քան մյուս վանկերինը։

Շեշտը կարող է նաև իր բնավորը փոխել և վերածվել տոնի։ Հիմնվելով ձայնադարձ կոչված երևույթի վրա, կատարում են, մեն հնդեվրոպական նախալեզուն սկզբում ուներ ուժի շեշտ, որ հետո նույնիսկ նախալեզվում վերածվեց տոնի։ Լատիներենը սկզբում ուժի շեշտ ուներ, որ պատմական շրջանին սկզբում վերածվեց տոնի, որ հետո նորից շեշտ դարձավ։ Այս դեպքում, այսինքն՝ երբ շեշտը վերածվում է տոնի, եթե նա չի փոխում սկզբնական տեղը, երևույթը կարելի է բացատրել հեշտ ալնպես, ինչպես բացատրվում հակառակ երևույթը։ Բայց այս բացատրությունը բավարար չէ այն դեպքում, երբ շեշտը դառնում է տոն, փոխելով միաժամանակ իր տեղը, ինչպես հույն լատիներենում։ Այս դեպքում երևույթը բացատրվում է ասած ոսպնյությամբ, պրակտիկ կամ սրամտաբանական շեշտով կամ ձայնական ոսպնյություններով, ինչպես է, օրինակ, ձայնավորի անոսպնյությունը։ Նկատելի է, որ շեշտ չունեցող լեզուների մեջ, ինչպես է, օրինակ, ֆրանսերենը, շատ նախադասությանց մեջ ձայնը բարձրանում է վերջընթեր վանկերից մեկում։ Եվ երևի, մեն ասլ է, որ հատատավելով բառերի մեջ, դարձել է մշտական տոն։

Ջանալան լեզուների մեջ նկատելի է այն երևույթը, որ շեշտյալ վանկերը արտասանվում են ավելի մաքուր կամ ամբողջական, քան անշեշտ վանկերը՝ ավելի խուլ կամ խուլ։ Այսպես՝ անգլերեն մենոսլն ձայնավորը, միևնույն դիրքի մեջ, շեշտի տակ պահում է իր հնչյունը, առանց շեշտի հնչվում է իբր ə, օրինակ, the հնչվում է di կամ də, a «մեկ, մի» հնչվում է ei կամ ə, an «մի» հնչվում է än կամ ən, not հնչվում է nɔt կամ nt և այլն։ Ռուսերենի մեջ o ձայնավորը շեշտի տակ o է, շեշտից առաջ a, շեշտից հետո ə, ինչպես՝ хорошо, мыло։ Դանիերենում լոլոր բառավերջիկ ձայնավորները հնչվում են անորոշ մի հնչումով։ Ֆրանսերենի մեջ ձայնավորները շեշտի տակ լայն են հնչվում, առանց շեշտի՝ փակ են կամ միջակ. ինչպես՝ j'aime, nous aimons (žèm, nuzemǫ). frère, confrérie, il lève, nous levons։ Ուգրոֆիննական լեզուների մեջ շեշտի պատճառով առաջ է գալիս բաղաձայնների ուժեղացում կամ սկսլացում. ինչպես՝ ֆիններեն kukka «ծաղիկ» — սեռ. ku-

kan, luke «կարդալ»,—luen «կարդում եմ», tapa «սովորություն», հոգն. tavat, anta «տալ»—annan «տալիս եմ» (Szinnyei. Finnugr. spr. 31)։

Երբ մի բառ մի լեզվից անցնում է մի ուրիշ լեզվի, որի շեշտադրության օրենքները տարբեր են, փոխառյալ բառը հարմարվում է վերջինիս օրենքներին. օրինակ, իտալերեն gazzétta «լրագիր», *որի շեշտը վերջընթեր վանկի վրա է, դարձել է ռուսերեն՝* газéта, *ֆրանսերեն՝* gazétte, *թուրքերեն՝* gazetá, *ամկական հայերեն՝ խազեթա՛ «լրագիր»։*

Երբ բառը բարդվում է, շեշտը կրում է որոշ փոխոխություն. այն լեզուների մեջ, ուր շեշտը վերջնավանկումն է, բարդությունը կազմող առաջին բառերը զրկվում են շեշտից և միայն վերջինն է շեշտվում. որով ընդհանուր օրենքը չի խախտվում։ Իսկ այն լեզուների մեջ, ուր շեշտը շարժական է, ինչպես անգլերենում և գերմաներենում, բարդության ժամանակ հիմնական բառը վերցնում է ուժեղագույն շեշտը, մյուս բառերը երկրորդական, ալսինքն՝ տկար շեշտ։ Օրինակ, գերմաներեն Kíndergàrten «մանկապարտեզ» *բառի մեջ, որ կազմված է* Kinder «մանուկներ» *և* gárten «պարտեզ» *բառերից, երկու շեշտ կա, բայց առաջինը ավելի ուժեղ է, քան երկրորդը։ Նմանապես գերմաներեն* Stádtverórdnetenversámmlung, óberbûrgermeíster *բառերի մեջ, որ բաղկացած են 3 բառից, 3 տարբեր շեշտ կա։*

Այս կարգի լեզուների մեջ պատահում է երբեմն, որ բարդ բառի կազմիչ մասերը տարբեր շեշտեր ստանալով, տարբեր իմաստ ստանան. օրինակ, գերմաներեն blútàrm «սակավարյունն», blùtárm «շատ աղքատ», steínreích «շատ հարուստ», steínrèich «քարով հարուստ, քարաշատ» (Wundt, Völkerps., I, *2-րդ մաս, 394*)։

Չիլիի բնիկների լեզվում երբ բառը վերջանում է ձայնավորով, շեշտը մեծագույն մասամբ նախավերջին վանկի վրա է լինում, իսկ երբ բազաձայնով և նույնպես երկբարբառով է վերջանում, շեշտը դրվում է վերջնավանկի վրա (Febre, 2)։

Մունդա խմբից կոհլ լեզվում շեշտը գտնվում է առաջին վանկի վրա, նույնիսկ եթե բառը քառավանկ լինի, իսկ եթե բառը վերջանա երկբարբառով, շեշտը դրվում է վերջից հաշված երրորդ վանկի վրա (Nottrott, 6)։

Հիպերբորյան չուքչի, կորյակ և կամչադալ լեզուների մեջ շեշտը միշտ գտնվում է բառի առաջին վանկի վրա, նույնիսկ եթե

բառը հնդեվրոպական է։ Բայց երբ ուղիղ բառը շեշտել (ուժեղացնել), շեշտը բերում են վերջին վանկի վրա (Bogoras, 680)։

Կամկատկան լեզվում շեշտը պրծում է բառի երկրորդ վանկի վրա՝ սկզբից հաշված (Жирков, էջ 27)։

Երբ շեշտը բառի առաջին վանկի վրա է, շունչը դեռ առատ լինելով, առոգանությունն էլ ուժեղ կլինի։ Հաջորդ վանկերի վրա շունչը հետզհետե սպառվելով, վերջին վանկերը թույլ կլինեն։ Իսկ եթե շեշտը վերջին վանկի վրա է, շունչը սրտին նախորդ վանկերի վրա վատնված լինելով, վերջին վանկի վրա դրված շեշտը թույլ կլինի։ Սրա համար է, որ առաջին վանկի վրա շեշտ ունեցող լեզուները ուժեղ են հնչում, իսկ վերջին վանկի վրա շեշտ ունեցողները՝ ավելի մեղմ։

Շեշտ և տոն անկախ երևույթներ են, օրինակ՝ լատիներենը, որ ունի 4 տեսակ երաժշտական շեշտ (տոն), ունի նաև 4 տեսակ շեշտ. ուժեղ, սկզբ, սկզբապատկ, ամենաուժգ (Wiklund, 10, 12)։

ՇԵՇՏԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՄԵՋ

Հայերենը, իբրև հնդեվրոպական լեզու, իր ամենաառաջին շրջանում ժառանգել էր հնդեվրոպական շեշտը, այսինքն՝ ուներ երաժշտական շարժական տոն, թեև ոչ ուղղակի և ոչ անուղղակի որևէ ապացույց չենք գտնում նորերը ապացուցելու համար։ Ավելի ուշ սրա տոնը կորցրեց իր շարժականությունը, վերածվեց ուժգնությանն շեշտի և ևիսկ հաստատվեց վերջընթերց վանկի վրա։ Սա մի սովորական երևույթ է շատ ուրիշ լեզուների համար էլ. հաստատուն շեշտի տեղը վերջընթերց վանկն է առնդհանրակ։

Թե շեշտը գոնեսում էր նախահայերենի վերջընթերց վանկի վրա, կարելի է ապացուցել հետևյալ լեզվաբանական երևույթով։

Երբ հայերեն մի բառ համեմատում ենք համապատասխան հնդեվրոպական ձևի հետ, նկատում ենք, որ սրա վերջին վանկը ոչված է հայերենի մեջ. այսինքն՝ եթե հնդեվրոպական բառի վերջնավանկը ձայնավորով է վերջանում, այդ ձայնավորը (նույնիսկ եթե լինի a) ամբողջապես ընկել է, իսկ եթե բաղաձայնով կամ ձայնորդով է վերջանում, նույնիսկ եթե այդ բաղաձայնը կամ ձայնորդը պահված է, նրա նախորդ ձայնավորը կրճատված է, օրինակ՝

հնխ. penkʷe > սանս. páñca = հուն. πέντε հինգ.
հնխ. ebheret > սանս. ábharat = հուն. ἔφερε = բերեր.

հնխ. edhēt > սանս. ádhāt = հպ.

հնխ. հպ. ուղ. swópnos > սանս. svápnah լա. somnus
հնխ. հպ. հյց. swópnom > սանս. svápnam լա. somnium } = քուն.
հնխ. հպ. նեւրդ. swopnoi > սանս. svápne հուն. դվս. ὕπνοι

հնխ. հոգ. հյց. swopnons > = քունս.

հնխ. pətḗr > հուն. πατήρ = լա. pater = հայր

հնխ. podn̥ > հուն. πόδα = *ոտաճ > = ոտն.

Երբ բառը միավանկ է, բնականաբար այդպիսի երևույթ տեղի չի ունենում. օրինակ, հնդեվրոպական նախալեզվի trins > *դոթթևրեն* tr̥ins = *հայերեն* երիս *(բառիս մեջ ի հայկական հավելված է, ուստի բուն ձևն է *րիս <* trins*)։*

Ավելի կարմանալի է նկատել, որ վերջնահանգ ձայնավորը կորցնող մի բառ նրա սյառատհմամբ բառի մեջ պոնվի, ձայնավորը պահում է. այսպես՝

հնխ. penk*e > հինգ, *բայց* հնգեսատան.

հնխ. podn̥ > *ոտն, բայց* ոտանաւոր։

Այս ձայնաբանական երևույթից հետևում է, որ Ն դարից բավական առաջ հնդեվրոպական շեշտը հաստատվել էր հայերեն բառի վերջընթեր վանկի վրա։ Այդ շեշտը չէր կարող լինել երաժըշտական, այլ միայն ուժգնութ֊յան շեշտ էր և բավական ուժեղ, որպեսզի կարողանար վերջնավանկը կրճատել։ Շեշտի այս ուժգնութ֊յան արդյունքն է նաև հայերենի նույն ընդհանուր ձայնաբանական երևույթը, որով որոշ ձայնավորներ և երկբարբառներ ընկնում կամ փոփոխվում են, եթե շեշտից առաջ գտնվեն (երաժշտական շեշտը նման փոփոխութ֊յուններ չի առաջացնում). այսպես՝

ի *ընկնում է. օրինակ՝* սիրտ, մարմին, քիրտն. *սեռականում լինում են *սիրտի, *մարմինոյ, *քիրտան, և հետո անկմամբ՝* սրտի, մարմնոյ, քրտան, *բարդութ֊յամբ և ածանցմամբ՝* սրտմտիլ, մարմնաւոր, քրտնաթոր։—*Հին բառից բաղադրյալ *հինգագոյն >* *հնգագոյն։

ու *ընկնում է. օրինակ՝* ցուլ, աճմուկ, սուրբ. *սեռականում լինում են նախ *ցուլու, *աճմուկոյ, *սուրբոյ, հետո անկմամբ* ցլու, աճմկոյ, սրբոյ։—*սուրբ բառը ածանցմամբ սալիս է նախ *սուրբել, *սուրբութ֊յուն, որից հետո անկմամբ՝* սրբել, սրբութ֊յուն։—*մուտ արմատից* եմուտ, *բայց* մտի, մտանեմ.— *սրկ.* որում, մերում, *բգո.* յորմէ, ի մերմէ, *որ է հնաձև *յորումէ, *ի մերումէ.*

ոյ *դառնում է ու. օրինակ՝* յոյս, *սեռական *յոյսոյ, բայը *յոյսալ, հետո* յուսոյ, յուսալ։ *Իջոյց—իջուցի, իջուցանեմ, այն է հնաձև *իջոյցի, *իջոյցանեմ։*

նա *պահում է* ն. *օրինակ՝* առաքեալ, *ոճական* *առաքեալոյ *ածանցը* առաքելական, *հետո* առաքելոյ, առաքելական.—*կոտորելի մեջ անհնար եղակի Ի դեմք* գրծեաց, *բայց Ա և Բ դեմքերը՝* գրծեցի, գրծեցեր, *որոնք աստջանում են* *գրծեացի, *գրծեացեր ձևերից* Թագաւորութիւն, ի թագաւորութենեն (<*ի թագաւորութեանեն.)։

նայ *պահում է* ն. *օրինակ՝* կնամ *բայից ստորադասական* *կնայցեմ > կցեմ.—երեայ, *ոճական* *երեայի, *հետո* երեի *որ հետա գրված է* երեի)։ Բրիտանեայ—բրիտանեի. իայ > ն.—միայն, մենաւոց, *որ է* *միայնաւոց։

ե *(որ ներկայումս է հին* ey *երկրաբարբառը) պահում է* ի. *օրինակ* աեր, *ոճական* *աէրոյ, *բայը* *աէրել, *պահում են* սիրոյ, սիրել.—եջ, իջի, իջանեմ <*եջի, *եջանեմ։ *Միայն* դե, դիւ, դիւանայ։

իւ *պահում է* ու. *օրինակ՝* պատիւ, *ոճական* *պատիւոյ, *բայը* *պատիւել, *ածանցը* *պատիւական, *պահում են* պատուոյ, պատուել, պատուական.—վաղիւ, *որից* վաղուեան։

Կա նաև ու > իւ *ձայնափոխությունը, որ նկատվում է հին ձևաբերների մեջ. ալսպես* եղ, *ոճական* իւղոյ, թեր, *բայը* թիւրել. *ալսպես նաև* թեր, աղբիր, հարեր։ *Բայց* եթե *մնում է* եթենեորդ, եթեանեաւոց։

Մեր քննիչները ոսկան ալս ձայնափոխությունը հաշվի չեն առնում, բան որում նույն բառերի արմատական ձևն էլ հետո վերածված է իւ. բիւր, թիւր, իւղ, աղբիւր *և այլն* (Meillet, Altarm... 18)։

Ալս ձայնական օրենքները գործում են ոչ միայն հայերեն բառերի ածանցման ժամանակ, այլև հնդեվրոպականից հայերենի անցման միջոցին. ալսպես՝ հնխ. wik'mti > ղննդ. visalti, լատ. vigінti *տալիս է հայերեն* գիսան, *որից* գսաւ *և հետո քսանւ—* հնխ. rug'— > հուն. ἑρυγή = լատ. ērūgō = լիթ. rūgiu *տալիս է հայերեն* *որուծալ, հետո ու-ի անկմամբ* ործալ։—հնխ. voinio > հուն. φοῖνος = լատ. vinum *տալիս է նախ հայերեն* *գեհի, *հետո* ե *ձայնի փոփոխմամբ* գինի։—հնխ. louk'eno *ձևից նախ* *լոյսին, *հետո* ոյ-ի *փոփոխմամբ* լուսին։

Կարելի է որոշել, թե հայերենի մեջ երբ տեղի ունեցավ հիշյալ ձայնաբանական երևույթը։ Սրա համար իրը կռվան են ծառայում փոխառյալ բառերը։

Այն բառերի մեջ, որ հայերենը պահպան ժամանակ փոխ է առել պահլավերենից, սուրբերենից, հռնարենից և արաբերենից, օրենքը երկու դործադրելիություն ունի.— պահլավերենից փոխառյալ բառերի, ինչպես և հին սուրբական փոխառությունների մեջ օրենքը դործադրվում է, իսկ հռնարենից և արաբերենից, ինչպես և ավելի ուշ եղած փոխառությունների մեջ չի դործադրվում։ Օրինակ՝

պհլ. nišān > նշան, dusrav > դսրավ, spētak > սպիտակ, patmōčan > *պատմոչան > պատմուճան։

սուր. Nsiwīn > Մծբին, ihuḍaya > հրեայ.

սուր. kunukku > կնիք.

հուն. ζωστός > Բրիսաոս, ἐπισκοπος > եպիսկոպոս, καρτουλάριος > քարտուղար.

արար. abūzinnata > ապուզինայ, zurāfa > զրաֆէ, xumār > խումար, surinjān > սուրինջան և այլն։

Որովհետև հռնարեն բառերը քրիստոնեության միջոցով մտած են Հայաստան, իսկ քրիստոնեության մուտքը Հայաստան Գ դարի վերջում կամ ամենաշուտը 250-ական թվականներին է, սրանով էլ որոշվում է հիշյալ ձայնական օրենքի ժամանակը։ Այդ է Արշակունիների դահակալությունից հետո և սասանյանների տիրապետությունից առաջ։ Հայերենի պահլավական փոխառությունները հին արշակունյան ժամանակի լեզվից են։ Ամեն մի օրենք բնականաբար ներգործում է միայն այն բառերի վրա, որոնք այդ օրենքի ծագման ժամանակ գոյություն ունեն, իսկ իրանից հետո գալիք բառերի վրա չի կարող ազդել։ Հայերենի պահլավական փոխառությունները, ինչպես և հին սուրբական փոխառությունները վերոհիշյալ շրջանից առաջ կատարված լինելով՝ հպատակվում են օրենքին, իսկ սուրբական նոր փոխառությունները և հունական բոլոր փոխառությունները նույն շրջանից հետո լինելով, չեն հպատակվում։ Կարևոր է դիտել նաև այն հանգամանքը, որ իրանյան հին փոխառությունները հայերենի մեջ իրենց բունը պահում են. այսպես՝ հայերեն ախտ, դև, խրատ բառերը, որոնք փոխառյալ են պահլավերեն axt, dev, xrat ձևերից, հոդնակի սեռականի մեջ լինում են ախտից, դիւց, խրատուց, որոնք համապատասխանում են հին իրանական axti, daēvo, xratu ձևերին։ Սրանից հետևում է, որ այն ժամանակ, երբ հայերը այս բառերը փոխ առան պահլավերենից, նրանք դեռ պահլավերենի մեջ իրենց վերջնաձայնը կորցրած չէին, ուստի և հիշյալ բառերը հայերենի մեջ էլ ունեին ուղ. *ախտի, *դեւա, *խրատու ձևերը, որոնք հետո շեշտի ազդեցությամբ

վերջնաձայնը կորչելով պարձան ախտ, դի, խրատ։ Թե հալեբների և իմ պահպանների մեջ վերջնաձայնների կորստյան դրեթե միևնույն ժամանակ է տեղի ունեցել, բայց հրեաների խրթրից անկախ և միմյանց պատճառ (Mellet, Esquisse 5, Esq. 1, էջ 23)։

Բառավերջի անշեշտ ձայնավորի կորստյամբ հալեբեն բառերը պարձան վերջնաշեշտ, ինչպես պահում ենք արդեն և դարում և նրանից էլ առաջ։ Սա մի անհերքելիան երևույթ է, որ նկատելի է շատ տրիշ լեզուների կյանքում էլ։ Այսպես է եղել հոմ հրեալեզների և արամեերեն լեզուների մեջ, որ շեշտի տեղեցյամբ վերջին ձայնավորը լինկնելով բառերը պարձան վերջնաշեշտ. ինչպես՝ *qatála > qatál, dahál, > dahál «սակիս» և այլն (Brockelm, Précis, 67)։ Այս օրենքի վրա է հիմնված նաև յասինևերենիկ ֆրանսերենի անցյամբ և այլն։

Առանձնք հին ֆրանսերենը։

Այս լեզվի մեջ այն բոլոր պեպրերում, որ շեշտը պահում էր վերջնահիմ վանկի վրա, հաջորդ (սրանքն՝ վերջին) վանկի ձայնավորը լինկավ (բացի a ձայնավորից), համանապես շեշտի նախորդ վանկի ամեն ձայնավոր (բացի a-ից), եթե այդ վանկը բառի առաջին վանկը չէր կազմում։

Ի՞նչ է այս երևույթի պատճառը և հատկապես ինչո՞ համար ի, ու ձայնավորները լինկնում են, իսկ մյուսները մնում են։

Պատճառը ուժի շեշտն է, վերջնահիմ վանկում ուժը սպառելով հաջորդ վանկի մեջ, ձայնավորը թուլանում է, ստոի և լինկնում է։ Իսկ նախորդ վանկերում, թեև հարմածը հասնում է բոլոր ձայնավորներին, բայց ի, ու լինելով ամենաթեթև, հետևաբար և ամենաթույլ ձայնավորները, լինկնում են, իսկ մյուսները դեռ կարողանում են դիմանալ (M. Grammont, MSL, 20, էջ 220)։

Թե շեշտը հալեբենի այս շրջանում արդեն վերջնավանկի վրա էր, դրա մասին ոչ մի կասկած չկա։ Նրանք, որ կասկածում են այս մասին, կարող են աչքի առաջ բերել, օրինակ, իջանեմ բայի կատարյալի խոնարհումը՝ իջի, իջեր, եջ. վերջին ձևը լինելով միավանկ, շեշտի տեղի մասին կասկածից դուրս է. մյուս երկուսը, լինելով երկվանկ, շեշտ պիտի ունենային կամ առաջինն և կամ վերջին վանկի վրա։ Առաջինի վրա չէր կարող լինել շեշտը, որովհետև այս պարագային պիտի ունենային *էջի, *էջեր (ինչպես էր նախնական հալեբենում), ստոի մնում է ընդունել իջի, իջեր։

Բայց լեզվաբանական ապացույցից, գործնական ապացույց կամ վոստ ծառայում է Ագաթանգեղոսի հունարեն թարգմանու-

թյունը, ուր հայերենից վերցրած հատուկ անունները (տեղական կամ անձնական), ինչպես և հասարակ անունները շեշտված են վերջին վանկի վրա։ Այսպես՝ Οὐαλαρσαπάτ = *Վաղարշապատ,* Ἀραράτ = *Արարատ,* Μασίς = *Մասիս,* Σαμί = *Սահմի,* Ιανί = *Յանի,* Ναπάτ = *Նրպատ,* Ἀτραπατακάν = *Ատրպատական,* ἀσπέτ = *ասպետ,* Ἀσικήνη = *Աշխեն,* Ἐρασάχ = *Երասխ,* Θορδάν = *Թորդան,* Βαγααρίτ = *Բագայարիճ,* Μανακέρτ = *Մանազարք,* Θορτώμ = *Թորգոմ։ Նույն են նաև այն աշխարհագրական անունները, որ հին հույն պատմիչները հայերենից տառադարձելով հասցրել են մեզ. ինչպես՝* Νιφάτης = *Նրպատ,* Δερλυγη = *Դերջան,* Ταμωρίτης = *Ծմորիք,* Καρδοῦχοι = *Կորդուք,* Οὐιτία = *Ուտի և այլն։*

Հունարենը, ունենալով մի քանի տեսակ շեշտ, որոնք շարժական էին, այսինքն՝ կարող էին բառի երբեմն այս և երբեմն այն վանկի վրա դրվել, հունարեն Ագաթանգեղոսի այսպիսի շեշտադրությունը հարցի մասին այլևս ոչ մի կասկած չի կարող թողնել[1]։

ի, ու ձայնավորներից և oյ, ու, եա, եայ, է (= ey) երկբարբառներից դուրս մյուս ձայնավորներն ու երկբարբառները շեշտի ազդեցությամբ չեն փոփոխված. օրինակ.

ե—մեծ, մեծի, մեծատուն, մեծացավ.

ո—գործ, գործոյ, գործատուր, գործել.

այ—երկայն, երկայնել, երկայնամիտ.

աւ—յաւդ, յաւդի, յաւդել։

Երբ ի և ու գտնվում են բառավերջում (ի միավանկ բառերի վերջում, իսկ ու թե միավանկ և թե բազմավանկ բառերի վերջում), հոլովման կամ ածանցման ժամանակ, անշեշտ դիրքում, ձայնավորից առաջ պահվում են. ինչպես՝ միոյ, միում, միաբան, ձիոյ, ձիաւոր, լուոյ, մեղուի, զարդուէ, լեզուի, ձուոյ, ձուով: *Բազմավանկ բառերի մեջ իա շեշտից առաջ տալիս է *եա > ե. ինչպես՝ *բարիարար > բարերար, *գինիարբու > գիներբու, *այգիապան *այգեապան > այգեպան, *միակուսի > մեկուսի, *միակին > մեկին, երկի-ամ > երկեամ > երկեմեան, *օթիավան, օթեվան, օթևանի (բայց նաև *միատասան > մեռասան). իսկ շեշտի տակ՝ ա-ից առաջ՝ եա (ինչպես* տեղի—տեղեաւ, եկեղեցի—եկեղեցեաց), *իսկ ո-ից առաջ՝ ւո (անշուշտ անցնելով *իյո *իւո ձևերից), ինչպես* տեղւոյ, բարւոց, բարւոք, հոգւով։

Ու վերջացած բառերը արդի լեզվում ածանցման ժամանակ ու-ն պահում են վ հնչմամբ և կամ չնջում. ինչպես՝ ազդու, ազ-

[1] Հ. Հ. Տաշեան, *Ագաթանգեղոս*, էջ 71, ծան.։

դուրթիւն, կծու, կծուրթիւն, թթու, թթուրթիւն. ադու, ադուր, ադուաշ, ադուամազ. *բայց՝* սիրացու, սիրացուրթիւն, թեկնածու, թեկնածուրթիւն, նուագածու, նուագածուրթիւն։

Սակայն սրանք նոր երեւոյթներ են. հին հայերէնը պահում էր անշուշտ ու վերջնաձայնը, որ հայտնի ձայնաւորի հետ կապում էր երկվարկեան։

*Նոյն ալում հայերէնի մէջ ոչ-վերջնամանկում չի կարող պատահել և, ոյ, եա.—հակառակից դատելով, որ որ տեղերք ի, ու, Օ, նախամեր պետք է ենթադրենք և, ոյ, յ կամ ու. ինչպես գիեն, գիշեր ծագում են *գեեն, *գեշեր ձևերից. ջուրբակ ծագում է *ջոյբակ ձևից. բնչել, մնչել ծագում են բինչ, մինչ կամ բունչ, մունչ ձևերից։*

Անշեշտ վանկում կարելի է դնենք և՝ հարանջի ժամանակ ինչպես՝ քրիստոնեի, Հրեաստան, վոխանակ հնադարձ քրիստոնեի, Հրեաստան ձևերի, իակ ավելի հետո սովորական է դարձել ասեի, բերեի ձևը, որի դեմ հին ձևաբերներն անեն ասեի, բերեի։

Անշեշտ վանկում ի, ու գտնում ենք հետևյալ դեպքերում.

1. Բառասկզբում մի հաջորդական բաղաձայնից առաջ. ինչպես՝ իմ, իմի, իմակորիւն. իր—իրոյ, իրմ—իրմ։՝ որից գմե՝, իմն—յիմեմն, իննն—իննունք, իր—իրաց—իրաւ։

2. Բառասկզբում կամ բառամիջում ն + հոխորդաձայնից կամ պ + բաղաձայնից առաջ. ինչպես՝ ունկն—ունկան, ինքն—ինքեան, հինգ—հինգեւորդ, ուղտ—ուղտու, ուղիղ—ուղխից։

3. Մի խումբ բառերի մեջ, որոնց պատճառը պարզ չէ, հիմն—հիման, հիրհ—հիրհել, հիւսիս—հիւսիսոյ, քուն—քունել (բայց քնոյ, քնով). շուրջ—շուրջանակի (բայց շրջել)։

Նշանոթ.—Հիման, հինգեւորդ և նման բառերի մեջ ի ձայնաւորի չպղտիլը բացատրվում է ն բաղաձայնի ակար հնչումով։

Մի խումբ միավանկ բառեր, որոնք ուրիշ բառերի իբրև օժանդակ են դործածվում, շեշտ չունեն և մինչև անգամ զուրկ են կամ կարող են դրկվել իրենց ձայնաւորից. այսպես են՝

ոչ. բայերի հետ անի ուժեղ շեշտ (ոչ կամիմ), նուազական և իբրև վիճակաւոր մակրայ (ոչ). բայց ոչինչ, որից կրճատված զինչ, չնչին, չնչին, նաև չէ։

մի. իբրև անորոշ ածական շեշտ չունի (ա՛յր մի և կի՛ն մի), որից էլ կրճատվելով մ (մարդ մը. մեյ մ՛այ)։

իմն, ումն, իբրև անորոշ ածական նուազական շեշտ չունեն (ա՛յր ումն, բո՛յս իմն), որոնցից նախաձայնը կրճատվելով հավա-

սարապես աշխարհաբար մըն (մարդ մըն է, քար մըն է). նմանապես ինչ (իբր անորոշ), րոյս ինչ։

Էական բայերի միավանկ ձևերը (եմ, ես, է և այլն) *շեշտ չունեն և արտասանվում են նախորդ բառի հետ միացած* (ե՛ս եմ, մե՛ծ եմ, հայ է)։ *Սրա համեմատ նաև արևելյան գրականում* ասու՛մ եմ, ասու՛մ ես, ասու՛մ է, ըստել եր և այլն։

Ընդ նախդիր, առաջանում է հնդեվրոպական նախալեզվի anti *ձևից, որ տվել է հայերեն *անդ, որից սղված ընդ։*

Ըստ նախդիր, առաջանում է հնդեվրոպական նախալեզվի posti *ձևից, որ տվել է նախ հայերեն *ոստ, կրճատմամբ դարձել է ըստ։*

Այսպես նաև առ, ի, ց, զ. վերջին երկուսը նույնիսկ ձայնավորից զրկված, իսկ ի վերածված բաղաձայնի, յանուն, յամէ։

Երբ բառը բարդ է և նրա առաջին մասը մի ցուցական է կամ հարցական (որ, ինչ) *և կամ սոյն, դոյն, նոյն, ո՛չ, աճա մակբայը, շեշտը անցնում է առաջին մասի վրա. ինչպես՝ ո՛րպես ի՛նչպես, յա՛յնժամ, ո՛չինչ, ա՛յսպես, ա՛յդպես, այնպես, որպիսի, ի՛նչպիսի, աճա՛ւասիկ, աճա՛ւադիկ, աճա՛ւանիկ, նո՛յնպես, սո՛յնպես, նո՛յնպիսի. այսպես նաև այս, այդ, այն բառերի հոլովման մեջ. ա՛յնորիկ, ա՛յնմիկ, ա՛յսորիկ, յա՛յսմանե՛ք (բայց գործնական ասվում է այնու՛, այնուի՛կ, ինչպես ցույց են տալիս նաև այնու՛ ամենայնիւ, այսու՛ ամենայնիւ)։*

Սղման հակառակ դեպքեր են.

տէր, բացառական ի տեառնէ. նախապես՝ ի տեռնէ.

վրէժխնդիր.

Նախդիրները բարդության մեջ չեն սղվում. ինչպես՝ տրիտուր, յափսիթերս, խառնիխուռն։

Բարդության մեջ մտած ու շաղկապը չի սղվում. այրուձի, ութուտասն, պարտուպատշաճ. անցուդարձ։

Այս վիճակը արդի հայերենի ընդունված ձևն է, բայց պետք է կարծել, որ այդպես էր նաև հին հայերենում, որի ապացույցն է այժմ բառը, համառոտված ա՛յսժամ ձևից։ Եթե շեշտը առաջի վանկի վրա չլիներ, վերջին ձայնավորը չպիտի ընկներ։ Ն.

Ինչպես էլ լինի, շեշտադրության այս ձևը դեռ թե զուտ լեզվական է, այլ տրամաբանական, այնպես որ վերի ձևերը ըմբռնված են իբրև երկու առանձին բառ. այսպես՝ յայն ժամ, ո՞ր պես, նոյն պես.— (աճաւասիկ, աճաւադիկ, աճաւանիկ *ձևերի հնագույնն է* աճա՛ աւասիկ, աճա՛ աւադիկ, աճա՛ աւանիկ, *որոնք նույնպես*

պրեծածական էին հին հայերենում)։ Սրա պարզ ապացույցն այն է, որ մինուճար բառերը կարելի է շեշտել նաև բառ ամբողջականի՝ վերջնականում, ինչպես՝ այսպե՛ս, այսպիսի՞, որպիսի՞, յայնժա՛մ, անուանի՛կ և այլն։—Այսօր բառը հնչվում է ա՛յսօր կամ այսո՛ր։—

Ոչինչ բառը արեւելահայց մեջ հնչվում է ո՛չինչ, արեւմտահայց մեջ ոչի՛նչ։

Մեր աշակերտական շրջանից ամենօգտակար համարել է մեզ այն օրինքը, թե այս, այդ, այն բառերի հոլովման ժամանակ պետք է շեշտենք ոչ միայն ա՛յր, ա՛յդր, ա՛յն և ա՛յտ, ա՛յդմ, ա՛յնմ, այլև ա՛յսորիկ, ա՛յդորիկ, ա՛յնորիկ, ա՛յսմիկ, ա՛յդմիկ, ա՛յնմիկ և այլն։ Սակայն Մելյեն, բննելով շեշտադրելու Ամիոտոսյանի մի քանի հին ձեռագրեր, գտնում է, որ նրանց մեջ էլ այս բառերը շեշտադրված են առաջին վանկի վրա։

Տրամաբանական հիմունքով հաստատում է նաև նրանով, որ նրբ բառերի շեշտը փոխվում է, շեշտն էլ տեղափոխվում է. օրինակ՝ Ա՛յդ եմ ուզում, Այդ չե՛մ ուզում, Ձե՛մ ուզում այդ, Ա՛յդ գիրքը ուզում եմ ես, Ուզո՛ւմ եմ ես այդ գիրքը։

Արդի գրական հայերենում առաջին վանկի վրա շեշտված բառեր են նաև՝ ա՛յդպես, դու՛ք, ես՛ն, ես՛պես, ես՛պիսի, սա՛կայն, գո՛նե, գրե՛թ, ին՛չ, ինչո՛ւ, ա՛յդչափ, գա՛յթալ, ևա՛, մա՛նավանդ, ևա՛մանավանդ, նույնպես դասական թվականների մեջ՝ ե՛րկրորդ ե՛րրորդ, չո՛րրորդ..., տա՛սներորդ։

Դերանունների մեջ, օրինակ, շեշտվում են՝ ո՛րդեակ, ձա՛յրիկ. մա՛յրիկ, քո՛յրիկ. դրսերը՝ Պե՛տրե, Ղա՛զարե, Պա՛ղե. աշխարհաբար՝ Պե՛տրոս, Ղա՛զար, Պո՛ղոս, Սե՛րոբ, Գրի՛գոր, Հռի՛փսիկ։

Այժմ պետք է քննել, թե հին հայերենի վերջընթեր շեշտը ի՛նչ եղանակով է առաջացել։ Դրա համար կարելի է ենթադրել, թե հնդեվրոպական հայերենի վերջընթեր վանկի շեշտը առաջացել է հայատառերի նախատիպերի (խուզլյանների) և կամ կրկնական ժողովրդական բդեների լեզվի ազդեցությամբ, ենթադրելով, թե այդ ժողովրդները շեշտում էին վերջընթեր վանկի վրա և հայերի հետ ձուլվելիս իրենց հետ բերին նաև իրենց հին լեզվի այդ հատկությունը։

Ենթադրվում է, թե միջին հայերենում, բացի վերջնավանկի շեշտից, ձևացել էր նաև մի երկրորդական շեշտ բառի առաջին վանկի վրա (Meillet, Esq. 2ième éd., 20), որի ապացույցը և արդյունքն այն է, որ մինչդեռ բառամիջի ա ձայնը ջնջվում է, ընդհակառակը, նախավանկի մեջ պահվում է։ Օրինակ՝ հաւատամ>մի-

ջին հայերեն աւտամ (իբր hâvatâm ձևից). *վաճառականեաբ > միջին հայերեն վա՛ճուկնե՛բ[1]։

Բայց այս երևոյթը թվում է, թե հաստատ չէ. հընդեվրոպական տոնը, ինչպես ուրիշ լեզուների, նույնպես նաև հայերենի մեջ կարող էր անկախորեն վերածվել ուժի շեշտի, հաստատվեր վերջընթեր վանկի վրա, հետո էլ վերջնավանկի անկումով ստանար հանգաշեշտ, ինչպես են այսօր ֆրանսերենը, պարսկերենը, քըրդերենը և այլն։

Արդի հայերեն բարբառներում շեշտը մի քանի տեսակ է.

1. կը ճյուղի բարբառների մեծ մասը շեշտում է վերջնավանկի վրա, ինչպես ե դարի հայերենումն էր, որից անցել է նաև արդի գրական հայերենին։ Հաճախ նկատված երևույթ է, որ երբ շեշտը ընկնում է վերջնավանկի վրա, հետզհետե թուլանում է. համմտ. ֆրանսերենի վերջնավանկի թույլ շեշտը և գերմաներենի ու անգլերենի նախավանկային ուժեղ շեշտը։ Այսպես և հայերենի մեջ, ուր վերջընթեր վանկի հնագույն ուժեղ շեշտի փոխարեն այժմ ունենք թույլ շեշտ։

2. ում ճյուղի բարբառների մեծ մասը շեշտում է վերջընթեր վանկի վրա. ե՛բազ, ա՛շխարհ և այլն. իսկ երբ վերջընթեր վանկն ունի ը ձայնավորը, շեշտը անցնում է վերջին վանկին. ինչպես՝ կոտըրտե՛լ, երկնքի՛ց, գնու՛մ եմ։ Այս դեպքում հոդը հաշվի չի առնվում. ինչպես՝ հարսա՛նիքը, ե՛րկինքը, ինչպես նաև էական բայը. ասում ես, ասում է և այլն (Աբեղյան, Տաղաչափություն, էջ 21—22)։ Սակայն գրական լեզուն չի ընդունած այս շեշտը և արևմտյան հայերենի նման նա էլ շեշտում է վերջնավանկում։

Այս ընդհանուր կանոնից բացառություն են կազմում և տարբեր վանկի վրա շեշտ ունեն՝

1. ղ, ճ, ր վերջացող բառեր, որոնց նախորդում է մի ուրիշ բաղաձայն. ինչպես՝ ասպղ, ոսկղ, արկղ, տարր, մեղր, կարծր, մանր, փոքր, թանձր, ծանր, ոսկր, դառն, խառն, բուռն, վեհանձնը, մեծանձն, լիաձեռն, ուրեմն և այլն։ (Այս բոլորը հնչվում են ա՛սպղ, ո՛սպղ, ա՛րկղ և այլն)։

2. Որոշյալ և ստացական հոդերը. հացս, հացդ, հացը։

3. Մի քանի անկախ բառեր, ինչպես գրե՛թ, մի՛թե, գու՛ցե, բա՛ցի, դե՛պի, ցա՛ւ, մա՛նաւանդ, ես՛մանավանդ, ե՛րբոր, դա՛րձեալ,

[1] Նույն շեշտը արդի աշխարհաբարում զգում է նաև Աբեղյանը, Տաղաչափություն, 21, ինչպես հարսանիք, դաղարել, պատրաստել, կոտրրտել և այլն,

յա՛նկարծ, յա՛նկարծակի, ա՛ւելի՛ւս, իս՛կոյն, *որոնք շեշտվում են առաջին վանկի վրա։*

4. Բառերի թվականները շեշտվում են առաջին վանկի վրա. ե՛րկրորդ, ե՛րրորդ, չո՛րրորդ, առա՛ւաւոտրդ *և այլն։*

5. Հոլոյանների և յունյանների ածականներով կազմված բառերը, օրինակ, ա՛յապա, ա՛յդպես, ա՛յնպես, ա՛յապիսի, ա՛յդպիսի, ա՛յնպիսի, առա՛պես, դա՛պես, նա՛պես, ա՛յնպես, դո՛յնպես, նո՛յնպես, սո՛յնպիսի, դո՛յնպիսի, նո՛յնպիսի, ի՛նչպես, ի՛նչպիսի, ո՛րպես, ո՛րպիսի, ա՛յրաւն, ա՛յդրաւն, ա՛յնրաւն, ո՛րբան, ի՛նչքան, ա՛յսչափ, ա՛յդչափ, ա՛յնչափ, ա՛յսօր, ո՛րչափ, ի՛նչչափ, ո՛րտեղ, ի՛նչտեղ *և այլն։*

6. Կոչականները շեշտվում են առաջին կամ երկրորդ վանկի վրա. Կարապետ, Կարապետ, բայց նաև արդարացիս Կարապետ (համմա. հանդարտն Շաւղաթ, որ կոչականում դառնում է Շաւղա՛թ)։

7. Աշխարհագրական հասուկ անուններն շեշտվում են վերջընթեր կամ նախավերջընթեր վանկի վրա. օրինակ՝ Կա՛րին, Բա՛րերդ *կամ* Բա՛յբուրդ, Ալա՛շկերտ, Նի՛շնիր, Վիա՛րբեքիր *կամ* Տիգրանա՛կերտ, Է՛րզրում, Էրզի՛նկեան *(մինչև իսկ* Երզը՛նկա*),* ինչպես *նաև* Փա՛րիզ, Լո՛նդոն, Բե՛ռլին, *հոլովման ժամանակ էլ* Նի՛շնիրի, Բե՛ռլինի *և այլն։*

8. -արար, -ապես (-ապես), -օրեն (-օրենն) *վերջավորութեամբ մակբայները շեշտվում են նախավերջընթեր վանկի վրա. օրինակ* մեծապես, անմիջապես, խրոխտաբար, հսկայաբար, հայկաբար, համարձակաբար, մեղմօրեն *և այլն։ Երբ բառը ածական է, որ մակբայ լինելը չի խոչընդոտում, բառը շեշտվում է վերջնավանկի վրա. ինչպես՝* գրաբար, աշխարհաբար, ռամկօրեն։— *Այս շեշտն էլ հատուկ է արևմտահայերին և չկա արևելյան գրականում։ Արևմտահայերը այսպես են շեշտում նաև ֆրանսերեն* grâvement, fôrtement *և այլն մակբայները։ Այսպիսի շեշտ ունի նաև տաճկերենը.* եվվելճե, կիւզելճե (եվվելջե, գյուզելջե) *և այլն։*

9. Արգելականը, ինչպես նաև չ բացասականով կազմված ձևերը շեշտը տանում են նախավանկի վրա. ինչպես՝ մի՛ գնա(ր), մի՛ զա, մի՛ տա, չե՛մ ուզում = չե՛մ ուզեր, չե՛մ ուզեր կոր, չպի՛տի երթամ, չե՛մ երգեր, չե՛ս երգեր *և որա համեմատ* չե՛րգեր, *որ է չի՛ երգեր, ինչպես է արևելյան բարբառում* (չեմ երգի, չես երգի, չի երգի)։ *Սրանց մեջ շեշտը կրողը էական բայն է, այնպես որ էականը պահպանում է, շեշտը մնում է վերջնավանկում. ինչպես՝* չսիրեցի՛, չսուի՛, չխօսի՛ս *և այլն։ Նույնպես ապառնիի մեջ չպիտի՛*

երթամ և այլն։ Երկուսի տարբերությունը զգալու համար հմմտ. չե՛րթար «նա չի գնում», չերթա՛ր «երանի թե նա չգնար», կամ չերթա՛ր, «աղեկ էր, ավելի լավ է որ նա չերթար»։

Հայերենի մեջ բոլոր ձայնավորները կարող են ստանալ շեշտ, բացի ը ձայնավորից, որ միշտ զուրկ է շեշտից։ Այսպես է նաև ճավալերենը, ուր ը ĕ (ə) միշտ անշեշտ է, բացի, իհարկե, այն բառերից, ուր բոլոր ձայնավորներն էլ ĕ են. ինչպես՝ tətəp, pə-pət և այլն (Bohatta, Prak. Gramm. de jav. spr., 20)։ Հայերենի մեջ էլ, եթե բառը բաղկացած է միայն ը ձայնավորներից, բնականաբար շեշտը գտնվում է վերջին ը վանկի վրա. այսպես՝ Շամախու բարբառով ծըլլըկըր շըռշըռ-բըռբըռ «անձրևի կաթիլը»։ Ուրիշ պարագաներում, եթե ը պահանջում է առոգանության ուժեղ շեշտ, կարող է ազատորեն տառանալ. ինչպես՝ Պոլսի բարբառով՝ չը՛պիտի երթամ, չը՛սեր «չի ասում», մը՛սեր, մի ասեր, երգը՛նկա և այլն։

ԳԼՈՒԽ ԺԴ

ՁԱՅՆԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն մի ձայնի արտասանության համար դործարանները կատարում են որոշ շարժումներ, որոնց համար պահանջվում է ժամանակի մինիմում, որ կախված է անշուշտ նուրբ ձայնի բնույթից։ Սովորաբար այդ մինիմումը չենք պահում։ Երբ մեկը իր խոսակցության մեջ դործ է կնում այնքան ժամանակ, որ մոտենում է մինիմումին, ասում ենք, թե նա արագ է խոսում, իսկ երբ անցնում է մինիմումից՝ դանդաղ է խոսում։ Խոսակցության այս թափը նման է երաժշտական ամպին (tempo), ուր ունենք andante, allegro, allegretto և այլ աստիճաններ։ Այս աստիճանները ավելի լավ է որոշում մետրոնոմ (mitronome) կոչված դործիքը, որ մի բոպեում տալիս է այսքան հարված։

Խոսքի արագությունը կախված է դանադան պայմաններից։

1. Խոսողի բնախոսական վիճակից. երիտասարդը ավելի արագ է խոսում, քան ծերունին. աշխույժ նկարագրով անձինք ավելի արագ են խոսում, քան ծանրաշարժները և այլն։

2. Ցեղական հատկություններից. ազգեր կան, որ արագախոս են, ազգեր էլ կան, որ ընդհանրապես դանդաղ են խոսում. Եվրոպայում անգլիացիք ամենադանդաղախոս ժողովուրդն են (այդ է երևի հյուսիսային ժողովուրդների տեմպը). քանի իջնում ենք հարավ, տեմպը արագանում է. ֆրանսիացիք ավելի արագախոս են, քան անգլիացիք. իտալացիք ավելի արագախոս են, քան ֆրանսիացիք. հույները ավելի արագախոս են, քան իտալացիք։ Տաճկաստանում նշանավոր են լազերը իբրև արագախոս։

Բայց միևնույն ժողովրդի մեջ էլ կա անձից անձ տարբերությունը խոսելու տեմպի մեջ։ Գիտենք, որ հայոց մեջ շամախեցիք և ախալցխացիք ընդհանրապես ծանրախոս են, պոլսեցիք և նորնախիջևանցիք արագախոս։

Անձից անձ տեմպի տարբերությունը ամենքս գիտենք փորձառությամբ. արագախոսները երբեմն բառի միջին վանկը ուտում են. ալժմ Երևանում որոշ մարդիկ արտասանում են աշտանք, փոխանակ ասելու աշխատանք, բայց իհարկե առանց գիտակցելու. մտքում ունեն աշխատանք և եթե վանկերով ասել տանք, կասեն աշ-խա-տանք, բայց սովորական խոսակցության մեջ կասեն աշտանք։

Ավելի սովորական է որտև, փոխանակ ասելու որովհետև. 6 տարեկան մի ագջիկ, բարեկիրթ ընտանիքի զավակ, որ գրական լեզվով էր խոսում, արտասանում էր որտև, և երբ վանկերով հեգնել ուվի, էլի ասաց որ-տև։

Շատերի մեջ Երևանում ընդհանուր է դարձել որպիսի, փոխանակ ասելու որպեզի. բայց դա ոչ թե իրրև շփոթության արդյունք, այլ արագախոսության։

3. Հոգմունքներից. որոշ հուզմունքներ, ինչպես ուրախությունն ու բարկությունը, արագացնում են խոսքի թափը, ուրիշներ, ինչպես սխրությունը, դանդաղեցնում։

4. Սովորությունից և կամեցողությունից. մարդ մայրենի լեզուն ավելի արագ է խոսում, քան մի օտար լեզու. ընտանեկան ու մտերմական խոսակցությունը ավելի արագ է, քան հասարակական, բեմական և այլն խոսակցությունը. մարդ իր խոսքի թափը դանդաղեցնում է, երբ ուզում է ավելի լավ հասկացնել իրան և այլն։

Այս պատճառներով ահա խոսակցության արագությունը կարող է լինել շատ ու շատ տարբեր. ֆրանսիական պառլամենտի սղագիրները հաշվել են, որ ատենաբաններից ոմանք մի րոպեում գործ են ածում 155 վանկ, ուրիշներ գնում են մինչև 300։ Ընտանեկան խոսակցության, մի որևէ գրվածքի արագ ընթերցանության կամ անգիր մի հատվածի արտասանության ժամանակ, այս թիվը ավելի է բարձրանում։ Նման մի փորձ կատարելով ինձ վրա, գտա, որ շատ արագ ընթերցանության ժամանակ, մի րոպեում արտասանում եմ 570 վանկ (մի ամբողջ էջ), մինչդեռ աչքով կարդալու ժամանակ նույնքան վանկի համար տալիս եմ 40 վայրկյան։

Վանկերի և ձայների ալս տարատեսակներն, որ խոսակցության տարատեսակներից է կախված, կչեշտում է բացատրական տեղեկություն, որ ձայնահատության համար երկրորդական արժեք ունեն։ Ինչ որ կարևոր է ձայնահատության համար, դա ձայների նպատակական տեղեկությունն է, այսինքն՝ բուսաբանչյուր ձայնի տեղեկությունը համեմատած մյուս ձայների հետ։ Պետք է նաև երաժշտության մեջ, որ նոտաների հարաբերական տեղեկությունը (սպիտակ նոտաներ, սև նոտաներ, croche-ներ և այլն) շատ ավելի կարևոր է, քան նրանց բացարձակ տեղեկությունը, առաջինը կազմում է բուն իսկ եղանակը, երկրորդը եղանակի միայն տեմպն է փոխում։ Եվ երաժշտության և խոսակցության մեջ ձայների բացարձակ տեղեկությունը կարող է փոխվել և փոխվում է, բայց նրանց հարաբերական տեղեկությունը պրկին անփոփոխ է մնում։ Օրինակի համար, ֆրանսերեն morose բառի առաջին և երկրորդ o-ների միջև կա պրկին 1 : 2 հարաբերություն. և այս հարաբերությունը կմնա անփոփոխ, նայն բառի ինչպես արագ, նույնպես և դանդաղ արտասանության ժամանակ։

Ահա ձայների այս հարաբերական տեղությունն է, որ քանականության մեջ կչեշտում է քանակություն (quantité) (մենք ամեն հարմար ենք համարում տեղություն բառը) և բառի կարևոր պայմաններից մեկն է, հիշյա ինչպես երանգը, բարձրությունը և ուժգնությունը։ Փոխել բառի տեղությունը, նշանակում է փոխել բառը և կամ դնել մի բառ, որ չկա լեզվի մեջ։ Օրինակ, լատիներեն rosă (երկար ă-ով) նշանակում է «վարդ». rosă (կարճ ă) նշանակում է «վարդ», իսկ rosa (երկար o-ով) դոլորիության չունի։ Մոնղոլական մի բարբառում, որ խոսվում է Միջին Ասիայում, շատ բառեր իրարից ձայնավորների երկարությամբ են տարբերվում. ինչպես՝ yara «վերք» — yāra «շտապիր», dara «ոճդմիր» — dāra „мерзни!", em «դեղ» — ēm «ասեղ», t'os «լուծ» — t'ōs «փոշի», ula «կրունկ» — ūla «ասր», us «մազ» — ūs «ցորասեի կեղև և այլն (Поппе, Амарский говор. 51)։

Կարելի է չափել վանկերի և ձայների տեղությունը մի շատ հասարակ միջոցով.—Կարդում ենք մի հշ դրությունը, ժամացույցի վրա որոշում, թե քանի՞ վայրկյան տևեց այդ էջի ընթերցումը, հետո հաշվում ենք վանկերը կամ ձայները և բաժանելով վայրկյանների թվի վրա, ստանում ենք լուրաքանչյուրի տեղությունը (իհարկե հաշվելով ամբողջից կետերի և վերջակետերի դադարները)։

Բայց այս հաշիվը շատ վերիվերո է և անօգուտ՝ ձայնաբանական քննությունների համար։

Փորձառական մեթոդը տալիս է մեզ շատ ավելի ճիշտ արդյունքներ։ Արձանագրում ենք մեքենայի վրա մեր ցանկացած խոսքերը, և միևնույն ժամանակ մի ձայնորդի թրթռումները, որ մի վայրկյանում տալիս է 100 թրթիռ։ Մի թրթիռը տևում է ուրեմն $^1/_{100}$ վայրկյան։ Այժմ որոշելով մեր ուզած ձայնի սկիզբն ու վերջը՝ նույն արձանագրության մեջ, և չափելով ձայնորդի թրթիռներով, իմանում ենք լուրաքանչյուրի ամենամանր չափը։

Քննությունները ցույց են տալիս, որ թե՛ ձայնավորները և թե՛ բաղաձայնները կարող են ունենալ երկար և կարճ տևողություն։ Թե՛ ձայնավորների և թե՛ բաղաձայնների համար գործնականում բավական է համարվում զանազանել այս երկուսը։ Սակայն ձայնավորների համար երբեմն հարկավոր է լինում զանազանել նաև շատ կարճ (ultra brève), կես երկար (millongue), շատ երկար (ultra-longue) աստիճանները։ Կարելի է նաև պետք եղած դեպքում նշանակել երկարությունը այսքան հարյուրավոր վայրկյանով։

Լատիներենը ուներ գերկարճ ձայնավորներ, որոնք լինկան ռոմանական լեզուներում։ Սանսկրիտ քերականները դնում են բաղաձայնի տևողությունը կես ձայնավորի հավասար, երկար ձայնավորը կարճ ձայնավորի կրկինն են համարում. բայց պատահում են երբեմն ավելի երկար ձայնավորներ, որոնք կարճ ձայնավորների երեք տևողություն ունեն և կոչվում են pluta, որոնք նշանակում են ձայնավորի մոտ 3 թվանշանով. օրինակ՝ ā 3 (Whitney, ind. gramm., § 78)։ Ամերիկյան ալգոնկին լեզվի մեջ բառավերջին ձայնավորները շատ կարճ լինելով, ուսումնասիրողը գրում է փոքրը տառով, ստղավերևում. օրինակ ĭn^{i}, pyāg^{u} և այլն (Boas, Handbook, I, 748)։ Լատսերեն լեզուն էլ այսօր գիտե զանազանել երկար, կարճ և շատ կարճ ձայնավորներ։ Օրինակ, ըստ Ռ. Ֆիշի (էջ 3), աֆրիկյան դադոմբա (բանտու) լեզուն ունի a, e, i, o, u ձայնավորների շատ կարճ աստիճանը, ապա՝ միջակը և երկարը։

Մալայերեն լեզուն ունի կարճ, երկար և կես երկար ձայնավորներ. փակ վանկում գտնված ձայնավորները ընդհանրապես կարճ են, բայց վանկում գտնված ձայնավորները եթե շեշտալ են, միշտ երկար են. իսկ եթե անշեշտ են՝ կես-երկար են (Seidel, 5)։

Բաղաձայնների մեջ սեղմերի խումբը կարելի է արտասանել ըստ կարելվույն երկար. «լսիր» իմաստով ասում ենք շատ երկար

ա՞ կամ շ՞։ Այս պատճառով էլ այս կարգի բաղաձայնները կոչվում են անհոսուն (continue)։ Կարճ անցմ բաղաձայնի տևողությունը սովորական տեմպով խոսակցության մեջ 6-10 հարյուրերորդ վայրկյան է. երկարը նրա կրկնակն է։ Պայթական բաղաձայնների մեջ պայթյունը դրսեի միշտ $^{3}/_{100}$ վայրկյան է. բայց խցումը անում է շատ ավելի երկար. կարճ պայթականի տևողությունը մեջտեղ խոսակցության մեջ $8—12/_{100}$ վայրկյան է, երկրորդը սրա կրկնակը։

Բաղաձայնները (անցմ և պայթական) ընդհանրապես կարճ են լինում. նրանք պատահում են երկար, երբ կրկնվում են (ինչպես՝ ուղղակի, ամմեճ, Աննա և այլն), կամ երբ ուղում ենք բառին առանձնահատուկ իմաստ տալ. ինչպես՝ հիմմա, ո՞րիկա, շա՞ն որդի, խո՞ներ, խո՞ն։

Աֆրիկատները սկզբում կամ դա լեզվում որոշ բաղաձայններ և հատկապես m, n, ŋ այնպես երկար են հնչվում երբեմն, որ այդ լեզուն քննող հնդիանակը (Zimmermann, 5—6) կարևոր է համարել դնել նրանց վրա երկարության նշան. ինչպես՝ dīn, haṉ և կոչում է կիսաձայնավոր։ Սրանք պահվում են միայն բառավերջում, այն էլ միշտ ձայնավորից հետո։ Նույն երևույթը նկատել է Արիստալևրը աֆրիկյան աշխատան լեզվի մեջ m և n բաղաձայնների համար, դարձյալ բառավերջում, ձայնավորից հետո, միայն մի քանի բառի մեջ։ Հնդիանակը (էջ 4) դրում է կրկնակ բաղաձայնով, որ միևնույն է (demm, kǫmm, haṉṉ)։

Երկար բաղաձայններ ունի նաև լապպերենը. այսպես են b, d, g, որոնց տակին մի դիծ է քաշում ատամնաձևորդը (Wiklund, էջ 6)։

Ձայնավորները բաղաձայններից ավելի ընդունակ են երկարացման. միջին արտասանությամբ մի նախադասության մեջ կարճ ձայնավորի տևողությունն է $6—12/_{100}$ վայրկյան, երկար ձայնավորինը՝ $12—30/_{100}$ վայրկյան։ Վատներ դեմանացին իր բարբառի վրա քննություն կատարելով, գտել է, որ երկար ձայնավորի տևողությունն է 0,3 վայրկյան, շատ երկարինը 0,6, կարճինը 0,2, շատ կարճինը 0,1 (Schuljnen, Einf., 198)։ Ուստ այդմ երկար ձայնավորները կարճերի համեմատությամբ 2 կամ 3 անգամ ավելի են տևում։

Ձայնավորների տևողությունը միայն իրենց բնույթից չէ։ Հաճախ տևողությունը առաջանում է ձայնավորի՝ 1. երանգից, 2.

կողքի ձայներից, 3. շեշտից, 4. ձայնախմբի երկարությունից և 5. ռիթմից։

1. Երանգը փոխում է հաճախ ձայնավորի տևողությունը. ընդհանրապես որքան փակ է ձայնավորը, այնքան էլ կարճ է, և որքան բաց, այնքան էլ երկար. ալսպես i և u ամենակարճ են, e և o միջակ, a ամենից երկարն է. բոլոր ալամ հին հունարենում կարճ ε և ο փակ էին, երկար η և ω բաց էին. ֆրանսերենում միջակ բացությամբ ձայնավորները կարճ են, բաց և փակ (sic!) ձայնավորները, ինչպես և ռնգալիննները, երկար են. գերմաներենում փակ ձայնավորները երկար են, միջակներն ու բացերը՝ կարճ. համմա. biete (փակ i) և bitte (բաց i), Sohne և sonne և այլն։ Անգլերենում որքան ավելի փակ է ձայնավորը, տևողությունն էլ այնքան ավելի կարճ է։

Կարող է մի լեզվի մի բարբառը չունենալ ձայնավորների կարճ ու երկար ձևերը, իսկ մի ուրիշ բարբառը ունենալ. օրինակ, աատճկերենը և արևելյան թուրքերենը չունեն կարճ ու երկար ձայնավորներ, իսկ թուրքմեներենը ունի և նրա միջոցով պահպանում է մի խումբ համանուն բառեր. օրինակ՝ āt «անուն», at «ձի». ōt «կրակ», ot «խոտ». tūt «թմբլ», tut «բռնիր». yāz «գարուն», yaz «գրիր». vār «կա», var «գնա»։ Այս կանոնը տարել է նաև հունգարիան վրա և a վերջացող բառերը արականում ձայնավորներն են միայն երկարում. ինչպես՝ čaɣa «հրեխա», čaɣā «հրեխային» (чайлиев, 5, 18)։

2. Ձայնավորի կողքին գտնված բաղաձայնները ազդում են նրա տևողության վրա. հին քերականները ասում էին, որ բնաւպես կարճ ձայնավորը (voyelle courte par nature) գտնվելով երկու բաղաձայնի մոտ, դառնում է դիրքով երկար (voyelle longue par position). ինչպես՝ լատիներեն cāpio, բայց cāptus, կամ rēgere բայց rēxi. սակայն այստեղ ավելի վանկն էր երկարում, քան թե ձայնավորը։ Ֆրանսերենում թրթռուն շփական բաղաձայնները ինչպես են r բաղաձայնը, երկարում են նախորդ ձայնավորի տևողությունը. օրինակ՝ rose, gueuse, vive, louve և այլն։ Գերմաներենում ձայնավորը կարճ է, եթե նրան հաջորդում է բաղաձայնների մի խումբ. անգլերենում ձայնավորը երկար է թրթռուն բաղաձայնից առաջ, բայց ավելի կարճ է խուլ բաղաձայնից առաջ։ Սեմական լեզուների մեջ երբ վանկը փակ է, ձայնավորը չի կարող երկար լինել. այս պնպքում մինչև իսկ երկբարբառները վերածվում են պարզ ձայնավորի. օրինակ՝ *qaɣamtā > *qāmtā > եբրայերեն

գաուդա «կանգնեցիր», արտերևին *haifta >*haiʃta>hiʃta «վախ-ցաս» (Brockelm. Precis. 63)։ Բաղաձայնների այս տպկցամէջյան նախորդ ձայնավորի վրա՝ բացատրվում է ասկսն նրանով, որ բաղաձայնը փոխում է նախ ձայնավորի երանգը, որից էլ առաջանում է ձայնավորի տեղափոխման մեջ միջնորդ։ Այսպես՝ ֆրանսերենում բրիտան շփականները նախորդ ձայնավորը դարձնում են փակ, և արդիական ֆրանսերենում փակ ձայնավորը երկար է, սակայն ավանդ էլ երկարում է։ Այսպիսով բաղաձայնափոխների տպկցամէջյան ձայնավորի վրա բացատրվում է երանգով և 1. և 2. պայմաններով միասին։

3. Ձայնավորից հետո երբ հաջորդում է մի քրիշ ձայնավոր, առաջինը կարճանում է. օրինակ՝ լատիներեն docēre «առաջնորդել», docĕo «առաջնորդում եմ», իսկ երկար ձայնավորը վերջնաձայն բաղաձայնից առաջ կարճանում է. ինչպես՝ լատիներեն legām, legāt, միայն s-ից առաջ լինում է երկար. ինչպես՝ legās։

4. Շեշտը կամ ուժգնաթյունը առանձին նշանակելու անի ձայնավորի տեղափոխման համար. ֆրանսերենում սովոր շեշտալ վանկ ավելի երկար է. je traite, nous traitons ձևերից առաջինի մեջ ai մեկ և կես անգամ ավելի երկար է քան երկրորդի մեջ։ Երբ արտասանենք un homme grand, a երկար է և o կարճ. իսկ երբ արտասանենք un grand homme, ընդհակառակը o երկար է և a կարճ, որովհետև շեշտը տեղափոխված է։ Օսերենի մեջ a, o, e շեշտի տակ լինում են երկար ā, ō, ē, իսկ առանց շեշտի կարճ են (Miller, Die Spr. d'Oss., 12)։

Շվեդացի Իոգենսենն պիտանականը կատարել է հետևյալ փորձը. ֆոնոգրաֆի պլանի վրա արձանագրել է sŏrragis, ăttigas և նման բառեր, որոնց մեջ շեշտը գտնվում է առաջին վանկի վրա և որ ունեն Շ-ական բաղաձայն։ Այժմ շատ սալով պլանը հակառակ ուղղությամբ, լսում է sigărros, sagitta, շեշտը երկրորդ վանկի վրա։ Այնտեղ արձանագրել է ó simoló—simulŏ, որտեղ շեշտալ ձայնավորը երկար է և իրանից հետո մի բաղաձայն միայն ունի։ Այժմ շատ սալով պլանը հակառակ ուղղությամբ, լսում է ólumis—ŏlomis ŏ, առանց շեշտի տարբերության։ Սրանից հետևցնում է պիտանականը, որ շեշտ ու տեղափոխման միևնույն բանն է, և մի ձայնավոր սրբան երկար է, այնքան ավելի ուժեղ է թվում մեր ականջին։

Ուրիշ գիտնականներ էլ կրկնել են նման փորձեր իրենց լեզվի վրա, բայց նրա արդյունքը չեն հաստատում։

5. Ձայնահմբի երկարաձգումը ազդում է նաև նախնի վանկերի տևողաձգման վրա. որքան երկար է արտասանելի հնչյունը, այնքան էլ կարճ է վանկը։ Գրևգուարը փորձեր կատարելով արձանագրող մեքենայի վրա, գտել է, որ, օրինակ, pa վանկը փոխում է իր տևողաձգումը զանազան երկարաձգմամբ ձայնահմբերի մեջ, հետևյալ ձևով.

pâte	բառի մեջ	pa 27/100 վայրկյան.
pâté		20/100 »
pâtisserie		14/100 »
pâtisserie St.—Germain		12/100 վայրկյան։

6. Ռիթմն էլ է ազդում ձայնավորների երկարաձգման վրա։ Փորձը ցույց է տալիս, որ նախադասաձգման մեջ չի կարելի արտասանել միմյանց հաջիկ իրար նման վանկեր՝ բոլորովին նույն տևողաձգմամբ. ռիթմի օրենքը պահանջում է փոփոխակի արտասանել նրանք երկար ու կարճ։ Այս օրենքների մասին մենք կլսնենք հաջորդ գլխում։

Ահա այն պայմանները, որոնք ազդում են ձայնավորների տևողաձգման վրա։ Այդ պայմանները հաճախ խաչաձևում են իրար և յուրաքանչյուր լեզվի մեջ առաջ են բերում զանազան արդյունքներ։

Վանկի տևողաձգումը բնականաբար գումարն է նրա բաղադրիչ բոլոր ձայների տևողաձգումների։ Ըստ այմ, օրինակ, բն = բ + ն, բնր = բ + ն + ր, բնրդ = բ + ն + ր + դ, բնրդք = բ + ն + ր + դ + ք, յուրաքանչյուրը իր նախորդից մի քան երկար է։ Միջակ խոսակցության մեջ վանկի տևողաձգումը երկարում է $^{15}/_{100}$ վայրկյանից մինչև $^{50}/_{100}$ վայրկյան. որոշ վանկեր կարող են մինչև 1 վայրկյանի հասնել։

Ինչպես տոնը և շեշտը, նույնպես և տևողաձգումը կարող է ենթարկվել փոփոխաձգման, լեզվի ապագա պարզացման ընթացքում։ Տևողաձգման փոփոխաձգումը բնականաբար մի կողմ միայն կարող է ունենալ, այն է՝ ավելի երկարել կամ ավելի կարճանալ։ Այսպիսի օրինակներ շատ կան լեզուների պատմաձգման մեջ։ Սրա պատճառներն են շեշտը, երանգը, մոտակա ձայների ազդեցաձգումը, ինչպես նաև ձայնավորի կամ մոտակա ձայների ապագաձգում կրած փոփոխաձգումները։ Օրինակ. երբ մի երկբարբառ վերածվում է ձայնավորի, այդ ձայնավորը լինում է երկար. ինչպես՝ ai > è, au > o և այլն։ Երբ երկու ձայնավոր միանալով կազմում են մի ձայնավոր, այդ ձայնավորը երկար է. ինչպես լատիներեն audĭī—

mus > audmus. *սանսկրիտ* na asti > nasti «չէ», *նշանակում, երբ ձայնավորին հաջորդող բաղաձայնների խմբից մեկը ընկնում է, ձայնավորը երկարում է, ինչպես՝ լատիներեն* eqvōns > eqvos, domĭnŏd > domino, *հնգեվրոպական նախալեզվում՝* nizdos > *սանսկրիտ* nīḍás, *լատիներեն* nidus «բույն», *հունարեն* νίσσομαι > «նստում եմ» νίομαι.

Այսպիսի երկարումը կոչվում է փոխհատուցական երկարացում (allongement compensatoire, Ersatzdehnung).

Համաչափնում կա ձայնավորների տևողության համաչափությունը. երբ մի բան պարտադրում է միայն մի տևական ձայնավորներ. դրանք բոլորը կա՛մ կարճ են լինում և կա՛մ երկար. օրինակ՝ hānā, roro, rungu, kudu, nīti, dēnē *(բոլորը երկար), բայց* čačah, sućun, wuruk *(բոլորը կարճ)* (Bohatta, Prak. grämm. Jav. Spr., 20).

Համեմատելով վերոհիշյալ տեղեկությունները վանկերի տևողության մասին, կտեսնենք, որ վանկը ունի դիմադրության երկու տևական՝ կարճ ու երկար.

Կարճ է կոչվում այն վանկը, որի ձայնավորը (կամ իրը այն ձայնորդը) կարճ է, ուրանց հաջորդական բաղաձայնի և կամ միայն մի բաղաձայնով. այսպես՝ սանսկրիտ i—más «գնում ենք», pr—thús «լայն» *բառերի վանկերը կարճ են* (th — բ մի բաղաձայն է).

Երկար է կոչվում այն վանկը, որ 1. կազմված է երկար ձայնավորով, երկար ձայնորդով և կամ երկբարբառով, որ միշտ համարվում է երկար. այսպես սանսկրիտ bhrātā, *հունարեն* φρᾱτήρ, *հին իսլանդերեն* bræðir «եղբայր» *բառերի առաջին վանկը երկար է, որովհետև ā ձայնավորը երկար է. նույնպես սանսկրիտ* vēda, *հունարեն* ϝοῖδα, *լատիներեն* vāe, heī, *գոթերեն* wait «գիտեմ» *բառերի առաջին վանկը երկար է, որովհետև կազմված է երկբարբառով.*

Եթե երկբարբառը կազմված է երկար ձայնավորով, բնականաբար երկբարբառի տևողությունը կավելանա. այսպես, եթե ձայնավորի տևողությունը դնենք մի չափ. երկար ձայնավորը կամ կարճ երկբարբառը կլինի երկու չափ, իսկ երկար երկբարբառը կլինի երեք չափ.

2. Երբ ձայնավորին կամ ձայնորդին հաջորդող բաղաձայնների թիվը մեկից ավելի է, վանկը համարվում է երկար, նույնիսկ եթե ձայնավորը կարճ լինի. այսպես՝ սանսկրիտ saptá = *հունարեն*

ἑπτά = լատիներեն septem «յոթը», սանսկրիտ pitré «հոր» = հունարեն πατρων «հայրերի» բառերի առաջին վանկը։

Այս բոլոր պարագաների մեջ էլ ձայնավորից առաջ գրված բաղաձայնը՝ մի հատ լինի թե մեկից ավելի, գոյությունն ունենա կամ ոչ, բնավ նշանակությունն չունի վանկի տեսողության տեսակետից։ Օրինակ, հունարեն ἔῳῦ, νέφος և στρέφω բառերի մեջ ε հավասարապես կարճ է, թեև նրանից առաջ դրված բաղաձայնները թվով տարբեր են։

Հայերենի մեջ ձայնի տեսողության վերաբերմամբ ոչ մի աշխատանք կամ չափում չէ կատարված (համմ. Աբեղյան, Տաղաչափություն, 37—39)։ Արդի հայերենում ձայնավորների կամ վանկերի տեսողության մեջ մենք առանձին զանազանություն, ինչպես դերմաներենի կամ նույնիսկ ֆրանսերենի մեջ, չենք տեսնում։ Համաձայն վերոհիշյալ ձայնաբանական ընդհանուր օրենքների, կարելի է ընդունել, որ 1. հայերենի մեջ էլ շեշտված վանկը մի քիչ ավելի երկար է, քան անշեշտը, 2. վանկի ընդհանուր տեսողությունը կախված է կազմիչ հնչյունների քանակից, հետևաբար ա ավելի կարճ է, քան ամ, ամ ավելի կարճ է, քան ամն և ամպ ավելի կարճ է, քան ամպք, 3. որքան երկար է բառը, այնքան որքան հեռու է ձայնավորը շեշտից, այնքան էլ ավելի կարճ է. այսպես հայերեն փառք բառից կազմված սեռական փառքի, և փառաւոր, փառաւորել, փառաւորութիւն բառերի մեջ վանկերի արագությունը հետզհետե փոխված և ա ձայնավորը հետզհետե ավելի կարճ է (Աբեղյան, Տաղաչափություն, 110—111)։

Մեզ համար ամենից ավելի զգալի է զգայական շեշտը, որի համար էլ ունենք հատկապես երկար (¯) նշանը։ Այս նշանը գրվում է մի բառի մի վանկի վրա, բայց սովորաբար զգայական արտասանության ժամանակ նախադասության կամ առհասարակ գրվածքի բոլոր վանկերն էլ ստանում են երկար շեշտ։ Օրինակ՝ Ա՞նցա՞ն գնացի՞ն երկա՞ր երկա՞ր տարիներ և այլն և այլն, ուր ոչ միայն շեշտված վանկերը երկար են (շատ երկար), այլև անշեշտ վանկերը։

Ձայնի տեսողության մասին այս դիտողությունները վերաբերում են իհարկե արդի հայերենին. բայց հին հայերենն էլ սրանից տարբերություն չպետք է ունենար։

ԳԼՈՒԽ ԺԵ

ՌԻԹՄ ԵՎ ԴԱԴԱՐ

Երբ տարբեր երևույթներ հաջորդում են իրար կանոնավոր կերպով և նրանցից յուրաքանչյուրը մեկը կրկնվում է միշտ որոշ ժամանակից հետո, կոչվում է ռիթմ (ռիթմն արքեպիսկոպոս Դուրյանը թարգմանել էր կշռույթ)։

Ռիթմը ուրիմն դանադան երևույթների պարբերական հաջորդությունն է։

Ռիթմի օրենքը տիրում է բոլոր կենդանի էակների վրա. կյանքի գործառնությունները, ինչպես սրտի բախումները, շնչառության շարժումները և այլն ռիթմական են։ Նույնիսկ կամավոր շարժումները, որ կատարում է մարդը, նմին կրկնվում են իրար հետևից, վերածվում են ռիթմի։ Սրա ամենահասարակ օրինակը մարդու քալվածքն է և կամ ընդհանրապես բոլոր կենդանիների շարժումները։ Նրանից, որ նոր է ոտք ելնում, դեռ չունի ռիթմ, բայց հետզհետե վարժվելով՝ վերածվում է ռիթմի, այսինքն այդ շարժումները կատարում է մկանային միևնույն ճիգով, միևնույն տևողությամբ և միևնույն ժամանակամիջոցներով։

Ալսպիսի ռիթմը կոչվում է միօրինակ ռիթմ (rythme uniforme) և բոլոր տեսակի ռիթմերի մեջ ամենապարզն է։ Ժամացույցի թիքթաքը կանոնավոր ռիթմ է։

Ռիթմը կոչվում է բարդ (rythme complexe), երբ տարբեր տեսակի շարժումներ վճռվում են նույն պարբերականությամբ։ Օրինակ, երբ սալի վրա իջնցնելով իրար ետևից կռանի կանոնավոր հարվածներ, բայց այնպես, որ մի ուժեղ հարվածին հաջորդի

միշտ մի ուկար հարված, կամ մի ուկար հարվածին հաջորդի միշտ մի ուժեղ հարված, ռիթմը կլինի բարդ։ Այսպես, ուժեղ հարվածը զանակելով 2, իսկ ուկար հարվածը 1 թվանշանով, կունենանք հետևյալ պատկերը.

2—1/2—1/2—1/2—1/2—1... կամ

1—2/1—2/1—2/1—2/1—2...

Բայց կարելի է նաև կազմել ուրիշ պարբերականությամբ ռիթմեր, ինչպես.

2—1—1/2—1—1/2—1—1/2—1—1...

1—1—2/1—1—2/1—1—2/1—1—2...

2—1—1—2/2—1—1—2/2—1—1—2... և այլն։

Վերի օրինակների մեջ հարվածները հաջորդում են իրար շարունակ, բայց կարելի է նաև տալ տեսակ-տեսակ դադարներ, միևնույն պարբերականությամբ, հետևյալ ձևով.

21 21 21 21 21...

12 12 12 12 12...

211 211 211 211...

112 112 112 112...

և այսպես բազմապիսի ու բազմատեսակ ձևերով։

Այս բոլորը կոչվում է բարդ ռիթմ։

Վերոհիշյալ օրինակներում կռանդի հարվածների ռիթմը հարվածող դարբնի համար շարժիչ (moteur) է և զգայական (sensitif), որովհետև իր մկաններն են գործում այդտեղ և իր ականջն է լսում միանգամայն. իսկ մի մարդու համար, որ լսում է այդ հարվածները, ռիթմը միայն լսողական (auditif) է։ Բայց թե՛ դարբնի և թե լսողի համար ռիթմը առարկայական (objectif) է, որովհետև երևույթների իրական տարբերությանն վրա է հիմնված։

Փորձը ցույց է տալիս, որ եթե մեկը լսի կարճատև միջոցներով միօրինակ մի ռիթմ, շուտով իր երևակայությանն մեջ այդ միօրինակ ռիթմը կվերածի բարդ ռիթմի։ Այսպես, եթե լսենք մի մետրոնոմի (métronome) հարվածները, որ բախում է մի վայրկյանում 4 հարված, կանոնավոր կերպով և հավասար ուժգնությամբ, շուտով մենք կկարծենք լսել 2 կամ 3 հարվածների խմբակցություններ, որոնցից մեկը իբր թե ավելի ուժեղ է. այսպես՝

21 21 21... կամ

12 12 12... կամ

211 211 211... կամ

112 112 112... և այլն։

Այս պարապալին ռիթմը, որ չի համապատասխանում երեւույթների իրական վիճակին, կոչվում է ենթայայական (subjectif)

Ռիթմը կարող է լինել նաև գիտակից (conscient) *կամ* անգիտակից (inconscient)։ *Երբ նույն դարերինը իր հարյուրծնների մեկը ուժեղ խփի, մյուսը թույլ խփի իր ցանկության համաձայն, ռիթմը կլինի գիտակից. իսկ երբ նա հարյուրծնները խփի միօրինակ ռիթմով, իսկ մենք շարունակ լսելով այն՝ վերածենք մեր երեւակայության մեջ բարդ ռիթմի, պա կլինի անգիտակից։*

Ռիթմի այս բոլոր առանձնայրը, որ նկարագրեցինք, դտնվում են նաև մարդկային լեզվի մեջ։ Երբ մեր լսողությունը խաղում է մեզ ձայների առաջության և ուժդնության մեջ, պա ենթայայական *ռիթմի արտյունքն է։ Բայց ավելի կարեւոր է* առարկայական անգիտակից *ռիթմը, որի արտյունքներն են՝*

1. Կրկնական բառեր, հատկապես *բնաձայն բառեր, մանկական բառեր, ժողովրդական բառեր. ինչպես՝* ֆշֆշալ, խշխշալ, րոռոալ, գլգլալ *կամ* շրախկ-շրուխկ, թիք-թաք, չաք-չուք, պաո-պաո, չաչալ, տատիս, տիտիկ, պապա, մամա...

Այս բոլորի մեջ, ինչպես տեսնում ենք, միեւնույն ձայները կրկնվում են.—միեւնույն բաղաձայնի ռիթմական կրկնությունը կոչվում է բաղաձայնով հանգիտություն (allitération). *ալապես, օրինակ, հալթևն* սուն ու տեղ, ցիրուցան, շենք-շնորհք, ծափ-ծիծաղ, ձյուն-ձմեռ, թև-թիկունք։ *Միեւնույն ձայնավորի ռիթմական կրկնությունը կոչվում է* ձայնավորով հանգիտություն (assonance), *ինչպես.* լուր ու մուր, լուռ ու մունջ, լուս ու մութ, ծեծ ու փետ, առ ու փախ. *իսկ ձայնավորների ու բաղաձայնների միահաղույն ռիթմական կրկնությունը չունի առանձին անուն. ինչպես՝* կոշտ ու կոպիտ, կուշտ ու կուռ, խաղր-խայտառակ, քար ու քացախ *և այլն։*

2. Շեշտի տեղափոխություն, *ռիթմական համաչափությամբ։ Ալապիսի ռիթմ գործածում ենք մեր խոսակցության մեջ, երբ մեր խոսակիցը մեր մի քանի անդամ արած հայտարարության ուշադրությունն դարձրած չի լինում, և մենք ստիպված ենք լինում՝ մի վերջին անգամ նույնը կրկնելու կատական կերպով. օրինակ՝*

ե՞ս /ընա՛ց/ ոչ մ՚ի /գումա՛ր/ պարտք չե՛մ /և՛/ ոչ մ՚ի \ գումա՛ր /առլու՛/ չե՛մ։

Այս նախադասության մեջ կազմված են երկու վանկից բաղ-

կացած և նման շհշտադրությամբ ռիթմեր, իսկ միավանկները երկար են արտասանվում, իրր հասնելու համար միավանկ խմբերին։ Մինչդեռ նույն հատվածը, եթե խոսեինք սովորական ձևով, պիտի լիներ՝

Ես նրան ո՛չ մի գումար պարտք չե՛մ /և ո՛չ մի գումար տալու չե՛մ.

Դիտակից ռիթմը *գործածվում է բանաստեղծական գրվածքների, հատկապես տաղաչափության մեջ։ Այս դեպքում ռիթմը կոչվում է չափ* (mètre), *որ ռիթմի մասնավոր մի պարադեն է* (Meillet)։ *Զանազան ազգերի բանավոր գրականությունից սկսած մինչև գրավոր դրականության ամենաբարձր տեսակը, կան բազմաթիվ տաղաչափական սիստեմներ։ Հին հույների և վեդայական հնդիկների տաղաչափությունը հիմնված էր երկար ու կարճ վանկերի հաջորդականության վրա, որին հետևցին հետո նաև լատինները. անգլիական, գերմանական և ռուսական տաղաչափությունը հիմնված է շեշտոյալ և անշեշտ վանկերի հաջորդականության վրա. ֆրանսիական կամ արդի հայկական տաղաչափությունը*[1] *հիմնված է վանկերի թվի համաչափության և շեշտի վրա. բացի սրանից պահանջվում է տաղաչափության մեջ նույն հանգերի կրկնությունը տողից տող կամ այլ ձևով։ Կան նաև ուրիշ զանազան տեսակի չափեր։ Բայց այս բոլորի մեջ մի բան կա ընդհանուր, այն է, դիտակից ռիթմեր (դիտավորյալ և կանոնավոր կրկնությունը այս կամ այն պայմանի՝ վանկի բարձրության, ուժգնության, տևողության, կամ ձայների երանգի ու հնչման)։*

Դադար *ասելով հասկանում ենք այն կարճատև ընդհատումը (կամ հանգիստը), որ պնում է մարդ իր խոսակցության մեջ, անմիջապես հետո շարունակելու համար այն։*

Դադարը կատարվում է երեք պատճառով.

1. Բնախոսական պատճառ. —*Քանի որ խոսակցությունը վարելու համար պետք ունենք ներշնչելու հարկավոր քանակությամբ օդ, ուստի հաճախ պարտավոր ենք ընդհատել մեր խոսքը, ներ-շնչմամբ հավաքելու համար օդի պաշարը, որ նորից խոսակցության միջոցին կամաց-կամաց դուրս ենք տալիս՝ մինչև սպառումը, և այսպես շարունակաբար։ Լռության միջոցին մարդ մի րոպեին կատարում է 16—24 շնչառություն. համաձայն տարիքի և բնավորության։ Չափահաս մարդու շնչառության միջին թիվն է*

[1] *Տաղաչափության ամենից նոր և մանրամասն աշխատությունն է Մ. Աբեղյան. Տաղաչափություն, Երևան, 1933։*

16, որ առկան խոսակցության մեջ մի քիչ ավելի տրտնջալով՝ պառնում է մի բռնում 17—19։ Ըստ այսմ շնչառական շրջանի տևողությունը խոսակցության մեջ միջին հաշվով լինում է $3^1/_2$ վայրկյան, առած ամեն մի $3^1/_2$ վայրկյանին պատրվ անհրաժեշտ է։ Լռության միջոցին մի շնչառության տևում է $1^1/_2$ վայրկյան, իսկ խոսելու միջոցին ավելի արագ, մոտ 1 վայրկյան։

2. Հոգեբանական պատճառ.—Ամեն մի խոսող, նախքան իր խոսելը, պետք ունի մտածելու և ալնտրելու, լսողությունը նախապատրաստելու արտաբերելիքը հետ, պետք ունի որոշ մտավոր գործողության՝ կապելու համար նախկին մտքերը հաջորդին և այլն շարունակ։ Այդ խարհողության համար հարկավոր է որոշ ժամանակ, այն է պատրվ։ Այդ խարհողության համար պահանջված ժամանակը անշուշտ կախված է նախ՝ մտրդյ և երկրորդ՝ նյութից։ Նրա մտրդին, որոնք մտածում են շատ արագ, կան էլ, որ մտածում են շատ դանդաղ։ Սկզբից պատրաստված մի նյութ պետք չունի երկար մտածողության կամ դադարի. հանպատրաստից արտաբերված մի ճաո ընդհակառակը։ Նմանապես ծանր փիլիսոփայական մի նյութ պահանջում է շատ ավելի երկար մտածողություն և դադարներ, քան հասարակ խոսակցությունը։ Վերնյա փիլիսոփան, կատարելով այս մտքին պատշաճ քննություններ, գրում է, որ ամենաարագ մի դադարների դադարության միջին տևողությունը $^{85}/_{100}$ վայրկյան է, որով ամենաարագ դեպքերում մի դուլգ դադարության տևողությունը կլինի 1,7 վայրկյան։ Բայց հաճախ մարդ այդ մտածողության գործողությունը կատարում է հենց խոսակցելու միջոցին և ավելի հաճախ շնչառության միջոցին, որով և մտածողության պահանջած դադարը ավելի է վոքրանում։

3. Տրամաբանական պատճառ.—Ինչպես խոսողը պետք ունի որոշ ժամանակի՝ ամփոփելու համար իր մտքերը, նմանապես լսողը պետք ունի ժամանակի՝ ըմբռնելու և դասավորելու համար խոսողի մտքերը։ Խոսողը կարող է դեռ չխոսած մտածել, իսկ լսողը չունի այդ հարմարությունը և պետք է միշտ սպասի խոսող անձի հայտնած մտքերի վերջավորության, որպեսզի կատարի իր մտավոր գործողությունը։ Խոսողը գիտակցելով ունկնդրի այս վիճակը, բնականաբար ստիպված է, նրան բավարարելու համար, տալ որոշ դադար և հաճախ սպասել, որ ունկնդիրը կատարի այդ գործողությունը։ Սրա համար է, որ խոսողը հաճախ տալիս է «լսնայես չէ՞», «հասկանու՞մ ևրթ և այլ՝ ավելորդ հարցեր։ Այս

ըմբռնողութեան գործողութիւնը, սակայն, որքան որ կարևոր է ունկնդրի համար, կարելի է անտես առնվել խոսողի կողմից, մանավանդ բոլորովին հասարակ խոսակցութեան միջոցին և փոխանցվել նուրնիակ խոսողի չնչաւոական դադարին։

4. Քերականական պատճառ.— Ամեն մի նախադասութիւն իր վերջավորութեան ժամանակ մի դադար ունի։ Նմանապես միևնույն նախադասութեան մեջ իրար հետ անձուկ կերպով կապված մի քանի բառ միասին կազմում են մի խմբակ, որ բաժանվում է մյուսներից մի ուժեղ շեշտով և մի փոքր դադարով, առանց որի մտքերը կարող են խանգարվել և իմաստի շփոթութիւն առաջացնել։ Առակի կարդ անցած հանրածանոթ երկդիմի նախադասութիւններ են հետևյալները.

Կախել. պետք չէ՛ ներել։

Մարդ եղիր ճորդ պես. հշ մի՛ լինիր.

կամ՝

Կախել պետք չէ՛. ներել։

Մարդ եղիր. ճորդ պես հշ մի՛ լինիր։

Ահա մի ավելի երկար պարբերութիւն, ուր հարակից բառերի խմբակները բաժանված են իրարից գծիկներով.

Ինչ մ'անգին / կը տեսնե՛ս, // որ անագին ապառա՛ժ մը / երկնից դէ՛մ կը ցցուի // ու կարծես շա՛ղթը կ'արձամարձի։ // Իր լռութ՛ան կողերուն / վայրի՛ կաճաչին վրայե՛ն // կաթի՛լ կաթիլ / ջու՛ր մը կը մզի վճիտ, // փայլփլու՛ն, // զովագի՛ն // և այն կաթիլը ճեղե՛ղ կ'ելլայ // որ զմայրի՛ս կը խորտակե // ու անունս ճովի՛տ մը կը փորե / իր ճամրու՛ն վրայ։ //

Այս հատվածի մեջ նախ դանում ենք հարակից բառերի խմբակներ, որոնք իրարից անբաժան են և ունեն մի շեշտ. սրանք բաժանված են իրարից մի կամ երկու ուղղահայաց գծիկով։ Սրանք պահանջում են նաև մի-մի դադար։ Սակայն ավելի արագ ընթերցանութեան (կամ խոսակցութեան) մեջ, կարելի է ավելի կրճատել դադարները. այս դեպքում կվերանան մի ուղղահայաց գծիկով նշանակվածները, բայց կմնան շեշտերն ու երկգիծ դադարները։

Ահա այն 4 գլխավոր պատճառները, որոնցով առաջանում է դադարը մեր խոսակցութեան մեջ։ Այս պատճառներից ոմանք հեշտութեամբ կարող են չեզոքանալ, փոխանցվելով մի ուրիշին. այսպես տրամաբանական պատճառը կարելի է անտես առնել, ինչպես ասացինք. քերականական դադարներից ոմանք կարող են նույնպես կրճատվել. հոգեբանական դադարները կարելի է կատարել

խառակցությունը կամ շնչառությունը միջոցին, և վերչ ի վերջս իրր անհրաժեշտ մնում են շնչառությունը և բերականական մեծ պատրաստությունը։ Շնչառությունը անշուշտ պատրաստ է, բայց պատրաստ անշուշտ շնչառությունը չէ։ Ինտելեկտուալ աշխատությունը պահանջում է ուրիշ հանգամանքներ։ Մեր ուսումնական հաստատությունները կամ բերականական հաստատությունները պահանջում են $3^1/_2$ վայրկյանից պակաս տևողություն, նրա պատրաստ հետևանքով շնչառությունը պատրաստին, որ տևողությունը $3^1/_2$ վայրկյաններ մեկ տևողի պետք անհնարին։ Նա ընթերցողը կարող են լինել մի քանի շատ կարճ տևողություններ, 1 կամ 2 վայրկյան տևողությունով, որոնք պատրաստ անհնարին են, բայց այդ միջոցին շնչառությունը տևողի չի անհնարին։ Եթե տևողությունները շատ երկար է, ապա որ $3^1/_2$ վայրկյանից էլ տևողի պետք տևի, մենք վերադառնում ենք այն բերականական մասերին, որոնցից մի քանիսը միանգամայն լինում են շնչառական։ Այսպիսով, բերականական և շնչառական պատրաստությունները միանում են։ Չի կարող պատահել բան, որ շնչառական պատրաստությունը տևողի անհնարին բան երկարի կամ նույնիսկ բերականական միջոցները կամ բանիների մեջտեղում։ Ուսումնարանների մեջ ընդհանրապես չի պահպանվում այդ, քանի հմուտ ընթերցողությունների մեջ մեկը պետք պիտի ու այդպիսի բան, հետամտելի վատ ընթերցող

ԳԼՈՒԽ ԺԶ

ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Խոսքի մեջ գտնված դադարները, ինչպես նաև տոնն ու շեշտը գրավոր ձևով նշանակելու արվեստը կոչվում է կետադրություն։

Հին լեզուները չեն ունեցել կետադրություն, կամ եթե ունեցել են, եղել է շատ թերի։ Այսպես, հին հունարենը, լատիներենը, նոր հունարենը և սանսկրիտը, հայերենը, արաբերենը (և սրա հետևողությամբ պարսկերենը և թուրքերենը մինչև վերջերս) չունեն կետադրություն։ Արաբերենի համար իբրև կետադրության նշան է ծառայում ف fa «և» շաղկապը, որով սկսվում է ամեն նոր նախադասություն և որ տարբեր է و va «և» շաղկապից, որ միացնում է երկու բառ[1]։ Կետադրության հնարումը վերագրում են Արիստոփան Բյուզանդացուն (մեր թվարկության առաջ բ դար), բայց ընդհանուր գործածություն չի ունեցել. կետադրությունն իր զարգացումը պարտական է նոր եվրոպական լեզուներին, որոնցից անցել է նաև մեզ։

Դադարի նշանները չորս են. բութ (՝), ստորակետ (,), միջակետ (.) և վերջակետ (։)։—Միջակետը երբեմն կոչվում է նաև պարզապես կետ, իսկ ստորակետը՝ ստոր։

Քերականությունները տալիս են նրանց գործածության համար այլևայլ կանոններ. հաճախ սակայն այս նշանների գործածությունը ստորնդվում է հեղինակից հեղինակ և արևմտյան գրա-

[1] Սեմական լեզուների այս հատկությունն է, որ թարգմանաբար անցնելով հունարենի և հայերենի, ավել է ս. Գրքի մեջ անհուն անհամաչ և։

կանոյց սրանցից պրակտիկ Բլիստավոր տարրերակվելուն կապված է լսելի և տարակուսի դարձածակվելուն միջ, որոնք հանգամ իրար անց են գրվում: Ավելի ստույգ կարող է պատահել տարակուսի շփոթմանվելուն միջակության հետ և միջակության շփոթմանվելուն վերջակության հետ:

Այս նշաններդ արտաքին լսողության և ամենահնչյուն միջոցն է հետևել ձայնի հնչյունն: Ստույգ անձը երբեք տեսել չի անհամ ստորակետվելուն միջ. վատ բնավերպան է միայն, որ չկարողանալով մանել խոսքի դերի միջ, անհամ է ապրելու տեսնելու:

Բայց պրակտիկ է ասենակ, որ ձայնը վեր է բարձրանում և հանկարծ պտույտ անհամ: Այս երևույթը պատահում է հետևյալ դեպքերում:

1. Երբ մի բառ կամ մի կարճ բառախումբ որ հարաբերականով բաժանված է պլիտավոր նախադասվելուից. ինչպես՝ Գալը՝ որ անարգելին, ևա՛ եկավ պրոֆ անկյան: Դու՝ որ միևչև երկինք ելիր բարձրանում, միևչև գետին պիտի իջնաբնվես: Եղբորդ որդիդը՝ որոնց հետ ևոր ծանոթացա, ևիճ մոտ էին:

2. Երբ մի բառ չի պատկանում հաջորդին, այլ մի տրիշ բառի, որ ավելի հետս պիտի հիշվի. ինչպես. Դու՝ իշխամյացդ ձեռքին կրած վշտերդ: Հայերի՝ շրջակա ազգերից վոխ առած բառերը անցնում են հազարից: (Այս օրինակների մեջ պետք է հասկանալ դու վշտերդ, հայերի բառերը. առանց լսելի նշանով բաժանելու, պիտի հասկանայինք դու իշխամյացդ, հայերի շրջակա ազգերից):

3. Երբ մի բառ դեղչված է և դրսեվորվում պետք է կրկնել. ինչպես՝ Աֆրիկան շատ քիչ անգամ այուն է տեսնում, իսկ Եվրոպան՝ շատ հաճախ: Բանկերը դրամով լցուն էին, բաժակները՝ գինիով, սրահները՝ ցնծությամբ: (Առաջինի մեջ բառերը դրված է «է տեսնում», երկրորդի մեջ՝ «լցուն էին» բառերի փոխարեն):

4. Երբ մի պլիտավոր նախադասվելուից հետո պիտի սկսի մի կարճ թվում. ինչպես՝ Հայաստանի գլխավոր գետերը են՝ Կուր, Երասխ, Եփրատ, Տիգրիս և Ճորոխ: Այսուհետ բառերը «հետևյալները» իմաստն ունեն: Բայց երբ թվումը շատ է, դրվում է միջակետ:

5. Ինչպես—յոլ ձևից հետո, երբ հաջորդում է մի դիմավոր բայ. ինչպես՝ Այս բոլորը տեսնելով՝ ասաց: (Փոխելով դերբայի տեղը, կամ եթե պետք մեջտեղում մի այլ երկրորդական նախադասվելուն, բառերը վերածվում է ստորակետի. այսպես՝ Տեսնելով այս բոլորը, ասաց: Այս բոլորը տեսնելով, ևա բարձրացրեց իր ձեռքը և ասաց):

6. Երբ մի շատ կարճ դիտավոր նախադասութիւնից հետո ունենք որ կամ թե շաղկապով սկսվող մի այլ լրացուցիչ նախադասութիւն. ինչպես՝ Ասաց՝ թե կգա. Ուզում էի՝ որ դու էլ ներկա լինեիր:

7. Երբ մի բառ խառնվելով հաջորդ բառի հետ՝ կարող է շփոթութեան տեղիք տալ. ինչպես՝ Ոչ այլ ինչ եմ, եթե ոչ՝ մի խոսատվաճուրյուն —*առանց բութի պիտի դառս դար «Եթե ոչ մի...: Մուշկան՝ վաճառկի խորհրդով ամեն կողմ կասպատակե.— առանց բութի՝ Մուշկան վաճառկ մի մարդ կարող է հասկացվել, Թող ենթվի աշակերտական հպարտութեանս՝ մեջ բերել հետևյալ հատվածը. առանց բութի պիտի նշանակեր՝ հպարտութեանս մեջ՝ բերել:—Ու ճուճանեաց զանուն հորա՝ Մովսես՝ Գերմամ (ելից, Ր 22).—*Եթե բութը չլիներ, անունը պիտի հասկացվեր Մովսես—Գերսամ. մինչդեռ Մովսէս անվանողն է (հայրը, ենթական), իսկ Գերսամ՝ անվանածը, (հայցական, որդին):

Ահա մի քանի օրինակ, որոնց մեջ բութը մոռացվելով՝ իմաստի սխալ է առաջանում.

Սմբատ ունեցած է վաղամեռիկ որդի մը՝ Աշոտ երկաթ ճուճ իր կնոջմէն, որ կարուց Արաս թագաւորին աղջիկն էր *(Ե. Դուրեան, Ազգային պատմութիւն, 377):*—*Պետք է բութ դրվեր «անունն» բառի վրա, առանց որի Աշոտ Երկաթը դառնում է Սմբատաի կնոջ անունը: (Թող թե ավելորդ է այստեղ «իր կնոջմէն», որովհետև ամեն մարդ իր որդին իր կնոջից է ունենում):*

Եւ ինքն յառէ և յաւարէ պատերազմին՝ զմեծեաճն Բելայ և զայլն ամենայն առատութեամբ զարդարէր *(Եւսեբիոս, Քրոնիկոն, 67):* *Բութ չլինելու պատճառով չի հասկացվում, թե «ամենայն» պատկանում է «առատութեամբ» բառի՞ն (ամենայն առատութեամբ), թե՞ «զայլն» բառին (զայլն ամենայն):*

Սրանք ցույց են տալիս միայն՝ թե մարդկությունը ծագել է մի արմատից: *(Եթե բութը չդրվի, դարս կգա «միայն թե», որ բոլորովին այլ բան է նշանակում):*

Շատ բնորոշ է անցյալ դերբայի գործածութիւնը հաջորդ գոյականի հետ. այս պարագային եթե դրվի բութ, դերբայը կմնա դերբայ, իսկ եթե բութը վերացվի, կդառնա ածական. ինչպես.

Հաթերի զորությունից վախեցած՝ Ասորեստանը և Բաբելոնը դաշն կապեցին Եգիպտոսի հետ *(այստեղ վախեցած դերբայ է և նշանակում է վախենալով). իսկ երբ ասենք՝*

Հայերի վերաբերմունքը վախճյան Աստիճանը... — *պատճառ չունի ասելու ոճական է։*

Ոմանք գրելիս տան մը դրան գանգակը ծայնեց *(իմա՝ ննչեցուց)*. *(Հահճան, Բնության դիշերներ, Պոլիս, 1885, էջ 126)*. *բան չկրնալով կատարեմ ընդ, թե խոսքը Հովհան գիպելիին մասին է, գիպելիկ տան ածականն է։*

Մանր ոչ գիտակցած մարդ է, մանր գիտակցած անմանուրյուն *(Խեմիրճյան, Վարդանանք, Ա., 225)*. *անհրաժեշտ է ասուած գնել բան նշանը երիտ անցամ, մանաւանդ որ ածականը անաւարտ ձեւով գոլականիչ հետ գրվելով՝ հնչառեթյամբ կարելի է հարցուց բան ածականը հասկանալ։* — *պիտի՝ մանր ոչ գիտակցած՝ մարդ է, մանր գիտակցած՝ անմանուրյուն։* — *կամ՝ ոչ գիտակցած մանր՝ մարդ, գիտակցած մանր՝ անմանուրյուն։*

Եվրոպական լեզուները չունեն բան նշանը, ասած նրա գործածուրյան կամ դնում են առարկան և կամ ոչինչ. օրինակ (տե՛ս վերևում 3-րդ կետը) On a toujours raison; le destin, toujours tort. *Թվականների ժամանակ էլ (տե՛ս վերևում 4-րդ կետը) դնում են երկիցս (ւ), որ մեր մեջ այլ գործածուրյուն ունի (իբր վերջակետ)։ Եվրոպական լեզուներով անված հոլերն էլ հաճախ թերանում են բան-ի գործածուրյան մեջ։ Վերհիշյալ կանոններն ավելի պահպանվում են արևմտահայերի մեջ։ Արևելահայերը ավելի քիչ են գործածում բան նշանը։ Այսպես, վերևի № № 1, 3, 6 դեպքերում ամենք հազվադեպ են բան-ը. № 4 և № 5 դեպքերում գնում են առարկան. № 2 դեպքը հաճախ անուշադիր են թողնում։ Միանգամ ընդմիշտ պետք է նկատել, որ կետադրուրյունը մարդու առանձնահատկություններից մեծ չափով կախված է մարդկային բնավորուրյունից։ Այն մարդիկ, որ արագ առոգանուրյուն ունեն, բնականաբար մանր դադարների վրայով անցնում են և հետևաբար այդ դադարների պահանջած կետերը չեն նշանակում գրաբարյան մեջ. ընդհակառակը, նրանք, որ ունեն ծանր ու դանդաղ առոգանուրյուն, հաճախ ամեն մի երկրորդական բառի առաջ կանգ-նում են, հետևաբար և կետադրուրյան մեջ ավելացնում են առարկաների թիվը։ Օրինակ՝* Ես անշուշտ, երեկ, երեկոյան դեմ, քեզ պիտի կանչեի և, իհարկե, բարեկամաբար, պետք եղածը պիտի ասեի։ *Այս նախադասուրյան մեջ գործածված է առարկաներն էլ ավելորդ են արագ առոգանուրյուն ունեցող մարդկանց համար[1]։*

---

[1] *Այս կարդից նման ես, որ հիշյալ է կետերն էլ պիտի հազվվեի։*

Սատրակեանը *դրվում է, երբ ձայնը կամայ-կամայ բարձրանում է, բայց ոչ բառի չափ, և մի տեսակ քարշ է գալիս, երկարում: Այս երևոյթը պատահում է հեռախոսի դեպքերում.*

1. Ամեն տեսակի թվումների ժամանակ. այսպես, երբ իրար հետից հաջորդում են մի քանի ենթական, կամ մի քանի լրացուցիչ, կամ մի քանի վերադիր, կամ մի քանի մակրայ կամ նախադասութիւն, և կամ վերջապես մի քանի բայեր, որոնք մեկ ենթակայի են պատկանում. օրինակ՝ Ցորենը, գարին, հաճարը և վարսակը հացահատիկներ են: Տեսա Գրիգորին, Լեոնին, Մեսրոպին և Տիգրանին: Երվանդը քաջ, աշխատասեր, հուսադուն և առաքինի մի պատանի է: Գնացքը երեք ուղամ է գալիս. առավոտը, կեսօրին, երեկոյին: Նկա, տեսա, հաղթեցի: Որոնեցին իրերի տակը, վրան, մեջը, շուրջը:

Հները այս դեպքում դնում էին բառ. օրինակ, Մեհենդ, «Թուրս Լեոնիդ» (Տփղիս, 1881, էջ 96). Շրջագայեցաւ քայլ առ քայլ գրեթէ նշանելով մտքին մէջ ծառ՝ թուփ՝ ժայռ՝ բլուր՝ լեռ՝ բերդ՝ աւան՝ գիւղ և այերակ: ... Ամեն ազգ, ճայ՝ ասորի՝ յոյն՝ արաբ և թիւրքմեն իր շուրջը կը պաըսպիրկ:

Հորթ՝ ոչխար՝ այծ և ճաւ կը մորթուէին՝ կը խորուէին՝ կրակներու մուխը երկինք կը բարձրացար՝ գիւղայ կաթասներ կը պարպուէին՝ դուս դաս ճայ գիւղուորը բերդին գլխէն Կիլիկիոյ գաշաին ընդարձակութեան ճանգիսասես այսօր և վաղը տեր, կ'ուտեր՝ կը խմեր՝ կ'երգեր՝ կը զուարճանար: Անդ, էջ 107:

Բայց նուիրեակ Հ. Դուրյանի մոտ գտնում ենք նման օրինակներ. Կարգալով թռչուններու՝ եղեիկներու՝ ձպուռներու կամ գորտերու մասին պատմուածները *(Ուսումնասիրութիւնք, 497);*

Առնետ պատրաստ կուռաց մը կ'ընծայէ մեզ ժժգոյն՝ միօրինակ՝ գորաւոր այն մատենագրութիւնը *(Ուսումնասիրութիւնք, 546);*

Քար մը՝ արմատ մը՝ ամառ մը՝ փետուր մը՝ խեցի մը՝ ճկաբեռ պատառ մը՝ կենդանիի մը ակռան, օձի խորխ մը՝ տուփ մը՝ հին ու ժանգոտ սուր մը՝ ի մի բան՝ ամեն ինչ կրնայ ֆետիշ մը իմնել յաչս խափշիկին *(Հ. Դուրյան, Երկոնեարա պատմութիւն. Երուսաղէմ, 1935, էջ 26);*

Այս ձևը այժմ խոտելի է. բայց բառարաններուն մեջ երբեմն կարիք է զգացվում թվումների ժամանակ բուն գործածելու. օրինակ՝ դիտողությունների ակադեմիական հրատարակչական քառհատոր

առանձին բառերին բառարանի Ա հատորի 156-րդ էջում. Встреник... իմիմամիա՝ իմիմաուիկ՝ միջմիջ (ապամարդ)։

Այդպես արված է ցայդ առթիւ համարս, որ բոլոր բառերը առանձին-առանձին միասրտութեամբ են միջմիջին, այլ կերպ պիտի էին՝ իմիմամիա (ապամարդ), իմիմաուիկ (ապամարդ), միջմիջ (ապամարդ)[1]։

2. Երբ միևնոյն պատմութեան մէջ մի քանի զրուցող նախադասութիւններ իրար են ամբողջացնում. ինչպէս՝ Ձմեռն անցաւ, գարուն հասցաւ, անձրևները դադրեցան, միջից գոլ քարին, խոտերը կանաչեցան, ծառերը ծաղկեցան։

3. Երբ մի միջանկեալ կամ հարաբերական նախադասութիւն ընդհատում է գլխաւոր նախադասութիւնը. օրինակ՝ Մենք, թեև փոքրիկ ածու ենք, ինչպես ասում է խորհուրդը, բայց մատուցել ենք մարդկութեան կարևոր ծառայութիւններ։ Մենք ասեմ Ձեզ, պի իցեն տեղեր ի սոցանէ, որք ասա կան, որք ոչ հաշակնացեն գման, միևչև անացեն զԱրդի մարդոյ նկնալ արքայութեամբ իւրով։ Դու՛ ես անուանակիր, կը համարձակիմ ըսելու, այս ամեն աղետներու միակ պատճառը. կեանքը, ասացին փիլիսոփաները, մի նրատ է միայն։

4. Այսպես նաև, երբ մի քանի բառեր բարդացած բայահոլովիչներ հաջորդում են մի որևէ բառի. ինչպես՝ Մեսրոպ, հայ գրականութեան հիմնադիրը, վարդան աւուն մարդու որդին էր։ Նվարդ, փոքրիկ աշխատասեր մի աղջիկ, ատացավ առաջին մրցանակը։ Տեսնք անա, սուր և նիզակ, արյունահեղության զործիքնե՞ր, այս սրբավայրի մեջ։

5. Կոչականի մոտ, նախադասութեան իմ սկիզբը, իմ մեջը և իմ վերջը. օրինակ՝ Որդյա՛կ, լսի՛ր հորդ խրատները։ Այսուհետև ցնծացեք, անզգամնե՛ր, վասնզի հասաք վերջապես ձեր բաղձացրին։ Լսի՛ր աղաչանքս, ո՛վ Տեր։

6. Բացականչութիւններից և ձայնարկութիւններից հետո. ինչպես՝ Ի՜հ, մնաք բարով, Աստված և արի։ Դե՜հ, քաշեցեք, սիրուն եղնիկ։ Ախո՜ռ, որքան դեղեցի՜կ էր։

Առարկաները դասդ է առնչում, երբ բառերը կապված են իրար հետ և, կամ շարադասներով. ինչպես՝ Տիգրան և Տիգրիս Հայաստանի երկու մեծագոյն գետերն են։ Հարուստ կամ աղքատ, դի-

---

[1] *Օրինակը և բացատրութիւնը մերն է. (ձեռագրում տեղը բաց է թողնված)։ Ե. Ա.*

առն կամ ոգնա հավասար են օրենքի առաջ: (Ֆրանսերենում նաև n'է շաղկապը այս կարգից է. ինչպես՝ Il n'est ni bon ni mauvais; ni le roi ni la reine; ce n'est point ni un ennemi ni un étranger. Բայց հայերենում չի կարելի ասել ոչ ևս ոչ դուռ, այլ միայն ոչ ևս, ոչ դուռ):

Սաորակետը դանց է առնվում դարձյալ, երբ երկու համադիր նախադասությունն կապված են իրար հետ և կամ շաղկապներով. ինչպես՝ Ես իմ աշխատությունները յուց ավի Նրան և իմ ապագա ծրագրերը պարզեցի: (Նախադասությունները համադիր են, որովհետև ունեն միևնույն նպատակն, միաձայն բայ և միատեսակ լրացուցիչ. իբր թե ասինք՝ «ցույց ավի և պարզեցի»):— Իսկ երբ նախադասությունները համադիր չեն, այսինքն տարբեր նպատակ և կամ տարբեր ձևի լրացուցիչներ ունեն, դրվում է սաորակետ. ինչպես՝ Ես գովեցի Նրա աշխատությունները, և ծնողները անհոգությունը պատապարանցի: Աղքատները հարուստներին, և հիմարները իմաստուններին դործիքն են նդած:

Սաորակետը դանց է առնվում նաև ֆրանսերենում այն հարաբերական նախադասության մեջ, որ որոշիչն է (déterminatif) գլխավորի. ինչպես՝ Tous les objets (,) qui avaient frappé ma vue (,) ne me paraissaient que des points lumineux. Բայց երբ նախադասությունը որոշիչ չէ, այլ միայն բացատրիչ (explicatif), սաորակետները մնում են. ինչպես՝ Un chat, qui faisait le modeste, était entré dans une garenne. (Առաջինի մեջ, նեթե հարաբերական նախադասությունը չնջեինք, գլխավոր նախադասությունը այլևս նույն իմաստը չէր ունենա. իսկ երկրորդի մեջ, հարաբերական նախադասությունը ամբողջապես կարելի է հանել և դրանով ոչինչ չի փոխվի): Այսպես է նաև անգլերենի մեջ, ուր մինչև անդամ որ հարաբերականն էլ է ջնջվում, իսկ դերմաներենը պահում է սաորակետները՝ հայերենի պես:

Երբ երկու բառ կապված են բայց, թե շաղկապներով, կարելի է հապավել սաորակետը, կամ փոխարինել բուլմով. ինչպես՝ Հարուստ, բայց ագահ մեկը (Հարուստ բայց ագահ մեկը. Հարուստ՝ բայց ագահ մեկը). Հարուստ թե աղքատ՝ միևնույն է ինձ համար:

Հայերենի մեջ սաորակետ չենք դնում նաև այն դեպքում, երբ մի մեջանկյալ բացատրական բառ կամ ածական ընդհատում է իրար հետ անմիջապես կապված երկու նյր, որոնցից առաջինի

հետ ինքն էլ համատիպ և համաձայնական է. օրինակ՝ Երանի գործածական են ինդոեվրոպական, ինչպես նաև սեմական բնաեւիրտում. *անդլերենի մեջ նոյն նախադասութիւնը պիտի գոնուար (առանձնաւոր բաժանումով).* They are used in the Indo-European, as in the Semitic, family.

Վերջին Հիմնականում, վերլուծական, մանավանդ բնավերլուծական (.) նշանները առանձնականութեամբ սուենկի պես բաւական են. *վեհագոյն առաքեալը պիտի ասէր ամենքին, հոգիներին մեջ ապրող է։*

Երբարի մեջ, որ իրար հետեւից շարված են մի խումբ հոմանիշ կամ մերձհոմանիշ բառեր, որոնք իրար են պարագրում, առաջինը չի դրվում. ինչպես՝ նկատ միաբանեաց զգօրս Պարսից, որք լքին խառնեցին մերձեցին աճապարեցին զանխուրթիւնն Պարսից *(Ագաթանգեղոս)։*

Միջակետը *դրվում է այնտեղ, որ ձայնը իջնում է անմիջապես յետ և հանկարծ դադարում։ Այդ պատահում է հետեւյալ դեպքերում.*

1. Որ որ վերջանում են պարբերութիւններ կամ յետոյ առանձին դրվելու նախադասութիւնները, որոնք մի-մի ամբողջական միտք են արտահայտում։ Օրինակ՝ Աշուշ չունի երկինքը. կապոյտ կը տեսնես ցերեկը. աստղունք կը տեսնես գիշերը. ամպերն ալ, երբ ամպեր պատեն, գոլորշին են և թափանցիկ՝ արեւին լուսովը։

2. Երբ մեջ է բերվում մի արդիւնք խոսքը կամ վկայութիւնը, որ չակերտում է ոչոտ. ինչպես՝ Ու ասաց Աստուած. «Եղիցի լոյս». և եղև լոյս։

3. Երբ ակնկալու է մի երկար թվում. ինչպես՝ Հայաստանի 15 նահանգները հետեւյալներն են. Բարձր Հայք, Ծորրորդ Հայք և այլն։ *(Հալանի է. թվ կարճ թվումների ժամանակ բոլոր նշանն է դրվում)։*

Միջակետի տեղ երբեմնական գործ են ածում կետաւոր (:) և երկկետ (:)։ Վերի դեպքերից առաջինում դրվում է ; երկրորդում և երրորդում : է դրվում։ Հնդարեենում եվրոպականի ;-ի տեղ դրվում է վերև դրված կետ (˙), մինչդեռ ցած դրված կետը (.) վերջակետ է։

Վերջակետը *պարբերութիւն չունի միջակետից՝ բուն առոգանութեան։ Երբեմնում է, երբ պարբերութիւնը բոլորովին վերջանում է, ինչ որ հաճախ կատարում է գրողն բնաւորութիւնից։ Դան*

դրողներ, որոնք միջակետի տեղ էլ վերջակետ են դնում, կամ ընդհակառակը՝ վերջակետի տեղ միջակետ։

Երբեմն վերջակետից հետո դնում են —, մանավանդ երբ նրանից հետո նոր տող է սկսվում։

Եվրոպական լեզուների սովորությամբ վերջակետը միայն մի կետ է (.)։ Հունարենի մեջ դանադանվում են ցած դրված կետ (.), որ վերջակետ է, և բարձր դրված կետ (·), որ ;-ի արժեք ունի։

Վերջակետից վերջակետ եղած միջոցը, որ սովորաբար պարբերություն է կոչվում, կարող է հեղինակի ցանկության համեմատ երկար կամ կարճ լինել։ Նա կարող է պարունակել դանադան գրքույթավոր և երկրորդական նախադասություններ, որոնք առաջինների միտքը լրացնում են։ Բայց ընդհանրապես շատ երկար պարբերությունները ձանձրալի են և բուն և գլխավոր իմաստը մխագնում են։ Այսպես, օրինակ, Ալիշանի՝ «Հայաստան յառաջ քան գլխնելն Հայաստան» գործի մեջ, էջ 199, կա մի պարբերություն, որ բռնում է 25 տող, ունի մի գլխավոր նախադասություն, 12 երկրորդական նախադասություն և 3 էլ դերբայական հավելված։ Նվ, սակայն, այս բոլորի մեջ գլխավոր միտքը դրված է առաջին նախադասության մեջ, որ պարունակում է միայն 5 տող։

Հետերի փոխանակության համար դնում եմ հետևյալ կտորը.

Գնացինք ծովափ։ Մարդ չկար։ Դեռ շատ շուտ էր։ Փիչ-քիչ հավաքվեցինք։ Ծովափը լցվեց բազմությամբ։

Գնացինք ծովափ, ուր մարդ չկար, որովհետև դեռ շատ շուտ էր. բայց քիչ-քիչ հավաքվեցինք և ծովափը բազմությամբ լցվեց։

Առաջին հատվածի մեջ 5 վերջակետ կա, որոնցից միայն մեկն է մնում երկրորդում, իսկ մնացյալ չորսից երկուսը վերածվել են ստորակետի, մեկը միջակետի, մյուսն էլ ջնջվել է։

Ահա մտածողությունը արտահայտելու երկու տարբեր ձևեր, որոնց հետևում է նաև կետադրությունը։

Ընդհանրապես քերականները բուխի, ստորակետի, միջակետի և վերջակետի տարբերությունը դադարի տևողության մեջ են դնում։ Ուշադիր քննությունը սակայն ցույց է տալիս, որ տևողությունը երկրորդական նշանակություն ունի, որովհետև բոլորն էլ գրեթե միևնույն չափն ունեն. հիմնական տարբերությունը այդ դադարից անմիջապես առաջ ձայնի ստացած ելևէջի մեջ է, ինչպես բացատրեցինք վերը։ Այստեղ դնում ենք ձայնագրական պատկերը, համեմատած նա բաւի՝ հետևյալ նախադասությունների մեջ.

1. Նա՝ որ եկավ...

2. Նա, դու, ես, յոլտըս էլ.

3. Եկամ նա.



Ուրեմն բաժիններ մինչեւ միջակետը մի ուժնոյակ տարբերութիւնն կայ

Նկատելի է այն, որ կարելի է իրար անց դործածել բաժիններ առարակետի հետ, առարակետը միջակետի հետ, միջակետը վերջակետի հետ, բայց շատ անդամ կրնան բաժիններ անց վերջակետներ կամ վերջակետներ անց առարակետ դնել։

Միջակետի եւ վերջակետի դործածութեան օրինակներ.

Նահանջանան, Արտասր Հայաստանեայ, Պոլիս (Թվական չկայ), էջ 31.

Նոյն նովատին դեմ առ դեմ երկու լեռնից ստորոտները այլինելով եւ պարտէզներով զարդարուած է, (sic) նիրատ կամ մեղրիկ դետը, Մշոյ դաշտերին գալով՝ նոյն զարդարեալ նովատին մէջեն լոկի ու մննիկ սրանալով՝ Բալուայ արեւմտեան գետեզրը՝ ինքնաբոյս փոքրիկ ժայռի մը կը զարնէ, որ ցցուած է, (sic) երէ չլինի այն՝ քաղաքը մեծամեծ վնասներ կրկրէ զետի յորդութեան առեն. (sic) քաղաքի առաջ խարխուլ վինակի մէջ փայտաշէն կամուրջ մը կայ բաւական երկայն...

Անդ, էջ 33.

Ամեռը աւձրևեն կամ ձիւնեն խիստ անհանգիստ կը լինին բնակիչք. ալ չենք դիտեր ոողին դէշութենեն է թէ ոչ, (sic) և հայք այս քաղաքի մէջ ունին չորս եկեղեցի...

Բայց այս չորս նշաններից, որոնք դործարի համար են, կետադրութեան մէջ դործածվում են նաև հետևյալ 14 նշանները, որոնցից երեքը (շեշտ, երկար և պարույկ) առոգանութեան նշաններ են, իսկ մյուսները բառերի կամ խոսքերի բացահայտութեան համար են միայն.

՝ *ապաթարց կամ մակակետ.*

– *ենթամնա.*

« » *չակերտ.*

( ) *փակագիծ.*

- *միութեան գիծ.*

— անջատման դիծ կամ գիծ.
... կախում կամ կախման կէտեր.
՛ շեշտ.
— պառիվ.
՛՛ երկշեշտ
՝ պարուկ կամ հարցական նշան.
՜ երկար կամ զարմացական նշան.
? կասկածական նշան.
! ծաղրական նշան.

Ապաթարցը կամ մակակետը գործածվում է դեղչված մի ձայն (կամ տառ) ցույց տալու համար. ինչպես՝ Անգամ մ'ալ (փոխանակ՝ մը ալ), պիտ'որ լսեմ (փոխանակ՝ պիտի որ լսեմ), տ'երթամ (պիտի երթամ), թ'երթայ (թող երթայ), երկ'երկու (փոխանակ երկու-երկու), մ'երթար (մի՛ երթար) չ'երթար (փոխանակ՝ չի երթար) և այլն: Այս բոլորի մեջ ամենից ավելի գործածականներն են «անգամ մ'ալ, կ'երթար, չ'երթար» ձևերը, որոնք էլ սովորական են արևմտահայ գրականին: Մյուսները բարբառային ձևեր են և գործածական են ավելի լեզվաբանական գրվածքների մեջ: Արևելահայերը, թեև ունեն կ'երթայ և այլն բայական ձևերը, բայց այժմ սովորություն են դարձրել գրել առանց ապաթարցի:

Ապաթարցը ամենից ավելի գործածական է տաղաչափության մեջ, ուր բանաստեղծները թույլ են տալիս իրենց՝ ուզած ժամանակ այս ու այն ձայնավորը հապավելու, չափի համար: Այսպես՝ ունենք Դուրյանից, օրինակ, հետևյալ տողերը.

Աստղ մ'ալ ես կ'երթամ յաւելուլ երկնից...
Եթէ տժգոյն մանուշակ
Աննուն ժպտով մ'իջնէ իմ դէմ...

Ապաթարցի սխալներ շատ սովորական են մեր գրողների մոտ. սովորություն է դարձել, ուր որ ճ կամ կ մասնիկը կա, անպատճառ ապաթարց դնել. այսպես՝ չ'եմ, չ'ես, չ'է, չ'գիտեմ, չ'գիտեի, չ'երթար, կ'ուզայ, կ'ուտայ, կ'գանէ և այլն: Այսպիսի սխալներ են, օրինակ, Ա. Տիւմայ (Որդի), Կնոջ մը վէպը, Զմիւռնիա, 1881, Ա, 52՝ կ'ուզաե զիրենք մսիկ ընողներուն. 58՝ Մին պատերազմական դեմք մը ցոյց կ'ուտար: Այս բոլորի մեջ ապաթարցի կարիք չկա, որովհետև կրճատված տառ չկա: Ուշադրության արժանի է հատկապես չերթար ձևը, որ արևմտահայ բարբառի մեջ երկու տարբեր բան է ներկայացնում. մեկը ներկայի եզակի երրորդ դեմքը (չեմ երթար, չես երթար, չ'երթար),

մյուս անկատարի նույնի երրորդ դեմքը (չերթայի, չերթայիր, չերթար)։ *Առաջին դեպքում ապաթարցյալը անհրաժեշտ է, որովհետև* չ'երթար > չե երթար *կամ* չի երթար, *իսկ երկրորդ դեպքում՝ բայարմատին ավելորդ։*

Շատ անգամ ապաթարցյալը դրվում է պրեպոզիցիաների վրա. 'ի տուն, 'ի քաղաքե, վեր 'ի վերայ, ձմեռն'ի բուն։ Այս նմանությամբ նաև յ, վ, ց նախդիրների վրա. ինչպես՝ վ'տուն, յ'անտրիւն, յ'առանձ։ Ամենք ալ կարգի ապաթարցյալը պահպանելով նախադրեին, կոչած են մակակետ (Ալամանեան, Քննական քերականութիւն, 354)։ Չանազանութիւնները նկատի ոչ ձևի, դրան դրած ժամանակի մեջ է և կարծում է նրանում, որ մինչդեռ ապաթարցը մի կրճատված տարի վոխարեն է դրվում, այստեղ ոչ մի կրճատում չկա, այլ նշանը դրվում է, որպեսզի նախդիրը սխալմամբ հոգոյդ բառի մասը չկարծվի. օրինակ՝ 'ի սկզբան և ոչ թե իսկ վրան։ Մակակետի այս գործածությունը սովորական էր հնում գրքերի ձեռագրերի մեջ, ուր բառերը անդադար և միահյուս գրված էին լինում. իսկ այժմ, երբ տպագրության մեջ բառերը և նախդիրները արդեն անջատ են տպվում և նման շփոթություն երկյուղ չկա, մակակետի գործածությունն էլ վերացվում է։ Վենետիկի Մխիթարյանների միաբանությունը իսպառ ջնջել է, բայց Վիեննայի Մխիթարյանները, իրրև ավելի պահպանողական, դեռ շարունակում են գործածել։

Նիթամնա *տողադարձի նշանն է։ Երկու ձև ունի. կիսաբոլոր (-) և ուղղագիծ (-). առաջինը հայերեն տպագրությունների սովորական ձևն էր, երկրորդը եվրոպական տպագրություններ, որ հիմա սովորական է նաև մեր մեջ։ Լավագույնն էր անշուշտ առաջինը, չշփոթելու համար միության դծի հետ։*

Հները զանազանում էին երկու տեսակ նիթամնա. մեծ կամ կատարյալ նիթամնա *կոչվում էր այն նշանը, որ գործածվում էր բարդ բառերի կազմիչ մասերը բաժանելու համար իրարից. ինչպես՝ բարձ-ընտիր, նոր-ընծայ և այլն։ Իսկ կես կամ փոքրիկ* նիթամնա (կիսանիթամնա) *կոչվում էր այն նշանը, որ արդի սովորական* նիթամնան է և *գործածվում է վանկերը բաժանելու համար տողադարձի ժամանակ. ինչպես՝ ա-ռավոտ, առ-նել, ա-սել, ե-ղավ, նա-նապարհ և այլն։ Ալպաս, Երզնկացու և Նչեցու քերականությունների մեջ կարդում ենք. «Կիսանիթամնայս զատուն ի հնգան կոչ, որպէս կատարեալ նիթամնայ զկատարեալ բառսն. ի*

վերջը տողին պարտ է կիսաձայնեալ դնել ի ներքոյ» (տես ՆՀՐ, կիսաձայնեալ բառի տակ)։

Արդի գործածութեան մեջ այսպիսի խստութիւն չկայ։

Չակերտը գործածվում է մի ուրիշի խոսքը կամ վկայութիւնը մեջ բերելու համար։ Չակերտից առաջ դրվում է մէջբերում, հետո չակերտը բաց են անում («, «, կամ » և այլն), որից հետո սկսում են գլխատառ։ Խոսքը վերջանալուց հետո չակերտը փակում են (», » կամ « և այլն)։ Սովորաբար չակերտը դրվում է խոսքի սկիզբը կամ վերջը մի անգամ. իսկ երկար կոչումների կամ մեջբերումների (ցիտատների) ժամանակ, ինչպես և ոտանավորի մեջ, չակերտ կարելի է բանալ յուրաքանչյուր տողի սկիզբը, իսկ փակել միմիայն վերջում, մի անգամ։ Այժմ այս վերջին գործածութիւնից դուրս է եկած։ Չակերտով բերված նախադասութիւնն իր մեջ ունենում է բնականաբար կետադրութիւն. վերջին կետը (միջակետ կամ վերջակետ) ոմանք դնում են չակերտից ներս, ոմանք դուրս։ Վերջինը լավագույնն է։ Օրինակ՝ եւ ասաց Աստուած. «Եղիցի լոյս». և եղև լոյս։

Չակերտի մեջ կարելի է դնել նաև մի բառ, որ հեղինակինը չէ, այլ պատկանում է մի ուրիշի. այս դեպքում իհարկե գլխատառ չի գրվում։ Օրինակ, ենթադրվում է, թե «հաբէթական» լեզուները տարածվում են մինչև Միջին Ասիա։ Չակերտի այսպիսի գործածութիւնը սովորական դարձավ վերջերս, «յուրահնար, ինքնակոչ, այսպես ասած» իմաստով. օրինակ՝ Աշխատավարձի «ձախ» հավասարեցումը։ Սրա համար էլ հնարվել է չակերտավոր բառը՝ ինքնակոչ իմաստով։

Փակագիծը դործ են ածում երկրորդական մի տեղեկութիւն կամ ծանոթութիւն, իբրև միջանկյալ հիշելու համար, լինի դա մի ամբողջ նախադասութիւն, թե միայն մի բառ։ Օրինակ՝ Ավետաւան (այսպես է կոչվում հին իրանյանների սրբազան մատյանը) վերագրվում է Զրադաշտին (Զերդյուշտ)։—Կարելի է նաև գործածել կրկին փակագիծ, երբ հարկ է լինում ծանոթութեան մեջ մի նոր բացատրութիւն էլ դնել։ Այս դեպքում դրվում է անկյունավոր փակագիծ [ ], չշփոթելու համար նախորդի հետ։ Օրինակ՝ Ամեն կողմից հուսահատ (որովհետև նույնիսկ մայրաքաղաքը [Հռոմ] վտանգի տակ էր), որոշեցին ամրանալ Ռավեննա։

Երբ միջանկյալ ծանոթութիւնն սկսվում է, փակագիծը բաց են անում [( ], և երբ վերջանում է, փակում են [ )]։

Փակագծյալ մասը միշտ միջանկյալ և երկրորդական լինելով, պետք չէ լինի տրված այնպես, որ եթե վերացվի, խոսքի ընդհա-

նաև կապմբ և ընթացքը խանդարելիս. Օրինակ, սխալ է միակողմանի հնամեայ հատվածում. Ավետաան (այսպես հին կոչում հին իրանյաններր) իրենց ս. Գիրքը, վերադրվում է Զրադաշտին— *նմանապես պետք չկա գնել կամար միակողմից անմիջապես դուռ, հին խոտրի մնացյալ մասը չի պահանջվում. Օրինակ, սխալ է դրել՝* Օղոտաան (ճանապարհացույց կայարր), ընդհանուր աշխարհագիր ասում:— *Մատրակետր անունդի է.*

1860-ական թվականներին միակողմանի դործածվում էր նաև իրր չակերտ. օրինակ՝ Հայկունի բնակիչներր կր ճաւատային թէ նոգիներն՝ որոնց իրենք (ՋԼմՆ) անուն կու տային, ապագայ բաներու գուշակ են. ամեն մարդ, կ'ըսէին, իր առանձին (ՋեմՆ) ուներ *(Ալպենյան, Ինձական բնությանությունն, § 945)*.— *Այս սխալ դործածությունը հետս վերացրեց.*

Ամենը միակողմի փոխարեն պիտիներ էին դնում — — ձևով.

Միությանց գիծը *դործածվում է երկու կամ ավելի անջատ բառեր միացնելու և բարդությանն ձև տալու համար. ինչպես՝* հայ-պարսկական հաքարներությունները, չին-ճապոնական պատերազմ. Միներ-Ներսես. Վան-Միներ-Շապուհ: *Հանդես միավորման դիծը բոլորովին ավելորդ և սխալ է. ինչպես՝* մարա-պարսկական, էլեկտրա-բուժություն, *փոխանակ ասելու* մար-պարսկական *կամ պարզապես հոդակապով՝* մարապարսկական, էլեկտրաբուժություն.

Կովկասում, նոր անունդի դրողները այս երեսույթը չափազանցության հասցրին. ուր որ երկու կրկնված բառ կա, կամ բացառականով միացած ուղղական, կամ բոլոր երկու ձև, որոնք միևնույն ժամանակ, թվին ու դեմքն ունեն, և նման զանազան դեպքեր, երբ մենք ստորակետով կամ առանց կետի ենք սրջում, սկսեցին գործածել — նշանը. Այսպես, օրինակ՝

Նկել—գալ էր Մուշեղին *(Միրաս, Ձգրված օրենք, 92)*.

Անցնում էր պուրակից—պուրակ, թմբից—թումբ ու մեկիկ—մեկիկ ճոտոտում վարդևնիները *(անդ, էջ 6)*.

Մի գյուղում երկու եղբայր են լինում, օր դատող—օր ուտող մարդիկ: Ինչքան շատ են բանում—դատում, էլի չեն կարողանում ծայրը—ծայրին հասցնել *(Մկրտիչ Կորյուն, Հնքիաթներ, Երևան, 1941, էջ 55)*.

Անջատման գիծ *(կամ պարզապես գիծ)* դործածվում է *զանազան դեպքերում.*

1. Երբ բազմաթիվ երկրորդական նախադասություններ ստորակետներով բաժանված հաջորդում են իրար, վերջին անդամ գլխա-

վոր նախադասության անցնելուց անմիջապես առաջ դրվում է սահրակետից հետո գիծ (—)։

2. Վերջակետից հետո, մանավանդ երբ պետք է նոր տող սկսի, դրվում է երբեմն գիծ, իբր թե ցույց տալու համար կատարյալ վերջակետ։

3. Միջանկյալ նախադասությունների համար՝ փակագծի փոխարեն։

4. Պատմվածքների մեջ դանադան անձերի խոսակցությունը մեջ բերելու համար, չակերտի կամ գասաց, ստում է» բառերի փոխարեն։ Ալպիսի գիծը հաճախ նոր տողի սկիզբն են դնում. բայց ինձպողության համար կարելի է նաև տողի մեջ, հատկապես ոտանավորի մեջ։

5. Դրեթե սրան նման՝ բացատրական մի նախադասություն, որ իբր թե առաջինի պատասխանն է. Օրինակ՝ Ի՞նչ էր ձայոց պահանջը.—կյանքի և գույքի ապահովություն և ուրիշ ոչինչ։

6. Թվականների և թվանշանների միջև՝ «մինչև» նշանակությամբ. օրինակ՝ 1876—1933 կամ 1876—1888, Ա—Ժ, 1—10։

Կախման կետեր (...) գործածվում են՝

1. Երբ հուզմունքից ալևս բառ չունի ասելու և ընդհատում է մի վայրկյան իր խոսքը. օրինակ՝

Եւ այս աշխարհն ալ անցպիտ
Գոցեցին իմ առջևս յաւէ՛տ...։

2. Երբ մի որևէ վկայության մեջ բաց թողած տեղեր կան։

3. Նույն ոճով «և այլն» ասելու փոխարեն. ինչպես՝ հինգերորդ, վեցերորդ... մինչև տասնհրորդը։ Ալսպես է նաև հերոսապոհների մեջ. օրինակ, ֆրանսիական մի լավ հրատարակության մեջ (MSL, 22, էջ 175) տպված է վեց անգամ... և այլն իմաստով։

Շեշտը ձայնի բարձրացման նշանն է։ Հայերենի մեջ անհրաժեշտ է նրա գործածությունը այն դեպքում, երբ իմաստի տարբերություն է առաջանում. օրինակ՝ Ես կուզեմ, բայց Ե՛ս կուզիմ (որ արևելյան գրականում բառաշարքի տարբերությամբ լինում է՝ Ես ուզում եմ, Ե՛ս եմ ուզում). Կարապետը այսօր գնաց, Կարապետը այսո՛ր գնաց, Կարապետը այսօր գնա՛ց. այս երեքը իրարից տարբեր իմաստ ունեն. առաջինը շեշտում է այն, թե Կարապետը գնաց և ոչ ուրիշը, երկրորդը՝ թե այսօր գնաց և ոչ երեկ, երրորդը՝ պատմում է սովորական դեպքը։ Այս վերջին դեպքում շեշտ չի դրվում։ Եվրոպական լեզուները ուրիշ ձևեր ունեն այս շեշտերի փոխարեն. օրինակ, ֆրանսերենում առաջին դեպքում՝

C'est Karapet qui est parti, *կրկրտով պեպրտա՝* C'est aujourd'hui que Karapet est parti։

2. Ընդհարձակ դրվում է նաև հրամայականի վրա. ինչպես՝ արի՛, գնա՛, իմա՛, ըմբռնի՛ *և այլն։*

3. Մի՛ արգելականի վրա, պանդագանելու համար մի թվականից։

4. Երբ շեշտը վերջին վանկի վրա չէ և մենք ուզում ենք դրամագրական ցույց տալ այդ. ինչպես՝ ա՛յսպես, սա՛պես, մա՛նավանդ *և այլն։*

5. Առաջադրյալն ցույց տալու համար. ինչպես՝ երբի՛ք, բնա՛վ, շու՛տ, անա՛ *և այլն։*

6. Բացականչադրյալների վրա. ինչպես՝ դի՛ն, է՛ն, ի՛նչ։

7. Այո՛, ո՛չ մակբայների վրա և բայերի դանդաղ բացասական ձևերի վրա. ինչպես՝ չի՛մ ուզում, չպիտի՛ երթամ, չի՛բար։

8. Հրամայական բո՛ղ ձևի վրա. ինչպես՝ թող երթա, թող գա *(մեզ հնչեմ է թող երթա՛, թող գա՛)։*

9. Անդրադարձի հարցման միջոցին. կուզեի իմանալ, թե ո՛վ, ի՛նչ և ու՛ր պիտի գա։

Պատիվը *(¯)* *գործածական էր հին հայոց մեջ իբրև նշան համատատարրության, բայց միայն մի քանի բառերի համար. ալպես՝* Ցա, Բա, Ած, Տր, Եմ, Իել (Յիսուս, Քրիստոս, Աստուած, Տէր, Երուսաղէմ, Իսրայէլ) *և այլն. դրվում էր միայն բառի առաջին և վերջին տառը. դրա համար սրանց հոլովյալ ձևերն էլ լինում էին՝* Այ, Յի, Քի, Աւ, Տն (Աստուծոյ, Յիսուսի, Քրիստոսի, Աստուծով, Տեառն) *և այլն։ Ավելի ուշ պատիվը դարձավ սովորական համատատարրության նշան և սկսավ գործածվել ամեն բառի համար. օրինակ՝* քրիստոնեայ, սատանայ (քաղաք, սատանայ) *և այլն։ Նոր ժամանակներս տպագրության դյուրության համար պատիվը վերացվեց և նրա փոխարեն սկսեց գործածվել պարզ միջակետ. ինչպես՝* պատմ., քաղ., ար. (պատմություն, քաղաքական, արդ)։ *Կա նաև երկշեշտ, որ վերջին դարերի ձեռագրերից է. ինչպես՝* սեպտ՛՛ դեկտ՛՛ (սեպտեմբեր, դեկտեմբեր)։

Պատիվը իբրև համատատարրության նշան հնագույն ժամանակ գործածական էր միմիայն սրբազան բառերի համար։ Սրանից էլ ծագում է պատիվ բառը։ Յետո ավելի ուշ սովորական դարձավ նաև հասարակ բառերի համար։ Սրա ամենահին գործածությունը

գտնում ենք 867 թվականի մի արձանագրության մեջ, որ հրատարակված է Շողակաթ, 177։

Ցիշխանութեն Աշոտոյ և ի տերութեն Սմբատայ... (հրատ. Գ. Հովսեփյան)։

Արձանագրություններից շատ ավելի ուշ մտնում է ձեռագրերի մեջ և մեծ տարածում ստանում (ավելի մանրամասն տես տուրս՝ «Համառոտագրություն»)։

Պարույկը կամ հարցական նշանը հարցում արտահայտող նշանն է և գրվում է ճիշտ այն վանկի վրա, ուր կատարվում է հարցման հատուկ ձայնի բարձրացումը։ Եվրոպացիք գործ են ածում հարցականի համար ? նշանը, որի ծագումը հետևյալն է։ Հուները հարցականի համար գործ էին ածում կետ-ստոր. (;). լատիններեը վրա առնելով հուներից այդ նշանը, զանազանելու համար կետ ստորից (;), մի քիչ ձևափոխեցին և ստորակետը վերև դնելով՝ ունեցան մի նոր նշան (?). այս նշանն է, որ դարձավ հետո ?։ Ոմանք ուզում են և փորձեր էլ արել են նույն նշանը հայերենի մեջ էլ գործածել պարույկի փոխարեն։ Բայց դա շատ անուղղի և վնասակար մի նորմածություն է։ Եվրոպական հարցականը, ինչպես հայտնի է, գրվում է միայն նախադասության վերջում, և եթե նույնը գործադրենք նաև հայերենի մեջ, անկարելի պիտի լիներ իմանալ, թե նախադասության մեջ գործածված բազմաթիվ բառերից որին պետք է տալ այդ նշանը. օրինակ. Դու՞ այսօր համալսարան գնացիր, թե՝ դու այսո՞ր համալսարան գնացիր, թե՝ Դու այսօր համալսարա՞ն գնացիր, թե՝ Դու այսօր համալսարան գնացի՞ր։ Այս բոլորը եվրոպական ձևով պիտի լիներ՝ Դու այսօր համալսարան գնացիր? որ ոչ մի բան չի նշանակում։ Եվրոպացիք տրիշ միջոցներ ունեն սրա առաջքը առնելու համար. այսպես՝ ֆրանսերեն c'est կամ est--ce que, որ հարկեն պիտի լիներ Արդյոք դու՞ այսօր համալսարան գնացիր, կամ Արդյոք այսո՞ր դու համալսարան գնացիր, կամ Արդյոք համալսարա՞ն դու այսօր գնացիր և այլն։ Իսպանացիք հնարել են մի այլ ձև, հարցականը դնում են նախադասության թե սկիզբը (պլխիվայր գրածած) և թե վերջը, այսպես.

?Habla Usted español?

Ուսո՞ւմ եք Դուք իսպաներեն։

Սրանով հարցականի սահմանը իրր թե սրսրվում է, բայց միայն մինչև մեկ նախադասությունն և ոչ թե մինչև մի բառ, որ հայերենի համար անհրաժեշտ է։

Երբ հարցումը կատարվում է անուղղակի ձևով (interrogation indirecte), *պատասխանի ենթադրվում է շեշտ, իսկ եվրոպական լեզուներում հարցական չի դրվում.*

Կուզեի իմանալ ո՛վ է այդ մարդը.

Je demande quel est cet homme.

Մակայն այս միջոցներով հաճախ անբավարար են և եվրոպական հարցական նշաններ մնում է մի անհամատ բան. օրինակ, հետևյալ փոխանակին համապատասխան մեջ.

Que conclure de toutes ces remarques, sinon que le système élaboré par Mlle Hamburger, pour ingénieux qu'il soit dans son principe, pour logique qu'il soit dans son application, paraît se heurter à beaucoup d'objections? (BSL, 36, № 106, *էջ 88)։*

«Ինչ հետևցնել այս բոլոր նկատողություններից, եթե ոչ այն, թե սկզբից Համբուրգերի մշակած դրությունը, ինչքան էլ որ հնարիմաց լինի սկզբունքով, ինչքան էլ որ տրամաբանական լինի իր գործադրության մեջ, թվում է, թե բախում է շատ առարկությանց?»։

Երկար *կամ* զարմացական նշանը *դրվում է 1. ձայնարկություններու վրա, ինչպես՝ ախ, ավ, բայց, ափսոս. 2. հուզումով արտասանվող բառերի կամ նախադասությունների վրա. ինչպես.*

«Խոսելիք» լավ. — ո՞ւ, խոսի՞լ,

Հատնի՞լ է լոկ ինձ համար։

Եվրոպական լեզուների մեջ զարմացական նշանն է՝ և՛ որ դրվում է ձայնարկությունների կողքին և նախադասությունների վերևը՝ նման հարցական նշանի։ O ma patrie!

Կատեգորական նշանը *եվրոպացիների հարցական նշանն է, որ փոխ ենք առել մենք և գործածում ենք երկբայությունն, կասկած կամ անստուգությունն ցույց տալու համար. օրինակ՝* Խորենացին (I դար.?) կազմել է առաջին ամբողջական Հայոց պատմությունը։ Հռոմայեցի մի կայսր (Անտոնինոս Պիուս?) դեսպան է ուղարկել Քրիստոսի։—*Նախապես սրա փոխարեն գործածում էին կետով պարուրվ (՝), որ հիմա խափանված է։*

Ածականի նշանը *եվրոպացիների զարմացական նշանն է, որ նույնպես փոխ ենք առել մենք և գործածում ենք ծաղր կամ հեգնանք ցույց տալու համար. օրինակ.* Ի դարում հայերը վ չունեին, ասում է Ղ.. Ալիշանը!

Նախապես ծագրական նշանի համար գործածում էին կեռով երկար (~), որ հիմա խափանված է նույնպես։

Ոմանք կասկածը կամ ծաղրը ուժեղացնելու համար նշանը մինչև երեք անգամ կրկնում են, այսպես՝ ???, !!! կամ նաև սրանց խառնուրդը՝ ?!! և այլն։

* * *

Ձանազան լեզուների կետադրության կանոնների համեմատությունից կարող ենք հետևցնել, թե այդ արվեստը բացարձակ ճշտության չէ հասած։

Չխոսելով արաբերենի և արաբական այբուբենով գրվող լեզուների մասին (պարսկերեն և այլն), նաև եբրայերեն, ասորերեն և այլն, որոնք բնավ կետադրություն չունեն, եվրոպական լեզուներն էլ շատ տեղ անճիշտ են։ Օրինակ, ռուսերենում անհանդուրժելի սխալ է что ետրա ից առաջ ստորակետ չդնելը, մինչդեռ ֆրանսերենում qui-ից և que-ից առաջ ստորակետը դնելը պարտադիր չէ և նրա մասին տրված կանոնները այնպես մութ են, որ իրենք իրենց կասկածելի են դարձնում. իսկ անգլերենում ոչ միայն ստորակետը, այլև հարաբերականն էլ չեն դնում. օրինակ՝

The man I sow «մարդը, որին տեսա»։

The letter I write «նամակը, որ գրում եմ»։

Հայերենի մեջ էլ որ հարաբերականից առաջ ստորակետ դնելու հարցը պարտադիր որոշումների կարգն են դնում ոմանք, իսկ սրիշներ էլ բարեմիտ վերաբերմունք են ցույց տալիս։ Այս վերջինները լսած իս ավելի իրավացի են. օրինակ՝ Դու որ գնացիր, սեսա՞ր։—Այստեղ որ-ից առաջ ստորակետ դնելը ոչ թե պարտադիր, այլ բոլորովին ավելորդ եմ համարում։ Այսպես նաև հետևյալ օրինակի մեջ. ևս չդիտեր(,) որ ես էի։

Երբեմն էլ կանոնը կամ սովորությունը պահանջում է ինչ որ կետ, որ սակայն հնչմամբ տարբեր կետ է լինում։ Օրինակ, ամեն լեզվի մեջ էլ կոչականից հետո դնում են ստորակետ, մինչդեռ իրականում հնչում ենք միջակետ. այսպես՝ Կա՛րապետ, ասի՛։ Այստեղ Կարապետ կոչականից հետո թեև գրում ենք ստորակետ, բայց հնչում ենք միջակետ։ Հնչման մեջ դուրս առաջին վանկի վրա դրված շեշտը շեմթեցնի մեզ և կարծել տա, թե իսկ ստորակետ է։ Բայց մենք կարող ենք առնել մի վանկանի մի կոչական, ասով պիտի դգանք, որ այդպես չէ. օրինակ՝ Վարդ, ասի՛։

Ինձ այս բոլորը ցույց են տալիս, որ կիսատրամաբանները իրենց սխալ դատողությունների չի հասել և աստվածաբանները դրանց կանոնների մասին։

Աստվածաբանները ամենի բնական է և հիշյա՝ ամեն ինչում հա-մար։

Կիսատրամաբանների կարևորագույն ցույց տալու համար երկու օրինակ կա.

1. Մի փոքր աստղիչ է վարձում պատահարակիցը համար իր չնչացած և անատամնաման որդան։ Աստղիչը գանգատում է միշտ փոշոտվելու, թե որդին ատամն ավելի չանելն է չի ատվարում. որդին էլ գանգատում է հար մատ, թե աստղիչը նրանց փոշոտվելու է անարդար, և մի օր էլ ասում է.

— Աստղիչը քեզ էշ կոչեց։

— Ինչպես թե։

— Աստղիչը ասաց. «Էշ ապա, մարդ եղիր, մարդ եղիր հարդ պես էշ մի լինիր»։

Փոշոտն բարկացած կանչում է աստղչին և բացատրելուն է պահանջում։ Աստղիչն ասում է.

— Ես ես քեզ չեմ ասում, որ որդիդ ոչինչ չգիտե, ոչինչ չի հասկանում. ես ասել եմ. «Էշ ապա, մարդ եղիր, մարդ եղիր հարդ պես. — էշ մի լինիր»։

2. Մեծահարուստ մի իշխան, ինչ որ հանցանքի համար, կա-խաղան է պատապարտում։ Իշխանը ազիատպրով դիմում է կալ-ավոր և խնդրում է նրան։ Կալարը մերժում է և ազիատպրին տակ դրում.

— Կախել, պետք չէ նրան։

Երբ կալաբ անհնարապանը հալածում է իշխանին այս վճիռը, իշխանը հատահատված, խոստանում է մի միլիոն պարգևել նրան, որ վճիռը կիսախել։

Անհնարապանը հանձն է առնում փոխել կալաբարանի վճիռը և «պետք չէ» բառի մեջ մի կետ է դնում, լինում է՝

— Կախել պետք չէ. նրան։

Անպրատիտ կալարը կիսատրել չէր իմանում*։

Դատաբերն հալածեց Ալեքսանդրի մի հատվածը (Մատթ. ԻԵ 21), որ հետևյալն է.

---

* Լսել եմ, թե վատիկանի ճակատամարտում Նապոլեոնի պարտությունը և նրա կայսրության կործանումը նույնպես մի ատորակնի պատճառով է եղել։

Ավելիւ ծառայ բարի և հաւատարիմ։

Այս հատվածը միշտ էլ կարդում և հասկանում էին՝ «Աղնիւ և բարի և հաւատարիմ ծառայ», ավելիւ բառը առնելով իբր ածական ծառայ բառիւ։ Սակայն հունարեն բնագրի համեմատությունը ցույց տվեց, թե բառն է ավելի՛ւ, հունարեն εὖγε, որ նշանակում է «կեցցե՛ս», bravo, մալադեց, մա՛շալլահ», որ է ձայնարկություն և ոչ թե ածական։ Պետք է ստորակետով բաժանել։

ԳԼՈՒԽ ԺԷ

ՀԱՄԱՄԱՍՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հները թղթի խնայողության համար ոչ միայն սիրում էին հաճախ համատառագրություններ դործածել, ոչ միայն ա ձայնավորը սպում էին բառերի միջից կամ միայն մի շեշտով նշանակում, այլև հնարել էին ամբողջ բառերի համար նշանագրեր, որոնցից մի քանիսը շատ ուշ ժամանակ դեռ շարունակում էին իրենց գոյությունը։ Բայց քանի թղթի արտյունաբերությունը զարդացավ, այդ բաները վերացան։ Եվ այսօր անընդունելի են հների համար շատ սովորական համատառագրությունները։ Համատառագրությունները գործածվում են այսօր բառարաններում, որոշ դիտական առումնասիրություններում և նման դրքերի մեջ, և այն՝ ոչ թե թղթի խնայողության համար, այլ ոչքի, որպեսզի հիմնական բառը ավելի յայտնի լինի։ Այսպես, օրինակ, երբ բառարանում առոնում ենք՝

հաց պ.
բարի, ած.
ուսել, բ.

այսինքն «հայց», դոյական, «բարի», ածական, «ուտել», բայ և այլն, դա շատ լավ և ընդունելի ձև է։ Բայց երբ, օրինակ, մի հատարակ տեղագրության մեջ կարդում ենք՝

«Ինալի արևմուտք հետևյալ լշրը. Սողանլու լ-ին միացած են Աղմկրեք... և վավուն լշ-ները։ Այս լշ-ները ծածկտուլտ ծըզված են» *(Առրպետ, Ծորոխի ուտատները, Վիեննա, 1929, էջ 71)։*

Մի քիչ հետո՝

«Ուրդ առ. ձախից ընդունում է Ջանգալար առ-ը... Կալա առ-ը, որ իջնում է Ուփ լ-ից» *(Անդ, էջ 83)։*

Սա ոչ միայն լուանդարում է այլագ ընթերցումը, այլև հաճախ ընթերցողը չի էլ հասկանում, թե ինչ է նշանակում լշ-լշ, առ-առ, ձևերը։ Գանի հոգի կարող է գուշակել, թե այս լշ նշանակում է լեռնաշղթա, առ՝ առու, իսկ լ երևի՝ լեռ, երբ մանավանդ որևէ տեղ ծանոթագրությամբ նշանակված չէ դրանց բացատրությունը։

Յավալի է, որ այսպիսի մի անհեթեթ բան կատարված է Մխիթարյանների պատվական տպարանում, ուր մինչև անգամ և վանական դրչությունը գոյություն չունի։

Հասարակ կյանքի մեջ ընդունված են միայն որոշ համառոտագրություններ, որոնց մի համառոտ ցանկը տալիս ենք ստորև.

Ա

աւ.	— աւազ
արժ.	— արժանապատիւ
աշխ.	— աշխարհարար
ապր.	— ապրիլ
աղգ.	— ազգային
արք.	— արքեպիսկոպոս

Բ

բշ.	— երկոշաբթի
Բ. Դառ.	— Բարձրագոյն դպրոց
բժ.	— բժիշկ
բն.	— բնակիչ

Գ

Գր.	— Գրիգոր
գշ.	— երեքշաբթի
գ.	— գիւղ
գ.	— գետ
գրծ.	— գործնական
գրբ.	— գրաբար
գլ.	— գլուխ

Դ

դշ.	— չորեքշաբթի
դկ.	— դուքսոր
դեկ. / դեկտ	— դեկտեմբեր

Ե

եշ.	— հինգշաբթի
եպս.	— եպիսկոպոս
եպ.	— եպարքոս
ըօր.	— զօրավար
եկեղ.	— եկեղեցական
եգր.	— եգրակր
եր.	— երեկոյ

Է

է	— Աստուած
էֆ.	— էֆէնդի

Ը

ընդ.	— ընդարձակ
ընկ.	— ընկեր

Թ

թգ.	— թուղաւոր
թ.	— թիւ, թուական

Ժ

ժ. — ժամ

Լ

լ — լեռ

Ծ

ծ. — ծով
ծ. — ծայրագոյն
ծան. | ծ. — ծանոթություն
ծնն. — ծննդյան

Հ

հմ. — համատոտ
հակ. | հակառ. — հակառակը
հ. — հայր
հ. — հարց

Մ

մԼԺ. — մեծապատիվ
մրտ. — մարտ
մլ. — մալիս

Ն

նոյ. — նոյեմբեր
նշ. — նշանակում է
նշ. — նշանաւոր

Ո

որ. — որբաթի
ո. — որպէս

Ս

սամ. — սամոթլեան
սաս — սասունցի
սաս. — սասունական
սաս. — սասնոյ արքայ
սր.[1] — սրբոյն

Տ

տիկ. — տիկնոջ
տիկ. | տիկն. — տիկնայն
տոհ. — տոհմական
տր. — տարի

Ք

քշխ. — քշխանան

Ֆ

ֆամբ. — ֆամբայիր

Կ

կիր. — կիրակի
կիմ. | կիմտ. — կիմտական
կրոն. — կրոնական
կմ. — կամ

Զ

Զ. — ձեռագիր
ՁՁ. — ձեռագրեր

Յ

Յհ. | Յոհ. — Յովհաննէս
յնվ. — յունվար
յուն. — յունիս
յլ. — յուլիս

Շ

շբ. — շաբաթ
շնորհ. — շնորհանակ

Պ

պտմ. — պատմութիւն
պատ — պատուելի
պատ. — պատուական
պատ. — պատրիարք
պր.[1] — պարոն

[1] Հոդնակիում գրվում է պր. պր. (պարոններ կամ պարոնայք), ընկ. ընկ. (ընկերներ) և այլն։ Նիժադեի է այս ձևերը կարդալ «պարոն պարոն» կամ «ընկեր ընկեր»։

պրնք. — պարոնայք
պետ. — պետական
պրոֆ. — պրոֆեսոր
պատ. — պատասխան

Ս

Ստ. — Ստեփան
ս. } — սուրբ
սր. }
սրբ. — սրբազան
սլթ. — սուլթան
սեպ(տ). — սեպտեմբեր

Տ

Տ. — Տէր
տիկ. — տիկին
տես. — տեսական

Փ

փեսար. — Փեսրվար

Օ

օր. — օրհորդ
օգ. } — օգոստոս
օգոստ. }

Վ

վ. } — վարդապետ
վրդ. }
վսեմ. — վսեմաշուք, վսեմապատիւ
վ. — վայրկեան
վեհ. — վեհափառ

Ր

ր. — րոպէ

Ք

քհ. — քահանայ
քղ. — քաղաք
քեր. — քերականութիւն
քղ. — քաղաքական

Անձնական անունները համառոտագրութեան ժամանակ պահում են միայն նախատառը. ինչպես՝ Գ. Արծրունի, Հ. Աճառյան, Պ. Դուրյան և այլն։ Թէև անգամ պատահում է անունը համառոտելու ժամանակ պահել երկու կամ երեք տառ. ինչպես՝ Գր=Գրիգոր, Ստ.=Ստեփան, Հր=Հրաչեա, Աշ.=Աշոտ։

Ավելի քիչ դեպքեր կան, երբ անունից պահեն երեք տառ. ինչպես՝ Աբշ. = Աբշալիր: — Ջորս տառով՝ Ցովհ. = Ցովհաննես (Հովհ. = Հովհաննես):

Մեր մեջ սովորական է դնել միայն անուն և ազգանուն, առաջինը համառոտագրութեամբ, երկրորդը՝ ամբողջութեամբ։ Ռուսա-

կան ուսումնասիրելու պահանջում է դնել անվան և հայրանվան սկզբնատառերը, որին սկսել են հետևել նաև Կովկասի հայերը։ Բայց վաղուց ի վեր արևմտահայոց մեջ էլ ուսումնասիրելն կար դնել ազգանունից առաջ երկաք սկզբնատառ. այսպես՝ Ս. Պ. Պ. Փափազեանց (Սահակեան Պետրոս Պողոս Փափազեանց, Բնալինի վերաժողովի հայ պատմիրատիպչեան թարգմանչաց). Զ. Տ. Ս. Փափազեան (Հզիմնական հայ-անգլ. բառարանի, տպ. Պոլիս, 1905)։

* * *

Այս պլսեցի վերջացնելս համար մնում է մեզ խոսել վերնագրերի և խորագրերի մասին։

Ընդհանուր ընդունուած ուսումնական համաձայն, գլուխների խորագիրը և պատճենների վերնագրերը միջակետ կամ վերջակետ չեն առնում. օրինակ.

Քննական
Քերականութիւն
աշխարհաբար
կամ
Արդի հայերէն լեզուի
հանդերձ
ներածութեամբ և յաւելուածով
լօրինեաց
Հ. Աբէղեան վ. Աւետեանեան
ի Մխիթ. ուխտէն
Վիեննա
Մխիթարեան տպարան
1866. ԻՑԺԲ.

Սրանից 68 տարի հետո, Փարիզում տպուած մի ֆրանսերէն գիտական գրքի խորագիրը՝ բազմաթիւ տիտղոսներով, բայց և ոչ մի միջակետ կամ վերջակետ.

A. Meillet
membre de l'Institut
professeur au collège de France
Directeur d'études à l'école des hautes études
Introduction à l'étude comparative
des

Langues Indo-Européennes
Septième édition refondue
Librairie Hachette
79, Boulevard Saint-Germain, Paris
1934

Ահա և մի անգլիական հրատարակութիւն Քեմբրիջի համալսարանից, նոյնպես առանց կետերի.

Memorial edition
Greek lexicon
of the
Roman and Bysantine
Periods
(From B. C. 146 to A. D. 1100)
By E. A. Sophocles
Late University Professor of Ancient, Byzantine, and Modern Greek
in Harvard University
Cambridge
Harvard University Press
London: Humphrey Milford
Oxford University Press
1914

Բոլորի մեջ էլ կետեր միայն կան համառոտագրութիւնների համար և բառերի նեղքին բաժանման համար։

Գերմանացիք սակայն սիրում են դնել գրքերի խորագրում տեղ-տեղ կետեր (որ նրանց վերջակետն է).

Armenische
Grammatik
von
H. Hübschmann.
I. Theil.
Armenische Etymologie.
Leipzig
Druck und Verlag von Breitkopf u. Härtel.
1897.

Գլուխների վերնագրերը նոյնպես պետք չունեն կետագրութիւն. բայց այստեղ սկսում է կամայականութիւնը։ Օրինակ, Մե-

լեի վերապրել աշխատության մեջ, պլոխների խոշոր վերնագրերը դեռ չեն, իսկ մանր վերնագրերը անհետ։ Ալսպես, էջ 82։

Chapitre III

Phonetique

I.—Les Phonèmes.

1. Occlusives et sifflantes

Occlusives.

Այս կետում էլ վերամոնոգիք կետադրությունը հասցրել են ծայրահեղության։

Մեզ համար ամենից կարևոր է վերնագրերի և խորագրերի բառերի խմբագավորման և անջատման հարցը։ Բառերը պետք է դասավորել այնպես, որ լուրջանչյուր տող կազմի մի միավորյան և հաջորդ տողի հետ անմիջական կապ չունենա։ Հակառակը շատ անախորժ է և կարող է նաև նսեմացնել ոեսել իմաստ տալ։ Օրինակ, 1884 թվականին Թիֆլիսում տպված մի գրքի խորագիրն է՝

Փալտաշէն խրճիթից

մինչև

Սպիտակ տունը

Այս դասավորությունը շատ ճիշտ է, ինչպես նաև նախկին վերնագրերի և խորագրերի դասավորությունը։ Այժմ մեզ մոտ սակայն սովորույթ չեն լինում այս կերպին. օրինակ, 1937 թվականին Երևանում տպված մի գրքի խորագիրն է՝

Գ. Հովհան

կյանքը փակ

նամականեում

Այս դասավորությունը շատ անճիշտ է. փակ բառը պատկանում է նամականուն, ուստի անկարելի է բաժանել նրանից և կցել կյանքին. ճիշտը պիտի լիներ՝

կյանքը

փակ նամականեում

Ինչպես ներկա ձևով, կարելի է կարծել, թե կյանքն է փակ, որ պահված է նամականեում։

«Սովետական Հայաստան» թերթում, Երևան, 1945 թ., № 146, հուլիս 21, էջ 4, սյունակ 4—5՝

Օտարերկրյա թղթակիցները Հայաստանում

տիրող դրության մասին

Հասկացվում է, որ Հունաստանում գտնված օտար թղթակից-ները իրոսում են տիրող դրությանն մասին։ Բայց գրողի նպատակը այդ չէ, այլ

Օտարերկրյա թղթակիցները
Հունաստանում տիրող դրության մասին
Ուրիշ օրինակներ.
Հալֆիլհարմոնիայի արտիստները բերքահավաքի
օրերին

(Սովետական Հայաստան, 1945,
հուլիս 25, էջ 1)

ՍՍՀՄ մեծ թատրոնի մենապարուհի Սուլամիֆ
Մեսսերերը Երևանում

(Անդ)

Բամբակի դաշտերը լավ
բերք են իրոստանում

(Անդ, հուլիս 28, էջ 3)

Գյուղսովետի նախագա՞հ, թե հրշեջ
իմբի պետ

(Անդ, օգոստոսի 1, էջ բ)

Հանքահատ Կոխանովի աչքի
ընկնող հաջողությունը

(Անդ, 1947, դեկտեմբեր 9,
№ 286, էջ ա, սյունակ 6-րդ)

Մրցանակները հաղթող
հրձիգներին

(Անդ, 1950 թ., 25 օգոստոսի, № 201)

Սովետական մարդիկ անձնվիրաբար աշխատում են ի
բարօրություն հայրենիքի

(Անդ, 1950 թ. օգոստոսի 26,
№ 202, էջ ա)։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՁԱՅՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ ԺԸ

ՁԱՅՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՁԱՅՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

Երբ մի լեզվի երկու հաջորդական շրջաններ (հին և նոր) համեմատենք իրար հետ, շատ անգամ տեսնում ենք, որ միևնույն բառի այս կամ այն հնչյունը փոխանակված է մի ուրիշով. ալսպես՝ հին հայերենի երբ, արտասանք բառերը հիմա հնչում ենք յերփ, արցունք, որոնց մեջ ե պարձած է յե, բ պարձած փ, ա ջնջված, ճ ավելացված, սա պարձաց ց: Նույնը կգտնենք նաև, երբ միևնույն լեզվի երկու ժամանակակից բարբառներ համեմատենք իրար հետ. օրինակ՝ հաց և վանի բարբառով խաց, որի մեջ հ պարձել է խ։

Ալսպիսի տարբերութլուններըկոչվում են ձայնական փոփոխութլուններ կամ մեկ բառով՝ ձայնափոխութլուններ: Սրանք են, որ դարերի ընթացքում գործելով զանազան երկրների մեջ ու զանազան լեզուների վրա, առաջացրել են լեզուների մեջ ալնպիսի փոփոխութլուններ, որ իսպառ անճանաչելի են դարձրել։

Ձայնափոխութլունները բաժանվում են երեք տեսակի. 1. առաջատովական, 2. անմիջական, 3. նմանողական։ Առաջատովական ձայնափոխութլունները արդլունք են բազմաթիվ աննկատելի հաջորդական փոփոխութլունների, որոնք դարեր ամբողջ գործելուց հետո, հասել են մի որևէ վախճանական ձևի (վախճանական անշուշտ տրված բոլորում, որովհետև լեզվի բարեշրջութլան մեջ ոչինչ չկա վախճանական և նույն ձևափոխութլունները պիտի շարունակեն իրենց ընթացքը ապագալին էլ)։ Ալսպես, երբ լատիներեն centum> *ֆրանսերեն* cent *բառի մեջ* k *հնչյունը դարձել է* s, *անցել է գոնե*

հետևյալ շրջաններից. k > ky > ty > tsy > ts > s։ Նույնպես երբ լատիներեն cantare ֆրանսերեն chanter բառի մեջ k հնչյունը դարձել է s, անցել է հետևյալ շրջաններից. k > ky > ty > čy > č > s։

Անմիջական փոխհատվությունները ստորին հաջորդական շրջաններ չունեն և փոխանցումը կատարվում է անմիջապես ու բացահայտ։ Մասնավոր դարձվածքներ հանդիպածական, անմիջական են։ Այսպես, երբ ուսուցիչ բառը արտասանում են ուշուչիչ, ուսուչիչ, կամ ուշուչիչ, փոխհատվությունը մասնակիական է և նախնական ձևերի պատասխանությունն ենթադրելու պետք չկա։ Այսպես՝ երբ պրուսերը այլևս դադարել է վանդի բարբառում այլ, չկա միջանկյալ մի ուրիշ ձև. մասսկին դուրս են տալել երկուսն էլ մի ձևը, երկուսն էլ մյուս ձևը, մինչև որ ժամանակը ընդհանրացրել է այլ ձևը։

Նույն կարգին են պատկանում նաև նմանողական ձայնափոխությունները, որոնք առաջանում են իմաստով իրար հետ կապակցվելուն (ասոցիացիա) անցնցող երկու տարբեր բառերի շփումների միջև՝ ազդող և երկար. երկուսն էլ միատոնները են և երկուսն էլ ձևով որոշ նմանություն ունեն։ Վերջերս բարբառում այդ նմանությունը ավելի մեծ է, քանի որ հնչվում են ազդող, արկայր։ Նրանք, որ սովորում են գրական լեզուն, այնպես ձևը դարձնում են երկայր, բայց նախնական շփումից, երկրորդն էլ դարձնում են երդայր։ Բավանչության դադարեցնում ենք նախընթաց «նախիրը առն առնելու ժամանակը», որի նմանությամբ որոշվում «հորթերը առն առնելու ժամանակը», այլապես՝ հորթաբողոք։

Այս կարգի ձայնափոխությունները ավելի սովորական են քերականության մեջ. օրինակ՝ հին հայերեն այր բառի հոգնակի սեռականն է արանց, որի մեջ ն բնավոր է, քանի որ պատկանում է արան բառին (համմտ. գրբ. արամբ, սեռ. առն). կին բառի հոգնակի սեռական ձևն է կանանց, որ դարձվածական է նաև հնդկերի մեջ. բայց ավելի սովորական է կանանց, որի մեջ ն ավելորդ է և առաջացել է արանց բառի նմանողությամբ. արանց և կանանց դարձվածի հաճախակի գործածությունը պատճառ է դարձել այս ձայնափոխության։

Առաջավորական, անմիջական և նմանողական ձայնափոխությունների դանազանությունը կայանում է հետևյալ հանգամանքների մեջ.

ա. Առաջավորական ձայնափոխությունները արդյունք են դարերի պատասխանության տևական աշխատանքի, մինչդեռ մյուսները բոլորն արդյունք են, ինչպես ասացինք։

բ. Առաջատվական ձայնափոխութիւնները առաջանում են ձայնական գործարանների գործունեութեան փոփոխութեամբ և իբրև բնութեան գործ, բոլորովին անկախ են մարդկային կամքից. իսկ անմիջական և նմանողական ձայնափոխութիւնները առաջանում են հոգեբանական պատճառներից և մյուսների համեմատութեամբ կարող են կոչվել լեզվի սխալներ (lapsus linguae)։

դ. Առաջատվական ձայնափոխութիւնները լեզվի մեջ ընդհանուր երևութիներ են, որոնց հպատակվում են լեզվի միևնույն շըրջանի բոլոր բառերը առանց բացառութեան, իսկ անմիջական և նմանողական ձայնափոխութիւնները պատահական բնութիւ ունեն կամ մասնակի դեպքեր են, որոնց հպատակվում են այս կամ այն բառերը միայն։ Առաջինները բխում են մեկ ընդհանուր օրենքից, մյուսները չունեն այդպիսի օրենք և արդյունքը լինում է զանազան կամ բնավ. լատիներեն venenum «թոյն» տալիս է ֆրանսերեն vénin, իտալերեն veleno, պրովանսալ veren։

ե. Անմիջական և նմանողական ձայնափոխութիւնները լեզվի ձայնական դրութեան մեջ որևէ փոփոխութիւն չեն մտցնում. մի ձայն կորչում է կամ ավելանում, և կամ փոխանակվում է մի ուրիշով, բայց այդ բոլորը կատարվում են լեզվի արդեն ունեցած ձայների միջև և ոչ մի նոր ձայն չի պակասում կամ չի ավելանում լեզվի մեջ, ընդհակառակը, առաջատվական ձայնափոխութիւնների ժամանակ հենց ձայներն իրենք են փոխվում և վերածվում ուրիշ ձայների, որոնցից ոմանք նախորդների նուրբ զանազանութիւններն են թեթևաս, բայց ոմանք էլ բոլորովին նոր ձայներ են, որոնք կամաց-կամաց ձևանում են լեզվի մեջ. այսպես՝ գրաբար հաւք, Ալեքսանդր դառնալով հաֆք, Աղեքսանդր, առաջ է բերել ֆ, ղ ձայնները, որ առաջ գոյութիւն չունեին լեզվի մեջ։

Եթե ի մի հավաքենք վերոհիշյալ բոլոր տեսակի ձայնափոխութիւնները, կտեսնենք, որ դրանք պատկանում են ձայնի երանգին։ Բայց մենք տեսանք, որ ձայնի բարձրութիւնը, ուժգնութիւնը և տևողութիւնը նմանապես անփոփոխ չեն մնում, այլ ժամանակի ընթացքում կրում են զանազան փոփոխութիւններ։ Ուրեմն ձայնափոխութիւնները վերաբերում են ձայնի բոլոր չորս հատկութիւնից։ Եվ հաճախ շեշտն ու տևողութիւնը ավելի մեծ զանազանութիւն ունեն և իրենք են, որ որոշում են նրանցի փոփոխութիւնը։

Եթե վերլուծենք այս բոլոր տեսակի փոփոխութիւնները ըստ իրենց էութեան, կտեսնենք, որ նրանք լինում են.

1. ըստ տեղի. այն է հոդավորման կետի փոփոխութիւնը. օրինակ, հետնալեզվային մի ձայն դառնում է ծայրալեզվային

(k>t). կամ արտաշրթիկ պայթուցականների անկման մեջ, որով օրինակ պալատականը անցնում է շփականի (p>t). և կամ ալս երեք երևույթները միասին, ինչպես k>s։

2. բաց ժամանակի. ձայնի արտաբերության համար պահված շարժումը ավելի աշ կամ ավելի շատ է տևում, կամ վերջանում. բոլոր տեսակի ասիմիլյացիաները պատկանում են ալս կարգին։ Եվ կամ մեկ շարժումների տևողության է ձևափոխվում, առանց սինհրոնիզմը ալլայնելու. ալս կարգին են պատկանում տևողության փոփոխությունները, երկարում կամ պակաս։

3. բաց ուժի. ալն է մկանային կծկման ուժի փոփոխությունը. ալս կարգին են պատկանում բարձրության և ուժգնության փոփոխությունները։

Ակնհայտ է ասել, թե որևէ ձայնափոխության կարող է պատկանել միաժամանակ որևէ երկուսին։

Ձայնափոխությունները կարող են լինել անկախ (indépendant, spontané) կամ պայմանական (conditionné)։ Իսկապես խոսելով անկախ ձայնափոխություն չկա, որովհետև ամեն մի ձայն պետք է որ լինի շեշտված կամ անշեշտ, բառի սկզբում, միջում կամ վերջում, երկար կամ կարճ, թրթռուն կամ խուլ, առանձին կամ երկու ձայնավորի միջև, և այլն և այլն, և ալս բոլորը պալմաններ են, որոնցից էլ կախված է ձայնի ալս կամ ալն փոփոխությունը։ Ուստի հաճախ լեզվաբանները սահմանափակվով բառի իմաստը, պայմանական ասելով հասկանում են, երբ ձայնափոխությունը կատարվում է հաջորդ կամ նախորդ ձայնների ազդեցության, որի հակառակը լինում է անկախ։

Ալս բոլոր ձայնափոխությունները, որոնք օրինակներով հաստատված և փորձնական ճանապարհով ճշտված են, կոչվում են ձայնական օրենք (lolphonétique)։

Լեզվաբանությունը ձայնական օրենքների գիտությունն է։

Ձայնական օրենքներն ինքնին ապացույց չունեն. նրանք նման չեն ոչ երկրաչափության օրենքներին, ոչ էլ ֆիզիկալի կամ քիմիալի օրենքներին։ Երկրաչափության մեջ տեսությունները հավիտենական ճշմարտություններ են, ամենատեք նույնն են և դյուրավ ապացուցելի։ Օրինակ, եռանկյան 3 անկյունների գումարը հավասար է 2 ուղիղ անկյան, որ է 180° և ալս ալսպես է ամբողջ տիեզերքում. աստղերի, լուսնի կամ արեգակի վրա։ Եվ ալդ ապացուցելու համար բավական է խարսխի ուղիղ գիծը երկարել և անկյան ուղից եռանկյան մի կողին մի զուգահեռական քաշել։ Նոր կազմը-

ված 2 անկյուններին իրար հավասար են նախորդ երկու անկյուններին, որով մի ուղիղ գծի վրա ունենում ենք 180°, որ է 2 ուղիղ անկյուն։





Ֆիզիկոսը ու քիմիկոսը կարող են քաշվել իրենց աշխատանքը (լաբորատորիա) և ալնտեղ, իրենց դործիքների վրա, պետք եղած փորձերը կատարել։ Քիմիկոսը կարող է իր փորձանակին (éprouvette) դնել երկու չրածին և մի թթվածին և նրանց մխոցումից ստանալ ջուրը։

Բայց լեզվական օրենքները ոչ ալսպիսի ապացույցներ ունեն և ոչ էլ ալս կարգի փորձեր։ Ալստեղ մեր ապացույցներն են փաստերի դումարը։ Երբ ասում ենք թե հալերենում հնդեվրոպական նախալեզվի նախաձայն p տալիս է հ, օրինակ՝ pəter>հայր, այդ հաստատում է նրանով, որ դրա համար ունենք շուրջ 30 օրինակ։ Եվ մանավանդ չունենք օրինակ, որ ուրիշ բան ցույց տա։

Մեր երկրորդ ապացույցը ձայնական օրենքների դոլութլան, ինչպես և նրանց ճշտութլան և հաստատութլան՝ բարբառներն են։ Բոլոր բարբառները միատեսակ չեն, բայց ունեն իրենց հատուկ և իրենց մեջ հաստատուն ու միօրինակ ձայնական օրենքներ։

Օրինակ առնենք Վանի բարբառը։

Ալստեղ օրենք է, որ հ դառնա խ. օրինակ՝ հաց>խաց. և ալդ ալդպես է լեզվի բոլոր բառերի համար։

Լեզվաբանութլան ոչ մասնագետ մարդիկ ծաղրով կամ ծիծաղով են վերաբերվում մեղ, երբ ասում ենք, թե p դառնում է հ, o դառնում է ու, ē դառնում է ի և ալլն., մանավանդ (ինչ որ միշտ պատահում է), երբ միևնույն բառի մեջ մի քանի օրենքներ թվում ենք իրար ետևից, բայց ալդ հալտնի կերպով տեսնում ենք ամեն րոպե, երբ քննութլան առնենք որևէ բարբառ։

Դարձյալ օրինակ առնենք Վանի բարբառից մի բառ։

Դրաբար հիւսն դառնում է Վանի բարբառում խուս։—Սա հո անհակառակելի ճշմարտութլուն է։

Եթե ալս, ուրեմն դրաբար հ դառնում է խ, իւ դառնում է ու բառավերջի և հանդը ընկնում կամ կորչում է։

Ահա մի փոքրիկ բառ, որ բաղկացած է 4 ձայնից և ունի 3 ձայնական օրենք. միջին ա մնում է անփոփոխ, բայց դա էլ կապված է իրեն հաջորդ մի օրենքի, որովհետև անփոփոխ մնալն էլ օրենք է։

Ձայն ձայնական օրենքն էլ կարելի է հաստատել բազմաթիվ այլ օրինակներով, որ ներկայացնում է նույն բարբառը։

Հ>ի ձայնափոխությունը տալին անառանք. ժողովրդի մեջ տարածված է կատակով ասել.

Իմ խոր խորհրդին խինդ խոսք խոստավ «Իմ հոր հարսանիքին հինգ հավ սատկեց», որ ցույց է տալիս, թե ժողովուրդն էլ դիտի ի-ով խոսելու ալս հատկությունը։

Ալանյանն իր «Ինձնական բերդախոսությունն» մեջ պատմում է, թե Ախոթարիալի կայսրը Վիճակախոսում ցանկացել էր անանուն ջոգաչեցի հալ վանահայրներին կանչում են երկու հալ կայսրը իջնդրում է, որ նրանք խոսան իրենց լեզվով։ Ջուղալեցին սատմ է իր բնակարջ.

Աջթա Աստչո, իլոնդքյար իրտամեց խաչերեն խոսանդ։

Մի նախադասությունն, որ բոլոր բառերը սկսում են ի ձայնով, որ 3 բառի մեջ բնական է, 3 բառի մեջ ծանրում է ի-ից։

ի>ու ձայնափոխության համար վանի բարբառից կարող ենք հիշել, իրր օրինակ՝

արիւն>արուն, հնդիւն>խիտուն, սիւն>սուն, շիւղ>շուղ, հիւր>հուր և այլն։

Ձայնական օրենքների մեջ ինչ որ ամենից կարևոր է, դա է նրանց բացառությունը և համաչափությունը։ Միևնույն հասարակության մեջ, միևնույն ձայնը, միևնույն դիրքի մեջ, առանց բացառության, ենթարկվում է միշտ միևնույն ձայնափոխության։ Այսպես. եթե Դարբարոյի բարբառում հնդիւնն բառերի սկզբում դառնում է ձայնը դառնում է պ, այդպես են լինում բոլոր բառերը. առանց բացառության։

Այս է ձայնական օրենքների բացարձակությունը։

Սրա պատճառն այն է, որ նույն շրջանի բոլոր մարդկանց մոտ դանվելով նույն պայմանների մեջ, հավասարապես պիտի ենթարկվեին նույն ձևափոխության և նույն շրջանի բոլոր մանուկներն էլ պիտի սովորեին նույն ձևով։ Սրա հետևանքն այն է, որ միևնույն ձայնից չի կարող առաջանալ երկու տարբեր բան, միևնույն ձայնը չի կարող ենթարկվել երկու տարբեր ձայնափոխության։

Երև մի որևիցե ձայն ենթարկվում է որոշ ձայնական օրենքի, նույն միջոցին, նույն ձայնին համադիր նույն ձայներն էլ պիտի ենթարկվեն նման ձայնական օրենքների: *Ալապես, եթե Ղարաբաղում հայերեն բառերի նախաձայն բ-ն դարձել է պ, որովհետև բ պատկանում է թրթռուն պալթուցիկների կարգին, ուստի բոլոր թրթռուն պալթուցիկներն էլ պիտի կրեն նման փոփոխություն, այն է գ պիտի դառնա կ, դ>տ, ձ>ծ, ջ>ճ,*

Այս է ձայնական օրենքների համապատասխանությունը:

Սրա պատճառն այն է, որ եթե ձայնի արտադրիչ գործարանը փոխված է, փոխված պիտի լինի և ամբողջ նրա գործունեության սիստեմը և ոչ թե այդ գործունեության այս կամ այն մասը միայն:

Ձայնական օրենքների բացարձակության, կամ ինչպես խիստ բառով ասում են լեզվաբանները, նրանց կատարյալ է այն, որ օրենքը գործում է նույնիսկ հակառակ հանգամանքներում. օրինակ, հայերենի պագ, պահք և պուկ բառերը ձայնական օրենքների ազդեցությամբ Սվեդիայի (Մուսա լեռան) բարբառում հավասարապես դառնում են բիւք (բյուք), այնպես որ Սվեդիայի բարբառում բիւք նշանակում է «1. համբույր. 2. պահք, պաս. 3. սոխի ծիլ կամ գոխ»: Անպատահար երևույթ է անշուշտ այն, որ մի լեզվի մեջ միևնույն բառը երեք այսքան տարբեր իմաստներ ունենա. բայց ձայնական օրենքները բացարձակ են և կույր, և կարիք չի զգացվել այդ անպատահությունը վերացնելու համար ձայնական օրենքները ևդծել:

Ավելի տարօրինակ է այն երևույթը, երբ բառերն ստանում են բոլորովին տարբեր իմաստ:

Որովհետև լսարաններում այ պատնում է է, ուստի վայր պատնում է վեր «ցած, վար». բայց, այսպիսով վեր շփոթվում է վեր բառի հետ, որ բոլորովին հակառակ իմաստ ունի: Արևմտյան հայը ծիծաղով է լսում արևանցու խոսակցությունը՝ քարը վեր ընկավ, որ հասկանում է «դեպի վեր! ընկավ»: Սակայն ձայնական օրենքը կույր է. նա չի ազդվում այդպիսի դժվարություններից կամ անպատահություններից և ավելի լավ է համարում վերացնել խանգարիչ հանգամանքը, քան շեղվել օրենքից: Այսպես, վերի դեպքում արևանցին վեր ասելու փոխարեն ասում է վերև (համանոգությամբ ներքև բառի) և ամեն ինչ հարթվում է: Ղարաբաղի բարբառում ու պատնում է ո, ուստի շուք լինում է շօք «ստվեր, հով տեղ». բայց այսպիսով բառը նույնանում է շոգ «տաք» բառի հետ, որ բոլորո-

վին հակառակն է։ Ալդ պարապալին բարբառը ավելի լավ է համապատասխանում ջնջել շող խոնդոթիչ բառը և իր ձայնական օրենքը պահել է անապատ։

Չելխանի բարբառում ջնջված է մեր ամենատարածական հայր բառը և նրա տեղ դրված է պապ>բօբ կամ նախնիկ թուրքերեն դեղն բառը։ Ինչա՞։ Չելխանի բարբառի ձայնական օրենքներով այ դառնում է m, իսկ յ դառնում է յ. ըստ ալդ հայր պիտի տար Չելխանի բարբառով *himy. բայց ալս ձևի տակ բառը նշանակում է հայ (ազգը). օրինակ՝ ես հայր եմ և ես հայ եմ երկու դեպքում էլ պիտի լինեին իս հիմյ իմ։ Ալս շփոթմունքից ազատվելու համար բարբառը ի՞նչ է արել. ջնջել է կամ փոխել ձայնական օրենքը. ոչ. ջնջել է հայր բառը և նրա տեղը դրել է պապ կամ թուրքերեն դեղն, քանի որ անհնարին էր ջնջել հայ ազգային անունը։

Ավելի դարմանալի է Ավգիալի բարբառը. ալս բարբառում ա դառնում է ու. ինչպես հաց>հուց, մարդ>մուդ. ըստ ալդմ բաց „ouvert, բացված, ոչ փակ բառն էլ դառնում է բ'ուց. բայց արտահայտանախմունքը վերացնելու համար համանուն „vulva" բառը հանկարծ լեզվից և նրա տեղ դրին վըռ բառը, որի իմաստն էլ փոխանցին և դրին «իսկական անդամ». բայց ալս անդամ էլ դրվում նաև ոռ բառից, ուստի պակասը լրացնելու համար՝ դրին իդիվ «հնաոճ», նստատեղիա, բայց ալս անդամ էլ դրվեցին նաև նախապատմունքից, ուստի ալս անդն էլ դրին իդը դնի «լետի դին»։ Ալսպես 4 հալերեն բառ քանդվեց կամ փոխվեց՝ ձայնական օրենքը անշարժ պահելու համար։

Իրավիպլան լեզուների մեջ բացառական նշանն է a, որ միանալով արմատի վերջին ձայնավորի հետ դառնում է ā. բայց հաստատական ձևն էլ է a, որով հաստատական և բացառական բոլորովին նույնանում են իրար հետ. օրինակ՝ rāka «գալուստ, a coming" նույն է raka «չգալը, առանց գալու. not or without coming" բառի հետ. և լեզուն ստանում է ալս բացարձակ հակասությունը՝ չշեղվելու համար ձայնական կարգ օրենքներից (Coldwell, Comp. gram. drav, 473)։

Ալս բոլորից հետևում է, որ ձայնական օրենքը անկախ է բառի իմաստից։

Հին լեզուներից նոր լեզուներին և նոր լեզուներից բարբառներին անցնելու ժամանակ չափազանց շատ են ալն դեպքերը, երբ ձայնական օրենքներն ստեղծում են այնպիսի անկանոնություններ,

որոնց հետ տրամաբանությունը երբեք չպիտի հաշտվեր։ Օրենքները մեր շրջապատից առնելու համար հիշենք Ագուլիսի, Զելթունի և Սվեդիալի բարբառները։ Ըստ ձայնական օրենքների, վերջավանկի ա ձայնը դառնում է առաջին երկուսի մեջ օ, վերջինի մեջ ու. այսպես՝ հաց Ագուլիսի և Զելթունի բարբառում՝ հօց, Սվեդիալի բարբառում՝ հուց։ Իայց եթե ա ձայնը վերջին վանկում չէ, մնում է անփոփոխ. ըստ այմ միևնույն բառերը սեռական հոլովում տալիս են Ագուլիսի բարբառում հացի, Զելթունի բարբառում՝ հացը՝, Սվեդիալի բարբառում՝ հացէն, հացը՛։ Տրամաբանության համար բացարձակապես անմիտ և անկանոն է ունենալ ուղղական հօց, սեռական հացի, բայց ձայնական օրենքները կույր են և դործադրվում են ճշտիվ ուր որ պետք են։

Սրանցից տարբեր չեն նաև գրաբարի սղման և ամփոփման օրենքները, որով մի կողմից ունենք ուղղական ջուր, լոյս, քիթ, սնձեակ, մյուս կողմից սեռական ջրոյ, լուսոյ, քթի, սնձեկի և այլն։

Այն լեզուների մեջ, ուր բառի վերջին վանկերն ու վերջին բաղաձայնները ջնջվում են, բնականաբար շուտով առաջանում են միավանկ բառեր, որոնք ստանում են իրար նման ձևեր. այսպես են, օրինակ, ֆրանսերենը, անգլերենը, քրդերենը։ Օրինակ, ֆրանսերեն san ձայնը նշանակում է «հարյուր» (cent, լտ. centum), «արյուն» (sang լտ. san. guis), «առանց» (sans), «իմաստ, նշանակություն» (sens լտ. sensus), կամ ver ձայնը նշանակում է «որդ» (ver), «կանաչ» (vert լտ. viridis), «դեպի» (vers), «բաժակ, ապակի» (verre—լտ. vitrum) և այլն։ Սա անշուշտ լեզվի համար շատ անախորժ մի երևույթ է և պատճառ շփոթության, բայց ձայնական օրենքն իր բացարձակությամբ չի խրտչում սրանից և շարունակում է իր գործը։

Երբ բառերը կրճատվելով-կրճատվելով այնքան փոքրանան, որ այլևս կորչելու վտանգին ենթարկվեն, ձայնական օրենքը նորից չի փոխում իր ընթացքը. լեզուն գտնում է միջոց վտանգը դարմանելու. ավելացնում է նրանց վրա նոր մասնիկներ, որով միավանկները նորից երկարում են և կորչելու կամ անտեսանելի դառնալու վտանգից ազատվում են։

Սակայն երբ ասում ենք, թե օրենքը բացարձակ է և չունի բացառություն, պետք է ճշտել նաև օրենքի բոլոր պայմանները։ Այսպես, բավական չէ ասել միայն, թե հնդեվրոպական նախալեզվի e-ն հայերենի մեջ դառնում է ե, որովհետև նույն ձայնը եթե

պոնիլ անպատճառ առաջ, այն ժամանակ պառնում է ի. Բալկան չէ ասել, թե պրեպարի դ-ն պառնում է նոր բառերի մեջ ու, որովհետև լ-ից հետո պառնում է միշտ լ։ Բալկան չէ ասել միայն, թե հալիլինի ա-ն պառնում է պակիլենում ե, որովհետև նեմ ա ձայնը պառնի վերջին վանկից առաջ, ընդհակառակն և լ կամ ղ ձայնների մոտ, ալդ փոփոխությունն չի նկատվում։

Վերի օրինակների մեջ երկրորդ օրենքը առերևույթ առաջինին հակառակ է, բայց իրապես ոչ, որովհետև ինքն առանձին կարում է մի նոր օրենք։ Նրանք, որոնք չէին կարողանում հրաժարել ալս երկրորդական օրենքներից և պիտանին միայն առաջիններն համարում էին, թե երկրորդ կարգի բառերը առաջինների բացառություններն են, և որանից էլ ալն ոչ պիտանի բացատրություն, թե «չկա օրենք առանց բացառության։ Ալդի լեզվաբանությունը չի ընդունում օրենք հանդերձ բացառությամբ, որովհետև «որ որ բացառություն կա, ալնտեղ օրենք չկա, այլ քմահաճույք։ «Ինչպանիկ կամայական և պատահական շեղումներ, որոնք կարելի չէ համակրելի, նշանակում է էապես, թե առանձնահրությունն առարկան, այն է լեզուն, պիտանի մատչելի չէ» (Leskien, 1876)։ «Ամեն ձայնական փոփոխություն, իրրև մեքենաբար առաջացած բան, կատարվում է համաձայն օրենքների՝ առանց բացառության, ալսինքն թե ձայնափոխության ուղղությունը միշտ միևնույնն է՝ միևնույն լեզվական հասարակության բոլոր անդամների մեջ» (Osthoff և Brugmann, 1878)։ Իսկ եթե գտնվեն իրոք ալնպիսի ձևեր, որոնք համապատասխան չեն մեր ունեցած օրենքին, պետք է իմանանք, որ օրենքը լրիվ չէ, և գտնվում ենք մենք մի ալնպիսի երկրորդական, երրորդական կամ չորրորդական օրենքի առաջ, որ մեզ պետ ծանոթ չէ։ Մեր ծանոթ չլինելը մի առարկալի կամ մի երևույթի, ավելի ևս մի օրենքի, չի նշանակում, թե նա չկա։ Հալկ նահապետը ռադիոլի ինչ լինելը չգիտեր. մենք էլ նրանից 4 000 տարի հետո ճանաչելինք։

Ալսպես, օրինակ, Հաճինի ենթաբարբառում ր դառնում է յ. բացառությունն է միայն պարբէ>բախրէ «եզ» բառը։ Սակալն բացառությունը կվերանա, եթե նկատի առնենք նաև Զելթունի ենթաբարբառը, ուր նույն բառը հնչվում է բախռէ։ Սրանից հետևում է, որ կիլիկիալի բարբառում ալդ բառի ձևն էր պախռէ և որովհետև Հաճինում ռ դառնում է ր, ուստի պախռէ ձևն էլ պիտի տար բախրէ։

Դարձյալ հաճինի ենթաբարբառում հայերենի դ-ն պառնում է դ՛ և ոչ բնավ թ. բացառությունն է միայն թուիչ. սակայն բացառությունը կվերանա, երբ նկատենք, որ բառն ազդված է թուշ ձևից և նրա նմանությամբ դ՛ վերածած թ-ի։

Այս օրինակներից երևում է, որ օրենքն արձանագրելու ժամանակ պետք է ճշտել նրա բոլոր պայմանները և հիմնական օրենքի հետ պետք է գտնել ու դնել նաև մյուս երկրորդական օրենքները։ Այսպես, Ագուլիսի բարբառի մեջ ա>օ ձայնափոխության համար պետք է ասել, որ «եթե ա ձայնավորը շնշտյալ է և բառի վերջին վանկն է կազմում, դառնում է օ, միայն թե ընգալական մոտ լինում է ու, լ ձայնի մոտ օյ, իսկ ղ-ից առաջ անփոփոխ է մնում» և այլն։

Կարող է պատահել, որ երկրորդական օրենքները մի բառի մեջ մի քանիսը լինեն կամ լինի ձայների մի այնպիսի համախմբություն, որ ուրիշ դեպքում կարելի չէր ճարել. այս պարագային օրինակը կլինի միակ և կարելի չի լինի ճշտել օրենքը զանազան օրինակներով։ Բայց պետք չէ ասել այս պատճառով, թե նա օրենքի բացառությունն է։ Օրինակը տնս մի քիչ հետո։

«Շատ պիտի սխալվենք անշուշտ, եթե փորձեինք բացարձակ կանոններ գտնել լատիներեն բառերի ներկայացրած այն աստիճանի բարդ ձայնական բոլոր դեպքերի համար։ Կան մասնավոր պարագաներ, որոնց մեջ այնքան տարբեր պայմաններ են միացած լինում, որ այդ պայմանների տակ միայն մի բառ կարելի է գտնել» (Meillet, BSL, *19 (1916), № 63, էջ 184)։

Այս բոլորից հետևում է, որ ձայնական օրենքները անկախ չեն, այլ կապված որոշ հանգամանքների հետ, և առանց այդ հանգամանքների պարզաբանության, օրենքը ճշտված չէ։

Ձայնական օրենքների քննության ժամանակ պետք է մի կողմ դնել այնպիսի ձայնափոխությունները, որոնք բնախոսականից ավելի հոգեբանական են և կամ կամավոր և անհատական դրժողության արդյունք։ Այս կարգին են պատկանում գիտնականների ձեռքով կազմված նորակերտ բառերը, օտար լեզուներից վերցրած փոխառությունները, կամայական սղումներն ու կրճատումները, նմանողությամբ կամ ժողովրդական ստուգաբանությամբ առաջացած բառերը, վերջապես գրության նմանությունից առաջացած սխալ ձևերը, որոնք թյուրիմացությամբ մտել են լեզվի մեջ։ Սրանք պետք է ուսումնասիրենք առանձին գլխով։

Ձայնական օրինքները քննելու ժամանակ լավ կլինի, եթե ուշադրություն դարձվի ընդհանուր համապատասխանությունների երևան հանելու։ Իսկ ընդհանուր համապատասխանությունների երևան հանելով մի քանի ասելի մոտեցած կլինենք ստուգաբանչության օրենքի պատճառը բացատրելու։ Կարևոր չէ միայն երևույթները անչափաբար նկատել, օրինակ, ասել, թե p դառնում է ս, դ դառնում է տ և այլն, այլ պետք է նրանց ընդհանուր սկզբունքը բացատրել։ Ահագին՝ ասել, թե թրթռուններն դառնում են խուլ կամ ավելի ընախառնուրդն խոսելով թրթռան բաղաձայնների արտաբերության ժամանակ խոչընդոտ ավելի ուշ է դործանության դիմում քան ընդունը։ — Այս բացատրությունը դուցե ավելի մոտ է, բայց ավելի ընդհանուր է և բացատրիչ. նա ասելիս է իսկույն ձայնական երևույթի առաջացման պատճառը։

Լինում են դեպքեր, երբ ձայնական փոփոխությունները լրիվ համապատասխան չեն դրա պայմ. ասպես՝ հայերենում հնդեվրոպական նախալեզվի k, t դառնում են g, թ, իսկ p դառնում է հ։ Այս բանը համապատասխանության օրենքին հակառակ է. կամ հնդեվրոպական նախալեզվի p պիտի դառնար փ և կամ k, t պիտի դառնային հ-ի համապատասխան մի բան։ Սակայն անկանոնությունը առերևույթ է և առաջանում է ավելի քնական պատճառներից։ p ձայնի արտաբերության ուղղությունքներն են, որ դործողության ընթացքում կատարվում է ավելի թեթև, քան առամների և կատիկի շրջանում, ուստի ձայնափոխության առաջին հարվածը պիտի հասներ իհարկե թուլին, մինչդեռ ուժեղը կարող էր դեռ դիմադրել։ Այս պատճառով ահա հնդեվրոպական նախալեզվի p դարձել է (անցնելով ֆ-ից) հ, իսկ մյուսները մնացել են անվթար։ Միևնույն երևույթը տեսնում ենք նաև կելտականում, ուր հնդեվրոպական նախալեզվի p կորած է, իսկ k և t մնում են անփոփոխ (Vendryès, Mélanges Meillet, 117)։ Ինչ որ անկանոնությունն էր նկատվում, ձայնական օրենքների ավելի լավ քննությամբ բացատրվում է։

Ձայնական փոփոխությունները ավելի լավ բացատրելու և ըստ կարելվույն նրանց հիմնական պատճառը գտնելու համար կարևոր է միշտ երևան հանել ձայնափոխության ընթացքը, որով անցել է նա՝ սկզբից մինչև վերջ։ Այս բանը շատ հեշտանում է այն դեպքում, երբ քննելի լեզուն հասած է մեզ այնպիսի գրական մնացորդներով, որոնք կարողանալին մեզ արտացոլել լեզվի դարուց դար կրած ձևափոխությունների պատկերը։ Այն ժամանակ շատ

անգամ հարցը լուծվում է անվիճելի կերպով։ Դժբախտաբար քիչ լեզուներ կան, որոնք օժտված լինեն այնպիսի հարմարութիւններով։ Այսպես են, օրինակ, նորլատին լեզուները, ֆրանսերեն և այլն։ Օրինակ, ֆրանսերեն âme «հոգի» այսօրվա վիճակն է. XIII դարում ուներ anme ձևը, XI դարում aneme, X դարում anime, որ անմիջապես կապվում է լատիներեն animæ ձևին (Brachet, Gramm. hist., 43 տպ. էջ 5)։

Իսկ երբ պակասում են մեզ միջոցներ, ինչպես է իրոք հաճախ, մենք ստիպված ենք նախ պարզապես ճանաչել իրողութիւնն իբրև փաստ, որից հետո տեսականորեն հետ-հետ երթալով բացատրել ձայնափոխութեան կարդի ընթացքը։

Այս խոսքերից հասկացվում է, որ երբ մի որևէ բառի հին վիճակը համեմատում ենք նրա նոր վիճակի հետ, իրավունք չունենք անմիջապես ընդունելու, որ փոխանցումը կատարվել է ուղղակի։ Ամենամեծ մասամբ այդ փոխանցումը կատարվում է դանազան միջնորդներով։ Օրինակ, ստորին լատիներենի ò դարձել է շեշտի տակ ֆրանսերեն ö, ինչպես novem>neuf, cor>cœur. այստեղ տեսնում ենք, որ մի պարզ ձայնավոր վերածվել է մի ուրիշ պարզ ձայնավորի, այսինքն՝ փոխել է միայն երանգը։ Բայց լեզվի պատմութիւնը ցույց է տալիս, որ այդ ձայնափոխութիւնը ուղղակի ճամբով եղած չէ. նախ լատիներեն ò դարձել է երկբարբառ wo, որ XI դարում դարձել է we կամ we երկբարբառին, իսկ XII դարում այս we կրճատվել է ö պարզ ձայնավորին։ Ուրեմն փոխոխութիւնների շարքը եղել է ձայնավորից երկբարբառ, երկբարբառից երկբարբառ և երկբարբառից ձայնավոր։

Կարող է երբեմն պատահել, որ երկու ձայնական օրենք միասին ղեգադիպեն. այդ երկուսը կարող են իրար հակառակ լինել կամ ոչ. եթե հակառակ չեն, մեկը մյուսի հետևից գործում է. բառը երկու օրենքների պահանջներին էլ ենթարկվում է, իսկ եթե նրանք իրար հակառակ են, լեզվի մեջ առաջանում են երկու ձևեր (ամեն մի օրենք իր պահանջը կատարում է, որոնք կարող են միաժամանակ դոյութիւն ունենալ, բայց կարող է մեկը դոյութիւն կորչի մեջ տեղի տալ)։

Ձայնական օրենքները կամ փոփոխութիւններն ինքնին վերցրած անբեմբռնելի և անհավատալի են. ոչ մի բացատրութիւն չի կարող համոզել մեզ, եթե հնդեվրոպական նախալեզվի p բառասկզբում դառնում է հայերեն հ, և դրա համար է, որ դրսից դիտողները հաճախ անհավատութիւնով կամ նույնիսկ ծաղրով են վերաբերվում լեզվաբանների ձայնական օրենքներին։

Ձայնական արմատների հնդեվրոպական միակ ապացույցը միասն դարձվածն է, ասենքն՝ միևնույն արմատի կրկնությունն է տարբեր բայաձևություններում։ Իրեն հնդեվրոպական նախալեզվի ը դառնում է հայերենի մեջ բառասկզբում ե, որովհետև ալյպես ենք սեռնում բոլոր հնաձայն բառերի մեջ. եղ, եղան, եկայր, եկեղեց, եկեղեցի, եկամուտ, եկամտել, եղջյուր, եկեալ, եկն, եկիզ, եղոյն, եղուն և այլն։

Իրեն հնդեվրոպական նախալեզվի ա ձայնը հայերենի մեջ դառնում է գ, որովհետև ալյպես ենք դառնում բոլոր հնաձայն բառերի մեջ. գինի, գող, գաղտ, գարուն, գիշեր. (գ)գետ, գետ, գետ, գին, գիր, գաղջ, գորտ, գործ և այլն։

Երբ գառաձայն ապագայում են միաձայն, կառուցվածները տարբերարտ են։

Լինում են երբեմն այնպիսի բայ ձայնահարթներ, որոնք հնդեվրոպական նախալեզվի բայարմատի քիչ արհնավիճակ են ունեցել. այդպիսի դեպքում տարբեր հնդեվրոպական նախալեզվի ա ձայնահարթները դարձել են արհնավիճակի պատճառ լրացնելու և գառաձայնությունը դարձնելու։ Ալյպես. արհնակ. հնդեվրոպական նախալեզվի dw ձայնահարթը հայերենում դառնում է երկ. — ասենք մի այնպիսի տարբերության ձայնահարթություն է, որ ոչ ոք նայելիս լեզվաբանը, չգիտի հավասար։ Իմ բառաձայնարար իրեն գառաձայնները այս արհնակի համար միայն երեք արհնակ. 1. երկա = լա. duo, ասենք. dvā, 2. երկրդ, երկրդական. dwéyos, գնդ. dvaēša, 3. երկար = հին. dwārón.

Բայց գառաձայնի այս տարբ ձևին իրեն գրնական գալիս են հետևյալ հանգամանքները.

1. Հայերենի թվականները ընդհանրապես նայելն են հնդեվրոպական համապատասխան լեզուների թվականների հետ. այսպես՝ մի. հինգ. յոթն, ութ, ինն, տասն և այլն համապատասխանում են հունարեն mia, հունարեն pente = լա. quinque. հունարեն heptà, óktō, ennéa, déka, ասենքն десять և այլն բառերին. բնչ պատճառով հանկարծ երկու բառը բայաձևության պիտի կազմեր և երրորդ նայն լիներ ասենակրիա dvā, հունարեն dyo և այլն ձևերի հետ։

2. երկու բառը ժամանակաման մեջ առանձնանում է նաև երկի և երկո ձևերը (ինչպես՝ երկուսս, երկուքիս, երկուստեան, երկուքին). այս ձևերը, որ կարելի չէ մեկնել հայերենով, բացատրվում են հնդեվ-

րոպական ցեղակիցներով, որոնց մեջ նույնպես գտնում ենք i, u վերջավորությունները. հունարենում բարդությունների սկիզբը գրանում ենք dwi—*ալսպես և երկո ձևի դեմ ունենք լատիներեն* duo decim, *հունարեն* dyu-kai-deka *և այլն։*

3. Հնդեվրոպական նախալեզվի մեջ մի միայն եղակի էր, երկու երկակի, երեք, չորս՝ հոգնակի. հայերենի մեջ էլ մի եղակի է, երեք, չորս՝ հոգնակի, երկու բառն իր ու վերջավորությամբ շարունակությունն էր երկակիի։

Ալս շատ մանր հանգամանքներից երևում է, որ երկու բառը իրոք նույնն է dwā *ձևի հետ և հետևաբար ճիշտ է նաև այն ձայնական օրենքը, որ ասում է, թե* dv *ձայնախումբը դառնում է հալերենում երկ։ Ուրիշ լեզուների մեջ նման օրինակները, մանավանդ ալս ձայնափոխության ընթացքի բացատրությունը ավելի պիտի հաստատեն ալդ։ Այնուամենայնիվ տարակուլս չկա, որ եթե հայերենի հնդեվրոպականությունը ալլուստ և ավելի ակներև օրինակներով ապացուցված չլիներ,* dv*>երկ ձայնափոխության համար մեջ բերված հիշյալ 3 օրինակները անբավարար պիտի համարվեին։*

Եթե ձայնական օրենքներն առաջանում են բնախոսական պայմաններից, իսկ ալդ պայմանները հավիտենական չեն, ուստի և ձայնական օրենքներն էլ հավիտենական չեն, և հենց որ փոխվեցին պայմանները, փոխվում են նաև օրենքները։ Ալսպիսով ձայնական օրենքները անմիջաբար կապվում են ժամանակի հետ։ Յուրաքանչյուր ձայնական օրենք գործում է միայն այն բառերի վրա, որոնք օրենքի ուժի ժամանակ գոլություն ունեին, իսկ այն բառերը, որոնք հետո մտել են լեզվի մեջ նոր բառակերտությունների կամ փոխառությունների միջոցով, ղերծ են նախորդ օրենքի ազդեցությունից։ Ալսպես՝ Ադուլիսի բարբառում շեշտյալ a *դառնում է* o *ինչպես՝* ŋաց*>*ŋոց. *բայց ալդ գտնում ենք միայն հալերեն և հին պարսկերեն բառերում, իսկ թուրքերեն և ռուսերեն բառերն ազատ են ալդ ձևափոխությունից, ինչպես՝ յրախ տալ «թողնել», սալդար «զինվոր», լամփ «ճրագ» և այլն։ Հնդեվրոպական նախալեզվի* p *դառնում է հալերեն* ɦ, *ինչպես՝* pətēr*>*ɦայր, *բայց պարսկերեն կամ հունարեն* p *չեն դառնում* ɦ, *ինչպես՝ պատգամ, պատրիարք և այլն, և ալսօր էլ չենք ասում՝ Հետրոգրադ, Հարիզ (Pétrograd, Paris)։ Օրենքների ալս տարբերությունը շատ անգամ միջոց է տալիս փոխառյալ բառերի միջոցով գտնելու օրենքների գործունեության ժամանակագրությունը, որը հայտնի է, թե որ*

է փոխ առնել ոչինչ բառ ի հայատառին պատելով, եթե ձայնիմ է ձայնական օրենքի ժամանակը, կարելի է ասել, թե ոչ մի ինչ փոխառյալ բառ եթե է փոխառնված։

Ամեն մի ձայնական օրենք ունի իր ժամանակը, եթե նա պրծած է, և եթե ունի օրենք, որ պրծած էր ոչ ինչ ժամանակ, մենք կիրառանք մի տարբեր ժամանակ, որ կոչ ժամանակագրություն (անախրոնիզմ), որով կհասկանանք լեզվաբանական սրամտրիկ։ Ահա ոչ պատճառով է, որ լեզվաբանական քննության ժամանակ լեզվի բառերը չափազանց են միջև հինգ տասնյակի՝ բնիկ բառեր և փոխառյալ բառեր. բնիկ են այն բառերը, որ եկել են լեզվի սկզբից և անցել են այն բոլոր շրջաններից, որով անցել է լեզուն. փոխառյալ բառերը մտել են լեզվի մեջ ավելի ուշ և զանազան ժամանակներ. առաջիններն ներկայացնում են լեզվի ոչ միայն իրական և իսկական, այլև հնագույն ու նախնական ձևը, որից կազմված է հինգ լեզուն. իսկ երկրորդները ներկայացնում են ոչ միայն երկրորդական և ենթադրյալ ձևեր, այլև նրանից ավելի և երբեմն շատ ավելի նոր են։ Առաջիններն ենթարկվում են այլ ժամանակի օրենքների, երկրորդները՝ այլ ժամանակի։

Եվ, թե ձայնական օրենքները կապված են ժամանակի հետ, չի նշանակում, թե նրանք կապված են նաև ժամանակի անցման հետ։ Լեզվի բարեշրջման մասին խոսելիս ասացինք, թե ինչպես նրա արտաքինը զանազանվում է ոչ միայն լեզվից լեզու և բարբառից բարբառ, այլև միևնույն բարբառի մեջ երևելի երևելի։ Տեսանք նաև նման լեզուներ, որոնց մեջ բարեշրջման ընթացքը այս ինչ շրջանում ավելի արագ էր, այն ինչ շրջանում ավելի դանդաղ. Չելմանի և Համշենի բարբառներում ա ձայնը անփոփոխ է ս. այս ձայնափոխությունը առաջացած պիտի լինի ամենաշատը XII դարից հետո, ալսինքն՝ ամենաշատ վերջին 800 տարվա ընթացքում. բայց այդ ա ձայնը առաջանում է հնդեվրոպական նախալեզվի a ձայնից. նշանակում է a ձայնը մի քանի հազար տարի մնացել է անփոփոխ և միայն 800 տարվա միջոցին է, որ հանկարծ սկսել է փոփոխվել, մինչդեռ մյուս հայ բարբառների մեջ այդպիսի փոփոխություն չկա դեռ։ Սրանից հետևում է, որ ձայնական փոփոխությունները թեև արդյունք են ժամանակի, բայց այդ ժամանակը ամեն տեղ և ամեն դեպքում միևնույն չէ. հետևաբար և կարելի չէ ասել, օրինակ,

թե այս ինչ ձայնական փոփոխությունը ստանալու համար հարկավոր է այսքան ժամանակ և կամ թե այսքան ժամանակի մեջ կարելի է սպասել այսքան և այսպիսի ձայնական փոփոխություններ։ Վերի օրինակում մենք չկարողացանք որոշել, թե ա>օ ձայնափոխությունը քանի՞ տարուց տեղի ունեցավ. բայց շատ ավելի ճշտությամբ կարելի է որոշել լատիներեն a>ֆրանսերեն e ձայնափոխության ժամանակը։ Այս ձայնափոխությունն սկսվեց Հուսիսային Ֆրանսիայում IV դարից, բայց դեռ IX դարի կեսին գըրվում է a.—հետո տարի հետո ձայնափոխությունը վերջացավ և բոլոր լինագիրները այլևս դրում են e. ուրեմն բարեշրջության արագությունը վերջին 50 տարում շատ ավելի արագ էր, քան նախորդ 400 տարում։

Երբեմն միևնույն ձայնը դանազան վայրերում սկսում է ընդունել միատեսակ ձայնափոխություն, բայց տարբեր արագությամբ, այնպես որ մի տեղ ձայնափոխությունը վերջացած է լինում, մի ուրիշ տեղ դեռ նախնական աստիճանի վրա։ Այսպես, լատիներեն k ձայնը e և i ձայնավորներից առաջ սկսել է ձևափոխվել բոլոր նորալատին լեզուների մեջ. նախ դարձել է ք֊ֆրանսերենում և իսպաներենում, իսկ իտալերենում գտնվում է դեռ կիոսպալատային աստիճանի վրա։ Հալերեն a ձայնի o դառնալը մի երևույթ է, որ երևում է պանազան բարբառներում, ինչպես Ագուլիս, Համշեն, Զելթուն, Հաճին. Ախուլիսում, Զելթունում և Հաճինում դրեթե վերջացած երևույթ է, Ակնում և Համշենում տեղի է ունենում միայն ընգականի առաջ, իսկ Սվեդիայում o֊ից էլ անցնելով, հասել է u֊ի, մինչդեռ Ագուլիսում միայն ընգականի մոտ է, որ հասել է u֊ի աստիճանին։

Երբեմն մի ձայնափոխական երևույթ սկսում է, բայց մի որևէ աստիճանի վրա կանգնում է, երբեմն էլ սկսված ձայնափոխությունը հետ է դառնում և նույն ճանապարհից անցնելով դառնում իր սկզբնական ձևին։

Եթե ձայնական օրենքները կապված են հանգամանքների և ժամանակի հետ, ուրեմն նրանք առանձնահատուկ չեն այս կամ այն ցեղին ու տեղին, այլ ամեն տեղ, ուր որ երևացին նման հանգամանքներ, ստացվում է և նման արդյունք։ Օրինակ, հնդեվրոպական լեզուների մեջ p բառասկզբում պառնում է h. նույնը նկատում ենք նաև ավարենն լեզվի անցյալում կոչված բարբառում

նաև նախկին այսօր, օրինակ տուներին ПРИСТАВ, ПОЛКОВНИК բառերը պատասում են հրեշտակ, հոգեմեկ*։

Ազգակցական, ձայնական օրենքները կապված են նաև տեղի հետ. քիչ տարբ իրար օրինակ բնորոշ ա>օ ձայնափոխությունը պահպանվ է Ախալքալաքի, Համշենի, Ակնի և Պլիևիկոլի բարբառներում կամ ամբողջությամբ, կամ էլ տեղ տեղ։ Նմանապես ե>յա ձայնափոխությունը պահում են Բալանթրա, Վան, Մարաղա, Ուռմ, Բալադևա, բայց ոչ նաև այս գծից դուրս։ Հաճախ բարեկեցի վրա կարելի է լինում գծել այն սահմանը, որ որևէ ձայնական օրենք դադարում է։ Այսպիսի սահմանագծերով ամբողջած շրջանները կոչվում են դարգածալ (isoglosse)։

Կարելի է նաև գծել դարձյան ձայնական երևույթների դարգածալները և այն ժամանակ պիտի տեսնենք, որ տարատարակ այդ դարգածալները իրար չեն պատշաճում։ Այն գյուղատեղը, որ իր բոլոր դարգածալներով միանում է մի ուրիշի հետ, շատ փոքր մի տեղ պիտի լինի, բոլորովին հարևի մի երկու գյուղից։ Այս բանը դալիս է տալիս, թե իրականությունի մեջ խիստ սահմաններով որոշված բարբառներ չկան, այլ կան միայն ձայնական դարձյան երևույթներ, որոնք սկսելով մի տեղից դնում են դարձյան ուղղությամբ, երբեմն իրարանցում են իրար և ընդհանրապես իրար հետ զուգահեռ չեն։

Այսպես ուրեմն, ձայնական օրենքները կապված են հանգամանքի, ժամանակի և տեղի հետ. այս պարագաների տակ, ձայնական օրենքները թվեն բացարձակ, քանի տիեզերական չեն, ինչպես բնագիտության և քիմիական օրենքները։ Մի քար, որ ձգվում է վերևից, ամեն տեղ և ամեն ժամանակ էլ նույն պիտի ընկնի։ Այս է ֆիզիկական օրենքը։ Երկու ջրածնի և մեկ թթվածնի խառնուրդը ամեն տեղ և ամեն ժամանակ էլ տալիս է ջուր։ Այս է քիմիական օրենքը։ Բայց ձայնը ամեն տեղ և ամեն ժամանակ չի տալիս։ Ձայնական

---

* Տես. ИНАН 1917, էջ 323։

Այսպիսի երևույթներից հետևյալը. թե ուրեմն այդ լեզուները ցեղակից են, պետականորեն միշտ մտածմունք չէ, թեկուզ հենց այն պատճառով, որ օրենքները բուն ժամանակի փոփոխական լինելով՝ նախկին պիտի լինեին ասել, թե երկու լեզուների ցեղակցությունը փոփոխական է ըստ ժամանակի։ Հենց նույն ն ձայնափոխությունը դոյությունն ունի անշուշտ կամ քն ապագային պիտի ունենա ափրիկյան կամ ամերիկյան քանի-քանի անձանոթ բարբառներում. բայց դրա համար կարելի չէ ասել, թե այդ բարբառները հայերենի ցեղակից են կամ թե. լեհ ռուսի չեն. բայց ապագային ցեղակից լինելու։

օրենքները չի կարելի համեմատել նաև իրավաբանական օրենքների հետ, որովհետև իրավաբանական օրենքը որոշում է, թե ինչ պիտի անենք և ինչ չպիտի անենք, իսկ ձայնական օրենքները ցույց են տալիս միայն, թե ալս ինչ ձայնը ալս ինչ տեղում ալս ինչ ժամանակ ինչ է դարձել։

Ձայնական օրենքները կարելիություններ են և ոչ թե անհրաժեշտություն. եթե մի քար բաց թողնենք, անպատճառ պիտի ընկնի և չի կարող չընկնել. բայց ձայնական օրենքները այդպես չեն։ Ձայնական օրենք է, որ երկու ձայնավորի միջև գտնվող լապաձայնը թուլանում է և հետո էլ ընկնում. այսպես է հնդեվրոպական նախալեզվի mater, որ տալիս է հայերեն մայր և ֆրանսերեն mère. բայց մեհնուին բառը ունենք սանսկրիտ mātā, հունարեն μητηρ, լատիներեն māter, և այսօր էլ նոր հունարենում սովում է μητέρα. լիթվաներեն mote, ռուսերեն мать, սերբերեն mati, որոնց մեջ t ունի 4000 տարուց ավելի կյանք և ոչ մի նշան չկա դեռ, թե նա ընկնելու է մոտ ժամանակում։

Նոսկովի փիլիսոփայական լեզվով, մենք կարող ենք ասել, թե ձայնական օրենքները հարաբերական են ժամանակի և տարածության հետ։ Այս երկու պայմանները սակայն չեն նվազեցնում օրենքի ուժը, որովհետև ամեն պիտության մեջ էլ օրենքի դերը սահմանափակվում է միջավայրի և դանազան ազդեցությանց պայմանավորմամբ (Danzat, La phil, 290)։ Ջուրը եռում է 100 աստիճանին, բայց ծովի մակերևույթի վրա. հենց որ ավելի բարձրանանք և օդի ճնշումը նվազի, եռման աստիճանն էլ կնվազի։ Այսպես՝ Երևանում ջուրը եռում է 96 աստիճանին, Արագածի գագաթին ավելի շուտ, Մասիսի գագաթին էլ ավելի շուտ և այլն։

Բացարձակ տրամաբանության հետևորդները ձայնական օրենքի բացարձակությունը չեն ընդունում, որովհետև նրանք դավանում են, որ երկու երևույթների մեջ, որոնց առաջինը նախորդն է և մյուսը հաջորդը, նախորդը պիտի լինի անփոփոխ և անպայման. ուրիշ խոսքով, միևնույն արդյունքը ծնվելու է միևնույն պատճառից և միևնույն պատճառը ծնելու է միշտ միևնույն արդյունքը։ Արդ, ձայնաբանության մեջ այսպես չէ. նախորդը անպայման է, բայց ոչ անփոփոխ. միևնույն պատճառը լեզվաբանության մեջ էլ տալիս է միևնույն արդյունքը, բայց միևնույն արդյունքը կարող է առաջանալ տարբեր պատճառներից. այսպես, հնդեվրոպական նախալեզվի i դառնում է հայերենում i, բայց e նույնպես դառնում է i՝ ռնգականից առաջ։ Լատիներենի մեջ նախաձայն f կարող է

ատոմոնոմ հնդեվրոպական նախալեզվի bh, dh, g"h, dhw, dhw և այլն ձայներից (Ernout, Meillet, 304)։

Այս երևույթը պետք չէ սրատ պիտի ձայնական սկզբի բազմաձևությունը վրա, որովհետև „l'inconditionnalité étant l'essence même du rapport de causalité.— Ոչ պայմանականությունը հարաբերության էությունն է» (Danzat, idem, 292)։

Նույնիսկ ամենաշրջրիա պիտությունն մեջ, որ է մաթեմատիկան, մենաւն սրպլանքը կարելի է ստանալ հազարավոր պատահականներից։ Այսպես՝ 10 թվից սրպլանքն է 2/5, 5+5, 40—30, 30:3, √100 և այլ անթիվ դարձվածքներից։

Ձայնական սկզբնների բազմաձևության դեմ իրրև երկրորդ ատարկության փիլիսոփաները դնում են այն, որ նմանողության (անալոգիա) ատեր լեզուներից փոխառյալ բառերը, դիտական նորակերտ բառերը և նման այլ պատճառներ շատ անգամ խանգարում են սրևէ ձայնական սկզբի ստատ գործունեության։ Բայց ստատկ սկզբը հանդուգնոր կամ սխալ չի կարելի համարել, որովհետև խոսվարիչ ուժը գալիս է ստատության, ճիշտ ինչպես, որ մեքենայի մեջ սրևէ ստատային պատճառ կարող էր խանգարում առաջ բերել (Danzat, idem, 293)։ Ազգագրին, երբ իմաստասիրությունն էլ կանենա իր բազմաձև սկզբնքները, կարելի կլինի իմանալ նաև նմանողության առաջացած երևույթներն էլ սկզբնքի ատակ դնել։ Բայլ փոխառյալ և նորակերտ բառերին, առաջիններս պետք է համարել իրրև մի համալիքի մեջ առաջացած նոր համալիք, որ ունի իր սեփական սկզբնքները, իսկ երկրորդները՝ դասական տարբեր ժամանակի սկզբնքների, իրրև մի սեռակ անախրոնիզմ. առաջին դեպքում խոսքում ունի պայմանի, երկրորդ դեպքում ժամանակի պայմանի, որոնք ձայնական սկզբնքների անհրաժեշտ պայմաններն են։

Ձայնական սկզբնների բազմաձևության դեմ խոսելով Շուխարդտ (տես Jespersen, Lang., 267) ասում է, որ, օրինակ, մի բառ կամ մի ձայն կարող է կրկնվելու 10 000 անգամ, որպեսզի վերածվի մի սրիշ ձևի. նրա մի ուրիշ բան, որ նվազ գործածական է, նույնքան ժամանակում կրկնվելու է 8 000 անգամ, բնականաբար և պիտի ստանա հետաքրքիր ձև։

Այս կարծիքը բազմաձև սխալ է. ձայների փոփոխությունը հաճախակի գործոնությունից չէ. ստատ, հնդեվրոպական նախալեզվի p հաճախադեպ գարձել է հայերեն ի թե ձայր և ճերիւ

բառերի մեջ. առաջինը չափից դուրս գործածական և ծանոթ ամեն մի մարդու, երկրորդը միայն կոշկակարներին։

Ահա այն կետերը, որոնցով ձայնական օրենքները զանազանվում են դրական գիտությունների օրենքներից։ Ներածության մեջ արդեն ասել ենք, որ շատերը (տգետներն ու սկեպտիկները) լեզվաբանությունը գիտություն չեն համարում։ Ընդհակառակը Մոսյուրը՝ նշանավոր լեզվաբան, երկրորդական կետերը կողմնակի երևույթներ համարելով, ընդունում է լեզվի մեջ ձայնական օրենքները այն իմաստով, ինչ իմաստով որ հասկացվում են դրական գիտությունների օրենքները։ Սակայն այսօրվա ոչ բոլոր լեզվաբանները պիտակցում են այդ. բայց չդիտակցելով հանդերձ, վարվում են ձայնական օրենքների հետ այնպես, ինչպես թե դրական գիտությունների բացարձակ օրենքները լինեին (Lingua, I, № 1, p. 28)։

Այստեղ հարց է ծագում, թե ինչ է առաջացավական ձայնափոխությունների նախնական պատճառը կամ դրդապատճառը (causa remota)։ Ինչու՞ համար միևնույն ձայնը մի տեղ այսպես, մի տեղ այնպես է փոխոխվում. ինչու՞, օրինակ, լատիներենի cl դառնում է իտալերեն čl, պիկարդերեն si, ֆրանսերեն Ǫi, և այլն. ինչու՞ ձայնափոխությունները մեկ լեզվի մեջ այս ինչ ուղղությամբ, մի ուրիշի մեջ հակառակ ուղղությամբ են գնում։ Արդարև, հաստատել մի որևէ երևույթի բացարձակությունը և կանոնավորությունը՝ համոզիչ է, բայց այդ դեռ չի նշանակում բացատրել երևույթը։ Մաթեմատիկական գիտությանց մեջ օրենքի ապացույցն ու բացատրությունը միանում են իրար. եթե մի թեորեմ ապացուցվեց, ուրեմն և բացատրվեց։ Բայց այսպես չէ փորձառական գիտությունների մեջ, և պետք կա փորձերով հաստատված օրենքներն իրար կապել և բացատրել։ Այսպես պիտի լինի նաև լեզվաբանությունը։ Ամեն երևույթ մի պատճառ ունի։

Նախ ասենք, թե բացարձակապես սխալ են նրանք, որոնք կարծում են, թե լեզվի մեջ առաջացած ձայնափոխությունները անհատների գործունեության արդյունք են։ Իբր թե մի նշանավոր անձնավորության իր քմահաճույքի համար այս ինչ բանն արտասանում է այս ինչ ձևով, դա ազդում է ամբիկ ժողովրդի մեծամասնության վրա, ամենքը հետևում են և ի վերջո երևույթը ընդհանուր է դառնում։ Այսպիսի կարծիք անընդունելի է արդի գիտության մեջ*, որովհետև եթե այդ կարծիքը ճշմարիտ էլ լինի,

* Այսպես է գործածված մինչև անգամ Մանուկ Աբեղյանի մոտ։

այս կամ այն բառի վրա մխալն այնքան սպասել և ոչ մի լեզվի բոլոր բառերի վրա, մինչդեռ մենք պիտենք, որ ձայնական հնչյուններ ընդհանուր են լեզվի մեջ։

Ձայնական հնչյունների բաշխության համար պիտանականները մեջ են բերում դանազան պատճառներ։

ա. Նախ ասում են, թե ձայնական փոփոխությունների հիմնական պատճառը դիակրիտական պահանջն է և մարդի կամավորական փոխել են լեզուն՝ ամեն մի դիակրի ձևեր առնալու համար։ Բայց մենք պիտենք, որ լեզվի դիակրիությունը մի անորոշ բան է միայն և իրական նշանակություն չունի։ Դիակրիկ է այն արտասանությունը, որին որ մարդ վարժված է։ Եվ որովհետև մարդ բնականարար իր խոսած լեզվին է վարժված, ուստի միշտ էլ նա իրեն համար դիակրիկ է, և ավելի դիակրիկ քան այն ազգայն անձանոթը, որին պիտի հասնի դանազան ձայնափոխությունները։ Ոչ ոք կարող չէ անշուշտ ընդունել, որ եթե հայերեն ինձ ասել պարձել է Վանի բարբառում կամ Նոր Բայազետի բարբառում խիճ խաղ, ավելի անհրաշնակ մի ձև առնիներ նրանց առեղծակով եղած լինեին Կոն դանազան լեզուներ, որոնց հին վիճակը ավելի հնչյունական է քան նորը. ալսպես, հին դիպմանեներնը ավելի հնչյունական էր քան այդի դիպմանեներնը։ Դարձյալ ամանք հիշում չպահանն, եթե ասենք, թե նաև հին հայերենը ավելի հնչյունական է քան նոր հայերենը. բայց այդ մասին անշուշտ ոչ ոք չպիտի կասկածի գոնե խաղալ, խաղալ և նման ձանրահնչյուն բառերի համար, որոնց հին հնչումն էր, ինչպես հայտնի է, խալալ, խալալ և այլն։

բ. Ասանք կասում են, թե այս ձայնական փոփոխությունները կլիմայական պայմանների արդյունք են։ Բնական է համարվում որ տաք, չոր ու մարքը կլիմայի տակ ձայնավորները ավելի լավ թրթռան, քան ցուրտ, խոնավ ու փուշտ մի տեղ։ Օրինակի համար ասում են, թե գեղեցիկ իտալերենը Իտալիայի գեղեցիկ երկնքի արդյունքն է։—Անգլիացիների կիսատիակ արտասանությունը մշուշ կուլ չտալու նպատակով է (ըստ որում Անգլիան հայտնի տեղատեղ մշուշով ծածկված մի երկիր է)։—Այսպիսեների կոկորդային հնչյունները, որոնք պոլանում են բերանի հետևի մասում, բերանը քիչ բանալու և անապատի փոշուց քիչ կուլ տալու նպատակով է։—Հյուսիսային ժողովուրդների երկար-երկար բառերը ցրտաստիճան և շնչի ապաստիճան պատճառով է. իսկ սեմական

լեզուների կարճ բառերը օդի անոսրութիւնն և շնչի կարճութիւնն պատճառով։

Կարելի է ընդունել, որ իրոք կլիման և ընդհանրապես միջավայրը ազդած լինեն լեզվի կազմութեան վրա. բայց դրանց ազդեցութիւնները աս տեսակէտն պիտի երևակին լեզվի առաջին ծագման ժամանակ և չպիտի կարողանային բացատրել միևնոյն երկրում խոսված միևնոյն լեզվի մէջ պարզ պար առաջացած ձայնափոխութիւնները։

Ինձ համար ենք ուզում The Gospel in many tongues *(Աւետարանը բազմաթիւ լեզուներով) (1921) յուշակից երեք հատված միևնոյն բովանդակութեամբ.*

1. Զուլու լեզվով.

Noba unkulunkula wa wa tanda umhlaba Kangaka, nanoba wa pa nendodana yake ayizalayo e yodwa, ukaba wonke o kolwa iyo a na bubi, a be nokupila okumiyo njalo.

2. Հավայան կամ Սանդվիչ կղզու լեզվով.

No Ka mea, ua aloha nui mai ke Akua i ko ke ao nei, nolaila, ua haawi mai oia i Kana Keiki hiwahiwa, i ole e make ka mea manaoio ia ia, a ka, e loaa ia ia ke ola mau loa.

3. Ակնու լեզվով.

Inambe gusu n yakun, Kamui anak ne Koro šinen ne poho koropare pakno moširi omap ruwe ne, nen ne yakka nei Poho eišokoro yaru obitta aisamha šomoki no nei pakno ne yakka išu ramat koro Kuni ne Kore nisa ruve ne.

Առաջինը ալբնցյալ գոտու տակ խոսվող լեզու է, երկրորդը լայնութեան 20°-ի վրա սվիխանոռի մեջ թագված մի կղզում, երրորդը՝ սառցալին երկրում, բայց բոլորն էլ ձայնավորների լիակատար առատութեամբ։

Ի՞նչ է ձայնական փոփոխութիւնները վերագրում են ցեղաբանական պատճառների. որոն ապացուց են համարում այն երևոյթը, որ երբ մի ժողովուրդ վերցնում է մի ուրիշ ժողովրդի լեզու, չի պահում անփոփոխ, այլ հարմարեցնում է այն հընչական պայմաններին, որոնք կազմված են եղել իր մեջ։ Այս բացատրութիւնը և տրված օրինակը ճիշտ չեն, որովհետև այսանդ լեզուն է հարմարվում լեզվին և ոչ թե լեզուն ցեղին։ Ինքնախոցի հրեան խոսում է ֆրանսերենը, ճիշտ ինչպես մի ֆրանսիացի, և անգլիացի հրեան խոսում է անգլերենը, ճիշտ ինչպես մի բնիկ անգլիացի, թեև երկուսն էլ հրեա (այսինքն ուրիշ ցեղի մարդիկ)

ան, և համաստատական պիտի գժվարանան, եթե ֆրանսիացի հրեան անգլիացին խոսի կամ անգլիացի հրեան ֆրանսացին խոսի. բայց գժվարությունը շատ ավելի մեծ պիտի լինի երկուսի համար էլ, եթե հանդարծ երրորդին (իրենց ընկեր լեզուն) պատահմամբ լինեն խոսակից։ Եթե սկսի ընդհանրապես ձայնական փոխհարաբերությունների պատճառ, այն ժամանակ ինչպիսի պիտի բացատրենք այն երեւույթը, որ միեւնույն ժողովրդի գրականական հատվածների մեջ տարբերություններ ձայնական փոխհարաբերությունների, կամ նույնիսկ միեւնույն ժողովրդի միեւնույն հատվածում տարբեր ժամանակ՝ տարբեր ձայնական փոխհարաբերություններ։

գ. Կան լեզվականներ, որոնք ձայնական փոխհարաբերությունների իրրեւ պատճառ գնում են ազգի քաղաքական հնգաշրջանները.— ազատ, լուսավորված քաղաքացիից և ծնող նորատատիպ լեզուները՝ հենց համեմատական պետականության քաղաքացին հանդիսանալով։ Միապետության հաստատվելուց ազատությունը պետականության անկման պատճառով։ Նոր հանգրվանը բարբարոսների և աշխարհակալների հետևանք։ Բազմատարածության պետականության կործանումից հետո և այլն։ Այս բացատրությունները բավարար չէ նախ այն պատճառով, որ չկա լեզվի մեջ մի բան, որը բարեշրջությունները կանգ առած լինեն. լեզուն մշտական ու հարատև փոխհարաբերության մեջ է. հերկրորդ՝ ինչպես պիտի բացատրենք այս դեպքում գրականական բարբարոսներում տեղի ունեցած տարբեր ձայնական փոխհարաբերությունները միեւնույն երկրում, միեւնույն ժամանակ, միեւնույն պետության քաղաքացիից հետո։ Եվ վերջապես ցույց տալու համար, թե քաղաքական և բնակերպական հնգաշրջանը արժեք չունեն լեզվի ձայնական փոխհարաբերությունների մեջ, հիշենք Հունաստանի մեծ հնդաբարբարները, որ ստեղծվեցան հին կարգերը, բայց ոչնչացրին լեզվի մեջ ոչ մի ձայնափոխություն չառաջացրին։

ե. Լեզվաբաններից ոմանք ձայնական փոխհարաբերությունների պատճառ են դնում հենց ձայնական գործարանները։ Կարծում են, որ մարդու ձայնական գործարանները ժամանակի ընթացքում փոխում են իրենց կազմությունը կամ ձևը և հետևաբար արտադրում են նոր ձևի ձայներ։ Հերմանական արտասանությունը տարբեր է հրեականից և հայկականը անգլիականից, որովհետև հենց նրանց բերանի և կոկորդի կազմությունն է տարբեր։ Այս գաղափարը դեռ չի տարբերակվել, բայց պետք է ասածել մի քանի, թե ինչքան պատճառություն կա մարդուց մարդ տարբեր գործարանների վերաբերմամբ։ Օրինակ, որքան տարբեր է հայի արծվեստնգի քիթը

ռուսի քմից, առատ ու փարթամ մորուքը թաթարի լերկ ծնոտից, թավ հոնքերը և սև ու երկար թարթիչները հրեայի անմազ կոպերից և այլն։ Կամ թե որքան տարբեր են նեգրի սև մաշկը շվեդացու սպիտակ երեսից, թաթարի կլոր երեսը եվրոպացու ձվածիր դեմքից, էսկիմոսի կարճլիկ հասակը անգլիացու երկար հասակից։ Եթե մարդկային այլ գործարաններում այսքան ակնհայտ տարբերություններ կան, ինչու՞ է զարմանալի, որ քիմքի, լեզվի, կոկորդի այն փոքրիկ շրջանակում էլ լինեն շատ նուրբ տարբերություններ, որոնք սակայն պիտի տան ձայնի հնչման և երանգի այլևայլ դանդաղություններ։

Այս բացատրությունն էլ ուղիղ չէ, որովհետև եթե նույնիսկ ընդունենք գործարանների կազմության տարբերություն, դա անշուշտ չպիտի անդրադառնար գործարանների գործունեության վրա։ Եթե հայի քիմքը արծվաքունգն է, իսկ ռուսինը ոչ, դա չի նշանակում, թե մեկի հոտառությունը այլ է, մյուսինը՝ այլ։ Անկարելի է ասել, թե որևիցե ժամանակ, որևիցե տեղ, որևիցե համայնքի մեջ, բոլոր անհատների գործարաններն էլ բոլորովին նույն կազմություն ունենան, այլ, ինչպես որ մեկի հասակը երկար, մյուսինը կարճ է, մեկի մազերը թավ, մյուսինը շեկ են (միևնույն համայնքի մեջ), ձայնական գործարաններն էլ պետք է որ դանդաղ լինեն։ Այդ դեպքում ինչու՞ ուրեմն ձայնական փոփոխությունները նույն համայնքի մեջ միևնույն արդյունքն են տալիս։ Ուրեմն ճիշտ չէ նույնպես ձայնափոխությունների պատճառը որոնել գործարանների ձևափոխության մեջ, քանի որ այդ գործարանները բավական ընդունակ են դանդաղ դիրքեր ընդունելու և պահանջված ձայնական երևույթներին հարմարվելու։

Մի շատ հատարակ փորձ բավական է համոզելու մեզ վերջին կետի նկատմամբ։

Գիտենք, որ անգլիացին կամ ամերիկացին մի յուրահատուկ արտասանություն ունեն, այնպես որ նույնիսկ հայերեն խոսելու ժամանակ անգլերենի նման մի բան է դուրս գալիս։ Արդ, մենք կարող ենք փոքր վարժությամբ կեղծել այդ ձայնը։ Պաշեցնենք լեզուներդ մի քիչ հետ, կորացրեք ծայրը մի քիչ վերև, այնպես որ նա դիպչի քիմքի մի քիչ ներսի մասին և ահա այս դիրքի մեջ խոսված հայերենը կլինի անգլիական արտասանություն։ Այս փորձով մենք մեր կոկորդի կազմությունը չփոխեցինք, այլ սովինք նրան տարբեր դիրք, ուրիշ խոսքով հարմարեցրինք տարբեր ձայնական երևույթի։

պ. Կան լեզվաբաններ էլ, որ ձայնական փոփոխությունները բացատրում են անվարտյալ հնչյուն-ի անկումով, իբր մի գործոն իրենց աշխատանքը, պարզում, հնչատցնում են գործը։ Այս բացատրությունը հիշում է շատ դեպքերում, օրինակ, ձայնավորի ոտքում (բերանի>բերնի), բաղաձայնների անկումը, կամ պակասից բաղաձայնների անկումը, կամ պակասից բաղաձայնների նմանեցումը (իս>իս), ձայնավորի նեղացնելությունը և այլն. բայց չի կարող բացատրել բոլոր ձայնական փոփոխությունները, որովհետև կան և այնպիսի բոլորովին հակառակ երևույթներ, ինչպես ձայնավորի կամ բաղաձայնի նոր հավելում, ձայնավորը վերածված երկբարբառի, տարամանություն և այլն։ Եթե վանեցին հա ասելը փոխարեն ասում է խա, համեմատելը դեպքը ավելի դժվար աշխատանք է պահանջում։

Այս բոլորից հետևում է այնքան, որ ձայնական փոփոխությունների պատճառը պետք է փնտրել ձայնական գործարանների գործունեության եղանակի մեջ և ոչ մի նրանից կախում չունի, ինչպես որ անպլեական արտասանություններ կեղծելու օրինակի մեջ տեսանք։ Հիմարություն է, որ այդ ձևով խոսելիս մենք կրում ենք մեծ հոգնություն, որովհետև կատարում ենք մեզ համար անբնական մի բան, որին չենք վարժված, ճիշտ ինչպես մեծ փորձեր անելիս ձախ ձեռքով գրելու։ Բայց անգլիացին ոչ միայն չի հոգնում, այլև նրա համար բնական է այդ արտասանությունը, որովհետև իր ձայնական գործարանների գործունեության եղանակը այն ձևին է վարժված։

Երբ մանուկը մորից առանում է լեզուն, աշխատում է անշուշտ բոլոր կարելությունն նմանվել նրան, բայց այդ նմանությունը բացարձակ ճշտություն չի հասնում, որի առաջին պատճառը լսողության ոչ-բացարձակ ճշտությունն է, երկրորդը՝ ձայնական իր գործարանների ոչ-կատարյալ վարժություններ։ Հնարավոր սրությունքն էլ լինում է ոչ կատարելագործ։ Ճիշտ բայց մանուկը կարծում է, թե ինքը ճիշտ է խոսում այնպես, ինչպես իր մայրն է խոսում, ուստի չի նկատում տարբերությունը և չի աշխատում ուղղել այս տարբերությունը։ Այս տարբերությունը մնում է մանկան լեզվի մեջ մինչև վերջ, որ և պատճառ է ապագա անընդունակությունը, նոր լեզվի նոր փոփոխությունն ընդունելու պակասության։

Այս երևույթի հետ զուգընթաց են հետևյալ հանգամանքները.

1. Ձայնական գործարանների գործունեության ձևի փոփոխության երևույթը մի է և ընդհանուր նույն ժամանակում, նույն

միջավայրի ժողովրդի բոլոր երևույթներին, ապա թե ոչ միևնույն ժամանակ պիտի ծագեին բազմաթեական ձայնափոխությունները և բազմաթեական բարբառները, կամ նոր սերնդի մի մասի մեջ միայն պիտի փոխվեր լեզուն, իսկ մյուս մասը պիտի շարունակեր հին լեզուն։

2. Մանուկ սերնդի երևան հանած տարբերությունները պետք է որ լինեն այնքան չնչին, որ շրջապատը չնկատի նրանք և չուղղի. իսկոր տարբերությունները համարվում են սխալ և ծիծաղելի, որոնք շարունակ ուղղվում են մեծերի կողմից և հասցվում են նվազագույնի (մինիմումի). այս մինիմումն է, որ կազմում է նոր լեզվի հիմքը։

3. Փոփոխությունները երևան են գալիս միմիայն մանուկ սերնդի մեջ. չափահասները ու ծերերը ազատ են նրանցից. երևույթները մեծանալով կազմում են չափահաս սերունդը, իսկ ծերերը մահանում են. այսպես նոր ձևերը մի ժամանակ գոյություն ունենալով հին ձևերի հետ միասին, ապաստյում ընդհանուր տարածվում են և դառնում միակը։

4. Երևույթն սկսում է ոչ թե մի կրկրի ամբողջ տարածությանը վրա, այլ շատ սահմանափակ մի վայրից, տարածվում է հետզհետե, չկատեցնելով իր ընթացքը գավառների ու նահանգների վարչական բաժանմունքների առաջ, ալեծև տարածվելով ամեն կողմ և մտրիկից մտրիկ առաջանալով վերջապես հասնում է հեռավոր ծայրերը։ Ֆրանսերենի լեզվարանական քարտեզը ցույց է տալիս, որ ձայնափոխությունների շարժումը չի հետևում ոչ մեծ գետերի ընթացքին և ոչ էլ կատկցնում է իր արշավանքը բնական սահմանների առաջ, ինչպես լեռնաշղթաներն են ու ծովերը, այլ միևնույն երևույթը գտնում ենք Ալպյան լեռների և այս կողմ և այն կողմը, ծովի այս կամ այն երեսում, մայր ցամաքում թե կղզիների վրա*

Այս է ձայնական փոփոխությունների վերջին բացատրությունը, որի հեղինակներն են Սիվերսը և Պաուլը, և որ ընդունված է բազմաթիվ ականավոր լեզվարանների կողմից։ Բացատրությունը սակայն բոլորովին բավական չէ։ Նախ որովհետև այդ բացատրությամբ ոչ թե արվում է ձայնափոխությունների բուն պատ-

* Ձայնական փոփոխությունների ծագման ու տարածման մասին կան դանազան աշխատություններ, որոնց մեջ հիշատակելի է դլխավորապես Rousselot, Les modifications phonétiques du langage étudiées dans le patois d'une famille de Cellefrouin.

հատ, այլ նրանց միջոցը կամ նշանակը (ինչպես և ոչ մեկ ինչու). երկրորդ՝ ինչու՞ համար մեկնում են ժամանակ ծնված երևույթները բոլորն էլ միատեսակ պիտի փոփոխվեն լեզուն և ոչ պատասխան ձևով և երրորդ՝ ինչու՞ լեզուները պարբեր շարունակ մնում են ասանց ձևափոխության և մեկ էլ հանկարծ սկսում են արագ-արագ ձևափոխվել։

Ընդունելով, որ ձայնական փոփոխությունները ձայնական դարձվածների դարձվածության ձևի փոփոխության արդյունքն են, մենք կարող ենք առաջադ դնել որևէ ձայնի ապագայի կրելիք փոփոխությունների շարքը։ Օրինակ, ինչ կարող է դառնալ s ձայնը։ Այս հնչյունի արտասանելու համար լեզուն պետք է բարձրանա առամների մոտ, և օդը հոսի առաջ նեղած անցքի միջով։ Արդ, եթե լեզուն պետք եղած չափով բարձրացած չլինի, անցքը կլայնանա և օդը չկարողանալով շփել լեզուն ու առամնները, պարզ կհոսի պարբ, որով ստացվը կդադարի և կառաջանա մի պարզ շունչ (h)։ Եթե ընդհակառակը՝ լեզուն պետք եղած չափից ավելի բարձրանա, կառաջանա š (անգլերեն the) ձայնը կամ նախնիկ t։ Եթե ավելի որանց վրա ավելանա կոկորդի թրթռումը և համեմատաբար ավարտանա շունչը, ապա կդան ž, ǰ, ǰ ձայնները։ Ուրիշ հանգամանքներում նաև s ձայնը կարող է դառնալ š, որի թրթռանն է ž։ Եվ ահա s ձայնի կրելիք բոլոր փոփոխությունները։

Բայց սրանք դեռ s ձայնի բնականոնական կրելիք փոփոխություններն են, անկախ ոնդից և ժամանակից. իսկ եթե նկատի առնենք ոնդն ու ժամանակը, կարող ենք փորձի վրա հիմնվելով ասել, թե, օրինակ, հնդեվրոպական նախալեզվի s ձայնը հայերենի մեջ մինչև V դար ապես է h կամ ջնջվում է, ձայնի հետ միասնալով ապես է r և այլն։

Հաճախ դիտնականները կրկնում են այն միտքը, թե լեզուն իր բնականոնում մնում է լսող կարելիության անազատ, և այնքան հեռանում է իր նախնական ձևից, որքան հեռանում է իր բնականոնից։ Արանով ձայնափոխությունները, հետևաբար և լեզուն կապվում են հայրենիքի հետ և որքան ազգն էլ է կապվում հայրենիքի հետ, սրանն վերջին հաշիվ ազգ և լեզու նույնանում են։ Ճշմանք վերջին անհիմնությունն է, որովհետև վերը արդեն պարզել ենք, թե ազգ և լեզու, ինչպես նաև ցեղ և լեզու ոչ մի կապ չունեն իրար հետ։ Ազգ ու ցեղ կարող են ընդունել որևէ լեզու, և միշտ պատրաստ են փոխելու իրենց խոսած լեզուն և յուրացնելու մի ուրիշ (նույնիսկ բոլորովին տարբ) լեզու, եթե մի-

ջավալրը կամ հանգամանքներն այդպես ոնօրինեն։ Բայց լեզու և հալրենիք նույնպես չունեն որևէ կապ իրար հետ։ Նախ լեզուների մեծ մասի ծագումը չգիտենք. կամ եթե ծագման մասին որևէ բան գիտենք, նրանց հալրենիքի և մանավանդ նախահալրենիքի մասին ոչինչ չգիտենք։ Ուրեմն ինչպես կարող ենք խոսել ձույնական փոփոխությունների հարաբերության մասին՝ հալրենիքի հետ։

Երկրորդ, որքան լեզուներ փոխադրվել են տեղից-տեղ, երկրից-երկիր, նույնիսկ կիսաղնդից-կիսագունդ (այսպես անգլիերենը, իսպաներենը, պորտուգալերենը և այլն) և դեռ շարունակում են իրենց գոյությունը միևնույն ձևի տակ։

Գիտնականները իրական օրինակներ են բերում հենց այս վերջին կետում և ուզում են հաստատել իրենց տեսությունը։ Նրա-բախտաբար հաճախ երևույթները ճիշտ հակառակն են ապացուցում։

Օրինակ առնենք հալերենը։— Գրաբարն ուներ հայցականի համար զ նախդիրը և բացառականի ու ներգոլականի համար ի նախդիրը։ Սրանք այնպիսի հատկանշական տարբեր են, որ անկարելի է ենթադրել գրաբար առանց զ-ի և ի-ի։ Նոր բարբառներում սրանք ամեն տեղ ջնջված են։ Հալաստան երկրում միայն Մուշը գիտի զ նախդիրը. մյուս վայրերից Վանը, Կարինը, Երզնկան, նույնիսկ Հալաստանի արդի մայրաքաղաք Երևանը կամ ընդհանրապես Ալա-բատրան բարբառը ոչ զ գիտեն և ոչ մանավանդ ի։ Իսկ Հալաստանից հեռու Սվեդիալի (Մուսա լեռան) բարբառը, ինչպես և Ավո-տրիալի հալոց (Սուչավալի) բարբառը կանոնավոր կերպով պահել են մինչև այժմ հայցականի զ նախդիրը, Սվեդիան նաև ի նախ-դիրը։

Հալաստանի սիրտը կազմող Երևանի բարբառը հնչում է լիս, քիր, մինչդեռ Հալաստանից հազարավոր կիլոմետրեր հեռու՝ Պոլսի բարբառը գրաբարին շատ ավելի հավատարիմ ձևով հնչում է լուս, քուր։ Անձնական դերանվան առաջին դեմքը գրաբարում ունի հայ-ցական զիս, բացառական յինեն ձևերը. սրանց դեմ Երևանի բար-բառը ներկայացնում է այսօր հայցական ինձ, բացառական ինձնից, իսկ հեռավոր Պոլսի բարբառը՝ հայցական իս, բացառական ինէ, որոնք ուղղակի հարազատ պատկերն են գրաբարի։

Հիշենք վերջապես Ագուլիսի բարբառը (հին վիպասանների հայրենիք Գողթն գավառում, Մեծ Հալաստանի կենտրոնում), որ այնքան է ձևափոխված, որ հաղիվ կարելի է հալերեն կոչել, մինչ-դեռ Հալաստանից շատ հեռու՝ Պոլսի, Զմյուռնիալի, Նիկոմիդիալի, Բոտոսթոլի և այլ վայրերի բարբառները ուսանողաբար ավելի հա-

բոլոր նն, քան Ադալխի բարբառը։ Նույն բանը կարելի է ասել նաև, թեև նվազ համեմատաբար, Ոլմիի, Մակրի, Սալմաստի, Ուրմիայի և այլ բարբառների համար, որոնք բարբառ պահում են Մեծ Հայաց սահմանների մեջ։

Այժմ տանենք մի տրիշ օրինակ մեր պրպտի խմբերեներից։

Խմբերեներ մի լեզու է, որ խոսում է Միջին Ասիայի մինչև Բոլիվիանների ու Ապրիկայում, երկու Ամերիկաներում (Կուիկա և Պարակուասան) խոսված լեզուն էլ պատկանում է նույնին։ Այս վերջին երկուսը նախնական հայրենիքին շատ մոտիկ են։ Ջնազած պրան, Անտասուսի և Պոլոի խմբերենը հանճախ ամենի հարազատ են ներկայացնում քան Ադերին։ Օրինակ.

«Ես» վերանանը ադերի լեզվով անի mān ձևը, Պոլոում ben։ Այս երկուսը միևնույն բառերն են։ Մեն է որոնցից նախնականը։ Որովհետև երկրորդ դեմքի վերանանն է ադերի sān, Պոլիս sen «դուս», որի հոդնակին է հավատարմական siz «դուք», ուստի առաջին դեմքի էլ նախնականն է ben, քանի որ հոդնակին երկուսի մեջ էլ լինում է biz «մենք»։ Մեր առած վերջ ի վերջո հաստատում է bi ձևը, որ առնդանաբերն և մանդրեբերն նշանակում է «ես» (Jc-rpem. 76)։

«Ես» վերանական Պոլոի խմբերենն ben և ադերի լեզվով mān ձևերի նախնականը կարող է լինել ben, որ համանմանությամբ վերջին ընդհանուն դարձել է mān, կարող է լինել նաև mān, որ ասրանմանությամբ դարձել է ben։ Երեսլեր նույնն է, ինչպես.

Պոլիս bin «հարար» ապրենջաններեն min

Պոլիս burun «բիմ» կիրդիզներեն murun (Bygarob, I, 277)

Պոլիս miyān «մասասական» ապրենջաններեն biyān

Պոլիս mahana «պատրիակ» պարակներեն bahāne, բայց նույնիսկ սուր վերստուլ մի բառ՝ եվրոպական terebenthine դարձել է սահկներեն tirementi «բևեհնի յուղ»։

Մեր քննած հարցի համար հետաքրքրական է խմբերենները, որ ուղղականում (ալեհնքն անկախ դիրքում) ասում է bu «այս», բայց հնոց որ հոլովում է սեռական munən «սրա», սրական muna, ներգոյական munda, բացառական mundan «սրանից», որոնց մեջ b դարձել է m՝ հաջորդ n-ի պատճառով (Зайцев, 43)։

Նմանապես կարաչայ լեզվով ասում է bu «այս», բայց հոլովման մեջ սեռական munu, ներգոյական mənda, բացառական mənnan «սրանից» (Алиев, 72)։

Ուլդուր լեզվով էլ ասվում է ուղղական bu *«այս», սեռական* munin, *հալցական* muni, *տրական* munʒa *և այլն* (Торовков, 74)։

Նողայերեն լինում է bu *«այս», սեռական երկու ձևով* bunun *և* munun (Radlakob, 77), *կումուխերեն՝* bu *«այս», բայց հալցական* munu *(դայս)* (Дмитриев 78)։

Նույնիսկ պարսկերենից փոխառյալ մի բառ, որի ստուգաբանությունը շատ պարզ է, ներկայացնում է b>m *ձայնափոխությունը. այն է պարսկերեն* bāʒbān *«այգեպուրծ», որ նորից ստանալով թուրքերեն* čl *մասնիկը, դարձել է* baʒmančı, *դարձյալ* n-ի *աղճատությամբ։*

«Եղյամ» բառը Պոլսի թուրքերենում ունի qəraʒə *ձևը, Ասըրպատականում կըրով։ Ո՞րն է սրանցից նախնականը։ Հարցը վճռում է բառի ստուգաբանությունը, որ շատ պարզ է Պոլսի թուրքերենում. այն է՝* qər *«դաշտ» +* oʒə *«սպիտակություն»։ Ըստ այսմ եղյամն է «դաշտի սպիտակություն»։ Ատրպատականը թեև դիտի* qər *«դաշտ» և* aʒ *«սպիտակ», բայց նրանց բարդությունը այնպես է ձևափոխվել, որ ոչինչ չի հասկացվում։ Այստեղ էլ ուրիմըն նախնականը ներկայացնում է Պոլիսը և ոչ թե Ատրպատականը։*

Այստեղ իրավունք ունենք հիշատակելու նաև փոխառյալ բառերի հարցը։ Լեզու լեզվից շատ բառ է փոխ առնում, բայց հաճախ պատահում է, որ փոխ առնված բառը փոխառու լեզվի մեջ ավելի լավ պահպանված է լինում, քան փոխառու լեզվի մեջ։ Այսպես, հայերեն պատկեր, նիզակ, վատ, վատթար, վնաս և այլն բառերը, որոնք փոխ են առնված իրանականից, ավելի մոտիկ են պահլավերեն patkar, nēzak, vat, vattar, vināš *ձևերին, քան նրանց հարազատ ներկայացուցիչ պարսկերեն* peyker, nize, bed, bedter, gunah *բառերը. ուրեմն հնագույն հայերը ավելի լավ են պահել այդ բառերը, քան մոտավոր ու հարազատ պարսիկները։ Ջեմ խոսում նախ<պհլ.* naxv, վասն<հպրս. vasna, վին<պհլ. vīn, վիճակ<պհլ. vāīčak *և այլն նման բառերի մասին, որոնք բոլորովին ջընջված են պարսկերենում, իսկ հայերենում ամանք պահվել են, ամանք էլ դեռ պահվում են։*

Սրան հակառակ հայերեն պարան բառը, որ թուրքերենը փոխ է առել հայերենից, ավելի լավ է պահված թուրքերենում (Ակն, Ադանա և ուրիշ տեղեր), քան, օրինակ, Հաճինի հայոց բարբառում, ուր ստացել է բայօն *ձևը, և Սվեդիայի հայոց բարբառում, որ ստացել է* գալուն *ձևը։*

Վատիկանում հայերը փոքրակա խմաստով գործածում են թարգմանին ovem բառը, իսկ թարգմանը՝ հայերենը petek բառը։

Իրանում մահմեդականության տարածմամբ ջնջվեցին բոլոր հին իրանական անուններն (Սարեն, Արշակ, Շապուհ, Տիգրան և այլն և այլն), մինչդեռ պրոնդ շարունակում են ապրել մեր մեջ։

Լատիներեն Augustus բառը Հռոմից հաղարամոր կիսամեռ հետո Հայաստանում գործածվում է այսօր Օգոստոս ձևով, մինչդեռ Հռոմի քրմի տակ փրանսերենում հնչվում է միմիայն o (գրվում է août)։

Այսպես արևմուտ, լեզվի պահպանման համար հայերենիքը կամ հայերենիքի մեթամորֆոզները նշանակելուն չունեցող մի հանգամանք է։

Ի՞նչ էլ լինի ձայնական փոփոխության պատճառը և ինչ ձևով էլ որ առաջացած լինի այն, մի անգամ, որ արևան եկավ և գործադրվեց, այլևս ոչ մի կերպ կարող չէ հետ դառնալ։ Ինչպես որ մեռած կամ կորած մի լեզու անհնարին է վերակենդանել, նույնպես և անհնարին է արևէ կատարված ձայնափոխության հետ դարձնել։ Արքան միջոցներ գործադրելիքին, որքան փորձեր կատարվեցին արևմտահայ առատարձակության և դարձնելու և հնին վերածելու համար, ապարդյուն եղավ բոլորը։ Եթե արևելահայը զարմանում է, որ արևմտահայը սխալ է հնչում բարի, դուքն բառերը և կամ սխալ է գրում Պերլին, Կոկոլ բառերը (փոխանակ Բեռլին, Գոգոլ), թող հիշի, որ ինքն էլ սխալ է հնչում բոլոր դ-ով բառերը՝ իադող, ուղիղ, ուղեղ, որոնք V դարում և մինչև IX դարը հնչվում էին խալոլ, ուլիլ, ուլեղ։ Իսկ եթե Անգղիա, Վուկուդրոս, Սիղղա, Նապիա և նման հատուկ անուններ այսօր վերաբերվել և դարձել են Անգլիա, Լուկուլլոս, Սիլլա, Նեղոլիա, դա ոչ թե ձայնական օրենքի վերադարձն է, այլ նոր փոխառության ձիշտ նույն երևույթն է նաև, երբ կիլիկեցի մի թրքախոս հայ կամ ռումինախոս մի ռումինահայ սովորի որևէ ձևով հայերեն լեզուն և նորից հայախոս դառնա։ Նրանց խոսած հայերենը ալևս Կիլիկիայի կամ Ռումինիայի նախկին հայ բարբառը չէ, այլ այն ունդի բարբառը, որ նորից սովորեցին հայ լեզուն։

2. ՁԱՅՆԱՐԱՆԱԿԱՆ ՈՏՈՒՄՆԵՐ

Դիտելի մեջ, մեր աչքի առաջ ունենալով լեզվի հին ու նոր ձևը, մի անգամից ընդունում ենք, թե այս ինչ ձայնը վե-

յատված է այն ինչ ձայնի։ Թեև դիտենք, թե անշուշտ հնից մինչև նորը ձայնափոխության մեջ անցումներ տեղի ունեցած պիտի լինեն, բայց մենք այդ անցումները նկատի չենք ունենում և ասում ենք միայն. օրինակ, հայերենի մեջ նախաձայն p դառնում է ֆ։

Նրանք, որ մանուկների բարբառն են քննել, աչքի առաջ են ունենում անցումների այնպիսի մի շարք, որ մի բառով կոչում ենք ոստում։ Այդ դիտնականները նկատել են ոստումը և նկատել են նաև, թե այդ ոստումը կատարվում է րոպեապես։ Ուրիշ խոսքով, նրանք բոլորը իրար ետևից հաջորդաբար կատարվում են մանկան ուղեղի մեջ, իսկ մանուկը արտասանում է միայն վերջին արդյունքը։

Օրինակ, Երևանում ուկրաինացի ոուսախոս մի աղջիկ, երկաթուղային հասակում, ոուսերեն бумага բառն արտասանում էր մուշգագա։ Անմիջապես հասկացվում է, որ այս վերջինը աղավաղումն է առաջինի և որ առաջինը մինչև վերջինը հասնելը միջին բազմաթիվ ձևերից է անցել, բայց այդ ձևերը երբեք ձայնով կենդանացած չեն։

Առնենք մեծերի լեզվից մի օրինակ։ Պոլսահայ բարբառում «հրեա» բառի իմաստով գործածվում է յավուդի (yavudi). այս բառը բնականաբար առաջացել է թուրքերեն yahudi բառից, ուստի մենք պիտի հետևցնենք, թե հ դարձել է վ։ Բայց դա սխալ է. հ ձայնը չէր կարող դառնալ վ. հաց բառը չէր կարող ոչ մի անգ դառնալ վաց։ Յահուդի ձևից մինչև յավուդի ունենք նախ հ-ի անկումով՝ յաուդի և ա և ու ձայնավորների մեջտեղ վ-ի հավելումով՝ յավուդի։

3. ԲԱՑԱՌՈՒԹՅԱՆ

Նախկին քերականները բացառություններն ընդունում էին իբրև պարտադիր և սովորական երևույթ և ամեն մի կանոնի անբաժանելի հավելված։ Ասում էին, թե չկա կանոն առանց բացառության։

Արդի քերականները, նախորդներին ճիշտ հակառակը, չեն ընդունում բացառության դոկտրինը և ասում են, թե այն կանոնը, որ ունի բացառություն, ուրեմն կանոն չէ։

Արդի քերականները նայում են բայաոաջթյան վրա իրրև կանոնի կազմին մի ուրիշ հնդեվրոպական կանոնի տրվելանք, մի երևույթ, որ պետք էր բայաոաջթյունը չի պահել և ապաոում է բայաոաջթյան։

Արդի քերականները շաոս լավ, որ բայաոաջթյան էլ համապատասխան, բայաոարել են պիտական նպաոակով լաոաջանաջթյուններով։

Հիշենք պրոֆեսոր մի քանիսը։

Հայր, մայր բառերի սեռական հոգ, մոր ձևերը բայաոաջթյուն էլեն, հին քերականների համար անմեկնելի։ Բայց այժմ այս ձևերը բայաոարվում են հնդեվրոպական ձայնաբանաջթյան լույսի ասակ, շաոս պիտկեպի ձևով։

Հայր, մայր բառերի նախաձևն է pater, mater, *որոնց մեջ t դանվելով երկու ձայնավորի միջև, վաոում է յ և ապա վերջավանկի ձայնավորի անկասած ասայվում է հայր, մայր։*

Սեռականում հնդեվրոպական նախաձևն է patros, mātros, *որոնց մեջ t դանվելով r-ից ասաջ, վաոում է բուն օրինի հավելին ւ (համա. mutro>մուր, alatrios>աղաւրի, աղաւրիք, աղօրիք). Իսա այսպես* patros, mātros *կանոնավոր ձևով վաոնում են հաւր, մաւր, որ է հոր, մօր։*

Շաոս անկանոն է քույր բառի սեռական բնո ձևը, բայց հիանալի կերպով բայաոարվում է հնդեվրոպական նախաձևերի swesor *«քոյր» բառի սեռական* swesros *ձևով, ուր sw ասելիս է ըսա օրինի հավելին թ և sr>ս։*

Բայաոաջթյունները շաոս կարևոր են հատկապես հին ու կոթող երևույթները երևան հանելու համար։ Ինչ կա ավելի անկանոն, քան առնել բայի կաոարյալ անցյալ արաի ձևը. բայց այս հրիշքը մի հրաշալիք է մեզ համար, որովհետև նա է ցույց ասլիս, որ հավելինն էլ ունեցել է սրմատի կրկնաթյամբ կազմված կաոարյալ ձևը։ Նա միակ և վերջին մնայորդն է այս օրենքի, որ այժմ աշխարհաբարում բոլորովին ջնջվել է և կենդանի է մնում գեա միմիայն Նոր-Ջուղայի բարբառում։

Հիմն բառը հոլովման և ածանցման ժամանակ պահում է իր ի ձայնավորը և չի սլվում (սեռական հիման, դերթիական հիմամբ, ածական հիմնավոր, բայ հիմնարկել). սա բացառաթյուն է ընդհանուր կանոնի դեմ. սրևաոը անուշադրաթյան է մատնում այդ երևույթը. բայց ընդհակառակը դա մի գեղեցիկ ապացույց է այն մասին, թե հին հայոց մեջ ի ձայնը թույլ հնչյամ ուներ և կարող

էր ուրեմն պահել իրենն հաջորդող ձայնավորը։ Իսկ երբ նկատենք, որ մի կողմից ունենք հինգերորդ (ի չզղված) և մյուս կողմից հընգեսասան (ի զղված), այլ նշանակում է երկուսի ստատոնյալ դրությունը։

Այսպիսով բացառությունները ծառայում են մեզ իբրև հընտրագույտ մի միջոց անծանոթ գաղտնիքները երևան հանելու համար։

4. ՁԱՅՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԴԱՐՁ

Եթե ձայները մշտապես փոփոխելի են, ուրեմն կարող են իրենց ձայնափոխության շրջանում մեկից մյուսը անցնելով նորից գալ հասնել նախկին վիճակին։ Այսպիսի երևույթի շատ հետաքրքրական պատկեր են ներկայացնում հայերենի պալթականները։ Գիտենք, որ հնդեվրոպական նախալեզվի b, g^1, g^2, d թրթռուններն V դարում (և ավելի շուտ) դարձել էին խուլ պ, ծ, կ, տ։ Միջին հայերենում, կիլիկյան բարբառի մեջ այդ խուլերը դարձան թրթռուն (հնչվում էին b, g, d, j), հետևաբար հասել, վերադարձել էին հնդեվրոպական նախկին վիճակին։

Ոմանք կարող էին կարծել, թե արևմտահայերը, որոնք այսօր էլ այդ հնչումը (թրթռուն) պահում են, շարունակում են հնադույն հայերենի (նախքան V դարը) հնդեվրոպական վիճակը։ Բայց դա ճիշտ չէ. նախ՝ որովհետև միջին (կիլիկյան) հայերենի պ, կ, տ, ծ, ճ ձայնաշրջումները հաստատ է. երկրորդ՝ որովհետև եթե արևմտահայերը պահած լինեին նախքան V դարի հնչումը (այն է հնդեվրոպական նախալեզվի dōm «տուն»>ռուսերեն дом, Պոլսի բարբառով դուն), այդ պիտի երևար նաև օտար փոխառյալ բառերի մեջ։ Այսպես, V դարից առաջ, հայերը փոխ էին առել պահլավերենից patkar, karmir և այլն ձևով բառեր, որոնք գրվում են պատկեր, կարմիր (p=պ, k=կ)։ Եթե արևմտահայերը V դարում կամ ավելի առաջ հնչած լինեին պ>բ, կ>գ և այլն, ապա հիշյալ բառերն էլ այժմ պիտի հնչեին ոչ թե badger, garmir *(ինչպես հնչում են այժմ), այլ* patker, karmir *կամ փաթքեր, քարմիր։*

Սրանից երևում է, որ ձայնաշրջումները կատարված է երկու անգամ և երկրորդը վերադարձ է առաջինին։

---

* Տես Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2 հատ., էջ 379—380։

Հնդեվրոպական բառերի մեջ վերջածանցը m պահպանվում է հայերենում և. օրինակ՝ հին nomn>անուն, dom>տուն, բառերում վոտտ>թոռն. այս կարգի բառերի մեջ հաճախ վերջածանցն և բարդությունների մեջ պահպանվում է նորից մ. ինչպես՝ անուում, հոգթամ, հոգթամ, հինգթամ:

Իրանական xš ձայնախումբը տալիս է հաճախ շշմամբ խշ-ի փոխարեն շխ. օրինակ՝ իշխել<xšī, աշխարհ<հին պարսկերեն xšaθra. մեր նոր բարբառներում արանց դեմ պահում ենք անցանել լինել, ախշար՝ իսկ հայերեն բաշխել բառի անց դարձական բաժին ձևը նոր պարսկերենից է փոխառնված:

Գրաբար հատուկ բառի դեմ սխալ ձևը, որ առաջացել է սոխ բառի նմանությամբ, վերագրվել է այն շարքին, որ ունի հայկ ձևը՝ skordon:

Հնդեվրոպական նախալեզվի rt պահպանվում է հայերենում թդ. օրինակ՝ l պահպանվում է r-ից հետո ել. ինչպես՝ mṛtos>մարդ: Միջին և նոր հայերենում թ-ին հաջորդող դ հնչյունով թ, նախկին վիճակը վերականգնված է լինում:

Ազգային բարբառում հայր, մայր, վայա բառերը մնում են անփոփոխ, մինչդեռ մյուս բարբառներում պահպանում են խեր, մեր, վեռ կամ խար, մար, վառ. բնդհանրապես քննիչները կարծում են, որ այս կարգի բառերի մեջ գրաբար այ մնում է անփոփոխ: Ես այդպես չեմ կարծում: Ենթադրում եմ, որ սրանք էլ եղել են նախապես ևեր, մեր, վեռ, ապա ե դարձել է այ (ինչպես որ ի պահպանվում է այ), որով նախկին ձևը վերականգնվել է:

Հանդարտական բարբառում պարզ չեմք, որ աշխատասիրում ամեն անց դարձել է չենք, առացել է չիմք ձևը: Սրանով նախկին ձևը վերադարձել է:

Ձայնական փոփոխությունները անհն իրենց մեջ որոշ հաջորդականություն, այնպես որ շատ անգամ կարելի է որոշել, թե որ օրենքը որ օրենքից առաջ է կամ հետո: Այսպես, օրինակ՝ Հաճընի բարբառով քեհիրդ «սահման», որ ծագում է պարսկերեն kahrībār, թուրքերեն kehrībar բառից, ներկայացնում է երկու ձայնափոխություն. r>l, r>y. չհաշվելով a>o ձայնափոխությունը: Այս երկուսից հնագույնը անշուշտ առաջինն է, որովհետև երկու հաջորդական r-երից մեկը l դառնալը ավելորդ տարամանություն օրենքն է, իսկ r—y ձայնների միջև այդպիսի ձայնափոխություն ավելորդ չէ:

5. ՁԱՅՆԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՊՐՈՒԹՅՈՒՆԸ

Քանի որ ձայնական օրենքները մշտական չեն և ժամանակի ընթացքում փոփոխական են, կարելի է որոնել, թե ալսինչ օրենքը երբ կար և երբ անհետացավ։

Ձայնական օրենքների ժամանակապրումը որոշելու համար իբրև գլխավոր միջոց ծառայում են լեզվից լեզու փոխառությունները, որոնք պատմական հանգամանքների հետ կապված լինելով, միջոց են տալիս մեզ ձայնական օրենքների ժամանակն էլ որոշելու։

Այս կարգի մի գեղեցիկ աշխատություն ունի Hübsmann, *որ* „Sprachwissenschaftliche Abhandlungen“ *հանդեսի մեջ (1, էջ 129—172) ընդարձակ մի հոդվածում որոշում է հայերենի ի և ու ձայնավորների անկման օրենքի ժամանակը, որի հետ զուգընթաց է նաև ոյ>ու, է>ի, եա>ե ամփոփման օրենքը։*

Հետքերմանի հետազոտությամբ կարելի է նմանօրինակ եզրակացություններ էլ անել հետևյալ ձևով.

1. Հնդեվրոպականից հայերենին անցնելու ժամանակ s դառնում է հ. ինչպես՝ seno>հին. *վուլգերենում կա* satilla *«սալլ. Ջ Մեծ Աբջի համատանգություն», որից փոխառալ է հայերեն սայլ իր երկու իմաստներով։ Եթե հայերեն սայլ փոլուգերենից է, ապա այն ժամանակ, երբ հայերը փոլուգացիների հետ հարաբերության մեջ էին, նախաձայն s>հ օրենքը վերացել էր։ Փոլուգական արձանագրությունները դնում են մեր թվարկությունից առաջ XII դարից մինչև 1000 թվականը, ուստի նույն ձայնական օրենքի վերացումն էլ այդ շրջանից պիտի լինի։ Այդպես է նաև հայերեն արիւնք բառը, որ նույնպես փոլուգական փոխառություն է (տես Աբմատական բառարան)։*

2. Հնդեվրոպական նախալեզվի նախաձայն v դառնում է հայերեն գ. ինչպես՝ worg'>գործ. *այսպես է նաև գինի, որ Միջերկրյան փոխառություն է հայերենում. հայերենից էլ փոխառել է վրաց ղվինի, ղվինօ «գինի», որի նախաձայնը (ղվ) ցույց է տալիս, թե այն միջոցին, երբ հայերը վրաց հետ հարևանության մատն, դեռ հայերենի նախաձայն գ լիովին գ չէր, այլ v-ից գ անցնելու շրջանումն էր։ Այդ ժամանակ էր մեր թվարկությունից առաջ IV դարը։*

3. Հնդեվրոպական նախալեզվի g տալիս է հայերեն կ. ինչպես՝ *gov>կով, ger>կեր և այլն։

Հայերենի մեջ ունենք մի խումբ ասորեստանյան փոխառությունների, որոնց մասին խոսված է իմ Հայոց լեզվի պատմության մեջ (էջ 195—200)։ Որոնց մեջ g>կ ձայնափոխությունն են ներկայացնում հետևյալ բառերը.

կիր<ասորերեն, եբրայերեն gīr.

կղզի<ասորերեն gazar-tā.

կմախք, կմախիք<ասորերեն gimaxx.

կշիռ<ասորերեն gišrinnu.

Այս բոլորը համաձայն են հնդեվրոպական նախալեզու>հայերեն հնագույն ձայնափոխության օրենքին։

Բայց որոնց հետ կան նաև մի քանի անհամապատասխանություններ. օրինակ.

1. Բառերից ամենը թե g և թե k հնչյունով են. ինչպես կմախք<ասորերեն gimaxxu կամ kimaxxu։

2. Կա բառ, որ մեր կ-ի դեմ ցույց է տալիս պարզապես k. ինչպես՝ կնիք<kunukku։

3. Կան բառեր էլ, որ ասորերեն համապատասխանություններ են ներկայացնում. ինչպես՝

անագ<ասորերեն anakku, սամերերեն nagga, հին ասորերեն anag.

բերդ<ասորերեն birtu.

բուռ «ծնիծ»<բաբելերեն bulu, ասորերեն pulu.

գագաթն<բաբելերեն gagadu, ասորերեն kakkadu.

ուղտ<ասորերեն uldu.

ուրագ<ասորերեն urraku.

սամալի<ասորերեն tamlu.

նահանգ<ասորերեն naanga.

տարածել<ասորերեն taraṣu։

Այս անհամապատասխանությունները տրդելում են որևէ եղրակացության հանել ձայնական օրենքների մասին հայ և ասորեստանյան բառերի միջև, մանավանդ երբ նկատի աննենք հետևյալ կարևոր հանգամանքները։

Ասորեստանյան պետությունը կործանվեց 608 թվականին, երբ դեռ հայերը Հայաստան չէին մտել և բնակվում էին Փոքր-Հայքում։ Ասորեստանյան բառերը չէին կարող ուղղակի հարաբերությամբ փոխանցվել հայերենին, որովհետև հայերի և ասորեստանցիների միջև կապ չկար։ Ուստի փոխառությունը պիտի լիներ անուղղակի, ալսինքն մի որիշ ազգ. ալն է՝ խալդիների միջոցով,

որոնք գոնվում էին այս երկու ազդերի միջև։ Խալդերենն անշուշտ հայերենի համար հայթայթելիս դանազան փոխառություններ, որոնց մեջ կարող էին գտնվել նաև ասորեստանյան բառեր։

Ասորեստանցիների, բաբելոնցիների և սումերների լեզուներն էլ ունեին բարբառային տարբերություններ. նրանց մեջ էլ g—k, d—t, b—p խառնվում էին իրար հետ՝ անորոշ հնչման հետևանքով, ուստի կարող էին մերթ այս և մերթ այն ձևով հասնել հասցեին։

4. Փոխառությունների միջոցով ձայնական օրենքների ժամանակը որոշելու նվիրված է Հայոց լեզվի պատմության 2-րդ հատորի Իվ գլուխը (էջ 362—439), ուր բազմաթիվ օրինակներով և մանրամասն քննությամբ ցույց է տրված հայ բարբառների ծագման ժամանակը։

Սկզբունքը հետևյալն է.

Երբ մի ձայնական օրենք ձևանում է մի լեզվի մեջ, այն ժամանակ գոնված բոլոր բառերը (անկախ իրենց ծագումից) հպատակվում են նաև օրենքին։ Երբ ձայնական օրենքը վերանում է (այլևս չի գործում), որևէ լիգվից մտած նոր փոխառությունն չի ենթարկվում արդեն այդ օրենքին, որովհետև օրենքը վերացել է։ Ուշանալունը շատ նոր լինելով դարձ է մնում հին հայոց այն բոլոր տեսակի ձայնական օրենքներից, որոնք այլևս չեն գործում։ Երևանի բարբառախոս ժողովուրդն ասում է այժմ էլ արամվա, որաշյալը՝ արամվեն, աուպ (cyn, սեռականը՝ սըպի,) ինչպես և կավուչուվի գործածական։ Առաջինը նրա համար, որ բարբառում գործում է դեռ այ երկբարբառը բաղաձայնի մոտ և դարձնելու օրենքը, երկրորդ նրա համար, որ հոլովման մեջ արմատն օրենքը դեռ կա։ Եվ երրորդն էլ նրա համար, որ ձայնավորների հորանջը (hiatus) հարկի չէ։ Իսկ գրական լեզվով խոսող անձինք չեն պահում այդ օրենքները, ուստի ասում են արամվայը, աուպի, կաուչուկի։

Թուրքերենը Հայաստան մտած լինելով XI դարից սկսած, կարող է լավ կուլան ծառայել բարբառների ձայնական օրենքների ժամանակը, հնեաբար և իրենց ծագման ժամանակը որոշելու համար. օրինակ՝

Դարալագեզի բարբառում ու ձայնավորը իրիտուն լաղաձայնից հետո դառնում է ի. ինչպես՝

ձու>ձիւ, ձուկն>ձիւկը, դու>դիւ, դուռն>սիւռը, ջուր>ճիւր և այլն։

Իսկ խուլ բաղաձայնից հետո դառնում է օ. ինչպես՝

աուտ>ասս, շան>շան, ասեն>ասեն, ծաս>ծաս, տեր>տա՛, քան>քան, թուզ>բոզան և այլն:

Թուրք բառը հնխ արմատից է ու նշանակում է բարձրանալ, աճել (ոչ թե ոսկի կամ արծաթ): Այսպիսով էլ արտացոլում է արևելքի ժամանակը, որ է XI դարը:

Ղարաբաղի բարբառում թրքական բազմաձայն պալիմպսեստներ բառասկզբում պահում են պարզ ձայն, իսկ Երևանի բարբառում՝ շնչեղ թրքական. ինչպես՝

բան	Երևան	բ'ան	Ղարաբաղ	պ'ան
բերան	»	բ'էրան	»	պ'էրան
բիր	»	բ'իր	»	պ'իր
բու	»	բ'ու	»	պ'ու
ձալն	»	ձ'ալն	»	ց'ալն
ջար	»	չ'ար	»	չ'իր և այլն:

Այս երևույթը հատուկ է միայն հայերեն բառերին, իսկ թուրքերեն բառերը պահում են իրենց նախաձայն պարզ թրքական բազմաձայնները թե՛ Երևանի և թե՛ Ղարաբաղի բարբառում. ինչպես՝

Թուրքերեն	buya	«յուղ»	Երևան և	Ղարաբաղի բառգ
	güzel	«գեղեցիկ»	»	» պ'ըզալ
	dana	«հարթ»	»	» դանա
	Jam	«թաս»	»	» ջամ

Այն հանգամանքը, որ երկու բարբառներում էլ թուրքերեն բառերը չեն ենթարկվում բազմաձայնների փոխոխման այս օրենքին, ցույց է տալիս, թե օրենքն սկսել էր գործել և վերջացել է այն ժամանակ, երբ դեռ թուրքերեն բառերը մտած չէին գործնել հայերենի մեջ, այն է՝ XII դար և ավելի ուշ:

Հայերենի փոխառյալ բառերն էլ կարող են պարզաբանել ընդհանուր ձայնավորների փոփոխման ժամանակը որոշել:

Դեռևս, որ պարզաբանել ընդհանուր մեծ նշանակություն ունի երեք տեսակ պատմամեթոդ. 1. դիտական, որ դիտական դրամամեթոդն մեջ ընդունված տատադարձամեթոդն ձևն է. 2. պարսիկ ժողովրդական, որ Պարսկաստանի մեծ մասում տարածված և պարսիկ պաշտոնական լեզվի մեջ էլ ընդունված ձևն է. 3. թուրքական, որ Ադրբեջանում և Ռուսաստանում ընդունված ձևն է: Օրինակ՝ «վարդ» բառը դիտական արտասանությամբ լինում է gul, ժողովրդական gol. թուրքական gül:

Դարձ հանելով վերջինը, որ անշուշտ բնիկ և հարազատ չէ, առաջին երեքից հնագույնը դիտականն է, ինչ որ ապացուցվում

է հենց նրանով, որ արաբերենից վերցրած սովորական բառերն էլ ենթարկված են նույն ձայնափոխությանն։ Այսպես՝ արաբերեն ihsān, iftixār, Muhammad դառնում են պարսկերեն ehsān, eftexār, Mohammād։

Հայերենի ձայնական օրենքների համաձայն գիտենք, որ անշեշտ i և u չնչվում են, իսկ e և o պահվում են։ Արդ, եթե տեսնում ենք, որ հայերենի մեջ պարսկերենից առնված բառերը կորցնում են իրենց i, u ձայնավորը, ուրեմն իրոք դրանք i և u են եղել պարսկերենում և ոչ թե e, o, որոնք անշուշտ պիտի մնային, եթե պարսկերենում այդպես հնչված լինեին։

Ձայնական օրենքներն ունեն նաև իրենց հարաբերական ժամանակը, ճիշտ երկրաբանական ժամանակաշրջանների նման։ Հայտնի է, որ երկրաբանները հաճախ չեն կարողանում որոշել հողի շերտի կամ խավի ժամանակը, բայց կարող են ասել, թե ալսինչ խավը այսինչ խավից հետո է կամ առաջ։ Այդպես և լեզվաբանները։

Երբ ասում ենք, թե swesōr դարձել է քոյր, պատանդ ունենք երեք ձայնական օրենք.

1. sw դարձած է ք.
2. s նախ դարձած է h, ապա ընկած.
3. eō դարձած է oյ։

Առաջին երկուսը ալլուստ հայտնի և հաստատված օրենքներ են, բայց երրորդը անհայտ է կամ անսովոր։

Բացատրելու համար պետք է ասել, որ նախ o դարձել է հայերեն ու, ինչ որ նույնպես սովորական օրենք է, ապա eu երկբարբառը դարձել է oյ, ինչ որ նույնպես հայտնի օրենք է։

Բայց այս վերջինը ասելու համար, պետք է ընդունել նախ, որ s-ի h դառնալու և ապա ընկնելու օրենքը ավելի հին է կամ առաջ, քան o-ի ու դառնալը, ապա թե ոչ swesōr ձևից չէր առաջանա քոյր, այլ* քեհուր, ինչ որ գոյություն չունի։

Մեր ասած ձայնական օրենքների ցուցակների մեջ նման օրինակներ շատ կան։

Երբեմն էլ հարաբերական ժամանակը կապվում է ճիշտ ժամանակի հետ և դրանով իր ժամանակն էլ որոշվում է։

Օրինակ, հենց վերի փռյուգական satilla բառի մեջ s-ի հետ կապված է t-ի օրենքը։ Գիտենք, որ t երկու ձայնավորի մեջ դառնում է յ. և այս ձայնական օրենքը դտնում ենք ոչ միայն հնագույն հնդեվրոպական եղբայր, հայր, մայր բառերի մեջ, այլև կա-

թել-կայլակ բառի մեջ, որ նրա նախապատմությունն է (փոխառության կապակից-ի)։ — Սակայն բառը ցույց է տալիս, որ t-ի այդ օրենքը դեռ անփոփոխ չէր մնում, երբ s>h-ի օրենքը վերացել էր։

Եղբայր բառն առաջանում է հնդեվրոպական նախաձևից bhrāter ձևից։ Ձգտելով հետևել ձայնափոխությունների. bh>բ, r>ր, a>ա, ստացի bhrāter դառնում է բրաթեր. մնում է պարզել վերջին երկու ձայնների փոփոխությունը. t երկու ձայնավորի միջև դառնում է ըստ օրինի յ. ե ձայնավորը, դառնալով վերջին վանկում, ընկնում է։ Այս երկու ձայնափոխությունները մեզ թույլ չեն տալիս ենթադրել, թե հայ ձայնավորն է ընկել, այն ժամանակ երբ չպիտի դառնար յ, մանավանդ որ t պիտի դառնար թ-ի մոտ, և ըստ օրինի պիտի դառնար ւ. օրինակ՝ pater>հայր, իսկ սեռական patros>հաւր=հօր, mater>մայր, իսկ սեռական matros>մաւր=մօր. սանսկրիտ mutra>մուր. հնդեվրոպական նախատիպ ararо>արաւր=արօր, հնդեվրոպական նախատիպ alatrla>ադաւրի=ադօրիր։

Այս դեպքում bhrāter պիտի դառնար հայերեն բրաւր և ոչ թե բրայր։

Ըստ այսմ եղբայր բառի փոխադրությունների շարքը հետևյալն է.

1. բրայր.

2. բղայր (որովհետև երբ մի բառի մեջ դրնդի երկու բ, մեկը առարձնանալով դառնում է ղ).

3. ղբայր անդադարությամբ բղ>ղբ։

4. եղբայր (որովհետև ղ-ից առաջ գրվում է միշտ ե կամ ա հնդաձայնը)։

Համաբերական ժամանակի համար լավ օրինակ է հայերեն սեռական Աստուծոյ բառը։

Մեկն հայտնի քննությամբ հայտնի դարձավ, որ այս բառի հնագույն ձևն էր *Աստուածոյ, որ միջին հայերենում միջին ա ձայնավորի կորստով դարձավ Աստուծոյ. այս ձևն էլ այ>ու ձևափոխությամբ դարձավ հետո Աստուծու։ Սրանից հետո անենք բարբառային Աստուծու, Աստու ձևերը, որոնցից առաջինը առաջացավ ա և ծ բաղաձայնների համանմանության օրենքով, իսկ վերջինը կրճատման (հապլոլոգիայի) օրենքով։

Այսպիսով ձայնափոխությունների շարքն է Աստուածոյ, Աստուծոյ, Աստուծու, Աստուծու, Աստու. շարքը այնպես է հաստա-

տուն, որ անհնար է փոփոխել կամ տեղափոխել. լուրաքանչյուրի ժամանակը՝ հարաբերաբար նախորդի և հաջորդի, անշարժ է։

Ոյ տալիս է ու։ Այս երևույթը տեսնում ենք նախ գրաբարում, սղման օրենքի ժամանակ (ինչպես՝ լոյս—լուսոյ, բոյս—բուսակներ), ապա միջին հայերենում և բազմաթիվ բարբառներում, իբրև սովորական ձայնափոխություն (լոյս>լուս, քոյր>քուր)։ Նույնը նաև հոլովման ժամանակ, ինչպես՝ մարդ, մարդոյ>մարդու։

Պետք չկա կարծելու, թե վերջին կարդի բառերը հոլովման ձևն են փոխած և ոյ հոլովումից անցել են ու հոլովման (ծով—ծովու), որովհետև ու հոլովումը սահմանափակ շրջան ուներ հին հայերենում։

ոյ>ու ձայնափոխությունը կարելի է բացատրել հետևյալ ձևով. երբ վերցնում ենք ձայնավորների առանկյունը՝ ·▽ւ, տեսնում ենք, որ o=n գտնվում է առանկյան ձախ կողի վրա, ա-ից քիչ վերև, իսկ ȷ գտնվում է առանկյան հիմքի աջ ծայրին։ Հեղուն n-ից մինչև ȷ բարձրանալու համար շատ ճանապարհ ունի անցնելու։ Նվազագույն ճիգի օրենքով ու կետը ավելի մոտ է ȷ-ին, ուստի գրավել է այդ կետը։

Նույնիսկ Պոլսի բարբառով աճօթի>աճուրի բառը o ձայնավորը դարձրել է ու, որով դեմ առ դեմ է դուրս գալիս հաջորդ ի ձայնավորին։

Դիտողություն 1.—Մեր բացատրությունից երևաց, որ ոյ երկբարբառը հասնելու համար ու-ին՝ նախ անցած պիտի լինի ույ ձևի միջոցով. դրա համար էլ ունենք միջին ույ ձևը, որից ապա ընկնելով ȷ կիսաձայնը (ինչպես՝ հայր>հար), առացվել է ու. այսպես՝ քոյր>քույր>քուր, լոյս>լույս>լուս։ Հետ այսմ բառավերջի ոյ ձևն էլ ենթադրում է նախավոր ույ հնչումը։

Դիտողություն 2.—Պոլսի աճօթի>աճուրի նույն բարբառում մի բոլորովին անսովոր ձև է և սրիշ օրինակ չունի։

Դիտողություն 3.—Նույն ձևով կարելի է բացատրել նաև երեկոյ բառը, որ այժմ դարձել է իրիկուն և մինչև անգամ նախադասությամբ Պոլսի բարբառով՝ իրիկուն։—Նախապես երեկոյ բառը առացել է որոշիչ հոդ և դարձել երեկոյն, ինչպես ունի «Գիրք աղօթից զղջականաց՝ Գրիգորի Իմաստասէր վարդապետաք Մաշկուորք և ապա յերեկոյն Կաղանդատուացին», հրատարակություն Շահնազարյանց, էջ 168, սրանից՝ երեկուն, Վեցօրէք, էջ 65, Ոսկեբերան, Շատ. էջ 471, Եղիշէ, Ը, էջ 115), ապա երիկուն (Վեստացիք, Զ

20, Անկիւնքեան, մ. թ. 10) և վերջապես՝ նոխտամբեր ապրելով միջամտելով՝ իրիկուն (Միջին ձևերը համարձակվել են նույնիսկ տանել Անկյուրյան պրոժեկտների միջ):

Վիտոդուրյուն Ա. Մեր ապրի բարբառներից Պալե, նոր նոխտիկոնի բարբառները ապրական նոյեմբեր ամառանոց գարձել են նուեմբրիե. Թեև մյուս ամառանոցներից հունվար, փետրվար, սեպտեմբեր, դեկտեմբեր երբեք նոմնոմիզմը ձևափոխված են, բայց նուեմբրիե ապրիլ չէ. նրա մեջ էլ ոչ գարձել է ուչ՝ միմիայն վերջ պահելով համաձայն

ԳԼՈՒԽ ԺԲ

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՁԱՅՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ձայնավորների փոփոխությունն ընդհանրապես կապված է տոնի կամ շեշտի, տևողության, դիրքի և մոտակա ձայների հետ։

Տոնը թվում է, թե նշանակություն չունի ձայնավորների փոփոխության հարցում. հնդեվրոպական նախալեզվից ժառանգ լեզուներին անցնելու ժամանակ ձայնավորները առնավոր թե անտոն միևնույն ձայնափոխության են ենթարկված. հանարևնում էլ տոնը ոչ մի ազդեցություն չի ունեցել ձայնավորների վրա, մինչև այն ժամանակ, երբ տոնը վերածվել է շեշտի։

Ձայնավորների տևողությունը մեծ նշանակություն ունի նրանց ձայնափոխության նկատմամբ. գրեթե ամեն լեզվի մեջ էլ նկատում ենք, որ կարճ ձայնավորը սրիշ ձայնափոխություն է ներկայացնում, երկար ձայնավորը՝ սրիշ։ Ալպես՝ հնդեվրոպական նախալեզվի e և o տալիս են հալերեն e, o, բայց սրանց երկարները՝ ē և ō դառնում են հալերեն i, u։ Աստրերեն a հնչվում է a թե արևելյան և թե արևմտյան բարբառներում, բայց ā, որ արևելյան բարբառներում մնում է ā, արևմտյան բարբառներում դառնում է o (Nestle, Syr. Gramm., 1889, 9)։ Հին հանարևն ɛ նոր հանարևնում մնում է e, բայց ɳ (ē) դարձել է i։

Այս երևույթը սակայն բացատրվում է ո՛չ թե ձայնի երկարության ուղղակի ազդեցությամբ, այլ որովհետև երկար ձայնավորներն արտասանվում են ավելի փակ։ Այսպես՝ լատիներենն ուներ երկար և կարճ e և o, ստորին լատիներենում տևողության տարբերությունը վերացել էր և մինչև կարճ e, o արտասանվում էին փակ. ուստի ռոմանական լեզուներում լատիներեն e և ē, o և ō հաստան տարբեր ձայնափոխության։

Ընչաքաղ ամենամեծ նշանակություն ունի ձայնավորների փոփոխության հարցում. ամեն մի ձայնավոր, եթե շեշտակիր է, ենթարկվում է տրիշ ձայնափոխության, եթե անշեշտ է՝ տրիշ. նույն լեզվաոճերը առանձնահատուկ է ձայնավորի ձայնափոխության պահպանելը, ասենք՝ եթե պիրենեյան քննության ենթարկել Լամանական լեզուները և հատկապես ֆրանսերենի մեջ այս երեւույթը շատ լավ է նկատվում. պրնական, լատիներեն me, te, se՝ դառնում են ֆրանսերեն me, te, se՝ եթե անշեշտ են, և moi, toi, soi՝ եթե շեշտակիր են. լատիներեն lavare «լվանալ» բայի խոնարհման ժամանակ, ա մերթ շեշտակիր է, մերթ անշեշտ. որ որ շեշտակիր է, դառնում է միջին ֆրանսերեն e, որ որ անշեշտ է՝ մնում է a. ասպես.

լատիներեն	միջին ֆրանսերեն
lăvo	je lef
lăvas	tu lèves
lăvat	il lèvet
lavamus	nous lavons
lavatis	vous lavez
lavant	ils lèvent

Հայերեն բարբառների մեջ այս օրենքի համաձայն ունենք՝

	պարսար	Ագուլիս	Չեյթուն	Սվեդիա
Ուղղ.	հայց	հայ	հայ	հայց
Սեռ.	հայցի	հայի	հայր՛	հայր՛

որոնց մեջ պարսար ա շեշտի տակ դառել է ս, ու, առանց շեշտի՝ մնացել է ա:

Նույնիսկ շեշտի տատիճանը նշանակություն ունի այս հարցում. երբ պրոկլիտիկան շեշտը ավելի ուժեղ է քան բայինը, պրա համար էլ պրոկլիտիկների շեշտակիր ձայնավորը երկար է, բայինը կարճ. ինչպես՝ zāhāb «ոսկի», qātāl «սպանել» (Brockelm, Précis, 69):

Մոսակա ձայները նույնպես մեծ ազդեցություն ունեն ձայնավորների փոփոխության վրա. մի դեպքում առաջանում են նմանողության ձայնափոխություններ (օրինակ Մարաշի բարբառով՝ Ուսիս Փեբեռուիս. փոխանակ Հիւուս Քրիստոս), մի ուրիշ դեպքում ավելի անկախ ձայնափոխություններ. ասպես՝ ռոմանական լեզուներում մինուլն ձայնավորը միակ վանկի մեջ (հաջորդական բազաձայնով) առհասարակ անփոփոխ է մնում, իսկ բաց վանկի մեջ ձևափոխվում է: Ուրիշ դեպքերում բազաձայնի նեղիացության ձայնավորը վերածում է երկբարբառի:

Դիրքը նույնպես շատ մեծ նշանակություն ունի ձայնավորների ձայնափոխության համար. միևնույն ձայնավորը առաջին վանկում, միջին թե վերջին վանկում կրում է տարբեր ձայնափոխություն. ինչպես հարսանիք>Պոլիս հա՛րսնիք, Ղարաբաղ հըրսնեք։ Բայց այս ազդեցությունն էլ համարվում է անուղղակի, որովհետև այս դեպքում ոչ թե իրապես դիրքն է, որ պատճառ է դառնում ձայնափոխության, այլ շեշտը, որ ըստ դիրքի տարբեր է լինում։

Ձայնավորների բացման աստիճանն էլ նշանակություն ունի ձայնավորների փոփոխության վրա։ Երբ ձայնավորը բաց է, բնականաբար նա ձգտում է մոտենալ և ի վերջո հասնել իր նախորդ աստիճանին և ընդհակառակը, եթե փակ է, ձգտում է մոտենալ և հասնել իր հաջորդ աստիճանին (տես ձայնավորների եռանկյունը)։ Միայն միջին բացվածք ունեցող ձայնավորներն են, որ ավելի երկար կարող են մնալ իրենց դիրքում։ Այսպես՝ ըրըտոներենում e ունի բաց ու փակ աստիճաններ. բաց e մնում է անփոփոխ բոլոր բարբառներում, իսկ փակ e հետզհետե այնպես է փակվել, որ Vannes գավառում արդեն համարյա հնչվում է i (Guillome, Gramm. fr.—bret., 6)։

Համաձայն այս բոլոր պայմանների, ձայնավորը կարող է կրել բազմատեսակ փոփոխություններ, բայց այդ բոլորը կարելի է պարփակել հետևյալ կարգերի մեջ.

1. Ձայնավորը կարող է փոխել իր երանգը.—այսպես՝ կատակայինը (vélaire) դառնում է քմայինի կամ խառն և կամ հակառակը.—ոնղալին է դառնում կամ կորցնում է իր ռնգայնությունը.—կլորանում է (s'arrondir) կամ կորցնում իր կլորությունը.—բացվում կամ փակվում.—մինչև անգամ իր փակման աստիճանը կարող է այնքան բարձրանալ, որ վերածվի կիսաձայնի կամ սեղմի (constrictive)։

2. Ձայնավորը կարող է վերածվել երկբարբառի.—ռումանական լեզուների մեջ այս երևույթը շատ սովորական է. հայ բարբառներում շատ սովորական երևույթ է h a n պարզ ձայնավորների երկբարբառացումը ie և uo ձևով։ Այսպիսով առաջացած երկբարբառը կարող է իր հերթին նորից դառնալ պարզ ձայնավոր, բայց սկզբնականից տարբեր։ Հին անգլերենի ձայնական երևույթներից մեկն է այս, որ կոչվում է brechung «բեկում».—պարզ մի ձայնավոր իրեն հաջորդող բաղաձայնների ազդեցությամբ վերած-

պատ է հիմնարարաման, այսինքն՝ բաժանվում է երկու ձայնավորի։ Այսպես՝

դերմանական կարգ a > ea
կարգ é
I > éo, Io
óe > éa

օրինակներ.

mark > mearc
arm > earm
alt > eald
wallen > weallen
acht > eahta
wachsen > weaxan
nacht > neaht *և այլն*
(Sievers, 5, 8)։

Երկրորդացման երևույթը կա նաև լատիներեն մեջ, որ a > au, e > ei, e > ie *և այլն* (Wiklund, 55)։

3. Ձայնավորը կարող է քնկնել, այսինքն ամբողջապես անհետանալ. այսպես է մեր արդի բազմաթիվ բարբառների մեջ. օրինակ, Պոլիս հարսնիք, Ղարաբաղ ղանկ < աղավնի։ Այսպես նաև փոխանակությունում, որ լսելիությունի անշնչյա ձայնավորները ընկել են։ Անկումը կարող է լինել բառասկզբում (հապալասում), միջում (սդում) կամ վերջում (կրճատում)։

4. Ի հակառակին՝ կարող է բոլորովին մի նոր ձայնավոր երևան գալ մի արևլ բառի մեջ. օրինակ, պարսկերեն rasan = *հալերեն առատան։ Հավելումը կարող է լինել բառասկզբում, բառամիջում և բառավերջում, և բուն անում կոչվում է* prothèse *նախահավելում,* épenthèse *միջահավելում,* épithèse *հետահավելում։*

1. Ձայնավորի երանգի փոփոխությունը.—Այս կարգի փոփոխությունները շատ բազմաթիվ են ու բազմատեսակ, բայց մենք կարող ենք վերածել դրանք հետևյալ կարգերի.

ա. Ինգայնացում և ապաինգայնացում.—Երբ ձայնավորից հետո կա մի ռնդալին (ն, մ) ձայն, կարող է ձայնավորը ռնդալին դառնալ. պատճառն այն է, որ կատիկը, որը ռնդալին բաղաձայնի համար արդեն պիտի ցած իջներ, այդ գործողությունը կատարում է մի քիչ առաջ։ Կարող է լինել նաև, որ ռնդալին բաղաձայնը ազդի հաջորդ ձայնավորի վրա, այսինքն՝ կատիկը, որ ռնգալին բաղաձայնի համար արդեն իջել էր, ուշանա բարձրանալու։ Երկու

դնպքումն էլ մենք նեռկա ենք համանմանութիւն (ասիմիլյացիայի) երեւոյթին, առաջինում. հաընթաց, երկրորդում առաջընթաց։ Այսպես, լատիներեն շատ բառեր, որոնք ունեին ձայնավոր+ռնգային, հետզհետե ռնգայնացրին իրենց ձայնավորը ֆրանսերեում, բայց պահելով հանդերձ ռնգային բաղաձայնը։ Իսկ երբ ձայնավորը արտն բոլորովին ռնդային դարձավ, այն ժամանակ որն-դային բաղաձայնը չնչվեց (XIV—XVI դդ). i և ü ձայնավորները ռնդայնանալիս ավելի ցածրանալով, բացվեցին և դարձան e և ö։

Սրա հակառակ երեւոյթն է ապառնիզայնացումը. ֆրանսերենի մեջ այս երեւոյթը տեղի է ունեցել XVII դարում, երբ année, honneur, femme բառերը, որոնք հնչվում էին ąné, ǫnör, fąm, դարձան ané, onör, fam։

ը. Կլորացում և ապակլորացում շրթնայինի բացվածքի.— Կլորացումը կոչվում է նաև շրթնայնացում. լեզուների մեջ սովորական երեւոյթ է. որ լեզվի մեջ գտնում ենք կլորացած քմայինն ձայնավորներ (ö, ü), դրանք առաջացած են լինում կամ ոչ-կլոր քմայինն ձայնավորների շրթնայնացումից (e, i) և կամ ավելի հաճախ կատակային ձայնավորների քմայնացումից (տե՛ս հաջորդը)։

Ապակլորացումը, որ ավելի սակավագյուտ երեւոյթ է, կատարում է կլոր քմայինները պարզ քմայինի վերածելու մեջ. այսպես՝ ö>e, ü>i, o>ę. ինչպես՝ ֆրանսերեն բարբառային une cuvette>in Kivet, un meunier>o menie, Գերմանիայի հարավային բարբառներում schön, güte, können>šēn, gīte, kenən, հին հունարեն o և իտալերեն ü այժմ դարձել են i։

գ. Քմայնացում և կատկայնացում.—Քմայնացում ասելով հասկանում ենք կատկային ձայնավորների քմային դառնալը, որ առաջ է գալիս հոդավորման կետը բերանի հետևից դեպի առաջ շարժելով։ Հաճախ այս ձայնափոխութիւնը անկախ է, ինչպես լատիներեն u, որ դարձել է ֆրանսերեն ü. նույնպես նաև մեր բարբառների մեջ, ինչպես ջուր>Ղարաբաղ ճիւր, կամ պարսկերեն gul>թուրքերեն gül։ Բայց շատ անգամ քմայնացումը առաջանում է մոտակա ձայների ազդեցութիւնից. այսպես է գերմաներեում umlaut (ֆրանսերեն métaphonie) կոչված երեւոյթը, որով o, u, a ձայնավորները դառնում են ö, ü, ä. եթե հաջորդ վանկի մեջ կա i ձայնավորը։ Այս պարագային կատկային o, u, որոնք իրենք կլոր ձայնավորներ են, առաջ շարժվելով, պահել են իրենց կլորութիւնը և հետևաբար դարձել ö, ü, իսկ a, որ կլոր չէ, հոդավորման կետը առաջ շարժվելով, դարձել է è. օրինակ, mann>männlich, erde-irdisch, gott-göttlich, kunst-künstlich։

Վաղվայնագումբ նաչն երևույթի հակառակն է. երբ հոգևոր մարմնի կամ առաջիկ հնչյուն շարժվի, քմային ձայնավորները կդառնան կամայական։ Այս երևույթը շատ տարածված է, քան նախորդը. իրեն օրինակ պետք է հիշել հատկապես անգլերեն a > ä, all, ball և այլն բառերի միջ։

Այս երևույթի պատճառն է ձայնավորների ներդաշնակության օրենքը, որ հատուկ է պրիմիտիվ ուրալ-ֆիննական, ալթայական, մանչուերեն և պալինեզյան դասական լեզուներին։ Այս օրենքի համեմատ, եթե բառի առաջին մասնի ձայնավորը կամայական է, մյուս բոլոր ձայնավորները էլ կամայական են դառնում, իսկ եթե քմային է, բոլորն էլ քմային են դառնում։

Ձայնավորների ներդաշնակության օրենքը կա նաև պրիմիտիվ խմբի լեզուներում։

Երևույթի հիմնական բացատրությունն այն է, որ բառի անշեշտ վանկերի ձայնավորները ապրվելով շեշտյալ վանկի ձայնավորից, փոխում են իրենց երանգը և մոտենում նրան։ Ավելորդ մոտենիները հարմարվում են արմատի ձայնավորին։

Թուրքերենի մեջ ձայնավորները բաժանվում են երկու խմբի՝ ձայն և խլհնչ. ձայներն են՝ a, ə, o, u. խլհնչներն են՝ e(ä), i, ö, ü, երբ բառի առաջին ձայնավորը ձայն է, մյուս բոլոր ձայնավորներն էլ վերածվում են համապատասխան ձայնի, իսկ եթե առաջին ձայնավորը խլհնչ է, մյուսներն էլ լինում են խլհնչ։ Այս համեմատ թուրքերենի բոլոր մոտնիկներն ու վերջավորությունները էլ լինում են երկու ձևով՝ ձայն ու խլհնչ. օրինակ, -մ-ով վերջացող մոտնիկն է leq կամ lik, բացատական հոլովի վերջավորությունն է dan, den, սեռականի վերջավորությունն է ja-jə, legim և այլն։



Ձայն ու խլհնչ ձայնավորների որոշման մեջ ինչ որ հետաքրքրականն է, այն է, որ ձայնավորների եռանկյան մեջ ձայներն ամբողջությամբ գտնվում են եռանկյան ձախ կողմը (հետևաբար նաև գագաթը՝ a), իսկ խլհնչները գտնվում են աջ կողմը, պրավելով ամբողջ երկու գիծ, բացառությամբ գագաթի a-ի։

Ձայնավորների ներդաշնակության օրենքից տարբեր է ձայնավորների հավասարակշռության (equilibre vocalique) օրենքը, որ գտնում ենք սկանդինավյան լեզուների մեջ։ Բառավերջի i, u, a ձայնավորները պահում են իրենց երանգը, երբ կիսաերկար են, ապա թեև չէ դառնում են e, o, œ, հատկապես բաց վանկում։ Վերջաձայն ձայնավորի տևողությունը կախված է արմատական վանկի տևողությունից. եթե առաջին վանկը կարճ է, երկրորդը կիսաերկար է և կրում է համեմատաբար ուժեղ շեշտ. եթե առաջին վանկը երկար է, երկրորդը ոչի շատ սկսր շեշտ և տևողությունն էլ կարճ է։ Այսպիսով ուսացվում է լեզվի մեջ gatā: gāta ձևերի դեմ՝ gata: gātœ և gatu: gāto (BSL № 69, էջ 247)։

Մանջարևեն լեզվի մեջ ձայնավորների ներդաշնակության օրենքը արտահայտվում է հետևյալ ձևով. երբ արմատն ունի միայն a ձայնավորը, մասնիկներն էլ դառնում են a, երբ արմատն ունի միայն o, մասնիկներն էլ դառնում են o. երբ արմատն ունի միայն e, մասնիկներն էլ դառնում են e. իսկ երբ ձայնավորները զանազան տեսակի են, մասնիկներն էլ զանազան ձայնավորներ են ստանում։ Երբ մի բառի ձայրին իրար հետից ավելանան մի քանի մասնիկներ, առաջին մասնիկի ձայնավորը գերիշխող դեր է կատարում և մյուս բոլոր մասնիկների ձայնավորները վերածվում են նրան (L. Adam, 18)։

Վոգուլերեն լեզվի մեջ ձայնավորների ներդաշնակության օրենքը տարբերվում է ըստ բարբառների, մեկի մեջ ավելի, մյուսի մեջ պակաս չափով (Ahlqvist, 143)։

Աֆրիկյան իբո (ոչ-բանտու) լեզվի մեջ ձայնավորների ներդաշնակության օրենքը գործում է հետևյալ ձևով։ Լեզուն ունի 8 ձայնավոր, որոնք բաժանվում են 4 տեսակի՝ փակ, կիսափակ, բաց, կիսաբաց, յուրաքանչյուր տեսակից 2 աստիճան. որ ուսումնասիրողը ներկայացնում է հետևյալ ձևով.

	առջևի	հետևի	
1.	i	u	փակ
2.	e	ɵ	կիսափակ
3.	ɛ	o	կիսաբաց
4.	a	ɔ	բաց

Ներդաշնակությունը պահվում է հետևյալ ձևով.

i, ɛ, u, o փակ ու կիսաբաց,

համ

e, a, ɵ, ɔ բաց ու կիսափակ։

Բառի բոլոր մասնիկները և գոնեպես միջմորֆեմները հնազանդ են բառի արմատի ձայնավորի հրամանին (Ward, 1—2)։

Հնդկական առոգանալի լեզուներն էլ կա ձայնավորների ներդաշնակության սկզբը, որ կոչվում է harmonic sequence *և որ շատ ավելի բարդ ձև ունի քան տյուրք լեզուներում* (Grierson, IV, 37)։

Ձայնավորների ներդաշնակության սկզբը կա նաև հիմնաբարբառային չարչի լեզվի մեջ. ձայնավորները բաժանվում են երեք կարգի՝ ծանր, թեթև և չեզոք. ամեն մի բառ պիտի ունենա միայն ծանր կամ միայն թեթև ձայնավոր, իսկ չեզոքները ընդհանուր են։ Նույն սկզբին ենթարկվում են նաև մասնիկները, որոնք ունեն երկու ձև՝ ծանր ու թեթև։ Ուսանելիքով փոխառյալ բառերն էլ ձևափոխվելով ենթարկվում են նույն սկզբին (Bogoras, 647)։

գ. Բացում և փակում.— *Բացումն առաջանում է առարին ձևնասար և մանուսանդ լեզուն իջեցնելուց։ Երբ քամին ձայնավորը հնարհնան ավելի բաց է դառնում, լեզուն էլ առաջից պիպի հետ է քաշվում, իսկ եթե կատարին ձայնավորն է ավելի բացվում, լեզուն ընդհանուրապես հետևից առաջ է գալիս։ Փորանարևնում և անդրևնում ։ ձայնը իրանից առաջ գոնվող ձայնավորը ավելի բաց է դարձնում. լատիներեն* lacrima, *որ ավել է հին փորանարեն* lermc, *հիմա եղել է* larme, *«արցունք». անգլերեն* door *«դուռ»,* dark *«մութ», որոնք բուս արիևի պիտի հնչվեին* dur, dārk, *հնչվում են r-ի պատճառով ավելի բացվելով՝* dor, dark։ *Պարսկերենի մեջ u ավժ դարձել է o, ինչպես՝* turk>tork, gul>gol։ *Արաբերենի u ձայնը Աստրխում հնչվում է o* (Belot, 5), *որտև համապատասխան պարսկերեն i դարձել է ավժ e և արաբերեն i հնչվում է Աստրխում e (անդ)։*

Փակումը սրա հակառակ երևույթն է։

Փորանարևնում անշեշտ ձայնավորներն ավելի են փակվում, ալսպես նաև բաց վանկի մեջ գոնվող ձայնավորները. հմմտ. œuf, *հոգնակի* œufs *(հնչել öf, ö). լատիներևնում հաճախ առաջին վանկի a ձայնավորը բնհնկում բառի մեջ, ավելի է փակվում, ինչպես՝* facio—efficio, pater—Jupiter, taberna—contubernalis. *ալս փոփոխությունը շեշտի կրության պատճառով է. ձայնավորը շեշտը կորցնելով (ալսինքն՝ ավելի ուժասնալով) փակվել է։*

Շեշտի պակասությունը միշտ պատճառ չի դառնում ձայնավորի փակման. շատ լեզուների մեջ նկատելի է, ընդհակառակը, որ յեթ բաց և յեթ փակ, յեթ առաջակողմյան և յեթ հետակողմյան ձայնավորները շեշտի կրությամբ վերածվում են մի տեսակ խուլ ձայ-

նի, որ կարող ենք նշանակել իբր ə (ը). այսպես է ֆրանսերենում համր e ձայնը, որ առաջ է գալիս անշեշտ a, e, o ձայնավորներից. նույնը կա նաև անգլերենում և գերմաներենում. առաջերենում ամեն ձայնավոր, որ ընկնում է շեշտից հետո, արտասանվում է մոտ. օրինակ, ОКОЛО, МЫЛО և այլն. այսպես և հայերեն մի քանի բարբառներում շեշտից առաջ գտնված ձայնավորները վերածվում են ը-ի:

Երբ ամենափակ ձայնավորները՝ ü, ū, ï ավելի ևս փակվելն, կդառնան կիսաձայն (w, ẅ, y), իսկ սրանք էլ փակվելով, կվերածվեն բաղաձայնի: Այսպիսով ձայնավորը կհասնի բաղաձայնի աստիճանին:

2. Երկրարբառացում և երկրարբառների վերածում.—*Երկրարբառներն առաջանում են երկու ձայնավորի կամ մի ձայնավորի և մի կիսաձայնի հանդիպումից: Այս հանդիպումն էլ կարող է առաջանալ լեզվի մեջ սովորական մի ածանցման պատճառով և կամ որևէ բառի ձայնափոխությամբ.* այսպես, լատիներեն faktum բառի մեջ c վերածվելով կիսաձայն y, և ընկնելով a ձայնավորի մոտ, առաջացել է ai երկրարբառը, որով հին ֆրանսերեն fait (նոր ֆրանսերեն հնչված fè):

Երկրարբառացում կարող է առաջանալ նաև ձայնավորի քմայնացմամբ (palatalisation) *և շրթնայնացմամբ* (labialisation), առաջինն առաջանում է հաջորդական մի վանկի i ձայնավորի ազդեցությամբ, երկրորդը՝ u ձայնավորի. այսպես՝

հուն. φαμι «ասեմ» > լատ. φᾱμι,

*φαvω > φαίνω

*feli > անգլս. feolu «շատ»

*miluk > անգսք. mioluk «կաթ»

equa > պորտ. euga (Brugmann, Abrégé, 235)

Բոլորովին տարբեր է, երբ ձայնավորն ինքը վերածվում է երկրարբառի: Այս երևույթը շատ սովորական է պահպան լեզուներում, հատկապես նորլատին լեզուների մեջ, որ լատիներեն շեշտյալ e, o վերածվել են հաճախ երկրարբառի. օրինակ.

լտ. bonus — իտալ. buono իսպ. bueno

gloriam — ֆր. gloire

petra — իտալ. pietra, ֆրանս. pierre

aqua — ժող. պորտ. augua «ջուր»

Այսպես նաև անգլերեն և գերմաներեն au, ai երկրարբառները առաջացել են ū, ī ձայնավորներից. այսպ. Հարավային Անգ-

լեզուում սրանք միակ ձայնավորը միավանկում է երկբարբառ կազմում e, o, i, u, հնչյուններ են ei, ou, iy, uy։

Սլավոներենում o հնչյունը է o, իսկ երկար o հնչյունը է uo, ինչպես póda (կարդա puóda) «հատակ»։

Նույն պատճառն ունի նաև հայերենում, որ և և ո ձայնավորները պարզ են երկրաբարբառ։

Այս երևույթը, որ ինչպես տեսանք ունի շատ տարածված լեզուների մեջ, ստուգաբանում է հետևյալ ձևով.—Ձայնավորն իր սեփական արտասանության մեջ ծայրից ծայր նույն չէ, նրա իսկական արտասանության կեսերի միջոցին է, երբ դրժարաններն ու հատկապես լեզուն պահում են մի հաստատուն դիրք։ Իսկ լսողման և էջքի միջոցին դրժարանները շարժման մեջ են և անցնում են դիրքից դիրք, մինչև հասնեն կեցքը կամ հանգիստը։ Այս դիրքից-դիրք անցնելու միջոցին անշուշտ բնազանում են նաև այն վիճակը, որ պետք է մյուս ձայնավորների արտասանության համար, և իրոք արտասանվում են այդ ձայնավորները իրար հետևից, բայց արագության նրանց անցումները չափազանց կարճ է, մեր լսողության համար բավանելի է դառնում միայն կեցքը, իրրև մի պարզ ձայնավոր։ Եթե դրժարաններն իրենց այս դիրքից անցնելու ընթացքում սրեն ու մի փոքր հապաղում ցույց տան, այդժամ արդեն լսելի կլինի մի արիշ երկրորդական ձայնավոր էլ, որ և միանալով մյուսի հետ, կլինի երկրաբարբառ։ Նեղացալ ձայնավորը անշեշտ ձայնավորից մի քիչ ավելի երկար լինելով, իսկ երկար ձայնավորը արդեն և բնե երկար լինելով, ավելի ժամանակ են արտադրում դիրքից դիրք անցնելու միջոցին հապաղում կատարելու և հետևաբար ավելի հնչուն են երկրաբարբառ դառնում։ Այսպես, օրինակ, մեր բարբառներում և և ո դառնում են երկրաբարբառ՝ շեշտի տակ, իսկ շեշտից դրսիևիս դառնում են պարզ ձայնավոր։

Երկրաբարբառն իր հերթին կարող է ապաքայլներ կրել նոր ձևավոխությունների, որոնք են.

1. կարող է տարրալուծվել երկու անկախ ձայնավորների (diérèse), որոնց մեջ հետո կարող է ներմուծվել մի բաղաձայն.
2. աճման երկրաբարբառը կարող է դառնալ նվազման.
3. նվազման երկրաբարբառը կարող է դառնալ աճման.
4. երկրաբարբառը կարող է դառնալ մի արիշ երկրաբարբառ.
5. երկրաբարբառը կարող է դառնալ պարզ ձայնավոր.
6. երկրաբարբառի մի մասը բաղաձայնի վերածվելով, դառնալ բաղաձայնից ու ձայնավորից բաղկացած մի վանկ։

Այսպես, օրինակ, լատիներեն o *եղել է ֆրանսերեն* uo *(երկրարբառ), որ հետո դարձել է* üe, *այժմ էլ* ö *(պարզ ձայնավոր)։ Նմանպես լատիներեն* ē *դարձել է ֆրանսերեն* ei, oe, oa, ua, ya. *հին հանարեն* ɛi, oi, vi *երկրարբառները դարձել են այսօր* i, ai *դարձել է* é, *իսկ* av, ɛv, ɣv *երկրարբառների մեջ* v *դառնալով* v *կամ* f *(համաձայն հաջորդ բաղաձայնի թրթռուն կամ խուլ լինելուն)՝ այդ երկրարբառները հնչվում են* av—af, ev—ef, iv—if։ *Արաբերեն* ai, *և* au *ժողովրդական լեզվում դարձել են* ê, ô, *ինչպես* خير xair>xēr *«բարիք» (հայերեն՝ խեր),* يوم yaum>yôm *«օր»* (Dirr, 3)։

Կալմիկերենում երկրարբառները հետապատում վերածվում են երկար ձայնավորի. այսպես aï>ā, oï>ō, uï>ū (Сонжеев, 13)։

3. Ձայնավորի անկում.—Սովորաբար անշեշտ ձայնավորներն են ընկնում. լատիներենի վերջընթեր վանկի անշեշտ ձայնավորը ասորին լատիներենում միշտ ընկել էր, ինչպես՝ frigidus, cálidus, dígitus, tábula, ángulus *դարձել են* frígdus, cáldus, digtus, tábla, ánglus, *իսկ որոնցից էլ ֆրանսերենի վերածելիս ալն բոլոր անշեշտ ձայնավորները, որ պահվում էին լատիներենի վերջընթեր կամ երկրորդ և կամ վերջին վանկում, ինչպես նաև ալն անշեշտ ձայնավորները, որոնք պահվում էին շեշտից անմիջապես առաջ, ընկան, միայն* a *վերածվեց համր* e-ի. *օրինակ՝ ալդ նաև բուռը եղան* froid, chaud, table, angle. *այսպես նաև* sanitátem> santé, dormitorium>dortoir, asinum>âne, simulâre>sembler, caballos>chevaus *և այլն. նաև առաջին վանկում, ինչպես՝* ablátum>blé, oryza>riz, adamantem>diamant.

Այսպես նաև դերմաներեն և անգլերեն, որոնց մեջ անշեշտ ձայնավորներն ընկել են. օրինակ, լատիներեն monasterium>*գերմաներեն* münster, *անգլերեն* minster, *անգլոսաքսոն.* hlaf-dige *«հաց թխող կին»>անգլերեն* lady *և այլն։*

Սեմական նախալեզվի մեջ շեշտից անմիջապես հետո եկող կարճ ձայնավորները ընկան. ինչպես qatala *«սպանել» բայից **ná-qatala>náqtala, *ìánaqatilu>ìánqatilu, *ìáqutul>ìáqtul. *իսկ վերջավանկի անշեշտ երկար ձայնավորները վերածվեցին կարճի* (Brockelm, Précis de ling. sém, 66)։

Հայերենի մեջ էլ ունենք հարսանիք>հարսնիք, հրաւանիք *համաձայն շեշտի սենդի։*

Մոնղոլերենում գրվում է yábaxo *«երթալ», բայց հնչվում է* yabx, *շեշտից հետո եկող ձայնավորները չնչվում են* (Клюкин, 17)։

Այժմ էլ ամեն լեզվի մեջ անշեջան ձայնավորները խոսակցության մեջ չնչին են, ինչպես ֆրանսերեն un chekal>ũ šval, *գերմաներեն* ich habe>iç hap, *անգլերեն* sufficient>sfišənt։

Հաճախ մի ձայնավոր միանալով հաջորդ մի ձայնի հետ, չընչանում է. օրինակ, ֆրանսերեն meaille>maille, beneir>benir, marcheand>marchand. *Համմա. նաև լատիներեն* lineam>ligne, filiam>fille, *որոնց մեջ* e և i *վերածվել են նախ* y-ի և *միանալով հաջորդ բաղաձայնի հետ, ստեղծել է* mouillé *բաղաձայն։*

4. Ձայնավորի հավելում. *Մի որևէ ձայնավոր կարող է երևան գալ մի որևէ բառի մեջ, առանց ծննդական իր նախորդը. ահա մի քանի պարագա.*

ա. *Երբեմն հնդաբան կարող է առաջ գալ մի բաղաձայնի կամ բաղաձայնների մի խմբի առաջ. օրինակ, լատիներեն այն բառերը, որոնք սկսվում են* s-ով և *որոնից հետո կա մի պայթմական, ֆրանսերենի անցնելիս առաջել են* e, *որից հետո* s *ձայնը ընկել է. ինչպես՝* spatha>épée, scala>échelle, stabulum>étable *և այլն։ Հայերենի մեջ ո և յ ձայնեղով սկսվող բառերը առանում են ա, ի հնդաբանը։ Գավառականում անհնչ նաև ու, ինչպես՝ ուռուս, ուռում. հոնարին՝ ջրմոլ, ալագիս նաև հոնարին՝ «կարմիր ջրմոլ»։*

բ. *Հաճախ լ, ր, մ, ն ձայնորդները կարող են առանալ իրենց առաջից կամ հետևից մի նոր ձայնավոր. ինչպես՝ հնդեվրոպական նախալեզու պ, որ ավել է* or, ar, ra. *Համմա. լատիներեն* cor, cordis, *հոնարին* ջրմոլ *համիրական* ջրմոլ, *հոլանդերեն* wolk «*ամպ*», melk «*կաթ*» *բառերը հնչյամբ են* volək, meləkː *երբ հավելյալ ձայնավորը ձայնորդից հետո է, երևույթը կոչվում է առնակրիտ բառով* svara-bhaktiː

գ. *Երկու և ավելի բաղաձայնների միջև, հնչման հեշտության և բաղաձայնների դասվելու դժվարին դարձնելու համար, ավելացվում է մի նոր ձայնավոր.* Bagdad>bagədad, vingt—trois>գավառական vɛ̃tətrwa։ *Ալպիսի ձայնավորներ կարող են հետո անկախ դառնալ. ինչպես* knif>*ֆրանսերեն* canif. *լատիներեն* *stablom, *famlom>stabilum, famulum, *իսկ լատիներեն* *stablis, famlia>stabilis, familia *և այլն* (Passy, 210 *և շար.*)։

Այս բոլոր հավելումները դուս ձայնաբանական են. բայց կա նաև քերականական հավելում, ինչպիսին է հաջորդ կետում հիշվածը։

դ. Զուվաշերեն լեզվի մեջ որոշ բառեր, եթե հարկավոր է ավելի ուշադրութ֊յուն դարձնել նրանց վրա, ստանում են վերջում մի կարճ ձայնավոր. օրինակ, ut tʸopatʸ «ձին վազում է». բայց «շուտ առաջ վազիր, որովհետև ձիդ վազում է» խոսքի մեջ, ուր կարևոր է շեշտել ձիու վազել֊փախչելը, բայը դառնում է ut tʸop-ate (Ашмаранч, Матер., 35—36)։

Զաիսաղանց կարճացած բառերի երկարացման լավ օրինակ֊ներ են՝

պարսկերեն یا, ya, خواهش, yāxūd «կամ թե».
» دی dī, دیروز dīrūz «երեկ».
» پار pār, پارسال pārsāl «հերու»։

ԳԼՈՒԽ Ի

ԿԻՍԱՁԱՅՆՆԵՐԻ ԵՎ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես ձայնավորները, նույնպես և բաղաձայնները ձայնափոխության կարող է լինել անկախ, բայց մեծ մասամբ պայմանական է։ Այս պայմանները նայած են, ինչ որ ձայնավորների համար. այն է՝ առն կամ շնջա, անողոքելուն, մերձավոր ձայների պահպանելուն, բաղաձայնի դիրքը բառի կամ ձայնախմբի մեջ։ Բաղաձայնները առն կամ շնջա չառնեն, ասում ենք այս բառերով համապատասխանում ենք այն ձայնավորի առնն ու շնջուն, որի հետ կապված է բաղաձայնը։ Իսկ անողոքելուն ասելով հասկանում ենք պարզ կամ կրկնակ բաղաձայնները. պարզ բաղաձայնը համարվում է կարճ, կրկնակ բաղաձայնը համարվում է երկար։ Ալոպիսով բաղաձայնների փոխհարաբերության համար եղած պայմանները վերածվում են երեքի, որոնք են.

1. Բաղաձայնի դիրքը առնի կամ շնջուի համեմատ, այն է՝ բաղաձայնը պահվում է առնից կամ շնջուից առաջ, թե հետո։

2. Բաղաձայնի դիրքը իր մոտակա ձայների համեմատ, այն է՝ բաղաձայնը պահվում է ձայնավորի՞, թե այս կամ այն բաղաձայնի մոտ։

3. Բաղաձայնի դիրքը բառի մեջ, այսինքն՝ բաղաձայնը գրավում է բառի սկզբում, միջին, թե վերջին վանկում։

Ալոպիսով բոլոր պայմանները վերածվում են մի բառով՝ բաղաձայնների դիրքին, որի համեմատ էլ լինում են բաղաձայնների բոլոր անսակի ձայնափոխությունները։

Բաղաձայնների ձայնափոխությունները վերածվում են հետևյալ երեք կարգերի.

1. Երանգի փոփոխություն
2. Անկում
3. Հավելում

ԵՐԱՆԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Առաջանում են բաղաձայնի արտադրության մասնակցող գործարանների շարժման ձևափոխություններից. այսպես.

ա. Խոչակի ձևափոխություն.—Բաղաձայնի համար ընդունված թրթռումների ժամանակը կարող է խախտվել ձայնական լարերի դործունեության փոփոխությամբ. եթե բաղաձայնը թրթռուն է, ձայնալարերը կարող են ուշանալ թրթռալու և կամ բոլորովին չթրթռալ. այդ դեպքում թրթռունը կդառնա կիսախուլ կամ խուլ։ Հակառակ պարագային խուլը կդառնա թրթռուն և այլն։

բ. Ինգային ձևափոխություն.—Կաուիկը կարող է ժամանակից շուտ կամ ուշ բարձրանալ. այս դեպքում կառաջանա ռնդալին բաղաձայն կամ եթե կար՝ կչնջվի։

գ. Կակղացում և կարծրացում.—Լեզվի հպման կետը քիմքին կարող է փոքրանալ կամ մեծանալ, միևնույն ժամանակ լեզվի մկաններին ձգումը փոփոխվել, որով և կառաջանան կակուղ և կարծր բաղաձայններ։

դ. Հոդավորման եղանակի փոփոխություն.—Որոշ մի կարգի բաղաձայն վերածվում է մի ուրիշ կարգի (մինչև իսկ հասնում է ձայնավորի), բայց հոդավորված միևնույն ուեղում. օրինակ, պալաթականը վերածվում է կիսապալաթականի կամ շփականի։

ե. Հոդավորման տեղի փոփոխություն.—Կատկային բաղաձայնը դառնում է ատամնական կամ շրթնային և այլն։

ՀԱՎԵԼՈՒՄ ԵՎ ԱՆԿՈՒՄ

Հավելում կոչում ենք այն պարագան, երբ մի որևէ բաղաձայն ինքնաբերաբար երևան է գալիս մի ձայնախմբի մեջ, առանց շարունակությունը լինելու նախապես գոյություն ունեցող մի որևէ ձայնի։ Այսպես, օրինակ, ծանգլ, ռուստ (փոխանակ ծանր, ռուս) բառերի մեջ, ուր ունենք դ, տ ձայների հավելումը։ Այսպես նաև հունարեն χαμαι, ռուսերեն право>ժողովրդական ndrav։ Այս դեպ-

բերում լեզվի ձայնը մատնում է կապիճներին, առանց թրթռալու և ալդ միջոցին պատ է դալիս ու ավելի հաճախ է ալս երեսվիճը sr խմբի մեջ, որ պատում է str. Նման օրինակներ են. namn>հին չվեկերենն nampn «անուն», առնականիս tāmrá>tāmbra «մուխ կարմիր», numerus>ֆրանսերեն nombre «թիվ», միջին բարձր դերմաներեն nameltch>namblich «հանճարեղ», դերմաներեն eigentlich> eigentlich «հատկապես», գոթերեն swistr, հին սլավոներեն sestra «քույր»—առնականիս svásr և այլն. հոլերեն boup>Տիպոս, Շամախի Նոսար, ինչպես առաջին դարերեն поз-д-ри «անդունդ» (փոխառյալ поєри), ժողովրդական առաջին страм, страженіе փոխառյալ срам «ամոթ», сраженіе «պատերազմ», нравъ «նկարագիր»> ժողովրդական առաջին ндравъ։

Ձգտելով էլ հավելումը կարող է լինել բուն դիրքի՝ նախամաշվելում, միջամասիկում, հետամասիկում։

Այս հակառակ երևույթն է անկումը, երբ նախատիպ դոլոթյուն անկյալ մի բաղաձայն, գործարանների ավելի քիչ հոլլ հիմի պատճառով, հետդհետե ակարանում և ի վերջո անհետանում է։ Ծրանակներում չավարտյալ շատ են այն դեպքերը, երբ մի բաղաձայն յատիներիից ֆրանսերենի անցնելիս, չնչվել է. ալսպես՝ d, g երկու ձայնավորի միջև, կամ գանալան բաղաձայններ բառավերջում. օրինակ, լատիներեն ligare>lier «կապել», replicare> replier «նորից ծալել», confidéntia>confiance «վստահություն» և այլն։

Բաղաձայնի անկում (մատնակիլ կամ ամբողջական) տեղի է ունենում հատկապես բաղաձայնների խմբակիների մեջ, ալսպես, օրինակ, առաջին склянка>ալժմ склянка. լատիներեն *quatslos>*quaslos>quālus, *scandsla>*scasla>scala, *loucsmen lūmen և այլն։ Ալս դեպքում կան հետևյալ պարադաները.

1. Ձայնավորացում.—Ձայնախմբի մի անդամը առաջհանարար փոխոխվելով կարող է վերածվել ձայնավորի. ալսպես, լատիներեն factum բառը kt>çt>yt առաջհաններից անցնելով տվել է վերջապես ֆրանսերեն fait «դեպք, իրողություն». լատիներեն flos, floris «ծաղիկ» անցնելով fl, fl՝ ձևից, ավել է իտալերեն fiore։

2. Ձուլում.—Երկու տարբեր բաղաձայններ առաջհանարար փոխոխվելով հասնում են մեկին. օրինակ, ֆրանսերենում լատիներեն tk անցնելով tç>t՝>tš ձևերից գարձել է š, կամ լատիներեն dk անցնելով dk>d՝>dž ձևերից՝ գարձել է ž։

3. Համաձայնություն.— Երկու տարբեր բաղաձայններից մեկը նմանվում է մյուսին. սովորաբար երկուսից առաջինն է, որ նմանվում է մյուսին, որովհետև լինելով պալթական, արտասանվում է ավելի թույլ և ականջի վրա թողնում է ավելի տկար արտավորություն. օրինակ, լատիներեն factum>*իտալերեն* fatto *բառի մեջ* ct *հումքը դարձել է* tt:

4. Անկում.— Համանմանության վերջին աստիճանն է, երբ երկու տարբեր բաղաձայն նմանվելով նախապես իրար, կամքի տևողությունը կրճատվում է, որով երկուսը վերածվում են մեկի: Այսպիսի անկումը տարբեր է նրանից, որ նկարագրեցինք քիչ առաջ, և որ չի ենթադրում բաղաձայնի նախավոր համանմանություն:

Այսպիսի անկման բազմաթիվ օրինակներից հիշենք լատիներեն hoc>hocc>ho͡c-ce *«այս»,* saccus *«պարկ»>*sacellus *«քսակ»,* paulum. paullulum>paulum, paullulum *«քիչ, քչիկ»,* *ters->terr>ter *«երիցս», հին բարձր գերմաներեն* fallan *«ընկնել»—*fiallun *«ընկնան», գոթերեն* *immi>im *«նա», հունարեն* ἄλλος *«այլ, ուրիշ», նոր հունարեն* γλῶσσα *«լեզու»>նոր հունարեն* alos, glósa, *հունարեն* εσσί= *լատիներեն* ess, es, *բայց=սանսկրիտ* ási=*հայերեն (դու)* es:

Մինչև այժմ մենք ցույց տվինք, թե բաղաձայնները ինչ տիպի փոփոխություններ կարող են կրել: Բայց ավելացնենք իսկույն, որ մի բաղաձայն ալսինչ տիպի փոփոխությունների շարքը բռնելուց հետո, կարող է մտնել մի ուրիշ տիպի մեջ և շարունակել այս երկրորդ ընթացքը և այսպես շարունակ: Սրանից հետևում է, որ բաղաձայնների ձայնափոխությունները անհուն են թվով և մենք այժմ ուրիշ բան չենք կարող անել, եթե ոչ վերցնել բաղաձայնները կարգ-կարգ և թվել նրանց գլխավոր ձայնափոխությունները միևնույն ուղղությամբ:

1. ԿԻՍԱՁԱՅՆՆԵՐԻ ՁԱՅՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Կիսաձայնների ձայնափոխությունը առաջանում է բերանային բացվածքի հաջորդական փոփոխությամբ. բացվածքը կարող է մեծանալ կամ փոքրանալ, այսինքն՝ ավելի բացվել կամ մի քիչ փակվել: Երբ ավելի բացվի, բնականաբար կիսաձայնը կդառնա ձայնավոր, այսպես՝ w>u, w>u, y>i:

Երբ բացվածքը ավելի փակվի, լուրաքանչյուր կիսաձայն կտա նորանոր բաղաձայններ, հետևյալ ձևով:

Y — այս կիսաձայնի արտասանության ժամանակ լեզուն կրկնում է քիմքինը՝ երկու հպերքից և ձևավորում է մի նեղ անցք։ Եթե այս անցքը մի քիչ էլ նեղանա, լսելի աստանց փակվելու, կիսաձայնը կվերածվի պրոմանների շփականը y ձայնին, որ եթե խլանա կդառնա ç։ Եթե լեզուն կործր քիմքին մոտենալու դիպչի նրան աստանցքից, ալնպես որ անցքը փակվի, այդ ժամանակ արտադրված ձայնը ոչ կիսաձայն կլինի, ոչ էլ շփականը, այլ միջնաձգվածին պատկանող պայթական j։ Եթե այս արտասանությունը հետևից առաջ շարժվի, կլինի dʲ։ Եթե այս ձայնը կարծրանա, կդառնա d։ Բայց ավելի հաճախ դառնում է կիսապայթականի ʃ, կամ եթե արտասանությունը ավելի ստաջանա՝ ʦ և կամ նույնիսկ միջնաստամնային կիսապայթականի d, ու եթե ձայնափոխությունը ավելի ստաջ տարվի, այս կիսապայթականները կդառնան պարզ շփականի ž, z, ու իսկ եթե j՝ արտասանությունը դեպի հետ քաշվի, այդ ժամանակ կստացվում պայթական gʲ, որ էլ եթե քաշվելով և քիմքին ավելի քիչ հպվելով, կդառնա կարծր g, իսկ սա էլ ավելի կարծրանալով, կդառնա ĝ։ Այս բոլոր ձայնափոխությունների միջոցին, թրթռումը պահպանվում, բայց ձայները կարող է դառնալ խուլ. այսպես՝ վերջին աստիճանին հասած ĝ կարող է խլանալով տալ x, որ արտասանվելով ավելի լայն բացվածքով, կդառնա h։

Կիսաձայն y-ի այս բոլոր ձայնափոխությունները կարելի է նկատել նորաստեղծ լեզուների մեջ և կարելի է միշտ դիտել սրանք բարբառ, որի մեջ լսափնեղեն y-ի ձայնափոխությունը կանգնած լինի այս կամ այն աստիճանի վրա։ Իտալականում լսափնեղեն j դարձել է x, իսպաներեն՝ j, ֆրանսերեն ž և այլն։

Երբ կիսաձայն y գտնվում է մի որևէ բաղաձայնի հետ, երկուսի ձայնմամբ կատաջանում մի նոր բաղաձայն։

W — Այս կիսաձայնի արտաբերության ժամանակ բերանային անցքը սեղմված է լինում երկու կետ վրա. մեկը՝ շրթունքների միջև, մյուսը՝ լեզվի արմատի և կատիկի միջև։ Եթե այս երկու սեղմված կետերից մեկը կամ մյուսը սեղմվի, կատաջանան նոր բաղաձայններ հետևյալ ձևով. եթե շրթունքները ավելի սեղմվեն, w կդառնա b, որից էլ կատաջանա b կամ v, իսկ սրանց խլացումով p կամ f. եթե լեզվի արմատը և կատիկը ավելի սեղմվի, կիսաձայն w կդառնա gw, որից կատաջանա g, սա էլ խլանալով՝ k։

Ահա սրանց պատկերը.

$$w > b \begin{matrix} b & p \\ v & f \end{matrix} \qquad w > gw > g > k$$

Նորալատին լեզուները ներկայացնում են նույնպես այս ձայնափոխությունների բոլոր աստիճանները. օրինակ, ֆրանսերենում կա լատիներեն vermen>ver, navem>nef, vespa>guêpe. կելտական խմբի մեջ ունենք լատիներեն vērus ձևին համապատասխան գալլերեն gwir, բրետոներեն guir, իռլանդերեն fir։

Ŵ — Այս կիսաձայնը քիչ է պատահում լեզուների մեջ. օրինակ, կա ֆրանսերենում, ուր երբեմն վերածվում է ձայնավոր u-ի կամ ընկնում է, բայց բաղաձայնի վերածված ձևեր չունի։

2. ՁԱՅՆՈՐԴՆԵՐԻ ՁԱՅՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ձայնորդները 4 են (չհաշվելով կիսաձայնները).

կողմնական — l

ցնցուն — r

ռնգային — n, m

Լեզուների պատմության մեջ նկատվում է, որ այս ձայները հաճախ իրար են փոխանակում. ինչպես l>r, r>l, l>n, n>l, n>r, r>n։

Այս փոխանցումները բացատրվում են հետևյալ ձևով.—l, r, n ձայների արտաբերության ժամանակ լեզվի ծայրը հպում է քիմքի կապճային մասին. բայց b-ի ժամանակ լեզվի երկու եզերքներն իջնում են օդի հոսանքին ազատ անցք տալու համար, մինչդեռ n-ի ժամանակ բարձրանում են, այնպես որ բերանային անցքը բոլորովին փակվում է, մինչև միևնույն ժամանակ կաուիկն իջնում է ցած՝ օդի հոսանքին ազատ անցք տալու համար, քթի միջով։ r-ի ժամանակ լեզուն ունի միևնույն դիրքը, միայն թե իր ծայրը թրթռում է։ Այս նկարագրությունից երևում է, որ մի չընչին փոփոխություն բավական է մի ձայնից մյուսը անցնելու համար։

Ձայնորդների ձայնափոխությունները հետևյալներն են.

ա. Կողմնականներ.—Սրանց մեջ նկատելի են՝

1. Փոխանակություն կողմնականների զանազան տեսակների միջև, ինչպես լեզվային l դարձած կապճային կամ կատկալին և այլն. այս փոխանակություններն ընդհանրապես առաջանում են համառոտության համար. շատ լեզուների մեջ, ինչպես հին հունարենի զանազան բարբառներում, լատիներենում, կատկալին ձայնավորից առաջ, կամ մի բաղաձայնից առաջ և կամ բառավերջում l միշտ

կատալին է։ Ռոմանական լեզուներում l պահում է միայն l՛, կիսաձայն y-ի ստեղծմամբ, քանի որ ձայնափոխման ստեղծմամբ և կամ պահպան ձայնակապերի միջ, ինչպես cl, gl, pl, ll. *օրինակ՝* oc'lum>*ֆրանսերեն* œil *«աչք», վերջին պարապատկին, l-ի փափկացումից հետո, նախորդ բաղաձայնը կարող է ընկնել, և կամ երկու բաղաձայնները միանալով ստեղծ են մի նոր բաղաձայն. ինչպես լատիներեն* clamare *ավել է իտալերեն* llamar *(կարդա՝* l'amar*) և պրատոպալերեն* chamar *(կարդա՝ šamar)։*

2. Փոխանցում ձայնավորի կամ կիսաձայնի.— Թե կատալին, թե վերջալին և թե կապհալին l կարող են վերածվել u ձայնավորի. ալպերի գեղքեր շատ տեղեր ֆրանսերենում. օրինակ, լատիներեն collum>*cou «պարանոց», calvum>chauve «ճաղատ». Նույնը կա սլավոնական լեզուների մեջ, ինչպես սլովակերեն* volk *«գայլ»,* voina *«բարդ»>պոլաբերեն* vâuk, vâuna. *սիկիլիականում* autra *փոխանակ իտալերեն* altro *«մյուս», հոլանդերեն* oud, koud, goud *փոխանակ գերմաներեն* alt *«հին», kalt« ցուրտ»,* gold *«ոսկի», սլովակերեն* owd, cowd, gowd *(նույն բառերն են)։ Իտալերենում անհնար l>y կամ l ինչպես լատիներեն* plenum, blanc*um, clarum>*pleno, bianco, chiaro, *ֆրանսերեն պոլաբական* pyę, bya, kyer։ *Այս ձայնափոխությունը բացատրվում է հետևյալ ձևով. կոդմբոնականների արտասերությունն ամանակ լեզվի արմատը աջից ու ձախից մեղմորեն հպում է բիմբին, եթե այժմ լեզվի ծայրը կապիճներից մի քիչ հետանա, ձայնափոխությունը պատրաստ է.— Փափուկ l՛ հնչությամբ պահում է y, որի համար բավական է, որ լեզվի միջին մասը քիմբից հետանա։ Այսպես՝ ֆրանսերենը անհնար l՛ (գրված* ill*). այժմ այդ ձայնը դարձել է պարզապես y (օրինակ* fille *«աղջիկ», bouillon «արգանակ, մսաջուր»)։ Նույնը նկատվում է նաև Հարավային Ամերիկայի իտալերենում։ Շվեդերեն lj հնչում է y, ինչպես՝* ljus *«լույս» (կարդա՝ yūs).*

3. Փոխանցում l-ից r.— Մեծ մասամբ այս փոխանցումը բացատրվում է երկու արտասանություններ, բայց հաճախ անկախ և կանոնավոր երևույթ է ռոմանական բարբառներում, որ լատիներեն միջձայն l պահում է կանոնավորապես r. օրինակ՝ ulmum> *ֆրանսերեն* orme *«կնձնի». Հնդեվրոպական նախալեզվի l ձայնի դեմ արիականները դնում են հաճախ r։ Ճապոներենում, որ չկա l, ամեն տեղ բառ որ ունի l, վերածվում է r-ի։*

4. Փոխանցում l-ից d.— Հազվագյուտ երևույթ է. գտնվում է սիկիլիական բարբառում, ինչպես՝ bello, cavallo>*սիկիլիական* bed-

du «գնդակիկ», cavaḍḍu «ձի». հմմտ. նաև լատիներեն adeps, որ գալիս է հունարեն ἀλειφω-ից (Passy, Chang., 145)։

5. Անկում.—*Այս երևույթը, ուրիշ բաղաձայնների անկման նման, արդյունք է դործածությունների և շնչառության թուլ դործածության. պորտուգալերենում l երկու ձայնավորի միջև ընկնում է հաճախ։ Նույնը մեր բարբառներում, ինչպես* չեմ տեսել>չեմ տեսս, ալ>ա։

բ. Ցցգուններ.—*Սրանց մեջ նկատելի են.*

1. Փոխանակություն ցցգունների տեսակների միջև.—*Մանոթ երևույթ է, որ դանազան եվրոպական լեզուներում, հատկապես ֆրանսերենում, լեզվալին r դառնում է կոկորդալին (ṛ)։ Հին լեզուներում նթե կար նման երևույթ, չի կարելի հաստատել՝ դրության թերության պատճառով։*

2. Փոխանցում r-ից z.—*Երբ լեզվալին l-ի արտաբերության ժամանակ լեզվի թրթռումները վերանան, կլսվի շիսական z. հայերենի մեջ p ձայնը, որ համեմատության համար r-ից թուլ է թրթռում, անվարժ ականջները լսում են իբր ž. ֆրանսերենում r>z ձայնափոխությունը եղել է XIV դարում, բայց ընդհանուր չի տարածվել. սրա արդյունքն են* chaire>chaise *և նման բառեր։*

3. Փոխանցում r-ից l.—*Հաճախ հարևանմանության արդյունք է. կան բարբառներ, որոնց մեջ սովորական երևույթ է. չինարենը չտարբերելով r, օտար բառերի մեջ ամեն r վերածում է l-ի։*

4. Անկում.—*Ցնցումը իր թրթռումները կորցնելուց հետո, օդի ճնշման ուժն էլ նթե պակասի, կձուլվի նախորդ կամ հաջորդ ձայնավորի հետ և կջնջվի. այս երևույթը նկատելի է հարավային անգլերենում. ինչպես* dear, pure, forty.—*Նույնը նաև Հյուսիսային Գերմանիայում, ինչպես* der Berliner, *որ երգիծական թերթերում գրվում է* da Ballna, *Ֆրանսիայում նորաձևության էր Դիրեկտորիայի ժամանակ. ինչպես՝* Ma pa'ole d'honneu' e'est inc'oyable (Ma parole d'honneup c'est incroyable «*Աղնիվ խոսք, անհավատալի է*»)։

գ. Ռնգայիններ.—*Սրանց մեջ նկատելի են.*

1. Փոխանակություն ռնգականներ տեսակների միջև.—*Շատ սովորական է սանսկրիտում, ուր ռնգականի դանազան տեսակները փոխանակում են իրար՝ համաձայն հաջորդ բաղաձայնի տեսակի. հայերենում ունենք* ան-բիծ>ամ-բիծ, ան-պարիշա>ամ-բարիշա *և այլն ձևերը, որոնց մեջ աստամնական ն վերածվել է շրթնայինի՝ հաջորդ շրթնային բաղաձայնի պատճառով։ Այս երևույթը գտնում ենք շատ լեզուների մեջ։*

2. Ապահովացում.—*Երբ անգալին բաղաձայնին հաջորդում է ոչ-անգալին բաղաձայն, բնականաբար կասիկը նախ ինքնամ է ցած անգալին բաղաձայնի արտասանության համար, որից հետո իսկույն բարձրանում է հաջորդ ոչ-անգալին բաղաձայնի արտասանության համար։ Եվ ահա այս բարձրացումը կատարվում ժամանակից մի քիչ ավելի շատ, բնականաբար անգալին բաղաձայնի վերջին մասը կիսրջվի իր անգալնության և կլինի ոչ-անգալին, այսինքն՝ նազանգալնացած և կդառնա բերանային. m արտասանական անգալին ձևն է b և n անգալինի ազատնգալինն է d. այսպիսով m և n ձայնների հետ կատաջանան b, d ձայներ. համմա. բմբիլ, ծանդր. հանդարն *դդր>դդդ. լատիներեն cinerem>cendre, camera>chambre, humilem>humble, veneris dies>vendredi. բարեբախտաբար ձայնավորից հետո m դառնում է v և սա էլ կիսաձայն ը, այս պատճառով է, որ Kislīmu, Simānu ամսանունները պրված են իբր Kisleu, sivan (Brock., Précis, 74).*

3. Փոխանցում n-ից r.—Մեզի է անհնամ կանոնավոր կերպով դառնալ ամանական բարբառներին մեջ. բացատրվում է նրանով, որ լեզուն երկուսի համար էլ նույն դիրքն ունի, և n-ից r անցնելու համար պետք չունի մեկը մյուսին ծայրը իրարամերնելու և կամ էլ բարձրացնելու։ Այսպես են ստացվում նաև ֆրանսերեն Londinos>Londres, «Լոնդոն», tympanum>timbre «դրոշմ, հնչյուն», cophinum>coffre «արկղ», diaconum>diacre սարկավագ և այլն բառեր։

4. Փոխանցում n՝ ձայնին.—Երբ n անգալինին հաջորդում է v կիսաձայնը կամ քմային մի ձայնավոր, n կարող է փակել և դառնալ n՝։ Այս երևույթը նկատելի է գրեթե բոլոր ամանական բարբառներում. ամիինևրենում նաև m կարող է վերածվել n՝։

5. Անկում.—Սովորական երևույթ է դառնդան լեզուների մեջ կարող է տեղի ունենալ 1) նախորդ ձայնավորը անգալին դարձնելուց հետո, ինչպես՝ լատիներեն cantare>ֆրանսերեն chanter «երգել» (հնչել šątẹ.—2) երկու ձայնավորի միջև. ինչպես լատիներեն luna>պորտուգալերեն lua.—3) բաղաձայնների խմբի մեջ, ինչպես՝ ֆրանսերեն tu dors փոխանակ tu dorms «քնում ես».—4) բառավերջում հնչյունների արտասանության պատճառով. այսպես՝ լատիներեն m, n բառավերջում հնչվում էին շատ թույլ, և -ns խմբի արտասանության մեջ n ամբողջապես ընկել էր։ Ֆրանսերեն mon, ceni, fin «իմ, հարյուր, վերջ» հնչվում են առանց n-ի. նույնպես և այժմ գերմաներեն mein և այլն դառնում է mąę (առանց n-ի).

Անկման երեւույթը նկատում ենք հատկապես շատ գործածական բառերի մեջ, որոնք եթե բավական երկար են, մի կամ երկու վանկ կորցնում են։ Այսպես, օրինակ, թվականները հին և նոր հունարենի մեջ.

	հին	նոր
30	τριάκοντα	τριάντα
40	τετταράκοντα	σαράντα
50	πεντήκοντα	πενήντα
60	ἑξήκοντα	
70	ἑβδομήκοντα	
80	ὀγδοήκοντα	
90	ἐννενήκοντα	

Վերը տրված տաիուտակից երեւում է, որ մինչդեռ ժառանգ լեզուներից մեծ մասը պարզ թրթռուն բաղաձայններն անփոփոխ պա-

համ են, երկու լեզու՝ գերմաներենն ու հայերենը վերածում են պարզ խոլի։

Լեզվաբաններից ոմանք (նույնիսկ գերմանացի լեզվաբաններից) այս զարմանալի երևույթը գերմաներենում բացատրում են ցեղական տարբերությամբ—Իբրև թե գերմանացիք հարազատ հնդեվրոպացի չեն, այլ ստալոցկեդ մի ժողովուրդ, որ նվաճվել է հնդեվրոպացիներից և իր բնիկ լեզուն փոխելով, ստացել է հնդեվրոպացի սիրողների լեզուն։

Այս բացատրությունը բացարձակապես հակառակ է այն ենթադրությանը, որ անում են ուրիշ (հատկապես գերմանացի) լեզվաբաններ, որ իբրև թե հնդեվրոպացիների նախահայրենիքը Գերմանիան է, ուրեմն և գերմանացիք հենց հնդեվրոպացիքն են։

Այս վերջին ենթադրությունն իհարկե բոլորովին ձրի է և միայն գերմանական աղգայնամոլության մտածման կերպ։

Առաջին կարծիքը հերքելու համար էլ գերմանացի լեզվաբանները պինդ կառչում են հայերինին և պատապարված հայ լեզվի թևերի տակ, ասում են. Նրանք գերմաներենում [illegible]խոլ ձայնափոխությունը արդյունք է անհարազատ ծագման, հապա ինչու հայերենն էլ ունի նույն երևույթը։ Մեկն հայերն էլ անհարազատ հնդեվրոպացի են։

Բանն այն է, որ հայերենի համար էլ կա նույն կարծիքը։ Լեզվաբաններից ոմանք, հենց այս և ուրիշ նման ձայնաբանական ու քերականական երևույթների վրա հիմնվելով, պնդում են, թե հայերը հնդեվրոպացի չեն, այլ մի օտար ժողովուրդ (կովկասյան կամ իռանդյան, կամ էթերևս ասիանական և այլն), որ նվաճելով սակավաթիվ հնդեվրոպացի սիրողներից, փոխեց իր բնիկ լեզուն և ստացավ նորիկ հնդեվրոպացիների լեզուն, որ աղավաղվեց ու այլափոխվեց իր բնիկ լեզվի ձայնական դրության և քերականության համաձայն։

Հայոց լեզվի պատմության մեջ (հատ. 1, էջ 186—187) խոսել եմ արդեն այս հարցի մասին. ընթերցողը կարող է դիմել այնտեղ։ Այստեղ ուզում եմ խոսել հատկապես հայերենի [illegible]խոլ ձայնափոխության մասին։

Եթե լեզվաբանները հայերենի [illegible]խոլ ձայնափոխությունն ի նկատի ունենալով հայերին համարում են ոչ-հարազատ, հապա ինչու նկատի չեն առնում հնդեվրոպական շնչեղ և խուլ պալատականների ձայնափոխությունը։ Միայն հնդկերենն է, որ այս ձայներն անփոփոխ է պահել, մյուսները լոլորն էլ փոխել են։

Ձևոպիսինաև լիսմանիսինաև սլամիսինաև խասնսիսինաև ինչպես և պիսմանիսինն ա հալիսինաը bն, dն ձայնիսիք պատկել են b, d (բ, դ), մինչպես հանտաւինաը պատկել է պրոնք pն, tն (փ, թ), Ինչ սաբրիսիսխմյան կա b, d > պ, տ (բ, լ) պատճնելա մեկ (ինչպես անում են հալիսին ա պիսմանսպիք) և bն, dն > pն, tն (փ, թ) պատճնելա մեկ (ինչպես անում են հալնիսիք)։ Երկսան էլ մինսան բաներն են, երկսան էլ խրխռանոք պատճնում են խոլ. և եթե հալիսին ա պիսմանսպիք սլա համար հատկապես չեն համապատասխանում, հալնիսին էլ հատկապես չպիտի համապատասխան։ Իսկ ինչու խոլ պալխռականներին, սլասկ էլ հալիսինաը շատ համապատասխան է, պրնեթե ամենքան, ինչքան ընդհանուր, ամենի քան հանտաւինաը և շատ ամենի քան սլասկականաը։

Կա նաև ամենի պիսիսր բացատրելի մի հանգամանք։ Իհարկե, որ սլոյի հալիսինն բարբառներոք սլալխռականների ընդհան կողմից շատ պահպանն են։ Մինչպես արևելյան կոչված բարբառներոք համապատասխան պահած են մհարապլան հալիսինաև խրխռանոքներն ա խոլերը (բ, պ, դ, կ, գ, տ և այլն), արևմտյան կոչված բարբառներ խոլերը վերածած են խրխռանի (պ > բ և այլն), իսկ խրխռանոքները՝ ինչպես խրխռանի կամ նամենի թույի (բ > բ՛, փ)։ Այս ձայնափոխխռյանը հատկապես պատճռվել է XI պարում և ինչու ամենի հին էլ է։

Ըստ այսմ, օրինակ, հնդեվրոպական dom բառը, որ հին հայերենում և սլոյի արևելյան հայ բարբառներում հնչում է tun, արևմտյան հայ բարբառներում հնչում է dun։ Պետք է անել նրա, նմանապատճռվելան. 1. կամ այն, որ արևմտահայերը շարունակում են հնդեվրոպական հատկապես հնչումը, ոսսի նրանք են միակ հատկապես հայ, իսկ Մհարապլան շրջանի հայերը և սլոյի արևելահայերը հայ չեն. 2. կամ ինչ արևմտահայերը չեն պահել հայերենի հին հնչումը, շատ են ամենի նոր ձայնափոխխռյամբ։

Առաջին նմանապատճռվելանն ավելի չէ. արևմտահայերը չեն պահել հնդեվրոպական հատկապես հնչումը, ինչպես և չեն պահել Մհարապլան շրջանի հատկապես հնչումը, որովհետև, եթե պրանք պահած լինեին, պահած պիտի լինեին նաև մհարապլան շրջանում փոխ առնված պահպանվին, սաբրերեն և տոնտարեն բառերի էլ հնչումը։ Մինչպես տեսնում ենք, որ այդպես չէ։ Օրինակ՝ պահպանվին kapot, սաբրերեն talya և տոնտարեն kyzazi բառերը, որոնք հին հայոց և սլոյի արևելահայերի մեջ հնչում են կապոյա, տղայ, կիրակի (կիրակի) (= կապույա, տղա, կիրակի), սլոյի արևմտահա-

լերի մեջ հնչվում են գաբուդ, դըղա, գիրագի (gabud, dəga, giragi)։ Սրանից հետևում է, թե արևմտահայերը փոխել են V դարի հնչումը, խուլերը դարձրել են թրթռուն, թրթռուններն դարձրել են խուլ կամ թաղ և այլն։

Սրանից հետևում է նաև այն, որ արևմտահայերը, որոնք մինչև XII դարը հարազատ հայ էին, XII դարից հետո դարձան անհարազատ հայ !!! Ափսոսալի!

Այս անհեթեթ եղրակացությունն հատանք քննելով հարցը վերև ակնարկված լեզվաբանների դատողությամբ։ Բայց ինչ պիտի ասենք, երբ նկատենք նաև, թե միևնույն բարբառում միաժամանակ երկու հնչումն էլ կա։ Օրինակ՝ «Նոր-Նախիջևանի հնչումը ուսումնասիրում է թրթռունի և խուլի միջև, ճիշտ ինչպես Պոլսում։ Ձայնական նրբությանց վարժ ականջը շարունակ կարող է նկատել, թե ինչպես՝ օրինակ, բաճ բառը մեկ անգամ բաճ, հաջորդ անգամ պաճ հնչումն է ստանում միևնույն անձի խոսակցության մեջ» (Պետրոսյան Նոր-Նախիջևանի բարբառի, էջ 29)։

Ասպես նաև Պոլսի դրագետը ոտնը հնչում է դուռը բա՛ց, իսկ դպրոցում՝ թուռը փա՛ց։

Պետք է ուրեմն ենթադրել, թե այս հայերը մի բոպե հարազատ են, հաջորդ բոպեին անհարազատ։ Ո՛չ։ Պետք է փոխել ուրեմն դատողության եղանակը։ Բաղաձայնների աստիճանի փոփոխությունը անպատճառ նշան չէ ցեղի հարազատության կամ անհարազատության։ Դա մի երևույթ է, որ մտնում է ձայնաբանության սովորական երևույթների շարքը։

Սրա համար մի փոքրիկ ակնարկ էլ դպենք ուրիշ լեզուների վրա։

Թրթռունների խուլ դառնալը մի շատ տարածված երևույթ է լեզունների կյանքի մեջ. ուպրո-ֆիննական լեզունները թրթռուն պալաթական բաղաձայն չունեն. այսպես են նաև չինարենը, սլնու լեզուն և այլն։ Կան լեզուներ էլ, որոնք թեև ունեն թրթռուն բաղաձայններ, բայց նրանց թրթռումն այնքան տկար է, որ հավասար է խուլի. այսպես է սամերերենի մեջ և գերմաներենում։ Վերջապես կան լեզուներ էլ, որոնց մեջ թրթռուն պալեթականների թրթռումները այնքան ուշ են սկսում, որ այլևս խուլ համարվելու համար ոչինչ չի մնում։ Ամերիկյան կարմիր լեզվի մեջ b-p, d-t, g-k միևնույն բաներն են և չեն զանազանվում իրարից (Morice, Carr. lang., I, 5)։ Նույնիսկ հնդեվրոպական լեզուների մեջ, ուր պարզ թրթռուն պալեթականներ կան, նրանց դուխթյունը վկայում

վիճակի մեջ է. b ձայնը հապիխ պայթիչն անխ. մի տրմատ, որ պարզ թրթռանով է սկսում, չի կարող վերջանալ պարզ թրթռանով (ded կարելի չէ). s բայաձայնի դեմ չկա անկասկած չ թրթռանը (Meillet, BSL. 34, № 102, p. IV)։ Եվ այս շատ բնական մի երևույթ է. կոկորդի լարերին մի աշխատանք պակաս տալը նրանց ճիպի հատարակ կիրառումն է։

Բնական այս երևույթի արդյունքն է տան, որ նախատիպ ենք հնդեվրոպական պոնտական լեզուների մեջ. աշխարհիս ամենահին հնդեվրոպական լեզվի՝ կոմխսերենի մեջ հանախ k, p, t շրթեվում են իրար հետ (Barton, A little manuel, 8)։ Նույն երևույթի արդյունքն է նաև, որ նախատիպ ենք հնդեվրոպականից հալևրենի անցնելիս, ինչպես որ նույնը պոնտոյի ենք նաև վերմանականում և խոտոբևերենում։

Պարակերենն էլ մնում է այս շարքի մեջ. հնդեվրոպական նախալեզվի pəter ձևը առնակրիա և հին պարակերեն լեզուներում պահվում է patar ձևով. բայց նոր պարակերենում կինում է padar, որի նախաձայնը (p) խորտակի է մեղ համար։ Այսպի պարսիկները չեն հնչում պապար, այլ վադար, որից հետևում է, թե հին պարսկերենի պարզ խուլ հնչումը դարձել է թույլ, իսկ միջձայն պարզ խուլ t այժմ դարձել է d, իսկ արդի լեզուների մեջ էլ y (pāyār)։

Դրատրամ անունը պաշտպան և վուշտիպան բառերը, որոնք իրանական վոխատառիչն են։ Հին ձևից է պաշտպան, որ նախաձայն պ և վերջավանկի պ ցույց են տալիս, որ հին ձևը (prštpāna) անկե պարզ խուլ p, իսկ վուշտիպան ձևն էլ ցույց է տալիս, որ առաջնյան շրջանում նախաձայն պարզ խուլ p դարձավ թույլ վ, և այսօր էլ պարսիկն ասում է վուշտիբան։ Սրանից երևում է, որ նոր պարսիկը ոչ միայն բառասկզբի պարզ խուլը դարձրել է թույլ վ, այլև երկու ձայնավորի միջև գտնված պարզ խուլ պ դարձրել է թրթռան (p)։

Օրինակ կարելի է առնել նաև ճրագ բառը, որի պարսիկ ձևն է چراغ (čirağ)։ Այս բառի մեջ բառ սրինի ի ձայնավորը ջնջված է հալևրենում. վերջաձայն ğ դարձել է հալևրեն գ, կամ որովհետև հալևրենը չուներ կոկորդական ղ այն ժամանակ, և կամ որովհետև պարսկերենը հնչյում էր ğ։ Այս վերջինիս ապացույց է արաբերեն سراج (sirāj) «ճրագ», որ փոխ է առնված պարսկերենից և ցույց է տալիս, որ պարսկերենի վերջաձայնը ğ էր, որ դարձավ արաբերեն j, իսկ նրա պարսիկներն արտասանում լինելին ğ, արաբերենը կարող էր առատարձել ğ-ը։

Պարսկերեն նույն բառն ալաշր ևթե մի հայ լսի, կտառապարձի չլիրա՞ղ, որից հայոնի է, որ պարսիկ նախաձայն ճ պարձել է չ (պարզ խուլը՝ թավ)։

Պարսկերենի օրինակը ցույց է տալիս, որ մինենույն լեզվի մեջ բաղաձայնները իրենց տատիճանը կարող են փոխել, պարզ խուլը կարող է դառնալ թավ, պարզ խուլը կարող է դառնալ թըրթռուն և այլն։

Ուրեմն հետևցնենք, թե պարսիկները, որ առաջ դուտ հնդեվրոպական էին, ասատնյան շրջանից հետո հանկարծ ոչ հնդեվրոպակա՞ն դարձան։ Այս եզրակացությունը անհիմնի պիտի լիներ։

Մեզ համար առանձնապես խրատական է չինարենի ձայնափոխությունը։ Հ. Մասպերոն ցույց տվից, որ հին չինարենն ուներ մաքուր թրթռուն բաղաձայններ. VII-VIII դարերի միջև այս պարզ թրթռուն բաղաձայնները դարձան շնչեղ թրթռուն։ Բայց այս ձայնափոխությունը միայն սկիզբն էր դործի, որ հետագայում ավելի զարդանալով, հասավ այսօրվա վիճակին։ Նախկին թրթռուննները դարձան պարզ խուլ կամ շնչեղ խուլ (թավ) համաձայն տոնի (BSL., № 69, p. 289)։ Այս բոլորն ամբողջությամբ նույնն է, ինչ որ հայերենում, իսկ մասամբ էլ (շնչեղ թրթռուն բաղաձայնների համար) նույնն է, ինչ որ հունարենում (bh>փ)։

Ձեղի հարաղատության կամ անհարաղատության մասին իր հեղինակավոր և անկողմնակալ կարծիքն է հայտնում նշանավոր մանդարեր Մելեն (BSL, № 66, p. 98) հետևյալ ձևով. «Այն վարկածը, թե գերմանական լեզուն հնդեվրոպական մի բարբառ է, որ ընդունել են ուրիշ լեզվով խոսող ժողովուրդներ, որոնց լեզվաբանական սովորությունները ձևափոխել են հնդեվրոպական լեզուն՝ ճշտիվ ապացուցանելի չէ։ Բայց, ինչ էլ որ լինի, ստույգ իրողությունն է այն, որ հնդեվրոպականի և գերմանականի ձայնաբանական և ձևաբանական դրությունների միջև արմատական տարբերություններ կան»։

Ըստ այսմ, նույնիսկ գերմանացիների այլացեղ ժողովուրդ լինելու դաղափարը ոչ միայն չի ապացուցված, այլև այսուհետև էլ չի կարելի ապացուցել։ Մնում է այն իրողությունը, թե երկու լեզուների հնչական դրությունը տարբեր է, որի համար մենք ավինք մեր բացատրությունը չինարենի օրինակով, որոնք միևնույն ժողովուրդն էին և են, թեև ցուցաբերում են մեր էլ ձայնաշրջության հարաղատ պատկերը։

Մի խումբ նշանավոր լեզվաբաններ պնդում են, որ պահպանում կատարված է երբեմն ձայնաշրջափոխներ։ Այս լեզվի մեջ b, d, g *կորցրել են իրենց թրթռումը և հնչյամբ են իսկ, մյուս կողմից* p, t, k *հնչյամբ են ամեն դիրքում, բայց պես շիտական չեն* (Lingua I, № 1, p, 79)։

3. Հնդեվրոպական իսկ պայթականները հայերենի մեջ վերածվում են շփնեի։ *Այսպես* k > p, t p. *բայց ասվածին է մյուսը* p, *որ պահում է ի։ Հնդեվրոպական նախալեզվի* p *նախ դարձել է* f, *ինչպես կան այդ ձայնի բազմաթիվ անտիպումները* (ւ, վ)։ *Այն երևույթը, որ պայթականների պարզ իսկները վերածվեն շնչեղի, և մյուսը* p *վերածվի* i-ի, *անսովոր երևույթ չէ. այլ նկատված է աշխարհի զանազան լեզուների մեջ, անկախ լեզվախմբերից։ Այսպես, սեմական լեզուների* t, k, *արևելքինի և հիմալայերենի մեջ մնում են, բայց* p *դառնում է* f.—*Իրանեանն* p *առ. դառնում է* f. *ինչպես՝* pan > *սան.* fan *«հինդ», հին պարսկերեն* puθra > *սան.* furt *«որդի».—մոն-քմեր խմբի մեջ* p՝ *նիկոբարերեն դառնում է* f. *օրինակ՝ մոն* pan = *քմեր.* puon = *նիկոբար* foan *«չորս», իսկ* k *մնում է (ինչպես՝ մոն.* kon = *քմեր.* kūn = *նիկոբար* koan *«երեխա».—Ուգրո-ֆիննական լեզվախմբի մեջ* p *դառնում է հունգարերեն* f. *ինչպես՝ ֆիններեն* pau *վառակ* pu *ոիրկ.* pu = *հունգարերեն* fa *«ծառ».—Այսպես առաջացած* f-ի *հաջորդ աստիճանն է* h.—*այսպես, ճապոներենում բնիկ բառերի մեջ ամեն* p *վերածվել է* h-ի *(անցնելով* f-ից) *և ալթաբենի մեջ այս ձայնը* (h) *բռնում է* p-ի *տեղը!—Ձայնափոխության վերջին աստիճանն է այս* h-ի *ոչնչացումը, որով նախավոր* p *բոլորովին չնջված է լինում. այսպես է կկատարվում, ուր ոչնչանք սրինակ՝ հնդեվրոպական նախալեզվի* pətēr > *հին իրանական* athir։

Երբ f *պատահի* t-ի *մոտ, կարող է վերածվել խ-ի. այսպես՝ հնդեվրոպական նախալեզվի* septm *«եօթն» դառնում է հին իրանական* secht.—*իրանական* Hazārafṭ *հատուկ անունը դառնում է հայերեն* Յազարապետ, *և իրանական** zaru + ufta *առլիս է հայերեն* զառնապետ *«ոսկեհիւս». ճիշտ այսպես նաև* bopū <*եաբն*> *պահլաւական օիսար, սմ<աւմ>որր. ս՛խծը.—Նոր-Նախիջևանում ճանաչում էի մի երեխա, որ ավտոմոբիլ բառն արտասանում էր* ախտոմոբիլ։

ԳԼՈՒԽ ԻԲ

ՀԱՅԵՐԵՆԻ ՁԱՅՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

1. ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ*

Ձայնավորների փոփոխութեան հիմնական պատճառը շեշտն է։ Շեշտի ազդեցութեան տակ անշեշտ ձայնավորների կրած փոփոխութիւնները կարող ենք բաժանել երկու կարգի.

ա. Բոլոր անշեշտ ձայնավորները, անկախ իրենց բաց կամ փակ լինելու աստիճանից, անխտիր փոփոխվում են։

բ. Անշեշտ ձայնավորները ենթարկվում են փոփոխութեան՝ համաձայն իրենց բաց կամ փակ լինելու աստիճանին։

Եթե որևէ լեզվի մեջ շեշտը շատ ուժեղ է, իր ուժգնութեամբ պերազանցում է բոլոր մյուս անշեշտ ձայնավորները, որոնք ոչ միայն կարճանում են, այլև կորցնում են իրենց երանգը և վերածվում չեզոք ձայնավորի։ Այսպես են դերմաներենը, անգլերենը, ռուսերենը։ Ձայնավորների փոփոխութեան առաջին տեսակն է այս, որի լավագույն օրինակը տալիս է դերմաներենը, ուր անշեշտ ձայնավորները հասնում են ə աստիճանին։

Իսկ եթե մի որևէ լեզվի մեջ շեշտի ուժը շատ փոքր է, ձայնավորները փոփոխվում են իրենց բաց կամ փակ լինելու աստիճանի համեմատ։ Սրա տիպական օրինակը տալիս են նոր հունարենի հյուսիսային բարբառները, որոնց մեջ a դառնում է å, e,

* Հմմտ. Meillet, L'accent quantitatif et les altérations des voyelles, MSL 21, p. 108 111.

պատում է ի, ը պատում է ա, իսկ ի և ա կրճատվում են։ Այս էլ ձայնափոխների փոփոխության երկրորդ տեսակն է։

Լավ ըմբռնելու համար այս երկու կարգի փոփոխությունների հիմնական շարժառիթը, պետք է նկատի ունենալ հետևյալ ձայնաբանական սրունքները.

1. Նույն պարմանների տակ, որքան որ փակ է մի ձայնավորը, այնքան ուրիշն կարճ է։ Մի որևէ լեզվի մեջ ի ավելի կարճ է քան ը, և ը ավելի կարճ է քան ա։ Եթե մի լեզվի մեջ կան կարճ ու երկար ձայնավորներ, կարող է պատահել, որ երկար ի ձայնավորը կարճ ա-ից երկար չլինի. որպեսզի ի երկար համարվի, բավական է որ կարճ ի-ից երկար լինի։

2. Միշտ ժամանակամիջոցում մի ձայնավոր որքան ավելի փակ լինի, այնքան ավելի շուտ է կլանում։

Ըստ այսմ, եթե մի որևէ լեզվի մեջ ձայնափոխության ժամանակ ձայնավորը կարճանում է, նա միևնույն ժամանակ փակվում է, որպեսզի պահի իր մատչելիությունը, իսկ եթե ձայնավորը շատ փակ է, բոլորովին ջնջվում է։

Այսպես, օրինակ՝ սլավական լեզուներում, որ ընդհանրապես ձայնավորները կրճատում են, երկար ձայնավորները դարձել են կարճ, իսկ կարճ ը փակ ձայնավորները դարձել են ь, ъ։

Երբ նոր հունարենի հնչափոխին բարբառներում անշեշտ ձայնավորները փոխվում են իրենց փակման աստիճանի համեմատ, պատճառն այն է, որ շեշտված ձայնավորները երկար են և անշեշտները կարճ։ Փոփոխության բուն պատճառը ուրիշն ուժգնության բացակայությունը չէ, այլ ձայնավորների կարճությունը։

Վերի օրինակները միջոց են տալիս բացատրելու նաև հավելյանի ձայնավորների փոփոխությունը։

Եթե հավելյան բառի մեջ բոլոր անշեշտ ձայնավորները չեն ընկնում, ուրիշն շեշտը այնպես ուժեղ չէ, ինչպես գերմաներենում։ Նաև եթե այդ ձայնավորները նոր հունարենի հնչափոխին բարբառների նման աստիճանական փոփոխության են ենթարկվում (ե>ի, ոյ>ու, ևա>ն). իսկ ի և ու ընկնում են, ուրիշն շեշտն էլ նրանց նման սակավ է։ Արդի հավելյանում շեշտը ուժգին չէ արդեն, և պատճառ չկա հին հավելյանի մեջ էլ մի ուժգին շեշտ ենթադրելու։

Բայց հին հավելյանի մեջ հնդեվրոպական ձայնավորների երկար ու կարճ տևողությունը վերացված էր և մնում էր միայն շեշտալ և անշեշտ ձայնավորների տարբերությունը։ Ամեն ինչ

պիտի բացատրվի ուրևմն, եթե ընդունենք, որ հնագույն հայերենում շեշտյալ ձայնավորը մի քիչ ավելի երկար էր, քան անշեշտ ձայնավորը։ Այս կետում հայերենը նմանվում է ֆրանսերենին, ուր, ինչպես այժմ, նույնպես և առաջ, շեշտը գերմանականի պես ուժեղ չէր, շեշտյալ ձայնավորն ավելի երկար էր, քան անշեշտը, ուստի և բոլոր ձայնավորները չեն կրած շեշտի հարվածը, ինչպես գերմաներենում և անգլերենում։

Հին հայերենում ձայնավորների փոփոխության հարցում կարևոր է նաև նկատել, որ մինչդեռ ի և ու անշեշտ մնալու դեպքում կրճատվում են, սակայն բառասկզբում բաց վանկի մեջ մնում են. ինչպես՝ իժ, սեռական իժի, ուխտ, սեռական ուխտի։

Նմանապես միջին հայերենում թեև ա ձայնավորը միջավանկում ջնջվում է, բայց բառասկզբում և առաջին վանկում մնում է. ինչպես՝ քաղաք, սեռական քաղքի։

Լատիներենում էլ i և u ձայնավորները հաճախ ընկնում են որոշ պայմանների տակ. բայց անկումը տեղի է ունենում բառի միջում և վերջում. իսկ բառասկզբում մնում են, ինչպես՝ solidus> soldus, calidus>caldus, aridus>ardus, aridere>ardere (այս նյութի մասին մանրամասն քննություն ունի Juret, MSL 21. p. 93—107)

Նախաձայնի այս առանձնահատկությունը բացատրվում է նրանով, որ երբ վերջնավանկի ձայնավորը թուլլ հնչվելով տկարանում է, ընդհակառակը առաջին վանկը ստանում է ավելի երկար տևողություն, քան միջին վանկերը։

Մի քանի նոր բարբառներում (Ղարաբաղ, Ագուլիս և այլն), որոնց մեջ շեշտը տեղափոխված է վերջընթեր վանկի վրա, ոչ միայն վերջնավանկի ձայնավորը մնում է, այլև նախաշեշտ վանկում գտնված բոլոր անշեշտ ձայնավորները (նաև առաջին վանկի) անխտիր ընկնում են։

Այս նշանակում է, թե շեշտին հաջորդող վերջնավանկը թուլլ արտասանություն չունի, բայց միևնույն ժամանակ վերջընթեր վանկի շեշտը ուժեղ շեշտ է, որի առաջ ընկել են բոլոր վանկերի ձայնավորները, նաև առաջին վանկի։

Երբ նկատում ենք այժմ հնդեվրոպական բառերի փոփոխությյան ընդհանուր պատկերը հայերենում, և տեսնում ենք, որ վերջին վանկը միշտ կրճատված է հայերենում, եզրակացնում ենք, որ

1. Հնագույն հայերենում շեշտը տեղափոխվել էր վերջընթեր վանկի վրա, որով այդ վանկն ստացավ հատկապես ավելի երկարություն, քան մյուս վանկերը։

2. Վերջնավանկը բնականոնապես հնչեմում էր ավելի թույլ, որի հետևանքով էլ այդ վանկին ավելի կարճ էր։

Այսպես օրինակ, թեև վոկալափոխությունն ամուր տեղ պահանջող շեշտն է, բայց այդ շեշտը իր ազդեցությունը գործում է նրանով, որ շեշտելով ա անշեշտ վանկերի մեջ առաջացնում է ուժգնության տարբերակներ։

2. ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՁԱՅՆԱԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ա

ա ձայնավորը հայերենի մի քանի բարբառներում դառնում է ո, բայց ո-ի մեջ այդ վոկալափոխությունը չի կատարվում. նույնն է նաև անպնդերենում, որ ա շարունակ հնչեմում է ā, բայց r-ից առաջ (վոկ վանկում) մնում է a. ինչպես՝ dark, darling, dart, darn, darvinism, part, parsley և այլն։

ա ձայնավորը (a) ամենաշատ գործածված ձայնավորն է. այսպես և սանսկրիտում, որ ունենք բազմաթիվ բառեր, որոնց բոլոր ձայնավորները a են. ինչպես՝ Çatapathabrāhmaṇa, Մանավադարմաշաստրա, Մահաբարատա, Ռամայանա, Պանչատանտրա և այլն։

ա + ն

ա ձայնավորը ունգականի մոտ վերածում է իր նրանգը։ Լիթվանականի արևելյան բարբառներում ą (ունգալին a) դառնում է u, իսկ an>un։

Լևհերենում գրվում է ą, բայց հնչվում է o։

Պարսկերենում, Խնդրանի բարբառով, an>un. ինչպես nān> nun։

այ

այ դառնում է մերթ ա, մերթ է, մերթ երկուսը միասին.

ե. ա և է. Հաճընի բարբառով՝ գայլ>գալ, գէլ. այծ>աճ, էճ և այլն։

ai

Շատ լեզուների մեջ ai երկրարբառը դառնում է e. ինչպես՝ հին պարսկերեն ai ձևի դեմ ունենք սանսկրիտ ē։

Սանսկրիտում և ջավայերենում երբ a ձայնը որևէ ձևով (բարդությամբ կամ ածանցմամբ) պատահի i ձայնին, երկուսի միացմամբ առաջանում է e. ինչպես ջավայերեն kā-|-hindal (որ h անձայն է) = kendəl (Bohatta, Gr. jav. 16)։

aւ > ա

Արշաւիր	>	Արշարունիք։
մօա	>	մատչիլ։
հօտ	>	հատանել։

au > o

Շատ լեզուների մեջ au երկբարբառը տալիս է o. ինչպես՝ հին պարսկերեն au ձևի դեմ ունենք սանսկրիտ o։

Սանսկրիտում և ջավայերենում, ամեն անգամ, երբ a և u իրար են պատահում (բարդությամբ կամ ածանցմամբ), երկուսի գումարից առաջանում է o. ինչպես՝ ջավայերեն kā-|-hundur (որ h անձայն է) = kondur (Bohatta, Gr. jav. 16)։

b

e > i, b > i ձայնափոխությունը գտնում ենք նաև հունական բարբառներում. ինչպես՝ κεφαλ. > κιφαλ. և այլն և այլն (BSL 34, № 102, p. 146)։

e դարձած ei գտնում ենք ռոմանական լեզուներում, իտալերենում, ֆիններենում, լեթերենում և այլն (BSL 67, p. 163)։

b բառասկզբում > ye. գտնում ենք բացի ռուսերենից, նաև կաբարդին լեզվում. ինչպես՝ yefendə «էֆենդի», yermelə «էրմենի, հայ»։

Բոլոր դրավիդյան լեզուների մեջ e > ye (տես այս մասին n տառի տակ)։

b > յե ձայնափոխությունը հատուկ է միայն բառասկզբին (ելք և արևելք) և ոչ բառամիջին. այնպես որ մի կոզմից ունենք եփել, բայց ներկան կեփեմ և ոչ թե կը յեփեմ, ոմանք, սխալմամբ, անորոշի և կատարյալի ձևն ընդհանրացնելով, այժմ սկսել են ասել կը երգեմ, կը երթամ, կամ նաև արևյելք և այլն. ավելի առաջ տանելով այս երևույթը, պատահում ենք մինչև անգամ հիճգ-

յերալով (ախոռանակ ինիզեերով). ատոպիս է դրված, օրինակ, Սիրասի «Զրված օրենքո»-ի 395-րդ էջում՝ «զիրք հինգյերորդ»։

Դրամիկյան նոյն ժամում բառասկզբում ը, ե, օ, օ հնչում են ye, ye, yo, yo (Brigel, 2)։

Այն մասին, թե բառասկզբում և չէր հնչում V պատմ յե (ye), երբ տպագրվել են Ծառուքյան նաև յ նախդիրով դրչագիրները. օրինակ՝ յեզիպատաս, յերազի և այլն։ Ինչպես էին կարդացվում այս բառերը, յյո՞, ինչ որ հնչել անկարելի է, թե յե, սկզբում յ լինելով բազադարձ, չէ՞ որ յ նախդիրը պիտի դառնար ի. ինչպես՝ ի Ցակոբ, ի յերազ և այլն։ (Այս առումով նկատողություններ անում է Վարուժանը (Վ.Եմյան), «Մարզպետին Հայաստանի նոր տպագրություններ», Բիւրակն. 1926, էջ 12)։

Երբ և ձայնավորով սկսվող մի բառ մոնում է բարդության կամ ածանցման մեջ, նախածանն և այլևս չի հնչվում ye, այլ ե. օրինակ՝

երկ — համերկ, պարերկ, սիրերկ.
երջանիկ — ապերջանիկ.
եհիլ — աճեհի.
ե — արդարև.
են — թեպետև։

Իսկ ձայնավորների հանդիպման դեպքում ավելանում է յ. ինչպես՝ թեև, նաև։

և և է

Ընդհանուր կանոնով բառամիջում և դոնում ենք բառավերջից սկսած երկրորդ հնչումից (առաից) հետո։ Երբ և և է տառերը նույն հնչումն ստացան, այս երկուսն սկսեցին փոխանակվել իրար հետ, այնպես որ հավատարիապես գոնում ենք գրված ամենամեծ և ամենամեծ։ Նույնիսկ կա ձայնահամարը, որ դոնում է և (օրինակ թարեկամ, թարերար), գրվում է նաև է-ով ինչպես՝ ազետակ = ազհատակ, ալեգեա = ալիգեա, ալեխառն = ալիխառն, ալեկոծ = ալիկոծ և այլն։

Կան բառեր, որոնք ըստ օրինի գրվում են է-ով, բայց բարդության ժամանակ և ձայնավորը միջածայն դառնալով գրվում են և-ով, բայց որովհետև և և է նույնաձայն են դարձել, ուստի գրվում են նաև է-ով, մինչդեռ ըստ օրինի է պիտի դառնա ի. ինչպես՝ եղեգն—եղեգնիկ, այգրեն—այգրենաձիկն, նույնիսկ հայերեն է-ով

և հայերեցագետ, հայերենահոս՝ ե-ով։ Աղեց բառն էլ գրվում է ե-ով, որի սերբերակն է Աղիճ. ասսի բարդության մեջ ունենք թմ. ագեճաբուխ և թմ. ագիճաբուխ։

Հնդեվրոպական նախալեզվի alopek'os բառը օրենքով տալիս է հայերեն աղուես. բայց որովհետև բառավերջի ս-ից առաջ ե դառնում է ի, ասսի աղուես՝ հին ձևը աղուէս. բայց հոլովման մեջ առաջին ձևը պահված մնայ. այսպես սևասկան աղուեսուց և ոչ թե աղուէսուց, ե-ով և ոչ իսկ ադուիսուց, ինչպես պահանջվում էր։

ի վերջացող բառերը ա հոդակապով կապվելու ժամանակ պահում են ի ձայնը. օրինակ՝ մարդարէածին, մարդարէապէտ, մարգարէական։

ի > ի

Այս օրենքը մնում է ասանց գործադրության։

Երիզ<Երեզ բառն ըստ իս (MSL 20, p. 160) ճիշտ չէ. Նհբ ավանդում է այս ձևով. բայց այս ձևն ավանդված չէ։ Դրա արմատական ձևը հին մասենագրության մեջ ավանդված չէ. ունենք միայն ածանցները Երիզապիճդ, Երիզապճդնալ և այլն, և մեկ անգամ էլ դրծ. Երիզով ձևը. ընական է որ հայերենի ձայնափոխության օրենքների համաձայն՝ սրանցից պետք էր ենթադրել *Երեզ ուղղականը, ինչպես ունի Ջր. բայց Նհբ անուշադրությամբ գրած է *Երիզ, և այս սխալը բառարաններին միջոցով ամեն տեղ տարածված է։

ե և ո, է և օ

Մեր գավառականներում ե և ո *բառամիջում ստացել են* իե և ուօ *հնչումները, իսկ* է և օ *մնում են անփոփոխ. սրա նման է նաև եվրոպական հարար լեզուն, որ ունի* e և o, *որոնք հնչվում են* ie, uo, և ē և ō, *որոնք հնչվում են սովորական ձևով* e և o (Cerulli, 57)։

e և o լատիներենում ունգականից առաջ (որոշ պայմաններում) դառնում են i, u. ինչպես՝ nimbus<*nembhos, imber< *embris, humus<*homos, umerus<*omeros (MSL 20, p. 202—203)։

ը

Երբ բառասկզբում ը ձայնավորը կա, բարդված կամ ածանցված մասնական մեռած է. օրինակ, կարելի չէ առնել՝

«Հաղորդեցք յառաջ սլացաւ» (Համերի «Իլիականը», թրգմ. Վ. Թերզյանեանի, Թիֆլիս, 1886, 135)։

ը ձայնավորն անդիր խոսնելով երբեմն ընթերցումը կոպտում է. օրինակ, Նույն «Ահա» դերբը կարդալու, էջ 118-ում հատու հանելով տողին. «կարելի չեր չարհամարհել պատանեկան զարհուրվայրը». — ես մտածեցի, մի ինչ որ պատանում «պատանեկի մեջ գնալ» բառի ոճականն է, որովհետև նրանից էլ շարունակ դիտելմանններով էր խոսում։ Բայց մի քիչ առաջ տանելով ընթերցումը, հասկացա, որ պետք է լինի պատ-ա-նեկան «պատառ պետք»։

Հայերեն ը-ին (ավելի հիշա Զեյթունի ը-ին) մոտիկ մի ձայնավոր ունի և ջութալերենը, որ հաճախ ը-ի է փոխարում, շատ հաճախ իրեն տատ չի պրծում և չի էլ հնչում, ինչպես՝ wolas, kəlayan կամ wlas, klayan (Bohatta, Gr. jav., 18)։

Հիշա հայերենի պես ալս ձայնը շիշա չի առնում, բայց բայաձևի դեպքերից, ինչպես և հայերենում (տեղ, էջ 20)։

i, ի

Ռանիերենում կարճ i հնչում է իրեն ը. օրինակ՝ ting «բան», կարդա՝ theng (Poestion, Lehrb., 11), հիշա ինչպես Վարարադի բարբառում սիրտ>սիրտ։

ի + ա, i + a

ի + ա հայերենի մեջ միասանկնելում տալիս է իա կամ ե, իսկ բազմասանկնելում միշտ ե. ինչպես՝ մետասան, միաւոր. գիհապան. ալագան և ջութալերեն ալս որ i և a իրար պատահեն (բարդությամբ կամ ածանցմամբ), առաջանում է e. ինչպես՝ kari + han (ալս h անձայն է) = karèn (Bohatta, Gr. jav., 16)

i և u

Ալս ձայնավորների սղման դիզիկի մի օրինակ է ներկայացնում պարսկերենի մինջանի բարբառը (Հինդրուշ)։ Ալս բարբա-

ում i և u սղվելով այնպիսի մի վիճակի են հասել, որ լսողը դժվարացել է ուշադրել նրա երանգը. մերթ դրել է շատ կարճ i, u, մերթ դրել է շրջված ձևով կամ տողից վերև և մերթ ə։ Այսպես են kən «անել» (պարսկերեն kun), kətyá «կարճ» (պարսկերեն katah), ləγdá «աղջիկ» (պարսկերեն duxtar), ləwâr «դուռ» (*duwar), lə′ «երկու» (*duwa), lə′m «պոչ» (պարսկերեն dum), sə′rx «կարմիր» (պարսկերեն surx) և այլն (տե՛ս Gauthiot, MSL 19, p. 142)։ Այս անորոշ ու տարտամ ձայնավորը մեր ը հնչյունն է։

n և o, o>vo

n>nu ձայնափոխությունը դանում ենք նաև հույն բարբառներում (BSL 34, № 102, p. 146—147). օրինակ õλος>ũλος։

Բառասկզբում n դառնում է vo. այս v ձայնի հավելման երևույթը ավելի ընդարձակ չափով գտնում ենք չուվաշներենի մեջ, ուր u, ũ, o, õ սկսող բառերը իրենց վրա ավելացնում են v. օրինակ՝

թաթարերեն	urəs	urman	õč	ũt
թուրքերեն	urus	orman	ũč	õd
չուվաշերեն	vəras	varman	vlsʸsʸe	vat
	«ուռա»	«անտառ»	«երեք»	«լեզի»

(Ашмаринъ, Матер., 78)։

Բոլոր պրավիլյան լեզուների մեջ ընդհանուր ձգտում կա o հնչելու vo, թեև հաճախ գրվում է միայն o. ինչպես որ e հնչվում է ye. ինչպես՝ ondu «մեկ», eradu «երկու». կարդա՛ vondu, yeradu (Caldwell, Comp. gr. drav., 122)։

Սլավական զանազան լեզուներում բառասկզբում o դառնում է vo և նույնիսկ հին սլավերեն մի Ավետարանի ձեռագրում оть նախդիրը գրված է вотъ (BSL, № 64, p. 87)։

Մոնղոլերենում o հաճախ հնչվում է uo, իսկ u>ou. օրինակ՝ usón «ջուր» հնչվում է uoson (Клюкин, 12)։

Լեթթերենում o տառն արտասանվում է uõa. չկա բնավ մաքուր o. (Brentano, 2)։

1355 թվականին գրված մի ճառընտիրում կատարյալի եզակի 3-րդ դեմքով եցոյց, կացոյց և այլն ձևերը գրված են եցուոյց, կացուոյց և այլն (ըստ Սարգիսեան, Անանիա Թրպմ., էջ 19 ծան). ես կարծում եմ, թե սա n>nuo արտասանության պատկերն է։

Այն մասին, թե բառակզբում V դարում ս չէր հնչում vo (vo), *այլ o, ապացույց է ծառայում նաև այն, որ ալս ձայնափոխությամբ սկսվող բառերը առանում են յ նախդիրը և ոչ թե, օրինակ՝ յոդի, յոկտոյ, որովհետև կարելի չէ կարդալ յիսդի, յվսկտոյ։ Եթե ս բառակզբում հնչեիր ինչպես* vo, *բնականաբար պիտի առանար յ-ի տեղ թ նախդիրը, իսկ թ որդի, թ ոսկոյ և այլն։*

ո առաջ հնչյունը բառակզբում թեև vo *է, բայց բառամիջում երբեք չի կարելի հնչել* vo, *այլ միայն o. ինչպես՝ չորքոտանի (ոչ թե չորքվոտանի), անողորմ (ոչ թե անվողորմ), քնարդի (ոչ թե քնավարդի), անորոշ (ոչ թե անվորոշ), անողորկ (ոչ թե անվողորկ)։*

Ուսմական արտասանության դիտելի ձևեր են առվողջ, առվարչություն, վասվարակ, յասվարակ և այլն։ Բոլորովին սխալ և ամիսթող ձև է, օրինակ, բարձրավարակ, որ դառնում ենք Վասիանցյան, «Լեռնական աշխատասիրությունների պետական համալսարանում», XIV, 9։ Պետք է ասել բարձրյարակ, ինչպես ասում ենք լավարակ, վասարակ և այլն։

Լեհերենում o դարձել է o, oa, ua, uo (այս մասին տե՛ս մանակոզրական մի ուսումնասիրության մեջ Mokenzie, BSL, № 67, p. 161). *Նույնն է նաև ֆիննական լեզուների մեջ (տե՛ս էջ 163)։*

Լատիներենում o ասար ձայնավոր է միայն ևրոպական բառերի մեջ, ինչպես՝ polīkliku, Olga, *իսկ բնիկ բառերի մեջ հանդիպում է երկրորդական և հնչյունում է uo (Паэгле, 7)։*

n, nl

Հնդեվրոպական ո ձայնի դեմ հանդիպում ենք ով. բայց այս ձայնափոխության մեջ վ ձայնը մերթ ընդունում է, մերթ մնում արդի լեզվի մեջ. օրինակ՝ ասում ենք Ովսաննա, ովկիանոս, Յովակիմ, *բայց* Յոր, Յակոբ (Օվսաննա, օվկիանոս, Հովակիմ, Հոր, Հակոբ) *և այլն (հոխանակ Յովր. Յակովբ). վ կորչում է, եթե վանկի մեջ է, իսկ երբ վանկի վերջածայնն է կազմում* (ովկիանոս) *և կամ նախաձայն է* (Յովակիմ), *մնում է. այնպես որ սխալ է գրել* ոասիս, ոկիանոս *և այլն։*

n > mo

Նոր-Ջուղայի բարբառում բառակզբի n տալիս է մի քանի դեպքերում mo (տե՛ս ՔննաՀ[illegible]յան Նոր-Ջուղայի բարբառի, էջ 72)։

Այս երևույթը ծագում է շրիմնականի և ոնգալինի պատահական հանդիպումից, ինչ որ հաճախ է պատահում տաճկերենում և տալիս է b. օրինակ՝

biyan بيان *«մատուռակ»* > miyan.
behane بهانه *«պատրվակ»* > mahana.
bin بين *«հազար»* > min

նույնիսկ՝

ben بن *«ես»* > men.

թեև սրա հոգնակին է՝

biz بيز *«մենք»* > bīz

ով > ավ

Ղարաբաղի բարբառում ով > ավ. *այսպես լինում է նաև երբեմն լատիներենում. ինչպես՝* *low>lavere, *Kowos>cavus *և այլն։*

ո

Շատ ուշ ժամանակի ձեռագրերում ո դարձել էր արդեն փակագիր՝ փոխանակ գրելու աւ. այնպես որ նույնիսկ ձայնավորի մոտ, երբ av հնչումը շատ որոշ էր, ոմանք գրում էին դարձյալ ո։ Այսպես, օրինակ՝ Երեմիա դպրի 1682 թվականին գրած մի մատոսարանում գտնում ենք Դօիթ = Դաւիթ, թագաոր = թագաւոր, ամբարտաոան = ամբարտաւան, փառաօրեմք = փառաւորեմք *և այլն (տես «Բանասէր», 1899, էջ 166)։ Սրանք ոչ մի արժեք չունեն հնչական տեսակետից։*

3. ՁԱՅՆԱՎՈՐԻ ԱՆԿՈՒՄ

Նոր հունարեն բարբառներում i *և* u *ջնջվում են (տես* BSL 34, № 102, p. 146). *վերջածայն ձայնավորները, ինչպես և շեշտից առաջ եղած ձայնավորներն ընկնում են. օրինակ՝* κεφάλι > κεφάλ., ἄνθρωποι > ἄνθρώπ, κλέφτι > κλέφτ, ψυχικό > ψυχκό, ενος > ενός, στημόνι > στημον, ὄικος < θκος, χαμηλός > χαμλός *և այլն (անդ, տես.)։*

Նոր հունարենի հյուսիսային բարբառներում անշեշտ կարճ i *ջնջվում է. և այս երևույթը նկատվում է արդեն մեր թվարկության*

նից առաջ 3-րդ դարից ֆեստական արձանագրություններում (BSL 37, № 109, p. 15—16)։

Մենք կիանք, որ ձայնավորն բառ ինքնին արդեն վանկ է, ավելորդ կարճ է. ամենատիպ ձայնավորները i և u, նաև ամենակարճերն են. a ամենատարածն է և ամենից երկարը. սրա համար է որ ձայնավորափոխման մեջ ամենից առաջ i և u բնորոշ են, e և o անցնում են (ավելին կարճանալով) i և u ձայներին, մինչև a պահում է իր դիրքը (Meillet, Aperçu... gr., 317)։

Բարբառների մեջ շեշտից առաջ ձայնավորները բնորոշով, երբ երկու նման բաղաձայն իրար կողքի գանվին, մեկը ջնջվում է., օրինակ՝ Ղարաբաղի բարբառով առաւամբար > առամբար։

Մանրակերների մեջ էլ հաճախ ձայնավորի անջնջա լինելու կամ վերջնավանկում գանվելու պատճառով բնդունում է կամ վերածվում ա-ի. ահագին անա ասածով գնում եմ դրական մանրակերն և ժողովրդական մանրակերներ մի հատված գիմ առ գիմ.

գր.	cerik	nere	ley	ilgen	nuxur mini
ժգ.	cərəng	nər	tə	nəgu	nuxər mni
գր.	arban	tabun	šara	üygütü	bagaxan
ժգ.	arbən	tabən	šar	uygətə	bagxən
գր.	samor	übürtüleću	xuxetdu	irebe.	
ժգ.	samər	ubərtəlćí	xuxətdə	irbe.	

(Клюкин, 57).

Միջին ա-ի կորուսար

Թեև բառամիջի ա-ի կորուսար հատուկ է միջին հայերենին, բայց կան այնպիսի օրինակներ նաչխակ V դարի առաջին կեսից ավանդված. այսպես՝

ապատամբ, որ այս ձևի տակ տիրապետում է մեր ամբողջ գրականության մեջ. սակայն նիգնիկի նորագրած ձեռագրում գրված է միշտ ապաստամբ, որից էլ ապաստամբություն, ապաստամբիմ։ Սակայն ոչ միայն նիգնիկի մեջ, այլև իրեն ժամանակակից մի երկի մեջ գանում ենք նաչն ձևը. ինչպես՝ Իրենիոսի Հերձուածաբ, ապատատամբ, ապատատամբեալ, ապաստամբություն, ապաստամբաբեաց. նաև Վարք և վկայաբանություն. II, էջ 646, ապստամբություն. նոյնիսկ ուշ ժամանակից Յայսմաւուրք, յուլիս 17, անի ապատատամբ. սեպտեմբեր 27՝ ապատատամբել։ Ավելի ուշ, միջին հայերենի շրջանում, այս բառը պարձավ ապստամբ և գործածա-

կան է մինչև այժմ (այս մասին ընդարձակ տես Արմատական բառարան, եր. 463)։

Բագրատունի նախարարության անունն այս ձևի տակ դարձած է մեր մատենագրության ամենահին շրջանից մինչև այժմ, բայց այս բառի արմատն է Բագրատ, որ հին պարսկերեն Bagadāta=Baγdād ձևից է։ Պարզ է, որ Բագրատունի ձևն էլ պիտի լիներ հին ժամանակ *Բագադատունի, բայց այսպիսի ձև երբեք չի ավանդված։ Սովորական է միայն կրճատ Բագրատունի ձևը, որից էլ ավելի կրճատ ձևով կազմված են համարում Բզնունիք գյուղի անունը (Սեբաստիայի մոտ)։

Աստուած բառը հոլովման մեջ սեռականում լինում է Աստուծոյ, իսկ հոդնակի սեռական՝ աստուածոց. մեր քերականության մեջ ավանդաբար դրվում է, թե այս բառը երեք նշանակում է քրիստոնյաների Աստվածը, սեռական լինում է Աստուծոյ ձևով, իսկ կռապաշտների աստվածը լինում է աստուածոց ձևով։ Իրականությունն այն է, որ մեր հայերեն ձեռագրերում Աստուած, Աստուծոյ ձևերը երբեք ամբողջությամբ չեն գրված, այլ միշտ պատիվով —), համառոտված ձևով՝ Ած Աւ։ Մեզ հայտնաբերեց, թե հին հայերենը լինում էր *Աստուածոյ, որ ապա միջին հայերենում, միջին ա ձայնավորի կորուստով դարձավ Աստուծոյ. և այս ձևը այնտեղ անցավ դրականության։

Այս բոլորից երևում է, որ, ինչպես բոլոր բառերի, նույնպես և վերի երեք բացառիկ բառերի մեջ էլ ա-ի կորուստը ուշ ժամանակի արդյունք է, իսկ հնագույն շրջանում միջին ա պահպանվում էր։

Միջին ա-ի կորստով աշխարհաբարն սանդղել է նոր բառեր, որոնք դրաբարի հետ կրկնակ են կազմում. օրինակ՝

աճցաւոր	—	աճցւոր
բաճաւոր	—	բաճւոր
վերաճալ	—	վերճալ
շատանալ	—	շատնալ
աշակերտ	—	աշկերտ
վերացնել	—	վերցնել

Միջին ձայնավորների անկման այս օրինակներից չպետք է հետևցնել, թե ձայնավորների մեջ ամենախոսուն ա ձայնավորն է, քան որում ընկնող ձայնավորներից ամենաշատը նրան է պատկա-

նաև՝ Վանական ալդ շատախմբանը նրանից է, որ ա ձայնավորն էլ մյուս բոլոր ձայնավորներից ավելի շատ է պրծածվում, և քանի-ին ալդ շատախմբանը պիտի համապատասխանեն նաև բնիկով ձայնավորների քանակին։

Միջին ա-ի պատմությունը

Ահա օրենքին հպատակվում են բնիկհնուր կերպով կը ճյուղի բարբառները, ում ճյուղի բարբառները չեն ենթարկվում, բայց պարմանական կերպով նայելու դանում ենք մի խումբ բառերի մեջ, օրինակ՝ պրարար տեսանել բայը, որ կը ճյուղի բարբառներում պահում է անանել, նայն ձևով ներկայանում է նաև ում ճյուղի բարբառներում (ինչպես Երևան, Վարդանոց, Մալաթիա)։

Ահա երևույթը նկատվում է մի խումբ բառերի մեջ միայն, որոնք բոլորն էլ պատկանում են առաջին և երկրորդ խմբակցման ը-ով ներգործին։

Մեզ հայտնի ոչ մի ընդարձակ մասնագիտական իմ Վարդանոցի բարբառի քննության մասին, հրատարակված Journal asiatique-ի 1902 թվականի 561—571 էջերում, ուր խոսելով ում ճյուղի բարբառների ալս երևույթի մասին, այն կարծիքն է հայտնում, թե մի դեպքում ա-ի պահպանումը և մյուս դեպքում ա-ի կորուստը ցույց է տալիս, թե հնագույն հայերենում երկու տեսակ ա կար. ինքը չի ասում, թե ինչ տարբերություն կար ալդ երկու ա-երի միջև. տեղյակներ (երկար ու կարճ), թե երանգի (բաց թե փակ)։ Սակայն իրողությունը հայտնի կերպով ցուցադրում է։

Շատ երկար ժամանակ մտածել եմ Մեյեի ալս կարծիքի մասին։ Թեև հենց սկզբից (a priori) ալս կարծիքը չեմ ընդունել, բայց Մեյեի պես նշանավոր մի հայագետի, ալն էլ ձայնարանի կարծիքը առանց ալլևալլի մերժել անհնարին էր։ Անհրաժեշտ էր գտնել մի ցուցիչ պատճառաբանություն։ Ամենաուժեղ պատճառաբանությունն ալն պիտի լիներ, որ կարողանալինք գտնել, թե ինչու մի տեղ ա մնում է և մի քանի տեղ էլ ոչում է։

Մինչև 30 տարի հետո (1932 թ. նոյեմբերի 24), գտա. կարծում եմ, կորստան պատճառը։

Իբր օրինակ առնենք ալն բառերը, որոնց մեջ տեղի է ունեցել միջին ա-ի ոչումը.

գրաբար	Երևանի բարբառ	գրական արևելահայերեն
տեսանել	*տեսնել*	*տեսնում եմ*
հասանել	*հասնել*	*հասնում եմ*
անցանել	*անցնել*	*անցնում եմ*
հատանել	*հատնել*	*հատնում եմ*
մեռանել	*մեռնել*	*մեռնում եմ*
մաանել	*մտնել*	*մտնում եմ*
դտանել	*դտնել*	*դտնում եմ*
բուսանիլ	*բուսնել*	*բուսնում եմ*

Այս բայերի կատարյալը լինում է տեսայ (տեսի), հասայ, անցայ, մեռայ, մտայ, հատայ, բուսայ, գտայ։

Սրանք բոլորը շեշտվում են առաջին վանկի վրա, ուրիշ խոսքով արմատի վրա, քանի որ բոլորն էլ երկվանկ են և ահա այս շեշտն է, որ նմանողության (անալոգիայի) օրենքով անցել է բայի անորոշի և ներկայի կամ անկատարի վրա տեսնել, տեսնում եմ։ *Երևույթի բուն պատճառն այն է, որ առաջին և երկրորդ լծորդության 2-րդ տիպարի բայերը* -ց- *միջամտանիկը չունենալով, այլ միայն ի կամ ա վերջավորությունը, վերածվել են երկվանկի և բնականաբար շեշտն ընկել է առաջին վանկի վրա։*

Կը ճյուղի բարբառները շեշտի տեղափոխություն չունենալով, ալսպիսի բացառություն չեն ճանաչում և օրենքը նրանց մեջ ընդհանուր է։

ում ճյուղի բարբառների մեջ մնացյալ բոլոր դեպքերում շեշտը փոխադրված լինելով արմատից հեռու, պահվում է ա ձայնավորը. մեծանալ, մեծացայ, մեծանում եմ, հաստանալ, հաստացայ, հաստանում եմ. կործանել, կործանեցի, կործանում եմ. խոստովանիլ, խոստովանեցայ, խոստովանում եմ. բաժանել, բաժանեցի, բաժանում եմ։

Այսպես նաև պատճառական բայերի մեջ. օրինակ՝ մեծացուցանել, մեծացնել, մեծացրի, մեծացնում եմ։

4. ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Ռիվոլալի բառագրքում (էջ 392) գտնում ենք սեռական քրոչ (փոխանակ քրոջ), *Մուժամբարի բարբառում՝ սեռական տորոչ (փոխանակ տիրոջ,* տերոջ)։

Ձայնավորների ներդաշնակությունն ամենամեծ բանաոր դեր է խաղում։ Այս ներդաշնակությունը կամ նաև ասենք, որ a, o, u ձայներ են (իրենք կոչում են ուրական), e, ö, ü խմբի (— իգական) (տես Климов, 12)։

Ձայնավորների ներդաշնակությունը արևելքում կամ նաև հարավային մասում, որ բառասկզբի i, u և e, o տեսակներով են բառի արմատական ձայնավորի համեմատ։

Ուգրո-ֆիննական լեզուների մեջ ձայնավորները երկու շարքի են բաժանվում.

Նախադրամային՝ e, i, ä, ö, ü.

Հետադրամային — a, ä, o, ö, u, ü.

Ա՛յս շարքին որ պատկանի արմատի ձայնավորը, բոլոր մնացյալ բոլոր ձայնավորները էլ նույն շարքից պիտի լինեն. մասնիկներն էլ անեն երկու ձև։

Ձայնավորների ներդաշնակությունը հատկապես զարծադրվում է հոնդարևելյանում, ուր մինչև անգամ ամեն վերջածայլ բառերն են հարատևվում։

Նույնը կա ուրալ-ալթայական լեզուներում։

Շատ լավ օրինակ է լակուտաերենից՝ agalar «հայրեր», äsälär «աղջիկներ», ogolor «աղջաներ», dörölör «դուռչիներ, մուրճներ». խուրթերենից՝ aldəm, verdim, gördüm «տամ, ասի, անում»։

Հունդարևելյանում և չերեմիսերենում կա նաև ձայնավորի շրթնային նմանություն. օրինակ՝ մասնիկը ունի o ձայնավորը, e կամ ö. եթե բառի վերջին ձայնավորը շրթնային է, կառնի ö ձայնավորով մասնիկ, եթե ոչ՝ e ձայնավորով. ինչպես՝ հունդարևերեն három-sor «երկուս», öt-sör «հնգեկուս», hét-ser «յոթնեկուս» (Szinnyei, Finn-ugr. Spr., 50)։

Ձայնավորների ներդաշնակության վերջին աստիճանն է նույնասյությունը, որով բառի բոլոր ձայնավորները դարձել են միատեսակ. ասպես, օրինակ, չուվաշերենում իրար հաջորդող կարճ ձայնավորները դառնում են միատեսակ, այն է o կամ ö, ə կամ e. ինչպես՝ komol. s'örö, s'örölʼö, yələxrəm և այլն (Ашмаринъ, 31)։

5. ՁԱՅՆԱՎՈՐԻ ՀԱՎԵԼՈՒՄ

Բազմաձայնների խմբի մեջ, հեշտ արտասանության համար, երբեմն մտնում է մի ձայնավոր, որ կոչվում է anaptyxe. օրինակ՝

Հին պարսկերեն dru-նախաձայն դառնում է duru-. ինչպես զենդերեն drva-, սանսկրիտ dhrava-=հին պարսկերեն duruvā։

Նախաձայն dri- հին սլավներեն պիտի լիներ *diri-, բայց օրինակ չկա (Meillet, Gramm. du vieu persan, 86)։

Այս երևույթը շարունակվում է պարսկերենում, ուր ունենք միշտ բազաձայնների խմբի մեջ ներմուծված մի կարճ ձայնավոր, ինչպես՝ birādar, farmān և այլն։

Երբեմն ձայնավորն ավելանում է բառի սկզբում (համմտ. աստղ)։

Բառասկզբի այս ձայնավորի հավելումը կա հատկապես ֆրանսերենում s-ով սկսվող բառերի մեջ, ինչպես՝ stélla>étoile, scala>échelle, stomachum>estomac։

Սրա պատճառն այն է, որ միջաձայն ձայնավորները հնչվում են ավելի կարճ քան նախաձայնները. մինչև իսկ կարող է միջին ձայնավորն ընկնել (կոչվում է syncope). ինչպես՝ regō, surgō, porgō։

Այսպես նաև վերջին ձայնավորը. ինչպես՝ *eti (հունարեն éti «ուն») դառնում է et (թեև etiam), eme «գնիր», բայց em «առ»։

Լատիներենի ultra-brève (գերկարճ) ձայնավորներն ընկան ռոմանական լեզուների մեջ։

6. ԵՐԿԱՐ ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐ

Երկար ձայնավորները ձգտում են հետզհետե փակվելու։ Լատիներենում ē և ō ավելի փակ են քան ĕ և ŏ։ Օսկերենում և ումբրերենում ē և ō այնքան փակ էին, որ հասնում էին ī և ū ձայներին։ Կելտականում ē դառնում է ī։ Գոթականում e և o (իմն ē և ō) շատ փակ են։ Լիթվականերենում è և o (իմն ē և ō) նույնպես փակ են։ Հայերենում հնդեվրոպական նախալեզվի ē և ō դառնում են i և u, մինչդեռ e և o մնում են։ Հունարենում ŋ որ առաջ e ձայնն ուներ, այսօր հնչվում է i։

Արևի հունական մի բարբառի մեջ e և o անշեշտ՝ դառնում են i և u (BSL 26, № 80, p. 92)։

Դանիերենի մեջ երկար e գրեթե i հնչումն ունի (Poestion, Lehrbuch der Dänischen Sprache, 8)։

Հին լատիներեն մեջ էլ տարբեր նախատիպ երկբարբառներ վերածվել են մի ձայնավորի, օրինակ՝ ei, ei>ī, ī, eu, ou>ū. oi, oi, ai>ē. ou, au>ū (Лескин, Грамм. древн., 89)։

Երկար ձայնավորները երկար երկարաթյան պատճառով անփոփոխ են մնում, միայն վերջին վանկում դանված ժամանակ երկարաթյունից մի բան կորցնում են։ Իսկ կարճ ձայնավորները տարբեր են. բուռ ասեմ, թե սկզբնաձայն են միջաձայն, թե վերջնավանկում կարճ ձայնավորները սկզբնաձայն լինելու դեպքում անփոփոխ են մնում սովորաբար, բայց ընկնելով բառի ներսը, շեշտի ազդեցության տակ փոխվում են, իսկ այլ փոփոխությունը լինում է համաձայն շրջապատի մյուս ձայնավորների, ինչպես, օրինակ՝ capio, *որից* ac-cipio, occipio *և* oc-cupare, amicus-inimicus

7. ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԶԱՅՆԱՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Հայերենի երկբարբառների մի մասն առաջանում է հնդեվրոպական նախալեզվի երկբարբառներից. ալսպես՝

այ<ai, աւ<au, ոյ>eu, ou, esō։

Մյուսներն առհասարակ առաջանում են դանազան ձայնափոխությունններից և ոչ մեկը չի համապատասխանում հնդեվրոպական նախալեզվի երկբարբառի. օրինակ՝

կնամ *բառի մեջ* եա<iyā. *համմ. հունարեն* βιῶναι, *ուր ունենք* iyō.

ձեան *անասկանի մեջ* եա<iy°. *համմ. հունարեն* γένος, *ուր ունենք* -iyon-.

եթն, և <*septm *բառից* և <ep.

ձիւն *բառի մեջ* իւ<iyō *կամ* iyo. *համմ. հունարեն* χιών, χίων, *ուր ունենք* iyo iyō.

միւս *բառի մեջ* իւ<ին ձևից, *որը մի* և*ս.*

իւր *բառի մեջ* իւ<seve- ձևից։

8. ԵՐԿԲԱՐԲԱՌԱՑՈՒՄ

Երբ մի պարսիկ արտասանում է, օրինակ, մի երկար ձայնավոր, ձայնավորի առաջին մասը թեև հիշա, բայց երկրորդ մա-

սը փոխվում է. ā լավում է ā—o. բնական այս երևույթից հետևվում է, որ երկար ձայնավորները ձգտում ունեն երկբարբառի վերածվելու։

Այսպես եղավ ստորին լատիներինում, որից անցավ նոլսալատին լեզուներին. օրինակ՝ լատիներեն focum, pedem ձևերից առաջ եկան իտալերեն fuoco, piede և ֆրանսերեն feu, pied «կրակ, ոտք». լատիներեն me > հին ֆրանսերեն mei > ֆրանսերեն moi «ես». լատիներեն coda > հին ֆրանսերեն quoue > ֆրանսերեն queue «պոչ»։

Պարսկերենից թուրքերեն կարճ i մնում է i, իսկ ī դառնում է iy. ինչպես՝ چله čilla > čile «քառասունք», čim «լոո», բայց بين bīə > biyə «ուռիկ», bīx > biyx «արմատ» և այլն։

9. ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՁԱՅՆԱՎՈՐԱՑՈՒՄ

(Monophtongaison)

Երկբարբառների միաձայնացումը մի երևույթ է, որ գոլութիւն ունի բոլոր հնդեվրոպական լեզուներում։

Երկբարբառները որոշ լեզուներում ձգտում ունեն միաձայն ձայնավորների վերածվելու. այսպես, հին գերմանական ai, au, eu, uo, ie երկբարբառները դարձել են հոլանդերեն ē, ō, ī, ū, ī (տես J. Mansion, BSL 26, p. 94)։

Այսպես է նաև հայերենը։

Հայերենի մեջ ձայնավորացումն սկսել է շատ վաղ. այսպես, հնագույն հայերենում ey (եյ) դարձել է է և V դարում այլևս եյ գոլութիւն չունի։ Միջին դարում էր, որ աւ դարձավ օ, իսկ ալժմ բարբառներում բոլոր երկբարբառները ձայնավոր դարձան։

եա (նաև եայ, եաւ)

Ենթադրում եմ, թե եա երկբարբառը ծագում է հնագույն իա ձևից, ինչպես որ իւ երկբարբառն էլ ծագում է հնագույն իու ձևից։ Ըստ այսմ ձիւն բառը ծագում է *ձիուն ձևից, որ իրոք ճիշտ ու ճիշտ համապատասխանում է հնդեվրոպական նախալեզվի g'hiyōm ձևին, որ և հունարեն χιών.—(g'h տալիս է ձ, i տալիս է ի, ō տալիս է ու, բառավերջի m հայերենում դառնում է ն)։

Նմանապես սիւն<սիուն<k'ion, k'iyon, *որ է հանդարձն* xiwn:

Այսպես նաև բոլոր իւն վերջավորեալ բառերը (պիւն, մեծութիւն *և այլն*): *Անասնանուն բոլոր այս կարգի բառերն առաջնում են նաև, որ կարելի է մեկնել հետևյալ ձևով.*

Ուղղական իւն անասնանում ն-ի պատճառով առանձնական ան, ամբողջը լինում է իւան, որից ու բուն արմնի բնդհանրական (հմմտ. շուն—շուան—շան, առն—առան—ան, առուն—առուան—առան), *առաջինում է իան, իսկ իա պատճառով նա, ամբողջը լինում է նաև: Այս իա հնչումը մնում է այժմ էլ.* տեառն, լեառն *հնչվում են ոչ թե* տեառն, լեառն, *այլ* տիառն, լիառն: *Նմանապես լեալ հնչվում է ոչ թե լեալ, այլ լիալ, լիյալ, որի հետքը մնում է նաև յոմանք Ավետարանում, Ղուկաս Ի: 43, «Որում ոչ էր լինեալ հնար յոմանք քարշիլն», ինչպես նաև Ղուկաս ԻԹ: 8, «Ինչ ունէր նշան ինչ լինեալ տեսանել ի նմանէ»:*

Եա երկրաբարառ (ինչպես նաև նայ հատարարառը), սկզբունքով պահպում են միևնույն վերջավանումը: Բառամիջում եա պահում է ե, իսկ նայ պահում է և, որ ե+յ պատմական է:

Եա պահպում է բառավերջում միմիայն առաջին թծորդութեան հրամայականի ծայրին. այսպես՝ սիրեա՛, ողորմեա՛, արածեա՛ և այլն (առանձնահատկություն է այս կարգի բառերի վրա դնել շեշտ): Աշխարհաբարառում այս եա երկրաբարառ պահում է արևմտյան դրականում և՝ արևելյան դրականում՝ իր. այսպես՝ սիրէ՛—սիրի՛ր, ողորմէ՛—ողորմի՛ր, արածէ՛—արածի՛ր և այլն:

Ըստ բուն միևնույն կա, որոնք թվեմ հին հայերենի հրամայական ձևերն են, բայց աշխարհաբարառում գործել են իբր առանձին կամ անկախ բառ. սրանք են՝ գոնեա՛, գրեա՛ թէ, համարեա՛ թէ, ողորմեա՛:

Առաջինը սխալմամբ գրված է նաև գոնեայ. արևելյան դրականում գործածվում է գոնե և գոնեա՛ ձևով («գնթե» նշանակությամբ), իսկ արևմտյան դրականում կա միևնույն գոնե:

Երկրորդը թվ արևելյան և թվ արևմտյան դրականում դարձել է գրեթէ (գրեթե), գործ է ածվում իբր մակբայ («մոտավորապես» նշանակությամբ), որի նախնական ծագումն այլևս բնավ չի գիտակցվում:

Երրորդը անփոփոխ համարեա՛ թէ (համարյա թե) ձևով գործածական է միևնույն արևելյան գրականում («գրեթե» նշանակությամբ): Արևմտյան գրականում բնավ գործածական չէ. ամիկ բա-

ով կարելի է ասել նրա փոխարեն սեպհ՛ թե, որ մեկնուշն նշանակութիւնն ունի. օրինակ՝ «Սեպհ թէ ակոտ ելաւ» (Պարոնեան)։

Չորրորդը՝ ողորմեա՛ *գործածական է նախ* Տի՛ր ողորմեա *ասացվածի մեջ (թէ՛ արևելյան և թէ՛ արևմտյան գրականում) և երկրորդ՝* տերողորմեա (տերողորմյա) *«համբիչ» նշանակութիւմբ՝ միմիայն արևելյան գրականում։*

Եա *երկրարրառը վերջավանկում մեծագույն մասամբ գանըվում է փակ վանկի մեջ, այն էլ սովորաբար* լ, մ, ն, ր *նալ բաղաձայններով։*

լ *բաղաձայնով ունենք միայն անցյալ դերբայի* -եալ (-յալ) *վերջավորութիւնը, որ կարող է ստանալ անխտիր ամեն բայ։ Այս վերջավորութիւնն աշխարհաբարում դարձել է արևելյան գրականում* -ել, *արևմտյան դրականում* եր. *բայց կան մի քանի բառեր, որոնք իրրև քարացած ձև, պահում են իրենց* -եալ (-յալ) *վերջավորութիւնը։ Այսպես են՝* կատարեալ, անցեալ, մեռեալ, դարձեալ, երևակայեալ, ճեծեալ, օրհնեալ, որոշեալ, սովեալ, ստուեալ *և այլն* (կատարյալ, անցյալ, մեռյալ, դարձյալ, երևակայալ, ճեծյալ, օրհնյալ, որոշյալ, սովյալ, ստվյալ)։

մ *բաղաձայնով վերջանում են՝*

1. -եամ *վերջավորութիւմբ մի քանի բայ, որոնք են՝* ատեամ, անխայեամ, կեամ, գրգեամ, նընջեամ, տեղեամ։ *Սրանք խոնարհվում են սովորական ձևով և եա երկբարբառից հետո ստանում են զանազան բաղաձայններ. այսպես՝* կեամ, կեաս, կեայ, կեամք, կեայք, կեան։

Նուընիսկ գրաբարում -եամ *լծորդութիւնը ջնջված է և այս բոլոր բայերը վերացված են գործածութիւնից. բացի միավանկ* կեամ *բայից։ Նրանց տեղ դրված են* ատեմ, անխայեմ, գրգեմ, նընջեմ, տեղեմ

2. Մի քանի սակավաթիվ բառեր, որոնք վերջավորվում են եամ *կամ* եամն։ *Այսպես են՝* այծեամն, եղեամն, կեամ *«խոտեր կապ»,* շեամ *կամ* սեամ, ջայլեամն *և* վսեամ։ *Սրանցից մի քանիսը նուընիսկ գրաբարում կան նաև առանց* եա *երկբարբառի. այսպես՝* ջայլամն, վսեմ *կամ* վսամ, կեմ, շեմ։ *Արդի հայերենում ընդունված ձևերն են* այծեամ, եղեամ, (այծյամ, եղյամ), կեմ, շեմք *(արևմտյան գրականում* սեամ), ջայլամ, վսեմ։—*Ըստ Առաեան բառարանի, գավառական ձև է* եղեմ. *ծանոթ է ինձ հոմանիշ* եղիմ։

3. Ամ *«տարի» բառով բարդված ձևեր են* երկեամ *«երկու տարվա»,* երեամ *«երեք տարվա»,* քառեամ *«չորս տարի» և այլն։*

Այս բառերը արդի հայերենում չեն գործածվում. տեսակ ենք միայն երկաթեակ, եռամեակ, քառամեակ (երկամյակ, եռամյակ, քառամյակ) *և այլն:*

1. -թիւն (յուն) *վերջավորված բառերի գործիականը՝* հարբ, հարբ, *որոնք շատ մեծ թիվ են կազմում:*

և բաղաձայնով վերջանում են՝

1. -հան *(հոդակապ* հանք, հանց*) մասնիկով կազմված մի քանի բառեր, որոնք չափազանց բազմաթիվ են և ցույց են տալիս ա) վերաբերական ածականներ, ինչպես՝* արևելյան, արևմտյան, վաղարշյան, ՆՁգագլխյան, ՆիՆգաբաՁնյան *և այլն. բ) ազգանուններ, ինչպես՝* Հայկազնյան, Մամիկոնյան, Մեսրոպյան *և այլն. գ)* -ութիւն *վերջավորված բառերի անուններ, ինչպես՝* մեծության, ՆեղութՁան *և այլն. դ) ուրիշ վերջավորություններով բառերի անուններ, ինչպես՝* աՁՁիկյան, եռաՁդյան, ժողովրդյան, արյան, ձյան, սյան. *ե) անձնականի թվականներ, ինչպես՝* երկոքյան, երեքյան, ամենքյան, քոքոքյան, չորքյան *և այլն:*

2. Հոդակապի -հան *մասնիկով կազմված մի քանի բառեր, ընդհանրական միավորանի, որոնք գործածական էին միջին հայերենի վաղ շրջանում. ինչպես՝* գողհան, գործհան, բոլհան, բերդհան, գրհան, բզրհան, խոզհան, խոյհանք, խորդհան *«գոմ»նշանակությամբ,* կովհան, ՆեզհաՁ, եաՁՁիհան, մորթհան, ջորհան, արհան *(արևը, թվերը),* փողհան, կապՁհանք, որհանք. *բաղմաձանկնևերից էլ՝* ճոխազհան, շաբաթհան, արեղհան:

3. Մի քանի անկախ բառեր, որոնք վերջավորվում են -հան *մասնիկով. սրանք են՝* բորհան, ասհան, մատհան, ցորհան, գեՁհան, մՁհան, պատհան, զհան, վզհան, վայրկհան, փաՁՁհան, պատՁհան, սեպհան, սիկարհան:

Արտասանյան սեպհան *և* սիկարհան *փոխառյալ են հունարեն* σχεῖα *և* σικάριος (<*լատիներեն* sicarius) *ձևերից, որից երևում է, որ* -հան *վերջավորությունը հայկական հավելված է:—*փասեան *բառը դրվում է նաև* փասիան. *իսկ* պատՁհան *ավելի գործածական է* պատՁին *ձևով: Արդի լեզվում սովորական են* բորենի, ցորեն, գեՁին, *իսկ* զհան, վզհան *չնչված են (հետևարար դրված* զեն, վզեն):

4. Արտասյան դարս ունենք միմհանք, իրհան, մշտնջհան, տուՁնջհան *ձևերը, որոնցից* իրհան *աշխարհաբարում դարձել է* իրեն *կամ* իրան. *վերջին երկուսը* (մշտնջհան, տուՁնջհան) *չնչված են, իսկ* միմհանց *կենդանի է դեռ արևելյան դրականում:*

ր բաղաձայնով վերջանում են՝

1. հոգնակերտ -եար *մասնիկը, որով ունենք մի քանի հետաքրքրական ձևեր՝ նույնիսկ V դարից. ինչպես՝* որեար, բաճեար, իրեար, ճայեար, վանեար, վարժեար, խցկճեար, ճաւկճեար, քաղաքկճեար, ճանճեար: *Այս մասնիկն ավելի ուշ դարձաւ* -եր, *որ և շարունակում է իր գոյութիւնը արդի հայերենում* -եր, -ճեր *ձևերով: Առաձեռն բառարանը ուշ ժամանակի հայերենից նշանակում է արդէն մրգեր, պրեեր, վաներ, շինականճեր, ատփեր ձևերը:*

2. -եար *վերջավորութիւնով մի քանի ուրիշ բառեր, որոնք են աղօրկեար «աղոթավոր», տեարք «տէրեր», զղեար (պատուղը): Առաջինը կա նաև աղօթկեր ձևով, որով իմաստվում է, որ* -կեար *(կամ* -կեր*) մասնիկն է՝ «դործող, -արար» իմաստով, սեարք կազմված է տի «մեծ» արք բառից, որ այդ բառի անկանոն հոդնակին է, իսկ զղեար (զղյար) այժմ կենդանի է զկեռ ձևով:*

Բացի լ, մ, ն, ր նայերից, նա երկրաբրառը կարող է վերջանալ նաև կ, գ, հ, խ, շ, ռ, ց հնչյուններով:

Սրանց մեջ ամենամեծ թիվն է կազմում կ հանգը, որով ունենում ենք -եակ *վերջավորութիւնը:*

Այս վերջավորութիւնով կազմված են՝

1. -ի *վերջացող բաղմավանկ բառերի փաղաքշական ձևը (կազմված* -ակ *մասնիկով): Բավական մեծ է այս կարգի բառերի թիվը. հիշենք նրանցից մի քանի օրինակ. ինչպես՝* պատանեակ, որդեակ, կղզեակ, գերեակ, գինեակ, աղաւնեակ, ալեակ, երաւեակ, լուսնեակ, խածեակ, խշտեակ, գրգռեակ (գրգռի *բառից) և այլն:*

2. Բառեր, որոնք կազմված են նույնպես -եակ *մասնիկով, բայց որոնց մեջ այս* -եակ *մասնիկը փաղաքշական իմաստ չունի. ինչպես՝* բոլորեակ «երկնագունդը, տիեզերք», երկեակ, երեակ, քառեակ, ճնգեակ, տասնեակ, հարիւրեակ, հազարեակ, բիւրեակ, նաև երեսներեակ, երեսնօրեակ, երկաւորեակ (երկուորեակ), եօթներեակ, օթեակ (օր *արմատից), դժնեակ, ճայեակ:*

3. Բառեր, որոնց մեջ -եակ *մասնիկը հնէթափրաբար ենք իմանում. ինչպես՝* բարձուեեակ *(ծաղիկը),* տեղեակ *(հմուտ),* արբաեեակ, խաչեեակ *(չորքոտանին),* խաւեակ *(ատիոր),* կլայեակ (<արաբերեն qalāčī), վառեակ *(վրացերեն* վարիա*):*

4. Բառեր, որոնց մեջ -եակ *հանգը արմատական է. այսպես են՝* ահեակ, ջորեակ *(մորեխ),* կորեակ, սեեեակ, արուսեակ, դղեակ, գայեակ, մաճեակ, լուռեակ, ասրեակ *(այս բառերից մի քանիսը պարսկերենից են, մեկը հունարենից, մյուսների ծագումն անծանոթ):*

-նակ հանդիպ ալս բառերի մի մասը դրված կա նաև -ել, -ակ, ձևով. ինչպես՝ վառնակ—վառնել, կլայնակ—կլայնել, պռնակ—պռնել. կոտնակ—կոտնել, սնեննակ—սնեննել, խաչնեանակ—խաչնեանակ, նայնակ—նայնել, ասրնակ—ասրնել, դնեցնակ—դնեցնակ և այլն—Պառել «փոքրիկ փորչ» բառը իմաստին պատահ ձևից է և կապ ունի պռյան, պռատուկ բառերի հետ (տես Աբեղատոսյան բառատրութ., ե, 1107)։ Կա նաև հակադարձ ձևաւոր իրողութիւն -ել հանդիպ բառերը -նակ ձևով դրելու. ալսպես՝ դնել—դնակ (<ասորերեն leqa), նրնել «երինջ»—նրնակ, ցնրնել—ցնրնակ։ Սրանք կեղծ դիտական դրչութիւններ են՝ սխալ ասուդարանութիւնի արդիւնք։

կ-ից դարս մլուս բառաձևերն էլ շատ հազվագիպ են. ալսպես՝

ի.—պրնահ (պրան, պրնհ, պրնալ, պրալ) <ասորերենն zrah, zreh, zrai ձևերից. ասած պրնաի կեղծ դրչութիւն է.—պրնաճ կեղծ դրչութիւն է փոխանակ պռնճ-ի (համմ. վրացերեն պլնխի)։

պ.—կա մի հայն ազ սրմատաւ՝ «դիշերելու» նշանակութիւնով, որ բարդվելով պր (բառը՝ պրի) սրմատի հետ, տալիս է պրնազ, և սրանից էլ բացատրնազ, վայրջրնազ և այլն։

խ.—կա մի հայն շատ «քաջահռչակ, ներ խմչառնա, որ մի անդամ պատմածել է Լամմանը Փիլոնի (տես Փիլոն, Ի, 117)։

շ.—բդնաշխ, խալտնաշ, լնաշկ.—սրանցից առաջինն առաջանում է հին պարսկերեն *patiaxša ձևից և ամենի սովորական է բդնշխ ձևով.—երկրորդը դարձ է ածվում նաև խարտնշ, խարտնշ ձևերով, իսկ բարդութիւնների մեջ լինում է խալտիշա...—երրորդը դրված է նաև լնշկ, լաշկ։

ո.—Ամենից ավելի կարևոր է ալս բառաձևը, որով ունենք լեառն և տեառն բառերը։ Երկուսն էլ առաջանում են լեար և տեար ձևերից, որոնց մեջ ր դարձել է ո՝ հաջորդ ն-ի պատճառով (համմ. դարձիկան լեռամբ, տեռամբ)։ Բացառականում սղոմամբ լինում է ի լեռնե, բայի ի տեառնե. վերջինը անկանոն ձև է և կարող է բացատրութիւն.—Միայն դրչութիւն է քեռ փոխանակ քայռ-ի «մանկական»։

Ալստեղ կարելի է հիշել նաև լեարդ և նեարդ. որոնցից առաջինը դրված է նաև լերդ, երկրորդը՝ հիարդ. նկարդ. ճարդ. ներտ,

Վերջապես հիշենք տեսնդ բառը, որ տեղդ բառի այլ գրչութիւնն է։ Նա որովհետև բառի ծագումը հայտնի չէ, ուստի հայտնի չէ նաև, թե ո՛րն է առաջդ գրչութիւնը. տեսնդ. որ շատ անսովոր է. թե տեղդ. որ ալժմ միակ ընդունվածն է։

ց.—Ձափաղանց շատ դործածական է խոնարհման և հոլովման մեջ. ինչպես՝ սիրեաց, գրեաց, կեաց, հրամայական խօսեա՛ց, չարեաց, բարեաց, եկեղեցեաց, իբրև լայանուն՝ հացեփեաց և այլն։ Կիսանկախ դրութիւն ունի աքեացք «ոտքը սրունքով միասին» (տես Ամոս, Դ 12)։

Ասս հատվածի սկզբում ասացինք, որ եա գտնվում է միայն վերջավանկում, իսկ մյուս վանկերում եա դառնում է ե։ Ասս բանն ապացուցվում է բառակազմութիւն, բառերի հոլովման ու խոնարհման տասնյակ հազարավոր օրինակներով։

Բայց կան մի խումբ բառեր, որոնք այս ընդհանուր օրենքի մեջ բացառութիւն են կազմում՝ ներկայացնելով բառամիջում եա։

Հավաքում եմ այստեղ Առձևոն բառարանում գտնված բոլոր օրինակները.

դայեակորդի. կա նաև սովորական ձևով դայեկորդի. մյուս բոլոր դեպքերում ունենք սղմամբ դայեկեմ, դայեկաբար և այլն։

դժնեատեսակ. գալիս է դժնեայ բառից, որից ծագած մյուս բառերն են՝ դժնեմ, դժնեաբար, դժնեագոյն, դժնեատեսիլ կամ դժնեատեսիլ դժնեհոսութիւն կամ դժնեահոսութիւն, դժնեութիւն, դժնեվարք։ Որովհետև եայ ածանցման մեջ տալիս է ե, ուստի ըստ օրինի սպասելի է դժնեատեսակ և այլն (համմտ. քրիստոնեական) բայց սրովհետև բառամիջում չի գրվում ե, այլ է, ուստի դժնեատեսակ դարձել է դժնեատեսակ. հորանջից խուսափելու համար էլ պետք էր ասել դժնեատեսակ, որ է լավագույն հայերեն ձևը։ Այստեղ երեք ձայնական օրենքներ ընդհարվել են իրար, որով և առաջացել են տարբեր գրչութիւններ։

Դիեացիկ, որի հետ ունենք նաև դիացիկ և դինցիկ գրչութիւնները.—ի վերջացող միավանկ բառերը ա ձայնավորի մոտ պահում են իրենց ի ձայնը. ինչպես՝ ձիավոր, միասին, դիակապուտ, թիաւոր, հիանալ և այլն. ուստի սխալ է դիեացիկ. որ առաջացել է ի և ա ձայնավորների միջև դգացվող սուղ յ կիսաձայնի պատճառով։

Դղեակապարիսպ. սխալ ձև փոխանակ դղեկապարիսպ-ի, ինչպես ունենք սեռական դղեկի, բարդութիւնամբ՝ դղեկածն։

Լեառն բառը բարդութիւն և ածանցման մեջ ստանում է թե՛ սղված լեռնա... և թե՛ ամբողջական լեառնա... ձևը։ Այսպես միաժամանակ ունենք՝

լեառնաբնակ — լեռնաբնակ
լեառնագագաթ

լեռնապաշտ — լեռնապաշտ
լեռնոտէա
լեռնական — լեռնական
լեռնակեաց — լեռնակեաց
լեռնակեղծ
լեռնակղզի — լեռնակղզի
լեռնոտալեաց
լեռնոհանդէս — լեռնահանդէս
լեռնաձև — լեռնաձև
լեռնալին — լեռնալին
լեռնանման — լեռնանման
լեռնապատ — լեռնապատ

Արանցից դուրս կան նաև ուրիշ 29 բառեր, որոնք բոլորը ուղիղ ձևով են։ Ակնառ անհնարին չպիտի ձևի հարցը կարող է քննության ենթարկել, ինչպես դուրս է մնում նաև տնտոն բառի համեմատության ենթակա։

Կայանաւոր «վինտոպ տեղ, կայան, հաստատուն». ունի միայն Ասձեռն բառարանը, հետևաբար տառնց վիճելի է. կա նաև կայանավոր. բայց սա առաջանում է կայան բառից, մինչդեռ առաջինը՝ կայանի բառից. այս դեպքում պիտի լիներ կայնաւոր, ինչպես կա կայնական։

Կատարեալապես. պիտի միայն Ասձեռնը. ուղիղ ձևն է կատարելապես, որ հաստատված է բազմաթիվ օրինակներով։

Կնամատարագ. ունի մի անգամ Մաղխասրոս. ուղիղ կնմատարագ, ինչպես կա կնմեղեմ վարք Տարոնցւոյ։

Կնանսարեր, կնանսազգեաց, կնանսուսոյց. երեքն էլ սխալ ձևեր են. ուղիղն է կնոնսարեր, կնոնազգեաց (ինչպես ունենք էլ), կնոնուսոյց, որոնք հաստատվում են երեք տասնյակ այլ բառերով, որոնք ունեն միշտ կնոս- ձևը։

Կնեայարկ «քարաշեն». ունի մի անգամ Ագան. եկեղ. ուղղելի կնեայարկ (իբր կնեայ ածականից). իսկ եթե դնենք կուռ բառից, պետք է ուղղել կճայարկ։

Համաճենապահողող «նվագալրատպան». չունի ՆՀԲ. ով գիտի՝ թերևս համարյա հնդկական արքած բառն է։

Մատենագրել, մատենագրություն գործ են ածել Ագաթանգեղոսի առաջաբանում. ձեռագրական սխալներ են, որոնք ուղղվում են մի տասնյակ ուրիշ բառերի համաձայն, որոնք ունեն մատենա...

միմեանցանկութիւն, զմիմեանցսպասք, զմիմեանցողբկութիւն, զմիմեանցկալութիւն, զմիմեանցսուգեցկութիւն, զմիմեանցսպասնուրթիւն, ընդմիմեանցհարութիւն, իմիմեանցայր, միմեանցասք.— *սրանք շարահյուսական բարդութիւններ են և օրենքի առաջ սխալ չեն համարվում:*

նախատեղեակութիւն, *որի ուղիղ ձևն է* նախատեղեկութիւն. *դարձ է ածված Լամբրոնացու առենաբանութեան մեջ:*

նեարդասպատ, նեարդատեսակ, *որոնց դեմ կա* նիրդեայ:

նոճեայօճառ. *«նոճու փայտով շինած». ունի միայն Առձևն բառարանը. նույն բառը հիշում է Ն.Հ: նոճեայ բառի տակ և գրում է իբրև երկու բառ՝ նոճեայ օճառ (Նարեկացի, ճառ իաչէի). կարելի է համարել նույնպես շարահյուսական բարդութիւն:*

չարեացապարտ, *ինչպես ունենք նաև* բարեացապարտ. *երկուսն էլ շարահյուսական բարդութիւններ են:*

սարկեաւաւոր. *կասկածելի բառ է. հավանաբար սուտ ձևն է արկեաւոր (տես Արմատական բառարան, Զ):*

սեաւականի, սեաւամաղձութիւն. *այս երկու բառերը դիտի Ն.Հ: և առաջինի համար էլ տալիս է մի ընտիր վկայութիւն (Ոսկևերևան, Փիլիպիոյ). բայց ինչքան հարատաւ է արդյոք ձեռագիրը: Ուրիշ դեպքերում սեաւ բառը ածանցման մեջ գտնում է միշտ սեաւ. Ն.Հ ունի ալֆաբետի 30 բառ, որոնց վրա Ա.Բ ավելացնում է ևս 3 բառ:*

տեառն, *սեռականն է տէր բառի, որ բարդութիւն և ածանցման մեջ մտնում է տէր, տեր և տիր- ձևերով: Հայերենում սեռականով բարդութեան ձևեր անսովոր չեն. գրաբարից է նաև տէր բառը: Ն.Հ ունի 15 բառ՝ տեառն- ձևով. ինչպես՝ տեառնաբարբառ (Կորիւն), տեառնագալուստ (Ագաթանգեղոս), տեառնահողմն կոյս (Ս. Գիրք), տեառնաճմուռն (Ագաթանգեղոս), տեառնորդի (Սերեր., Եփրեմ Ծննդ.): Սրանք սխալ ձևեր չեն, այլ միայն շարահյուսական բարդութիւն:*

տեղեկագոյն. *դիտի միայն Ա.Բ. չունի Ն.Հ, որ նրա տեղ դնում է միայն տեղեկագոյն՝ երկու ընտիր վկայութիւնով:*

քրիստոնեայսեր. *մի անգամ հիշում է Ն.Հ՝ Մատաք սրբ. վկայութիւնով. «Զի էր դանն այն յոյժ քրիստոնեայասէր և բարեսէր»: Շատ ուշ ժամանակի վկայութիւն է. ավելի հինն է քրիստոնեասէր:*

Անսովոր գրչութիւն է գեղեարդն, որ հիշում է Ն.Հ երկու վկայութիւնով, որոնց դեմ այլուր գտնում ենք միշտ գեղարդն:

նա>ն ձայնափոխությունն հետ պատկերում ունենք նաև նա>ի ձայնափոխությունը, որ ստացվել ե՛չ մեկ միջին կամ նոր հայերենի շրջանին է պատկանում, այլ շատ ավելի հին հայերենի շրջանին։ Անկասկած հայերենից ունենք մենք անձնական խոնարհումների -նաւ մասնիկը, որ ապաս կերպով կարող է վերածվել -ին ձևին, ինչպես՝ երկրնաւ կամ երկրին, երեսնաւ կամ երեսին, չորեքնաւ կամ չորեքին, ամենեցնաւ կամ ամենեցին, բոլորեցնաւ կամ բոլորեցին և այլն։ Եվ արդարև այդպիսի հայերենում չէր նշանակում կենդանի պահված այս ձևերից որևէ մեկը, ուստի հեշտով չենք կարող ասել, թե արդյոք այն է հին և այն է հետին։ Միայն մյուս գործերից և օրինակներից կարող ենք հետևցնել, թե հնագույնն է նաւ, որ ապաս գործածել է յին, նայելով V դարում։

Ամփոփելով այս բոլորը, տեսնում ենք, որ ինչպես վերջավանկի նա բաստամիջյամ պատկում է ն, նայելպես և վերջավանկի նա միջին և նոր հայերենի շրջանում հետզհետե վերանում է և ձգտում է վերածվել ե-ի։ Այս է պատճառը հայերենի նա հոլովարտության վախճանը։ Ինչպես միջին հայերենում, նայելպես և նոր հայերենում ևս որ պատկում ենք վերջավանկում նա, դա հնագիրն անկենդան մնացորդ է Անցյալ (անցյալ) բառը, որ ապաս գործածում ենք մեր լեզվի մեջ, նայելով միջին հայերենում անցել «բայ» ձևն ուներ։

Անդիրն ալբանաց պնդելուց հետո, հարց է ծագում, թե արդյոք հարազատ են այն ձևերը, որոնք ավանդված են մեզ և ձայնափոխության վերջավանկում։

Այսօր մենք գրում ենք գոլեմ, իլեմ, գնեմ, որոնց մեջ և ձայնավորն էլ անկասկած է՝ վախճանակ է-ի. բայց գիտենք, որ նրանց մեջ և առաջանում է նա հոլովարտության, որովհետև գրաբարում ավանդված ենք գոլեան, իլեան, գնեան ձևերը։ Սակ եթե հանկարծ այս ձևերը պատահմամբ պահված չլինեին, ի՞նչ գրավական պիտի ունենայինք նրանց հարազատության։

Այսպես նաև այն բառերը, որոնք վերջավանկում ունեն ե և ստուգաբանության համար անհրաժեշտ են. ինչպես՝ մերթ, սերտ, վերտ, շերտ, ներկ և այլն։

Մեր ասածը հետևյալ կերպով երևում է տեղի բառից, որի ծագումը նայելպես անհայտ է։ Այս բառը Ա. Դքրում գործածված է մի անգամ, Մարկոս. Ա. 31. Սիմոն Պետրոսի դպքանչի պատմության մեջ. «եւ էառ զձեռն նորա»։ Այս նույն պատմության մյուս տարբերակներում ասված է ջերմն. այսինքն՝ Մատթէոս Ը 15. «եւ էառ

պնա ջերմնա. Հիւկաս Դ 40. «Աստեաց ջերմանն և նիժոզ պնաս։ Մի քանի ուրիշ ոսկեդարյան գրվածքներում էլ կա տեսնդ բառը. բայց դրանց մեջ տատանձին կարևորութիւնն անի Ոսկեբերանի Ա Թեսաղինիկեացոց էջ 430, ուր գտնում ենք տեսանդ դրչութիւնը։

Նեթե նա երկրաբլուրը վերջից սահմանափակված է նայ ձայնեռով, սկզբից ապատ է ընդունելու ամեն տեսակ բաղաձայն։ Տալիս ենք ալստեղ մի քանի օրինակ բոլոր բաղաձայններից.

բ.—արբևալ, սրբեալ, կմբևալ.

գ.—կագեալ, քրձազգեաց, անագեալ, կարդեալ, հնգեակ.

դ.—ազդեալ, անդեալ, ադամանդեալ, աւանդեալ, սննդեան, վապորդեան, բդնաշխ.

զ.—վաղեալ, համողեալ, գեան, բեհեզեալ.

ք.—-ութեան, -թեամբ, բացօթեալ.

ժ.—շարժեալ, վարժեալ, դանգարժեալ.

լ.—լեալ, ելեալ, ալլալլեալ, արեելեան, արեելեալ.

խ.—բոխեալ, ապխամաղխեալ, հնպագլխեան.

ծ.—ասկալծեալ, ալծեամն, գործեաց, մածեալ, հեծեալ, կարծեալ.

կ.—կեալ, կեանք, նկեալ, ոսկեալ, վալրկեան.

հ.—մեհեան, դեհեան, հինգսրահեան, խորհեալ.

ձ.—հերձեալ, մերձեալ, պղնձեան, գարձեալ, ձեան.

ղ.—ղեակ (ղեկ), բիւրեղեալ, հեղեալ, տեղեակ, արևղեան (արեղաներ), եղևամն.

ճ.—ուճեալ, հաճեալ, կուճեալ, կճեալ=կճալ, նուճեալ, սլաճաճեալ.

մ.—ալմաեան, երկմեան, միմեանց.

ն.—անձեալ, լալունեալ, օրհնեալ, պործունեալ, սրբոնեակ.

շ.—մաշեալ, քարշեալ, կուշեալ, որոշեալ.

չ.—հրաչեալ, աւետչեալ. աուհաւատչեալ, չամչեալ.

պ.—թռոպեալ, կապեալ, ալլակերպեալ.

ջ.—աջեալ, աջեակ, առաջեաւ, աղջամղջեալ, մշունջեան, գեղջեալ.

ռ.—մռեեալ, վառեալ.

ս.—խօսեաց, տեսեալ, սեան, արուսեակ.

վ.—գովեալ, սովեալ. Քոսրովեան.

տ.—աշտեալ, մատեան. ոստեալ, ոստեար, ոստեաւ, յաւիտեան։

ր.—բարեաց, բարեան, հրեալ, հարեալ, աւօրեալ, կատարեալ.

յ՝ կիցեալ, կացեալ, կայցեալ, բնիկցեալ, անցեալ, բացեալ.

վ՝ հասեալեաց, կոխեալ, ամփոփեալ, չափեալ, խոտեալ, կարմրեալեան.

ր՝ ամենեքեան, բոլորեքեան, երեքեան, չորեքեար, ինքեան, պատճառեալ.

Դարձ ձայնավորներին և երկրորդականներին, որոնց բնականոտար գրի չունեն և, ե, ը ձայնավորները՝ ի ձայնավորով կամ միասին լինալ, որ նշան ձեի տարբեր արշաւքներն է (ինչպես լինիմ բոլի ու արմատից խնդրելոյ). ու, աւ, և ձայների հետ ունենք բազմաթիւ օրինակներ. ինչպես՝

ու՝ առուել, վաղուան, պրուտեալ, լուծել առեալ, պառառեալ.

աւ՝ բաւեալ, առեալ, բաւեալ.

և՝ բազմաթիւեան.

Իսկ ա և ո երկրորդականից առաջ անպատճառ առնում են յ կիսաձայնը, որով միանում կամ նոյնանում են այ, ոյ երկրորդականների հետ. Ահա որոնց օրինակները.

Ադամայեան (Ադամ անուան ածականից. Ադամին պատկանող).

ախոյեան (դրված նաև ախոյան, որից էլ կազմված են պատկան բառեր).

աւելոյեամ, որ և աւելոյամ «ընդունիմ, խղճամ».

արքայեան «արքայական».

գայեակ

նաւայեան «նաւային մարդկանց պատկանած».

նաւայեաստան «նաւային մարդկանց տեսած».

Երեկոյեան (չունի Ա.Ի).

նաւայեանք «նաւային պզտիկները»

ընծայեալ

խոյեանք «խոյերը» (խոյ բառի հոգնակին).

կայեան, որ և կայան.

կնիքայեաց «Պետրոսի, վիմական»

կմայեակ կամ կմայիկ «հմայանք»

հմայեակ «հմայանք. 2. հմուտ. 3. հատուկ անուն».

հայեացք, որ և հայեցք.

մշտակայեալ

երեւակայեալ

Սարայեան «Սարալին պատկանող»
Նայեաց «Նալվածք»։

ա և ո ձայնավորներից հետո և եա երկբարբառից յ վկսա-ձայնի ներմուծումը այնքան սովորական էր, որ աշխարհաբարի մեջ էլ ազգանունները գրվում էին նույն ձևով. ինչպես՝ Աղայեան, Կանայեան, Սարոյեան և այլն։

Դրաբար եա երկբարբառը նոր բարբառներում պահում է ե. օրինակ՝ բերեալ եմ>բերել եմ, գործեաց>գործեց, սիրեա>սիրե (որովհետև վերջածայն ա չկա հին ուղղագրությամբ), ատեան> ատեն, ցորեան> ցորեն, լեառն>լեռ և այլն։

Դրաբար այն բառերը, որոնք բարբառներում գոյություն չու-նեն, սակայն գրական նոր լեզվի մեջ գործածական են, բարբառ-ներում պահում են դրաբար ուղղագրությունը. ինչպես՝ յաւիտեան, սենեակ, մանեակ և այլն։

Լեարդ բառը վեճի նյութ է դարձել այժմ. ժողովուրդն ասում է լերդ, բայց հասկանում է ոչ թե «լեարդ» (չիգեր), այլ լերդա-ցած արյուն։ Ուստի պետք է գրել լեարդ (լյարդ), ճիշտ ինչպես գրում են նեարդ (նյարդ), որովհետև բարբառն այժմ չունի նեյրդ։

Մինչև ավարտենք խոսեցինք եա երկբարբառի մասին, միաց-նելով նաև եայ, եաւ հոաբարբառները։ Մնացյալ տեղեկություն-ները այս երկու հոաբարբառների մասին տալիս ենք հաջորդ տո-ղերում։

եայ հոաբարբառը, ինչպես վերևում ասացինք, գտնվում է միմիայն բառի վերջավանկում, շեշտի տակ, բառամիջում պահոում է ե։

Ընդհանրապես -եայ մասնիկ է և կազմում է ածական. ինչ-պես՝ աղեայ, քարեայ, փայտեայ, աղամանդեայ, փղոսկրեայ, քրիս-տոնեայ, քաւդեայ, քաղդեայ և այլն։

Անկախ կամ արմատական բառեր են հրեայ, ափսեայ (=ափ-սե), աշտեայ, քուեայ «քվե», քօղեայ «թևի զարդ», օդեայք «ոչ-խարներ»։

Դարձեալ -եայ մասնիկով են անդեղեայ «դեղթափ», կրեայ (կենդանին), և ե-ի հավելումով՝ մակբայաբար գործածված լռե-լեայն։

Բառարանում նշանակվում է նաև գրեայ «կռունկ», որ գոր-ծածել է մի անգամ սեռական գրչից ձևով, որով հայտնի չէ, թե ուղղականը ինչպես է, գրե՞ թե գրեայ. բառարանները նշանակում են երկուսն էլ։

Հատուածական վերջավորանիի նայ խոխոտա պրոթիլան անի. հնոյն պարերում դրվում է հռհռոց այ, իսկ նայր>այր պահում է ասպա կր

Ահա օրինակներ այս կարգի պրչոթիլան.

տրնելնալը — տրնելալը
ապիտնալ — ապիտալ
կհնալ — կհալ
քոտնալ, քատալ, քոտէ
քողնալը, քողկը
սլնալը, սլնը «սլչխարհներս»
մխկերկրնալ, մխկերկրալ
անդհնալ, անդհալ
ամոնալ, ամոտ
խնկնալն, խնկնան

Այս շփոթոթիլան արդյունքն է կրնայ բատր, որ բատ խա ծագում է կուր «պաշտա բառից՝ -նայ մասնիկով, որմէն բոն անն է կրնայ «ատաշտէ». լինելով ժողովրդական սովորական բառ, վատց ատարկա է դարձել վերոհիշյալ ձայնափոխությանն և գրվել է պնդագան ձևերով՝ կրնայ, կրայ. իսկ վաճանակրնայ բարդության մեջ (որ դրվում է բատ ԱՀ՝ վաճակրնայ, վաճանակրնայ ձևերով) ավելի լավ է պահել -նայ վերջավորությունը։

-նայ, -ալ, -իալ ձևերի շփոթոթիլան արիշ օրինակներ են.

կարկատնալ, կարկատալ «կնատակ»
կնհալ, կնալ, կլսհալ «կալմ»
արատրալ, արատրնալ «արահր»
դրահ, դրհալ, դրալ
խարնելալ, խարնելնալ,
շափիւդալ, շափիւդնալ

(-նայ, -ալ և այլն ձևերի այս վիճակագրությունը կատարեց Աբրահամ Ղաբիրյանը. տես Արմատական բառարան, է. 156)

Հին հայերը դանազանում էին իրարից իա, իայ և եա, եայ. առաջիններդ դանում ենք ասար բառերի մեջ, երկրորդները հայերեն բառերի մեջ։ Օրինակ հալ է աղեայ «աղից շինած», բայց ասար է աղիայ «պղտուա (թեև այս բառը անստուգ է առայժմ)։

Ստուգ պրչոթիլաններից կարող ենք հիշել նիկիագաւաց, լիբիախաոց, Մարիամածին, որոնք ասար են։ Իսկ եթե ունենք սրանց հետ նաև գալիլեազուարց և նսայեատես, որոնք համարյա են հայաձև սեռական Գալիլեայ, Նսայեայ ձևերից։

եա երկբարբառի նման եաւ եռաբարբառն էլ գոնվում է միայն վերջավանկում։ Մի բառ միայն կա, որի մեջ եաւ գոնվում է բառասկզբում (այն է եաւթն=եօթն)։ Բայց այս բառը միավանկ լինելով, նախավանկը նաև վերջավանկ է։

Բացի եաւթն բառից, ունենք ևս երկու արմատական բառ, ուր կա եաւ եռաբարբառը. այն է սեաւ և գեաւղ։ Սրանցից պուրս -եաւ գոնվում է բառերի վերջում, միայն իբրև եզակի գործիականի վերջավորություն. օրինակ՝ կղզեաւ, եկեղեցեաւ, տեղեաւ և այլն։

Կան մի քանի բառեր էլ, որոնք գործ են ածվում իբրև մակբայ և կարելի է կիսանկախ համարել։ Սրանք են՝ բարեաւ, զաւաջեաւ, զգուշեաւ, ճաւաստեաւ, ճեշտեաւ, ստորեաւ։

Եզակի գործիական եաւ ձևի հոգնակին է եաւք. ինչպես՝ կղզեաւք, եկեղեցեաւք, տեղեաւք և այլն։

Ինչպես եա դառնում է ե, նմանապես եաւ պառնում է եւ, որ ապա պառնում է ղ-ից առաջ իւ, հետո ե։ Միևնույն -եաւք ձևից էլ ստացվում է -եօք։ Ահապիսով ունենում ենք.

բարեաւ>ժողովրդական բարև, բարեաւք>բարեօք
առաջեաւ>ժողովրդական առջև
ստորեաւ>ստորև
ճաւաստեաւք>ճաւաստեօք
չարեաւք>չարեօք
արդեաւք>արդեօք
գեաւղ>գեօղ, գևղ, գիւղ>ժողովրդական գեղ
սեաւ>ժողովրդական սև

Կան մի խումբ բարդ բառեր գեաւղ և եաւթն բառերից կազմված. ինչպես՝ գեօղապետ, գեօղաստանիք (գիւղապետ, գեղաստանեայք), եօթնեակ, եօթներորդ (եւթնեւորդ), աւանագեօղ կամ աւանագեղ, գիւղաւան և այլն։

Բառամիջում գոնված եաւ եռաբարբառի համար տես նախորդ եա բաժնում (սարկեաւագ և սեաւա-...)։

իա>ե

Սրա սովորական օրինակն է ի վերջացող բազմավանկ բառերի ածանցման օրենքը, երբ միանալով ա հոգնակիի հետ դառնում է ե. ինչպես՝ բարի-ա-գործ>բարեգործ, այգի-ա-պան>այգեպան։

Միավանկ բառերը, որոնք հանդգում են ի, ապաս են ալս ձայնափոխությանից. ինչպես՝ ծիաւոր, լիապարգև, լիամարիլ և այլն։ Բայց ամենահին շրջանում միավանկներն էլ հպատակվում էին այս օրինքին, ինչպես կայ է տալիս միտուսաց բառը։

իա>ի ձայնափոխությունն շատ լավ օրինակ է երկերիր (=200), որ առաջացել է երկի + հարիւր բառերի համապրությամբ։ Նախ ընկել է ի ձայնը, ապա իւ ա միավանկով սկիզբ են ու

իւ

իւ երկրարրառը բազմաձևնից առաջ գտնում է՝

1. ի. ալսպես հանձնի բարբառով՝ ձիւր>ձ'իր, հերիւն>հիյին, ձիւն>ձ'ին, սիւն>սին, եղջիւր>էիջ'իյ, ալիւր>էիյ։

2. Դանիերենում կարճ ü (գրվում է y) հնչյուն կամ կարպացվում է ö. օրինակ՝ ynde (կարդալ önde) *ախորժել. դրա համար էլ գրվում են երկու ձևով. ինչպես՝* Fyrste *կամ* Förste *առաջնորդ* (Poestion, 14—15)։

ոյ

ոյ երկրարրառը բառի մեջ գտնում է՝

1. ի. ալսպես հանձնի բարբառով՝ յոյս>լիս, քոյր>քիյ, հոյն>հիւն։

2. ու. ալսպես Պոլսի բարբառում, ինչպես՝ յոյս>լուս, քոյր>քուր։

*ոյ երկրարրառը գտնում է ույ. ինչպես անհանգ երկրարրառի երկու կազմիչ մասերի մեջ հավասարության անցնելով, o ձայնն էլ բարձրացել է և դարձել u, որով oi>ui (Աքեղյան, Հայկազունների անձնանունը, 57)։ Արդնով առանում ենք յոյս>լույս, հետո յ-ի անկումով լուս (ինչպես հայր>հար)։ Նույնն է նաև բառափերջում՝ մարդոյ>*մարդույ>մարդու։ Բայց բառամիջում չի կատարված այդ, որովհետև այստեղ երկրարրառ չկա. զո-յա-կաճ։*

Գրաբարի ոյ երկրարրառը բարբառներում գտնում է ու. օրինակ՝ քոյր>քուր։ Գրաբարն լեզուն այս փոփոխությունները չի ընդունում և շարունակում է գրել ոյ. այ և կարդում է ույ. օրինակ՝ քոյր=քույր, բայց ոչ քուր։

Շատ քիչ բառ կա, որ բարբառային ձևով մտել է գրական լեզվի մեջ. այսպես են Աճուշ *(փոխանակ* Աճոյշ*), ուժ (փոխանակ* ոյժ*), երևոյն նաև ակնարուժ, վիրարուժ, որոնք սխալ են և պետք*

է գրել ակնարոյժ, վիրաբոյժ, Քնքոյշ նուլնպես սխալ է, պետք է գրել քնքուշ, ինչպես է ղրաբարում, որից և քնքշանք։

Դրաբար ոյք, ոյց, ոյր հնչվում են միշտ ույք, ույց, ույր. առաջինը ոմանք հնչում են նաև վույք, իսկ վերջինը վանի բարբառով լինում է վի՞ր։

ու

Դանիերեն կարճ u կարդացվում է միշտ o (օրինակ՝ smuk «գեղեցիկ»—հնչիր smok) (Poestion, Lehrb. 13—14). համմտ. Վանբարբառի բարբառով թուրք>թօրք, պարսկերեն پور pur>por։ Այս պատճառով էլ հաճախ երկու ձևով էլ գրում են. ինչպես՝ Kunst կամ Konst «արվեստ»։

Լատիներենում ույ (ui) երկբարբառ չկար, և երբ ձայնական օրենքները պահանջեին այդպիսի մի ձև, գրվում էր oi։

ու ձայնավորից հետո յ կիսաձայն գոյութիւն չունի հայերենի մեջ. երկու անգամ գտնում եմ Օրբելեանի մոտ (տպ. Թիֆլիս, 1911), էջ 208 և 210 Ույծայ, որ սակայն էջ 48 գտնում է Ոյծ, սեռական Ոյծեցվոյ (առանց ամփոփման). ցանկում էլ (էջ 600) դրված է միայն Ոյծ, Ոյծեցիք և չկա Ույծ։

10. ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՁԱՅՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Լեզվաբաններն այն արդյունքին են հասել, որ բաղաձայնները բառասկզբում ավելի են դիմադրում ձայնափոխութեան, քան թե բառավերջում. մենք ավելացնում ենք նաև բառամիջում։ Սա ցույց է տալիս ամենից առավել, որ այդ երկու դեպքում (բառասկզբում և բառավերջում) բաղաձայնները տարբեր կերպով են հնչվում և երկրորդ, թե բառասկզբում հնչվում են ավելի ուժեղ քան բառավերջում (Groot, BSL 27 (1927), № 81, էջ 3)։

Հայերեն բարբառներն էլ ենթարկվել են այս օրենքին և իրենց գործնական օրինակներով ցույց են տալիս օրենքի ճշտութիւնը։

Այսպես, Երևանի բարբառում բառասկզբում բ, գ, դ, ձ, ջ շատ կանոնավոր կերպով պահում են իրենց թրթռումը, բայց բառամիջում և բառավերջում հաճախ դառնում են թավ։

Համշենի բարբառում փ, ք, ր, ց, չ թավերը բառասկզբում

մնում են անխախտ, իսկ բառամիջում և բառավերջում դառնում են պարզ խուլ։

Նման երևույթներ դառնում են նաև ուրիշ շատ բարբառներում։

բ, գ, դ, ձ, ջ

Բացառությունների հնչական ոչն վիճակում, որ ներկայացնում են մեր բարբառները միասին վերցրած, նույն է չինարենի հետ։ Այդպիսի չինարենում միևնույն բացառությունները հնչյունում են որոշ բարբառներում փ, բ, ք, ուրիշ բարբառներում բ, դ, գ, իսկ մանգալերենների լեզվում փ, բ, ք կամ պ, տ, կ բուն իրենց տեղին։ Չինարենի հին լեզվի մասին տվյալներ չկան. թեև պրոկոնսոլիզնը չափազանց հին, բայց դրված լինելով պալաթորպրով, ոչինչ չի տալիս հնչման մասին։ Հնչական արժեք ունեցող հնագույն գրերն են VI դարում կազմված այն բառարանները, որոնք բացատրում են բառի նախաձայնի և վերջաձայնի համեմատությամբ (ինչպես է Կամուսի արաբերեն բառարանը)։ Չինական Կոպրենը համեմատական հին չինարենի այս տվյալները արդի չինական բարբառների հնչման հետ, եզրակացնում է, որ հին չինարենում այդ բացառությունները հնչել են bh, dh, gh (շնչեղ թրթռուն), որոնցից մի կազմից առաջացել են բ, դ, գ, մյուս կազմից փ, բ, ք և երրորդ կազմից պ, տ, կ կամ փ, բ, ք (BSL № 64, p. 111)։

Մինչև էն եզրակացությունը ուղում եմ հանել ես էլ հայերենի համար V դարում բ, դ, գ, ձ, ջ հնչել են bh, dh, gh..., ինչպես հնչում է հայ ժողովրդի մեծամասն մասը. ապա բարբառների մի մասի մեջ նրանք դարձել են փ, ք, բ, մի մասի մեջ բ, դ, գ, մի երրորդ մասի մեջ պ, տ, կ իսկ Պոլսում ռամիկ արտասանության մեջ բ, դ, գ կամ պ, կ, տ, գրական արտասանության մեջ փ, ք, բ (այս էլ մանգալերենների լեզուն է)։

Ուսալեն իր մանրամասն ուսումնասիրության մեջ՝ Principes de phonétique expérimentale, I, p. 507) գծագիր նկարներով ցույց է տալիս, որ իսկապես արդի բարբառներում էլ կա թրթռուն և խուլ ձայնախոխության՝ այն էլ նույնիսկ բառասկզբում։

բ

մ-ից հետո բ ընկնում է, ինչպես կիլիկիայի բարբառում ձեռամբ>ձեռամ և այլն. այսպես և հույն բարբառներում՝ mb>m

(տես BSL 34, № *102, էջ 149 և 157). Նկատելի է, որ այս ձայնափոխությունը հանդիպում էլ տեղի ունի կապակովկիայի բարբառում։ Միրամբելը կապադովկյան* mb>m *տարօրինակ գտնելով՝ կասկածում է, որ դա մի ստար աղճատության արդյունք չէ՞։*

p>*մ աղճատությամբ մի ուրիշ ռնգականի. օրինակ՝ կաբարդիներեն* mayram *«բայրամ, տոն»։*

դ

դ դառնալով նախ մ, տալիս է բ. այսպես է Դարարադի բարբառով ադա>աբա *«ծո, ատա»։*

Հին հայերենում սովորական էր պարսկերեն և ասորերեն փոխառությունների մեջ մ>բ ձայնափոխությունը. ինչպես՝ ասպար, ծարիր,...

d>r *ձայնափոխությունը կա նաև թաթարների մեջ (տես* Minorsky, Encyclopèdie de l'Islam, tāt *բառի տակ)։ Սովորական երևույթ է դրավիդյան լեզուների մեջ գանգալին* ḍ>r *ձայնափոխությունը* (Caldwell, Dravid., p. 53)։ *Նույնը նաև ատամնական* d>r *երկու ձայնավորի միջև (անդ, 154—155)։*

Թաթարերեն d>r, *ինչպես պարսկերեն* دارن >dāren *«տալ»,* دیرن>dīren *«տեսնել»,* زرن >zaran *«զարնել»,* māre-gā *«կով»* (گاومارە), vār *«քամի»* (=), dūrā *«ծուխ»* (دود) (Gr. Iran phil. I, 355)։

t=p

Դանիերենում t *ձայնը (որ հնչվում է* p*) ձայնավորից, հատկապես* i*-ից առաջ հնչվում է իբրև հայերեն* g. *այսպես է և մեր ուսանիոսների* -ութիւն-*ը։*

pu>g. Գեթսեմանի>Կեցամնի *(մատուռ Երևանում)։*

ժ — շ

Այս երկու ձայները բառասկզբում և բառամիջում կարող են գտնվել ամեն տեսակ ձայնավորից առաջ. ինչպես՝

ժ.—ժամ, ժառանգ, հրաժեշտ, ախտաժետ, ժիտ, ժիր, նաժիշտ, ժողով, ժանտաժուտ...

շ.—շաղաղել, շեղ, շերեփ, շիլ, շեկ, շինել, շուն, շող, շոգի, շուրջ, տաշեղ, ուշիմ, յիշել, գիշեր...

Նայինպես է նաև հրկրաբրբառներից առաջ, թեև սրանով օրենաիներն իրենք պատահաբար մեծ չէ. ինչպես՝

ժ.—ժայռքիկ, ժայռ, ժոյժ, ժռռատ, ճժոյգ, թռժիւն...

շ.—շաւատն, շաւիղ, շուայտ, շոշափիլ, շոյ, շոյտ, դաշոյն, խնդշտատաւք, խոշիւն, վաշտակ...

Բառամիջում կարող են ժ և շ դառնալ ամեն տեսակ ձայնավորից հետո. ինչպես՝

ժ.—դաժան, խռժակն, բաժին, վիժիլ, կոխժաբեր, երիժեակ, բուժիլ, խուժան, դրուժան, ճուժկու, խռժռո, թռժիւն...

շ.—տաշիլ, աշակերտ, մաշիլ, խաշիլ, խաշաբ, փնշաւոր, բնշակարկատ, քերքնշիլ, գրադնշական, ատրուշան, գուշակիլ, մուշկ, յանգուշն, շուշան, իշայծնատն, գիշեր, մանուշակ, յիշիլ, վիշապ, մոշի, մոշայ, խոշոշիլ, խոշոռ, կոշիլ, փոշի, խնշերաւք, խնշակ, բղնշխ...

Երկրաբրբառներից հետո.

ժ.—յժաբ, ամիւռ, ամանդակ...

շ.—պրշակ, դրշիլ, զաւշան, կշիկ, կշիլ, գշել, կշտաբայ, թշնիլ, խշիւն, ճշան, յշաատիլ, շշիլ, շշափիլ, շշանք, թշիլ, աշակ, աշարակ, աշինգր, աշնայ, աշնան, գաշաքար, գաշտատել, յշտատակ, բղնաշխ...

Բառավերջում երկուսն էլ կարող են դառնալ ամեն ձայնավորից հետո. բացի ե-ից.

ժ.—խաժ, բաժ, ապատաժ, բեժ, վեժ, գետավեժ, խեժ, ճաբեժ, յաւեժ, բիժ, բժիժ, իժ, պատիժ, քաղիժ, բժոժ, դուժ, դրուժ, բուժ, բժուժ, խաժամուժ, խատնախուժ, խժդուժ, խուժ, խռովախուժ, կուժ։

շ.—աղուաշ, մաշ, հաշ, հարակաշ, ճաշ, նաշ, շամբաշ, տաշ, հակարաշ, վաշ, վատաշ, քաշ, գառքաշ, գադիշ, ըմբիշ, ակիշ, իշ, կատիշ, դակիշ, նեմիշ, փուրսիշ, գեշ, գոմեշ, եշ, խերևեշ, խեհեշ, նիրեշ, ուղեշ, պատնեշ, բերքեշ, քեշ, գոշ, թորթոշ, մարգանգոշ, մոլոշ, մոմոշ, փողոշ, որոշ, ուշ, գուշ, թուշ, յուշ, նուշ, շամբուշ, շաբիխուշ, արուշ, վուշ, փաղաքուշ, փուշ, քնքուշ, նիշ, շիշ, որիշ, ուրիշ, պիշ, փոշիշ...

Բառավերջում երկրաբրբառներից հետո.

ժ.—բոյժ, գոյժ, ժոյժ, յոյժ, աշխոյժ, անսպոյժ, իւժ ժժ. ոյժ, առյժ...

շ.—անոյշ, գոյշ, զգոյշ, մեղոյշ, կոյշ, դրոշ, զարօշ, թեղոշ,

յօշ, ճօշ, յօշ, քօշ, ս՛շ թե, զօշ (որ և զոշ), լօշ, ապարօշ, ճշօշ, խարտեաշ...

Բաղաձայնների հետ հանդիպումն ընդհանրապես կանոնավոր է. թրթռուններից հետ՝ ժ, խուլերի հետ՝ շ։

Առաջին հերթին հիշենք շկ—ժգ կապակցությունը. շկ ձայնախմբի համար կա 32 օրինակ. ինչպես՝ բժիշկ, գշկուր, թաշկինակ, կաշկանդել, քաշկեճ և այլն. իսկ ժգ ձայնախմբի համար 5 օրինակ, որոնք են պժգալ, ուժգին, ժգին, ժգոհ, ժգոյն։ Օրենքի հակառակ ձևեր են՝ բուժկութիւն, գուժկան, ժուժկալ, հուժկու, պատշգամ, ճշգրիտ։ Առաջին չորսը սաուգաբանական պատճառով է, վերջին երկուսը պահանջում են առանձին բացատրություն։

Պատշգամ *բառն ավանդված է մեզ վեց տարբեր գրչությամբ՝* պատշգամ, պատշկամ, պատշգամր, պատշկամր, պաշտգամ, պաշտկամ*։ Ամենաուղիղ ձևից, ուստի ուղիղ ձևն է* պատշկամբ. *մյուսներն առաջացել են վերջածայն բ-ի անկումով, արևմտյան տառադարձությամբ և աշ—շտ տեղափոխությամբ։ Արդի գրականում ընդունված ձևերն են՝ պատշգամ (արևմտյան գրականում) և պատշգամբ (արևելյան գրականում)։ Փիչ անգամ էլ գտնում ենք* պատշկամ (բ), *որ անսովոր ձև է և նույնիսկ սխալ է համարվում։ Բառարանում կա երկու ձևն էլ (*պատշգամ *և* պատշկամբ*), և որովհետև ալֆաբետական կարգով բառարանում դրված է նախ պատշգամ, ուստի այդ ձևն էլ գործածական է պարձևլ։*

Ճշգրիտ *բառը ունենք նաև* ճշգրտապես *մակբայական ձևով (Տիմոթէոս Կուզ, Հակաճառութիւն, էջ 153)։ Բառիս ծագումը հայտնի չէ, ուստի չգիտենք, թե ինչի՞ց է առաջանում շգ ձայնախումբը. հիշենք միայն, թե սրա նման անկանոն է նիշա բառը, որի մասին քիչ հետո։*

շկ—ժգ *ձայնախմբերի հակադիր շարքն են ներկայացնում* կշ—գժ, *որոնց համար իբր օրինակ ունենք* պակշիլ, պակշռա, ասգժատ։—Պակշռտ *գրված է նաև* պագշռտ *ձևով, որ ընդունված ձև չէ։* Ասգժատ *փոխ է առնված պարսկերեն* angužad *բառից. ուստի ճիշտ ձևն է* ասգուժատ, *որից կրճատվել է. արևմտյան տառադարձությամբ գրված է նաև* ասկուժատ, ասկիժատ *(Մխիթար, Բժշկարան, 126, Փիլք Վատատակոց և այլն)։ Անկանոն են* կակծիլ, վակժոյժ. *առաջինն է պահլավերեն* *kākžirak, երկրորդը՝ ծագումով անհայտ։ Զանազան ձևեր է առանում ասիշ բառը, որ առնում է ասիշկ ասիշտ, ասիժք և ասիշք։ Բառի ծագումը ան-*

դ

հայտ է. ենթադրում եմ, որ նախնականն է աւիշ, հայնակին՝ աւիշք. մնացյալը սխալ դրչութիւն է։

Ա և շ ձայնելով սկսվող բառեր կարող են իրանցից յետոյ տրիշ բառերի հետ և ալս միջոցով աւելի բարդ կազմութիւններ։ Ալսպես են՝ մակշալկապել, երկչաման, երեքշարաթի, չորեքշաբաթի, հինգշաբաթի, որոնց մեջ մի մասը կանոնաւոր է, մլուսը անկանոն, բայց աւանդութեան հիշող։

Երկրորդ հերթին հիշում ենք շա—ժ կազմակերպութիւնները, որոնք չափազանց բիչ են։ Առաջինով անենք պատշաճ «պատառ, ատաղձ» և շուշալայ կամ շուշիայ «սիրեհ ծառկոց»։ Առաջինը սխալ դրչութեան է և պետք է ասղել պաղպաղ կամ պաղպաջ։ Երկրորդը փոխ է առնված ատրպեյճան šüšəpçə համանիշից, որի, մեջ գալով p-ի հայերեն համապատասխանն է վ, իսկ շուշայայ (շայ) ատաջացել է հայ ձայնարանութեան պահանջներով—ժ կամ մեզ համար կա միայն մի բառ՝ ուժեղ «ջարդել» (Իրևանցի, Ծղկք, 22). որանից գալս տրիշ սրինակ չանենք, բայց դժբախտ և նման բառերից, որոնց մասին խոսելս ենք բիչ հետո, ասանձին։

Հակատակ դիրքով պշ (փշ, բշ) ունեցի սրինականներ անի հայերենի մեջ։ Իմ կարծիքով հայերենի հարազատ ձևն է փշ, որի սրինակներն են՝ խափշիկ և յափշտակել։ Վերջինս ծագումը անհայտ է, իսկ խափշիկ փոխ է առնված պարսկերեն *xabašik համանիշից, որ մեջին ա կորչելով ատացվել է նախ խարշիկ, ինչպես որ գրված էլ է, և ապա բշ դարձել է փշ։ Սրա նման է նաև ապուշ, որից ապշիլ, հետո էլ ափշիլ կամ յափշիլ։—պշ խումբը պահում են ապշուկ, շապշապել, իսկ բշ ունեն արբշիռ, ըմբշամարտ, ըմբշամարտիկ, շամբշիլ, որոնց մեջ բշ ատապատանութեան գիտակցութեան պատճառով է։ Ալսպես նաև՝ շափշփիլ, շիշփիլ բառերի մեջ։

Ատանձնատես հետազբրբրտական են շտ և ժդ կապակցութիւնները։ Առաջինի համար ունենք 88 բառ. ալն է՝

ամբարիշտ, անշուշտ, անուշտ, աշտանակ, աշտարակ, աշտեհ, աշտիակ, աշտուն, առաւուշտ, արևիշուշտ, արիւնուուշտ, բաղաիուշտ, բաղշտակ, բուշտ, գիշտ, դաշտ, դաշտանակ, երաժիշտ, երաշտ, երկաժիշտ, զաւեշտ, ըմբշտակիան, իշտ, իշտրմուղ, լեպեշտի, լմբշտուց, լոշտակ, խիշտք, խշտիք, խշտաւոր, խշտնակ, խշտրել, խոշտակ, խոշտակ, խոշտանգել, խոշտար, կեշտ, կշտամբել, կշտապինդ, կոշտ, կուշտ, կոտպարիշտ, հաշտ, հաշտադրամ, հեշտ, հուշտ, հրաժիշտ, հրեշտակ, հրշտեի, մաշտել, միշտ, մշտիկ, մշտնջեանց,

մոզպաշտե, մուշա, մշտել, մուշտակ, յաշա, յափշտակել, յշտող, նաժիշտ, նշտիտ, նշտարակ, շամշտուրիւն, շեշա, շուշա, շուշտակ, որոշտալ, որոշտել, պաշտադական, պաշտել, պաշտպան, պարկեշտ, պարևեշտ, ռիշտ, վաշտ, վաւաշտութիւն, վեշտասան, վիշտ, պաշտ, փամփուշտ, փղիշտ, փուշտիպան, փոշտ, փոշտանկ. քաշտի, քշտել, քուշտրնգիյր։

Սրանցից 39-ը վերջածայն է, որով կարելի է նրանցից կազմել բազմաթիվ ածանցներ էլ։

Երկրորդի համար ունենք 6 բառ. այն է՝ ածդահաւակ, զժդմնիլ, խուժդուժ, խժդժութիւն, խուժդն, նժդեհ։

Այս բոլորի դեմ զարմանալի բացառություն են կազմում հետևյալ բառերը.

շդ.—նիշդ (նշդիլ *և այլն*), նշդարբենի (նշդար, նշդենի), նըշդարբենի (նշդարի), ջշդաքար։

ժտ.—բաժտուն, զժտիլ, օժտել։

*Այս բառերի ծագումը ընդհանրապես հայտնի չէ.—*նիշդ *բառը աւանդահայերը գրում են մի՛շտ* նիշտ, նշտել *և այլն, բայց դա ըստ հնչման է։ Մեր հին ձեռագրերը ավանդել են* նիշդ *և Մխիթարյանները պահպանում են այս ուղղագրությունը։—*Ծշդարբենի *և* նըշդարբենի *ձևերը ձեռագրական տարբերակներ են և նրանցից մեկը սխալ է և ջնջելի։—Դալով* ջշդաքար *ձևին, այս էլ ձեռագրական սխալ է, որ պետք է ուղղել* ջինդքար *(աւանդահայերեն տառադարձությամբ* ջհտաքար*), այն է «հրեական քար, ֆրանսերեն* pierre judaïque, *լատիներեն* lapis judaicus*“ (Հրեաստանում շատ դտնվելու պատճառով այսպես կոչված)։*

Երկրորդ խմբից բաժտուն *բարդ բառ է՝ կազմված բաժ «մաքսա-»+տուն բառերից։ Նշի չի հիշատակում այս բառը, որ գիտի միայն Ալ, առանց հետևաբար վկայության. բայց նա Այտսի մաքսատան պաշտոնական անունն էր և հաճախ հիշված է «Միտուանց»-ում։ Լինելով բարդ բառ, նույնպես ունի ժտ անկանոն ձայնախմբը, իբրև արդյունք ստուգաբանական գիտակցության։ Բայց միևնույն ժամանակ այդ բառը լինելով կիլիկյան բարբառի բառերից, ըստ որմտյան տառադարձության հնչվում է* -žd- *և հետևաբար չի ներկայացնում հնչական անկանոնություն։—Երրորդ բառը (*օժտել*) ածանց է. կազմված* օժիտ *արմատից և ցույց է տալիս, որ* զժտիլ *բառն էլ կազմված է* *զժիտ *(կամ* *զժուտ*) արմատից, որ մեզ այլուստ անծանոթ է։*

շա—ժ խոթի բառերի մեջ կան մի քանիսը, որոնք շատ լավ ներկայացնում են ուպսպրատական փոփոխությունը։ Ճաշա «պոռ» բառը պրոտ է նաև աշղ, ամպաճակը գոլեձել է աշդաուական «վիշապաձակ», ինչպա «պատռա» բառից ոչ միայն ոշտություն, այլև նշդեմի «պատռտիտա» (<պահլավերեն nīzdeh) պրոտ է նաև նշդեմի ձևով։ Այս բոլորի մեջ անհատ ենք հին և նոր տառատարձության պատկերը՝ արեվելահայ և արևմտահայ հնչման համաձայն։ Այսօր էլ արևմտահայերը, և հատկապես պոլսեցիք, թեև պրում են հին ձևով ամպաճակ, բայց հնչում են աշպաճակ, ուր դ պատնեշով լ, ապիպել է անդիտակից կերպով ժ խրթնատն բարձրանն էլ վերածել շ-ի։ Նույնը հատկանշական է մյուսների համար։

Նախորդների հակապիր ձևն են ներկայացնում աշ և դժ ձայնահարները։ Առաջինից ունենք հինգ օրինակ, որոնք են պատշաճ, պատշգամբ, պատշակ, պատշիլ և բարդությամբ էլ վատշուկր։ Այս բոլորը ձայնական անհամեմատ շատ կանոնավոր են։

Բառամիջում դժ ձայնահարները չի պատահում։ Կա միայն բառասկզբում, որի մասին քիչ հետո։ Ընդհակառակը, բառամիջում կա ամ ձայնահարը, որի համար ունենք ընդամենը երեք օրինակ (պաամել, պաամանակ և պաամախ)։ Երեքն էլ անկանոն են ձայնափոխ։ Առաջինը արդարանում է իրրև պահիժ բառից ածանցի, երկրորդը՝ պաամանակ «բաժակ» անհայտ է ծագումով, երրորդը՝ պաամախ «աստակ քարը» պարսկերենից փոխառյալ նոր ձև է (badaxš) և իհարկե հնչվում էր բադժախ։

Չի կոպակցությունն համար ունենք 23 օրինակ, որոնք են՝

աշխոյժ, աշխատել, աշխարել, աշխարատանդ, աշխարհ, աշխարհատանդ. (իկ), աշխատ, ապաշխարել, բաշխել, բարաշխ, բդնշխ (կամ բդեաշխ), ըմբոշխնել, դաշխուրան, դշխոյ, երաշխ «աշխէս. Ջ. պրուս», նրաշխալ, ըմբոշխնել, իշխան, իշխել, խաշխաշ. նշխար, պարտաշխի, սատշխի, վաշխ, տաշխ։

Այս բոլորի դեմ ապօրինի բացառություններ են կազմում՝ աժխոյժ, դժխեմ, վրեժխնդիր բառերը։ Սրանցից վերջինը բարդված է վրեժ և խնդիր բառերից և հնագույն հայերեն ձևով չընդունելով ա հողակապը, երկու արմատները անփոփոխ պահել է, որով և առաջացել է ժ—խ հանդիպումը։ Նույնն է նաև դժխեմ, որ փոխ է առնված պարսկերեն dušxim, պահլավերեն dušxēm, պազենդերեն dušxīm ձևից։ Սրանք կազմված են duž «չար»—xēm «բարք» բառերից (համմ. պահլավերեն vat-xēm «վատաբարո»)։ Պահլավերենում թեև հետևել են հնչական ճշտությանն (šx), բայց պարս-

կերևնում պահվել է ատադարանական ճշտութիլունը։ Հայերենում կա թե՛ դժխեմ և թե՛ դշխեմ. դրչութիլունը, որոնցից վերջինը թեև համաձայն է պահլավականին և պահում է հնչական ճշտութիլունը, բայց մեր դրական լեզվում ընդունված է դժխեմ, որ համաձայն պարսիկ ձևին, պահում է ատադարանական ճշտութիլունը.—մասնիկն է դժ-։ Խալով ավխոյժ ձևին, որա մասին համմտ. հաջորդ տողերը։

աշխ- սկզբնավորութիլամբ ունենք հայերենում 7 բառ, որոնց վրա պետք է ավելացնել Աշխադար, Աշխեն անուններըլ, ընդամենը 9 բառ։ Սրանք բոլորը պարսկերեն են։ Ծագումով հայանի են մեզ՝

աշխարհ<հին պարսկերեն xšaθra, պարսկերեն šahr.

*աշխատ<դենդերեն xšaēta, պահլավերեն *xšēt, պարսկերեն šēd.*

ասշխատ<պահլավերեն axsat.

Աշխադար<իրաներեն Ἀξιόδρης, պարսկերեն Askudar.

*Աշխեն<կամ պահլավերեն axšēn, պարսկերեն xašīn, գենդերեն axšaēna «թխթախոչն», կամ պահլավերեն *xašēn, գենդերեն xšōiθni «իշխանուհի»=օսսերեն axsīn «տիրուհի»։*

Մնացյալ չորսի ծագումը հայանի չէ, բայց անշուշտ նույնպես պարսկերեն են, ինչպես ցույց է տալիս դոնե երկուսի համար՝ ասանդ (պարսկերեն band «կապ») մասը։

*Երբ այս բոլոր բառերը համեմատում ենք իրանական մյուս ձևերի հետ, տեսնում ենք, որ աշխ- նախավանկին համապատասխանում է մերթ xš- և մերթ էլ axš-։ Հայերենի մեջ ընդունենք, որ խշդարձել է շխ. իսկ ա հավելվածը հայկական է, թե՛ ծագում է պահլավական այն բարբառից, որից փոխ են առնված հայ բառերը։ Արդ, հայերենում թեև կա խշ- սկզբնավորութիլամբ մի քանի բառ (խըշտաւոր, խշկիլ, խշխթել, խշուիք, խշարել), բայց շխ- սկզբնավորութիլամբ (ինչպես և բառամիջում) ոչ մի բառ չկա։ Շատ ուշ ժամանակի բառ է երևում շխրայ «տանջանքի գործիքը», որ արաբերեն šaxr բառից է (ըստ Հրմատական բառարանի. ե, 372)։ Ուրեմն՝ հավելումը հայկական է։ Այս լավագույն ապացույցն է իշխել բառի՝ ինչպես ո. յ բազաձայններից առաջ ա-ի փոխարեն կարող է դրվիլ ե, նույնպես և ալառնդ. *շխել դարձել է եշխել, բայց շ-ից առաջ կարելի չէ գոնել ե, ասուի *եշխել>էշխել, ապա՝ ե>ի ձայնափոխութիլամբ՝ իշխել (Աճառյան, MSL, 15. 243)։ Ընդհանուրակը թեև ժխ սկզբնավորութիլամբ մի քանի բառ կա (ժխոր,*

վիանալ), բայց խա- ակզբնահնչյամբ բառ չկա (խաչական, խրձա- պատ ածական են խուռ բառից)։ Այս հանգամանքները վճռեր անորոշ է, նրա հետ նաև աշխոյժ բառի ածականը և պրչակիան առանց ձևի։

Բառամիջում չկա խա կամ խշ, բայց ախիվը «պիտա» բառից, որ շատ հնություն է։

ր բազմանալու հետ ա և շ ձայնների կապակցությունը բառական հանախական է. իշ խմբով անուններ 19 բառ, իա խմբով՝ 17 բառ։ Այս բոլորը չենք հիշում, այլ տալիս ենք միայն մի քանի օրինակ. ինչպես՝

իա.—ախիվ, ախորժ, պրիվ, հանդուրժել, յորժամ, շարժել, վարժ և այլն։

իշ.—արշալույս, բոլորշի, գոլորշի, վարշամակ, արշավել, գարշապար, խորշակ, խորշոմ, կարշնել և այլն։

Այս կարգի բառերի մեջ շատ անգամ ր կորած է բնիկներ, ինչպես՝ կարժ>կաժ, շարժ>ժաժ, բարշել>բաշել, խարշել>խաշել, ասց-ածդ էլ ավելացած է մոտորուժ ր. ինչպես՝ դաշույն կամ դարշույն, դաժան կամ դարժան և այլն։

Այս երեսլիի մասին ավելի ընդարձակ պիտի խոսենք ր ձայնի մեջ։

ր բազմանալու ամենէ առաջնական (այն է ա-ի) հետ կապակցությունները չկան։ Այս մասին եզած բացառիկ օրինակներն են՝ առաջանալ, առշել, բոշալ, խոշոպել, կապոշների։

Արտասխյ առաջին երկուսը առ նախդիրով կազմված բառեր են և նշանակությունն չունեն.—կապոշների ձևացել է ոգմամբ՝ կապաուշ բառից.—բոշալ «խոտանակ, շվեմբա, ձիեն է, բայց գործ է ածված միայն մի անգամ (Բագրատ, ե։ 39), իսկ խոշոպիլ «ժամանալ» ոչ ժամանակի բառ է (Դերյա վասապական)։

Հակադիր ձևով (շր, շո) եզած օրինակներն են՝ կշռել (կշիռ բառից), կոշրալել, պշրիլ, պշրալ (պշրալ բառից շատ աված), փշրել (փշուր բառից). փարշման (փոխանակ փաշամանի), ապշուտ. աբրշումբիե (աբրշիո բառից)։ ժո, ժր ձայնախմբով բառեր չկան հայերենում։

ա և շ բազմացնողները կարող են գտնվել միևնույն բառի մեջ, բայց իրար վրա ընդհանրապես չեն ազդում. այսպես են՝ երաժիշտ, նաժիշտ, բժիշկ, երկաժիշտ, հրաժիշտ։

Նախնիկ կարող են ա և շ հանդիպել իրար սպան դեպքում և դարձյալ մնում են անփոփոխ. ինչպես՝ բժշկել, երաժշտական,

նաժշտաբար։ Սրանց մեջ ժշ անփոփոխ պահելն անշուշտ արդյունք է նախ ստուգաբանության դիտակցության և երկրորդ՝ անգիր ը ձայնավորի, որ երկու բաղաձայնները բաժանում է իրարից։

ժժ և շշ կրկնակների մասին տե՛ս առանձին հատվածում։

Մենք մինչև այժմ խոսեցինք թրթռուն և պայթ իսկ բաղաձայնների կապակցության վրա։ Այժմ անցնենք թավերին։

Դժբախտաբար թավերի թիվը մեծ չէ. եղած օրինակների էլ մի մասը կրկնավոր է. ինչպես՝ շափշփել, շփշփել (արմատն է շուփ), մի մասը ածանց է, ինչպես՝ քնքշալ, փաղաքշել (արմատը՝ քնքուշ, փաղաքուշ). մի մասը կազմված է հոդնակիի ք մասնիկով (ինչպես՝ բուժք, շիշք). մի մասը բարդության է առաջացած (ինչպես՝ երեքշաբթի, չորեքշաբթի) և մի մասն էլ օտար կամ հնտեղ փոխառության է (ինչպես՝ շուշփայ<ասորերեն šūšeppā, մուշթարի «վուանթագա»<արաբերեն مشترى muštarī (կրված նաև մուշտարի)։ Մենք են քոշքել (սրա հաճախականն է քոշքոտիլ «ճապկըտել»), բարեքաշքապես «լավ կերպով», շքթել «ձևերքով ջուրը շարժել», շքթիլ «լկտի, լրբանալ»։ Սրանցից անատուլգ է բարեքաշքապես, որի ավելի հարագատ ընթերցվածն է բարեքաշկապես (տե՛ս քաշկ «ձև, եղանակ», Արմատական բառարան). շքթել և շքթիլ բառերն էլ ունեն ժքթել, շքթել, շկթիլ տարբերակները։ Այսպիսով մենք միայն քոշկել բառը։

Ունենք սակայն երեք լավ օրինակ (խոփշիկ, ափշիլ, յափըշտակել), *որոնց վրա խոսել ենք վերը։ Սրանց վրա կարելի է ավելացնել թշուառ, թշնամի, թշնամանել, որոնք պալսկերեն* dūš>դշ *ձևից առաջանալով հանդերձ, նախաձայնը վերածել են թշ-ի։ Ավելացնենք պարզապես փշուր, քշել, քշտել բառերը, որով կարող ենք եղրակացնել, թե հայերենի նախատիպած ձևն է փշ, քշ, թշ.—ցշ, չշ (ինչպես նաև ծշ, ձժ, ջժ) ձայնակմբերը չեն ընդունված հայերենի մեջ։*

Մնացյալ բաղաձայնների մասին ունենք հետևյալ օրինակները.

շն.—անկոշնել, աշնան, դաշնակ, թշնամի, թշնամանել, թոշնիլ, կարշնող, հշնել, շշնջել, պշնուլ, ոսշնա, ոտշնությունց, քուշնայ, օշնայ, օշնաճ։

ժն.—բաժնակից, երիժնակ.

նշ.—անշուշտ, լայնշի, կաղանշան, ճնշել, մնշել.

նժ.—անժամ և այլն, յայնժամ, նոյնժամայն.

շմ.—ապրշմեղեն, կաշմրուտ, նաշմիլ, ինշմակապաշա, նըշմարիտ, նշմարել, շուշմակ, չաշմակիլ, փաթշման։

ժմ.—այժմ... *և այլն (տես բառակրքում)*, ժամմուկք, ժմմակ, ժմմուկք, շաղմմակք.

մշ.—լմշաղց, կամշաճալ, կամշոտիլ, նամշիրակ, շամշիլ, շիմշիր.

մմ.—չկա

ղշ.—լշակ *«ծամոկոց»*, լշաճալ, լշակիլիլ.

լմ, ղմ *ձայնահարներ չկան բառակրքում.*

մլ.—շաղմլել.

պշ.—ապշկոթել, բաղշաճակ, շաղշափիլ, շուշղոդիլ.

ժղ.—մժղուկ.

ղմ.—վաղմամանակիւաճ։

Արտնչիչ կարող եղած կապակցությունները պատահական բնույթ են կրում և ոչնչացնք են ամբողջական բառերի համ հրկնություններ։ Այսպես են՝ կաղնիժամանակնաչ, յատաջշաբաժուրիւն, շրջշրջել։

Ընդհանուր երրակցությունն այն է, որ բառակրքում ժ և շ կարող են կապակցություններ կազմել միայն ալ, կ, ա պարզիականների երեք առոհճանների, չորս անսակ ձայների (լ, մ, ն, յ ինչպես և ռ, պ) և միայն իր բառաձայնի հետ։

Բառակրքում բառաձայնների հանդիպումը ժ և շ բառաձայնների հետ կապված չէ միշտ ձայնական արևնչների հետ, որովհետև ոչտանդ մեծ դեր ունի ոչնչյան արևնչը։—գ, դ, խ, կ, մ, ն, պ, ռ կարող են միանալ թե ժ և թե շ բառաձայնների հետ, որոնցից մի մասը ձայնական կանոնավոր է, մի մասն էլ անկանոն. օրինակ՝ գ բառաձայնը հաջորդ ժ-ի հետ ոչիս է գժաւ, գժդմիլ, գժիռ, գժամիլ բառերը, որոնց մեջ գժ արհնական է. բայց շ-ի հետ ոչիս է գշկուր, որ արհնական չէ։ Բայց բոլորն էլ ընդհանուած են լեզվի մեջ, որովհետև բառանոված են ը անդիր ձայնավորով։ Այսպես նաև մյուսները։ Կան բառեր, որոնց մեջ երեք բառաձայն կողք-կողքի են շարված և ժ կամ շ գոնվելով երկու տարրեր ոստիճանի միջև՝ երկրդիմի վիճակի մեջ են։ Օրինակ՝ գժամիլ բառի մեջ ժ գտնվելով թրթռուն դ-ի և խուլ ա-ի միջև, կամ մեկին պիտի հետևեր կամ մյուսին։ Հետևել է նախաձայնին, ոստի անկանոն է ա-ի համար։ Ոսկայն վանկարտահանումը նրերելի է դարձնում այս անկանոնությունը (գրժ-ոիլ)։ Նմանապես դշխոյ բառի մեջ շ գոնվելով թրթռուն դ-ի և խուլ խ-ի միջև, հետևել է խուլին, ոստի անկանոն

է նախաձայնի համար։ Բայց նևրելի է և այս, որովհետև ղ և շ բաժանված են ը ձայնավորով։ Ինշա Աստահ, «լաստ» բառից ունենք ուշություն և ուժդություն, որոնցից առաջինի մեջ ունենք մի թրթռան և երկու խուլ, իսկ երկրորդի մեջ հավասարապես երկու թրթռան։

Մյուս բաղաձայններից նախաձայն յ, ժ, հ, չ, ս միանում են միայն ժ թրթռունի հետ (ուստի առաջին երկուսը ձայնապես կանոնավոր են, մյուսները անկանոն), իսկ բ, ճ, յ, շ, վ, փ և ք նախաձայնները միանում են միայն շ խուլ բաղաձայնի հետ (ուստի բոլորը ձայնապես կանոնավոր են, բացի յշ և վշ խմբերից)։

Մյուս բաղաձայնները (մ, ծ, ց, ս, զ, լ, ղ, ջ) նախաձայն լինելու դեպքում ոչ կարող են միանալ ժ-ի հետ և ոչ էլ շ-ի հետ։

Նախաձայն բաղաձայնների միացման մեջ կան մի քանի հետաքրքրական կետեր.—

դժ—բացասական մասնիկը, որ ծագում է պարսկերեն dուշ ձևից, կցվում է ամեն տեսակ բառի հետ։ Եթե կցված բառն սկսում է ձայնավորով կամ թրթռուն բաղաձայնով, ոչ մի անպատեհություն չի ծագում։ Սակայն երբ կցված բառը սկսում է խուլ բաղաձայնով (ինչպես՝ դժկամակ, դժկերպ, դժպիհ, դժպատեհ), առաջ են գալիս թրթռուն+խուլ խմբեր։ Հայերեն լեզուն մարսում է այս անպատեհությունը, որովհետև դժ- կազմում է առանձին վանկ և չի միանում հաջորդ բաղաձայնի հետ։ Ավելի ուշ, երբ առաջացավ նոր ձայնաշրջությունը և տ հնչվեց ժ, դժ- մասնիկն էլ գրիչներն սկսեցին երբեմն գրել ժժ-։ Այսպես առաջացան ժժգին, ժժգոն, ժժգոյն ձևերը, որոնք մինչև իսկ հին երկերի մեջ մուծվեցին։ Այսօր էլ արևմտահայերը թեև գրում են դժբախտ, դժուար և այլն ձևերը, բայց միևնույն ժամանակ ունեն ժժգոյն և այլն. սրինակ՝

Եթե ժժգոյն մանու հրեշտակ
Անհուն ժպտով մ'իջնե իմ դեմ... (Պ. Դուրյան)։

թշ ձայնախումբը դառնում է բառասկզբում չ՝ միայն մի բառի մեջ. այն է թշուառ>չուառ։ Ուրիշ տեղ նման փոփոխություն չի գտնվում հայերենի մեջ։

(Երեք բառ ունենք (թշվառ, թշնամի և թշնամանել), որոնց մեջ իրաններեն duš- մասնիկը հայերեն դշ դառնալուց հետո, դ ազդվելով հաջորդ շ-ից, վերածվել է թ-ի)։

Բառավերջում ժ և շ կարող են գտնվել միայն ձայնավորից և երկբարբառից հետո։ Բաղաձայններից հետո բառավերջում ժ և

չ պալաթլան չանկի, բացի ր-ից, որի համար անհնար հետևյալները.

իմ.—ախտիմ, ...արիմ, յատնիմ, շարժ, վարժ, կարժ, տուրմ *(իմա՛ տայմ)*։

իշ.—բարիշ (բաշ), շղարիշ, պարիշ, գորիշ, գուրիշ, լալիկիշ, խարիշ, խորիշ, կարշին, բարիշ

Արտանցից մի քանիսն որպեսն կարող են դրվիլ նաև ր-ից (ինչպես յատնիմ, կամ, տուժ, բաշ, շղաշ, գոշ, խոսշ, քաշ)։

Չմոռնալի է նաևնդուրս բառի բացատրությունը, որ ոչ միայն ասվիս է անհետզետյամ և ր-ի անկատով անհետզեցյալ, այլև տատա-սխալով անհետզեցյալ «հաղտած»

Դարձյալ այն դնդքերին, որ բառասիրքի ժ կամ շ ձայնիերին հաջորդում է մի բաղաձայն ևս, որպեսզի անհնար միայն նախերից մ, ն, շմեական խ և պալթականներից էլ պ, կ, տ հերիշ բաղա-ձայն չկա։ Ահա որոնց օրինակները.

մ.—այժմ, աշմ *«հատորիս»*, դրոշմ, հաշմ, քաշմ.

ն.—բամբիշն, պաշն, խաշն, կապշն, յանգուշն.

պ.—պուշպ.

կ.—բեշկ, բմիշկ, լեշկ, մաշկ, մուշկ, չմուշկ.

տ.—խիշտ. խուժդն, կոշտ, կուշտ, նիրաժեշտ, ոիշտ *(ոինդ)* և այլն *(որոնցներ ամեն տեղը շտ ձայնախումբի մեջ)*։

խ.—բաշխ, բարաշխ, բդեշխ, նրաշխ, *(ս)* աաշխ, վաշխ.

Մի քանի դնդքեր կան, երբ ժ և շ տեղահանակում են իրար կամ նաև զ, ս բաղաձայններուն։ Բայց որովհետև այս կարգի բա-ռերի մեծ մասը անհայտ է ստուգաբանությամբ, ուստի հայտնի չէ նաև, թե որ ձևն է նախնականը և որն է ածանցականը։

ժ=շ, զ.—*1.* լաժուարդ, լաջուարդ, լանվարդ, լազվարդ *(բոլորն էլ պարսկերեն և արաբերեն համապատասխան ձևերից առնված)*։

2. շրեշ (շրեժ, շրեզ). *բոլոր ձևն է պարսկերեն širēš. բայց կամ արաբերեն s և քրդերեն z վերջավորությամբ, որոնցից աղդ-վել է նաև հայերենը։ Արդի բարբառներում մեծ մասամբ շ, շտ վերջածայնով, իսկ մշ. Տիգ. -զ։*

ժ=զ.—խեժ (խեզ), կոեժ (կոեզ).

շ=ժ.—աւիշ (աւիժ).

շ=ս.— սոնիշ, սոնիզ *(առաջինը պահլավերեն *sōnīč> պարսկերեն sōnīz ձևից, երկրորդը արաբերեն šūnīz ձևից)*։

3. շականջել, սականջնել *«լսել»*.

4. խոշտար, խոստար, «ավատ» (երկուսն էլ պետք է ուղղել խոստակ>պահլավերեն xvāstak).

5. թարշիշ, թարսիս «մի տեսակ աղնիվ քար». առաջինը ասորերեն taršīš, երկրորդը հունարեն θαρσείς ձևից.

6. շափիւղայ, սափիրայ «մի տեսակ աղնիվ քար». առաջինը ասորերեն sapīlā! ձևից, երկրորդը հունարեն σαπφειρος.

7. սոճի (շոճի), աստիճան (աշտիճան), ասատուն (աշտուն). սրանց մասին տե՛ս ս տառը։

8. տատասկ, տատաշկ, տատաշ (վերջին երկուսը ժողովրդական ձև)։

շ=ժ ձայնափոխության երկու հետաքրքրական օրինակ էլ ունենք, որոնց վրա արժի կանգ առնել։

Առաջինն է շարժ>ժաժ. սրա հնագույն ձևն է շարժ. ավելի ուշ ր կորչելով դարձավ շաժ, վերջաձայնը աղղելով նախաձայնի վրա՝ ժաժ. սրա համեմատ էլ շարժք>ժաժք, շարժիլ>ժաժիլ։

Երկրորդն է շարժել։ Սրա հնագույն և հարազատ ձևն է շարշիլ «պատառատուկ, ծվատուկ», որ երկու անգամ գործածված է Մարկոս Թ. 19. Ղուկաս Թ. 42 =հունարեն σπαράττω համանիշի դեմ։ Այս ընթերցվածն ունեն Էջմիածնի հնագույն Ավետարանը (№ 363) և Մոսկվայի Լազարյան ճեմարանի Ավետարանը։ Ավելի ուշ շարշիլ բառը կորչելով, գրիչները հասկացան շարժիլ «ցնցել», որ իմաստով էլ շատ հարմար էր տեղին, և սկսեցին բոլոր ձեռագիրների մեջ էլ մտցնել սուրն անգո ձևը։ (Այս մեկնությունը տալիս է Meillet, JAs., *1903 (2)*, p. 505)։

Այս բոլորից հետո հիշենք, որ ժ և շ ձայների փոփոխությունները և տարբերությունները առաջանում են երբեմն տառաձևերի շփոթության պատճառով. այսպես՝

կակժիրակ, գրված է նաև կակծիրակ. սխալ ձև, որ առաջանում է բոլորգիր կամ շղագիր ժ—ծ տառերի նմանությունից. երկաթագիր գրչությանն մեջ ժ և ծ նման սխալ չպիտի առաջացնեին։

կառաժուղ «մժեղ». գրված է նաև կառածուղ ձևով. և հայտնի չէ, թե սրանցից սրն է ստույգ ձևը, որը վրիպակ։

դգշուտ կամ դգչուտ «շատախոս» ընտիր բառ է (Ոսկեբերան, Ա Տիմոթէոս, 92), բայց ձեռագրի գրչությունն անորոշ լինելով, նույնիսկ բառի ստույգ ձևը հայտնի չէ։

կարշովին «արմատով միասին», որ կա գրված նաև կարճովին, բայց պետք է ուղղել կարճնովին. արմատն է կարճին «բուսի արմատ»։

մեխուզան համ մեխուշան «մի տեսակ ծաղիկ» (Երզնկայի, Ջիթահանտեխեն) հրկու ձևերից մեկը սխալ է. բայց ոչխարհան համար, Ջիթահանտեխեն (էջ 258, Այգենյի հրատ.) գրված է մեխոն մեխուշան, տասն տասըդ ձևը տ'յա պետք է դնել։

մռատշուտա. սխալ գրչութիւն (Դ Մակաբայեցի, ե 4), փոխանակ մռատլուտա, որ ծանոթ է ալյուտա։

շիշը «ծաղրական», որի սխալ գրչութիւնն է շիլը և իբրև առանձին բառ մտել է բառարանի մեջ։

շուն, չունի «առանձ ծագում», սխալ գրված չօծ, որ իբրև առանձին բառ հիշում են ՆՀՀ և ԱՀ։

ջաշանիլ. անառարկելի բառ, որ ոչնչ նման ջալճանիլ բնթիցվածը. հայտնի չէ, թե ինչ է տալիս։

ջոշիլ, սխալ գրված նաև ջոխիլ. ուղիղ ձևն է ջոշիլ, որ է արաբերեն jāvšīr «մի տեսակ ծառ և նրա խեժը» (տես Աբամատեանի բառարանում՝ նոշիլ)։

տարաշուն «հնդպտղ, վիղարա». ոչնչ միանգ ԱՀ. սխալ գրչութիւն, որ պետք է ուղղել տարաղուն, իբրև պարսկերեն sarāγūj (տե՛ս տես Աբամատեանի բառարանում)։

խ > ղ

Երևանի և մի քանի այլ բարբառների մեջ սխալ դարձել է ասել, և այս ձևը գտնում ենք նաև միջին հայերենում։ Պատճառը հայտնի չէ. և առաջինակին այն է, որ փոխանակ խուլի՝ խուլի հետ թրթռուն է գրվել, որի պատճառով էլ սոնանք հնչում են զրայ։

խ > ս

Այս երևույթը ցույց են տալիս միայն մի քանի բառ, այն է՝ դրախտ>դրաստ, տախտակ>տաստակ, բարեբախտ>բարեբաստիկ.

Դավառահան մասատասեղ «մեծ ասեղ» (Մալաթիա, Սիվրիհիսար) իմ Դավառահան բառարանում մեկնում եմ մաստ «հաստ, մեծ» բառից. առաջելի է սակայն, թե մաստ առանձին գոյութիւն ունի՞. երևի այդ բառը պետք է մեկնել մախթասեղ, մախաթասեղ. ինչպես ունի Վարաբաղի բարբառը (տես Դավառահան բառարան)։— Մի քանի մալաթիացիների դիմելով ստուգեցի, որ մաստ առանձին չունեն գոյութիւն (21 հունվարի 1951 թ.)։

խ>ս *գտնում ենք նաև* խարիսխ *բառի մեջ, որի հետին հայերեն գավառական ձև է* սարիսխ *(տես Արմատական բառարանում* խարիսխ *բառի տակ)։*

կ, գ>յ

Այս ձայնափոխությունը, որ գտնում ենք Պոլսի բարբառում (անկանիլ>իյնալ *և այլն), Վանի բարբառում* (խինգ>խիյ) *և այլն, գտնում ենք նաև ֆրանսերենում, ինչպես՝* agnus>agneau *(անյո)* dignus>digne *(դինյը) և լայն չափերով թուրքերենում, ուր գըրվում է* g *և հնչվում* y. *ինչպես՝* >deger>deyer *«արժի», >* degnek>deynek *«գավազան» (արևելյան թուրքերեն* dägänäk):

ի

ի *միանալով նախորդ բաղաձայնի հետ, տալիս է շնչեղ խուլ) ինչպես՝* ընդունուր>ընթացուր, սեպհական>սեփական, ամպհովանի>ամփովանի։

Երկրորդը մինչև անգամ անցել է գրավորի մեջ, մյուսները հնչվում են այնպես, բայց սովորություն չէ եղած գրել։

Գավառական ձևեր են՝ ախալ, էխալ, *փոխանակ* իւղիալ, եղհալ *«մեջը յուղ հալեցնելու փոքր տապակ»* (իւղ *կամ* եղ+հալ *բառերից)։*

ախացք *«մեծ պատ», առաջացած* աղուհաց, *կրճատ* աղհաց *բառից։*

Այս երկուսի մեջ էլ ի *միանալով նախորդ* ղ-ի *հետ՝ դարձե է* խ։

բ *բաղաձայնից հետո, մանավանդ* ք-ից *առաջ,* ի *չի հնչվում. օրինակ՝* շնորհք>շնորք, աշխարհք>աշխարք, արհամարհել>արհամարել, սրհեել>սրբեել։

Բառասկզբում հ *գտնվում է հետևյալ բաղաձայններից առաջ.*

դ.—հդեի.

զ.—հզօր.

(ժ.—հժկու.).

լ.—հլու.

ծ.—հծծել.

մ.—հմայել, հմտութիւն, հմուտ.

ն.—ՀՆԱՁԱԼ, ՀՆԱԶԱՆԻ, ՀՆԱՐ, ՀՆԳԱՏԱԿ, ՀՆԴԻԿ, ՀՆԴԱՀԱՆ, ՀՐՆԱՆԵԼ, ՀՆՈՑ, ՀՆՉԵԼ.

պ.—ՀՊԻԼ, ՀՊԱՏԱԿԱԿ, ՀՊԱՐԱՐԱ, ՀՊԱՏԱՆՔ.

ռ.—ՀՌԱՏԱԿԱՓ, ՀՈՒՌԱՐԱՐ, ՀՈՒՂԱՅԱՅՈՂ, ՀՈՒՉՆԵԼ, ՀՈՌՈՂ, ՀՈՉԱԿ.

ս.—ՀԱԿԱՅ, ՀԱԿԱԼ.

տ.—ՀԱՏԱԿԱՐ.

ր.—ՀՐԱՄԱՆ, ՀՐԱՊԱՐԱԿ, ՀՐԱՒԷՐ...

Պահպանում են տրեմն p, q (d), ɣ, l, ɓ, ʀ, ɗ, j, ʒ, ɣ, ɣ, ɥ, ɰ, ɯ, ʍ, ɾ:

Ինչպես կանանչեք, j-ից հետո պալիս են մնացյալ ա և ս բազմաձայնները. և իրոք ɓ + ɰ չկա. բայց կարելի է պնտել նաև, թե ɓ + ս պահպում է միայն հնական և հնկել բառերի մեջ, որոնք կան նաև սկայ և սկել ձևով, որով հայտնի է լինում, թե սրանց մեջ ɓ պրոթոտիպիչ մասնիկ է, ինչպես ɓյու, ɓմուտ, ɓզոր, ɓսլարա, ɓուժկու բառերի մեջ:

Յոսյակից երևում է, որ խիստ քիչ են p, q, ɓ, ɗ, ɰ բազմաձայնները j-ից հետո. իսկ ɣ, ʀ, ɗ, ʒ, ɣ, ɥ, ɾ, ɯ, ʍ բնում չկան: -p պահպում է հոգնակիի մեջ:

q — ɰ բազմաձայնի մասին տես ա—q:

ասն և ՀՆԱՐ, ողողել և ՀՆԳԱՏԱԿ բառերի համեմատությունից հետևում է, որ հնդեվրոպական նախալեզվի p բառասկզբում ի ձայնավորից առաջ պահպում է ՀՆ, իսկ n ձայնավորից առաջ ջնջվում է:

Ավելացնենք չէ սակայն s, որ ամեն տեղ ձայնավորից առաջ էլ ջնջվում է, ինչպես ցույց են տալիս ամ, աղ, ետք, եփել:

*Բայց ՀՆԻ բառի մեջ հնդեվրոպական նախալեզվի s-ի դեմ անենք ՀՆ. նմանապես ՀՈՒՄ բառի սկզբում կա մի ավելորդ ՀՆ, որ չկա հնդեվրոպական նախալեզվի ōmo-ձևի դեմ: Արդ, Մեյե հայտնում (MSL 21, p. 187) համեմատելով այս երկու բառերը իրանական ձևերի հետ (պենդերեն hana, պահլավերեն han=ՀԻՆ պարսկերեն xān և բելուճերեն hāmag=ՀՈՒՄ), ենթադրում է, թե հայերենը նախաձայն ՀՆ ավելացրել է նմանաձայնը իրանական ձևի, ինչպես ֆրանսերենում լատիներեն altum>*aut դարձել է haut «բարձր», գերմաներեն hoch բառի նմանությամբ:*

Հնդեվրոպական s բազմաձայնի դեմ հայերեն ՀՆ գտնում ենք նաև Ի նախամասնիկի մեջ (ՅՈՒ, ՅՄՈՒՏ), որի հետ նույն են սանսկրիտ su-, իրաներեն hu-, հին իսլանդերեն so «լավ»: Թեև ՅԶՈՐ ամրողջապես փոխ է առնված իրաներեն huzavr ձևից, բայց կարելի չէ ենթադրել, թե հայերեն ՅՄՈՒՏ, ՅՈՒ բառերի մեջ էլ

ի նախամասնիկը փոխառյալ լինի իրանականից։ Անշուշտ նա բնիկ է, ինչպես հին իռլանդերեն so յույց է տալիս և ինչպես կա հայերեն ս- բացասական մասնիկը, նույնպես բնիկ հայ։

Այս պատողությունները անելուց հետո Մեյեն ենթադրում է, որ հնդեվրոպական նախալեզվի su ավել է հայերեն ու, որի վրա ավելացել է հետո ի, համապատասխան իրաներեն hu- նախամասնիկի ազդեցությամբ։

Հայերենի մեջ ունենք նաև am- մասնիկը, որի հետ կա նաև համ.—այսպես համբառնամ և համրերեմ և առաջինի դեմ էլ ամբառնամ։ Դժվար է ասել, թե այնպիսի բնիկ հայ բայերի վրա, ինչպես են բառնալ և բերել, կարելի եղած լինի կցել իրանականից փոխառյալ մի մասնիկ։ Բացի սրանից am- մասնիկը ցույց է տալիս սանսկրիտ su- և հին սլավերեն sŭ-մասնիկների դեմ ձայնաբանորեն սպասելի ձևը։ Մնում է ընդունել, թե am- մասնիկը բնիկ հայ է, որ ապա իրանական ham- մասնիկի նմանությամբ դարձել է համ-։

Կան ուրիշ բառեր էլ, որոնց սկիզբը դրված է ի հավելվածը. այսպես հաճի, հաւ «պապաւ» և հաւ «թռչուն», հոտ, հացի, հողմ և այլն։ Այս ի-երից մի մասը սաստկության համար է, մի մասը իրար նմանությամբ (հաճիհաւ), մի մասն էլ թերևս իրանականի նմանությամբ։

ի ձայնը միավանկ բառերի մեջ, ո ձայնից առաջ դառնում է ֆ. ինչպես.

Հաճին. հոտ>ֆոդ, բայց հոտել>հիդել. հող>ֆոդ, հոր>ֆոյ։

Քղի. ֆոդ, ֆորք, փոխանակ հոդ, հորք։

Նախորդ խլի հետ տալիս է թավ, ինչպես՝ սեփական ըռութահաճ (առավոտյան)։

Երբ ո ձայնավորին հաջորդի վ, մնում է անփոփոխ, ինչպես՝

Հաճին. հով>հով։

ի դառնում է խ, երբ հետո կա ղ ձայնը. ինչպես՝

հող>Պոլիս խօղ. Համշեն խէօղ.

հօրեղբօրգին>Համշեն խօղօրգին։

Հին իռլանդերենում h ձայնը համր է և հաճախ իբր զարդ գրվում է նախաձայն ձայնավորի վրա. ինչպես՝ ed-hed, in-hin (Pokorny, Altir. Gramm. 13)։

ի>խ. համմտ. h ձայնը v-ից առաջ դարձած x պարսկերենում, ինչպես՝ huška>պարսկերեն xušk «չոր,» նաև خوار xarār և այլն։

1. Երբ պատահում են երկու հաջորդական ձայներ նման արտաբերության, պետակցության մեջ նման տարրերը շփոթվում են իրար հետ, և այդ երևույթը հոգեմտականում է ուժեղը, իսկ մյուս մասը կորչելով իր այս կամ այն մասը, վերածվում է մի տարիշի։ Արտասանության մեջ ամե են կազմում գանազան պատահարներ. ինչպես շեշտը, ուշ ձայների իմպուլսիվությունը, ձևաբանական կամ տարաբանական պետակցությունը։

2. Սկզբան, իրրև հոգեբանական երևույթ, ենթարկվում է սիմմ բնհատուր օրենքին. թե ամեն, երբ մի բանի իրար նման հոգեկան երևույթներ հաջորդում են միմյանց, նրանցից մեկը կորչում է կենտրոնն, որին տարաբաղդում են մյուսները։

Ահա այս երկու օրենքներով կարելի է բացատրել տարաձայնությունն գանազան դեպքերը. երկուսի մեջ էլ բնհատուր պետ ուժեղ հոգեմտականն է։ Տարաձայնությունը անկասկած երևույթ է. պետք չէ բացատրել այն իրրև կամավոր մի միջոց՝ ձայների տարբերությունը պետմամբ շեշտելու, կամ արտասանության հեշտացնելու և կամ մի մերթնակության ճանճրալիից խուսափելու համար։

4. ԽԱՉԱՁԵՎՈՒՄ

(Contamination, Croisement)

Այս երևույթը պրևոն նայնն է նմանողության հետ. տարբերությունն այն է, որ մինչդեռ նմանողությունը կատարվում է իրար հետ գոյություն ունեցող երկու կամ ավելի ձևերի միջև, խաչաձևումը կատարվում է երկու նմանիշների միջև, որոնք ձայնավոր էլ նման են իրար. ասպես՝

Հրանսերեն comparoir բայը խաչաձևվելով իր հոմանիշ paraître բային, դարձել է comparaître «երևալ»։

Լատիներեն reddere բայը, խաչաձևվելով իր հոմանիշ prendre բային, դարձել է ֆրանսերեն rendre «վերադարձնել, տալ»։

Խաչաձևումը կատարվում է նաև սուր լսվելով մի հոմանիշ ձևի սպիտակվելու, ինչպես՝

Լատիներեն altus > *ֆրանսերեն* *aut, *խաչաձևմամբ գերմաներեն* hoch *համանիշի, դարձել է* haut «*բարձր*»:

Լատիներեն articulus *խաչաձևմամբ կելտերեն* ordag, *ձևի, դարձել է ֆրանսերեն* orteil «*ոտքի մատ*»:

Պոլիս պախդազ «*սառնասիրտ*», *թուրքերեն* պախրա.

Հնաճին բաիրու «*թափօր*», *թուրքերեն* բարու «*գործի վայր*», *որ Հնաճին արդեն* բաիրու *ձևն ունի.*

Պոլիս փանիր < պանիր *թուրքերեն* penir «*պանիր*».

Պոլիս փառատել < փախատել, *թուրքերեն* paralamaq.

Պոլիս տարտղնել, *թուրքերեն* dârmadajən «*տարաղնված*».

Պոլիս սեղմել—սխմել = *թուրքերեն* səqmaq,

Պոլիս ծաղիկ = *թուրքերեն* čiček:

Հնաչամանան մի ուրիշ զարմանալի պատկեր է ներկայացնում Պոլիսի բարբառով սուտացնի «ստախոս» շատ սովորական բառը, որ կազմված է թուրքերեն yalanǐ *համանիշի վրայից, պահելով ի մասնիկը և թարգմանելով* yalan «*սուտ*» *բառը, բայց միևնույն ժամանակ պահելով այդ բառի վերջին վանկը՝ ան (տես Քննութիւն Պոլսոյ բարբառի», 177):*

5. ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

(Métathèse)

Տեղափոխութիւն (métathèse) *է կոչվում է այն երևույթը, երբ մի բառի մեջ մի կամ մի քանի ձայն իրենց տեղից հանվելով փոխադրվում են ուրիշ տեղ:*

Տեղափոխութիւնը լինում է մի քանի ձևով.

1. Պարզ տեղափոխություն (métathèse simple), *երբ մի ձայն տեղափոխվում է ուրիշ տեղ, բայց նրա տեղ որևէ ուրիշ ձայն չի գրվում. ինչպես՝* կապերտ > կաբպետ, փիփերդ > փիրփիւա, *հունարեն* πεχός > *նոր հունարեն* πρεκός, *ֆրանսերեն* Mathilde > Malthide. *սեռուբր > սերսուփ, դաստարկ > դարտակ, սարսակ > սասարկ:

2. Փոխադարձ տեղափոխություն (métathèse réciproque), *երբ երկու ձայն իրար են փոխանակում փոխադարձաբար, բայց այս փոխանակությունն էլ լինում է երկու տեսակ՝ հարևանից ձայնների միջև և հեռավոր ձայնների միջև. ինչպես՝ ֆրանսերեն* Felix > Felisk, *անգլերեն* ask «*հարցնել*» > *ժողովրդական* aks, *պարս-*

կերեն Hurmuzd > Ohrmurd «բանաթյուն», սերսերեն tko < հին պարսկերեն kúθa «ես», սեմական dpša > սաուրերեն dišpu «մեկը (դաշտ, տարած)». հունարեն Ἀλέξανδρος > պարսկերեն al-Iskandar, լատիներեն exercitus > պարսկերեն ʿasker «զորք», լատիներեն scintilla > stincella > ֆրանսերեն étincelle «կայծ», հայերեն օգտել > հայերեն եղել, հայերեն > հայերեն նախ «հետքում», գիտուր > գիտուր, բանալի > բանալի, հայերեն աշխարհ > ախշարր, աշխատել > ախշատել, աչխատ > ախչատ, լեհ «լեհ» < հին Լեհին նեբ. նեպոս > հայերեն ջեբր, ասել > հայերեն այվել, նօսր > հայերեն նեչս, ավրաչ > հայերեն արգո, փշրել > հայերեն փորշել, փշրանք > Պոլիս փրշանք, հունարեն σχολεῖον — սաուրերեն ՀՀՀՀՀ «սաուրակ»:

*Տեղափոխությունը կարող է տեղի ունենալ թե ձայնավորների, թե բաղաձայնների և թե բաղաձայն + ձայնավորների միջև: Պարզ տեղափոխությունից հետո կարող է պահպանած ձայնի տեղ մի նոր ձայն ավելանալ. ինչպես՝ կաղմուջ > կարմուջ: Կան տեղափոխություններ, որոնք կանոնավոր և ընդհանուր ձայնափոխություններ են. այսպես, լատիներեն բառամիջի sk ֆրանսերենի անցնելիս կանոնավոր կերպով տալիս է ks, որ հետո դառնում է ls. ինչպես՝ crescere > creîstre. այսպես նաև պարսկերենից հայերեն փոխառությունի միջոցին xš դառնում է շն., ինչպես իշխան < պարսկերեն *xšāna.*

Տեղափոխության պատճառները դնդապան են լինում. հաճախ արտասանության հեշտության համար է, երբեմն էլ թեթև մի ձայնի մի ուրիշ ձայնի վրա հոգեբանական վերաշրության պատճառով (Rondet, 331):

Հաճախ խոսողը շփոթում է և հաջորդ բառի նախաձայնը փոխանակում է նախորդ բառի հետ. օրինակ՝ տուած չեմ ձեզ պատում է սխալմամբ տուած կեմ ջեզ. նկատելի է, որ ոչ միայն բաղաձայնները փոխանակվում են, այլև ամեն մեկն իր առոքանը փոխել է համապատկով մյուսին:

6. ԱՐԼԻՄ ԵՎ, ԿՐՃԱՏՄԱՄ
(Elision et raccourcissem ent)

Այս անվամբ հասկանում ենք այն բոլոր անկանոն հապավումները, որ կատարվում են զանազան շատ գործածական բառերի մեջ, ավելի կարճ ձևեր ունենալու նպատակով: Վերածվում են մի քանի տեսակների.

1. Երեք և ավելի վանկանի բառերի մեջ, եթե իրար կողքի պատահին նման վանկեր, դրանցից մեկը կրճատվում է ամբողջովին կամ մասամբ. այս երևույթը կոչվում է տարազաբանություն (haplologie), *և ավելի հաճախ է տեղի ունենում բարդ բառերի մեջ, ինչպես՝*

Լատիներեն semestris *փոխանակ* *semimestris.
nutritor *իգական* nutrix *փոխանակ* *nutritrix.
venum-do *«ի գին տալ»*>venundo>vendo *«վաճառել»*.
stipendium *փոխանակ* stipipendium.
veneficus *փոխանակ* venenificus.

Իտալերեն postelegrafico *փոխանակ* postetelegrafico *«փոստի և հեռագրական»*.
postelegrafonico *«փոստի, հեռագրի և հեռախոսի»*.

Ֆրանսերեն contrôle *փոխանակ* contrerôle.
idolatrie *փոխանակ* idololatrie.

Հունարեն τετράπεζα *«չորս ոտքով սեղան»*>τράπεζα.

Աստրերեն šalāšiseri > šalāšeri „13".

Ռուսերեն курносый *«սաւափաքիթ»* < *հին ռուսերեն* kornosyj < *korno-nosyj.

Haplologie *բառի բուն նշանակությունն է մի անգամ ասել, բայց հայերենի մեջ թարգմանում ենք արագաբանություն (չպետք է սակայն հասկանալ շուտասելուկ)։ Արագախոս անձինք, երբ արտասանում են երկու միանման ձայնավորներով կազմված վանկեր, դրանցից մեկը ջնջում են. օրինակ՝*

Համամաշեն > Համշեն
Մարմարաշեն > Մարմաշեն
ճարտարասան > ճարտասան
աշխարհահայացք > աշխարհայացք
ծխահան > ծխան
փողահար > փողհար
սպասպետ > սպետ
աշխարհահալած > աշխարհալած
աշխարհահամար > աշխարհամար
բազմակակալ > բազմակալ
դրուագրել > դրուագրել
երասանահակալ > երասանակալ
ընծայատուրքիւն > ընծատուրքիւն

թակաղատ > թակատ

*խոնեմամտութիւն > խոնեմութիւն

խոտա առամբակ > խոտաամբակ

նոսկայագն > նոսկագն

մեղուանոյշ > մեղոյշ

ոսկի հոլիկիք > ոսկիկիք

ոտքանալի > ոտքալի

չոխոսայազգեաց > չոխոզգեաց

*առնանարդել > առնարդել «առաջնորդել»

վանականքրեայ > վանականքեայ

վշտանամբեր > վշտամբեր, վշտաբեր

տարաճարածել > տարաշածել

փեսայացու > փեսացու

փեսայանրաւէր > փեսաւէր

բոլոկիսկոպոս > բոլոկոպոս

Արտաշշաս > Արտաշաս *(բուռ Մարգոնի)*

Հաճինի բարբառում կա ձիրօգ, համա. Զևլիանի բարբառի ձիձիրոգ<ձոձրակ:

առում ա>առմա *(այս ձևն է առանում պատմվածքների մեջ, հիշա ինչպես առանձնում ROBOPИT խոսակցությունն մեջ կառնում է ՐԲՏ.):*

այսպես առած > առած *(մեր պատմողներից մեկը խոսակցության մեջ հաճախ կրկնում էր «այսպես առած», բայց այս բառը հաճախությունն պատճառով այնպես էր կրճատում, որ լսվում էր -առած):*

յայնաւափոխ *(ծանոթ է ինձ Առձևան բառարանի միջոցով. չունի Նշվ[1]). նշանակում է «յայն նախիրս», ասել բուն ձևն է յայնաւանափոխ, սակայն այս կարդի բառեր, որոնք հանված են որևէ պրչագրից, կարող են լինել սխալ պրչագրության արդյունք. Զևոագրողները, ինչպես կարող են մի վանկը սխալմամբ կրկնել, կարող են նաև սխալմամբ հանպատել: Այսպես, կնքապատ > քապատ ձևի գործածությունը 1619 թվականից սկս Յոհաննէս Ճեռապրեց վանապարականի. էջ 861:*

Անկանոն սղման օրինակ է նաև Լուսաւորիչ>Լսաւորիչ (Պոլիս):

2. Շատ գործածական և հաճախ կրկնվող բառերը, որոնք նույնիսկ չեն ներկայացնում մի ինքնուրույն ձայնի կրկնությունը, իրենց ասելու շրման մեջ ավելի են մաշվում քան այլ թուլ պիտի տա-

լին ձայնական սովորական օրենքները և կրում են նույնպիսի անսովոր կրճատումներ, որոնք ոչ մի օրենքի չեն ենթարկվում. այսպես, օրինակ՝

Ֆրանսերեն sieur < լատիներեն seniorem.

» mademoiselle > mamselle.

» mon sieur «տեր իմ» > monsieur, որ նախ դարձել է mesieu, այժմ հնչվում է msyo, Պոլսի հայոց մեջ փոխառյալ ձևով միւսիւ (մյուսյու)։

Ֆրանսերեն cousin < լատիներեն consobrinum.

» capitaine > pitaine (դինվորական ծածկալեզվով).

» colonel > colon.

» n'est-ce-pas > s'pa «այնպես չէ՞».

» caporal > cabo (և ոչ capo, նմանությամբ մի ուրիշ բառի).

Գերմաներեն guten tag > ntag

» guten morgen «բարի լույս» > gmoin.

» heute < հին բարձր գերմաներեն hiutu < hiu tagu «այսօր».

Իտալերեն monna < madonna.

Իսպաներեն usted «դուք» < vuestra merced «ձեր շնորհը». Հունարեն σήμερον > σέρ «ոչ».

» նւձՅ.ε > նոր հունարեն նւձ.ε «սատանա».

Անգլերեն mistress «տիրուհի» > missis «տիկին» և սրանից էլ miss «օրիորդ».

Պարսկերեն har zaman «ամեն ժամանակ» > կրճատ hāzman (ԴԴ 245բ).

» šādbāš > šābāš.

Թուրքերեն aγa «աղա» > aa, հայերեն ա՛, ինչպես հակոբ ա՛

» efendim > efem.

Թուրքերեն Izmid (հիմա Izmit), նաև Izuimid, առաջանում է հունարեն is nikomidia ձևից։

Ռուսերենում, ինչպես հայտնի է, ստվորությունն կա ծանոթ անձանց ի պատիվ գործածելու անուն-հայրանունը, թե՛ արական և թե՛ իգական. այս շատ հաճախ կրկնված ձևերը բնականաբար կրում են անսովոր կրճատումներ. օրինակ՝ Maria Alexandrovna դառնում է Marsana։

Պորտուգալերենում քաղաքավարական խոսակցության մեջ ասվում է Vossa Mercê «Ձեր շնորհը» = Դու. կրճատմամբ դարձել է Você։

Ռումիներենում քարտեզագրական խոսակցությունն ունի ոմն Domnia-Voastră «*Ձեր իշխանություն*» *Բառ. կրճատ ելել է* Domnia la. *ժողովուրդը սովի կրճատելով պահել է պատմական* Matăr

Լատիներենում sl vis «*ինձ կամենա*» > sis *իբր քարտեզագրական ձև. հաղորդի* sullis «*ինձ կամենա*», *նաև* sodes «*ինձ կամենա*» < si audes.

Վրացիներենում դիալ «տալս» համապատասխան են համապես դիդի արա Վամերի «մեծ է Աստված» ձևից (Vogt, 98)։

Արաբներենում ալոպիսի կրճատումներով առնվում են մի քանի ամանոցների երկար բառից կազմված (շատ սրծածական բառերից) ինչպես՝

sabbala *որ է* subḥān Allah «*օրհնաբար է Աստված*» *ասել*։

ḥa'ala, *որ է* ḥulla ḥadāka «*պատնամ քեզ մատաղ*»։

ḥamdula, *որ է* al-ḥamd ul-lah «*Փառաբանություն Աստծոյ*» *ասել*։

basmala, *որ է* bismillāhi «*Յանուն Աստուծոյ ասել*։

Նաև ցեղական անուններից՝

'Išamī, *այն* 'abd-al-šamī *ցեղին պատկանող*։

'abdarī, *որ է* 'abd-al-dāra *ցեղին պատկանող*։

Այսպիսի կրճատման ամենատարած օրինակները տալիս են հատուկ անուններ, սկսած հնագույն ժամանակներից մինչև այժմ. հմմտ.

Հունարեն Zeuxippos > Zeuxis
Nikēphoros > Niklas
Agēsilaos > Agis

Գերմաներեն Baldwin > Baldo
God-Frid > Godo, Goto
Ram-bald > Ramo
Erilerike > Eritz, Erida, Rike.

Ռուսերեն Николай > Коля
Мария > Маша
Александр > Саша

Անգլերեն Herbert > Bert
Albert > Bert

Arabella > Bella
Alexander > Sander
Charlotte > Lottie
Beatrix > Trix

Դանիերեն Jakobine > Bine
Karoline > Line
Kristine > Stine
Andres > Dres

Իտալերեն Giuseppe > Beppo

Արաբերենում հատկապես հատուկ անունների կոչականի մեջ վերջին վանկը կրճատվում է. օրինակ՝

կամ յա՜ Ուամա, յա՜ Ուամն *(փոխանակ)* յա՜ Ուամաուս) ո՜վ Ամաո։

Յա՜ Ջաֆա *«ով Ջաֆար» փոխանակ* յա Ջաֆարու։

Ավելի ուժեղ է կրճատումը լաքերենում, ուր անունները և մի քանի շատ սովորական բառեր կոչականում վերածվում են շատ ոչխոհրալ ձևերի, ինչպես՝

Իբրահիմ > Իբա, Հյուսեին > Բուցե, Հասան > Քացա, Մուսաաֆա > Յափա. *կամ նույնիսկ միայն մի վանկի. ոլսպես՝*

Ի՛ բա < Էլ բարա *«ով հայր».*
Ի՛ նա < Էյ նանա *«ով մայր».*
Ի՛ Մու < Էյ Մուսաաֆա.
Ի՛ Մե < Էյ Մեհմեդ.
Ի՛ ին < Էյ Ինշիա.
Ի՛ խա < Էյ խադիջե.
Ի՛ Պյու < Էյ Պյուլում *«վարպա, սիրելիս».*

(Марръ, Грамм. чан. яз., 5, 72)։

Այսպիսի կրճատումների պատճառն այն է, որ իրրև շատ ծանոթ բան ամենքին հայտնի են, և մի-երկու վանկ ամրողջությունից՝ բավական է մնացյալն էլ հասկանալու համար։

Չաներենի մեջ նման կրճատման օրինակներ են՝

պարունակող *«կեսրայր» >* Հաճինի բարբառով բայեճթար, բայբար.

այս ժամ > գյարար այժմ.

հիմակ > վանի բարբառով մկա.

ասել > Պոլսի բարբառով քսել, որի մեջ ա > ը ձայնափոխությունը անկանոն է. նույնպես Կովկասում «ասում է», ուրիշի պատմությունը մեջ բերելու ժամանակ իբր շատ հաճախ կրկնված ձև. պառնում է «ասմա».

անել > *պոլսի բարբառով* բնել. *սա էլ* առնել *ձևից.*
որովհետև > *արագ խոսակցության մեջ* որտե՛ս:
Հատուկ անուններից նման կրճատումներով անունք՝
Աստուածատուր > Աստատուր, Աստուր, Աստիկ, Տատուր, Աստր, Տա՛տի, Ա՛տո.
Թրիփոլր > Թրիփոլր, Թրիքո, Թրիքի, Թրիփո, Պրիկրպի.
Նախատուր > Նաչիկ, Նաչի, Նախչո, Չատա, Չատի.
Կարապետ > Կարապիտ, Կարո, Կրպի, Կրպո.
Մարտիրոս > Մարտիկ, Մոդո, Մոդի, Միտի.
Մկրտիչ > Մուկուչ, Մակի, Մկո, Մկրը, Մկիկչ, Մակիչ.
Յակոբ > Ակո, Ակոն.
Յովհաննէս > Օհան, Օննիկ, Հաննէս, Ախան.
Պետրոս > Պետիկ, Պետի, Պետո.
Սարգիս > Սաքո, Սիկի.
Յարութիւն > Յարո, Արուր, Արթին, Արթաքի.
Ստեփանոս > Ստեփան, Տեփան, Սեփան, Սեփո

Հնատրրրական է նկատելի անձնանունը իր հայ ու եվրոպական բաղմատիպ կրճատումներով. ինչպես՝ Էլիզա, Էլիզ, Լիզա, Եզաբելլա, Զաբել, Սաբեր, Էլսա, Էլսոն, Բելլա, Բելա, Լիզին:

Արևմ. պատճառով, երբ բաղաձայնի կրկնությունն ատաջանա, բաղաձայններից մեկը կարող է ընկնել. օրինակ՝

Հալեբն պատուել > *Ալեպցի (Մատս լեռան) բարբառով* բոլվ'ել *«պատել, մոն դալ»:*

Մոն-քմեր ճյուղին պատկանող խասի լեզվի մեջ, երբ բառն սկզբում ունի երկու բաղաձայն, շատ հաճախ առաջինն ընկնում է. օրինակ՝ ksnh *«մատանի» և* kti *«ձեռք» բարդվելով տալիս են* sahti *«մատի մատանի»* (Grierson, II, 1):

Զանազանց դարձվածքների պատճառով որոշ բառեր և քերականական մասնիկներ ենթարկվում են անկանոն ոլմանն և կրճատման:

Այս կողմից նշանավոր են քերականական հարերը, որոնք հիմա մենք մասնիկ կամ վերջավորություն ենք կոչում. դրանք նախապես անկախ բառեր էին, բայց իրենց ինքնությունը կորցրած, նախադասության մեջ դարձածվելով իբր միջոց բառերի այս կամ այն առնչությունը պարզելու, դարձան երկրորդական ձևեր և իրենց հաճախակի գործածության մեջ բոլորովին անկանոն կերպով սղվելով ու մաշվելով՝ դարձան մասնիկ: Այսպես, օրինակ, դրաբար պիտի, որ անկախ բառ էր «պակաս է, կարևոր է» իմաստով հետո

պարձակ ապառնիի օժանդակ և իր այս վիճակում չափազանց մաշվելով բարբառների մեջ գործած պիտ, պի, սի, նուլնիսկ պ կամ ս: Այն բարբառների մեջ, ուր նա այս վիճակին է հասած, չենք կարող դանել մի բան, ուր նախավանկ պի կամ վերջավանկ սի ջրնջվի. հնահաւատ պիտի բառի կրած ձայնափոխութիւնը սովորական օրէնքներից դուրս է: Այսպես նաև մեր սահմանականի կը, կ մասնիկը, առաջացել է գրաբարի կայ ու ձևից: Թող, որ խոկապես առանձին բառ է գործածվելով իբր հրամայականի մասնիկ և այս վիճակում բոլորովին մաշվելով, դարձել է հաճնի բարբառում պարզապես թ:

Այս պարագային պատահում է, ինչպես և բնական էր սպասել, որ միևնոյն բառը, մի տեղ գործածվելով անկախաբար, պահել իր ինքնուրոյն ձևը, իսկ մի ուրիշ տեղ գործածվելով իբր օժանդակ, ենթարկվել մի ուրիշ ձայնափոխութեան և սար բոլորովին այլ ձև: Այսպես, միևնոյն լատիներէն illam *բառը գործածվելով հաջորդ գոյականի հետ իբր օժանդակ, դարձավ ֆրանսերէն* la *հոդը, իսկ գործածվելով իբր անկախ բառ, ավավ* elle *իգական դերանունը:* la *և* elle *ձևով և գործածութեամբ այսօր այնքան տարբեր են թվում, բայց ծագումով բոլորովին միևնոյն բառերն են:*

Այսպես նաև հայերէն կայ ու, որ իբր օժանդակ ավել է կու, կը, կ. իբր անկախ բառ մնում է իր իսկական ձևով և ասում ենք, օրինակ, կա ու չկա, բացասական չկա ու չկա:

Սերբերէն hòcú *«ուզում եմ» իբր առանձին բայ պահում է ամբողջ ձևը, իսկ գառնալով ապառնիի մասնիկ, վերածվում է ću. ինչպես՝* jâ ću ciniti *«պիտի անեմ»:*

Կրճատման շատ լավ օրինակ է առաւօտ > Պոլսի բարբառով առտու, որ հոլովական առաւօտու ձևի կրճատումից է առաջացած. հոդով էլ ասվում է առտուն, այն է առաւօտուն, որի նմանութեամբ էլ ունենք երեկոյն = իրիկուն, հոդով իրիկունը, նույնիսկ Պոլսի բարբառով իրիճգունը:

Ամբողջ նախադասութիւնն էլ կարող է կրճատվել և վերածվել մի ձայնի. օրինակ, Երևանի բարբառով ես ի՞մ = ես ի՞նչ իմանամ, չգիտեմ:

Նոր Բայազետի բարբառով չմաս ինչ, չսաս ինչ = չգիտեմ ինչ, չգիտես ինչ:

Մարտունի բարբառով սիւնամ = ես ի՞նչ իմանամ, չգիտեմ:

Ղարաբաղի բարբառով իտո = ինձ տուր, կամ նաև ի = ինձ տուր. օրինակ՝ ես ըղամանը ի ատ (ի) = այն աղամանը ինձ տուր:

Վանի բարբառով իւ — (ալս) հա — խա բառից կրճատված։

Այս բայերի մասին անս իմ հատվածը՝ «Անհատ բառեր», «Հոգեբանություն» ժողովածուի մեջ։

3. Փոխառյալ և ազգայնական բնույթի անհատ մի խումբ բառեր, որոնք կազմված են երկու բառից և բովանդակությամբ են, կրում են բաղադրական կրճատում, հատկապես վերջի մասից, ինչպես՝

Ֆրանսերեն kilo (gramme).
photo (graphie).
cinéma (tographie).
vélo (cipède).
auto (mobile).
métro (politaine).
piano (-forte)*.
dépêche (télégraphique).
dynamo (machine dynamo-électrique)
bat d'Af (bataillons d'Afrique).

Անգլերեն pop = popular concert.
prep = preparation.
sup = supernumerary.
bus = omnibus.
phone = telephone և այլն։

Ռուսերեն bil = automobile.

Կրճատման այս ձևը, որ գտնում ենք եվրոպական ազգերի մեջ, թեև նոր ժամանակի ծնունդն է, բայց չափազանց տարածված է ամեն տեղ էլ։ Այժմ մեզ մոտ էլ անի բնակչի դրծածությունն. օրինակ՝ ժողկոմխորհ, լուսժողկոմ, ֆինժողկոմ, առևտրկոմ, հալկոոպ, բանկոոպ և այլն։

4. Կրճատման վերջին աստիճանն է ամբողջ բառից հիշել միայն նախատառի անունը։ Այսպիսի ձև կար մեր ժողովրդական ծածկաբանի մեջ. օրինակ՝ Ագուլիսի բարբառով բո նշանակում է «թագ» և այս բառի նախատառի անունն է. փիւբ-փիւբ նշանակում է «փոքր-փոքր. քիչ-քիչ» և այս բառի նախատառի անունն է (տե՛ս Մարգսեանց, Ագուլեցոց բարբառը, Բ, 11)։ Վարաբաղի բարբառով իչ նշանակում է «ճնճղուկ» և նաև բառի նախատառի անունն է։

---

* Իտալերեն ձևն էր grave cembalo col piano e forte.

Հայերենում ալպաւիթի կրճատման գեղեցիկ օրինակ է ցը, որ «ցտեսութիւն» բառի ծայրահեղ կրճատ ձևն է։ Այս օրինակը պատկանում է թե նախորդ համարին (իրրև շատ հաճախ գործածական ձև) և թե այս համարին։ «Ցտեսութիւն» բառը երկու անոսկ կրճատուում ունի՝ ցը և ցո։ Առաջինը բառի առաջին վանկն է ներկայացնում, իսկ երկրորդը՝ բառի առաջին տառի անունը (համմա. Ադուլիսի բալքասի բո «թաղ» և այլն)։ Երկու կրճատումներն էլ գրական ճանապարհով են առաջացել և ոչ թե ժողովրդական, որովհետև բառը ինքն էլ գրական է և ոչ թե բնիկ ժողովրդական։ Առաջ սովորական էր Կովկասում ցո ձևը, իսկ այժմ վերացել է, որովհետև տառերի անուննները ջնջվել են արդի մանկավարժութիւնի մեջ. այս պատճառով էլ մնում է միայն ցը։

Այս կողմից հետաքրքրական է արևմտահայերի գրական լեզուն։ Այստեղ ընդհանրապես չկա «ցտեսութիւն» բառի գործածութիւնը։ Թե՛ ֆրանսերեն au revoir կամ գերմաներեն auf wiedersehen ձևերը ծանոթ են արևմտահայերին, բայց առաջներեն լեզուն չունի այդպիսի բացատրութիւն։ Այլ կա միայն hošla Kalən, hošla Kaləməz «մնաս բարով, մնացէք բարով» և այլն և սրանց հետևողութիւնով էլ հայ ժողովուրդը գործ է ածում միայն «մնաս բարով, մնացէք բարով», «գնացէք բարով» ձևերը։ Երբ ֆրանսիական վեպերի թարգմանիչները ստիպվեցին իրենց թարգմանութիւնների մեջ մացնել այդ ձևերը, թարգմանեցին ի տեսութիւն, ի կրկին տեսութիւն կամ կրկին տեսութիւն. օրինակ՝ Ա. Ծերամի Բալին վեպի մեջ (թրգմ. Գրիգոր Մաբեան, Զմիւռնիա, 1872, 87) կարդում ենք. «Ոմանք ինձ «կրկին տեսութիւն» ըսելու տեղ «մնաս բարե՛ կ'ըսէր»։ «Ցտեսութիւն» բառը կովկասահայ բարբառից մտավ արևմտահայերենի մեջ։ Այս պատճառով էլ ցը կամ ցո կրճատումը գոյութիւն չունի արևմտահայերէնի մեջ։ (Համմա., օրինակ՝ Առանձարի ժողովածու երկեր, Թիֆլիս, 1905, 103—104, ուր հեղինակը պատմում է, թե ինչպես պղտահայ գրող Յովհաննէս առաջին անգամ բաւ է ուսանողից ցը ձևը և դարմանում այդ ձևի վրա)։

Այս ձևի կրճատման ամենէն ընդարձակ և պաշտոնական գործածութիւնն ունեն Եվրոպացիք. այսպես՝

Ֆրանսերեն P. C. N. (physique «ֆիզիկա», chimie «քիմիա», histoire naturelle «բնական պատմութիւն», երեք պարտադիր քննութիւններ, որ տալիս են համալսարանի դիտական ֆակուլտետների առաջնորդները առաջին և երկրորդ կուրսերում)։

Ֆրանսերեն C. G. T. (Confédération générale du travail *«Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիա»*)։

Ֆրանսերեն T. C. F. (Touring-Club français *«Ճանապարհի ֆրանսիական ակումբ»*)։

Ալտայիան լեզուաընտանիքը Անոլլիայից են անցել Ֆրանսիա (BSL. 67, p. 253)։

Հելսինկիերեն Hakatisten *(կազմված* H. K. T. *նախատառերից և նշանակում է Հնհատասանը սկսնակ կոնստիտուցիոնալ-դեմոկրատ)*։

Հելսինկիերեն Cadet (K. D — Konstitutinel-Démokrat)։

Այս կարգի լրացումների համար Լեպսիուսը (Ling., 268) *արհնակ է բերում բաղնիք ժամանակ պիտարի հանելու սովորությունը. մեծամասնությունն անանելիս հանում են պիտարկը հարկադրական շարժումներով և ամբողջապես. բնկիրոջ՝ ավելի քիչ են հանում, իսկ ամենաքիչ Ծանոթին անանելիս՝ անորոշ մի շարժում պիտարկի ուղղությամբ բավական է։*

Կրճատման առանձին մի ձև է նկատվում այն, երբ մի ամբողջ պրոցեսի առաջին բառը կամ բառերը գործում են ամբողջի փոխարեն, օրինակ՝ «Մխիթարյան» կրճատ ես երբեմն (անկատար է «Մխիթարյան, Վենետիկ, գիր գործարան տիկնոջ հանրագիտարանի երկրորդ»), «Ալ պրհնես գազետիկա»-ն տպված է վիճնուազում 50 լրվով թերթմանոցած, իսկ «Հայաստան խոստովանիմ»-ը տպված է վիճնուազում 36 լրվով թերթմանոցած։ Մուլտ գնաց «նալնայ սերով» լսելու. «Ալտար անհատ»-ը 36 տուն ունի. այսպես նաև «Աշխարհ ամենայն»-ը, թե՛ «Հայաստան խոստովանիմ»-ը, թե՛ «Նալնայ սերով»-ը, թե՛ «Ալտար անհատ»-ը և թե՛ «Առաւօտ լուսոյն»-ն ներսես Շնորհալու գործերն են։

7. ՀԱՐԱԿՑՈՒՄ ԿԱՄ ՀԱՒԱՔՈՒՄ

(Agglutination)

Հարակցում (agglutination) *է կոչում այն երեւույթը, երբ բառի մոտ գոնեմն մի նախնական մասնիկ կամ հոգ. արմատական կարծելով, կցվում է բուն բառին. օրինակ՝ լատիներեն* hedera > *ֆրանսերեն* lierre, *որ l' որոշիչ հոգի հարակցումով դարձել է* lierre.— *անգլերեն* an ekename, *միացնելով անորոշ հոգի* n *ձայնը դարձել է* a nikname *«ծաղրանուն».—հայերեն բարբառ-*

նևրում սովորական է և սահմանական մասնիկի կցումը բային, ինչպես՝ նոալ—կնոալ։

Նույնպես ունենք որոշյալ և հոդի սխալ կցումով՝ մհդուն, պրացին, թին, ձին։

Նույնը կա նաև ֆրանսերենում, ինչպես՝ Lille (Insula), luette (uvetta), lendemain (*հին ֆրանսերեն* le lendemain), abbé (*պահպանական* le labbé) *և այլն։*

ա ձայնարկության կցումով. աղե (Ղարաբաղ) «քահանա, տեր», աքիր (Երևան) «քույր». համմ. բերբերերեն yâlla «Աստված» (ուղղական փոխանակ կոչականի) (MSL 23, p. 332)։

ո կոչականի նշանը իբր բառի մաս համարելով՝ Մարո, Կարո և այլն իբր ուղղական (համմ. նիժնպապական գալլա լեզվով wāqayo «երկինք, Աստված», որ wāqā «երկինք» բառի կոչականն է (āyo մասնիկով), ուղղական դարձած (MSL 23, p. 332)։

Հանդիպում ենք նաև բառասկզբում ի ձայնի հավելման օրինակների. այսպես, Աստրախանի բարբառով ասենք ինօրհ «օրհ», հերգար «երկար, հետո», հերկի «երկիր», հօլ «ավ»։

Ֆրանսերենում h-ի հավելումով՝ huit < *լատիներեն* octo, huile *լատիներեն* < oleum, huître < *լատիներեն* ostera։

Մեր բոլոր բարբառներում դրաբար ազանիլ «*դգենուլ*» *բայը, ստանալով նախածայն ի հավելումը, դարձել է* հագնիլ. *այս հավելումը կատծում եմ նրա համար է, որ այդ բայը չշփոթվի մյուս* ազանիլ *բայի հետ, որ նշանակում է «պիշերել, օթևանել»։*

Բառասկզբում ղ-ից, ռ-ից և բ-ից առաջ ավելանում է ն համ ա. օրինակ՝

եղբայր = աղբայր < **ղբայր*

երաճգ < rang.

երաստանք = *հնդեվրոպական նախալեզվի* prok'ton.

արասան, երասան = *պարսկերեն* rasan.

Նույնիսկ ռուս բառը հնչվում է ուռուս։

Առանձին ուշադրության է արժանի և բաղաձայնը, որ ավելացված է պրաորդի շատ բառերի վրա։ Այս և թեև համալսվում է արմատական, բայց չի պահվում համապատասխան հնդեվրոպական բառերի մեջ։ Արմատական ենք համարում, որովհետև այդ և բաղաձայնը ածանցման մեջ էլ մնում է. օրինակ՝ ձուկն, ձկնորս, ձկնեղեն։ Բացի սրանից և մնում է նաև հոլովման ժամանակ, ինչպես՝ սեռական ձկան, բացառական ի ձկանէ, և նույնիսկ գրծիական ձկամբ, ուր նույնիսկ և գարձել է մ՝ հաջորդ շրմնալին բաղա-

ձայնի պատճառով վերջացնում ենք ոչ-ձայնով բառը կոչում է նաև ու սրանից հետ առանձին՝ ինչպես՝ ձուկն, գնում եմ, գնում եմ

Ինչի՞ է ասոցիանում այս և վերջածանցը, որ, ինչպես առաջինը, իր համապատասխանը չունի կեցակից լեզուներում։

Նախորդ կարծում էինք, թե այս և հնդեվրոպական բառերը չեզոք սեռի վերջավորությունն է։ Երբ մի լեզվի մեջ սեռը չնչում է, բոլոր բառերը չեզոք են դառնում (գոնե պատմական)։ Այսպես էլ հայերենի մեջ։ Բայց հետո նկատեցինք, որ արական և իգական բառերի ծայրին էլ ավելացրած կա այդ և ձայնը, առանց հետաքրքրվելու այս կարծիքից, որտեղ արականը չի կարող չեզոք լինել, ինչպես և իգականը։ Այսպես՝ առն արա վալրի սչխարն է և նրն արական է, առանց նրանց ծայրի և չեզոք նշան չի կարող լինել։ Համանման եղան և նրն իգական են, առանց նրանց ծայրի և չի կարող չեզոքի նշան լինել։

Մնում էր բնդունել մի այլ բացատրություն։ Հնդեվրոպական նախալեզվում ո ոչ միայն չեզոքի նշան է, այլև եզակի հոլովականի։ Հոլովականը կարող է երբեմն բանել տրվականի տեղը, օրինակ՝ արդի հայերենում երկուս, չորս, բազանիս, բոլոնիս (Ալամի, Մակր, Վան, Մալմատա, Մարտպա), ևսանիս (Վան, Ալմի, Մակր, Մարտպա, Մալմատա) և հատկապես բայմոլիկ հատուկ անուններում։ Այսպես էլ հնագույն հայերենում հնդեվրոպական շրջանի հոլովականն անցել է տրվականի տեղը։ Այսպես էր բնդունում նաև Մեյեն։

5. ՀԱՐԱՄԱԽՕՍՈՒՆ

(Répétition)

Հարատևությունն ասելով հասկանում ենք բառի մեջ դրված այն երևույթը, որով մի ձայն բիչ հետո նորից կրկնվում է։ Այս պատճառն հետևյալն է.—Բառի մեջ մի ձայնի արտաբերությունը համար դրսևորումն իր ձեն ստանալուց հետո. նույն դրությունը չարունակում է ավելի երկար, որով նույն ձայնը կրկնվում է նաև հետո. այսպես՝ գերմաներեն geruug բառը արտասանելու համար երբ կատիկը իջնի n ձայնի համար և իր այս դիրքը պահի n ձայնը արտաբերելուց էլ հետո, դառնում է geruug. ինչպես դառնում ենք ժողովրդական լեզվի մեջ։

Այսպես և՝ անգլերեն sillable, որի վերջին l կրկնություն է, ֆրանսերեն perdrix < լատիներեն perdicem (ֆրանսերենի վերջավանկի r կրկնված), լատիներեն crocodillus > crocodrillus։

Հայերենի մեջ հարաստության օրինակներ են՝

կանայ > կանանց
ճանայ > ճանանց
մեր > մնգ
մաճ > մաճճ
ճիզ > ճիճգ > լիճգ
մայ > մանչ
միրուք > միրուճ (Զահարմահալի ժողովրդական բանահիւսութիւն, էջ 64, 67)։

Ճրեշտակ > Դարաբաղ ճրի՛շտակ, Շամախի ճրըշտրակ, կամաց > կամանց (Ախուռա)

անս և վոքանչ (Նախաստության մեջ)։

9. ՆԱԽԱՍՈՒԹՅՈՒՆ
(Articulation anticipée)

Նախաստությունը հարաստության հակառակն է. այսպես է կոչվում այն երևույթը, երբ բառի մեջ հետո հնչվելիք մի ձայն նախապես էլ է հնչվում. օրինակ՝ լատիներեն thesaurus > ֆրանսերեն *tésor > trésor գանձ։

Հայերեն վոքանչ > Պոլիս վոնքանչ. բայց այս բառը կարելի է բացատրել այլ ձևով. նախ տեղափոխությամբ՝ վոնքայչ (համմ. Դարաբաղ զեմբուչ, Մեղրի զենքուճ), հետո հարաստությամբ՝ վոնքանչ։

Գերմաներեն gestern > գավառական gerstern.
Լատիներեն septem > ստորին լատիներեն semptem.
Լատիներեն viginti > ստորին լատիներեն vinginti.
Հայերեն բեթել > բելթել.
երեկոյ > երեկուճ > Պոլիս իրիկուճ։

10. ԹՅՈՒՐԸՄԲՌՆՈՒՄ
(Malentendu)

Թյուրըմբռնումը ժողովրդական ստուգաբանության նմանող մի երևույթ է, որ ստիպն մի կամ երկու հնչյունի հետ դործ ունի և ոչ բառի հետ։

Թլատրմանման յոլ պրինակ է առ իս «ինձ մոտ» բառը։ Այս բառը կազմված է առ նախդիրից, ես անձնական դերանունի հայկականի (գ)իս ձևից։ Սրա նման կարող ենք առնել առ քեզ, առ մեզ, առ ձեզ, առ նա, առ նորա և այլն։ Ղարաբաղի բարբառում կհանդիպի է առնս ձևը, որ նշանակում է «ինձ մոտ»։ Ղարաբաղի բարբառը ոչ մի անգլիախոսի չունի պրաքրի առ իս ձևի կազմության մասին և թլատրմանումով, կարծելով, թե դա մի առանձին բառ է առն ձևով, ենթադրում է, թե վերջի ս ձայնը, որ անձնական ես դերանունն վերջացնում է, տառջին դեմքի առոյական հոգ է։ առան հիշում նրա նման կազմել է առել, առնել «քեզ մոտ, նրա մոտ» ձևերը։ առանց պրոակիկլոյս, թե առ քեզ, առ նա և այլն ձևերն էլ գոյություն ունեն։

Թլատրմանման յոլ պրինակներ են նաև հետևյալները։

Այլ բառը Պարս և այլոր գործիք է այն, որ որոշիչ հոդը (ն) կարծելով է, թե բառի արմատն է պատահում և կպել նրան։ Այսպես նաև պրապի > Պարս պրապին, նոր Նախիջևան պիրագին։

Մեղու > Առաջավոր մեղուն։

Սրա հակառակ, երևանի բարբառում, անասնական -ան վերջավորության մեջից և հոդ կարծելով ջնջվել է. այսպես՝

աղջիկ. անասնան աղջկան > երևան աղջկա.

կնիկ. անասնան կնկան > երևան կնկա.

որ. անասնան որուան > երևան որուա.

ձմեռան. անասնան ձմեռուան > երևան ձմեռուա և այլն։

Նայն կրճատումը տեսի չի ունեցել տակաղն մահուան, գարնան, աշնան, ձմռան, և այլն համանման ձևերի մեջ։

Արեցլանը շինեց կերպար և գործարք բառերը, որոնք կազմել կերպարանք և գործարարք բառերից պիտակարելու թլատրմանումով։

Անգլերենում a Portuguos, a Maltes «պորտուգալացի, մալթացի» կոչվել են իրենց վերջածանց s՝ սիտալմամբ հոգնակիի նշան կարծելով։ Նայնպես՝ Yankee, որ առաջացել է Jan Kees ձևից. այս բառը գործածական է այժմ միացյալ նահանգների գաղթականների համար և կազմված է Jan (=John) և Kees (=Cornelis կամ Christian) անուններից. s հոգնակի կարծվելով ջնջվել է անգլերենում (Jespersen, Growth, 172)։

Տիգրիս և Մանգլիս անգանուններից մեջ, որոնք վրացերեն են, հայերը վերջածանց արմատական ա-ն կարծելով հայերեն հայկականի նշան, տվել են անասնական Տիգրեաց, Մանգլեաց ձևով։

11. ԴՐՈՒԹՅԱՆ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՁՆՎԵՐ

Այս կարգի փոփոխություննները լեզվաբանության շրջանակից բոլորովին դուրս են, բայց որովհետև անդրադարձել են լեզվի վրա, ստիպված ենք խոսել նրանց մասին ևս։

Այս կարգից են՝

շագանակ. Ծագում է պհլ. sāhdānak «հանեփի սերմ» բառից, ունի բազմաթիվ սխալ գրչություններ, որոնցից ՆՀԲ ընտրել է շագանակ և ալպիտով արդի գրական լեզվի մեջ մտել է հնապես անգո ձևը։

շերամ շերամ-ից, որի ա-ն շփոթել են մ-ի հետ։

փուրփուզնայ. հունարեն բնագիրն ունի կորկինք-ական։ Արաբերեն թարգմանության մեջ բառը տառադարձվելով قنتقرج qorqintiya, կետերը մատամբ ջնջվել են։ Հայ թարգմանիչը գտել կամ կարդացել է فسفرج fūrfusna, որով և կազմել է հայերեն փորփուզնայ սխալ ձևը։

ամբուկ «բազրջան, պատինճան». ինձ թվում է, թե արաբերեն anb հոմանիշից է, որ նախ դարձել է ամբուկ, ապա ա-ի մի ճյուղը կորչելով, կարդացվել է ամբուկ (ավելին տես Աբեղյան, Ջ, 268)։

Այս բոլորն առաջանում են տառաձևերի պատահական նմանություններից։

Տառաձևերի նմանություն կարելի է գտնել ամեն մի այբուբենի մեջ. օրինակ՝ լատինական այբուբենում l և I նույն ձևն ունեն, c, e, o գրեթե նույն ձևն ունեն, շատ դժվար է զանազանել իրարից fl, fl. *ռուսերեն* п, и, к, п *(մանավանդ ձեռագրում) շատ նման են իրար. արաբական այբուբենում այն բոլոր տառերը, որոնք կետերով են տարբերվում իրարից, միշտ ենթակա են շփոթության և այլն։*

Հայերենի մեջ էլ ունենք մի խումբ տառեր, որոնք շատ նման են իրար. այսպես ա և տ, ր և ր, գ և դ, զ և ղ, ղ և շ, ո և ս, ո և ռ, ձեռագրի մեջ էլ վ, զ, չ և այլն։ Հ. Ա. Վարպետյանը «Հանդէս ամսօրեայ»-ում հրատարակել է մի հոդված, ուր հավաքում է հին ձեռագրերում առկի ունեցած սխալագրություննները՝ վ-ի և զ-ի մասին։ Նույնիսկ հայագետներ կան, որ սայթաքել են գրերի նմանությունից և սխալ բառեր հարինել։ Կլապրոթը Mémoires, I, 436), *Պոտին* (Kurd. stud. ZKM 4, 12), *Պիկաեն* (I,

385) ուղղ բառը կորոշակի են ուղղ Պատրաստելին «Հանգէս ամսօրեայ», 1908, էջ 152 գանդաեանվանից «առնձա» բառը կարծում է գանդաեանցիների և բոլ ուրիշ կիլիկեցիների բերան «երիտ» բառին։ Ապուպայ «փամփուշտ» բառը, որ արաբերէն ձևից է փոխ առնվել և մինչև այժմ էլ կենդանի է բոլորտանեցոց ապուդա (նման ապարուդա՝ բառ Սալիխա Հաճատրանի) ձևով, ձևաորվելով կա գրչվում նաև ապուդայ և այս ձևով էլ հիշում է ՆՀՔ ապուդայ «հրացիկ» բառի տակ։

Տեղը չէ խոսելու այն բարեփոխությունից մասին, որ դանագան անձինք առաջարկել են այս առարի մասին։ Բայց կարելի է հարմանդի վերջում հիշել Ա. Աբրահամյանի առաջարկը, որ և գործադրել է «Մուրճ» ամսագրում (գ և գ, գ և գ, ա և ա) և Բյուզանդ Քեչյանի առաջարկը, որ գործադրել է «Բյուզանդիոն» պարբերքում (գ, գ, գ, գ, ա, ա)։ Բայց լավագույնն է այն, որ գործադրելին և շարունակում են գործադրել Վենետիկի Մխիթարյան միաբանները իրենց բոլոր հրատարակություններում (գ, գ, գ, գ, ա, ա)։

Մենք բոլորս վարժված լինելով բառերի ընդհանուր պատկերին և ոչ մի առանձին առարին, չենք նկատում առանձին առարի պրչակները. դրա համար է, որ տպագիրները վրիպում են մեր աչքից։ Բայց երբեմն պատահում են դեպքեր, որոնք երկար պահելով էլ գլուխ չեն հանում. ինչպես՝ Աբրահամյան, «Ճանապարհ դեպի Կամիշլին» վեպի մեջ (Ա. Երևան, 1945, 238) կարդում ենք. «Ամեն մեկ բառը ոչ մի բերանից, այլ կարծես արտի գետնա չհամանարհված պաղտնապահից էր գալս լռությամբ»։—Առաջանում բառը ամենայն հեշտությամբ կարելի էր կարդալ դազանապահից, որ անկեղծ էլ շատ հարմար է։

Ձայնական դեպքեր առկայն քիչ են պատահում։

Հին լեզվարաններին մեջ կային աշխարհիները, որոնք ձայնների փոփոխությունը առարի նմանությամբ էին մեկնում. օրինակ՝ հունարեն pente և լատիներեն quinque «հինգ» համանիշների ձայնական առարերությունը բացատրում էին p = շատ տված գ առարի միջոցով։ Արդի գիտությունը ալսպիսի պատահական, արտաքուստ միայն իրական փաստերի վրա ոչ մի ուշադրություն չի դարձնում, որովհետև լեզուն ավելի և շատ ավելի առաջ է քան գիրը։

Նա ունի պատահական նույնիսկ աչք ծակող նման երևույթներ, լեզվաբանը խուսափում է նրանք տեսնելուց. օրինակ՝

արաբերեն katiba «գրեց» ներգործական է, որի կրավորականն էլ լինում է kutiba. սրանք ձայնանիշներով միայն տարբերվում են իրարից. և որովհետև այժմ տպագրության մեջ ձայնանիշները չեն դրվում, ուստի երկու ձևերն էլ գրությամբ նույնանում են։ Այժմ արաբները չեն սիրում գործածել կրավորական. և նրբ տիպ լինի գործածել կրավորականը, շուտ են տալիս ներգործականի։ Միամիտ մի լեզվաբան կարող էր այս երևույթը բացատրել գրության շփոթությամբ. բայց դա կլիներ բոլորովին խաբուսիկ բան, որովհետև կրավորականի տեղ ներգործական դնելու սովորությունը շատ տարածված մի երևույթ է զանազան լեզուների մեջ։

12. ՏԱԲՈՒ

(Tabou)

«Ներածության» մեջ ասել ենք, թե ինչ է տաբուն. ժողովրդական նախապաշարմունքով որոշ առարկաների անունը արգելված է արտասանել. դա տաբու է. բայց որովհետև պետք է այնուամենայնիվ առարկայի մասին խոսել, ուստի հնարվում է մի ուրիշ բառ, որ ներելի է։ Դրա հետևանքով կամ չնչվում է բառը ամբողջապես և նրա տեղ դրվում է բոլորովին նոր մի բառ, և կամ բառը ենթարկվում է ձայնական որոշ փոփոխության։ Առաջին ձևի մասին արդեն բավական խոսել ենք նույն տեղում. մնում է խոսել այստեղ երկրորդի մասին։

Պարսկաստանում կա մի նախապաշարմունք. կարծում են, թե կա մի հրեշտակ, որը հսկում է, որ նամակները անկորուստ հասնեն իրենց հասցեատերերին. այդ հրեշտակը կրում է 2468 համարը և նրա այս համարը գրվի նամակի վրա, նամակը անշուշտ տեղ կհասնի։ Բայց կա նաև մի չար ոգի, որ դիտի այս համարը և երբ տեսնի նամակի վրա գրված 2468, կաշխատի վնասել այդ նամակին, գողանալ և կամ որևէ ձևով տեղ չհասցնել։ Այս չարիքից ազատ պահելու համար, նամակ գրողները փոխում են չորս թվանշանների կարգը և դնում են, օրինակ, 4628, 6284, 8246 և այլն։ Չար ոգին, որ այնքան հասկացողություն չունի, չի հասկանում խորամանկությունը, սակայն հրեշտակը հասկանում է, որ իր համարն է և նամակը հասցնում է իր տեղը։

Այսպես է նաև երկրորդ ձևը. բառի վրա ավելացնելով որևէ մասնիկ, կամ անկանոն կերպով փոխելով նրա որևէ ձայնը, բառը

անհանդուրժելի է պահանջում չար ոգուն և նա այլևս չի կարողանում մնալու։

Ահա ուրեմն է առաջանում սարսափ եղած բառերի անվանման ձևաբանական խնդիրը։

Մենք պիտի խոսենք այստեղ պրիմիտիվ այն բառերի մասին, որոնք հնդեվրոպականից հայերենի անցման ժամանակ ենթարկվել են սարսափի ձևաբանական ազդեցության, որոնք են արջ, կամուրջ և օձ բառերը։

Արջ բառի նախաձևն էր հնդեվրոպական նախալեզվում rkthо, որ բուն կարելիանի լավ պահված է հայերենում ՝ռքս, հին իռլանդերեն art, կիմերերեն arth, սանսկրիտ ṛkša ձևերի մեջ. մյուս լեզուները շատ են ալլայնացել այն. ինչպես՝ գնդկերեն arśa, ազգիներեն aššа, պարսկերեն xirs, ալբաներեն ari, լատիներեն ursus և այլն։ Հայերենը եթե համաձայնի մեզ հետ նախաձևին, պիտի տար *արրր, կամ ավելի լավ՝ արր. բայց անկանոն կերպով փոխել է վերջածանցը և դարձրել արջ։

Կամուրջ բառի նախաձևը դժվար է որոշել, որովհետև բոլոր մյուս լեզուները ջնջել են այն և նրա տեղ հնարել նոր անուններ։ Կամուրջ մնում է մեկայն հայերենի և հունարենի մեջ (վերջինս իր գանազան բարբառներով՝ γέφυρα), երկուսի համեմատությամբ նախաձևը կարելի է գնել gʷebhura, որ պիտի տար հայերեն *կևուր, իսկ կամուրջ ձևափոխությունը տարսի պատճառով է։

Նկատելի է, որ թե՛ արջ և թե՛ կամուրջ տարսի համար բ-ի վրա ավելացրել են ջ, որ ուրիշ բառերի վրա էլ իրեն հավելված գրված է. ինչպես՝ ատաղձ, աճուրջ (բոլորն էլ րջ)։

Օձ բառն ավելի բարդ է։ Այս կենդանու համար հնդեվրոպական նախալեզվի երկու տարբեր բառ. ēgʰhi և angʰhi. առաջինից առաջացած է հայերեն իվ (հնդեվրոպական նախալեզվի egʰhi ձևից), սանսկրիտ áhi, գնդկերեն aži, հունարեն ὄφις. իսկ երկրորդից լատիներեն anguis, հին պրուսերեն, լիթվաներեն angis, իռլանդերեն -ung, հին բարձր գերմաներեն unc և հայերեն սա<առա հավելյան ձևն ըստ սրինի պիտի լիներ *աոգ, բայց տարսի պատճառով ձևափոխել է սրպես։

Տարսի երկու տարբեր ձևերի միջին ասդն է բռնում միջին հայերեն և գավառական կոր, որ նշանակում է «կարիճ»։ Նախապես սրամտորեն էի կարծելու, որ կոր բառը նույն է իր նմանիշ կարիճ բառի հետ և նրա սրմատն է։ Այժմ, որ կարիճ բառն ամբողջությամբ կրկնել եմ հունարեն κάρις, κορίνθη բառի հետ, կոր

ձևը մնում է անկախ. սա հայերեն կոր «ծուռ» բառն է և ինչպես պարսկերեն Každum = Ղարաբաղ կրոբիաքի կարիճի նոր անուններն են, նմանապես և՝ կոր (նույն միջատի ծուռ պոչի պատճառով այսպես կոչված. տես Արմատական բառարան, Է, 151, 154)։

Կոր «կարիճ» բառի մի ուրիշ ձևն է կորչ, որ գործածական է Զարսանճաքի բարբառում, նույն նշանակությամբ։ Ըստ իս այս էլ տաբուի կրկնակ ձևն է. կոր բառը ինքը տաբու էր, բայց արդեն մոռացվելով և սովորական բառ դառնալով, նորից ենթարկվեց տաբուի. ինչպես որ Սեբաստիայում օձ բառից հետո դնում են չ՛, որպեսզի օձը փախչի, հեռանա նույնպես և այստեղ կոր բառից հետո ավելացրին չ՝ նույն նպատակով։

Եղնիկի մեջ (էջ 103) գտնում ենք տաբուի հիշատակությանն մի հետք. «Ես ի զուր է կա՛լ կա՛լն ասել ումենք ի կալս և ոչ ա՛ոջ։ Ուրեմն կալերի մեջ ա՛ռ «վերցրուս» բառը չէին գործածում. հավատացած էին, որ եթե «առ» ասեն, դևը կգա և ցորենը կվերցնի, կտանի. ատի ասում էին «կալ». դևը շփոթելով կալ բայը կալ գոլականի հետ, ցորենը չէր վերցնում ու տանում։

13. ԱՆԿԱՆՈՆ ԲԱՌԵՐ

(Mots irréguliers)

Այս զանազան տեսակի ձայնափոխություններից դուրս կան նաև այնպիսիները, որոնք ոչ մի կանոնի տակ չեն մտնում. այս բառերի թիվը մեծ չի լինում, բայց ամեն լեզվի մեջ էլ կա։ Սրանք առաջացած են լինում մի որևէ ձայնի անկանոն հավելումով, կամ որևէ ձայնի տարօրինակ ձևափոխությամբ. օրինակ՝

Ֆրանսերեն écrevisse փոխանակ crevice (հին գերմաներեն Krebiz).

vrille փոխանակ *ville < viticula

soif < լատիներեն sitim.

Եթե ֆրանսերենը, որ հայերենի համեմատությամբ շատ նոր ժամանակի լեզու է և որի մայր լատիներենը այնպիսի մանրամասնությամբ ծանոթ է դիտության, կարող է ունենալ այսպիսի անկանոն ձևեր, ի՞նչ պիտի լիներ հայերենը, որ հազարավոր տարիներով բաժանված է հնդեվրոպական նախալեզվից, մյն լեզվից, որ իր գոյությունից ոչ մի հետք չի թողել։ Այնուամենայնիվ,

պիտականներին աշխատանքի ընթերքին, շատ բան իր լուծումն է գտել հայերենում։ Հայերենի 8778 արմատներից մեկնված է 5087 բառ և տատոնց մեկնաբանման են մնում 3088 բառ։

Հնդեվրոպական նախալեզվի միջոցով մեկնված բառերի մեջ անսպառ կամ անկատար են մնում հետևյալ բառերը.

Ավանդը, որ ուղիղ բառի երկրորդն է՝ հիշյա ինչպես աչք երկակին է ականի բառի. ձևական շատ ալյուսխոսած է ականջը և առաջարանների գծերը բացատրելի. ապրելով այդ բառերը, առ էլ առացել է չի հանձնարարը, որի մեջ չ հետո գրվել է ջ՝ նախորդ անգլերենի պատճառով։

Այլ «ապամարդ». սրանք դնում են հնդեվրոպական նախալեզվի rsen (հետևաբեն ջրդր) ձևից և սրանք էլ հնդեվրոպական նախալեզվի aner (հետևաբեն ներ) ձևից։

Գայլ. այս բառի հնդեվրոպական նախալեզվի ձևն է vlk²o, որից առաջն չի կարող ծագել գայլ ձևը. ուրիշ լեզուներ էլ շատ սրանք են ցույց տալիս և երևի այս բառն էլ առաջ հնչյունական վերափոխություններ է առացել. հայերենն այս ձևի առ հնչյունում է հնդեվրոպական նախալեզվում vallo։

Գարի. մյուս լեզուները հնչյունում են գրեթե նախաձևեր. այսպես հետևաբեն՝ հնդեվրոպական նախալեզու gherzdā, սլավոնականը՝ gherzdā, լատիներ՝ ghrzd-, որոնց դեմ ապացույցն էր հայերեն գարտար, և հարց է, թե կարո՞ղ էր այս ձևից էլ առաջանալ գարի, ինչպես որ հետևաբեն գրեթ ձևից առաջացել է գրեթ։

Լաս. կարելի է համեմատել մի կողմից հետևաբեն լաստ «լաստ, շահավետ» բառի և մյուս կողմից լիտվաներեն lābas «լավ բարի». երկուսի էլ ցեղակից ձևերը տես Աբրահամյան բառարան, Գ, 169, հայերենն իր վերջավոր մեկնաբանները չունի։

Լեարդ. այս բառի համապատասխան ձևերն են՝ սանսկրիտ yákrt. հետևաբեն ղեզը (սեռական hípatos), լատիներեն jecur, լիտվաներեն jāknos, հին պրուսերեն lagnos, հին իռլանդերեն līr, հին բարձր գերմաներեն lebara.—առաջիններին նախաձևը դրվում է yēk²rt. հայերենի նախաձևը դնում են գրաբար հեղինակները lipart, lyēk²rt, lek²rt և այլն։ Հայտնի չէ մեզ ո՞րն է ուղիղ ձևը։

Լեզու. այս բառի համապատասխան ձևերն են՝ սանսկրիտ jihvā. գերմաներեն hizvā, hizu, հին լատիներեն dingua, լատիներեն lingua, գոթերեն tuggō, հին սաքսոներեն tunga, հին բարձր գերմաներեն sunga, հին իռլանդերեն tenga, իռլանդերեն

ligur, հին սլավերեն yezykŭ, լիթվաներեն lẽžùvis և այլն. այս բոլորի նախաձևն էր հնդեվրոպական նախալեզվում dŋg'hua, dŋg'hu, որ մոդովրչական սուպրասեգմենտալ կապակցվելով «լեզու» (հնդեվրոպական նախալեզու leigīh) բառի հետ, կրել է նրա ապրեցոլթյուններ և ամեն կամ պակաս չափով փոխոխվել։ Դեռ գաոական շրջանում, հին լատիներեն dingua ազդվելով լատիներեն lingo «լիզել» բայից, դարձավ lingua. Նուլնպես նաև լիտվաներեն izùvis ազդվելով lẽzŭ «լիզել» բայից, եղավ lẽžùvis. Հայերենի մեջ էլ հնդեվրոպական նախալեզվի dng'hū, որ պիտի տար *տաևիձու, ազդվելով լեզուլ, լիզուլ բայերից, դարձավ լեզու։

Մրջիւն. այս բառի համապատասխան ձևերը շատ բազմազան են. հիշում ենք նրանցից կարևորները. հունարեն μύρμηξ, լատիներեն formica, հին սլավերեն mraviji, հին իռլանդերեն maurr, իռլանդերեն moirb, վենդերեն maoiri, սանսկրիտ vamrá. բուն նախաձևը պրվում է morvo, որ բաղաձայնների շրջմամբ և համնուլթյամբ տվել է հետո vormo, mormo, mouro և այլն, և ապա դանազան մասնիկներով ընդարձակվել. ինչպես -ka մասնիկով՝ լատիներեն formica, հունարեն ἀρυτταξ, սանսկրիտ walmika և այլն։ Հայերենի մեջ մասնիկ է նաև -իւն (համմ. արիւն, արդիւն), որ հանելով մնում է *մրջ, այսինքն մուրջ. այստեղ էլ ջ դնելով մասնիկ (համմ. ատեղջ. աճուրջ, կամուրջ, արջ), կունենանք մուր, սրի ու ձաղնավորը բացատրելու համար պետք է առնել mouro նախաձևը։

Նկատելի է, որ վերջին մի քանի բառերի մեջ մասնիկը կամ հավելյալ բաղաձայնը չ է (ր-ից հետո)։

Փայծաղն. սրա էլ համապատասխան ձևերը շատ բազմազան են, որոնցից կարևորներն են. սանսկրիտ plīhán, վենդերեն spərəzan, հունարեն σπλήν. σπλαγχνα, լատիներեն lien, հին սլավերեն slĕzena, անդլերեն spleen, լիթվաներեն blužnis, հին պրուսերեն blusne. սրանց նախաձևը դժվար է վերականգնել, ընդհանրապես պրվում է sphelg'hen, splen'gh, spleg'h. ըստ Մեյեի (MSL 18, p. 310) փայծաղն էլ այն բառերից է, որ մարմնի ուրիշ անդամների նման, կրոնական նախապաշարմունքով տաբու էր ենթարկված և այլապես ձևեր է ստացել։ Հայերենը գալիս է *փայծոաղ ձևից, որ տեղափոխությամբ դարձել է փայծաղն և *փածայղ. սրանց մեջ փ ներկայացնում է sph. հայ բարբառային ձևերը առաջանում են փայծաղ և *փածայղ ձևերից, որ է փածեղ. միայն Մոտոլջուրի բարբառն է, որ ունի սիպեխ և ծագում է *սիպեղն կամ սիպայղն ձևից։

Այդպի բարբառներում էլ կան բառեր, որոնք գոնդական ձայնական օրենքների հանդիպումով առնչվել են անկանոն բառեր. օրինակ, Երեանի գյուղերում ասում են շուն-շանցյալ, որ է շուն-շնացյալ. այս վերջին բառի մեջ ա անպատճառով է, պ պարզել է պյ և յ լսվել է։

Ջանգեզուրի գավառականով ունենք պամակ փոխանակ նամակ (տես Աբեղյանի բառարան)։ Այս բառը անշուշտ անկանոն ձայնափոխություն է և ամեն մեկին էլ պիտի համարի խոթոռում կամ ապուպատում, բայց աշխարհիկ աչքով քննելով, նրա մեջ էլ կանոններ կանոնավոր ձայնափոխական օրենքներ։

Նամակ բառն իր առաջին վանկում իրար հետևից ունի ն և մ. երկուսն էլ անգական են և առաջինը առոմնական, երկրորդը շրթնային։ Գնական օրենքը սիրում է կանոնավորությունն և միապնակությունն. եթե երկու անգալինների մեկը առոմնական է, մյուսը շրթնային, կանոնավոր չէ. մեկը մյուսին պիտի նմանվի. ուստի պիտի լիներ նաևակ կամ մամակ. առաջվել է նախ մամակ ձևը։ Սա կարող էր երկար մնալ, իրրև հատուցուն ձև։ Բայց այժմ էլ դարձել է սկսել առոմնմանությունն օրենքը, որ երկու նույնից մեկը պահանջում է փոխել։ Ըստ այսմ մամակ ձևի երկնակ մ-երից առաջինը կորցրել է իր անգալին մասը և մնացել է միայն շրթնային մասը։ Այս դեպքում նա ավելի շուտ պիտի լիներ *բամակ, բայց այստեղ էլ գործել է վերջին խուլ կ բաղաձայնի ազդեցությունը և *բամակը դարձել է պամակ։

Տեսնում ենք, որ մի աննշան և անկանոն համարված ձև, ինչքան երկրորդական, բայց կանոնավոր հանգամարհներից է անցել, հասնելու համար մի ուրիշ նորագույն վիճակի։

14. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱՌԵՐ

(Mots scientifiques)

Անկանոն բառերի երկրորդ շարքն են կազմում այն բառերը, որոնք օրենքի պահանջած ձայնափոխություններին չեն ենթարկվում. այս կարգին են պատկանում կրոնական, գիտական կամ ուսումնական բառերը, որոնք կարող ենք նաև փոխառություն համարել հին լեզվից. այսպես, օրինակ՝ պատարագ, վարդապետ, քահանա և այլն բառերը, որոնք մեր կը ճյուղի բարբառներում միջին ա-ի կորստով պիտի դառնային ըստ օրինի *պատրագ, վարդ-

պետ, քաճիա և այլն, չեն կրած այս ձայնափոխությունը և մնում են այնպես։ Պատճառը նրանց ուսումնական հանգամանքն է։ Կան բառեր էլ, որոնք լեզվի սովորական կանոններից շեղվելով, տարբեր ձայնափոխությունն են ենթարկվում։ Այսպես, Պոլսի բարբառում թեև բ, գ, դ, ձ, ջ մնում են անփոփոխ, բայց ուսումնական բառերի մեջ դառնում են փ, ք, թ, կ, չ։ այսպես գիրք > քիրք, գիր > քիր, գրել > քրել, բարեկամ > փարեզամ, դպրոց > բբրոց և այլն։

Մինչև անգամ դանազան բարբառներում կան բառեր, որոնք ձևով ունեն իմաստի դանազանություններ. մեկը՝ բնիկ ժողովրդական ձևը, երկրորդը՝ ուսումնական ձև. առաջինը համապատասխան ձայնական ընդհանուր օրենքներին, մյուսը՝ անկանոն։ Ահա այս կարգի բառերից երկուսը։

զաւազան > Զեյթուն գավալսի «մոլորապետի գավազան» և գազելսի «ցուպ».

թագաւոր > Զեյթուն թոգոմիր, Ագուլիս թաթավոյ, Հաճին թագավոյ «արքա» և Զեյթուն թոքմիւ, Ագուլիս բո՛վիր, Հաճին դա՛գոյ «մեծատուն»։

15. ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

(Amplification)

Երբ բառը զանազան սղումներով ու կրճատումներով այնքան է կարճանում, որ այլևս իր ինքնությունը կորցնում և աննշան մի տարր է դառնում, գույն և տրիշ համանուն բառերի կամ ձևերի հետ շփոթվում, լեզուն դիմում է այժմ էլ հակառակ միջոցի, այն է՝ երկարել բառը, ընդարձակել ձևով՝ այս ու այն մասնիկի կամ վերջավորության միջոցով։ Այս երևույթը կոչվում է ընդլայնում։

Ընդլայնման երևույթներ կան հատկապես այն լեզուների մեջ, որոնք սովորություն ունեն շեշտից հետո դտնված վանկերը կրճատելու։ Այսպես է հատկապես ֆրանսերենը։

Հայերենի մեջ ընդլայնման լավագույն օրինակ է բոկ—բոբիկ բառը։ Սրա նախաձևն է հնդեվրոպական նախալեզվի bhosó, որ պիտի տար հայերեն բո. բայց այս բառը այնքան կարճ և անզոր է, որ հեշտությամբ կարող էր շփոթվել թեկուզ բո՛ ձայնարկության հետ։ Ուստի անհրաժեշտ էր մի քիչ ուժ ու կլանք տալ նրան։ Դրա համար ավելացրին կ մասնիկը, որ անշուշտ -իկ փոպաքշա-

կան մտածելին է։ Ալպիական բառը պարզապես բան ժամանակ անցնելով այս ձևն էլ պատմից թողել և ոչինչ, և նորից ավելանալով նոյն իմաստիկը, որի առաջին համեմատմամբ բոլորովին մոռացված և աննկատելի էր դարձած, դարձավ բոլիկ։ Այս ձևն արդեն դանում ենք մեջին հայերենում (Հնդկաբեր, Առակ. Վստահակ., 161, Տաճենացի, Ճշմարտն ոչ (հրատ.)։ Կամ բարբառների մեջ մտնելով բոլոռան, բոլորտ։ Այս բոլիկ ձևն անցավ բարբառներին, որոնց մեջ նոր ձևախախտմամբ դարձավ մի կողմից բոլիկ, բոլիկ, մյուս կողմից բոպլիկ և երրորդ կողմից՝ ոտաբոպիկ ձևի ազդեցությամբ Դատարկի բարբառով տե՛ս Պեզ։

16. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

(Etymologie populaire)

Կա մի անսակ նմանապատճառն, որ առաջանում է բառը պարզելով մի արդեն նմանաձայն բառի հետ և սխալմամբ կարծելով, թե կազմված է նրանից, արդում է նրան այդ բառի ձևը։ Այս երևույթը կոչվում է paralogie, *որ հունարեն παραλογία «սխալ, սխալմունք» բառն է և նշանակում է «անդիտակցաբար կատարված սխալ»։ Նոյնը կոչվում է նաև* étymologie populaire, *որ է ժողովրդական ստուգաբանություն. օրինակ՝*

Գերմաներեն vorburg *«արտարձան» (բառն «նախաքաղաք») փոխառնելով եղավ հին ֆրանսերեն* fauxbourg *«սխալ քաղաք», որ արդի դրվում է* faubourg։

Լատիներեն arcubalista *«աղեղ» դարձել է գերմաներեն* Armbrust *(իբր թե* Arm *«բազուկ» +* Brust *«կուրծք»)։*

Ֆրանսերեն café chantant *«երգեցիկ սրճարան» փոխառնելով բարձումի ժամերին և բառը սխալմամբ կապակցելով շեյրան «առատանա» բառի հետ, դարձել է* şeytan qahvesi։

Ֆրանսերեն calféter, calfetrer *«նավը կոպիտաձև դարձել է* calfeutrer, *կապակցով* feutre *«ֆետիր» բառին։*

Գերմաներեն Trottoar *«մայթ» դարձել է* Trittoar, *կապակցով* Tritt *«քայլ» բառին* (Kogge, Der Notstand, 44)։

Երբ հնդիկները սեղական լեզուներից վերցրին sakkara *«շաքար» բառը, իսկույն ստանկրիտ* çarkarā *«խիճ, քարի կտորտանք» բառի նմանությամբ ձևափոխեցին սրպես։*

Ժողովրդական ստուգաբանության ենթարկվում են լեզվի մեջ նորամուտ, անծանոթ, օտար, հազվագյուտ և լավ չհասկացված բառեր, որոնք ժողովուրդը վերածում է ծանոթի, կապելով արդեն լեզվի մեջ սովորական, ընտելացած մի ձևի, այն պայմանով, որ հրկու բառերի միջև ոչ միայն ձայնական, այլև իմաստի որոշ նմանություն լինի. օրինակ՝ եթե ֆրանսերեն café chantant *դարձել է թուրքերեն շնյթան քաֆվեսի, այստեղ ոչ միայն* chantant *և շեյխան բառերի ձայնական նմանությունն կա, այլև երկրորդի ընդճարանը համապատասխան է իրը վայր դեղեստության և ստուգաբանության*

Հայերենի մեջ ժողովրդական ստուգաբանության օրինակներ են՝

Սեն-Փիլ, *եվրոպական անուն — կոմսն Ձիջիլ (Վարդան պատմիչ, կդ).*

Էֆիմերիդ — Եփրեմվերդի.

վարկաբեկել — վարքաբեկել.

հաշվառնդամ — հաշվանդամ.

очередь — պոչերեսս

մայրապետ *(տնտեսուհի)* — մայրամպետ.

Հետաքրքրական է անցագիր բառը, որ կազմված է ֆրանսերեն passeport *բառից թարգմանաբար «անցնել նավահանգստից». Այնահետև անցագիրը ոչ միայն ճամբորդության համար, այլև մի որևէ տեղ հաստատուն բնակվելու հրամանագիր կամ արտոնագիր դարձավ: Ըստ ալամ ժողովուրդը ձևափոխեց բառը և դարձրեց անձնագիր (= անձն + գիր, ա հոդակապով), որ և այժմ գործածված է պաշտոնապես:*

արդուկ „fer à repasser, *թուրքերեն* իւթիւ (ութու) > *ռուսերեն* утюг" *բառը կազմված է արևմտահայերի մեջ՝ արդ «ձև» բառից (ինչպես արդուզարդ և այլն): Մանելով կովկաս, այս բառը դարձել է այժմ հարթուկ (հանելով հարթ բառից, իբր թե հարթող): Ժողովրդական ստուգաբանությամբ արդ անսովոր բառը փոխանակված է հարթ շատ ավելի սովորական բառով, որ իմաստով էլ շատ պատշաճ է: Սրանից էլ կազմվել է հարթուկել, որ արևմտահայերի արդուկելն է:*

Ժողովրդական ստուգաբանությունը երկու աղբյուր ունի, առաջինը, ինչպես ասացինք, անծանոթը ծանոթի վերածելու ակզբունքն է: Երկու տարեկան մի երեխա կար, որ հազիվ խոսում էր. հանդիպեց մի փոքր շուն, որի անունն էր Ժուլիկ. երբ մենք շանը

հանչիցինք ալս անառնամ, երեխան, որ չաներ իր լեզվի մեջ ալս-պիսի բառ, խնայեն կատակեցեք իրեն վատաց հայուհի և սովորա-կան չաուիկ բառի հետ և սկսեք կանչել «չաներիկ, չաներիկ, չաներիկ»

Ժողովրդական առասպելաստեղծման մի տիպիկ ձևն է ալն, երբ ժողովուրդը իր չիմացած մի բառով է փոխաբանական Օրինակ, երևանի վաղեմությամբ անցած ասան, որ մատաղ չարը էր մատա-կարարում ժողովրդին, երևանի բարբառով կոչվում էր արխնայր Ալս բառը պարսկերեն ab «ջուր» + արաբերեն hayyat «կեն-դանաստեղծ» բառերից Իսլամների մոտ ab-i-hayyat նշանակում է 1. «կենաց ջուր». 2. «մատաղ և վճիռ խմելու ջուր» Երևանի ժողովուրդը, չիմանալով արաբերեն hayyat «կենդանաստեղծ» բա-ռը և իմանալով hayat «կյանք» բառը, նրանը կոչում էր արխնայր, իբր թե անկեղծ կամից անցնող ջուր

Ժողովրդական առասպելաստեղծման արձանակներից մեկն է թուր-քերեն rahat loqma, որ գործած է նաև ժողովրդական բարբա-ռով հայերեն ռահաթ լոխում Ալս բառը դուռ արաբերեն է և գրված է rahat-ul-hulqūm, որ նշանակում է բան «հանգիստ կո-կորդի» Սակայն ժողովրդը (նաև թուրք ժողովրդը), չհանդուրժե hulqum բառը, գործածել է loqūm «պատառ» Ալս գեղ գործածական չէ Նայելով հալ ստուգաբանություններ ալս ժողովրդական ձևի հետա-ձայն loqūm բառը թուրքմանելով, կազմել են ռահաթլոխում բա-ռը

Քրիստոսի հալոց մեջ գործածական է առաքն անխոթելի էա առածը Ալստեղ անձնը անխոթելի բառը, որ անշուշտ գրաբար անխոտելի «անտարտամարհելի, անմերժելի» բառն է, կազմված խո-տել բայից Բայց արդեհան խոտել բայը գոլշերեն չունի բար-բառներում, ուստի ժողովրդական առասպելաստեղծման վերածելով իրենց ծանոթ խոթել ձևին, առնչել են անխոթելի անխուսափ բա-ռը, որ ա գործել է բ. հակառակ ձայնաբանական օրենքների

Նայե առածը կա նաև թուրքերեն՝ Temsilde xata olmaz «Առածի մեջ հանցանք չի լինի»

Ալստեղ էլ կա xata (խաթա) բառը, բայց անշուշտ նրա վրա-յից չէ, որ կազմվել է անխոթելի բառը

Հայերեն Ովս (Օվս) դիպանունը (արից Ովսիկի), ժողովուր-դական առասպելաստեղծման գործել է ալժմ Եուվա (Յուվա), որ թուրքերեն yuva «բույն» բառն է

---

* *Հազորդեց Աճառյան Հայկազյանը*

